

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

Աստուր Գյուզեյան

Խոսում եմ Գամակները

Իրից-Խաչատրյան

ԱՍԱՏՈՒՐ ԳՅՈՎԵԼՅԱՆ

ԽՈՒՄԸ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՀՈՒՇ-ՆԱՄԱԿԱՆԻ

«Մուղնի» հրատարակչություն

Երևան • 2021

ՀՏԴ 82-6 Գյուղելյան

ԳՄԴ 84

Գ 671

Գյուղելյան Ասատուր

Գ 671 Խոսում են նամակները: Հուշ-նամականի/ Ա. Գյուղելյան.- Եր.: Մուղնի,
2021.- 420 էջ:

«Խոսում են նամակները» գիրքը, ինքնին արժեք է եւ հրաշալի վավերագրություն: Նամակագիրները թե՛ համաշխարհային եւ թե՛ հայաստանյան իրականության մեջ գիտության, արվեստի ու այլ ոլորտների ճանաչում ունեցող անհատներ են, որոնց հետ առնչվել է Ասատուր Գյուղելյանը:

ՀՏԴ 82-6 Գյուղելյան

ԳՄԴ 84

Ասատուր Գյուզելյան.

***հեսաfrfիր ւրուցակից, անսպառ իմացություն, լրջախոհություն,
վերլուծական միտք, հարուս կենսափորձ, լսելու հապվագյոս
կարողություն ու անսահման նվիրում...***

Ահա այսպիսին ճանաչեցի Ասատուր Գյուզելյանին, երբ ստանձնեցի նրա նամականիի հրատարակումը ...

Ծանոթանալով գործին պարզվեց, որ նամականի վերտառության տակ ամբարված է անգնահատելի վավերագրական նյութ, թե՛ ծավալով, թե՛ պատմական արժեքով, քանի որ նամակագիրների մի զգալի մասը համաշխարհային ճանաչում ունեցող անհատներ են, որոնց գործունեության ծիրում էր, թե՛ Սփյուռքը, թե՛ առավել եւս Նայաստանը:

Անշուշտ, գործի կշռաքարը հայաստանաբնակ մտավորականների աշխույժ կապն է Ասատուր Գյուզելյանի հետ, որոնք այսօր՝ ցավոք մնացել են անցյալում:

Նամակներ, որոնց հեղինակները խորհրդային տարիների գիտության, պատմության, մշակույթի, հոգեուր ոլորտների կարկառուն ներկայացուցիչներ էին, քաղաքական ու հասարակական գործիչներ, ովքեր իրենց անջնջելի հետքն են թողել մեր երկրի, ժողովրդի պատմության մեջ:

Նամակներում քննարկվող թեմաները, արծարծվող խնդիրները էջ առ էջ կամարել են Սփյուռք-Նայաստան կամուրջը, ուր պատրաստակամության, սրտացավության, բարոյական ու նյութական սատար լինելու փաստերը բազմաթիվ են...

Նվիրում. ինչը կարմիր թելի նման երեւում է թե՛ ստացված, թե՛ ուղարկված նամակներից, Ասատուր Գյուզելյանի եւ Նայաստանաբնակ մտավորականների կապի մեջ անհուն սրտցավությունն է՝ առ Նայրենիք ու հայրենաբնակներ, արժանավայել միջոցառումների հիմքում՝ Նայաստան-Նայրենիքը:

Ու քանի որ նամակագիրներից շատերն անցյալ դարից են, փորձել ենք հակիրճ տեղեկություն տալ, թե ով ով է: Օգտվել ենք «Ով ով է, հայեր» կենսագրական (ՏՏ ԳԱ հրատ., 2005թ., երկու հատոր) եւ Վիքիպեդիա

ազատ հանրագիտարաններից: Կարծում ենք՝ այս ամենը ինքնին արժեքավոր է: Գրքի կառուցվածքի հարցում, որոշեցինք նամակագիրներին ներկայացնել այբբենական կարգով:

Գրում են այս տողերն ու մտաբերում Էքզյուպերիի աղոթքը. «Տուր ինձ ոչ թե այն, ինչ ես խնդրում եմ ինձ համար, այլ այն, ինչն իսկապես անհրաժեշտ է ինձ: Եվ խնդրում եմ նորից՝ սովորեցրու ինձ փոքրիկ քայլերի արվեստը»:

Ու գալիս են կարեւոր մի հետեւության՝ Ասատուր Գյուզելյանն այն մարդն է, որ տիրապետում է փոքրիկ քայլերի արվեստին...

*«Մուղնի» հրատարակչություն
Ռուզան Պետրոսյան*

Առաջաբան

Մեկ անգամ չէ, որ առիթ եմ ունեցել գրքերի առաջաբան գրելու, եւ բոլոր դեպքերում հստակ ու որոշակի են եղել թեման, ասելիքը, բայց այս պարագայում, երբ սեղանիս է Ասատուր Գյուզելյանի «Տուշ-նամականի» աշխատությունը, գրիչս «երկմտում» է:

Նամակագիրների մասին խոսելը ծովածավալ նյութ է, նամականի երեսույթի մասին խոսելը՝ շատ «չարչրկված». Էքսերմանից սկսած մինչեւ Չեխովի նամակները եղբորը, Չապորոժցիների նամակը թուրքական սուլթանին, եւ վերջապէս Աբրահամ Լիւնքոլնի նամակը որդուն:

Այս պարագայում հիշտ կլինի սկսել նամակների հասցեատիրոջից:

2019 թվականի սեպտեմբերին Սփյուռքահայ հասարակական ու մտավորական գործիչ, լոնդոնաբնակ, հանրությանը ոչ անհայտ Ասատուր Գյուզելյանը Երեւանի «Դայմոնդ» հյուրանոցի իր սենյակ է հրավիրում «Մուղնի» հրատարակչության տնօրէն Ռուզան Պետրոսյանին եւ տողերիս հեղինակին ու սեղանին է դնում նամակներով լի մի ճամպրուկ:

Նամակներ են...

Տրաշք նամակներ՝ հնագած, բայց տիրոջ կողմից խնամքով պահված:

Որքան էլ պերճախոս լինեմ, չեմ կարող ներկայացնել հասցեատիրոջը, ո՛չ այն պատճառով, որ նրա անձի ու գործունեության մասին շատ նյութ կա, այլ որովհետեւ նրան նամակներ գրողները արվեստի հանրաճանաչ գործիչներ են, աշխարհահռչակ գիտնականներ, քաղաքական գործիչներ, հոգեւորականներ, արվեստագետներ, գործընկերներ ու մտերիմներ:

Այս բազմազանությունը ոչ միայն ավելի գունեղ, այլեւ բազմիմաստ է դարձնում Ասատուր Գյուզելյան-ներկայակալը:

Ասատուր Գյուզելյանի հեղինակած գրքերը, նրա մասին հրատարակված նյութերը հնարավոր չէ թվարկել, բայց գնահատել անհրաժեշտ է հավելելով, որ նամականին առհավատչյան է այն ողջ գործունեության, որը վարել է Ասատուրը: Ամեն մի նամակ հաստատում կամ մերժում է,

նշմարտության է բերում մի ողջ կյանք՝ թույլ չտալով հայտնի փաստերի ու պատմությունների որեւէ կեղծիք:

Վստահ եմ, որ ընթերցողը կհամաձայնի այն տեսակետին, ըստ որի՝ կյանքի երեսույթների արժեւորումը, նույնիսկ ընկալումը ենթարկվում են ժամանակի ազդեցությանը եւ իրավիճակի հավասարակշռություն են ստեղծում այն ժամանակ, երբ համադրվում են հինն ու նորը:

Նորն առկա է, իսկ ո՞րն է հնի արժեքը: Օբյեկտիվությունը, նշմարտությունը: Ավելի քան նամակները, որոնք հիմնականում գրվել են անկեղծ, անշահախնդիր, գուցե եւ սուրյեկտիվ, այնուհանդերձ՝ իրենց մեջ ունեցել են ժամանակի շունչը:

Ընթերցողի հետ անկեղծ լինելու համար պետք է ասեմ, որ որոշ նամակագիրների անձնական, երբեմն շահադիտական մտքեր ու տողեր զանցառվել են, որոնք բնավ չեն խաթարել աշխատության բուն իմաստն ու նշանակությունը:

Այս գործն անաչառ վավերագրություն է, ուր ներկայացվում ու երեսում են թե՛ ժամանակները եւ թե՛ անհատներն իրենց բնորոշ հոգեվիճակներով:

Ռոմեն Կոզմոյան

Նախարան

Իմ առաջին նամականին հրատարակվել է 2014թ.ին, Բեյրութում, հետեյալ խորագրով.

«ԿԸ ԽՕՍԻՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ»

Նամակագրութիւն

Ասատուր Կիզելեան-Սիմոն Սիմոնեան

Եւ Ասատուր Կիզելեան-Վահրամ Մավեան

Նամակագիրները լինելով արեւմտահայ գրողներ՝ բնական է գրել են արեւմտահայերենով եւ դասական ուղղագրությամբ: Տարագատ մնալով լեզվին եւ ուղղագրությանը, վերոհիշյալ գրքի իմ նախաբանից մեջքերում եմ մի քանի հատված:

«...Այսօր, 50-60 տարի առաջուան հասկացողութեամբ նամակագրութիւն գոյութիւն չունի: Օրը օրին կատարելագործուող հաղորդակցութեան գերարագ միջոցները, շատոնց գրկած են մեզ, հարագատ մը ստացուած համով-հոտով նամակի մը ընթերցումին բերած հաճոյքէն»:

«...Անցեալ օր, կը կարդայի հօրս գրել տուած նամակներէն մէկը (հայրս գրել-կարդալ չէր գիտեր), ուր ան կը խնդրէր Տնդկաստանի մէջ ուսուցչութեամբ պարապող իր որդիէն, որպէսզի անմիջապէս դրամ դրկէ, այլապէս՝ «Տոս ձգած գիրքերդ ստիպուած պիտի ծախեմ», կը սպառնար ան...»:

«...Կեանքիս մէջ քիչ անգամ նամակ ոչնչացուցած եմ: Արխիւներու մէջ կայ հազարէ աւելի նամակ: Նամակագիրները եղած են ծնողքս, եղբայրներս, ազգականներս, ընկերներս, ուսուցիչներս, գրչեղբայրներս, գրականութեան, արուեստի, գիտութեան եւ մշակոյթի տարբեր բնագաւառներուն ծառայող մարդիկ, ինչպէս նաեւ՝ նախկին աշակերտներս»:

«...Որքան յոյզ կայ այդ նամակներուն մէջ, որքան տխրութիւն, ու մանաւանդ՝ երագ ու յոյս...»:

«...Նշենք նաեւ, որ այս նամակները չեն հրատարակուիր իրենց գրական արժէքին համար, այլ լոյս կը տեսնեն, որովհետեւ անոնց մէջ կ'ար-

տացույց, առաջին հերթին՝ երկու անուանի գրողներու՝ Ս. Սիմոնեանի եւ Վ. Մավեանի նկարագրի եւ անհատականութեան հարազատ պատկերը, յետոյ՝ սփիւռքահայ գրողի բազմաթիւ մտահոգութիւններով առլեփ առօրեան, ինչպէս նաեւ՝ յատկապէս Միջին Արեւելքի հայ համայնքներուն, 1957-1985 տարիներու կրթական, մշակութային, քաղաքական ու եկեղեցական կեանքն իր հարազատ գոյներով»:

Վերոգրյալ նկատողությունների եւ ընդհանրացումների կարեւոր մի մասը վերաբերում է նաեւ այս հատորում մեկտեղված նամակներին:

Ինչպէս «Կը Խօսուին նամակները»-ում, այնպէս էլ այս հատորում հրատարակվող բոլոր նամակներին պատասխանել եմ, յորաքանչյուր նամակի լուսանցքում իմ ձեռագրով գրելով «պատասխանուած» բառը: Դժբախտաբար, շատ քիչ բացառությամբ, իմ պատասխան-նամակները չեմ պատճենահանել, այն պարզ պատճառով, որ այդ տարիներին պատճենահանման ներկա միջոցները գոյություն չունեին:

Այս հատորում մեկտեղված նամակներում արտացոլված է նախ սովետական, ապա՝ հետսովետական տարիների քաղաքական, տնտեսական, հասարակական իրադարձությունների, գիտության, գրականության եւ արվեստների առաջընթացի, ինչպէս նաեւ, տեղաշարժի, երբեմն էլ՝ հետքաշարժի պատկերը:

Որտեղ եմ ծանոթացել նամակագիրների հետ:

Ոմանց հետ նամակագրական կապ եմ հաստատել, նախքան նրանց հանդիպելը: Օրինակ. Ալբերտ Փարսադանյանի հետ նամակագրություն եմ սկսել 1959 թվականից, բայց նրան առաջին անգամ տեսել եմ 1963-ին, Երեւանում, իմ առաջին Տայաստան այցելության ժամանակ:

Նամակագիրների կարեւոր մի մասին ծանոթացել եմ Տայաստանում, հայրենիք կատարած իմ բազմաթիւ այցելությունների ժամանակ: Ուրիշներին հանդիպել եմ Տնդկաստանում եւ Անգլիայում: Օրինակ՝ Կալկաթայում ծանոթացել եմ Պավել Լիսիցյանին, Վիկտոր Տամբարձումյանին, Սերգեյ Բալասանյանին, Կամսար Ավետիսյանին եւ ուրիշների, իսկ Լոնդոնում՝ Լեվոն Տախվերդյանին, Էգրաս Տասրաթյանին, Ծատուր Աղայանին, Արամ Խաչատուրյանին եւ այլն:

Նամակագիրներից մի քանիսի մասին գրել եմ իմ հուշերը, որոնք քիչ բացառությամբ անտիպ են: Արամ Խաչատուրյանի մասին հուշերիս մի մասը հրատարակվել է Ալբերտ Փարսադանյանի «Տարատեվող բա-

րեկամություն» գրքում, որը լույս է տեսել Երեսանում, 2009թ.ին: Խաչատուրյանական իմ հուշերի մասին Օֆելիա Ասատրյանը, իր դստեր, անվանի երգչուհի Անուշ Նովհաննիսյանի աջակցությամբ պատրաստել է հաղորդում, որը ձայնասփռվել է Տայաստանի պետական ռադիոյից: Այդ հաղորդումը կարելի է լսել հետևյալ կայքից

<https://youtu.be/uC6SX279K7E>

Ընթերցողները կարող են իմ հեռուստատեսությամբ եւ ձայնասփյուռով տված հարցազրույցներն ու ունեցած ելույթները դիտել կամ լսել՝ Youtube-ով (Youtube Assadour Guzelian) եւ Facebook-ով (Facebook Assadour Guzelian):

*Ասատուր Գյուզելյան
Լոնդոն, 31 հուլիս, 2020թ.*

Engel-Kunstwerk

Աբաջյան Գեորգ Համբարձումի

25.12.1920, Շնող, Լոռու մարզ – 8.10.2003,
Երեւան:

Հայ թատերագետ, գրականագետ: Բանասիրական
գիտությունների թեկնածու (1956թ.), ՀԽՍՀ արվեստի
վաստակավոր գործիչ (1972թ.):



/ 27 հունիսի 1979թ. /

Մեծարգո սփորեն Ասասուր Գյուլելյան

Խոնարհաբար խնդրում ենք հայտնել մեզ, թե ինչ բնույթի ու բովանդակության, նաեւ ինչ ծավալի հոդվածներ ու գեղարվեստական գործեր, ինչ լուսանկարներ նախապատիվ կհամարեիք ստանալ մեզանից Ձեր պարբերականում տպագրելու համար: Ձեր ցանկությունները մեծապես կօգնեն մեզ կարգավորելու համապատասխան նյութերի առաքումը:

*Սփյուռքահայության հետ մշակութային կապի
կոմիտեի մամուլի բաժնի վարիչ՝
Աբաջյան Գեորգ*

Արահամյան Աոս Գարեգինի

31. 01. 1903, Ղուշի – 28.03.1983, Երեւան:
Հայ խորհրդային աղբյուրագետ-պատմաբան, պատմական
գիտությունների դոկտոր (1943), պրոֆեսոր (1944), ՀԽՍՀ
գիտության վաստակավոր գործիչ (1961):



/ 20 հունվարի 1960թ., Երեւան /

Իմ ազնի բարեկամս պրն Ա. ԿԻԻՉԵԼԵԱՆ

Ստացել եմ Ձեր սոյն թուի յունուարի 26-ի նամակը: Շնորհակալ եմ, որ դուք ինձ չէք մոռացել: Ես Ձեզ համարում եմ իմ ուսանողը: Ճիշտ է, դուք Բելյուրում ինձ քիչ էք լսել – ընդամենը եօթը դասախօսութիւն, եւ լսած թեմաներից ինձ քննութիւն չէք տուել, սակայն երախտագէտ ուսանողին ճանաչելու համար պէտք է նրան տեսնել կեանքում, երբ ուսանողը դուրս է գալիս դասախօսի վասսալական կախաւածութիւնից եւ աշխատանքի բնագաւառում քննութիւն է տալիս ողջ հասարակութեան առջեւ: Կեանքում բռնած Ձեր քննութիւնը ես գերազանց եմ համարում:

Ճիշտն ասած, ես վաղուց ուզում էի Ձեզ նամակ գրել, բայց միջազգային այս լարուած իրադրութեան մէջ, երբ Սովետական Միութեան թշնամիներն ամեն ինչի մէջ դիտաւորութիւն են տեսնում, երբ մտերմական նամակների մէջ անգամ բոլշեւիկեան պրոպագանդա են տեսնում, մարդկանց անտեղի չվնասելու համար, գերադասում եմ լռել, քան նամակներ գրել:

Այժմ դրութիւնը փոքր-ինչ փոխուել է, մանաւանդ մեր կառավարութեան ղեկավարների՝ Խրուշչովի եւ Վորոշիլովի Տնդկաստան գալուց յետոյ: Ես շատ ուշադիր հետեւում էի թերթերին. հաւատացնում եմ, որ այն բոլոր անոյշ խօսքերը, որոնք ասեցին մեր ղեկավարների կողմից հնդիկ ժողովրդի հասցէին, կարծես իմ հոգուց էին բխում. ախր հնդիկ ժողովուրդը մեր տարագիր հայութեան համար իրօք, լաւ է եղել, ծանր օրում նրան ապաստան է տուել, հովանաւորել է, իսկ լաւ բարեկամին ծանր օրում պիտի ճանաչել:



Աշոտ Աբրահամյանը դպրեվանքի ուսանողների հետ:

Ինձ անհրաժեշտ է Ձեզ հետ նամակագրություն ունենալ ո՛չ միայն մեր երբեմնի քարեկամութիւնը վառ պահելու համար, այլ որ դուք կարող էք ինձ մեծ չափով օգնել հայ-հնդկական յարաբերութիւնների ուսումնասիրութեան գործում: Իմ ուսումնասիրութիւններն ինձ բերել են այն աներկբայելի եզրակացութեան, որ հայ ժողովուրդը, որպէս հնդիկ ժողովուրդին ազգակից ժողովուրդ, կուլտուրական շատ ընդհանրութիւններ ունի, որոնք անհրաժեշտ է քացայայտել:

Բացի այդ, ես արտակարգ սիրոյ զգացում ունեմ հնդիկ ժողովրդի նկատմամբ: Չնայած ես կարճ ժամանակով եմ եղել Տնդկաստանում, սակայն շատ անոյշ յիշողութիւններ ունեմ նրա հետ կապուած: Ինձ հմայել է այդ կախարդական երկիրն իր ժողովրդի պարով, երաժշտութեամբ, հնամենի մշակոյթով եւ այլն:

Ինձ զարմացնում է, թէ դուք ինչո՞ւ ոչինչ չէք գրում արտասահմանի մամուլում – ոչ յօդուածներ, ոչ գրախօսականներ, ոչ տպաւորութիւններ: Ես հաճոյքով կ'ուզէի կարդալ ձեր գրախօսութիւններն իմ անցեալ տարուայ հրատարակած մէկ-երկու աշխատութիւնների նկատմամբ: Մտածեցէք այդ ուղղութեամբ:

Ի՞նչ նորութիւններ կան Տնդկաստանի հայ գաղթավայրի, առանձնապէս Մադրասի հայրենասէր խմբակի եւ Կալկաթայի Յովսէփ Էմինի վերաբերեալ, մի՞թէ 18-րդ դարից արխիւ չի մնացել այդտեղ, ուզում էի, որ դուք այդտեղ պրպտումներ անէք:

Բարեւեցէք Ձեր տիկնոջը եւ Ձեր դպրոցի դասատուներին: Իմ կողմից բարեւեցէք պարոն Փոլադեանին:

Յարգանքներով՝ Աբրահամեան Ա. Գ.

Ազարյան Ալբերտ Վաղարշակի

Փետրվարի 11, 1929, Ղարաքիլիս, Գուգարքի շրջան:
Հայ մարմնամարզիկ: ԽՍՀՄ սպորտի վաստակավոր
վարպետ (1954), ՀԽՍՀ վաստակավոր մարզիչ, ՀԽՍՀ
ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր գործիչ (1967):
Օլիմպիական խաղերի եռակի (1956, 1960), աշխարհի (1954,
1958), Ասիական խաղերի (1963), Եվրոպայի չեմպիոն:
ՀՀ Օլիմպիական կոմիտեի պատվավոր նախագահն է և
ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի նախագահը:
Ասատուրը Ազարյանի հետ բարեկամական կապ է
հաստատել Հնդկաստանում որտեղ Ազարյանը 1961թ.
Սովետական Հայաստանի մարմնամարզիկների խմբի հետ
մասնակցեց մարզախաղերի:



/ 7 սեպտեմբերի 1962թ., Երևան /

Հարգելի Ասասուր, բարեւ Ձեզ,

Այս նամակը գրում եմ Ալբերտ Ազնավուրյանի հետ միասին:

Տղաները շատ բարեւներ են ուղարկում Ձեզ բոլորիդ:

Երբ հավաքվում ենք միասին, շատ ենք Ձեզ հիշում, առանձնապես
Ձեր աներոջը, որին հատուկ բարեւներ փոխանցիր մեր կողմից:

Որքան գիտեմ Դուք զավակ պետք է ունենայիք: Գրիր այդ մասին,
թե ինչ զավակ ունես եւ առհասարակ ինչպես եք զգում Ձեզ:

Կարդացի՞նք Միջին Արեւելքի թերթերում Ձեր հոդվածները, մեզ
շատ դուր եկան:

Այժմ, ՄՍՀՄ ֆիզկուլտուրայի միջազգային հանդիպումների 1963
թվի ծրագրում կա սովետական մարմնամարզիկների ելույթ (գոր-
ծուղում), որն ընդգրկում է միանգամից 4 երկիր՝ Եգիպտոս, Սիրիա,
Իրաք եւ Լիբանան: Ծրագրում նշված չէ, թե սովետական հանրապե-
տություններից որոնք պետք է ելույթներ ունենան Միջին Արեւելքում:

Մենք՝ հայ մարմնամարզիկներս շատ կուզենայինք մեկնել այնտեղ
եւ բարձրացնել Սովետական Հայաստանի պատիվը, տեսնել մեր
հայրենակիցներին:

Տղաների հետ միասին հիշեցինք նաեւ թե ինչ կարեւոր նշանակու-
թյուն ուներ մեր հայ մարմնամարզիկների ելույթները հնդկահայ գա-
ղութում:

Ուստի, մտածում ենք, որ այդպիսի ազիտացիոն մեծ նշանակու-
թյուն կունենան նաեւ մեր ելույթները Միջին Արեւելքի հայության հա-
մար: Մանավանդ, հաշվի պետք է առնել այն հանգամանքը, որ ռեակ-



Ալբերտ Ազարյանի հետ:
Յայաստան, 1963թ.:

ցիոն դաշնակներին տեղ չի մնա խոսելու Սովետական Տայաստանի հասցեին (ինչպես դա եղավ Տնդկաստանում):

Ասատուր ջան, Ալբերտները, ես, տղաները, մեր մարզիչ Ս. Ղարագոյզյանի հետ միասին մտածում ենք, որ լավ կլիներ, եթե Դուք շուտափույթ կերպով կապվեիք Միջին Արեւելքի պրոգրեսիվ հայ թերթերի խմբագիրների եւ ակումբների հետ, նրանք էլ իրենց հերթին խնդրեին իրենց պետություններում գտնվող Սովետական հյուպատոսից (կոնսուլից) մեր անվանի հայ մարմնամարզիկներ՝ Ալբերտ Ազարյանի, Վաչագան Տակոբյանի, Ալբերտ Ազնավուրյանի եւ ուրիշների ելույթ ունենալ իրենց երկրներում, որոնց անունները հայտնի են ՍՍՏՄ-ի սահմաններից դուրս:

Այնքանով, որքանով ՍՍՏՄ սպորտային միջազգային հանդիպումների ծրագրում կա այդ գործուղումը, լավ կլիներ, որ մեր հայ մարմնամարզիկները գլխավորությամբ Ազարյանի, Ազնավուրյանի եւ Տակոբյանի ելույթ ունենային Միջին Արեւելքի հայերի առջեւ:

Ինձ թվում է, որ դա մեծ նշանակություն կունենա Միրիայում, Լիբանանում, Իրաքում եւ Եգիպտոսում ապրող հայության համար:

Բարեւիր մեր կողմից տիկնոջդ:

Խնդրում եմ նամակն ստանալուն պես ուղարկես պատասխանը:

*Ձեզ հարգող՝ Ալբերտ Ազարյան, Ալբերտ Ազնավուրյան
եւ Վաչագան Տակոբյան:*

P.S. Ահա Ազնավուրյանն ասում է, որ նամակ է ստացել քեզանից եւ դու ունես արու զավակ: Շնորհավորում ենք:

Աթայան Ռոբերտ Արսակի

7.11.1915 (նոյեմբերի 20), Թեհրան – 5.03.1994, Լոս Անջելես,
թաղված է Երեւանում:

Հայ երաժշտագետ, կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի
վաստակավոր գործիչ (1961): Հայ բանաստեղծ,
արձակագիր, թարգմանիչ, հասարակական գործիչ Արշակ
Աթայանի որդին է, Ռաֆայել եւ Արմեն Աթայանների եղբայրը:



/ 16 օգոստոսի 1968թ. /

Միտելի Ասասուր,

Նամակդ ստացա այնպիսի ժամանակ, որ որեւէ կողմնակի գործ անելու ոչ մի հնար չունեի, առավոտից գիշեր զբաղված եմ կոնսերվատորիայի քննություններով: Անկախ դրանից, սակայն, չուսումնասիրված հարցերի մասին (ինչպիսին հայ երաժշտության պատմությունն է) այդպիսի թեթեւությամբ վերցնել եւ մի բան գրել, թեկուզ եւ 5 էջ (արդեն ինչքան քիչ, այնքան դժվար), լուրջ չի կարող լինել: Կարող եմ նշել երկու հրատարակություն, որոնք հավանաբար բավարարեն պրոֆ. Լենգի¹ պահանջները (կարծում եմ, որ արտասահմանում հեշտությամբ կգտնվեն դրանք): Առաջարկիր իրեն: Անշուշտ, ես շատ ուրախ եմ (ինչպես դուք եք ուրախ եղել), որ հեղինակավոր պրոֆեսորը իր գրքում հայ երաժշտության մասին էլ է ուզում գրել: Եթե ուշ չէ արդեն, այդ հոդվածների հիման վրա նա բավական բան կարող է գրել մեր երաժշտության թե՛ անցյալի, թե՛ ներկայի, նաեւ ժողովրդական ստեղծագործության մասին: Կարծում եմ (ասելն էլ ավելորդ է)՝ պատ-

1 «Լոնդոնի Տամալսարանի Արեւելյան եւ Աֆրիկյան Դպրոցի Կովկասյան ամբիոնի վարիչ, Պրոֆ. Դեյվիդ Մարշալ Լենգ (Prof. David Marshall Lang) 1970թ.ին, Լոնդոնում հրատարակեց «Տայաստան Քաղաքակրթության Բնօրրան» (Armenia cradle of civilization) մեծարժեք գիրքը, որը հեղինակը նվիրել է Վազգեն Ա. Կաթողիկոսին: Պրոֆ. Լենգն իր գրքում նշել է. «Տայաստանի ծավալով քիչ երկրներ կան, որոնք քաղաքակրթությանը նպաստել են այնքան որքան Տայաստանը. Տակառակ դրան (Տայաստանը) մնում է գրեթե անծանոթ Արեւմտյան աշխարհին»:

Գրքի նախաբանում պրոֆ. Լենգը շնորհակալություն է հայտնում նաեւ Ասատուր Գյուզելյանին հետեւյալ խոսքերով. «Լոնդոնի իմ հայ ընկերներից գնահատանքի հատուկ խոսք ունեւ Ասատուր Գյուզելյանին, ծանոթ հայ մտավորականին, նրա կատարած անխոնջ աշխատանքի համար»:

շան կերպով կնշի, թե ինչ աղբյուրից է օգտվել (դժբախտաբար, արտասահմանյան ոչ բոլոր հեղինակներն են այս հարցում բժախնդիր):

Տ. Ներսեսը պատմեց իր տպավորությունները, հետաքրքրական էին: Քո մասին էլ հարցրեցինք եւ իմացանք՝ նույն եռանդուն ու բազմաշխատ գործիչը: Տողվածո էլ կարդացի, լավ էր:

Ես Տ. Արսենին (եթե չեմ սխալվում) խնդրել էի մի բան հարցնել քեզնից. ինձ հետաքրքրում է Էմի Աբգարը՝ Շարականների եւ պատարագի երգերի ձայնագրողն ու դաշնակողը, որ ժամանակին Կալկաթա տպագրել է դրանք, արդյոք որեւէ գրական ժառանգություն չի՞ թողել իր մահվանից հետո: Մասնավորապես հետաքրքրական է, թե ինչ աղբյուրներից է նա ձայնագրել այդ երգերը, եւ ինչպիսին են եղել դրանք նախքան իր մշակելը. Արդյոք բուն ձայնագրությունները չե՞ն պահպանվել: Տեղեկություններ կան, որ Կոմիտասը բարձր գնահատական է տվել այդ ձայնագրություններին (այն ժամանակ դեռ տպագրված չէին), արդյոք ինչի՞ հիման վրա (անձամբ ինձ թվում է ենթադրաբար դատելով, որ աղբյուրը պարսկահայ է, եւ ոչ թուրքահայ): Մի խոսքով, եթե որեւէ բան կարող ես իմանալ եւ չես դժվարանա, գրիր: Այս բաները կարեւոր են, մեկ օր, վերջապես այդ բոլոր երգերը համեմատելու հարց կդրվի: Տ. Արսենին ձեր երգչախմբի համար մի խմբերգ եմ ուղարկել իմ հեղինակած, կարծում եմ դյուրությամբ պետք է սովորվի եւ հնչի: Քո հառաջադիմական հասարակական գործունեության ամենայն հաջողություն եմ մաղթում: Ուրեմն՝ հողվածներս այս են՝ (տես շրջերեսին):

Ողջույններ ևսեւ Տ. Արսենին

Atayan Robert

1) La musique armenienne in Revue "Europe", Paris, 1961, N 2-3, p. 178-186

Robert Atayan

2) Armenian systems of Musical notation in "New Orient" (bimonthly) vol. 6, October, 1967 Praha (Prague).

Ալաջաջյան Ստեփան Եղիայի

3.01.1924., Յալեպ, Սիրիա – 23.12.2010թ.,
Լոս Անջելես, Կալիֆոռնիա, ԱՄՆ:
Հայ արձակագիր, թարգմանիչ, ՀԽՍՀ մշակույթի
վաստակավոր գործիչ (1970), ԽՍՀՄ գրողների միության
անդամ 1946 թվականից:



/ 19 հուլիսի 1960թ. /

Միտլի Ասասուր

Կարո՞ղ եք երեւակայել թէ ինչ մենծ հրճուանք պատճառեցիր ինձ, երբ ստացայ «Տամոյ եւ Ֆատիլէ»-ն ու Ալ. Փարսատանեանի «Տարատեղ Բարեկամություն»* գրքերը:

Մարդիկ կան, որոնց հետ առաջին իսկ ծանօթութիւնը հաստատելուց յետոյ, ոչ միայն չեն մոռացում, այլ միշտ փնտրում են, ուզում ես միշտ տեսնել կողքիդ:

Այդպիսի ծանօթ ընկերներ քիչ ունէի եւ նրանցից մէկը դուն էիր:

Փարիզ եղած շրջանիս երկտող մը եւ մի գիրք ստացել էի քեզանից: Ամեն մի գիրք մի տեսակցութիւն էր ինձ համար ու մտածեցի, որ Երեւան հասնելուս պէս իմ լոյս ընծայած գրքերը կ'ուղարկեմ քեզ:

Չեղաւ:

Մեր երկրի յարաբերութիւնները վատթարացան Լոնտոնի հետ եւ ապա հիւանդութիւն հիւանդութեան ետեւից շրջապատեցին ինձ ու շատ բան փորփրեցին մէջս:

Թող մոռացութիւնը տանի դրանք:

Այժմ շատ ուրախ եմ գրքիդ համար: Ողջունում եմ քեզ սրտանց եւ սպասում նոր ստեղծագործութիւններուդ:

Տէ՛ր, կեցո դու զհայս....:

Ալաջաջեան Ստեփան



/ 28.01.1968թ. /

Միրելի Ստեփան Ալաճաճեան,

Տոբթ. Միշա Գիտեանը նամակդ ստացած է: Երկու օր առաջ քովն էի, երբ հարցը հանգամանօրէն քննարկեցինք: Չմոռցած ըսեմ, որ շնորհակալութիւն կը յայտատնէ նամակիդ համար, որուն առայժմ... պիտի չ'կրնայ պատասխանել:

Ամփոփեմ ցարդ եղած առաջարկութիւնները.

1. Տոբթ. Գիտեան ունի Թումանեանէն քանի մը կտորներու թարգմանութիւն միայն. պատրաստ է մինչեւ Մարտ 1969 պատրաստել 150 էջնոց հատոր մը, հետեւեալ բովանդակութեամբ: (Լոնտոնի մէջ, որպէսզի գիրք մը կարենայ լոյս տեսնել մարտ 1969-ին, ձեռագիրը հրատարակչատուն յանձնուած պէտք է ըլլայ 1968 սեպտեմբեր-հոկտեմբերին, ըստ Միշա Գիտեանին:

ա. Պոեմներ. Լոռեցի Սագոն, Անոյշ, Թմկաբերդի առումը, Մարոն:

բ. Մանկական. Թռչունի մտածմունքը, Մի բաց նամակ ամենքին, Փիսիկի գանգառը, Աշուն, Կոյրերի կարծիքը, Տերեւաթափ:

գ. Լեզենտներ եւ քալլադներ. Շունն ու կատուն, Անբախտ վաճառականներ, Ախթամար, Փարվանա, Աղջկայ սիրտը, Տոգեհան, Լուսաւորչի կանթեղը, Չարի վերջը:

դ. Պատմուածքներ. Սովի ժամանակ, Աղքատի պատիւը, Գիքոր, Արջատրս:

ե. Տեքիաթներ. Ճամբորդներ, Սուտասանը, Չախչախ թագավոր, Ոսկու կարասը, Անքան Տուփին, Կիկոսի մահը, Չախտորդ Փանոսի հեքիաթը:

Նատորը կ'ունենայ նաեւ յառաջարան մը:

2. Ձեռնարկը յաջողութեամբ պսակելու համար անհրաժեշտ է ունենալ նիւթական օժանդակութիւն Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութենէն կամ Ն.Բ.Ը.Մ-էն:

3. Այս մասին երէկ գրեցի Վահրամին եւ ներկայացուցի հետեւեալ առաջարկները.

ա. Կիլպէնկեան հիմնարկութիւնը Թումանեանի 100-ամեակին իր մասնակցութիւնը բերել հրատարակելով բանաստեղծէն անգլերէն հա-

տոր մը: Գաղափարը «յղագած» կ'ըլլան իրենք...: Ամենէն պարզ ձեւն է այս:

բ. Լոնտոնի մէջ կազմուելիք յանձնախումբը կը դիմէ իրենց, որպէսզի ձեռնարկին բերեն իրենց նպաստը:

գ. Տայաստանի Գրողներու Միութիւնը կամ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն կը դիմէ իրենց, որպէսզի ձեռնարկին նպաստեն:

4. Գործը յաջողցնելու համար, այսինքն՝ Թումանեանէն անգլերէն հատոր մը լոյս ընծայել կարենալու համար, անհրաժեշտ է հրատարակիչներուն ներկայանալ հետեւեալ երկու առաջարկներէն մէկն ու մէկով.

ա. Գիրքը հրատարակել էս պատասխանատու ըլլալ ամբողջական ծախսին, այս պարագային շահը, անշուշտ, (եթէ ըլլայ...) կ'երթայ մեկենասին:

բ. Գիրքը կը հրատարակուի հրատարակիչ ընկերութեան պատասխանատուութեամբ, այն տարբերութեամբ, որ կազմակերպութիւն մը 1000-1500 օրինակ միանուագ կը գնէ ընկերութենէն...:

Արդ, քեզմէ կը խնդրեն, որ անմիջապէս նամակով մը ձեռնարկին կարեւորութիւնը բացատրես Վահրամին. երկու բարեկամներէ եղած թելադրութիւնը գործը կրնայ աւելի արագացնել:

Ուրիշ հարց մը. եթէ հիմնարկութիւնը ուզէ, որ դիմումը զայ Գրողներու Միութենէն, արդէօք ձեր վարչութիւնը յանձն պիտի առնէ գրելու նման դիմում մը:

Ահա ընդհանուր գիծերու մէջ ցարդ կատարուած աշխատանքը:

Ջերմ բարեւներ քոյր տղոց.

Աղայան Ծասուր Պավելի

12.01. 1912, Փիփ, (այժմ՝ գ. Չազլիկ Դաշքեսանի, շրջանում) –
3.12.1982թ., Երևան, Հայկական ԽՍՀ:
Պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1948),
պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1968, թղթակից անդամ
1950 թվականից):



/ 15 հունվարի 1978թ., Երևան /

Հարգարժան բարեկամ Ասասուր,

Չնայած Ձեզ գրել եմ եւ դեռ պատասխան չեմ ստացել, նորից, օգտվելով առիթից, ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել Լոնդոնում մեզ հայկական պատվիրակությանը ցույց տված ուշադրության համար: Ձերմությամբ ենք հիշում Լոնդոնի «Հայկական տան» հանդիպումը, Արտոյի հանելի արվեստը, ինչպես նաեւ Ձեր շատ հանելի ընտանիքի՝ տիկնոջ եւ դուստրերի հետ տեսակցվելը: Խնդրում եմ մեր բարի զգացումներն ու ողջունները հաղորդեք բոլորին, հատկապես Ամանորի առթիվ:

Ծատ հանելի էր պարոն Հայկի եւ նրա որդիների հետ ծանոթանալը, նրանց հայրենանվեր գործունեությունը, հատկապես «Հայ երաժշտության ինստիտուտի» ստեղծումը եւ սփյուռքում հայկական երաժշտության տարածումը շատ պատվավոր եւ գովեստի արժանի գործ է: Խնդրում եմ նրանց եւս հաղորդեք Նոր տարվա բարի ցանկություններս:

Ինձ հաղորդեցին, որ գրքի թարգմանության վերաբերյալ Վեհափառը Ձեզ գրել է: Խնդրում եմ արեք ինչ հնարավոր է եւ դա կլինի շատ կարեւոր եւ հայրենանվեր գործ: Կատարեք ինչպես հարմար գտնեք, իսկ պարոն Հայկը իր խոստման համաձայն կաջակցի: Մեր ակադեմիայի գրադարանը նրան ուղարկել է մեկ օրինակ, բայց ստանալու վերաբերյալ պատասխան չեմ ստացել:

Խնդրում եմ նաեւ նշեք, թե 1920-1921թթ. Հայկական գործերին վերաբերող Ձեր հավաքած նյութերը Լոնդոնի որ արխիվում են պահվում (ֆոնդը, գործ եւ այլն, եթե հնարավոր է):

Դուք խոստացաք, որ պարոն Տայկի հետ պետք է այցելեք Երևան, շատ հանելի կլինի Ձեզ տեսնել Մայր հայրենիքում եւ հիանալ նրա կառույցներով: Շատ նորություններ ունենք Ձեզ ուրախացնելու համար:

Պարոն Տայկի տղաների համար հայերեն սովորելու դասընթացը պատրաստել է աղջիկս եւ շուտով ձայնագրված կուղարկեմ, որ մայրենի լեզուն չմոռանան:

Իմ սրտագին ողջյունները տիկին Վիվիենին, Կարինեին եւ Արմինեին:

Բարեկեք «Տայկական տան» բարեկամներին եւ բոլոր ծանոթներին, հատկապես պարոն Տայկին, Արտոյին եւ մեզ բարի հիշողներին:

Խորին հարգանքներով՝ Աղայան Օստոյր

❖ **Հարգարժան Ասասուր Գյուլելյան,**

Ընդունեք Նոր տարվա շնորհավորանքները եւ ջերմագին ցանկությունները: Գրադարանը պարոն Տայկին ուղարկեց իմ գիրքը, որ նա խնդրել էր: Պատասխան չստացանք ստանալու մասին: Ցանկալի է իմանալ նաեւ թարգմանության մասին: Ջերմ բարեւներ տիկին Վիվիենին եւ աղջիկներին:

Տարգանքներով՝ Աղայան Ծատուր



/ 22 սեպտեմբերի 1977թ. /

Խորին հարգանքով եւ ջերմ ցանկություններով Ասատուր Գուլելյանին հայ ժողովրդի հոգսերով ապրող նրա մեծ զավակին եւ պայծառ մարդուն հեղինակից:

Աղայան Ծատուր

*«Տայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից»
գրքի մակագրությունը:*

Անանյան Սեդա

Գրող, գրականագետ, հրապարակագիր Սովորել է ԵՊՀ բանասիրական ֆաուլտետի Ռոմանո-գերմանական բաժնում ֆրանսերեն լեզվի եւ գրականության որակավորմամբ: 1964-69թթ. աշխատել է ԳԱ Արվեստի ինստիտուտում: 1966-67թթ. աշխատել է որպես Կոստան Չարյանի քարտուղար-օգնական: 1970-86թթ. աշխատել է Հայկական Սովետական Հանրագիտարանի Արվեստի եւ ճարտարապետության բաժնում, որպես գիտական խմբագիր, որտեղ խմբագրական աշխատանքից բացի հանդես է եկել նաեւ հեղինակային հոդվածներով: 1986-ից բնակվում է Փարիզում եւ Լոնդոնում: Սփյուռքահայ մամուլում հրատարակել են նրա մի շարք հոդվածները հայ մշակույթի եւ նրա գործիչների մասին:



/ 3 փետրվարի, 2012թ. /

Սիրելի Ասասուր,

Նախ մեծապես շնորհակալ եմ ունենալու երեք գրքերդ: Ասեմ, որ սկսեցի կարդալ ստանալուս պահից, մի կողմ թողնելով ամեն ինչ:

Կարդացի ուշադիր, մանրամասն:

Գիրք առաջին. Այս գրքի՝ «Նարատեուղ բարեկամության» գլխավոր հերոս Ալբերտ Փարսադանյանը հայրական կողմից իմ հայրենակիցն է: Երկու հորեղբայրներս Արշակ եւ Ալբերտ Անանյանները Փարսադանյանի ընկերներն են դեռեւս Ալավերդիից: Երկու հորեղբայրներիս պատկերը ուրախությամբ գտա «Սպանդարյանցիները» լուսանկարի մեջ:

Արշակ հորեղբայրս երկար տարիներ եղել է Երեւանի ռադիո-հեռուստատեսության արտասահմանյան հաղորդումների գլխավոր պատասխանատուն (այժմ՝ վետերան), իսկ Ալբերտը կրթության եւ լուսավորության փոխնախարար (այժմ՝ խորհրդատու):

Ալբերտը (Փ.) 1905-ին Երեւանում ինձ նվիրեց իր «Գիտելիքների շտեմարանը», «Ես սիրում եմ քեզ»-ը, «Անունների շքահանդես»-ը եւ «Նարատեուղ բարեկամություն»-ը, որտեղից էլ «ճանոթացա» քեզ հետ: Տիրավի ձեր 60-ամյա բարեկամությունը բացառիկ է, հուզիչ եւ օրինակելի իր անկեղծ ջերմությամբ: Ընկերություն, որ հատուկ է հատկապես դպրոցական պատանիներին, բայց կարդալով ձեր նամակները, թվում է, որ երկուսդ էլ 60 տարի հետո պարզապես դարձել եք իմաստուն պատանիներ:

Շատ ու շատ հիշարժան դեպքերի ու դեմքերի ընդմեջ են հպարտ զգացի նաեւ Ալբերտի թոռան՝ Դավիթ Ալեքսանյանի կերպարով:

Գիրք երկրորդ. «Թերթելով մամուլը» կարդացի հափշտակությամբ եւ զարմանքով: Ինչպե՞ս կարող է մի մարդ այդքան գործ անել, գործ, որի համար, առանց չափազանցության, 2-3 կյանք է պետք: Ահավասիկ.

- Ոսուցիչ-կրթական գործիչ
- Խմբագիր-հրապարակախոս
- Ազգային-հասարակական գործիչ
- Տայ դատի պաշտպան
- Բանասեր-պատմաբան
- Արձակագիր-բանաստեղծ եւն, եւն.:

Տիշյալ կոչումներն ու գործերը կատարված հախուռն թափով եւ քո իմացությամբ, որ կբնորոշվի ածականների շարանով.

- ուսյալ, խորաթափանց, սկզբունքային, անաչառ, ստեղծագործ, համարձակ, ազգասեր, դպրապաշտ, հաշտարար, ուշադիր, ընկերասեր, նշմարիտ եւն, եւն:

Բոլոր այս ածականները նույնիսկ բավարար չեն քո անցած տարիների գործերի համար, որ վստահ եմ կհաստատեն բոլոր քեզ հանաչողները: Բայց, ինչպես Լեւոն Տախվերդյանը կասեր, այս ամենը շատ չէ՞ մի մարդու համար: Իհարկե շատ է ու անհավատալի, սակայն միանգամայն հասկանալի, երբ խոսքը Ասատուր Գյուզելյանի մասին է:

Շատ կարելի է խոսել այս գրքի մասին՝ կարեւոր եւ տպավորիչ հանդիպումներդ հայ եւ օտար անվանի դեմքերի հետ, որոնցից Տարուղ Պաքսբընը, Յորկըն Անդերսըն Ռոզենթալը եւն:

Իսկ Թագորի մասին ուսումնասիրություններդ արժե հրատարակել առանձին: Ի դեպ, Թագորից նամակներ եւ պահպանվել Կոստան Ջարյանի արխիվներում:

Տողերս զսպելով, կուզենայի ասել, որ «Թերթելով մամուլը» արժանի է դառնալու հայ մարդու սեղանի գիրքը:

Ավելացնեմ այնուամենայնիվ, որ այս գրքում նույնպես, բացի Լեւոնից, մի ազգական եւս գտա, որ քո իսկ խոսքերով «զարմանալի եւ մոգական» Դոնարա Տարությունյանն է, Լենինականի Քաղկոմի նախկին

քարտուղարը: Տիագումդ Դոնարի մասին միանգամայն բաժանում եմ, բայց անտեսել ես, որ Դոնարան նաև շատ գեղեցիկ էր եւ ւսիսու, որ իր լուսանկարը չկա գրքի մեջ: Դոնարան այժմ Երեւանում է ապրում:

Գիրք երրորդ. «Նամո եւ Ֆատիլէ»: Այս մեկն արդեն վեր է բոլոր սպասումներից: Այո՛, Ասատուր Գյուզելյանը բանաստեղծ. Բանաստեղծ առանց ածականի: Դե, չասե՞մ, որ այսքանը չափազանց է մի մարդու համար, շատ է, քանզի, ասենք, կրթված եւ շատ թեքիչ օժտված մարդը համառ աշխատասիրությամբ իր ասպարեզում կարող է դառնալ կարեւոր, ազգօգուտ հեղինակություն:

Բայց հայտնի բան է նաև, որ ո՛չ մի ջանք ու համառություն նրան բանաստեղծ չեն դարձնի:

Ասատուր ջան, կուզենայի հարցնել այնուամենայնիվ, թե ինչպե՞ս կարողացար բանաստեղծիդ այդքան երկար ժամանակ մեջդ թաքցնել...

*Ահա քեզմէ, քու ամբարեղ հնադարեան,
Մորազ սիրոյ, իմաստութեան ափ մը ցորեան
Ակօսներուն մէջ տողերուս ես կը ցանեմ,
Տին մեղեդին նոր սրինգով կը նվագեմ:*

Մքանչելի է... բայց նորից եմ զսպում տողերս, քանի որ սա միայն նամակ է եւ ո՛չ գրախոսական ասելով.

Վարձքդ ի կատար Ասատուր Գյուզելյան եւ խորին շնորհակալություն:

*Անանյան Սեդա
W.G.C. 21.01.2012*

P.S. Ասատուր ջան, ինչպես տեսնում ես նամակս գրել եմ հունվար 21-ին, բայց հասցեդ, որ ծրարից կտրել էի եւ մի լավ տեղ պահել, չէի գտնում: Այսօր պատահամբ տեսա, որ արտագրել եմ ծոցատետրիս մեջ եւ կտրված թուղթը նետել:

*Նույն
03.02.2012*

Առափելյան Օֆելիա (Մոսկվայի № 1650 դպրոցի սնօրեն)

Բարսեղյան Հեղինե (դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի)



/ 14 մարտի 1994թ. /

Центральное окружное управление
Департамента образования г. Москвы

Հարգելի պարոն Գյուլելյան

Անչափ մեծ հուզմունքով եւ ուրախությամբ ստացանք Ձեր սրտանց նվերը մեր մանուկներին՝ 1200 դոլար:

Այդ գումարը մենք կօգտագործենք մեր դպրոցի կարիքների համար Ձեր անունից կզենենք երաժշտության դասերի համար նոր գործիքներ (դաշնամուր): Նաեւ կկազմակերպենք մայիս ամսին մեծ տոն՝ ուսումնական տարին վերջացնելու եւ Տայոց Այբուբենը ավարտելու առթիվ: Այդ օրը երեխաները Ձեր անունից նվերներ կստանան եւ տոնական ճաշկերույթի կնստեն: Տոնին կհրավիրենք Մոսկվայի Տայ եկեղեցու ներկայացուցիչ, հայ եւ այլ ազգերի հյուրեր, TV, Ռուսաստանի կրթության դեպարտամենտի աշխատողներ: Այդ տոնական օրը Ձեր շնորհիվ կմնա մեր մանուկների հիշողության մեջ ողջ կյանքում:

Մեր դպրոցը ստեղծվել է շնորհիվ Մոսկվայի կառավարության: Տայաստանի համար այս անչափ ծանր օրերին նրանք օգնեցին մեր հայ մանուկներին չկտրվել գիր ու գրականությունից, սովորել մայրենի լեզուն, մշակույթը:

Մեր հայ երեխաները ուրիշ ազգերի մանուկների հետ հավասար ուսումնասիրում են ռուսերեն, անգլերեն, քալեա, երաժշտություն: Տետո նրանք կվերադառնան Տայրենիք բազմակողմանի կրթություն ստացած: Նրանք են Տայաստանի ապագան ու հույսը:

Իմացեք, որ Դուք էլ հեռու Lոնդոնից մասնակցում եք ապագա Տայաստանի կառուցողների, ստեղծողների, շենացնողների գործին:

Դա շատ կարեւոր է, որ մեր ռուս բարեգործները, Մոսկվայի կրթության դեպարտամենտը եւ հասարակությունը իմանան, որ աշխարհի հայերը (ի դեմս Ձեզ) չեն մոռանում իրենց մանուկներին: Որ մենք չենք

մեղավոր այսօրվա պանդուխտ լինելու մեջ: Մենք սիրում եւ օգնում ենք իրար:

Ձեր ուղարկած դրամի մի մասն էլ մենք կդնենք բանկում հատուկ հաշվի վրա եւ ամեն ամիս Ձեր անունից թոշակ կհատկացվի կարիքավորներին:

Կարծում ենք հավանություն կտաք այս ծրագրին:

Իհարկե, մենք անչափ ուրախ կլինենք տեսնել Ձեզ մեր տոնին: Իսկ եթե չստացվի, ուրեմն իմացեք, որ մենք ու մեր մանուկները սրտով ու մտքով Ձեզ հետ ենք: Ձեր նման մարդկանցով է վստահ ու հպարտ մեր ժողովուրդը: Բարի, շիտակ, մեծ սրտի տեր անշահախնդիր Մարդ:

Ցանկանում ենք Ձեր ընտանիքին առողջություն, հաջողություն, ամենայն բարիք:

Նարգանքով, Ձեր՝

Առաքելյան Օֆելիա (Մոսկվայի № 1650 դպրոցի տնօրեն),

Բարսեղյան Նեղինե (դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի):

Ավետիսյան Կամսար

4.07.1904, Հին Բայազետ (Երզրումի նահանգ) – 24.10.1976,
Երևան:
Հայ աշխարհագրագետ, մանկավարժ, գրող:



/ 28 դեկտեմբերի 1959թ., Երևան /

Շահագրգիռ քարտեզում և հայրենակից պարոն Ասատուր,

Ուրախությամբ ստացանք Ձեր նամակը և սիրով ընդունեցինք Ձեր շնորհավորանքը:

Մենք էլ մեր կողմից ջերմագին շնորհավորանք ենք ուղարկում թե՛ Նոր տարվա և թե՛ Ս. Ծննդյան տոների առթիվ Ձեզ և Ձեր ողջ ընտանիքին:

Սիրելի քարտեզում որքան հաճելի է ստանալ հեռավոր Հնդկաստանից հայկական հնագույն և լավ հուշերով պահպանված հայրենակցից նամակ:

Նետուապես Ձեր նամակը անչափ ուրախացրեց մեզ:

Գրեցեք երկար, մանրամասն մեր մյուս հայրենակիցների սիրելի Վահան Փոլադյանի և Նովսեփ Մադատի գործերի և առողջության մասին, որոնցից նամակ գրեթե չեմ ստանում:

Նարգելի քարտեզում, պարոն Նովսեփն ու Վահանը հավանաբար Ձեզ պատմած կլինեն մեր և Ձեր գեղեցիկ հայրենիքի, նրա բնության ու հաջողությունների մասին: Կուզենայինք, որ դուք էլ գայիք և վայելեիք այդ բոլորը: Ես չեմ հիշում պ. Փոլադյանի հետ կամ փոստով (ավելի ճիշտ վերջինս) ուղարկել եմ իմ վերջին աշխատությունը «Արեւմտյան կիսագնդի երկրներ» գիրքը: Եթե ոչ կուղարկեմ, միգուցե Ձեզ հետաքրքրի:

Ներկայումս աշխատում եմ Հնդկաստանի աշխարհագրության վրա: Եթե Ձեզ նեղություն չեմ պատճառի ուղարկեիք մի քանի հանրահայտ տեսապատկեր հնդկական կյանքից, հայկական ճեմարանի, եկեղեցու և սաների նկարները, իմ գրքում զետեղելու համար:



Կամսար եւ Ասպրամ Ավետիսյան:

Մեծարգո պարոն Գյուզելյան, գրեք նաեւ Ձեզ կարիք եղած գրքերի մասին, կողարկեմ:

Տույտով ենք, որ առիթ կգտնեք Տայաստան գալու եւ մեր համեստ հյուրասիրությունը վայելելու:

Աշխատեք գալ մեզ մոտ օգոստոսի վերջին եւ անպայման սեպտեմբերի սկզբներին, սեպտեմբերը Երեւանի լավագույն ամիսներից է, վատ չէ նաեւ հոկտեմբերը:

Իմ եւ տիկնոջս՝ Ասպրամի կողմից ջերմագին բարեւներ Ձեզ եւ Ձեր ընտանիքին:

Բարեւեք իմ հայրենակիցներին:

Մի մոռացեք հաճախ գրել:

Բարեւներով՝ Ավետիսյան Կամսար



Շահ սիրելի Ասատուր,

Տարգելի հայրենակից, նախ եւ առաջ անչափ ներողություն եմ խնդրում, որ այսպէս ուշացած եմ պատասխանում քո այնքան սիրալիք եւ հանելի նամակին:

Զգրելուս պատճառներից մեկն էլ այն էր, որ ես Երեւանից քացակալում էի. Եգիպտոս, Սիրիա եւ Լիբանան էի մեկնել:

Սիրելի եղբայր Ասատուր, հիացած եմ մեր հաջող ճանապարհորդությունով եւ իմ հայրենակիցների ջերմ ու հարազատ ընդունելությամբ: Տավանաբար «Արեւ», «Արարատ», «Տառաջ» եւ այլ թերթերում հանդիպած կլինեք:

Սիրելի Ասատուր, հոգաչափ գոհ եմ եգիպտական տեսարանների համար, որ ուղարկել էիր ինձ: Ստացա երեք անգամ, մեկը Եգիպտոսի պանորաման էր, իսկ մնացած երկու կապոցը թվով 18 գրքեր եգիպտական քաղաքների եւ առանձին մասերի վերաբերյալ: Տայկական գաղութի եւ ճեմարանի ու եկեղեցու մասին առաջմ չեմ ստացել, չմոռանաք: Աշխատությանս մեջ կուզեմ վերջիններիս մասին նույնպէս լինի:

Այսպիսով իմ սիրելի հայրենակից քավական նեղություն եմ պատճառում քեզ:

Սիրելի Ասատուր կրկին ու կրկին ինձ ներիր, որ ես քեզ անմիջապէս չեմ պատասխանել:

Տուով եմ, որ չի կրկնվի եւ կպատասխանեմ անմիջապէս:

Գրել էիր ձեր գալու մասին, ուրախ եմ եւ շատ ուրախ: Անպայման հայրենիքը պետք է տեսնել:

Աշխատիր դա լինի սեպտեմբերին եւ հոկտեմբերին, նայիր քո հարմարությանը, որովհետեւ Երեւանի ամենալավ ամիսները դրանք են: Գուցէ այնպէս դասավորվի, որ լինես 40-ամյակին (Տայաստանի):

Ծատ սիրելի հայրենակից իմ գործերը եւ առողջությունը լավ են, շատ լավ բաներ տեսա վերջին ճանապարհորդությանս ժամանակ, մանավանդ եգիպտական բուրգերն ու սֆինքսը:

Ասատուր ջան, իմ կողմից կբարեւես տիկնոջդ նաեւ իմ տիկնոջ կողմից:

Տուով եմ, որ նա էլ կգա Երեւան եւ մոտիկից կծանոթանանք:

Ծատ բարեւներ պ. Տովսեփին եւ պ. Վահանին: Ինչպէս է նրանց առողջությունը:

Սիրելի Ասատուր, ես էլ կուզենայի քեզ գրքեր ուղարկել, բայց ինչպիսին դուն գրիր:

Խնդրում եմ ներողամիտ լինես նամակիդ ուշ պատասխանելու համար: Նուսով եմ, որ դու որպես փոքր եղբայր չես դժվարանա շուտ պատասխանել եւ վերականգնել այն թղթակցական բացը, որ ես ստեղծեցի:

Մեզ մոտ կատարյալ գարուն է, բոլորս լավ ենք եւ օրհնում ենք տիրոջը, որ խաղաղ ապրենք: Խաղաղություն եմ ցանկանում իմ լավ հայրենակիցներին եւ նրանց բարեկամ հնդիկներին, որոնցից ես այնքան լավ հուշեր եմ պահել:

Նուսով եմ, որ նամակս ձեզ կգտնի բարի առողջության պահին:

Մնամ ձեզ հարգող եւ սիրով սպասող ձեր հայրենակից

Ավետիսյան Կամսար



/ 27 դեկտեմբերի 1960թ. /

Սիրելի հայրենակից Ասատուր,

Ձեր գիրքը՝ «Նամոյ եւ Ֆատիլե»-ն ու կոկոսյան ընկույզները ստացա Լուպոից: Ստացա նաեւ Ձեր նամակները: Բայց Կալկաթա գալուց հետո ոչ մի տեղեկություն չունեմ եւ անհանգստանում եմ, թե ինչ պատահեց:

Ինձ պարզ չեղավ նաեւ այն, թե ինչու Երեւան չեկաք, մեծ հույսեր ունեի իրար տեսնելու:

Երեւանի տղաները Լեւոնն ու Մակարը շատ սիրով էին պատմում քո մասին:

Սիրելի Ասատուր, ես շատ կփափագեմ իմ հեռավոր հայրենակիցներիցս միշտ նամակ ստանալ եւ մանավանդ Ննդկաստանից, որտեղից այնքան լավ հուշեր ունեմ: Դրա համար խնդրում եմ անպայման գրես եւ ես իմանամ դու դեռ Կալկաթայում ես, մանավանդ որ ուզում եմ քեզ գրքեր ուղարկել:

Ասատուր ջան, այս նամակով շնորհավորում եմ Ձեր Նոր տարին եւ Ս. Օննդյան տոնը, ցանկանում քեզ ու տիկնոջդ հաջողություն եւ երջանկություն: Բարեմաղթում եմ նաեւ, որ անպայման Երեւան գաք, մեզ հյուր լինեք:

Նույնը խնդրում եմ հայտնիք իմ հնդկահայ մյուս բարեկամներին ու

հայրենակիցներին պ. Փռլադյանին եւ Նովսեփ Մադաթին, որոնք ինձ նամակ չգրեցին:

Միրելի Ասատուր, մի քիչ մանրամասն գրիր քո ճանապարհորդությունից եւ կյանքից:

Անպայման իմացած կլինես իմ Կահիրե եւ Բեյրութ լինելու մասին: Անչափ գոհ եմ եւ լավ հայրենակիցների հետ ծանոթացա: Նրանցից հաճախ նամակներ եմ ստանում եւ պատասխանում: Ափսոսում եմ, որ վերջերս քեզ հետ նամակագրությունը ժամանակավորապես ընդհատվեց: Նույսով եմ, որ կշարունակես գրել, ես էլ իմ հերթին կանեն նույնը:

Այս տարի նոյեմբերի 29-ին լրացավ Նայաստանի 40-րդ տարեդարձը, բայց տոնակատարությունը հավանաբար լինի հունվարին, որովհետեւ հետաձգվել է: Մոտ օրերս այստեղ էին բեյրութաբնակ երկու հայրենակից Գառնիկ Ադդարյանը եւ Գեղամ Սեւանը:

Միրելի Ասատուր քո ուղարկած գրքերի ու նկարների համար հոգաչափ գոհ եմ: Ներողություն խնդրելով կուզենայի, որ կրկին ուղարկեիր Կալկաթայի Ս. Նազարեթ եկեղեցվո, ճեմարանի ու ուսանողների նկարը, բայց քիչ մեծ, որովհետեւ եղածը փոքր է եւ գրքում լավ դուրս չի գա:

Կրկին գրում եմ մի մոռացիր մեզ եւ անպայման գրիր թե ինչ գրքերի կարիք կա, որ ուղարկեն: Այս տարի Երեւանում շատ տաք է մինչեւ այսօր դեռ ձյուն չի եկել: Երեւանցիները պատրաստվում են Նոր տարին դիմավորել: Չմոռանամ ասել, որ այդ տոնը մեզ մոտ շատ լավ են դիմավորում: Ամեն մեկը աշխատում է մյուսից ետ չմնալ, տիկիները մրցման մեջ են: Մենք էլ նույն հոգսով ենք տարված:

Կրկին ու կրկին բարեւներ քեզ եւ տիկնոջդ:

Միշտ քեզ հարգող Ավետիսյան Կամսար



Պատվական հայրենակից, սիրելի Ասատուր,

Ներողամիտ եղիր նամակիդ ու զ պատասխանելու համար:

Սիրելի Ասատուր, քաղաքից որոշ ժամանակով բացակայում էի (գործով մեկնել էի Մոսկվա):

Նամակդ երբ ստացա անջմիջապես եղա Մատենադարանում եւ իմացա, որ քո խնդրածը ուղարկել են, բայց հասցեն ռուսերեն են գրել, այդ պատճառով ետ է եկել եւ նորից են ուղարկել, այս անգամ գրելով արդեն անգլերեն լեզվով:

Ասատուր ջան, քո գրքի մասին Շիրազը լավ կարծիքի է եւ շատ ուրախ, կփափագի ունենալ, բայց քո մակագրությամբ: Ուստի դու նրան մի օրինակ ուղարկիր իմ հասցեով, ես էլ կտամ իրեն:

Վերջերս ինձ հանդիպեց եւ հարցրեց ստացել ես, պատասխանեցի, որ տակավին ոչ: Իհարկե, մեղավորը ես եմ, որովհետեւ քեզ այսքան ուշացումով եմ գրում:

Սիրելի Ասատուր, չգիտեմ ինչու, բայց խոստումդ չես կատարում եւ տիկնոջդ հետ չեք գալիս Տայաստան:

Շատ կփափագեմ Ձեզ ոչ միայն Երեւանում, այլ մեր տանը հյուր տեսնել: Քեզ ես հաճախ եմ նեղություն տալիս եւ միշտ շնորհակալ այն նկարների ու նյութերի համար, որ ուղարկում ես:

Ննդկաստան աշխատությունս լույս տեսնելուն պես քո եւ տիկնոջդ օրինակը կստանաք փոստով: Տիմա հերթը Արաբական երկրներինն է: Գրելու եմ այդ երկրների աշխարհագրությունն ու պատմությունը:

Քո բարեկեցությունը Լեւոն Տախտախյանին եւ Ջավադ Թորոսյանին հայտնեցի, շատ ուրախացան ու խնդրեցին գրելուց իրենց կողմից բարեկեցություն հայտնեմ:

Ասատուր ջան, չգիտեմ այս նամակը որտեղ կստանաս, բայց խնդրում եմ անպայման չմոռանաս եւ շուտով գրես: Եթե ես ուշացնում եմ դա դեռ չի նշանակում, թե ձեզ մոռացանք, ոչ, մենք մեր պատվելի հայրենակիցներին երբեք չենք մոռանում:

Ասատուր ջան, ես պատրաստվում եմ Ավստրալիա գնալ հավանաբար լինենք Սիդնեյ, ուր ասում են հայեր կան: Եթե դու կամ ուրիշները կարող եք ինձ օգնել, կփափագեմ նրանց հանդիպել, գիտես ինքնին շատ հետաքրքիր է այդ հեռավոր աշխարհում հայրենակիցների հանդիպել:

Այդ առթիվ հիշեցրու նաեւ պ. Վահան Փռլադյանին, գուցե նա էլ կունենա մի որեւիցե ծանոթ, մտերիմ կամ թե հայկական դպրոցի, ակումբի հետ կապ: Կարճ ասած, մեր հայրենակիցներին տեսնելու հնարավորություն լինի:

Գրիր սիրելիս քո եւ տիկնոջդ առողջությունից եւ գործերից:

Լավագույն բարեւներ հաղորդիր տիկնոջդ իմ եւ տիկնոջս կողմից: Բարեւիր իմ լավ հայրենակիցներին:

Ամենից կարեւորը մի մոռացիր, հաճախ գրիր եւ անպայման աշխատեք մեզ հյուր գալ:

Բարեւներով եւ սիրով՝ Ավետիսյան Կամասար

Ըստ Միրելի Ասասուր,

Քո ուղարկած գիրքը հանձնեցի Շիրազին, շատ - շատ ուրախացավ եւ անչափ գոհ է սիրալիք նվերիդ համար: Ես հայտնեցի քո ջերմ խոսքերը նրա մասին: Շիրազը առավել գոհ մնաց: Նա մոտ օրերս ինձ կտա իր «Քնար հայրենի» բանաստեղծությունների ժողովածուն քեզ ուղարկելու համար: Այն ստանալուն պես կուղարկեմ քեզ ու նամակ կգրեմ:

Ասատուր ջան, ուղարկում եմ գրքիս մի գլուխը, որը նվիրված է հնդկահայերին (անցյալն ու ներկան) արդի հայ գաղութի, նրա հեմարանի կյանքից: Խնդրում եմ համարձակ կերպով ուղղես, կողքին լրացնես կամ առանձին տեղ գրես: Ինչպես կգտնես հարմար: Կարեւորն այն է, որ գեղագիտորեն լավ շարադրվի եւ հնդկահայ գաղութի պատկերը ճիշտ ներկայացվի:

Թե դու, թե մյուս հարգելի մանկավարժները կօգնեն այս գործին:

Խնդրում եմ լինեք ներողամիտ եւ վաղօրոք հայտնում եմ շնորհակալությունս:

Տարգանքներով եւ բարեւներով՝ Ավետիսյան Կամասար

Պատասխանուած 25.09.61



Շահ սիրելի Ասատուր, իմ պատվական բարեկամ եւ հայրենակից,
Անչափ ներողություն պիտի խնդրեմ, որ այսքան ուշ եմ պատասխա-
նում նամակիդ: Պատճառը հիվանդությունս էր: Երբորդ ամիսն է ինչ
պառկած եմ, հիմա լավ եմ:

Առաջին գործերից մեկը եղավ այն, որ շտապեցի օդով ուղարկել
քեզ նոր լույս տեսած Տայաստանի Ատլասը:

Դա շատ արժեքավոր բան է եւ քեզ էլ պետքական: Մեկ հատ էլ
ուղարկում եմ պ. Վահան Փոլադյանին (եթե ինձ չի մոռացել):

Ասատուր ջան, դու ստացա՞ր Շիրազի «Տայրենի քնար» գիրքը, որը
բերել էին այդ սպորտի մասնակից երիտասարդները: Դու անպայման
գրիր, թե ինչ է քեզ հետաքրքրում, ինչ ես կամենում ես կուղարկեմ: Գա-
լով իմ մասին, որ քեզ հանախ եմ նեղություն պատճառում, դու նկատի
ունեցիր ինձ համար հայագիտությանը սփյուռքահայ մամուլից ինչ
հարմար կգտնես եւ մեկ էլ արաբներին (թե ժողովրդին, թե աշխար-
հագրությանը) վերաբերող գրականություն:

Արաբների թե՛ բնակչության, թե՛ աշխարհագրության մասին աշ-
խատություն եմ գրում: Սկսած Իրաքից, Մաուդ Արաբիայից մինչ Թու-
նիս եւ Մարոկկո:

Ասատուր ջան, այս բոլորը թող քեզ նեղություն չպատճառեն եւ
չմտահոգեն:

Դու այդ ատլասից եթե էլի կարիք ունենաս, գրիր ուղարկեմ:

Տիկնոջս՝ Ասպրամի կողմից շատ բարեւ քեզ եւ Վիվիենին:

Տույսով ենք, որ բախտ կունենաք մեզ մոտ հյուր տեսնելու ձեզ:

Տիվանդության պատճառով դրսի աշխարհի հետ կապ չունեմ,
ուստի նորություններ քիչ կան:

Բարեններով՝ քո Ավետիսյան Կամսար



Ըստ սիրելի Ասատուր,

Զգիտեմ ինչով բացատրեմ, բայց քեզանից վաղուց է, որ նամակ չեմ ստանում:

Ինքնին հասկանալի է, որ շատ եմ անհանգստանում: Եթե այլ տեղ ես գնացել, պետք է այնտեղից գրեիր, եթե Նոդկաստանում ես, ապա ինչու չես գրում:

Քեզ հայտնի է, որ նամակը բարեկամությունն ամրապնդող միջոց է, նա հանդիսանում է սիրո ու համակրանքի արտահայտության միջոց: Լավ գիտցիր, որ չգրելով կարող ենք իրար կորցնել: Չէ որ բարեկամ գտնելը (այն էլ քեզ պես ազնիվ) շատ դժվար է, իսկ կորցնելը, ինչպես ասացի, հեշտ: Քո նամակները ինձ միշտ էլ հաճույք են պատճառել, ինչին սպասել եմ սիրով:

Ասատուր ջան, մեզ մոտ արդեն աշուն է, դասախոսությունների եւ ուսման եռուն շրջան, իմ գործերն էլ վատ չեն հիմա արդեն գրում եմ արարների եւ արարական երկրների մասին:

Նոդկաստանս դեռ լույս չի տեսել, գիտես լույս տեսնելուն պես կուղարկեմ:

Ասատուր ջան, գրիր, թե ինչ գրքերի կարիք ունես, կուղարկեմ,

Քեզ ես Երեւանում միշտ սպասել եմ, բայց չես գալիս: Ավելի ճիշտ չեք գալիս տիկնոջդ՝ Վիվիենի հետ միասին: Տաղորդիր բարեկներս պ. Փոլադյանին, պ. Նովսեփին եւ իմ մյուս հայրենակիցներին:

Ծատ բարեկներ տիկնոջդ իմ եւ Ասպրամի կողմից:

Մեր հասցեն նույնն է, բայց մեր փողոցի անունը փոխել են, այն կոչվում է Աղասի Խանջյանի անվան, դա այն լավագույն ղեկավարներից էր, որ զոհ գնաց ստալինյան ռեժիմին:

Ավետիսյան Կամսար



Իմ շատ սիրելի եւ պատվական բարեկամներ ՏԵՐ Եւ ՏԻԿԻՆ Ասատուր եւ Վիվիեն Գյուպեյաններ,

Ձեր նամակը մեզ անչափ վիշտ պատճառեց, ես ու Ասպրամը կիսելով Ձեր վիշտը հայտնում ենք մեր սրտագին ցավակցությունը:

Մենք չենք ուզենա, որ դուք այդ հեռավոր աշխարհում դառնություն հաշակեիք, հուսով ենք, որ կհաղթահարեք, քանի որ բնությունը այլ ելք չի ցուցանի:

Իմ սիրելի Ասատուր, ես քեզ չեմ գրել, որ քրոջս ողբերգական կորուստի պատճառով, մեկ տարուց ավել հիվանդացա, արեւի երես դուրս չեկա, բայց ոչինչ չօգնեց, հիմա ոտքի եմ, գնում եմ աշխատանքի եւ գրում: Ինձ խորհուրդ տվեցին, որ կազդուրվելու ամենալավ միջոցը աշխատելն է եւ այդպես էլ անում եմ: Դուք էլ այդպես վարվեցեք:

Բայց երբեք ու երբեք չեք մոռանա, ցավի կրակը կհանգչի եւ չի խանգարի ապրելու:

Կարողացա միտքս ձեզ հաղորդել թե ոչ, բոլոր դեպքերում պետք է վիշտը հաղթահարել: Ասատուր ջան, ասում են, որ մի մարդ մի անգամ կտուրից վայր է ընկնում եւ ոտքը կտտրում: Երբ մարդիկ գալիս են նրան այցի, ապա նա ասում է, թե ով է ոտքը ժամանակին կտտրել, թող ձեռք բարձրացնի: Ապա հայտարարում է, որ նա իմ ցավս կհասկանա, ում ոտքը ժամանակին կտտրվել է: Ես թերեւս ամենից լավ եմ հասկանում քո եւ Վիվիենի վիշտը: Բայց նորից եմ խնդրում, որ հերոսաբար տանեք եւ աշխատեք: Դու, Ասատուր ջան, շարունակիր գրել, աշխատել:

Գրիր նաեւ մեզ շատ-շատ նամակ եւ աշխատիր չմոռանալ մեզ: Մենք էլ ձեզ չենք մոռանում: Չէ որ կյանքում լավ հայրենակից եւ ընդհանրապես զգայուն եւ լավ բարեկամ ունենալը լավ բան է:

Մենք ձեզ համարում ենք այդպիսին եւ բնական է, որ ձեր նամակները մեզ թանկ են, գրիր շատ եւ շուտ: Երեւանում լավ օրեր են քաղաքը մեծանում է ու նորանոր փողոցներով հարստանում:

Ես անշնորհք գտնվեցի եւ երկար ժամանակ քեզ գրքեր ու պարբերականներ չեմ ուղարկել: Կուղարկեմ անպայման:

Ես ինքս էլ մեկ տարի է, ինչպես ասում են, աշխարհից կտրվել եմ եւ հեռացել գրական աշխարհից:

Վաղուց չեմ տեսել Շիրազին, իսկ մոտ օրերս բանաստեղծ Աշոտ

Գրաշու հետ մեկնեցինք Իջեան, որտեղ ելույթ ունեցանք, ես պատմեցի Արաբական երկրների մասին, նա էլ կարդաց իր բանաստեղծություններից: Լավ էր, ես մի քիչ թարմացա, դեհ համփորդությունը նման դեպքերում լավ է:

Չգիտեմ, դու գիտես, թե ոչ Աշոտ Գրաշուն, իհարկե հեռու է Շիրազից եւ շատերից: Ասատուր ջան, իմ գործերը լավ են, աշխատում եմ (միակ մխիթարությունս), դեհ իմ ժողովրդի զավակների համար գրում աշխարհագրական բաներ: Կուզենայի իմանալ նաեւ քո գործերից եւ կլինդրեի բարեւներ հաղորդելիք իմ հեռավոր հայրենակիցներին, այդ թվում պ. Վահան Փոլադյանին, Նովսեփին եւ հեմարանի պատվարժան դասատուներին ու սաներին: Գրիր շուտ-շուտ:

Շատ բարեւներ քեզ եւ տիկին Նարինեին², իմ եւ տիկնոջս՝ Ասպրամի կողմից:

Շատ բարեւներով՝ Ավետիսյան Կամասար



/ 1 հունվարի 1963թ., Երեւան /

Միւրեղի Ասասուր,

Նազար իննը հարյուր վաթսուներեք թվի առաջին նամակը գրում եմ քեզ: Սրտանց շնորհավորում եմ քո եւ տիկին Նարինեի Նոր տարին եւ Սուրբ ծնունդը:

Մաղթում Ձեզ հաջողություն եւ առողջություն: Ուզում եմ կյանքում այլեւս վիշտ չտեսնեք:

Ասատուր ջան, դու հավանաբար, ստացած կլինես նամակներս, քեզ գրական թերթեր եմ ուղարկել եւ մեկ գիրք:

Գրիր հեմարանի կյանքից, ինչպես է պ. Վահան Փոլադյանը, իսկ Նովսեփ Մադաթը Կալկաթայո՞ւմ է:

Ընդհանրապես գրիր, դա ամենալավ կապն է բարեկամության: Մեզ մոտ Երեւանում արդեն շուքով են նշում Նոր տարին, այդ օրը թե հարուստ, թե աղքատ իր ունեցածով ուզում է, ինչպես ասում են, զարմացնել: Մենք զարմացնելու տվյալ չունենք, որովհետեւ տրամադրություն չունենք:

² Երբ ամուսնացանք Վիվիենին վերակիրտեցի «Նարինե/ Նարինե»: Մինչեւ այսօր ոմանք նրան հանաչում են Նարինե/Նարինե անունով:

Դու չգրեցիր, թե այս ամառը ուր եղաք: Մենք մի քանի շաբաթով եղանք Սոչի կոչվող ամառանոցում, որը գտնվում է Մեի ծովի ափին:

Տիկին Ասպրամը շատ է բարեւում քո տիկնոջը՝ Նարինեին: Երանի մեզ մոտ հյուր գալիք, բոլորս ուրախ կլինեինք:

Ես էլ, Ասատուր ջան, շարունակում եմ գրել մեր դպրոցականների եւ դասատուների համար աշխարհագրական եւ պատմաաշխարհագրական տվյալներ:

Պատահաբար դու արաբական երկրների մասին գրականություն չունե՞ս, թեկուզ Աղբաշ ազգատառով որեւէ մի հեղինակի աշխատություն:

Մեզ մոտ Երեւանում շատ տաք է, այս տարի առաջին օրն էր, որ ձյուն եկավ:

Շատ բարեւներ իմ եւ տիկնոջս՝ Ասպրամի կողմից քեզ եւ Նարինեին:

Բարեւներով՝ Ավետիսյան Կամսար



/ 28 մարտի 1963թ. /

Ըստ սիրելի Ասասուր,

Դու հավանաբար ստացած լինես Շիրազի «Քնար հայրենի» գիրքը: Ես այն ուղարկեցի ԱՕԿՄ-ի միջոցով, կարծելով, որ շուտ կստանաս: Այդ օրինակը քերել էր Շիրազը, տվեց ինձ եւ ասաց ուղարկիր Ասատուրին եւ գրիր ջերմ բարեւներ: Այդ գիրքը մեզ մոտ վաղուց սպառված է, դա Շիրազը վերցրեց ուրիշից: Ես նրան քո մասին շատ եմ պատմել: Ստիպեցի ինչ գնով լինի հարի եւ հարեց ինձ տվեց քեզ ուղարկելու համար:

Ասատուր ջան, դու երկար ժամանակ է չես գրում, ինչ է պատահել: Գրիր քո եւ տիկնոջդ կյանքից, ձեր առողջությունից, գործերից:

Ես եւ տիկինս լավ ենք: Ես ավարտում եմ Նոդկաստանին նվիրված աշխատությունս, որտեղ կտամ համապատասխան նկարագիր, որոնց մի մասը դու ես ուղարկել: Ափսոս չունեմ ուրիշ նկարներ, մանավանդ Կալկաթայի ճեմարանի, սաների, դասատուների, շենքի, եկեղեցու: Ոչինչ չունեմ Մադրասից, եղածներն էլ (ճեմարանի մասին) շատ փոքր են:

Սիրելի Ասատուր, ես չգիտեմ ինչու չես գրում: Չէ որ նամակը սիրո,

հարգանքի եւ կապի ամենալավ միջոցն է: Լավ իմացիր, առանց լավ ընկերների եւ հարազատ բարեկամների կյանքը բավական անհետաքրքիր է: Ես բավական ժամանակ նամակ չունեմ նաեւ Բեյրութից: Իմ ամենալավ բարեկամներից մեկը դու ես եւ քո նամակներն ինձ միշտ ուրախություն են պատճառել: Խնդրում եմ շարունակես քո նախկին ձեռով նամակներ գրելը:

Գիտեմ սիրելիս, լավ գիտեմ քո վիշտը, ավելի ճիշտ քո եւ տիկին Վիվիենի վիշտը, բայց ինչ արած սիրելիներս:

Մնում է ձեզ ցանկանալ առողջություն եւ համբերություն:

Ասատուր ջան, այս նամակս կարն եմ գրում, հայտնում գիրքը ուղարկելու մասին եւ ուզում եմ հիշեցնել, որ մեզ շուտ-շուտ գրես:

Շատ եւ շատ բարեւներ Փոլադյանին, Նովսեփ Մադաթին եւ իմ մյուս անծանոթ հայրենակիցներին:

Բարեւներով՝ Ավետիսյան Կամսար



/ 2 սպրիլի 1963թ., Երևան /

Միրելի բարեկամներ, սեր եւ սիկին Ասատուր եւ Վիվիեն

Գյուլելյաններ,

Միրելիներս, վաղուց, շատ վաղուց է, որ ձեզանից նամակ չունենք եւ պատճառն էլ չգիտենք:

Ճիշտ է հիմնական պատճառը մեզ հայտնի է, դա ձեր անմար վիշտն է, բայց ինչ արած, ասում են, որ ժամանակը վերքը սպիացնում է: Թե դա որքանով է ճիշտ, այդ արդեն ինքը՝ վիշտ ունեցողը գիտի...

Ասատուր ջան, ես քեզ սրանից առաջ մի նամակ էլ եմ գրել եւ հայտնել, որ «Քնարը» ուղարկել եմ Արտասահմանի հետ բարեկամական եւ կուլտուրական կապի ընկերության միջոցով, որին մենք ԱՕԿՍ ենք ասում:

Ճիշտն ասած, կարծեցի, որ դրանով ավելի շուտ կստանաս, չնայած կարող էի ուղարկել ինքս: Ի դեպ, ինձ ԱՕԿՍ-ի միջոցով շատ են գիրք ուղարկում, իհարկե, վրան իմ անուն ազգանունը գրելով:

Չմոռանամ հարցնել դու «Գրական թերթ» ստանում ես թե ոչ, եթե ոչ գրիր, կուղարկեմ: Սոս ժամանակներս լույս կտեսնի «Պատմական Տայաստանի» քարտեզը, այն ես քեզ կուղարկեմ:

Միրելի Ասատուր, այսօր ես պատահաբար ԱՕԿՍ գնացի եւ պատահաբար սեղանին տեսա «Նոր Ազդարար» կազմած:

Պաշտոնյաներից մեկն ինձ ասաց, որ ստացել են Տնդկաստանից, մնացածը չիմացա: Որքան ափսոսացի, որ Կալկաթայում եղած ժամանակ ես Զիրեթի Տանանյանից չստացա այդպիսին: Ճիշտն ասած, մեր հանդիպման ժամերն այնքան սուղ էին, որ ես չկարողացա ծանոթանալ հայազիտական եւ հնդկահայ գաղութին վերաբերող գրականության հետ, Տայաստանում ես համարվում եմ այդ գործով զբաղվող մարդ:

Միրելի Ասատուր, իմ գործերը լավն են, ես մեր ժողովրդի զավակն եմ եւ ուզում եմ նրան շահեկան քան արած լինել: Այդ առթիվ գրում եմ պատմա-աշխարհագրական հետաքրքրական հոդվածներ, նաեւ ոչ մեծ գրքերը: Ինչպես նաեւ հաղորդումներ արտասահմանի ռադիոյի համար: Շատ է օգնում ինձ Ասպրամը, որը մեքենագրում է գրածս:

Միրելի Ասատուր, քանի որ ձեզանից ես վաղուց նամակ չունեմ, ապա սա էլ հիշեցման նման մի նամակ է, որ մեզ չմոռանաք եւ գրեք:

Գրել էիր, որ մայիսին ուզում եք Երեւան գալ: Աշխատեք անպայման գալ, կարող էիր գալ նաեւ սեպտեմբեր եւ հոկտեմբեր ամիսներին, դա մեր քաղաքի ամենահիանալի ժամանակն է:

Եկեք սիրելիս եւ ձեր աչքով տեսեք ձեր հայրենիքը, ծաղկած Երեւանը:

Գրում եմ նաեւ մեր հեռախոսի համարը, որպեսզի գալուց մեզ անմիջապես զանգահարեք:

Բարեկներ Վահան Փոլադյանին, Տովսեփ Մադաթին եւ մեր մյուս հայրենակիցներին: Բարեւեք Վիվիենին եւ հարազատներին:

*Միրով եւ ջերմ բարեկներով՝
ձեր հարսագատներ Ասպրամ եւ Կամասր:*

Տ.Գ. Ի դեպ, միայն թեթեակի նայեցի «Նոր Ազդարարում» եղած նկարներին, կուզենայի զետեղել իմ «Տնդկաստանին» նվիրված գրքում: Ընդհանրապես հնդկահայ կյանքից նկարներ քիչ ունեմ, եղածն էլ փոքր է:

Ավետիսյան Կամասր

❖ **Շատ սիրելի Ասատուր,**

Քո գրած բոլոր նամակները, այդ թվում եւ ԱՕԿՄ-ի հասցեով ուղարկածը ստացել եմ: Ստացել եմ նաեւ ուղարկածդ աշխարհագրական հիանալի ատլասը: Անչափ գոհ եմ եւ նամակներիդ եւ ատլասի համար:

Սիրելի Ասատուր, եթէ ինձ լավ հասկանաս (դրանում վստահ եմ) ինձ ուղարկած ատլասներն ու գրքերը փաստորեն ծառայում են հայ ժողովրդի զավակներին: Չէ որ ես դրանք օգտագործում եմ եւ իմ մակավարժական աշխատանքի համար կամ էլ պատմա-աշխարհագրական գրքեր, հոդվածներ, ռադիոյին տալու համար: Տարիների ընթացքում ես ստեղծել եմ մեծ գրադարան, որը նույնպէս այդ նպատակին է ծառայում եւ եթէ հաջողվի այս աշնանը Երեւան գաս կտեսնես ինքդ:

Սիրելի Ասատուր, ես քո մասին շատերին եմ լավ բաներ պատմել եւ դու դրան արժանի ես, որովհետեւ բարձր ես պահում քո ժողովրդի մշակույթը եւ հայրենիքի պատիվը:

Գալով քո պոեմի հաղորդմանը, ես այն ռադիո տարա (ինձ ուղարկած օրինակը) ծանոթացրեցի, հավանեցին եւ որոշեցին հունիսի սկզբներին հաղորդել: Կաշխատեմ, որպէսզի մեր թերթերից մեկն էլ գրի պոեմի մասին: Ես փոստով քեզ կուղարկեմ այդ մասին եղածները:

Սիրելի Ասատուր, իմ լավ բարեկամներից է նաեւ Գեորգ Էմինը (բանաստեղծ), որն ինձ բերեց իր գիրքը, քո մասին նրան պատմեցի: Նա շատ ափսոսաց որ իր վերջին օրինակն է եւ գրախանութում էլ սպանված է, իսկ ինձ արդէն մակագրել էր: Ես էլ այն ուղարկում եմ քեզ, դու բանաստեղծ ես եւ այն քեզ ավելի է անհրաժեշտ, ինչպէս ինձ պատմա-աշխարհագրական գրքերը: Ուղարկում եմ նաեւ Վիլյամ Սարոյանի պիեսների ժողովածուն: Ընդհանրապէս ինչ պետք է գրիր, կուղարկեմ, ինչպէս նաեւ «Գրական թերթ» եւ ընդհանրապէս թերթեր:

Գալով մեր հարազատ Վիվիենին, ապա ջերմ բարեւներ հաղորդիր իմ եւ տիկին Ասպրամի կողմից: Մենք աղոթում ենք նրա առողջության համար եւ ի սրտե ցավում, որ նա ինչ տխրութիւն տեսել է լինի վերջինը: Ափսոսում ենք, որ նա այս աշնանը ի վիճակի չի լինի գալ, բայց ոչինչ, դու որ գաս ճանապարհը կբացես եւ կգա նաեւ Վիվիենը:

Ասատուր ջան, ես կյանդրեի, որ դու բարեւես նաեւ պ. Տոլսեփ Մադաթին եւ պ. Վահան Փոլադյանին, որոնք երեւի ինձ արդէն մոռացել են: Ես պ. Փոլադյանին ժամանակին ուղարկեցի «Տայաստանի ատ-

լասը» չգիտեմ ստացել է, թե ոչ: Երեկ ուղարկեցի նրան (հեմարանի հասցեով) երեւանյան մի քանի տեսարաններ, որպեսզի Երեւանը լավ հիշի, կուզենայի որ Երեւանը միշտ հիշի, եթե քեզ չեմ ուղարկել, գրի՛ր կուղարկեմ:

Ես նամակագրություն ունեմ մի մեծարգո պարոնի հետ, որը բնակվում է Նյու-Յորքում (ԱՄՆ), դա մեր հայրենակից Տիգրան Մ-ն է, որն իր գրած գրքերից էր ուղարկել: Այն վերաբերում է Տիգրանակերտի աշխարհագրությանն ու պատմությանը: Ես ԱՕԿՄ-ի գծով իբրեւ հյուր կարող է գնամ Լատինական Ամերիկա (Բրազիլիա, Արգենտինա, Ուրուգվայ): Դա լավ է, կհարստացնեմ իմ աշխարհագրական ու պատմական գիտելիքները այդ երկրների մասին: Դա կլինի, ոչ շուտ քան հուլիսին:

Երեւանցիները ուրախության մեջ են, սպասում են իրենց հայրենակից Տիգրան Պետրոսյանին, ուրախ է նաեւ քաղաքը, զարդարված մայիսյան կանաչով, ծաղիկներով եւ խաղաղ ու շինարար կյանքով:

Բարեւներով՝ Ավետիսյան Կամսար

Եւս սիրելի Ասասուր,

Գնացիք եւ մեր սիրտը ձեզ հետ տարաք: Սկզբում չէինք հավատում, որ եթե 308 համարը խնդրենք, ապա քո սիրելի ձայնը չի հնչի:

Ասատուր ջան, թերեւս օդանավակայանից շատ տխուր վերադառնայինք, եթե չլիներ մեր սիրելի Թորոսը իր համակրելի տիկնոջ հետ, ինչպես նաեւ Բուշիկանյանը, Քեշիշյանը եւ ձեր բարեկամները: Բոլորս քո մասին էինք խոսում, բայց ամենից լավ ես եւ Թորոսն էինք կատակում՝ Սուքիաս ասելով:

Երեւի հիշում ես ձեր սավառակը օդանավակայանում բավական սպասեց. Այդ պահին Թորոսը անընդհատ Սուքիաս էր կանչում: «Լավ,- ասացի Թորոսին,- օդանավակայանում աշխուժացել ես եւ քո անունը ուրիշի վրա ես դնում»: Երբ բաժանվեցինք եւ Թորոսին ասացի, Ասատուրին գրելու եմ, ով նամակ չգրի ինձ, նրան Սուքիաս ենք կանչելու: Թորոսի դեմքը ուրախությունից փայլեց, որ այս անգամ էլ ազատվեց Սուքիաս կոչվելուց:

Միրելի Ասատուր, հուսով ենք, որ մեզ չեք մոռանա. եւ նամակ թող գրի նաեւ Վիվիենը:

Ասպրամը եւ ես համբուրում ենք փոքրիկ աշիկին, որի տիկնիկներն են միայն մեզ ծանոթ, հուսով ենք, որ ինքն էլ մեզ նամակներ կգրի: Գրիր ինչ անուն տվեցիք փոքրիկ բալիկիդ:

Ասատուր ջան, առայժմ այսքան:

Շատ բարեւներ Վիվիենին, իր ծնողներին, եղբորը եւ փոքրիկ աշիկին:

Տամբուրներով՝ Ասպրամ, Կամսար:



/ 8 հունվարի 1965թ. /

Մեր պատվական բարեկամներ շատ սիրելի Ասատուր եւ Վիվիեն,
Ձեր նամակը մեզ մեծ ուրախություն պատճառեց: Նախ իմացանք ձեր առողջության մասին եւ միաժամանակ ունեցանք ձեր մշտական հասցեն, որը հնարավոր կդարձնի ձեզ նամակ գրելու:

Մեր սիրելիներ, ես եւ Ասպրամը ջերմորեն շնորհավորում ենք ձեր Նոր տարին եւ Ս. Ծնունդը: Մաղթում ենք ձեզ ամենագեղեցիկ ցանկությունների իրականացում:

Թող 1965թ. լինի կատարյալ հաջողության, բեղմնավոր ստեղծագործության եւ լրիվ խաղաղության երջանիկ տարի:

Միրելի Ասատուր, ուրախությամբ իմացանք, որ ստանձնել ես «Արեգակ»-ի խմբագրությունը:

Միրելիս, արտասահմանյան մեր պարբերականները մեր ազգային մշակույթի ջահակիրներն են, որոնք սփյուռքահայության մոտ վառ են պահում հայրենիքի հանդեպ սերն ու համակրանքը եւ նրա հետ կապում լավագույն երազանքներ: Ուրախ եմ, որ այդպիսի պատվավոր գործ ես ստանձնել:

Ասատուր ջան, քո Երեւան գալը մեզ համար կատարյալ սյուրպրիզ էր: Այն արժեքավոր եղավ նաեւ, որ Ասողիկ սրբազանի նման բարեկամ շահեցինք: Նա հիմա մեր իսկական բարեկամն է: Ես եւ Ասպրամը հաճախ ենք լինում նրա մոտ: Ափսոս, որ նա քիչ է լինում մեզ մոտ: Ամեն հանդիպելուց օրհնում ենք քեզ, Վիվիենին ու Կարինեին նման լավ բարեկամ շահելու համար:

Ասատուր ջան, առիթ է լինում տեսնելու Վեհափառին: Դու Աստղիկ սրբազանին նամակ գրելիս հայտնիր մեր ջերմ վերաբերմունքը: Տուտով ենք որ ապրիլին կլինես Էջմիածնում:

Այս անգամ բախտ կունենանք տեսնելու քեզ հետ մեր տանը նաև Վիվիենին ու Կարինեին: Իհարկե, ուրախ կլինենք, եթե մեր մեծարգո խնամիները՝ Վիվիենի ծնողներն ու եղբայրը ձեզ հետ լինեն:

Ասատուր ջան, Բեյրութի եւ Սիրիայի ոչ բոլոր բարեկամներն են, որ նամակ են գրում: Մի մասը «Սուքիաս» դարձան: Նամակներ են ստանում Քասունուց, Բարիկյանից, Լիդիայից, Լուիզից, Անժելից, Շաքեից (Տալեպ): Մնացածները առայժմ չեն գրում: Այս տարվա ուսուցիչներից էլ գրում են Բաբայան Երվանդը, Կրպոյան Երվանդը:

Թորոս Թորանյանը (իսկական Սուքիասը) շատ լավ է: Նա կնոջ հետ էլ համալսարան չեն հաճախում, տեղափոխվել են բժշկական ինստիտուտ:

Գրիգոր Քեշիշյանը Սփյուռքի մամուլի բաժնի վարիչն է, իսկ Բուջիկանյան Տրաչը ԱՕԿՄ-ում է աշխատում:

Ասատուր ջան, ինձ ցույց տվեցին Կալկաթայից Տայկ Նաջարյանից ստացած մի նամակ, որով նա խնդրում է ուղարկել իրեն իմ «Արեւելքի մարգարիտը» գիրքը. ուղարկեցինք 5 օրինակ:

Այդ գիրքը վերջապես հնարավոր եղավ ուղարկել նաև քեզ: Ասատուր ջան, գրիր ընդհանրապես քեզ ինչ գրքեր ուղարկեմ: Կուղարկեմ նաև «Մուսա լեռան 40 օրը» գիրքը:

Սիրելիս, եթե քո տրամադրության տակ լինեն նյութեր Արեւմտյան Տայաստանի, Արաբական Արեւելքի եւ աշխարհագրական անվանումների առաջացման մասին, ուղարկիր ինձ:

Ասատուր ջան, սիրով կհայտնեմ մեր մտավորականներին քեզ օժանդակելու համար: Թերեւս օգտակար լինեմ եւ ես: Տուտով եմ, որ Էջմիածնից էլ Աստղիկ սրբազանը կօժանդակի:

Դեհ սիրելիս «սուքիաս» չդառնաս: Ասպրամը շատ բարեւներ է ուղարկում եւ համբուրում Վիվիենին եւ Կարինեին:

*Անկեղծ զգացումներով ու սիրով՝
Ավետիսյան Կամսար*



Ըստ սիրելի Ասատուր,

Ձեր ուղարկած նամակը մեզ կրկնակի հաճույք պատճառեց: Առաջինը, որ լավ ես եւ երկրորդը, որ սպասում ես մեր մշակույթի առաջընթացին՝ դառնալով խմբագիր «Արեգակին»:

Շատ եւ շատ ուրախ ենք, բայց խնդրում ենք մեր նամակների էջերը կամ նամակի ուշացումը «Արեգակ»-ով չարդարացնես: Թե զբաղված եմ եւ այլն:

Ասատուր ջան, ես Ասողիկ սրբազանի մոտ հանախ եմ լինում եւ վայելում նրա սիրալիք ընդունելությունը: Նրա տանը տեսա նաեւ Կարինեի նկարը, շատ ուրախացա, իսկ Ասպրամը լրացուցիչ մի մոմ վառեց Մայր տաճարում Կարինեի առողջության մաղթանքով:

Սիրելի Ասատուր, իմ կողմից ջերմ բարեւներ Վիվիենի հարազատներին, իսկ պ. Պետրոսին էլ անձամբ շնորհավորիր այն բարձր պարգևի համար, որ շնորհել է նրան Տ.Տ. Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը, պարգևատրելով պ. Պետրոսին Ս. Գրիգոր Լուսավորչի անվան Ա կարգի ադամանդակուռ շքանշանով:

Սեղմելով պ. Պետրոսի ձեռքը ես նրան ուղարկում եմ իմ գիրքս:

Շատ եւ շատ կցանկանալինք նրան Ձեզ հետ միասին տեսնել ոչ միայն Սբ Էջմիածնում, այլեւ մեր տանը: Ասատուր ջան, իմ գործերը լավ են, հիմա աշխատում եմ հերթականությամբ երեք թեմաների վրա, որոշ օրեր հատկացրել եմ աշխարհագրական անունների բացատրությանը, իսկ որոշ օրեր էլ Արաբական երկրների եւ պատմական Նայաստան աշխարհին: Եթե հարմար բաներ կլինեն (հայերեն, անգլերեն, ֆրանսերեն) նկատի ունեցիր:

Գրիր Վիվիենի առողջության մասին, իսկ Կարինեն արդեն Լոնդոնցի է: Նա իրեն լավ կզգա այդտեղ, ի վերջո նրա համար ամեն ինչ կսկսի Լոնդոնից:

Ես չգիտեմ քո «Արեգակին» ինչով կարող եմ օգտակար լինել:

Ասատուր ջան, քեզ հետ եկած ուսուցիչներից մի մասը «սուքիաս» եղան, նամակ չեն գրում:

Գրողներից են Քասունին, պ. Տասնապետյանը, Կրպոյանը, Երվանդ Բարայանը:

Մնացածները սուքիասներ են, առայժմ քան չեմ կարող գրել: Չնայած Երեւանում է, բայց ոչ պակաս սուքիաս է նաեւ Թորոս Թորանյանը:

Քեզ հետ ավելի շատ եմ «խոսում», կապվում, քան Թորոսի: Կահիրե-
ից ջերմ նամակներ եմ ստանում այ. Սարուխանից, Էդմոնդ լոում է մի-
այն «Արեւ» է ուղարկում եւ ուրիշ ոչինչ: Ինձ մի երկու ընկեր ասացին,
որ իրենց հրավեր են ուղարկել մասնակցելու «Արեւի» 50-ամյակին:
Շատ տխրեցի, որովհետեւ առիթը լավ էր կգնայի (եթե հրավիրեր) եւ
մեր դպրոցականներին մի փոքր գրքով կուրախացնեի, բայց ոչինչ չի
գրել ինձ:

Այդ բոլորի մասին այսքանը:

Գրիր նաեւ Տնդկաստանի մասին, ինչ վիճակում է գաղութի
կրթական գործը, քո հեռանալը շատ չազդեց: Ես այ. Նաջարյանի,
Փոլադյանի անունով գիրք էի ուղարկել, բայց ոչ մեկից պատասխան
չստացա:

Ինչպես երեւում է շահում են այն մարդիկ, որոնք հպարտ են եւ ան-
տարբեր: Ես այդքան ջերմ եմ, բայց այն չեն «սուքիասները»: Տենց
Էդմոնի եւ Վերային օրինակները հիշենք:

Ասատուր ջան, գրիր նաեւ ձեր բնակարանի մասին:

Ջուսով եմ, որ նամակիս շուտ կպատասխանես եւ կնպաստես, որ
մենք պատիվ ունենանք ձերոնց մեր տանը հյուր ընդունելու:

Ձերն բարեկներ Ասպրամի, իմ եւ մեր ընդհանուր բարեկամ Ասողիկ
սրբազանի կողմից:

Ավետիսյան Կամսար

Ըստ սիրելի Ասատուր,

Նախ քեզ կուզեմ ուրախացնել այն բանով, որ մեր երիտասարդա-
կան «Ավանգարդ» թերթը իր օգոստոսի 21-ի համարում մի հոդված
էր գետեղել եւ գովել քեզ այն բանի համար, որ դու հեռավոր Տնդկաս-
տանից նամակ ես գրում Ալավերդի քաղաքի դպրոցի ուսուցչին: Այն
խրախուսելի համարելով, որ ինչպիսի ջերմ կապ կա հեռավոր Տնդ-
կաստանում բնակվող եւ Տայաստանի ուսուցիչների միջեւ:

Շատ ուրախ եմ սիրելիս, որ դու այդքան ջերմ հայրենասեր ես եւ
ուրիշներն էլ այդ բանով ուրախանում են: Ասատուր ջան, թերեւս
ստացած լինես իմ գրքի այն գլուխը, որը նվիրված է հնդկահայերին:
Նեղություն կկրես եւ լրացնելով ու փոփոխելով հանդերձ կուղարկես:

Սիրելի բարեկամ, քո նամակները մեզ միշտ էլ ուրախացնում են եւ այն կարդում ենք մեծ գոհունակությամբ: Թե ես եւ թե տիկինս՝ Ասպրամը շատ ենք փափագում քեզ եւ տիկին Վիվիենին Տայաստանում, Երեւանում տեսնելու: Տույսով ենք, որ այդ կկատարվի: Ասատուր ջան, գրիր թե ինչպես անցավ ամառային արձակուրդդ եւ ինչպես են ընթանում դասերդ: Ես լավ եմ եւ աշխատում եմ Արաբական երկրների աշխարհագրության վրա: Այնպես որ այսուհետ եթե այդ երկրների աշխարհագրությանն ու պատմությանը վերաբերող բաներ լինեն, ինձ կհիշես:

Սիրելի Ասատուր, ինձ մոտ մի միտք է հղացել եւ կուզենայի, որ մի լավ պոեմ գրեիր Թաջ Մահալի մասին: Մտածիր, դա լավ գաղափար է:

Ճիրագից բան չեմ գտնում, որովհետեւ քաղաքից բացակայում է: Ես արդեն քեզ գրել եմ, որ նա սիրով կարդացել է քո պոեմը:

Սիրելի Ասատուր, գրիր, թե քեզ ինչ գրքեր են հարկավոր, ես անմիջապես կուղարկեմ: Ես քեզ արդեն գրել եմ, որ Երեւանի ամենալավ ամիսներն են սեպտեմբերն ու հոկտեմբերը: Այս ամիսներին մեր հայրենիքի հողն ու ջուրը տալիս է իր բոլոր բարիքները: Մեր շուկան մի կատարյալ տոնական բնույթ է ստացել: Խաղողն ու դեղձը, տանձն ու նուռը, սալորն ու խնձորը, ձմերուկն ու սեխը առատ են:

Ինչ արած տեխնիկական դեռ այնքան չի կատարելագործված, որպեսզի քո եւ Վիվիենի բաժինը Կակաթա ուղարկենք:

Սիրելի Ասատուր, ես ամբողջ օրը աշխատում եմ: Չէ որ բացի գրելուց նաեւ դասախոսում եմ:

Բայց ոչինչ Նոդկաստանս եւ Արաբական երկրները թեթեւացնում են ինձ: Ի դեպ Ավստրալիա գնալը փոխարինվեց Թունիս եւ Լիբիայով:

Երբ Նոդկաստանը լույս տեսնի, բնական է, որ առաջին նվերը քոնը կլինի:

Ներիր սիրելիս, որ քո համեմատ ես քիչ գրեցի, բայց դա չի նշանակում, թե դու էլ նույնը պետք է անես, ոչ սիրելիս գրիր շատ եւ շուտ-շուտ:

Կրկին բարեկներ իմ եւ Ասպրամի կողմից քեզ, Վիվիենին եւ ձերոնց:

Բարեկներով՝ Ավետիսյան Կամսար



Մեր աս սիրելի Ասասուր,

Ես եւ Ասպրամը շատ ենք զարմացած, թե ինչու մեզ նամակ չես գրում: Ինչ է պատահել, ինչպես են ձերոնք:

Ճիշտն ասած, այդ զարմանքը մեկ-մեկ մեղմանում է, երբ հիշում եմ Թորոսին, որ ասում էր Ասատուրը Սուքիաս է:

Դուք, իմ սիրելիներս, երկուսով էլ ճիշտ էիք, որովհետեւ երկուսով էլ Սուքիաս եղաք: Ասատուր ջան, գիտեմ կկարդաս կծիծաղես, բայց թե կրկնում եմ ինչու նամակ չես գրում:

Ես շատ ծանր հիվանդացա, հիմա լավ եմ: Գնում եմ Մայր աթոռ եւ հայրենագիտություն կարդում Նոգեւոր հեմարանում:

Գրիր քո, Վիվիենի, Կարինեի եւ Արմինեի առողջության մասին: Գրիր նաեւ մեծ բարերար եւ հայ ժողովրդի պայծառ զավակ պ. Ալեքսյանի ու նրա ընտանիքի մասին:

Չմոռանամ ասել, որ Վեհարան մտնելիս ձախ կողմին փակցված է մարմարյա հուշատախտակ, որի վրա բարերարների շարքում ոսկե տառերով գրված է նաեւ աներ պապայիդ անունը:

Ասատուր ջան, աշխատեք կրկին գալ Երեւան, որը շատ է փոխվել ու լավացել:

Ես վերջերս լույս եմ ընծայել մի փոքր գիրք, որի վերնագիրն է «Իմաստուն խոսքերի աշխարհում»: Դրանից մի օրինակ ուղարկում եմ քեզ: Եթե տեսնես Վրեժ սարկավազին, ապա բարեւիր իմ կողմից:



Շատ սիրելի Ասատուր, նամակս հիմնականում ավարտել էի եւ մտածում էի ուղարկել, բայց երեկոյան այցելեցինք Մայր աթոռ, Տիրամորը: Այդտեղ էր նաեւ հայր Արսենը, որը մեզ հաղորդեց ձեր ընտանիքին պատահած դժբախտության մասին:

Նայտնում եմ իմ եւ Ասպրամի կողմից խոր ցավակցություն: Շատ եւ շատ վշտացանք: Միթե Թեմզա գետն էլ Գանգեսի նման չար է եղել, որ խլել է պ. Պետրոս Ալեքսյանի թոռնիկին:

Շամբուրում ենք ձեր բոլորին, սեղմում ենք ձեր ձեռքը եւ խոր ցավակցություն հայտնում ձեզ, ձեր ընտանիքին պատահած վշտի հա-

մար: Ասատուր ջան, կրկնում ենք դարերից եկած նշմարտությունը. Աստված համբերություն տա:

Բարեւներով՝ ձեր Կամսար եւ Ասպրամ:



/ 2 մարտի 1974թ. Երեւան /

Մեր շատ սիրելի Ասասուր,

Մարդիկ հավակնություն ունեն անցած օրերին երանի տալու, դա հավանաբար նրանից է, որ կյանքը լի է բարոյություններով: Միշտ սիրով եմ հիշում մեր առաջին հանդիպման օրերը Կալկաթայում եւ ապա Երեւանում:

Որից հետո դու հաճախ էիր գրում կամ գալիս: Մի անգամ ձերոնք եկել էին առանց քեզ: Ասպրամի հետ գնացիք «Արմենիա» եւ ծանոթացանք ձերոնց հետ:

Բացի պ. Պետրոսից, մնացածներին տեսանք առաջին անգամ (չնայած նրանց մասին գիտեի):

Ծանոթացա Վիվիենի եւ աղջիկներ՝ Արմինի եւ Կարինեի հետ, ծանոթացա տիկին Ֆյոսի {Ֆլորայի} եւ շատ համակրելի ձեր սիրելի հարսի Սիլվիայի հետ:

Ինչ ասեմ, ակամայից երանիով է հիշվում անցածը:

Ասատուր ջան, չգիտեմ ինչու չես գրում եւ որոշել ես Թորոսին մե՛նակ սուքիաս չթողնես: Դու գիտես (ծիծաղ): Ժամանակին շատ սիրով ստացանք հայր Ներսեսի քրոջ միջոցով ուղարկած ձեր հիանալի նվերները:

Ձեր մասին մեկ-մեկ իմանում էինք Արսեն սրբազանից (այն ժամանակ հայր Արսեն):

Իմացած կլինես իմ երկարատեւ հիվանդության մասին: Տիմա համեմատաբար լավ եմ եւ գնում եմ հեմարան դասախոսության:

Ասատուր ջան, գիտեմ, դու հիմա շատ ես զբաղված, բայց գտիր ժամանակ մեզ գրելու եւ շնորհակալու: Շարունակիր մոտ մնալ հայ մամուլին եւ ինչ գիրք ցանկանաս, գրիր, ուղարկեմ:

Ես քեզ ուղարկել եմ վերջին իմ գիրքը «Իմաստուն խոսքերի աշխարհում»: Ստացած կլինես: Մի օրինակ տվել եմ Վրեժ սարկավազին, ստուգիր՝ ստացե՞լ է:

Այս տարի Երեւանում շատ ցուրտ էր: Տիմա օրերը տաքանում են: Ես եւ Ասպրամը ուղարկում ենք թանկագին բարեւներ եւ ջերմ համբույրներ: Տաղորդիր այն պ. Պետրոս Ալեքսյանին եւ տիկին Ֆլորային, Սիլվային, պ. Պետրոսին եւ Այվինին: Չմոռանաւ Վիվիենին, Արմինէին եւ Կարինէին: Որ գաք Երեւան շատ ուրախ կլինենք:

*Տամբուրներով եւ բարեւներով
Կամսար եւ Ասպրամ:*



/ 10 հոկտեմբերի 1976թ. /

Սիրելիներս՝ Վիվին եւ Ասասուր,

Անսպասելի կերպով իմացանք (8 հոկտ. 76 թիվ), որ այլեւս չկան քո եւ Վիվիենի հայրն ու մայրը, այլեւս չկա հայ մեծ բարերար Պետրոս Ալեքսյանը, որի անունը ոսկյա տառերով այսօր էլ շողշողում է թե Կաթողիկոսարանի եւ թե Օշականի եկեղեցիների սյուներին:

Անիծյալ լինի Թեմզան, որ այդքան շատ տխրություններ պատճառեց ձեզ: Սիրելի Ասատուր նույնը հայտնիի Պետրոս Ալեքսյանի տղային եւ մեր շատ սիրելի Սիլվիային:

Սիրելիներս, կյանքը շատ բարդ է եւ անքննելի: Աշխարհի երկու գետերի ափին բնակություն հաստատեցիք (Գանգես եւ Թեմզա), բայց երկուսն էլ Ձեր նկատմամբ նամարդ դուրս եկան:

Ասատուր ջան, լուրը ստացանք շատ անսպասելի՝ Ասպրամը հեռախոսով խոսեց Ներսես Սրբազանի քրոջը, որպեսզի Սրբազանի միջոցով իմանա ձեր մասին եւ մի փոքրիկ հուշանվեր ուղարկեր: Բայց անսպասելի ցնցվեցինք: Պարզվեց նաեւ, որ Սրբազանը արդեն մեկնել էր:

Ասատուր ջան, Ձեզ ցանկանում են քաջ առողջություն եւ ընդհանրապես ամուր մնաք:

Սիրելիներս, առիթ եղած դեպքում եկեք Տայաստան, համփորդությունը բուժիչ միջոց է:

Տամբուրում ենք Ձեզ, սեղմում մեծ բարերար Պետրոս Ալեքսյանի հարազատների ձեռքը եւ Աստված թող համբերություն տա:

Ասպրամ եւ Կամսար Ավետիսյան



Ըստ սիրելի Կամսար,

Նախ շնորհատրում եմ, հանդերձ ընտանեօք, քո եւ Ասպրամի Նոր տարին եւ ցանկանում եմ Ձեզ քաջառողջութիւն ու երջանկութիւն:

Աներհայրս շատ հաճելի ժամանակ էր ունեցել հայրենիքում: Նա ձեր մասին խօսեց մասնաւոր յարգանքով... այլ կեպ էլ չէր կարող լինել: Նա իմ վրայ պարտականութիւն է դրել իրեն հանդէպ ցուցաբերուած ուշադրութեան համար յայտնել մասնաւոր շնորհակալութիւն: Խնդրել է նաեւ որ գրեմ քեզ Վաղարշակ Գալուստեանի գրադարանի կապակցութեամբ: Գալուստեանը դէկտ. 16 թուակիր նամակով յայտնել է նրան, որ պատրաստ է այս տարի գալ Տայաստան եւ իր ամբողջ գրադարանը նուիրել հայրենիքիւմ ուր որ հարկն է: Արդ, այս մասին ինչ կարգադրութիւն կարելի է անել: Անհրաժեշտ է նրանց համար վիզա կարգադրել: Ո՞վ է հետաքրքրուելու այս հարցով: Ըստ երեւոյթին նա այժմ իր գրքերի ցանկերն է պատրաստում: Եթէ գրքերը նուէր պէտք է գան Էջմիածին՝ այդ դէպքում Մայր Աթոռը պէտք է զբաղի նրան Տայաստան հրաւիրելու հարցով, անշուշտ Գալուստեանը պատրաստ է հոգալու իր ծախսերը: Տարցը ո՛չ որպէս թուրիսք վիզա կարգադրելու մէջ է կայանում: Լաւ կը լինէր, որ դուք նրան մի նամակ գրէիք եւ ձեր առաջադրանքները բացատրէիք:

Կամսար ջան, ես ինձ շատ մեղաւոր եմ զգում քեզ աւելի յանախ չգրելուս համար, դա անշուշտ չկանութիւն չէ, չափազանց զբաղած եմ: Յոյս ունեմ այսուհետեւ աւելի կանոնաւոր կերպով գրել քեզ:

Քո, «Արեգակները» մենք ուղարկում ենք Սփիւռքի կոմիտէին, ամեն ամիս վերցրու նրանցից: Այժմ մեր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացրել ենք Լոնտոնում հայկական տպարան հաստատելու ծրագրի վրայ: Տույս ունեմ դրական կը լինի արդիւնքը:

Ձերմ բարեւներ եւ համբոյրներ քեզ եւ Ասպրամին մեր բոլորից:

Միրով՝ Ասատուր Կիզէլեան

Բալայան Վիկտոր

... Անգնում էին տարիներ: Վիկտոր Բալայանը, որ արդեն ղեկավարել էր «Խորհրդային գրող» հրատարակչությունը, «Տայֆիլմ» կինոստուդիայի տնօրենն էր, ամեն անգամ հանդիպելիս հարցնում էր. «Ինչպե՞ս է Ասատուր Կյուզելյանը, չմոռանաս իմ ջերմ քարենները հաղորդել մեծ հայրենասերին»:



/ «Ավանգարդ», 1959թ. /

Հայրենիքի լուսառող իրականութենեն հեռու

Երկու հայ երիտասարդ ուսուցիչներ են նրանք, երկու հայ ուսուցիչներ, որ ապրում են միմյանցից հեռու, մեկը՝ փրփրաբաշ Դեյբեդի ափին ծաղկող Ալավերդի քաղաքում, իսկ մյուսը «հայրենիքի լուսաշող իրականութենեն հեռու» ալեհեր Գանգեսի ափերին, Կալկաթա քաղաքում: Նրանք երբեք չեն տեսել իրար, բայց խոսել են միմյանց հետ, զրուցել են նամակների միջոցով, միմյանց հաղորդել իրենց հույզերն ու ապրումները...

Պատահական չէ, որ այս հոդվածի վերնագիրն է դարձել հեռավոր Գանգեսի ափերին ապրող հայ ուսուցչի նամակի մի տողը:

Արտասահմանից հայ, ինչպես նաև այլազգի շատ տուրիստներ են գալիս Խորհրդային Տայաստան, շրջում են մեր քաղաքներում ու գյուղերում: Մեր քարեկամներն ուրախանում են՝ տեսնելով նոր կյանքով ապրող հայերի նվաճումներն ու հաջողությունները, իսկ չարակամները փակում են ականջները, որպեսզի չլսեն կառուցող մտքների զրնգոցը, արեւավառ դաշտերից եկող աշխատավոր մարդու երգի ձայնը, դնում են սեւ ականոցներ ու այդ ականոցների միջից նայում մեր կյանքին, այդ ականոցների միջից էլ այն ներկայացնում արտասահմանում:

Ես ցանկանում եմ խոսել երկու երիտասարդ ուսուցիչների հեռակա քարեկամության փոքր պատմության մասին, թե ինչպես է հայրենակարոտ հայը ուրախանում իր մայր հայրենիքի նվաճումներով: Կալկաթայի Տայոց մարդասիրական ճեմարանի ուսուցիչ է Ասատուր Կյուզելյանը, եւ ահա թե ինչ է գրում նա իր նամակներից մեկում.

«Մենք, այսինքն թուրքական յաթաղանեն մազապուրծ ազատված հայերու զավակները, ցրված աշխարհի բոլոր քառուղիներու վրա, ավելի քաղցր, ավելի թովիչ, ավելի հմայիչ ի՞նչ ցանկություն կրնանք ունենալ, քան Սասունցի Դավթի նման տարիներու անը օրերով նվաճող, տուֆաքանդակ Տայաստանի մեջ ապրող եւ անոր ծաղկումին ու պայծառացումին համար տարվող վիթխարի աշխատանքին իրենց մասնակցությունը բերող մեր հարազատ եղբայրներու հետ գոնե նամակագրությամբ միանալու քաղցր երազը: Տայրենիքի լուսաշող իրականութենեն հեռու, անհրապույր, անարեւ ու օտար այս ափերու վրա իր ազգային գոյությունը նյութական մեծ զոհաբերություններով պահպանող հայությունը իր հոգիի ականջները լայն կրանա մայր հողէն եկող ամեն խաբրիկի առաջ, մեր սրտի կանթեղը միշտ վառ է հայրենիքի կարոտով ու մեր հպարտության շրթունքներէն կքարձրանան փառքի անհամար երգեր մեր վարդակարմիր երկրի մհերաբազուկ այսօրը երգելու համար»:

Այս նամակը Ա. Կյուզելյանն ուղարկել է Ալավերդի քաղաքի Սպանդարյանի անվան դպրոցի ուսուցիչ Ալբերտ Փարսադանյանին, որն իր նամակում պատմել էր իրենց դպրոցի մասին, գրել, թե ինչպես իրենց դպրոցում սովորում են 500 աշակերտ, դասավանդում 35 ուսուցիչ: Տետո նա պատմել էր դպրոցի լաբորատորիաներում, արհեստանոցներում տարվող ուսման եւ աշխատանքի մասին:

Ասատուրն ուրախացել էր՝ իմանալով այս մասին, ու նա իր նամակներից մեկը վերջացրել էր այսպես. «Ամենաքաղցր երազներես մեկն է օր մը այցելել հայրենիք»: Տետո նա խնդրել էր Ալբերտից համառոտ պատմել իր կենսագրությունը:

Գրել էր Ալբերտ Փարսադանյանն ու ստացել պատասխան նամակ, որն ամփոփում է Ասատուր Կյուզելյանի կենսագրությունը: Երկու նամակ՝ մի քանի նախադասությամբ շարադրված ու երկու կյանք՝ մի քանի շտրիխներով... իրարից այնքան տարբեր: «Ծնվել եմ 1930-ին, Լոռվա գեղեցիկ բնության մեջ,- գրել է Փարսադանյանը,- մանուկ հասակից ինձ ժպտացել է Մասիսներով ու խաղողով գեղազարդված Տայաստանի պետական գերբը: Սովորել եմ Ալավերդու Սպանդարյանի անվան դպրոցում, քարձրագույն կրթություն ստացել եմ Երեւանի պետական համալսարանում, այժմ աշխատում եմ նույն՝

Սպանդարյանի անվան դպրոցում: Ավանդում եմ հայոց լեզու, հայոց գիրը, հայ գրականությունը»:

Այնուհետև Փարսադանյանը պատմել է իրենց ուսուցիչների մասին, գրականության ու մշակույթի ծաղկման, դպրոցի վերակառուցման եւ այլ հարցերի մասին: Նա իր նամակի հետ ուղարկել է լրագրեր, որոնց մեջ գրված է եղել այդ հարցերի մասին:

«Ես ծնվել եմ 1932-ին, Թուրքիո Սաննագ գավառին մեջ,- պատասխանել է Ասատուր Կյուզելյանը,- ծնողներս ապրած են թրքական կոտորածի արհավիրքն ու հրաշքով ազատված յաթաղանեն: 1939-ին պանդխտության հանապարհներին դեգերում էինք՝ Սուրիո եւ Լիբանանի մեջ...

1948-ին ավարտեցի Տալեպի Կիլիկեան վարժարանը եւ ընդունվեցի Անթիլիասի նեմարանը: Ճեմարանի տեսուչն էր արկածախնդիր եւ անսկզբունք անձ մը: Բնձի եւ հայրենասեր ընկերներու համար անհանդուրժելի էր այդ: Այդ էր պատճառը, որ 1955-ին, հունիսի 27-ին, ավարտական քննություններս տալե ետք, ենթարկվեցա հարձակումի մը, որու պատճառով մեկ ամիս մնացի հիվանդանոց»:

Տենց այդպիսի մարդիկ են, որ այսօր աչք են փակում օրավոր ծաղկող ու բարգավաճող մեր հայրենիքի նվաճումների առջեւ: Սակայն նրանք երբեք չեն կարող խլացնել առողջ ձայնն այն հազարավոր երիտասարդների, որոնք Խորհրդային Տայաստանի անկեղծ բարեկամներն են: Նույնիսկ դաժանություններն ու հալածանքներն անգոր են կտրելու կամքն ու հավատը իսկական հայրենասերի: «Տիմա անցյալիս բոլոր վերքերը սպիացած են արդեն,- շարունակում է նամակը Ասատուրը,- մեր ժողովրդի ստեղծագործ ու շինարար ոգիին հայելին եղող Խորհրդային Տայաստանի բոսորավառ ներկան, որ միաժամանակ անոր վարդակարմիր ապագայի գրավականն է, փոշիին տակ կթաղե հին օրերու հիշատակը»:

Տեռու է Ասատուր Կյուզելյանը Տայաստանից, իր բարեկամներից եւ Ալբերտ Փարսադանյանից, սակայն երիտասարդ հայ ուսուցչի հետ նա մտովի միշտ քայլում է մեր վարդագույն Երեւանում, գեղատեսիլ Տրագդանի ափերին, թեկուզ նամակների միջոցով միշտ գրուցում է իր բարեկամի հետ, սրտանց կիսում նրա հաջողություններն ու ուրախությունները, նամակներից առնում կարոտն իր հայրենիքի, նոր հայրենիքի՝ Խորհրդային Տայաստանի:

Քալասանյան Սերգեյ Արսենի

26.08.1902, Աշխաբադ, Տաջիկ. ԽՍՀՄ, 3.06.1982, Մոսկվա,
ԽՍՀՄ:

Հայ կոմպոզիտոր, մանկավարժ, Տաջիկ երաժշտ. քատրոնի
հիմնադիր: Երաժիշտ-ստեղծագործող:



/ 20 օգոստոսի 1961թ. /

Թանկագին բարեկամ Ասասուր,

Առաջին հերթին, խնդրում եմ ներքեք ինձ այդ ուշացած պատասխանիս համար: Իմ չափազանց ծանրաբեռնվածությունս խանգարեց ժամանակին տեղեկացնել իմ մասին:

Միեւնույն ժամանակ, ուզում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել այն թերթերի համար, որ դուք ուղարկել եք ինձ: Այդ հոդվածների ընթերցումը մեծ բավականություն պատճառեց ինձ: Տակապես հաճելի էին դրանք, որ մեկ անգամ ես հիշեցրին այն հիասքանչ օրերը, որ ես անցկացրի Կալկաթայում: Պետք է խոստովանեմ, որ մեր հայրենակիցների հետ հանդիպումները ամենատպավորիչ ու ամենահուզիչն էին Տնդկաստանում եղած ժամանակ: Եվ դրանով մենք առաջին հերթին պարտական ենք ձեզ, սիրելի Ասատուր, պարոն Ալեքսյանին եւ պարոն Նաջարյանին, ձեր ցուցաբերած ջերմ ուշադրությանն ու հյուրընկալությանը: Այդ մասին ես մեծ հաճույքով պատմել եմ իմ բարեկամներին եւ հայրենակիցներին: Նույն ջերմությանը հիշում են ձեզ եւ Պավել Լիսիցյանը, եւ Աոնո Բաբաջանյանը, եւ նույն Վալտերը, որոնց ջերմ բարեւներն եմ ուղարկում ձեզ բոլորիդ:

Շատ եմ ցավում, որ չեմ ստացել ձեր առաջին նամակը (դուք գրում եք, որ այս նամակը երկրորդն է, որ գրել եք): Մենք շատ երջանիկ կլինեինք, եթե դուք այցելեք մեր երկիր: Տուտով եմ, որ երբեիցե այդ ցանկությունը կիրականանա: Սակայն հավանական է, որ մենք դարձյալ այցելենք Տնդկաստան եւ այնտեղ կտեսնենք մեր թանկագին հայրենակիցներին:

Տաղորդեցեք մեր ջերմ բարեւները ձեր հիանալի տիկնոջը, պարոն Ալեքսյանի եւ Տայկ Նաջարյանի հարգելի եւ հյուրընկալ ընտանիքներին:

*Մրտագին բարեւներով եւ լավագույն ցանկություններով՝
ձեր՝ Ս. Բալասանյան*

 **Միւրեւի Ասասուր,**

Ընդունեցեք իմ ուշացած, բայց ջերմագին շնորհավորանքը Նոր տարվա կապակցությամբ:

Իմ շնորհավորանքը նաեւ հարգելի պարոն եւ տիկին Ալեքսյաններին, տիկին Վիվիենին եւ մեր բոլոր բարեկամներին:

Ես շատ երախտապարտ եմ Ձեզ, որ դուք ինձ ուղարկեցիք Նյու Յորքի թերթի հոդվածը եւ նկարը, ինչն ինձ հիշեցրեց այն անմոռանալի երեկոյի մասին, որը ես անցկացրեցի Ձեր տանը:

Իմ կինը եւ աղջիկը Ձեզ շատ երախտապարտ են այն նվերների համար, որ դուք ուղարկեցիք:

Իմ կողմից ջերմ բարեւներ Կալկաթայի հյուրընկալ հոդում ապրող Իմ հայրենակից: Տուսով եմ, որ մենք նորից կհանդիպենք: Շատ ուրախ կլինեի տեսնել Ձեզ բոլորիդ իմ տանը:

Յանկանում եմ Ձեզ բոլորիդ առողջություն, հաջողություն եւ երկար կյանք:

Ձեր՝ Բալասանյան Սերգեյ



Միրելի Ս. Բալասանեան,

Սա իմ երկրորդ նամակն է, առաջինը գրեցի, եթէ չեմ սխալում մօտ երկու ամիս առաջ: Ներփակ ուղարկում եմ «Նոր Կեանք» եւ «Soviet Land» թերթերում լոյս տեսած երեք յօդուածներ. Առաջին երկու գրութիւնները վերաբերում են ձեր Տնդկաստան այցելութեան, նոյն յօդուածներն ուղարկել եմ նաեւ արտասահմանեան այլ թերթերի, հենց որ ստանամ անմիջապէս կը յղեմ ձեր հասցեին:

Մեր ընտանիքը, ինչպէս նաեւ Կալկաթայի ձեր միւս բարեկամները յաճախ յիշում են ձեզ եւ տիկին Քնարիկը... եւ միթէ կարելի է մոռանալ հայրենասէր ու ազնիւ մարդկանց, մանաւանդ երբ նրանց աչքերում կայ շող Տայաստանի արեւից եւ հոգիներում կարոտ դէպի իրենց պանդուխտ հայրենակիցները:

Շնորհակալ կը լինեմ, եթէ մի քանի տողով յայտնէք յօդուածների ստացումը:

Արտագին բարեւներ իմ տիկնոջից եւ Ալեքսեան ընտանիքից ձեզ, տիկին Քնարիկին եւ օրիորդ Բալասանեանին: Միրալիբ բարեւներ նաեւ Պավել Լիսիցեանին եւ Առնոյ Բարաջանեանին:

Միրով՝ Ասատուր Կիզելեան



Միրելի բարեկամ Սերգեյ Բալասանեան,

Ժամանակին ստացել եմ ձեր նամակը, որի ընթերցումը մեծ հաճոյք պատճառեց թէ՛ ինձ եւ թէ՛ մերոնց: Մենք յաճախ ենք կարօտով յիշում ձեզ եւ ձեր ազնիւ տիկնոջը: Վստահ եմ գիտէք թէ ինչ է նշանակում մեզ համար օտար այս ափերում հանդիպել սովետահայ մեր արուեստագէտներին: Նրանք մեր պանդուխտ հոգին լցնում են յուզումով ու կարօտով:

Ձեր Տնդկաստան երկրորդ այցելութեան մասին հրատարակած իմ յօդուածներն արդէն լոյս են տեսել երեք թերթերում, որոնք կը գտնէք ներփակ: Նիւ Եորքի «Լուսաբեր» թերթի անգլերէն բաժնում

տպուեց նաեւ Թագորի մասին ձեր կարդացած ուսումնասիրութիւնը: Դժբախտաբար թերթի այդ թիւը կորցրել եմ: Այդ թերթի խմբագիրը ինձ յատուկ շնորհակալութեան նամակ է գրել ձեր մասին իրեն ուղարկած յօդուածներիս համար:

Մեծ հաճոյքով Կալկաթայում դիտեցինք ձեր հեղինակած «Լէյլի եւ Մ'ջնուն» ֆիլմը: Չէք կարող պատկերացնել որքան հպարտ էինք զգում մեզ լսելով ձեր հրաշալի երաժշտութիւնն ու դիտելով ֆիլմում ցուցադրուած գեղեցիկ պարերը:

Ներփակում եմ մի յօդուած, որը լոյս տեսաւ «Soviet Land» թերթում: Անգլերէն միւս յօդուածը երեւաց “The Sunday Magazine” թերթում:

Այժմ Տնդկաստանում ելոյթներ է ունենում վրացական պարի անսամբլը: Այսօր տեսնուեցի անսամբլի ղեկավար Սուխիշվելու հետ: Ինչ որ ինձ մեծ զարմանք պատճառեց այն էր, որ մեր թարգմանը մի վրացի տղայ էր, որը շատ մաքուր հայերէն էր խօսում:

Վստահ եմ ուրախ կը լինէք լսելով որ Վիվիէնը Յունուար 28-ին ծնունդ տուեց մի մանչուկի, որի անունը Վահէ դրինք: Նորածինը ուրախութեան մի նոր շունչ բերեց մեր սրտերին: Սրտագին բարեւներ են ուղարկում Վիվիէնն ու Ալեքսեանները ձեզ եւ ձեր ընտանիքին:

Տամբոյրներով՝ Ասատուր Կիզելեան

3. Գ. Նկարները կ'ուղարկեն յաջորդիւ:

Բարսեղյան Խիկար Հակոբի

7.06.1918, գ. Շինուհայր (այժմ՝ ՀՀ Սյունիքի մարզում) –
10.01.1996, Երեւան:

Պատմաբան: Պատմ.գիտ.դ-ր (1964), պրոֆ. (1966):
Համկ(բ)Կ անդամ 1940-ից: Ավարտել է ՀՊՄԻ (1941):
1948-49-ին եւ 1952-53-ին՝ «Քանվոր» թերթի (Լենինական)
խմբագիր, 1958-61-ին՝ ՄԼԻ հայկ. մասնաճյուղի, 1967-
70-ին՝ «Հայաստան» հրատարակչության, 1970-84-ին՝
ՀԽՍՀ ԳԱ հաս. Գիտ. առաջատար գիտաշխատող: ՀԿԿ
ԳԽ պատգմ. (1959-63): Աշխատությունները վերաբերում
են անդրկովկասում հեղ. շարժումների, բոլշեիկյան
հայ. Պարբ. Մամուլի պատմությանը:



🔗 Մեծարգո Ասասուր,

Գրաբերս հայաստանի Գիտությունների ակադեմիայի փոխնախագահն է: Օգտվելով առիթից նրան խնդրել եմ այս երկտողը Ձեզ հանձնի եւ ծանոթանա Ձեր եռանդուն ազգանվեր գործունեությանը: Հայաստանում կատարվող իրադարձությունների մասին Ձեր իմացությունը կավելացնի հարգարժան ակադեմիկոսը:

Տարգարժան Ասատուր, մի փոքրիկ խնդրանք ունեմ: Անցյալ տարի Լոնդոնում լույս է տեսել Roginald Tegue Jones (Ronald Sinclair O.B.E. M.B.E. (Mil) The spy who disappenrd. Diary of a Secret Mission to Russian Centrral Asia in 1918. Introduction and Epilogue by Peter Hopkirk, London, Victor Collaner LTD 1990 աշխատությունը, հուշագրությունը, որը իբրեւ պատմաբանի ինձ խիստ անհրաժեշտ է: Ծանոթ լինելով Ձեր բարի բնավորությանը ինձ թույլ եմ տալիս խնդրելու այդ գրքից մի օրինակ պրոֆ. Գալոյանի միջոցով ուղարկեք ինձ, որի համար նախապես խոր շնորհակալություն եմ հայտնում: Ձեզ եմ ուղարկում անգլիական իմ տպավորությունների հոդվածը եւ Շիրազի հուշանովելներ գիրքս:

*Ձերն բարեւաներ բոլորիդ՝
Պրոֆ. Բարսեղյան Խիկար Տ.*



/ 06 մայիսի 1992թ. /

Տեսեցալ երկտողն եմ գրել Դոկ. Վրեժ Ներսեսեանին եւ Պրոֆ. Բարսեղեանին.

«Սիրելի Տեր Հայր,

Ակադեմիկոս Գալոյեանի բերած նամակի պատճենը ուղարկում եմ քեզ: Տանիս այս գիրքը ապահովիր (եթէ հնարաւոր է) եւ ինձ յայտնիր փոխարժէքը:

Սիրով՝ Ասատուր



Սիրելի Պրոֆ. Բարսեղեան,

Խնդրել եմ Դոկտ. Ներսեսեանից, որը Բրիտանական թանգարանում վարում է Միջին Արեւելքի բաժինը, որպէսզի փորձի գտնել նամակում նշուած գիրքը: Ի միջի այլոց յայտնեմ, որ Դոկ. Ներսեսեանը Կալկաթայի Տայոց Մարդասիրական ճեմարանում շուրջ վեց տարի եղել է իմ աշակերտը:

Բեմնեղյան Գրիգոր

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի աշխատակազմի անդամ:



/ 21 հունիսի 1966թ., Լոնդոն /

**Մեծահարգ Տիար Ասատուր Գյուլեղյան,
Խմբագիր «Արեգակ» ամսաթերթի,
Հարգարժան բարեկամ,**

Ուրախությամբ տեղեկացանք, որ մեծ ցանկություն ունեք կրկին անգամ լինելու Մայր հայրենիքում:

Ցավում ենք, որ այս տարվա համար արդեն լրացված է հրավիրյալների ցանկը: Սակայն, ցանկալի կլինեք, այս տարվա աշնանը, թեկուզ մի քանի օրով, Նայաստան գալիք որպես զբոսաշրջիկ: Դուք կդառնալիք մեր Կոմիտեի հյուրը եւ կվայելեիք հրավիրյալների առանձնաշնորհները:

Նարգանքներով՝

*Կոմիտեի կապերի բաժնի վարիչ՝
Բեմնեղյան Գրիգոր*



/ 26 մայիսի 1967թ., Լոնդոն /

**Մեծահարգ պրն Ա. Գյուլեղյան,
Հարգելի բարեկամ,**

Ուրախությամբ կարդացինք 2 մայիս 1967 թվակիր Ձեր նամակները, քանի որ երկար ժամանակ է, ինչ Ձեզանից լուր չունեինք: Տարակույս չկա, որ դանիացի գրող Անդերսեն Ռոզենտալի դասախոսությունները «Նայաստանը եւ հայերը» թեմայով շահեկան են եւ հավասարապես հետաքրքրում են մեզ բոլորիս: Սակայն Ռոզենտալի Նայաստան հրավիրելու հարցով Դուք պետք է դիմեք Արտասահմանյան երկրների հետ բարեկամության եւ կուլտուրայի կապի հայկական ընկերության (Երեւան, Արովյան 3), քանի որ, ինչպես գիտեք, մեր կոմիտեն զբաղվում է միայն հայ գործիչներով:

Ձեր նամակի պատճենը հանձնված է ԱՕԿՄ-ին: Իհարկե, եթե հարգարժան գրողը կարողանա այցելել Նայաստան, որպես զբոսաշր-

ջիկ, ապա կոմիտեն կաշխատի անել ամեն հնարավորը, որպեսզի նա հանդես գա իր դասախոսություններով եւ ավելի հանգամանորեն ծանոթանա մեր հանրապետության մշակութային կյանքին:

Նարգանքներով՝

*Կոմիտեի կապերի բաժնի վարիչ՝
Բեքմեզյան Գրիգոր*



/ 28 հուլիսի 1966թ., Երևան /

Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի
կոմիտեի կապերի բաժնի վարիչ

Յարգելի Պրն Գր. Բեմնեպեան,

Կը հաստատեմ ձեր 29.6.1966թ. թուակիր նամակը ուղղուած Նայ Տան վարչութեան: Ստորեւ կը պատասխանեմ ձեր նամակին մեջ նշուած կէտերուն:

1. Նայ Տունը հիմնադրուած է 1962 Յունիս 17-ին: Նայ Տան շէնքը գնուած է համայնքի անդամներէն հանգանակուած դրամով, որուն մասնակցած են շուրջ 250 անձեր: Նայ Տան հիմնադիր անդամներն են, Տիարք Նայկ Գալուստեան, Յարութիւն Մութաֆեան, Ե. Պենլեան, Տոքթ. Կորկոտեան, Լ. Ապահեան, Նր. Ապահեան, Ս. Մկրեան, Տոքթ. Տերունեան:

2. Մեր կազմակերպութեան չի վերաբերիր այս հարցումը:

3. Նայ Տան ներկայ վարչութեան անդամներն են.

ա. Պրն Նայկ Գալուստեան – Ատենապետ

բ. Պրն Յարութիւն Մութաֆեան – խորհրդական

գ. Պրն Եդուարդ Պենլեան – խորհրդական:

4. Նայ Տունը մասնահիղ չունի:

5. Նայ Տունը առանձին անդամներ չունի, ան կը պատկանի համայնքիս բոլոր անդամներուն:

6. Նայ Տունը ունի հետեւեալ յանձնախումբերը.

ա. Մշակութային յանձնախումբ

բ. Թատերական յանձնախումբ

գ. Ընկերային յանձնախումբ

Բոլոր յանձնախմբերը նշանակուած են Նայ Տան վարչութեան կողմէ:

7. Ոչ մէկ հրատարակութիւն:

8. Լոնտոնի մէջ կը հրատարակուի «Արեգակ» ամսաթերթը, որուն հիմնադիր տնօրէնն է Պրն Նայկ Գալուստեան, որ միաժամանակ Նայ Տան վարչութեան ատենապետն է: «Արեգակ» ամսաթերթը թէւ ուղղակիօրէն առնչութիւն չունի Նայ Տան հետ, քայց անոր սիւնակներուն մէջ միշտ արձագանգ կը գտնեն Նայ Տան բոլոր ձեռնարկները:

9. Նայ Տունը ունի գրադարան: Կոմիտէն կրնայ օգնել դրկելով գիրքեր գրադարանին, ինչպէս նաեւ գեղարուեստական բովանդակութեամբ կիւնֆիլմեր:

10. Նայ Տան մէջ յաճախ կը կազմակերպուին գեղարուեստական եւ ընկերային հաւաքոյթներ, թէ Նայ Տան յանձնախումբերուն եւ թէ Երիտասարդաց միութեան կողմէ: Նայրենիքէն Լոնտոն այցելող հայեր մեր համայնքի անդամներուն հետ հանդիպում կ'ունենան Նայ Տան մէջ:

Նայ Տան վարչութիւնը ամեն ճիգ կը թափէ, որպէս զի հայրենիքի հետ մեր մշակութային կապը աւելի ամրապնդուի եւ լոնտոնահայութեան մէջ վառ մնայ ազգասիրութեան եւ հայրենասիրութեան զգացումը:

Լասագոյն ցանկութիւններով եւ յարգանքներով,

Ի դիմաց Նայ Տունի

Կիրիսիլեան Յ.

Ն.Գ. Բեքմեզեանի նամակին պատասխանել է «Նայ Տուն»ի տնօրէն Յակոբ Կիրիսիլեանը: Նամակը հրատարակում ենք իր շահեկանութեան համար: Ա.Կ.

Քրոսյան Գեորգ

24.03.1926, Սեւքար, Տավուշի մարզ, Հայաստան,
ԽՍՀՄ - 8.12. 2015, Երեւան:

Հայ փիլիսոփա: Փիլիսոփայական գիտությունների դոկտոր
(1962), պրոֆեսոր (1963): ՀՀ Գիտությունների Ազգային
Ակադեմիայի ակադեմիկոս (1962), թղթակից անդամ (1971):
Հայոց փիլիսոփայական ակադեմիայի
հիմնադիր-նախագահ (1987):



/ 26 հուլիսի 1965թ., Երեւան /

Հարգարժան ընկեր Գյուլելյան,

Ուղարկում եմ Ձեզ երկու հոդված Շեքսպիրի մասին անգլերեն լեզվով: Խնդրում եմ հայտնեք, ինչ գրքեր են պետք Ձեզ, մեծ սիրով կուղարկեմ:

Առիթից օգտվում եմ խորին շնորհակալություններ հայտնելու այն ջերմ ընդունելության համար, որին արժանացրիք մեզ Լոնդոնում:

*Խորին հարգանքներով՝
Բրուսյան Գեորգ*



/ 6 սեպտեմբերի 1965թ., Երեւան /

Մեծարգո արն Գյուլելյան,

Նունիսին Երեւանից ուղարկել եմ Ձեզ իմ գրքերից մեկը, ինչպես նաեւ հոդվածներ Շեքսպիրի մասին: Սակայն Ձեզանից դեռ լուր չունեմ:

Ուղարկում եմ գրքույկս՝ «Կյանքը եւ փիլիսոփայությունը», որը վերջերս է հրատարակվել: Կխնդրեի հայտնել ստանալու մասին:

Առիթից օգտվում եմ նորից շնորհակալություններ հայտնելու Լոնդոնում ջերմ ընդունելությունների համար:

Խնդրում եմ ողջույններս հաղորդել Ձեր տիկնոջը եւ նրա ծնողներին:

*Խորին հարգանքներով՝
Բրուսյան Գեորգ*



/ 17 փետրվարի 1967թ. /

Միտելի Ասասուր,

Արդեն երրորդ օրն է, ինչ գտնվում եմ Օքսֆորդում: Ուղարկել եմ քո ցանկացած նկարները: Ինձ մոտ դարձյալ մնում է 2-3 նկար: Գուցե անհրաժեշտ լինեն Փարիզ մեկնելու համար:

Ի՞նչ լուր ունես այդ հարցի կապակցությամբ: Խնդրում եմ հայտնես ինձ հետևյալ հասցեով. Prof. G. Brutian Halifax House, 6 South Parks Road, Oxford.

Իմ ջերմ ողջույնները Ձեր տիկնոջը, պրն Ալեքսեանին եւ նրա տիկնոջը:

*Լավագույն ցանկություններով՝
Բրուտյան Գեորգ*



/ 6 ապրիլի 1967թ., Երևան /

Միտելի Ասասուր,

Մի քանի օր է, ինչ Երեւանում եմ: Անգլիայից վերադառնալուց հետո մի շաբաթից ավել մնացի Մոսկվայում, ուր դասախոսություններ կարդացի ժամանակակից անգլիական փիլիսոփայության վերաբերյալ:

Երեւանի բոլոր թերթերը արձագանքել են իմ անգլիական ուղեւորությանը: Քանի որ Դուք հետեւում եք դրանց, ուստի ավելորդ գտա ուղարկելը: Իսկ եթե Ձեզ անհրաժեշտ է ունենալ այդ համարները, ապա գրեք: Միրով կկատարեմ Ձեր ցանկությունը:

«Տայրենիքի ձայնը» տպագրել է Ձեր երկրորդ թղթակցությունն իմ մասին: Իսկ այն, որ երրորդը խմբագրությունը դեռեւս չի ստացել, միանգամայն ստույգ է, թեեւ դա ինձ զարմանք պատճառեց:

Ի դեպ, դեռ չեմ ստացել ձեռագրերի անվանացանկը (կատալոգը), որ ուղարկել էիք տան հասցեով, ինչպես նաեւ գրքերը: Դա եւս ինձ զարմանք է պատճառում, որովհետեւ կատալոգը ուղարկելուց հետո եւս Լոնդոնից սովորական փոստով առաքեցի մի շաբթ գրքեր, որոնք արդեն տեղ են հասել:

Ձեր ուսման հարցով զբաղվեցի ինչպես Մոսկվայում, այնպես էլ Երեւանում եւ շարունակում եմ զբաղվել: Տուտով եմ, որ այն դրականորեն կլուծվի, չնայած դեռ որոշ դժվարություններ կան հաղթահարելու:

Դեռ հնարավորություն չեն ունեցել հանդիպելու Կաթողիկոսի հետ, քայց կարծում են, որ կկայանա մոտակա օրերին եւ այդ մասին կհայտնեն Ձեզ:

Ինձ հայտնի է, որ անգլիական թերթերը դեռ շարունակում են խոսել հայկական ձեռագրերի աճուրդի պատմության մասին: Անգամ դրանցից մի քանիսը ստացել են: Տավատացած են, որ, ինչպես պամանավորվել ենք, Դուք կուղարկեք ինձ այդ բոլոր թերթերից համապատասխան կտրվածքներ՝ պատկերը ամբողջացնելու համար:

Բելյուրից «Արարատի» խմբագրությունն ինձ ուղարկել է փետրվարի 24-ի համարը, որտեղ տպագրված է Ձեր առաջին թղթակցությունն իմ մասին: Սակայն չունեն ոչ մյուս համարները, ոչ էլ այլ թերթեր: Գուցե հիշեցնեք նրանց, որպեսզի ուղարկեն համապատասխան թերթերի ինձ հետաքրքրող համարները:

Միյուրքահայության հետ մշակութային կապի կոմիտեում խոստացան միշտ ուղարկել Ձեզ հետաքրքրող գրականություն: Խնդրում են ինձ տեղյակ պահեք արդյունքի մասին, որպեսզի միջամտեմ, եթե որեւէ խափանում լինի այդ գործում:

Առիթից օգտվում են ամենաջերմ շնորհակալություններս հայտնելու Ձեզ եւ Ձեր տիկնոջը, պարոն Ալեքսյանին եւ նրա տիկնոջը՝ այն սրտագին ընդունելության համար, որին արժանացրիք ինձ Լոնդոնում:

Ձեզ գանկանում են նորանոր հաջողություններ հայ մշակույթին քերած մասնակցության գործում:

Խնդրում են նամակի պատասխանն ուղարկել հետեւյալ հասցեով.

Prof. Brutian

Komitas St. 32, appt 53,

Yerevan, 12, U.S.S.R.

*Սրտագին ողջույններով ձեր՝
Բրուտյան Գեորգ*



Թանկագին Ասասուր,

Ենթադրում եմ, որ 6-ի թվակիր նամակս արդեն ստացած կլինեք, որով հաղորդել էի որոշ նորություններ Տայրենիքից:

Գոհունակությամբ պետք է նշեմ, որ արդեն իմ սեղանին է ձեռագրերի ցուցակը (կատալոգը): Սակայն դեռեւս չեմ ստացել լրագրերի կտրվածքները, որոնք խոստացել էիք, ինչպես նաեւ գրքերը, որ թողել էի Ձեզ մոտ:

Նուսով եմ, որ այդ մասին հոգ կտանեք:

Ես այստեղ եղա Կաթողիկոսի մոտ, եւ նա խնդրեց շնորհակալություն հայտնել Ձեզ եւ պարոն Ալեքսյանին՝ «Էջմիածին» նկարի եւ Ձեր հայրենանվեր գործունեության համար:

Ձեռագրերի հարցում Ձեր կատարած անգնահատելի դերի մասին ես պատմեցի այստեղ մի շարք կարեւոր անձանց եւ մարմինների:

Տրատարակության եւ պատրաստում Ավ. Բսահակյանի նամակը Տոնապետյանին: Այդ առթիվ կխնդրեի մանրամասն տեղեկանք տալ Տոնապետյանի կյանքի եւ գործունեության մասին:

Ձերմ ողջույններս Ձեր տիկնոջը, պարոն Ալեքսյանին եւ նրա տիկնոջը:

Լավագույն ցանկություններով՝

Բրուտյան Գ.



Թանկագին Ասասուր,

Վերջապես ստացա նամակդ, որն ինձ շատ ուրախացրեց նախ այն պատճառով, որ քեզանից լուր չունեի:

Ձեռագրերի մասին քո կշռադատումներն ինձ թվում են հիմնավորված: Զրույցի ժամանակ մոտավորապես նույն կարծիքը հայտնեց Կաթողիկոսը:

Անդերսեն-Ռոզենտալի մասին քո նամակը ես անհապաղ կներկայացնեմ Տամազասայանին, իսկ նրա Տայաստան ժամանելուն պես կաշխատեմ անել այն ամենը, ինչ անհրաժեշտ է նման գիրք գրելու համար, մեր ժողովուրդին եւ նրա հնավանդ մշակույթին ծանոթանալու համար:

Կատալոգից բացի, ոչ մի գիրք չեմ ստացել, այդ թվում նաև տրամաբանության վերաբերյալ այն գիրքը, որ հանձնեցի քեզ՝ հետագայում ինձ ուղարկելու համար:

Եթե այդ գրքերն արդեն առաքել ես, խնդրում եմ հայտնես, թե ե՞րբ, որպեսզի այստեղ պարզեմ դրանց ուշացման պատճառը:

Երախտապարտ կլինեի, եթե ուղարկեիր հայկական ձեռագրերի վերաբերյալ կտրոններ, որոնցից վերջինը, որ տվեցիր ինձ, կրում էր մարտի 14-ի ամսաթիվը: Շնորհակալ կլինեի, եթե քո կամ սփյուռքի հայկական թերթերի խմբագրությունների միջոցով ստանայի լոնդոնյան իմ ուղեւորությունը լուսաբանող համարներ, որովհետև ձեռքիս տակ եղածը «Արարատն» է, այն էլ միայն առաջին դասախոսության վերաբերյալ է: Տայաստանի բարձրագույն դպրոցներում սփյուռքահայ ուսանողության հեռակա ուսուցման հարցը այժմ քննարկվում է: Եթե դու որեւէ մեկին դիմելու լինես այդ խնդրով, ապա ինձ ուղարկիր նամակիդ կրկնօրինակը, որպեսզի գործի ընթացքին տեղյակ լինեմ:

Լոնդոնում պրն Ալեքսյանը ինձ հետ ունեցած հանդիպումների ժամանակ հետաքրքրվեց Վաղարշակ Գալստյանի գրադարանով: Այդ կապակցությամբ եղա Մատենադարանի դիրեկտոր Լ. Խաչիկյանի մոտ: Պարզվեց, որ Վաղարշակ Գալստյանը նրան հայտնել է Մայր Տայրենիք այս տարի այցելելու իր մտադրության մասին, ոչ մի խոսք չակնարկելով գրադարանի մասին: Տավանաբար, մտադիր է այդ գրքերը իր ձեռքով ընծայել:

Ձերն բարեւներ տիկնոջդ, պրն Ալեքսյանին եւ նրա տիկնոջը:

*Սեղմում եմ ձեռքդ քո՝
Բրուտյան Գ.*



Թանկագին Ասասուր,

Վաղուց քեզինից լուր չունեմ: Քո հեռակա ուսուցման հարցով ես շարունակում եմ զբաղվել: Բանն այն է, որ այդ հարցը մասնավոր ձևով չի դրվում, այն ընդհանուր հարցի լուծման հետ է կապված: Կան հիմքեր ենթադրելու, որ ի վերջո պետք է դրական լուծվի:

Պրն Անդերսեն-Ռոզենտալի հետ ունեցանք ջերմ հանդիպումներ: Նրա հետ միասին բարձրացրինք քո կենացի բաժակը: Նուսով եմ, որ դանիական գրողի այցը Նայաստան ոգեւորեց նրան, եւ էլ ավելի մեծ սիրով կգրի մեր Մայր Նայրենիքի հաջողությունների մասին:

Մոտ երկու ամիս առաջ Սփյուռքի կոմիտեի միջոցով գրքեր են ուղարկվել քեզ: Խնդրում եմ հայտնես ստանալու մասին: Սեղանիս վրա են երկու գողտրիկ հրատարակություն՝ Չարենցի «Ես իմ անուշ Նայաստանի» բանաստեղծությունը՝ 13 լեզվով եւ «Նայկական մանրանկարները»: Պատրաստվում եմ առաջին իսկ պատեհ առիթով քեզ ուղարկելու: Կսպասեմ նամակիդ: Թերեւս Լոնդոնում չես:

Դեռեւս չեմ ստացել տրամաբանության վերաբերյալ այն գիրքը, որ Լոնդոնում էի գնել եւ թողել քեզ մոտ: Դու խոստացել էիր ուղարկել այն քո մակագրությամբ՝ ինձ հղած երկու գրքերի հետ միասին: Տրամաբանության այդ գիրքն իմ գիտական աշխատանքի համար չափազանց կարեւոր է եւ նորից եմ խնդրում շտապ կերպով ուղարկել ինձ:

Խնդրում եմ իմ ջերմ ողջույնները հաղորդել տիկնոջդ, պրն Ալեքսյանին եւ նրա տիկնոջը:

*Լավագույն զանկություններով՝
Բրուտյան Գ.*



Սիրելի Ասասուր,

Ինչպես երեւում է, աշխարհը չափազանց փոքր է: Երեւանյան փողոցներից մեկում պատահաբար հանդիպեցի տիկնոջդ Վիվիենին: Ողջագուրվելուց հետո պայմանավորվեցինք հանդիպել հյուրանոցում, որտեղ իջեւանել էր նաեւ պ. Ալեքսյանը իր տիկնոջ հետ: Եվ, այնուհետեւ, իմ աշխատակիցների միջոցով բազմաթիվ զանգեր բանակցու-

թյուններ: Վերջապես պայմանավորվածություն, որ հոկտեմբերի 5-ին, կիրակի օրը հանդիպենք իմ նոր բնակարանում: Այդ հանդիպմանը պետք է մասնակցեր նաև քո բարեկամներից մեկը՝ ավստրալահայ Վիլի Էլիսը:

Նշված ժամին իմ աշխատակցուհին բազմիցս զանգել է, սակայն պ. Ալեքսյանը համարում չի եղել: Որքան մեծ եղավ իմ հիասթափությունը, երբ հոկտեմբերի 12-ին մեր ջանքերից հետո պարզվեց, որ պ. Ալեքսյանն արդեն մեկնել է Երեւանից:

Այդ հանգամանքը ինձ վիշտ պատճառեց:

Նայտնում եմ իմ նոր բնակարանի հասցեն եւ խնդրում նման առիթներով հայտնել՝

Երեւան, Կենտրոն, Պուշկինի փ, թիվ 40, բն. 90:

Տարգանքներով՝ Բրուտյան Գ.



/ 4 հուլիսի 1989թ. /

Միտելի Ասասուր,

Վերջին շրջանում միջազգային մի շարք տեղեկատուներ եւ հանրագիտարաններ հրատարակել են իմ կենսագրությունը՝ այդ թվում 3 անգլիական տեղեկատուի մեջ: Ես կխնդրեի դրանցից մեկը ինձ համար պատվիրել քո եւ թերեւս իմ մյուս հայրենակիցների միջոցով, քանզի ես այդ հնարավորությունը այստեղ չունեմ:

Ուղարկում եմ շրջաբերականը պատվերի համար:

Խնդրում եմ պատվիրել վերոհիշյալի թագավորական հրատարակությունը, քանի որ նման բան կյանքում մեկ անգամ է լինում, եւ այդ գիրքը մենք պետք է հանձնենք Սեւանի փիլիսոփայության ակադեմիային, որը նույնպես եզակի է իր բնույթով ամբողջ աշխարհում:

*Սեւանի փիլիսոփայության ակադեմիայի նախագահ՝
Բրուտյան Գ.*



/ 10 հոկտեմբերի 1989թ. /

Միրելի Ասասուր,

Տուտով եմ ստացել ես նամակս, որով հայտնել էի խնդրանքս «The Dictionary of International Biography» ձեռք բերելու վերաբերյալ: Սակայն նամակիս պատասխանը ես չեմ ստացել, ուստի չգիտեմ, թե ինչպես վերաբերվեցիր խնդրանքիս:

Վլխնդրեի մի երկտողով հայտնել ինձ այդ մասին:

Լավագույն ցանկություններով՝

Բրուսյան Գ.



/ 14 մարտի 1990թ., Երևան /

Միրելի Ասասուր,

Վերստին հավաստիացնում եմ իմ շնորհակալությունները Dictionary of International Biography գրքի վճարը մուծելու համար: Քենթրիջի Միջազգային կենսագրական կենտրոնը (International Biographical Centre) 1989թ. նոյեմբերի 29-ի գրությամբ ինձ հայտնել է, որ քեզնից ստացվել է € 49, որը գրադարանային հրատարակության արժեքն է: Ես այդ մասին վերջերս Երևանում հեռախոսով հայտնեցի տիկ. Լիլիթին եւ խնդրեցի նորից իմ շնորհակալությունները հայտնել քեզ: Ջրույցի ընթացքում տիկ Լիլիթն ինձ հայտնեց, որ Դու վճարել ես Royal Edition-ի արժեքը € 295.00, ինչպես նամակով խնդրել էիք Կ. Դալլաքյանը եւ ես, նկատի ունենալով այդ հրատարակության եզակիությունը եւ այն, որ գիրքը պետք է ցուցադրվի Սեանի իմաստասիրության կանառում (ակադեմիայում), ինչպես նաեւ հատուկ վկայականի (Certificate) հանձնումը Royal հրատարակության հետ միասին: Ես չգիտեմ, որքանով էր ստույգ տիկին Լիլիթի հայտնածը, եթե իրոք այդպես է, կխնդրեի քո վճարման գրության պատճենը (քսերոքսը) ուղարկել տանս հասցեով՝ Pushkin Street 40, apt 90, Yerevan-375010, USSR, հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար: Բոլոր դեպքերում կխնդրեի մի երկտողով հայտնել իրական վիճակի մասին: Եվ բոլոր դեպքերում՝ խորին շնորհակալություններս եւ ամենաբարի մաղթանքներս:

Բրուսյան Գ.



Միրելի Ասասուր,

Ես կրկին շնորհակալությունս եմ հայտնում «Dictionary of International Biography. Edition XXI» ինձ համար պատվիրելու կապակցությամբ: Քենթրիջի (Անգլիա) International Biographical Centre-ից ստացել եմ մի շարք նամակներ, որոնցում առաջարկված են ինձ մի քանի պարգև, ավելի ստույգ՝ թվով 6: Դրանցից երկուսը կլինդրեի պատվիրել ինձ համար: Դրանք են. Illustrated Plaque, € 57.50 եւ Hallmarked Sterling Silver Medal € 70.00:

Փոխարենը մեծ հաճությամբ Երեսանից կուղարկեմ այն ամենը, ինչ կցանկանաս: Ուղարկում եմ Order Form-ը: Եթե խնդրանքս ընդունես, լրացրու այդ ձևը եւ ուղարկիր համապատասխան հասցեով: Խնդրանքս ընդունես, թե ոչ, բարի եղիր հայտնել ինձ որոշմանդ մասին:

Ձերմ բարեկեցությունը:

*Լավագույն մտաբանքներով՝ Գ. Բրուտյան
Կից ուղարկվող 2 նկարների հետ:*



Միրելի Ասասուր,

Մեր վաղնջական բարեկամությունը հիմք է տալիս ինձ դիմելու քո օգնությանը երկու հարցում:

Առաջին խնդրանքս վերաբերում է երեք թոռներիս համալսարանական ուսումնառությանը: Ավագ թոռնիկս՝ Լիլիթ Բրուտյանը (ծնվ. 1975թ. հոկտեմբերին), սովորում է Երեսանի պետական համալսարանի առաջին կուրսում, մասնագիտանում է հոգեբանության գծով: Ննարավոր է արդյոք նրա տեղափոխումը Լոնդոնի համալսարան կամ անգլիական որեւէ այլ համալսարան: Եվ եթե հնարավոր է, ի՞նչ պայմաններով: Երկրորդ թոռնիկս՝ Դավիթ Բրուտյանը (ծնվ. 1976թ. դեկտեմբերին) ավարտում է միջնակարգ դպրոցը հունիսին: Նա առանձնապես հրապուրվում է հետեւյալ առարկաներով. կիրառական մաթեմատիկա, բարձրագույն մաթեմատիկա, տրամաբանություն, ծրագրավորում եւ այն ամենը, ինչ առնչվում է կիրեռնետիկայի

հետ, ինչպես նաև ֆիզիկա, աստղաֆիզիկա, ռադիոֆիզիկա: Երրորդ թոռնիկս՝ Բրուտյան Արան (ծնվ. 1977թ. մարտին), ավարտում է անգլիական թեքումով միջնակարգ դպրոցը հունիսին: Առանձնապես հրապուրվում է հետեւյալ առարկաներով. կիբեռնետիկա, տրամաբանություն, փիլիսոփայություն, ծրագրավորում, մաթեմատիկա, ինչպես նաև պատմություն եւ քաղաքագիտություն: Ի՞նչ պայմաններով Դավիթն ու Արան կարող են ընդունվել Լոնդոնի համալսարան կամ որեւէ այլ անգլիական համալսարան:

Երկրորդ խնդրանքս հանգում է հետեւյալին: Տավանաբար, քեզ հայտնի է, թե ինչ ծանր կացության մեջ ենք մենք ապրում այստեղ: Արդեն երկրորդ ձմեռն է, եւ դաժան ցրտի, էլեկտրականության եւ ջեռուցման բացակայության պատճառով անելանելի իրավիճակ է ստեղծվել դուստրերիս ընտանիքներում: Կցանկանայի իմանալ հնարավո՞ր է արդյոք ժամանակավոր աշխատանք գտնել նրանց համար Անգլիայում: Նրանց տվյալները համառոտակի:

1.Բրուտյան Լիլիթ (ծնվ. 1953թ.) բանասիրական գիտությունների դոկտոր է ընդհանուր լեզվաբանության գծով: Աշխատում է Տայաստանի ԳԱ Լեզվի ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող եւ Երեւանի պետական համալսարանում որպես դոցենտ (հավանաբար, շուտով պրոֆեսորի կոչում կստանա): Բազմաթիվ գիտական աշխատությունների, այդ թվում նաև երկու մենագրությունների հեղինակ է: Մասնակցել է միջազգային մի շարք գիտաժողովների, որտեղ հանդես է եկել բարձր գնահատականներ ստացած զեկուցումներով: Ունի Ամստերդամի փաստարկման միջազգային ինստիտուտի ավարտական վկայական: Կատարելապես տիրապետում է հայերենին, ռուսերենին եւ անգլերենին, մի քիչ գիտի նաև գերմաներեն: Տիմնակա՞նում զբաղվում է բնական լեզուների տրամաբանական վերլուծության հարցերով, լեզվի եւ մտածողության զուգահեռ կարգերի ուսումնասիրությամբ: Սակայն նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը շատ ավելի լայն է: Բացի նշվածից, զբաղվում է նաև տեքստի կառուցման եւ մեկնաբանման հարցերով, փաստարկման տեսության, թարգմանության տեսության, հաղորդակցման տեսության (theory of communication) հարցերով, երեխաների լեզվամտածողությամբ, մասնավորապես, երկլեզվանի եւ բազմալեզվանի երեխաների լեզվի հարցերով: Լիլիթը հաճույքով դասավանդում է լեզվաբանություն եւ

անգլերեն: Ի դեպ, ըստ ավարտական դիպլոմի, իրավունք ունի դասավանդելու նաև հայերեն: Կարող է դասավանդել և ռուսերեն:

Ամուսինը՝ Լեոնիդ Զիլֆուգարյանը, աշխատում է Տայաստանի գրողների միությունում որպես գրական խորհրդատու և ՏԳՄ նախագահի Վահագն Դավթյանի օգնական: Տիմնականում զբաղվում է թարգմանչությամբ: Քաջ ծանոթ է նաև խմբագրական և լրագրական աշխատանքներին: Տիանալի տիրապետում է հայերենին, ռուսերենին և անգլերենին: Ունի բազմաթիվ հրատարակված թարգմանություններ (ինչպես առանձին գրքերով, այնպես էլ զանազան ժողովածուներում), որոնք չափազանց բարձր գնահատական են ստացել մամուլում: Ինչպես և Լիլիթը, իրավունք ունի դասավանդելու հայերեն և անգլերեն: Տեսաբարությունների շրջանակի մեջ է մտնում նաև մշակույթը, և ինձ թվում է, որ նա հաջողությամբ կարող է զբաղվել մշակութային կապերով: Նրանք ունեն երկու երեխա՝ Արա (1977թ.) և Տաթևիկ (1979թ.):

Երկրորդ դուստրս՝ Բրուտյան Նարինեն (ծնվ. 1955թ.) բանասիրական գիտությունների թեկնածու է ընդհանուր լեզվաբանության գծով: Աշխատում է Երեւանի պետական համալսարանում որպես ավագ դասախոս, հաջողությամբ դասավանդում է ռուսերեն, տիրապետում է նաև մի շարք այլ լեզուների: Ունի հրատարակված մի շարք գործեր, որոնք վերաբերում են լեզվի տեսության, մեթոդիկայի և թարգմանության հարցերին: Զեկուցումով հանդես է եկել միջազգային գիտաժողովում: Ամուսինը՝ Աշոտ Բզնունին, երաժիշտ է: Ունի Երեւանի պետական կոնսերվատորիայի ավարտական դիպլոմ ջութակի գծով: Ըստ այդ դիպլոմի, նա իրավունք ունի երաժշտական դպրոցներում դասավանդել ջութակ: 1988թ. ստեղծել է փոփ-ջազ երգչախումբ, որը և ղեկավարում է մինչև այժմ: Երգչախումբը, հանդես գալով մի շարք երկրներում, մասնավորապես ԱՄՆ-ում և Կանադայում, ունեցել է շատ մեծ հաջողություններ: Աշոտ Բզնունին զբաղվում է կոմպոզիցիայով և արանժիրովկայով, ունի մի շարք գրված երաժշտական գործեր: Ունի մեծ փորձ վոկալ-գործիքային խմբերի ստեղծման գործում: Նարինեն ունի երեք երեխա՝ Լիլիթ (1975), Դավիթ (1976) և Վահան (1991):

Տայտնիր, սիրելի բարեկամս, ինչ հնարավորություններ կան Անգլիայում նրանց ժամանակավոր աշխատանքի համար: Կարող ես ինձ

հայտնել հեռախոսով (53-65-18), քելեքսով (24-33-44 Orion SU), ֆաքսով (8852 52-36-40) կամ նամակով:

Մրտանց ու ջերմ բարեկներս ընտանիքիդ բոլոր անդամներին:

Ամենաբարի մաղթանքներով՝

Բրուտյան Գ.



/ 20 մարտի 1968թ. /

Միրելի փրոֆ. Գ. Բրուտյան,

Ատենին ստացած եմ գրութիւններդ եւ Կոմիտէի միջոցով դրկած գիրքերը, որոնց համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւններ: Ներողամիտ գտնուիր որ նամակներուդ կը պատասխանեմ այսքան ուշ:

Կը զարմանամ որ տրամաբանութեան գիրքը դեռ չես ստացած: Քու մեկնումէդ անմիջապէս յետոյ՝ բոլոր գիրքերը դրկեցի քեզի: Արդեօք միւս գիրքերը ստացա՞ծ ես: Եթէ գիրքը (տրամաբանութիւն) կորսուած է, գրէ ինծի՝ նշելով անունը, որպէսզի նոր օրինակ մը գնեմ եւ դրկեմ:

Ձեռագրերու գայթակղութեան կապակցութեամբ լոյս տեսած գրութիւնները տակաւին կը մնան քովս: Չեմ ուզեր զանոնք քղթատարին յանձնել: Վստահելի անձի մը միջոցով կը դրկեմ առաջին պատեհութեամբ:

Տօնապետեանի մասին գրեցի Ս. Թօփալեանին, որուն պատասխանը իմ նամակիս պատճենի հետ կը գտնես ներփակ: Ս. Թօփալեան եղած է Տօնապետեանի մօտ բարեկամը. ան ատեն մը որպէս հայերէնի դասախօս պաշտօնավարած է Լոնտոնի «School of oriental and African Studies»-ի մէջ: Եթէ չեմ սխալիր 80-ի մօտ մարդ է: Զարմանալին այն է, որ Թօփալեան «կանուխ» կը նկատէ Տօնապետեանի մասին գրելը... կ'երեւի միտք ունի հանգուցեալի մասին գրել՝ «միւս» աշխարհի մէջ Տօնապետեանին հանդիպելէ յետոյ:

Չալըգեանէն «գրաւեցի» Տօնապետեանի արխիւին... բեկորները: Կը դրկեմ զանոնք առաջին պատեհութեամբ:

Իմ մասին մասնաւոր գրելիք չունիմ: Կը շարունակեմ «պանդոկապետութիւնս»: Գրականութեամբ զբաղելու ո՛չ ժամանակ, ո՛չ ալ՝ տրամադրութիւն ունիմ: Յոյս ունիմ այդ հոգեվիճակը երկար չի մնար մէջս:

Մարտ 5-ին Lang-ը «Նայաստանի մասին» դասախոսեց «Great Brt եւ SSR» ընկերութեան նախաձեռնութեամբ: Դասախօսութիւնը յաջող էր այս անգամ: Ան ապրիլ 1-ին Նայաստան պիտի մեկնի փրոֆ. Birnie-ի հետ, որ Մանչեսթրի համալսարանէն ուրարտագետ մըն է:

Ամիսէ մը ի վեր Մեծն Բրիտանիոյ զանազան քաղաքներուն մէջ կը դասախօսէ դանիացի գրող Եորկըն Անտերսէն Ռոզենտալ: Դասախօսի վկայութեամբ՝ «Նայաստան եւ հայ ժողովուրդը» դասախօսութիւնը կը լսուի մեծ հետաքրքրութեամբ: Արքայական աշխարհագրական ընկերութեան նախաձեռնութեամբ Էտինպուրկի մէջ տուած դասախօսութեան նեկայ եղած են 2000 ունկնդիրներ: Մարտ 28-ին Ն.Բ.Ը. Միութեան նախաձեռնութեամբ ան պիտի դասախօսէ լոնտոնահայոց: Անտերսէն Նայաստանէն ստացած է շատ դրական տպատրութիւններ: Դանիացի գրողը խնդրեց որ իր ջերմ ողջոյնները հաղորդէմ քեզի:

Լոնտոնահայոց մշակութային կեանքը ներկայիս թմրած վիճակ մը կը ներկայացնէ: Քանի մը ամիս առաջ Նայ Տան մշակութային յանձնախումբէն հրաժարեցայ: Պատճառը: Յանձնախումբին կատարած աշխատանքը իմ կարծիքով... անպտուղ հիգ մըն է: Առաջարկեցի որ կեդրոնական մշակութային յանձնախումբ մը կազմուի լոնտոնահայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն բաղկացած...:

Պատասխանը խոշոր ոչ մըն է: Դժբախտ իրողութիւնն այն է, որ համայնքը ներկայիս բաժնուած է խմբակցութիւններու, որոնք իրարու գործ կը խաչաձեւեն՝ փոխանակ միասնական հիգով արդիւնաւետ գործունէութիւն մը ձեռնարկելու:

Մերոնք ջերմ ողջոյններ կը յղեն:

Մրտագին բարեւներով՝ Կիզելէսն Աս.

Բրուսյան Յիցիլիս

24.09.1920, Թիֆլիս – 21.03.2000, Երեւան:
Երաժշտագետ: ՀԽՍՀ արվ.վաստ.գործիչ (1967):
Ավարտել է Երեւանի կոնսերվատորիան (1942), Մոսկվայի
կոնսերվատորիայի ասպիրատուրան (1951): 1958-81-ին
ՀԴՄԻ երաժշտության ամբիոնի վարիչ (պրոֆ. 1978-ից):
Հեղինակ է «Շարա Տալյան», «Սփյուռքի հայ երաժիշտները»
(1968), «Կոմիտաս» (1969), եւ այլ գրքերի:



/ 10 օգոստոսի 1965թ. /

Միտելի ընկեր եւ պարոն Գյուլելյան,

Սույն ամսի 24-ին լինելու եմ Լոնդոնում: Ժամանակս շատ կարճ է, դրա համար էլ խնդրում եմ, որ նախօրոք որոշ նախապատրաստություն անեք:

Նախ՝ թանկագին ընկեր, ինքներդ նույն օրը գաք ինձ գտնեք, որ հյուրանոցում կլինեմ, ինքս չգիտեմ, բայց դուք կկարողանաք իմանալ, թե Մոսկվայի կոնսերվատորների միությունից եկող խումբը որտեղ է իջեւանելու, մեր դասպանությունում երեւի կասեն Ձեզ:

Ուրեմն նախ կսպասեմ: Իմ ցանկությունը, Ձեզ պարզ է, դրան ավելացրած նաեւ սփյուռքահայ կոմիտեի ու «Տայրենիքի ձայնի» հանձնարարությունը, որ հնարավորություն ունեմ լսել «Տայ տան» երգչախումբը, անպայման եւ ունենալ նյութեր ողջ խմբի եւ ղեկավարի մասին, ինչպես եւ լուսանկարներ:

Երկրորդ. Գիտեմ, որ Անգլիայում այժմ բավական շատ կան հայ երաժիշտներ, բացի Բարիքյանից, որին գիտեմ անձամբ, մյուսների մասին ցարդ չեմ կարողացել բավարար չափով նյութ ունենալ: Ուրեմն, պարզապես աղաչում եմ, ես այժմ կրկնեմ նրանց անունները (իսկ երեւի կան եւ ուրիշներ, որոնց ես էլ չգիտեմ, դուք ավելացրեք), որ հնարավորին չափ ունենամ նյութեր իրենց մասին, իսկ առավել չափով, որ մեկ ժամով կարողանամ տեսնել նրանց:

Պսակ սրբազան Թումայանը

Տրաչ Գասպարյան

Արտա Մնտիկյան

Ալիս Պոհնալյան

Օլիվ Ջորյան
Պետոյան
Արա Ոսկանյան
Մարի Գազանճյան
Գեղնիս Կեպենլյան
Լուիզ Թումասյան
Բեդելյանի որդին {Նարություն Բեդելյան, ջութակահար}
Ռիք Պիտոյան (կարծեմ կոմպոզիտոր)

Երբորդ. Եթե ցանկություն ունեք, անշուշտ, ես պատրաստ եմ կարողալ մի զեկուցում ձեր նախընտրած թեմայով՝ ազգային երաժշտության մասին.

1. «Կոմիտաս»,
2. «Խորհրդային Նայաստանի երաժշտությունը»,
3. «Նայ երաժշտության անցած հանապարհը»:
4. «Սփյուռքահայ երաժշտությունը»:

Կարծեմ, թերեւս ավելի լավ լինի 3-րդը, որի մեջ կարելի է ամփոփել բոլոր չորս թեմաները, իհարկե ծանրության կենտրոն ունենալով Եսկան հանգամանքները:

Ուրեմն, այս հարցն էլ նախապատրաստեցեք, ավելի որոշակի կապամանավորվենք հանդիպելիս:

Ըստ երեւութին Լոնդոնում կլինեմ առաջին 2-3 օրը եւ վերջին 2-3 օրը, միջին օրերը այլ քաղաքներ՝ Էդինբուրգ, Գլազգո:

Նուսամ, Ձեր հասցեին ուղարկած «Ն. Ննչյունները»՝ մեկը ձեզ, մյուսը Մանուկ Բարիքյանի համար, ստացաք:

Նամակիս պատասխան չեմ ակնկալում, որովհետեւ դժվար թե հասնի, ես 21-ին թոչում եմ Մոսկվա, քայց եթե հասնի, շատ ուրախ կլինեմ:

Անհամբեր պիտի սպասեմ Լոնդոնի առաջին հանդիպմանը:

*Ձերն քարեններով՝
Բրուտյան Յիգիլիս*

❖ Թանկագին Ասասուր,

Որովհետեւ Լոնդոնի եւ Երեւանի միջեւ մեկ շաբաթ մնացի Մոսկվայում, քեզ այնտեղից մի քացիկ ուղարկեցի, արդյոք ստացար: Պատասխան չէի ակնկալում, որովհետեւ գիտեի, որ կրկնակի հայր դառնալուդ նախապատրաստությունը քեզ կլանած պիտի լիներ ամբողջությամբ:

Իսկ Երեւանից, ահա խայտառակ չափով ուշ եմ գրում քեզ: Պատճառները շատ հիմնավոր էին, սակայն «հարություն ու թողություն» պիտի խնդրեմ քեզնից, եւ կարծում եմ, թե պիտի ստանամ, որովհետեւ, իրապես դժվար է եղել գտնել գեթ մի օր, որ մտովի կապված չլինեմ հետդ:

Այսպես թե այնպես, ամենից առաջ պիտի շնորհավորեմ քեզ, թանկագին տիկնոջդ եւ ողջ ընտանիքիդ հայ օջախի շենագման համար մեկ հեզանազ հարսնացու մը եւս աշխարհ բերելու առթիվ: Գիտեմ, թե փեսացուները հոգիդ պիտի հանեն, սակայն հոգ չէ: Վստահ եմ, թե հարկ եղած դեպքում դու կարող ես մի քանի տասնյակի հախից գալ: Ուրեմն թող այդ անուշիկ մանկիկը նոր երջանկություն, նոր հաջողություններ ու ուրախություններ բերի բոլորիդ: Ամեն:

Այնքան եմ զբաղված, որ նկարագրել անկարելի է: Միայն ասեմ, թե տպագրության հանձնեցի «Սփյուռքի հայ երաժիշտները» գրքի 1-ին հատորը: Ճիշտ է դեռ մինչեւ լույս աշխարհ գալը այս գործը շատ ջուր կվերցնի, բայց հոգ չէ, կարելուք մասը կատարված է: Կարծում եմ մաղթանքներդ ու օրհնությունդ չպիտի զլանաս այս առթիվ:

Այսօր շատ տխուր օր է. հողին հանձնեցինք մեր թանկագին հայ երգչին Շարա Տալյանին, որ այնքան անակնկալի բերեց մեզ բոլորիս իր վաղաժամ մահով, այո թեեւ 72-ամյա, բայց իր պես կենսունակ ու առույգ մարդու մը համար, այն շատ վաղաժամ էր:

Միրելիդ իմ, դու գիտես, որ քեզ հետ կարելի է դարերով խոսել, ոչ թե օրերով, բայց այսօր եկ այսքանով բավարարվենք:

Լրացնեմ, թե անշուշտ շեքսպիրյան աստվածաշունչդ հանձնեցի Ջարյանին, որն ի դեպ, մինչեւ իմ Մոսկվայից Երեւան գալը, մյուսներից լսել էր, որ ինձ մոտ է, ու ես դեռ տուն չհասած, զանգահարեց ապահովված լինելու գրքի Երեւան հասնելու հարցում:

Կրկին անգամ շնորհավորում եմ եւ հղում լավագույն ցանկություններս:

Նուսանք, որ շուտով կերեւաս հայրենի հողի վրա: Խնդրեմ, չպատ-
ժես ինձ, այսչափ ուշացումիս համար, քո փոխադարձ ուշացումով:

Շատ ուրախ պիտի լինեմ ունենալ գեթ երկտողդ:

Ձերն ու ջերն բարեւներս քեզ ողջ ընտանիքիդ հետ միասին:

Բրուսյան Յիգիլիս



/ 24 մայիսի 1972թ., Երևան /

Սիրելի Ասասուր,

Թեեւ սակավ են նամակներս քեզ ուղղված, սակայն հիշողությունս
միշտ ծանրաբեռ է քեզնով: Երբեմն գրություններդ կարդում եմ «Նայ-
րենիքի ձայն»ում եւ վերատեսնում առույգ հումորով կենսախիդ
երեւույթդ:

Վաղուց ի վեր, սիրելիս, ցանկանում էի քեզնից գիտենալ քո նախ-
կին հանգրվանի՝ հնդկահայ գաղթօջախի մասնավորապես վերջին
50 տարիների երաժշտական կյանքի մասին: Խոսել եմք, անշուշտ այդ
մասին, սակայն դեռ չունեցա մեկ ամփոփ գրություն: Թող որ այդտեղ
չլինեն աստղեր ու տաղանդներ, բայց կա գեթ մի ինչ-որ երաժշտա-
կան մշակութային կյանք:

Շատ պիտի խնդրեմ, որ չնայած անսահման զբաղվածությանդ, լավ
գիտեմ, ազգային ծառայություն մը ընեիր, ամփոփ կերպով մի գրու-
թյուն ուղարկեիր ինձ այդ մասին: Քանզի 2-րդ հատորը՝ «Սփյուռքի
հայ երաժիշտների» արդեն ամբողջացնում եմ եւ չեմ կարող գեթ ամ-
փոփ կերպով չներառել այդ հինավուրց, պատվական գաղթօջախը:
Գրությանդ մեջ թող լինեն՝

1. Երգչախմբեր՝ ղեկավարողներ,
2. Անհատ կատարողներ,
3. Երաժշտության տեսության հարցերով զբաղվողներ՝ նաեւ եկեղե-
ցական երաժշտության,
4. Եթե կան հրապարակված երաժշտության վերաբերյալ աշխա-
տություններ, ինչպես եւ հանդեսներում հրատարակված նշանակա-
լից հոդվածներ:
5. Լուսանկարներ:

Միրելիս, դու կարող ես այս գրության մեկ օրինակն ուղարկել «Տարեհիքի ձայն» իբրեւ հեղինակի, սակայն մյուսն՝ անպայման ուղարկիր ինձ:

Եթե պատահաբար նանաչում ես Րաֆֆի Արմենյանին այդտեղ երաժշտաբան է, ապա նրան խնդրիր, որ իր մասին անպայման ինձ գրի: Բացատրիր իրեն պատճառը եւ տուր հասցես, հուսամ չես մոռացել՝ Երեւան 25, Չարենցի 42, բնակարան 3:

Մենք կանք, երեւի դեռ կլինենք, երեւի նաեւ դեռ կհանդիպենք: Տեր Աստվածը թող շատ չհամարի մեր աշխարհը, ազնվորեն միայն լինել ցանկանալու հնարավորությունը, ամեն:

Մեր ընտանիքի ջերմագին բարեւները քեզ եւ ընտանիքիդ:

Անհամբեր սպասում եմ

Բրուտյան Յիգիլիս



/ 24 մայիսի 1972թ., Երեւան /

Միրելի Ասասուր եւ ընսանիք,

Ճնորհավորում ենք սրտանց, մաղթում ենք քաջառողջություն եւ նոր ուրախություններ:

Տայաստանի կոմպոզիտորների միության վարչություն

Իսկ ես համբուրում եմ բոլորիդ՝ ամենափոքրից ամենամեծը: Նավատով եմ, որ լավ եք: Նախորդ նամակս անշուշտ ստացաք: Մեղք որ մեծ հայրիկին Երեւանի մեջ հանդիպել վրիպեցի, թեւ գիտեի որ պիտի գա, բայց անշրջահայաց գտնվեցի: Ընտանեկան ծանր պարագաների պատճառով:

Միշտ սիրով

Բրուտյան Յիգիլիս

Բուջիկանյան Հրաչ Պողոսի

Յրաչ Բուջիկանյան 15.12.1914թ. Խարբերդ, Արեւմտյան Յայաստան -
13.04.1985թ. Երեւան:

Ավարտել է Բեյրութի ավետարանական քոլեջը: Աշխատել է Լիբանանի եւ Կիպրոսի հայկական թերթերի խմբագրություններում եւ դպրոցներում: Դասավանդել է Կիպրոսի Մելքոնյան վարժարանում: Եղել է Լիբանանի կոմունիստական կուսակցության անդամ: 1946թ. ներգաղթել է Յայաստան: Թագմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ 1957թ.:



/ 31 մարտի 1964թ. /

Միտելի Ասասուր,

Երեւանից դուրս եմ եկել (Տայաստանից) մի ամսվա արձակուրդով եւ հանգստանում եմ: Ադրիանն իր նամակներից մեկում հիշեցնում է, թէ պետք է գրեի Ձեզ, ինչը նաեւ իմ որոշումն էր: Բոմբեյի հիանալի բացիկը, Նոր տարվա շնորհավորական ջերմ նամակը եւ ներփակ նկարները ստացել ենք ուրախությամբ եւ Wished-ին (դեմ չես չէ՞ Գրիգորին եւ Սուրիկին հանձնել իրենց նկարները): Առանց այս բոլորի էլ հաճախ հիշում ենք քեզ, ամեն անգամ քո բանաձեւով եմ դիմում Վիլենին, Գուգոյին, Աշոտիկին: Միրոս նեղվեց տուր մի սիգարեթ, գոնե օրը մի երկու անգամ: Տամը հանելու չափ երկար դաժան այս ցուրտ ձմռանը քո տաքուկ հիշատակները հաճախ են այցելել մեզ, վերջին հիշատակը սավառնակ բարձրանալիս աղջնակիդ տարած պուպրիկին անամոթ հետույքն էր: Մի լաթե կտորով ծածկեցի՞ք Կալկաթայում:

Ձեր գնալուց հետո ուսուցիչների խմբանկարները Մեւանի զբոսանավի վրա, Բյուրականի աստղադիտարանում Վիկտոր Տամբարձումյանի հետ, Մատենադարանի սրբազան գրչագրերի վրա հենված, Միլվա Կապուտիկյանի տանը երկար ատեն երեւանցիների ամենօրյա ուշադրության առարկան էին: Տնդկահայ դեմքեր բոլոր նկարներում ուշագրավ էր, մի տեղ էլ երեւում էիր Ձեր աշակերտների հետ նամակ-ցող երեւանցի աշակերտների հետ:

Ձեր գնալուց հետո այդ հիշատակը համեցավ մի երկար ամիս ԱՕԿՍ-ի ցուցափեղկում մինչեւ դեղնեցան տերեւները եւ իրերի քնական կարգով մեկ-մեկ թափվեցան:

Վերջին այցելության կապակցությամբ էլ հոլովվեց քո անունը բոլոր հոլովներով, հետո կարդացինք թղթակցությունները եւ ուրախացանք տիկնոջդ գեղարվեստական հաջողություններով:

Կուզենայինք լսել նաեւ աղջնակիդ նվաճումներից եւ ունենալ



նկարը, ինչպես նաև Ձեր ընտանեկան խմբանկարը: Մանավանդ աղջիկս սրտամոտ է մանուկների:

Տույսով եմ վերադարձիս կնարեմ ու կկարողանամ քեզ ուղարկել Դենի Դիդրոյի «Ռամոյի եղբորորդին» թարգմանությունս, եթե արդեն քեզ չեն ուղարկած:

Կալկաթայից հեռանալու մասին ես խոսում, ում ես հանձնելու դպրոցը: Անշուշտ երեւի երեսնիվար չի մնա: Ձեր աշակերտները գրո՞ւմ են «Պիոներ կանչ»-ին, «Ծիծեռնակ»-ին:

Ներողություն, որ մի խնդրանք պայթեցնեմ: Խնդրում եմ ինձ ուղարկես Yoga-ի մասին թղթակազմ (paperback) հրատարակություններ: Մի հատ էլ հատուկ կանանց համար: Կարճ ժամանակով ձեռքս անցան երկու հատը, չհասցրի վերցնել հեղինակի անունը: Yoga-ի ինստիտուտն էր հրատարակել:

Կամսարը նշում է թե շատ են կարճացել նամակները: Երեւի աղջնակդ շատ է ժամանակ խլում:

Ազնավորը եկավ կախարդեց գնաց: Ես միայն հեռուստատեսությամբ լսեցի: Մարտի 8-ի առթիվ ԱՕԿՄ-ի կանանց տրվեցին սահմանափակ թվով տոմսեր:

Այսօր այսքանը:

Շուտով նամակներ ստանալու հույսով եւ լավագույն բարեմաղթություններով եւ բարեւներով մեր Երեւանից եւ ԱՕԿՄ-ի հրաշալի տղաներից:

Նրսէ Բուցիկանյան

Գասպարյան Գոհար

(Օրիորդական ազգանունը՝ Խաչատրյան):
14.12.1924, Կահիրե - 16.05.2007, Երևան:
Հայ օպերային արվեստի մեծագույն վարպետ,
քնարակոլորատուրային սոպրանո, ԽՍՀՄ ժողովրդական
արտիստուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս:



/ 27 դեկտեմբերի 1968թ. /

Միտելի Ասասուր եւ ընճանիւ,

Մաղթում եմ Ձեզ առողջություն, երկար կյանք, եւ եռանդ այս Նոր տարվա եւ Ս. Ծնունդի առթիվ:

Գասպարյան Գոհար

Գոհար Գասպարյանի հետ Օմար Խայամ ճաշարանում, Լոնդոն:





Միրելի Ասասուր եւ ընսանիֆ

London-ի իմ այցելությունս ինձ համար շատ հիշատակելի է: Մինչեւ այսօր ինքզինքս գտած չեմ, քո կատակները միշտ ականջիս մեջն են, խօսած հառերդ, «Դարայան ակումբում» մեծ ջերմություն մտցրեցին այդ օրվա հաշկերությին մեջ, շատ կը խնդրեմ, իմ մասնավոր բարեկներս հաղորդես պրն Դարայանին եւ Ձեր ազնիվ աներհօր, ովքեր բնավ ոչինչ չխնայեցին մեր մի քանի օրը ջերմ անցկացնելու համար: Վիվիենի եփած համով հաշերը, ու քո սրախօսությունները բնավ չպիտի մոռնամ:

Ուստի շատ կը խնդրեմ մասնավոր ջերմագին բարեկներս մամային, պապային, Վիվիենին, անուշիկ երեխաներուն, մեյ մեկ պաշիկներ: Քեզ էլ ինչ որ բարին ուզենաս:

Միրով Գասպարյան

Գրիգորյան Արմինե

Սեպտեմբերի 30, 1967, Երեւան, Չայկական ԽՍՀ:
Չայ դաշնակահար: Երեւանի Կոմիտասի անվան պետական
կոնսերվատորիայի պրոֆեսոր: Արամ Խաչատրյանի տուն-
թանգարանի տնօրեն (2004թ.):



🎵 Սիրելի Ասասուր,

Ձերն բարեւներ Ձեզ եւ Ձեր ընտանիքին Երեւանից: Ուրախ եմ, որ առիթ ունեն նամակ գրելու եւ կիսվելու Ձեզ հետ: 2007թ. շատ ակտիվ եւ հետաքրքիր համերգներ եւ պրոեկտներ եղան դաշնամուրային տրիոյով Տայաստանում եւ նաեւ Ռուսաստանում, այս տարի արդեն մեկ համերգ ունեցել ենք Երեւանում եւ այժմ փորձում ենք կազմակերպել հյուրախաղեր Եվրոպայում եւ Ամերիկայում: Լավ կազմ է հավաքվել, երկու Կարեններն էլ շատ շնորհալի են, տիրապետում են անգլերեն լեզվին եւ շատ բարեխիղճ են: Տուտով եմ, որ կծանոթանաք բուկլետին եւ DVD-ին, որն ամբողջովին արված է 2007 թվականի համերգներից: Եթե հնարավոր լինի համերգ կազմակերպել, ելույթ Լոնդոնում, ճանապարհի ծախսերի համար կդիմենք մեր այստեղի sponsor-ին (վստահ եմ, նա չի մերժի), կմնա հոգալ միայն համերգի կազմակերպման հոգսերը եւ կացարան Անգլիայի մեջ: Ունենք ծրագրում բազմաթիվ գործեր եւ եվրոպացի, եւ ռուս, եւ հայ կոմպոզիտորներից:

Ինչ վերաբերում է իմ գրքին՝ տարիների ընթացքում գրված բանաստեղծություններից ընտրված «24 պրելյուդ» խորագրով ժողովածուն է, որոնք թարգմանվել են հայերեն՝ բանաստեղծ Տովիկ Տովեյանի կողմից (նախկին մշակույթի նախարար), original-ը ռուսերեն է գրված:

CD-ին նույնպես տարբեր տարիների համերգներից է ընտրված: Կարդալուց եւ լսելուց հետո հետաքրքիր կլինի իմանալ Ձեր կարծիքը, ափսոս, որ միայն թարգմանությունը կարող եք կարդալ:

Ձերն, ջերն բարեւներ ընտանիքիս կողմից եւ թանգարանից:

Միրով՝ Արմինե Գրիգորյան



Միրելի Ասասուր,

Ուրախ եմ, որ Դուք Լոնդոնում եք, կարիք ունեմ կիսվելու Ձեզ հետ մի շատ կարեւոր եւ նուրբ հարցով: Անգլիայի մեծահարուստներից մեկը կյանքից հեռանալուց հետո կտակել է բավականին մեծ գումար ինձ, որպէս Խաչատրյանի թանգարանի տնօրէն: Ինձ հետ կապվել է իր ադվոկատը՝ Ալան Սմիթը (Allan Smith Law Firm London, 7-10, 27 Gloucester Street, London, tel. 7783470624):

Դուք իմ ամենահարազատ եւ վստահելի մարդն եք Լոնդոնում եւ նաեւ Ա. Խաչատրյանի բարեկամը, այդ պատճառով կարծում եմ պետք է տեղեկանաք այդ ամենի մասին: Իհարկէ միայն Դուք, քանի որ այսպիսի լուրջ եւ կարեւոր հարցում ավելորդ մասնակիցները միայն լրացուցիչ բարդություններ կառաջացնեն:

Տամոզված եմ, որ կարող եմ դիմել Ձեզ առաջացած եւ ակնկալվող հարցերով, որպէս իմ վստահելի անձ:

Տնարավորություն չունենալով տեղում պարզաբանել որոշ հարցեր՝ դիմում եմ Ձեզ խնդրանքով օգնել մեզ:

Անհամբեր սպասում ենք Ձեր պատասխանին, որպէսզի տեղյակ պահեմ ադվոկատին:

Միրով եւ հարգանքով՝ Արմինէ



Միրելի Արմինէ,

Շնորհակալութիւն 12 Սեպտեմբեր, նամակի համար:

Առանց Ա. Խաչատրյանի անուան Թանգարանի լիազօրութեան Allan Smith Law Firm-ը ինձ տեղեկութիւն չի տայ: Խնդրում եմ դուք, որպէս Ա. Խաչատրյանի թանգարանի տնօրէն գրեք իրենց եւ հաստատեք, որ ես իրաւունք ունիմ խնդրոյ առարկա հարցի մասին տեղեկութիւններ ստանալ իրենցից ձեզ փոխանցուելու համար: Տվեք իրենց իմ վերոգրեալ հասցեն ու հեռախօսի համարները եւ խնդրեք որ կապվին ինձ հետ:

*Միրով եւ ջերմ բարեւանքով՝
Ասասուր*



Միրելի Արմինե,

Նամակաբերս, պրն Պերն Սեդրակեան, Տայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Նախագահն է:

Ներփակ CD-ն խնդրում եմ, որ (անշուշտ եթէ հնարաւոր է) Միրզոյեանը, Տարութիւնեանն ու դուք լսէք եւ ձեր կարծիքը յայտնեք Ռուբէն Եսայեանի կատարողական արուեստի մասին: Ռուբէնը դիմել է Տ.Բ.Ը. Միութեան Լոնտոնի մասնաճիւղին խնդրելով որ իրեն շուրջ եոթ հազար ֆունտ տրամդրուի Առնո Բաբաջանեանի նուիրուած CD-ի արտադրութեան համար: Տ.Բ.Ը.Մ.-ի խնամակալութիւնը, որին անդամակցում եմ նաեւ եւ որոշեց դիմել ձեզ եւ ստանալ ձեր գնահատականը երիտասարդ դաշնակահարի մասին: Կարող եք ձեր կարծիքը տալ ուղղակի Նախագահ Սեդրակեանին կամ Email-ով փոխանցել ինձ:

Այսու, փոխանցում եմ Տ.Բ.Ը.Մ.-ի Լոնտոնի մասնաճիւղի Խնամակալութեան կանխապայտ շնորհակալութիւնները:

Միրով Ասատուր

Տ.Գ. Միրելի Արմինե,

Այս նամակը ներփակել եմ ծրարի մեջ, որը կբերի պրն Պերն Սեդրակեանը: Նրան տվել եմ քո հեռախոսի համարները:

Կիզելեան Ա.



Արմինե Գրիգորյանի հետ:



Սիրելի Արմինե,

Խոր վշտով կարդացի մեր բոլորին սիրելի Գոհար Յարութինեանի մահուան լուրը: Նանգուցեալը բացի սքանչելի երաժիշտ լինելուց նաեւ անմիջական ջերմութեամբ առլի հիանալի անձնաւորութիւն էր, որին չհամակրել անհնարին էր:

Մեր առաջին հանդիպման պահից, մենք դարձանք մտերիմներ, մտերմութիւն որի շաղկապիչ ուժը Արամ Խաչատուրեանն էր, որի հանդէպ Գոհարն ուներ անսահման սէր եւ հիացում:

Ահա այդ սերնու հիացումն էին, որոնք մղեցին Գոհար Յարութինեանին ամբողջ հոգով նուիրուելու Արամ Խաչատուրեանի անուան Տուն-թանգարանի ծաղկմանն ու քարգաւառմանը:

Դժուար էր պատկերացնել Արամ Խաչատուրեան թանգարանն առանց Գոհարի եւ Գոհարն՝ առանց թանգարանի: Մեր առաջին հանդիպման ժամանակ, երբ ինձ ծանօթացնում էր թանգարանում ցուցադրուած իրերին, Գոհարը կարծես չէր խօսում նրանց մասին, այլ արտասանում էր քնարերգութեամբ հարուստ ինչ որ քանաստեղծութիւն...

Թանգարանը Գոհարի համար լոկ քարակերտ մի շէնք չէր, այլ եւ յուշերով, ապրումներով եւ զգացումներով հարուստ մի աշխարհ: Գոհարն ամբողջ էութեամբ կապուած էր թանգարանին, որտեղ ապրում էր «ձայների կախարդական հարտարապետ»-ի Արամ Խաչատուրեանի ոգին, որից նա ստանում էր հոգեկան սնունդ:

Գոհար Յարութինեանի մահը մեծ կորուստ է որքան իր ընտանիքի եւ հարազատների նոյնքան էլ հայ ժողովուրդի՝ յատկապէս հայ երաժշտութեան համար: Անխոնջ աշխատանքով Գոհար Յարութինեանի ձեռք բերած բարձր գնահատանքի արժանի իրագործումները կը մոռացուեն այն ժամանակ միայն, երբ մոռացուի Արամ Խաչատուրեանի անունը...:

Այս տխուր առիթով Վիվիէնն ու ես մեր խորին վշտակցութիւնն ենք յայտնում Արամ Խաչատուրեանի անուան Տուն-թանգարանի տնօրինութեան, թանգարանի աշխատակազմին, հանգուցեալի ընտանիքին եւ հարազատներին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

Կիլիկեան Ասատուր



Մի քան սիրելի պարոն Ասատուր Գյուլելյան,

Նոյեմբերի 25-27 տեղի ունեցավ Արամ Խաչատրյանի տուն ֆանգարանի կազմակերպած «Արամ Խաչատրյանը եւ արդի աշխարհը» միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր մեծ մատերոյի ծննդյան 115-ամյա հոբելյանին եւ որին մասնակցում էին տարբեր երկրներից ժամանած նրա արվեստի երախտավորներ:

Ե՛վ տուն-ֆանգարանի եւ երաժշտասերների համար այս մեծ իրադարձությունը, որը հայ ժողովրդի մեծ զավակի հիշատակին հարգանքի տուրքի եւս մեկ դրսեւորում էր, հնարավոր եղավ իրականացնել ըստ պատշանի Ձե՛ր կոմպոզիտորին եւ Ձե՛ր սիրելի բարեկամին, նրա տուն-ֆանգարանին անվերապահ նվիրվածության, ազնիվ վերաբերմունքի եւ ցուցաբերած սիրահոժար աջակցության շնորհիվ, որի համար հայտնում ենք մեր անհուն երախտագիտությունը:

*Արամ Խաչատրյանի տուն ֆանգարանի տնօրէն՝
Արմինէ Գրիգորյան*

Արմինէ Գրիգորյանը թոռներիս հետ:



Գրիգորյան Բերսաբե

Վարել է ԱՕԿՍ-ի նախագահի պաշտոնը 1958-1967թթ.



/ N 375, 6 մայիսի 1959թ. /

Արտասահմանյան երկրների հետ բարեկամության
եւ մշակութային կապի հայկական ընկերություն
ԱՕԿՍ

Տնօրեն, Կալկաթա
Պր-ն Ասատուր Գյուզելյանին

Հարգելի պարոն

Ստացանք Ձեր նամակը, որի մեջ հայտնում եք Ձեր հայրենասիրական
զգացումների մասին ու նշում ընկերության դերը սփյուռքահայ գա-
ղութների հետ մշակութային կապերի հաստատման ու ընդլայնման
գործում:

Կարող եք համոզված լինել, հարգելի պարոն, որ այսուհետեւ եւս
մենք կանենք հնարավորը, որպեսզի տարբեր երկրներում ապրող
հայ աշխատավորները հաղորդակից լինեն հայրենիքում աշխատող
ու ստեղծագործող հայրենակիցների տնտեսական ու մշակութային
կյանքի վերելքին:

Լավագույն ցանկություններով

Վարչության նախագահ՝ Գրիգորյան Բ.



/ N 233, 7 մարտի 1956թ. /

Կալկաթայի Նայկազյան
Գեղարվեստական Միության Վարչություն
Պարոն Ա. Գյուզելյանին

Սովետական Նայաստանի Գիտությունների Ակադեմիայի գրականության եւ արվեստի թանգարանը ուսումնասիրություն է պատրաստում բազմավաստակ գրող, մանկավարժ եւ հրապարակախոս Մեսրոպ Թաղիադյանի մասին, որի գրական մանկավարժական եւ հրապարակախոսական գործունեության մեծագույն մասը կապված է հնդկահայ գաղութի հետ:

Ինչպես հայտնի է, բացի տպագրված երկերից եւ հոդվածներից, Թաղիադյանը թողել է մեծ թվով տակավին չհրատարակված աշխատություններ, ինչպես՝ օրագրեր, հայոց լեզվի արմատական բառարան, գեղարվեստական երկեր, որոնք պահվում են հանգուցյալ Մեսրոպ Սեթյանի դիվանում:

Խնդրում ենք հայտնել, թե արդյոք կարող ենք ստանալ այդ ձեռագրերի, եթե ոչ բնագրերը, ապա գոնե կրկնօրինակները եւ կամ դրանց միկրոֆոտոները եւ ի՞նչ պայմաններով:

Նաշվի առնելով Ձեր Միության եւ մեր Ընկերության միջեւ գոյություն ունեցող բարեկամության եւ մշակութային սերտ կապերը, թույլ տվեք վստահություն հայտնել, որ Դուք ջանք չեք խնայի հեշտացնելու Գիտությունների ակադեմիայի Թաղիադյանի մասին պատրաստվող ուսումնասիրությունը լիակատար հաջողություն դարձնելու:

Նարգանքներով՝

Վարչության նախագահ՝
Գրիգորյան Բ.



Տայկազյան Գեղարվեստական Միության Վարչություն, Կալկաթա
Պարոն Ա. Գյուզելյանին

Ստացել եմ Ձեր 25 մայիսի 1960 թվակիր նամակը, որով մեզ իրազեկում եք Մերոպ Թաղիադյանի եւ Ս. Սեթյանի արխիվների կորստյան մասին:

Ձեր նամակը թե՛ մեր Ընկերության եւ թե՛ Գիտությունների Ակադեմիայի Գրականության ու արվեստի թանգարանին մեծ ցավ պատճառեց: Այն, ինչ պատահել է Մերոպ Թաղիադյանի եւ Ս. Սեթյանի արխիվների հետ, պետք է ուսանելի դաս հանդիսանա արտասահմանյան հայրենասեր կազմակերպություններին ու հասարակական գործիչներին, որպեսզի նրանք շտապեն անխուսափելի կորստից փրկելու շատ մեծարժեք արխիվներ, որոնք ներկայումս գտնվում են արտասահմանի զանազան երկրներում:

Մեր Ընկերությունը եւ Գիտության ու արվեստի թանգարանը մեծապես գնահատում են Ձեր ջանքերը, որ Դուք գործադրում եք եւ շարունակում եք փնտրել Թաղիադյանի եւ Սեթյանի արխիվներից գոնե այստեղ կամ այնտեղ պատահմամբ մնացած բեկորներ գտնելու եւ Երեւան փոխադրելու ուղղությամբ: Մենք մեծապես պիտի գնահատենք, եթե վերոհիշյալ երկու անձնավորությունների ձեռագրերից որեւէ մեկը ձեռք բերվի եւ մեզ ուղարկվի կամ բնօրինակը եւ կամ միկրոֆոտոն:

Գնահատելով հայրենասիրական Ձեր ջանքերը, մեր Ընկերությունը պատրաստ է ընդառաջելու Ձեր բոլոր այն պահանջներին, որոնցով կամրասպնդվի Ձեր գաղութի կապը Տայրենի ծաղկող մշակույթի հետ: Անկեղծորեն, Վարչության նախագահ Գրիգորյան Բ.



/ N 357, 20 սպրիլի 1961թ. /

Կալկաթա, Նոդկաստան
Տայկազյան Մշակութային Միութեան քարտուղար
Ասատուր Գյուզելյանին

Հարգելի պր. Գյուզելյան,

21.3.61 թվակիր նամակում արված Ձեր դատողությունները շատ հուսատու են: Կարդալով Ձեր այդ նամակը, մենք զգացինք, որ հեռավոր Նոդկաստանում եւս, ուր հավաքված են մի բուռ հայեր, կան մարդիկ, որոնք ջանք չեն խնայում հայրենակիցների սրտերում վառ պահելու հայրենասիրական կրակը:

Անշուշտ, կարեւոր միջոցառումներ են ինչպես հերթական լրատու-հավաքութենքը, այնպես էլ Ձեր ծրագրած ցուցահանդեսը: Խրախուսում ենք Ձեր այդ միջոցառումները եւ խոստանում այսուհետ ավելի շատ նյութեր ուղարկել Ձեր համայնքին: Գրեցեք ինչ ընդունելություն գտավ ցուցահանդեսը եւ թե ինչպիսի նյութեր կուզեիք, որ ուղարկենք առաջիկայում:

Բարեկամական ողջույններով՝

Նախագահ՝ Գրիգորյան Բ.



/ N 116, 15 փետրվարի, 1962թ. /

Պարոն Ասատուր Գյուզելյանին, Կալկաթա

Հարգելի պարոն Գյուզելյան,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր ուղարկած հետաքրքրաշարժ տեղեկությունները Տայաստանի մարմնամարզիկների Նոդկաստան կատարած այցելության մասին: Ձեր հայրենասիրական խանդավառությունը հասկանալի է մեզ եւ գնահատելի: Տայ մարմնամարզիկները, որ հիացրել են ամբողջ աշխարհին, դեսպաններն են հայրենիքի ուժի ու գեղեցկության:

Նետաքրքրությամբ կարդացինք տեր եւ տիկին Ալեքսեանների, ինչպես եւ երկու կազմակերպությունների՝ Տայոց մարդասիրական ճեմարանի եւ Տայոց մարզական ակումբի մասին: Մեր ընկերության համար

հանելի կլինի նրանց հետ անմիջական կապ հաստատել: Եթե նեղություն չէ, խնդրում ենք ուղարկել նրանց հասցեները:

Բարեհաճեցեք ընդունել, հարգելի բարեկամ, մեր անկեղծ զգացումների հավաստիքը:

*Ընկերության նախագահ
Գրիգորյան Բ.*



/ N 1197, 28 սեպտեմբերի 1963թ. /

Նայկազյան Գեղարվեստական Միության Վարչությանը,
Կալկաթա

Նարգելի վարչություն,

Ընկ. Ասատուր Գյուզելյանի միջոցով ուղարկում ենք հետևյալ ձայնագրությունները՝

Ա) խոսք բանաստեղծ Պարույր Սեւակի, վաստակավոր դերասան Գարուշ Խաժակյանի կատարմամբ,

Բ) համերգ Սայաթ-Նովայի ստեղծագործություններից՝ լավագույն երաժիշտների կատարմամբ,

Գ) Սայաթ-Նովայի տաղերը՝ ժողովրդական դերասան Բաբկեն Ներսիսյանի եւ վաստակավոր դերասանուհի Նրաչունի Ջինանյանի կատարմամբ:

Խնդրում ենք վերոհիշյալ ձայնագրությունները օգտագործել Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակի հորելյանական հանդիսությունների օրերին:

*Ընկերության նախագահ
Գրիգորյան Բ.*



/ N 304, 5 մարտի 1963թ. /

Պրն Ա. Գյուզելյանին, Կալկաթա

Հարգելի բարեկամ,

Փետրվարի 10-ի Ձեր նամակից ուրախությամբ տեղեկացանք, որ մեր ուղարկած նյութերը, մասնավորապես ընկ. Լ. Խաչիկյանի գրություններն ու նվերը, ստացել եք:

Ձեր օգտաշատ աշխատանքը բոլորիս ակնածանքի առարկան է: Օգտվելով առիթից, կխնդրեի մեր կանխահայտ շնորհակալությունները հայտնել պրն Տայկ Նաջարյանին իր ազնիվ վերաբերմունքի համար, որի մասին հիշատակում եք նամակում:

Մեզ ուրախացրեց նաև Ձեր հաղորդումը այն մասին, որ կալկաթահայությունը հնարավորություն է ունեցել դիտելու մեր Ընկերության ուղարկած «Պոեմ Տայաստանի մասին» կինոնկարը:

Ձերն բարեկներով՝

Ընկերության նախագահ՝

Գրիգորյան Բ.



/ N 236, 6 մարտի 1964թ. /

Պրն Ասատուր Գյուզելյանին, Կալկաթա

Հարգելի բարեկամ,

Ձեր 23 դեկտեմբեր 1963 թվակիր նամակից գոհունակությամբ իմացա, որ մեր Ընկերության նվիրած գրքերի հավաքածուն, հանդիսավոր իրադրության մեջ հանձնվել է Մարդասիրական ճեմարանին:

Մեր Ընկերությունը այսուհետև էլ պարբերաբար պիտի ուղարկի գեղարվեստական ու հայագիտական բնույթի գրականություն, մամուլ, դրանով իսկ սատարելով հայ ուսանողների կրթության գործին:

Ձերն բարեկներով՝

Ընկերության նախագահ՝

Գրիգորյան Բ.



Նամեստափայլ տիկին Բ. Գրիգորյան,
Նախագահուհի Արտասահմանեան երկրների հետ
Բարեկամության եւ Մշակութային Կապի
Նայկական Ընկերության,
Երեւան

Յարգելի Տիկին,

Ստացած ենք ձեր 7 Մարտ, 12 Մայիս եւ Գիտութիւններու Ակադեմիայի Գրականութեան եւ Արուեստի Թանգարանի վարիչ, պրն Գ. Ստեփանեանի 11 Մայիս թուագրեալ նամակները:

Յառով կ'արձանագրենք, որ բազմավաստակ գրող Մեսրոպ Թադեադեանի բանասիրական եւ գրական աշխատութիւնները գտնելու կապակցութեամբ մեր փնտռողներն ու տարած աշխատանքը դրական ոչ մէկ արդիւնք տուին: Նանգուցեալ պատմաբան Մեսրոպ Սեթեանի բազմարժէք գրադարանն ու անսզիտ արխիւները ապշեցուցիչ տգիտութեան մը վանտալական մէկ արարքի զոհ են գացած:

Ըստ մեր քաղած հաւաստի տեղեկութիւններուն, Ս. Սեթեանի քոյրը, մեծ բանասերին վախճանումէն ետք, անոր գրքերն ու թղթածրարները աննշան գումարի մը փոխարէն հնդիկ շրջուն հնավաճառի մը ծախեր է, որպէս հասարակ թուղթ: Այնպէս կը կարծենք որ բարբարոս այս առուտորին զոհ գացած պէտք է ըլլան նաեւ Ս. Թադեադեանի անգնահատելի ձեռագրերը: Անըմբռնելի, անդարմանելի եւ յաւետ դատապարտելի այս արարքին ողբերգական տարողութիւնը կրնան միայն անոնք հասկնալ, որոնք ծանօթ են Թադեադեանի կեանքին եւ անոր հրապարակախօսական, գրական եւ բանասիրական աշխատանքներուն:

Թադեադեանի անտիպ գործերը գտնելու եւ Երեւան ուղարկելու հարցի կապակցութեամբ գրած ենք նաեւ Նոր Զուղա, որպէսզի հոն եւս հարկ եղած պրպտումները կատարեն եւ հայրենասէր գրողի ձեռագրերը, կամ իր հեղինակի մասին չհրատարակուած որեւէ վաւերաթուղթ գտնելու պարագային, անոնց միկրոֆոթոնները մեզ ուղարկեն:

Դիմեցինք նաեւ տեղույս Ասիական Ընկերութեան, որուն անդամ էր Մեսրոպ Սեթեան, այն ենթադրութեամբ, որ գուցէ հանգուցեալ գիտնականը իր արխիւները նուիրած ըլլայ յիշեալ մշակութային ընկե-

րութեան մատենադարանին: Դժբախտաբար մեր այդ փորձն ալ արդիւնք չտուաւ:

Կրնաք վստահ ըլլալ որ միութիւնս ամէն կարելի ճիգ պիտի թափէ Կալկաթայի մէջ կորսուած ձեռագրերը գտնելու համար: Մարդասիրական հեմարանի տեսուչը ստացած է նոյն հարցի առնչութեամբ Ակադեմիայի կողմէ իրեն գրուած նամակը: Պրն Փոլատեան այս մասին յաւելեալ ծանօթութիւն մը չունի:

Օգտուելով պատեհութենէն, մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք ձեր դրկած Յ. Պարոնեանի ամբողջական գործերուն եւ հայ ժողովուրդի պատմութեան տարբեր շրջաններու ուսումնասիրութեան նուիրուած աշխատասիրութիւններուն համար:

Անգամ մը եւս, յարգելի նախագահուհի, կ'ուզենք արձանագրել մեր եւ միութեան անդամներուն քարձր գնահատանքը մշակութային այն մեծ աշխատանքին համար, զոր ընկերութիւնդ կը կատարէ թէ՛ հայրենի հողին վրայ եւ թէ՛ արտասահմանի մէջ:

Խորին յարգանքներով

Ի դիմաց Տայկազեան Գեղարուեստական Միութեան Վարչութեան Նախագահ Քարտուղար՝

Կիլզէլեան Ասատուր

Յ.Գ. Մեր հասցեն փոխուած ըլլալով, կը խնդրենք միութեանս անունով դրկուած նամակներն ու գրքերը յղել հետեւեալ հասցէին:

Haikazian Artistic Society

21 Park Mansions, Park Sliut Calcata 16, India

Կ. Աս.



Նամեստափայլ տիկին Բ. Գրիգորեան,
Արտասահմանեան Երկրների հետ Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Նայկական Ընկերութեան նախագահուհի,
Երեւան

Յարգելի Տիկին,

Սովետական Նայաստանի Քառասնամեակին առթիւ ձեր ուղարկած լուսանկարները, մաքսային որոշ դժուարութիւններու պատճառաւ վերջերս միայն կարելի եղաւ ձեռք բերել, ուստի չկրցանք Նոյեմբեր 28-ին օգտագործել զանոնք:

Վարչութիւնս իր հերթական վերջին երկու ժողովներու ընթացքին որոշում կայացուց կազմակերպել ցուցահանդես մը, Կալկաթայի հայ համայնքին, ինչպէս նաեւ հնդիկ ժողովուրդին ներկայացնելու համար մեր հայրենիքի, Սովետական Նայաստանի արձանագրած հրաշահամագօր յառաջադիմութիւնը անցնող քառասուն տարիներու ընթացքին:

Յուցահանդեսին մէջ, բացի ստացուած լուսանկարներէն, պիտի ցուցադրուին նաեւ սովետահայ գրքեր, ինչպէս նաեւ այլ առարկաներ:

Սովետական Նայաստանի Քառասնամեակին առթիւ Միութիւնս կազմակերպեց դասախօսական-գեղարուեստական երեկոյթ մը, որուն ներկայ գտնուեցան մեր անդամներն ու համակիր բարեկամները: Երեկոյթի առաջին մասին մէջ ներկաները հետաքրքրութեամբ ունկնդրեցին հայաստանեան ձայնապնակներ: Միութեանս նախագահը, Պրն Նայկ Նաջարեան խօսեցաւ Նայաստանի սովետականացման Քառասնամեակի մասին եւ մոզական լապտերով ցոյց տուաւ հանդիսականներուն Նայաստանէն ստացուած աւելի քան 70 լուսանկարներ: Ներկաները հանդիսասրահէն հեռացան խանդավառ տպաւորութեամբ:

Նկատի ունենալով, որ Կալկաթահայ համայնքը կապրի լնացած կեանք մը եւ պատեհութիւն չունի կապ պահելու հայրենիքի եւ արտասահմանի այլ գաղութներու մէջ կատարուող մշակութային իրագործումներու հետ, վարչութիւնս որոշեց հրատարակել հայերէն եւ անգլերէն լեզուներով լրատու պարբերաթերթ մը յառաջիկայ յունուարէն սկսեալ: Յառաջադրուած հրատարակութեան նպատակներէն մէկն է

նաև մեր արժեքները ծանօթացնել հայ նոր սերունդին եւ օտար շրջանակներում:

1961 տարեշրջանի մշակութային մեր գործունեութիւնը պիտի սկսինք դասախօսութեամբ մը, որ տեղի պիտի ունենայ Տայոց Մարդասիրական հեմարանի Տանդիսասարահին մէջ: Դասախօսն է Պենկալ նահանգի Ծերակոյտի Ատենապետ, մեծանուն լեզուաբան-քանասէր, Փրոֆ. Սունիթի Քումար Չաթրըջի, որ անգլերէն լեզուով պիտի կարդայ ուսումնասիրութիւն մը Տայկական Առասպելներու եւ Մասունցի Դաւիթ Դիցագնավէպի մասին: Ամսոյս 5-ին հնդիկ գիտնականը նոյն նիթի մասին դասախօսեց Կալկաթայի «Ասիական Ընկերութեան» անդամներուն: Փրոֆ. Չաթրըջին հայ ժողովուրդի լաւագոյն բարեկամներէն մէկն է:

Օգոստոս ամսուն Լոնտոնի մէջ հանդիպեցայ Միութեանդ ներկայացուցիչ, Ընկեր Թորոսեանին, որուն յանձնեցի նամակ մը, որով «Ասիական Ընկերութիւն»-ը փափաք է յայտնած ունենալ Երեւանի Պետական Մատենադարանին մէջ գտնուող հնդկերէն ձեռագրերու առաջին եւ վերջին երկու էջերուն լուսանկարները: Եթէ հնարաւոր է, կը խնդրեմ որ ուղարկէք ցանկացուած էջերու լուսանկարուած պատճենները:

Ամանորի առթիւ ընդունեցէք Վարչութեանս եւ Միութեան անդամներուն սրտագին բարեմաղթութիւնները:

Յարգանքներով՝

Ասատուր Կիզելեան

Քարտուղար Տայկագեան Գեղարուեստական Միութեան

Յ.Գ. Միութեանս հասցեն փոխուած ըլլալով կը խնդրենք, որ ձեր թղթակցութիւնները եւ ուղարկուած գիրքերը յղէք հետեւեալ հասցեին.

Haikazian Artistic Society

21 Park Mansions, Park Sliut Calcata 16, India

Կիզելեան Աս.



Յարգելի տիկին Բ. Գրիգորեան,
Արտասահմանեան Երկրների հետ Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Տայկական Ընկերութեան նախագահուհի,
Երեւան

Յարգելի Տիկին,

Շնորհակալութեամբ ստացանք ձեր դրկած հայկական եօթը ձայնապնակները: Թելադրելի է, որ այսուհետեւ ձայնապնակները դրկուին Կալկաթայի Սովետական Տիպատոսարանի միջոցաւ, որպէսզի կարելի ըլլայ մաքսային որոշ դժուարութիւններէ, որոնք գոյութիւն ունին հոս, զերծ մնալ: Այս մասին խօսած ենք հիւպատոսարանի պատասխանատու պաշտօնեաներուն հետ եւ իրենց հաւանութիւնը ստացած:

Տայաստանի մէջ սովետական կարգերու հաստատման քառասնամեայ յոբելեանին առթիւ, Կալկաթայի Սովետական Տիպատոսարանը Մայիս 27ին կազմակերպած էր շարժանկարի ցուցադրութեան երեկոյթ մը: Փոխ-Տիպատոս Պրն Լոնդրեւ հակիրճ կերպով խօսեցաւ Սովետական Տայաստանի վերելքին եւ գիտական, մշակութային ու հարտարարութեան մարզերուն մէջ արձանագրած վիթխարի յաջողութիւններու մասին:

Յուցադրուած պատկերներն ունէին առաւելաբար գիտական բնոյթ: Որքան աւելի նպատակայարմար պիտի ըլլար այդ առթիւ տեսնել հայկական գեղարուեստական կամ վաւերագրային ֆիլմ մը, մանաւանդ որ բոլոր հանդիսականները հայեր էին: Արդեօք ընկերութիւնդ կրնա՞յ տեղույս սովետական հիւպատոսարանին միջոցաւ, կալկաթահայութեան առիթ ընծայել տարին զէք երկու հայկական ֆիլմեր դիտելու: Մեր անդամներն ու բարեկամները մեծ փափաք ունին «Միրտը երգում է» ֆիլմը տեսնելու:

Տնդիկ մեծանուն գիտնական Փրոֆ.-Դոկտ. Սունիթի Քումար Չաթրջին անցեալ տարուան դեկտեմբերին քաղաքիս Ասիական Ընկերութեան սրահին մէջ կարդաց դասախօսութիւն մը «Տայկական Տերոսական Առասպելներն ու Սասունցի Դաւիթ Դիցագնավէպը» նիթին շուրջ: Ներփակ գրութիւնը զոր դրկած եմ արտասահմանեան կարգ մը թերթերու, նպատակ ունի մեր ժողովուրդի այս մեծ բարեկամը ծանօթացնել հայկական շրջանակներուն: «Տայկական Տերոսական Առաս-

պելներն ու Սասունցի Դաւիթ Դիցազնավէպը» լոյս պիտի տեսնէ թէ՛ Ասիական Ընկերութեան պաշտօնաթերթին մէջ եւ թէ՛ որպէս գրքոյկ, որմէ քանի մը օրինակ կը դրկեն ձեզի անմիջապէս որ հրատարակուի:

Ասիական Ընկերութիւնը խնդրած է ինծմէ դասախօսութիւն մը կարդալ իր անդամներուն արդի, այսինքն աշխարհաբար հայ գրականութեան մասին: Այս առթիւ կ'ուզեմ անդրադառնալ նաեւ Ռապիհնտրանաթ Թակորի հայերէն թարգմանուած գործերուն: Եթէ Տայաստանի մէջ այս մասին որեւէ ուսումնասիրութիւն հրատարակուած է, բարի գտնուեցէք օդային փոստով դրկել ինծի, որուն համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւն: Եթէ նման ուսումնասիրութիւն մը գոյութիւն չունի, գոնէ ստուգել թէ Թակորի որ գործերը եւ ո՞ր թուականներուն թարգմանուած են հայերէնի:

Միութիւնս մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնէ ձեզի դրկուած գրքերուն, թերթերուն, յօդուածներուն եւ ձայնապնակներուն համար:

Յաջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններով՝

Ասատուր Կիզելեան

Քարտուղար Տայկազեան Մշակութային Միութեան



/ 26 հոկտեմբերի, 1963թ. /

Armenian College
56B, Free School Street,
Calcutta 16

Տամեստափայլ Տիկին Բ. Գրիգորեան,
Արտասահմանեան Երկրների Տես Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Տայկական Ընկերութեան
նախագահութեան նախագահ
Երեւան

Յարգելի Տիկին Գրիգորեան,

Այսու կ'ուզեմ խորին շնորհակալութիւնս յայտնել այն սրտաբաց ու գորգորոտ վերաբերմունքին համար, զոր դուք անձնապէս, ինչպէս նաեւ ընկերութեանդ ներկայացուցիչները ցուցաբերեցին ինծի հանդէպ հայրենիք գտնուած օրերուս:

Թոյլ տուէք այստեղ մատնանշել քանի մը իրողութիւններ, որոնք մեծապէս տպաւորեցին ինչպէս զիս, վստահ եմ նաեւ՝ սփիւռքահայ միւս ուսուցիչները:

Արտասահմանեան երկիրներու, յատկապէս սփիւռքահայութեան հետ Ս. Տայաստանի բարեկամութեան եւ մշակութային կապի ընդլայնման եւ ամրապնդման կապակցութեամբ Ընկերութիւնդ կը կատարէ անգնահատելի աշխատանք, իրողութիւն մը, որուն ականատես վկան ըլլալու բախտը վիճակուեցաւ ինծի սոյն տարուան օգոստոսեպտեմբեր ամիսներուն:

Անխառն հիացումով դիտեցի Տայաստանի բոլոր քաղաքներուն մէջ վիթխարի այն իրագործումները, զորս հայրենիքի մեր ժողովորդը ձեռք է բերած արդիւնաբերութեան, գիտութեան, մշակոյթի տարբեր բնագաւառներու եւ կեանքի բազմաթիւ այլ մարզերուն մէջ, համեմատաբար պատմական շատ կարճ ժամանակամիջոցի մը ընթացքին: Ս. Տայաստանն այսօր քաղաքակիրթ մարդկութեան նժարին մէջ կրնայ որեւէ ժողովորդի դիմաց հաւասարակշռութիւն պահել:

Երեւանի մէջ երբ ամերիկացի գիտնականի մը տպաւորութիւններն ուզեցի իմանալ մեր հայրենիքի մասին ըսաւ ան. «Մեզի ըսուեցաւ որ դեռ չորս տասնեակ տարիներ առաջ Երեւանը երեսուն հազար բնակչութեամբ, փոշոտ փողոցներով ու խեղճուկ տուններով քաղաք մըն էր, իսկ Տայաստանը գրեթէ բոլորովին զուրկ՝ ճարտարարուեստէ: Եթէ

նիշտ է տրուած տեղեկութիւնը, այն ատեն ձեռք բերուած իրագործումները կարելի է միայն հրաշք համարել»:

Ես կը խոնարհիմ այդ հրաշքը իրագործող ժողովուրդի հզօր կամքին առջեւ:

Չեմ ուզեր ատելի երկար գրել, քանի որ կը յառաջադրեմ հայրենական տպաւորութիւններս հրատարակել սփիւռքահայ մամուլի մէջ:

Առ ի գիտութիւն կ'ուզեմ յիշել որ տպաւորութիւններս հաղորդեցի Նայոց Մարդասիրական Ճեմարանի աշակերտութեան, որ մեծ հետաքրքրութեամբ եւ խանդավառութեամբ լսեց Նայաստանի ձեռք բերած իրագործումներու մասին պատմածներս: Յառաջիկայ ամսու 4-ին հայաստանեան տպաւորութիւններու մասին պիտի խօսիմ Կալկաթահայութեան:

Լատագոյն ցանկութիւններով եւ յարգանքներով՝

Ա. Կիզեղեան



Տամեստափայլ տիկին Բ. Գրիգորեան,
Նախագահուհի Արտասահմանեան երկրների հետ
Բարեկամութեան եւ Մշակութային Կապի
Նայկական Ընկերութեան,
Երեւան

Յարգելի Տիկին Գրիգորեան,

Ստացանք միութեանս հասցէին դրկուած եօթը հայկական ձայնապնակները, որոնց համար կը յայտնենք մասնաւոր շնորհակալութիւն: Ձայնապնակները շուտով կը լսեն մեր անդամները հերթական յառաջիկայ հաւաքոյթին:

Վարչութիւնս որոշած է սկսիլ անդամագրութեան նոր շարժում մը:

Մայիսի 27-ին Կալկաթայի սովետական հիւպատոսարանը կազմակերպած էր շարժապատկերով երեկոյթ մը, Նայաստանի մէջ սովետական կարգերու հաստատման քառասունամեակի առթիւ: Փոխհիւպատոս պրն Լոնդրեմ հակիրճ կերպով խօսեցաւ վերջին քառասունամեակին մեր հայրենիքի արձանագրած աննախընթաց

յաջողութիւններուն, ինչպէս նաեւ Սովետական Միութեան վարչապետ ընկեր Խրուշչովի Տայաստան այցելութեան մասին: Յուցադրուած շարժապատկերներն ունէին առաւելաբար գիտական բնոյթ: Դժբախտաբար հիւպատոսարանն իր տրամադրութեան տակ հայկական նպատակայարմար ֆիլմ մը չունէր: Յանկալի է որ տարին գէթ մի քանի անգամ հիւպատոսարանի միջոցաւ առիթ տրուի կալկաթահայ համայնքին դիտել հայկական շարժապատկերներ: Պրն Լոնդրեմ խոստացաւ մօտաւոր ապագային ցուցադրել հայկական «Սիրտը երգում է» ֆիլմը:

Յարգանքներով՝

*Ասատուր Կիզելեան,
Քարտուղար Տայկագեան Գեղարուեստական Միութեան*

Գրիգորովա (Գրիգորյան) Լեանորա

Գրիգորովա (Գրիգորյան) Լեանորա:
Արեւելյան պարերի մասնագետ Մոսկվաբնակ հայ արվեստագիտուհի:
Որպես պարուսույց հրավիրվել է ՅՆԴկաստան, ուր եւ բարեկամացել է
Գյուզելյան ընտանիքի հետ:



/ 23 օգոստոսի 1961թ., Մոսկվա /

Հարգելի Ասասուր, Վիվիեն, Իվան եւ ծնողներ,

Այս նամակով ուզում եմ ձեզ հաղորդել, որ ես ողջ եւ առողջ հասա Մոսկվա: Ինչպես տեսնում եք ես իմ տված խոսքը կատարում եմ եւ գրում եմ ձեզ: Մոսկվայում ինձ ընդունեցին շատ լավ: Մոսկվայի կայարանում ինձ դիմավորեցին այստեղի հայերը եւ առաջին հերթին սկսեցին հետաքրքրվել Տնդկաստանի հայերի մասին: Մինչ հիմա էլ ես ամեն օր պատմում եմ ձեր մասին, որին շատ մեծ ուշադրությամբ լսում են այստեղի հայերը:

Այն Տնդկաստանի պարերի բազաժը, որ ես բերեցի, արդեն իրագործում եմ կյանքում: Այս կարճ ժամանակաընթացքում, որ ես գտնվում եմ այստեղ, արդեն Խորհրդային Միության մի քանի քաղաքներից ստացել եմ հրավեր, որպես Տնդկաստանի պարի մասնագետ: Մոսկվա գալուս երկրորդ օրը ես հեռախոսեցի Լիսիցյանին, բայց Լիսիցյանը Մոսկվայում չի գտնվում, գնացել է հանգստանալու: Երբ վերադառնա ես անպայման էլի կփնտրեմ եւ ձեր տված պատվերը անպայման կկատարեմ:

Ես ուզում եմ էլի հայտնել իմ խորին շնորհակալությունը ձեզ, որ դուք ինձ այդքան լավ ընդունեցիք: Թեպետ ես գտնվում էի այդքան հեռու իմ հայրենիքից, բայց բոլորովին օտարություն չէի զգում: Այդքան հեռու Կալկաթայում ես միշտ զգում էի ինչպես իմ տանը:

Էլի եմ ասում, ես իմ խոսքը կատարեցի եւ նամակ եմ ձեզ գրում, կարծում եմ, որ դուք էլ ձեր խոսքը կկատարեք եւ այս նամակիս կպատասխանեք եւ այն նյութը հայերի քուլեջի մասին կուղարկեք: Գրեցեք ինձ, այն պարերը, որոնք ես այդտեղ դրեցի, հայ երիտասարդները պարում են, թե չէ: Եթե ձեզ պետք լինի մի որևիցե բան, հայկական ձայնապնակներ կամ նոտաներ, գրեցեք եւ ձեզ կուղարկեմ:

Իմ կողմից մեծ բարեւներ. Կալկաթայի Սրբազան եպիսկոպոսին, տիկին եւ պարոն Մարտին (Մարտինյանին), տիկին եւ պարոն Բազիլ

(Բարսեղյանին), պարոն Կարապետ (Կարապետյանին) եւ նրա ընտանիքին բոլոր մնացած իմ ծանոթներին:

Մեծ բարեւներ եմ ուղարկում ձեզ Մոսկվայի գեղարվեստի ոլորտում աշխատող հայերից՝ Փիլոյանից, Գասպարյանից, Խաչատուրյանից եւ էլի շատերից:

Սպասում եմ ձեր նամակին:

Ձեզ հարգող՝ Լեանուրա



/ 25 սեպտեմբերի 1961թ. /

Սիրելի տիկին Լեանուրա Գրիգորեան,

Ուրախութեամբ ստացանք եւ մեծ հաճոյքով կարդացինք ձեր նամակը: Մենք միշտ կարօտով յիշում ենք այն կարճ, բայց հաճելի օրերը, որ միասին անցկացրինք: Ես անձնապէս շատ եմ յուզում, երբ հեռաւոր այս ամիսներում հանդիպում եմ սովետահայ արուեստագէտների, որոնք մեր փոքր, բայց տաղանդաւոր ժողովրդի հանճարի ցոլքերը լրացուցանում են տարբեր երկրների ժողովուրդներին: Պատմութիւնը անցեալում մեծ անարդարութիւն է կատարել մեր ժողովրդի նկատմամբ... քաղաքակիրթ Եւրոպան մեզ ճանաչել է որպէս լալկան մի ժողովուրդ, որը զուրկ է հերոսական ոգուց, որը ծայր աստիճան ճակատագրապաշտ է ու անկարող ստեղծագործելու մնայուն արժէքներ: Այո, այդպիսի սեւ ակնոցով է նայել մեր վրայ քաղաքակիրթ Եւրոպան, առանց անդրադառնալու, որ երբ մենք Փոքր Ասիայում ապրում էինք որպէս գիր ու գրականութիւն ունեցող, բարձր կուլտուրայի տէր ժողովուրդ, նրանք, եւրոպացիները, անտառներում թափառում էին իբրեւ կիսավայրենի ցեղ: Սակայն բարեբախտաբար, շնորհիւ մեր ժողովրդի բնատուր տաղանդին եւ սովետական վարչաձեւին, որ հնարաւորութիւն ստեղծեց զարգացնելու այդ տաղանդը, այսօր նոյն այդ «քրիստոնեայ» Եւրոպան ստիպած է ծափահարել սովետահայ արուեստագէտներից ու գիտնականներից շատերին: Ահա թէ ինչու ես խորապէս յուզում եմ տեսնելով Լիսիցեաններին, Բալասանեաններին, Տամբարձունեաններին եւ Գրիգորեաններին Գանգէսի հեռաւոր այս ամիսներում:

Ուզում էք իմանալ թե ձեր սովորեցրած պարերն ի՞նչ ընդունելութիւն գտան: Այդ պարերը ներկայացնեցին Տայոց ակումբում մի պարահանդէսի ընթացքում եւ արժանացան ներկաների ջերմ ընդունելութեան: Ժողովուրդն այնքան ծափահարեց, որ ստիպւած խումբը կրկնեց հայկական պարերը: Այս առթիւ պարտք եմ համարում Տայկազեան Միութեան անունից մի անգամ եւս շնորհակալութիւն յայտնել ձեզ այն աշխատանքին համար, որ տրամադրեցիք միութեան անդամներին եւ սովորեցրիք այդ պարերը: Ձեր այցելութեան մասին իմ գրած յօդուածը, որ լոյս է տեսնելու հայերէն երեք տարբեր թերթերում, այս մէկը, որ տպւած է Բեյրութի «Արարատ» օրաթերթում, մեքենայի հին լինելու պատճառաւ յաջող չի ստացել: Միւս թերթերը հենց որ ստանամ, կ'ուղարկեմ:

Մեծ հետաքրքրութեամբ կարդացի՞նք ձեր նամակի այն մասը, որտեղ գրւած էր թէ ինչպէս ձեզ ընդունեցին Մոսկվայի հայերը: Մենք զգացուած ենք Խաչատուրեանի, Գասպարեանի, Փիլոյեանի եւ միւսների ուղարկած քարտերից... Սփիւռքի անարեւ երկնակամարների տակ մենք կը հիւծուենք որպէս համայնք, եթէ մեր սիրտը չտաքացնեն հայրենի երկրի արեւավառ իրականութիւնը եւ սովետահայ մեր թանկագին եղբայրների ու քույրերի տաքուկ քարտերը: Խնդրեմ քարի եղէք մեր բոլորի ջերմ քարտերը հաղորդել Խաչատուրեանին, Գասպարեանին, Փիլոյեանին, Լիսիցեանին, տէր եւ տիկին Բալասանեաններին եւ Մոսկվայում ապրող մեր արուեստագետներին ու ժողովրդին:

Ձեր ցանկութեան համաձայն ուղարկում եմ որոշ տեղեկութիւններ Կալկաթայի հայոց մարդասիրական ճեմարանի եւ կրթական այլ հաստատութիւնների մասին: Եթէ ուրիշ որեւէ ծանօթութեան պէտք ունենաք, խնդրեմ՝ իսկոյն գրէք ինձ:

Ձեր նամակին աւելի կանուխ չկարողացայ պատասխանել քանի որ ամբողջ տասն օր հիւանդ պառկել էի բարձր ջերմաստիճանով: Այժմ ես ինձ բաւական լաւ եմ զգում:

Ձեր քարտերը հաղորդեցի Կալկաթայի ձեր բոլոր քարեկամներին, որոնք ինձնից խնդրեցին իրենց փոխադարձ քարտերը յայտնել ձեզ:

Կալկաթայում նորութիւնները շատ չկան: Շուտով կը սկսեն ճեմարանի Փուջայի արձակուրդները եւ վարժարանը կը փակուի երեք շաբաթով:

Ընտանիքի բոլոր անդամները, Տեր եւ տիկին Ալեքսեանները, Իվանն ու տիկինը, որ արդէն վերադարձել է Տոլանդիայից, Վիվիենն ու ես կարօտով ձեզ եւ ձեր շնորհալի դասեր ջերմ բարեւոյններ ենք փոխանցում: Յաջորդիւ աւելի երկար կը գրեմ:

Սիրով՝ Կիւզեյեան Ասատուր

Յ.Գ. Վերջերս Եւրոպայից ստացանք հայկական մի ձայնապնակ, որի մէջ, ի միջի այլոց, Արթիւր Այդինեանը «Ծիծեռնակ» է երգում, բոլորս հիացել ենք նրա ձայնով, շատ կ'ուզենայինք ունենալ նրա երգերը պարունակող մի ձայնապնակ, որի փոխարժէքը պատրաստ ենք վճարելու:

Կիւզեյեան Ասատուր

Գեորգյան Լիլիթ



/ 31 մարտի 1991թ., Սուլսբերի /

Բարեւ Ձեզ,

Անունս Լիլիթ Գեորգյան է: Մարտի 15-ից Անգլիայում էի Սուլսբերիում եւ հույս ունեի, որ կհանդիպեմ Ձեզ, կհանդիպեմ հայերին եւ միաժամանակ այս նամակը կտամ Ձեզ:

Ցավոք չստացվեց: Թեեւ հայկական համայնքին տեղեկացրինք, որ անգլիական դպրոցի հրավերով Նայաստանից աշակերտների խումբ է եկել Անգլիա, այնուամենայնիվ, ոչ ոք չարձագանքեց:

Ցավալի է...

Սակայն այն ընտանիքում, ուր ես մնում եմ, մայրը հայ է, եւ ծանոթներ ունի Լոնդոնում:

Այսօր՝ մարտի 31-ին, նրանք եկել էին Սուլսբերի, մեր տուն (անուններն են Սյուզան եւ Նովսեփ): Վաղը ես վերադառնում եմ Նայաստան եւ այս ծրարը, որ մեր հարեւանի նամակն է Ձեզ ուղղված, տալիս եմ նրանց, հուսով եմ, որ նամակը տեղ կհասնի մեր բարի հայրենակիցների շնորհիվ: Մեր հարեւանի՝ Ալբերտ պապիկի (էսպես եմ ես իրեն դիմում) հասցեն նամակում կա:


Ինձ մնում է ավելացնել, որ Ալբերտ պապիկը (նաեւ ես) սպասում է Ձեր պատասխանին:

Ահա այսքանը՝

Լիլիթ

Դավթյան Վահագն

15.08.1922, Արաբկիր, (Սերաստիայի նահանգ), – 21.02.1996, Երեւան, թաղված է Կոմիտասի անվ. պանթեոնում:
Բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս: ՀՀ ԳԱԱ
ակադ., 1986թ. թղթ.անդամ: 1965-67թթ. «Հայրենիքի
ծայնի» խմբագիր, 1967-1981թթ. Սփյուռքահայության հետ
մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ,
1990-94թթ. ՀԳՄ նախագահ:



/ 9 սեպտեմբերի 1970թ., Լոնդոն /

Մեծահարգ Պրն Ասատուր Գյուլելյան,

Սիրելի Ասատուր,

Մանչեստրում բնակվող մեր հայրենակից քահանա Աշոտ Տեր-Տարու-
թյունյանը վերջերս մեզ հաղորդեց, որ իր տրամադրության տակ ունի
«Արշալույս Արարատյան» թերթի լրիվ հավաքածուն եւ պատրաստ է
այն նվիրաբերել Հայաստանի հանրային գրադարանին: Այդ հավա-
քածուն շատ արժեքավոր է, դրա կարիքը մեծ է:

Խնդրում ենք քեզ, սիրելի Ասատուր, հնարավորության սահ-
մաններում, անձամբ զբաղվես այդ հարցով եւ կազմակերպես դրա
առաքումը Հայաստան: Կարծում եմ, որ Լոնդոնում մեր բարեկամնե-
րի մեջ կգտնվեն մարդիկ, որ կօգնեն քեզ կազմակերպելու այդ գործը:

Կանխահայտ շնորհակալություններով եւ լավագույն
մաղթանքներով՝

*Կոմիտեի նախագահի տեղակալ՝
Դավթյան Վահագն*



Սիրելի Ասասուր,

Նախ ներիր, որ Լոնդոնից վերադառնալուց անմիջապես հետո քեզ չգրեցի եւ իմ ու ամբողջ խմբի շնորհակալությունները չհայտնեցի այն ամենի համար, ինչ այնպես սիրով արեցիք Դուք:

Ուստի ուշացումով, ընդունիր իմ եւ մեր բոլորի ջերմ ու մեծ շնորհակալությունները: Այժմ դառնանք քո պաշտոնական գրությանը. Երբ այն ցույց տվի Տամազասայանին, ժպտաց.

– Մի՞թե Ասատուրին որեւէ առիթ է պետք Տայաստան գալու համար: Նա այն մարդն է, որ երբ, որքան ժամանակով եւ ում հետ ցանկանա, կարող է գալ...

Այնպես որ, սիրելի Ասատուր, ընտրիր ժամանակը եւ Ալբերտի հետ, որին այնպես սիրեցինք բոլորս, համեցիր Տայաստան, ուր մեր դռներն ու սրտերը բաց կլինեն Ձեզ համար:

Տամբուրում եւմ Դավթյան Վահագն

Հարգարժան պրն Ա. Գյուլեյան,

Այս տարի Ֆրանսիայի խոշոր հրատարակչություններից մեկը՝ «Լե Էդիտյոր Ռեյունի Ֆրանսեզ»-ը Տայաստանի պետական հրատարակչության խնդրանքով տպագրության է պատրաստում «Տայ պոեզիայի անթոլոգիա»-ն, հնագույն ժամանակներից սկսած մինչեւ մեր օրերը: Գիրքը, որ լինելու է բավականին սովորածավալ, թարգմանում են Ֆրանսիայի 10 ամենանշանավոր բանաստեղծները:

Կարծում ենք, որ անթոլոգիայի հրատարակությունը մեծ դեր կխաղա հայ պոեզիայի հարստությունը աշխարհին ներկայացնելու գործում:

Այդ նույն հրատարակչությունը նաեւ այլ ծրագրեր ունի, մտադիր է գրքեր հրատարակել նաեւ նվիրված հայ ժողովրդի պատմությանը եւ մշակույթի զանազան բնագավառներին:

Սակայն, հրատարակչությունը կասկածում է, թե իր հրատարակած գրքերի տպաքանակը կսպառվի՞ արդյոք: «Տայ պոեզիայի անթոլոգիա»-ն հրատարակչության համար փորձաքար է, ստուգելու իր կասկածը:

Կարծում ենք, որ բոլոր հայկական կազմակերպությունները, բոլոր հայ մարդիկ, շահագրգռված պիտի լինեն, որ արտասահմանում հայ մշակույթի գանձերն օտար լեզվով հրատարակվելու փորձը հաջող ընթացք ունենա եւ ճանապարհ հարթի հետագա նման ձեռնարկումների համար:

Ուստի, խիստ ուրախալի կլիներ, եթե Ձեր կազմակերպությունը իր նպաստը բերի այս գործին՝ մի որոշակի քանակությամբ «Նայ պոեզիայի անթոլոգիա» պատվիրելով ֆրանսիական վերոհիշյալ հրատարակչությանը: Դա կնպաստի հրատարակչությանը սպառելու գրքի տպաքանակը եւ այն մասսայականացնելու ընթերցողների լայն շրջաններում: Գրքի մոտավոր գինն է 20 ֆրանկ:

Ստորեւ տալիս ենք հրատարակչության հասցեն եւ խնդրում՝ Ձեր պատվիրած գրքի քանակության մասին տեղյակ պահել մեզ:

Mme. Maeleine Braun,

«Les Editeurs Reunis Francais», 21, Rue de Richelieu, Paris (1), FRANCE

Կոմիտեի նախագահի տեղակալ՝

Դավթյան Վահագն

«Արեգակ»ի խմբագրության հարգելի բարեկամներ,

1969 թվականի նոյեմբեր ամսին հայ ժողովուրդը նշելու է իր մեծագույն զավակներից մեկի՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյակը: Դա մշակութային խոշոր իրադարձություն կլինի հայ ժողովրդի կյանքում, մեծապես կնպաստի, որ կոմիտասյան հայրենաշունչ արվեստը էլ առավել ներթափանցի հայ ամենալայն զանգվածների մեջ:

Մայր հայրենիքում այդ տարելիցը կնշվի մեծ շուքով ու հանդիսավորությամբ: Ամենուրեք տեղի կունենան հանդիսավոր երեկույթներ, կոմիտասյան երգի տոներ, երգ-երաժշտության շաբաթներ:

Ոչ մի կասկած չունենք, որ սփյուռքահայությունը եւս մեծ շուքով կնշի այդ տարելիցը, արժանին հատուցելով իր հանճարեղ զավակի հիշատակին:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն, շատ տեղերում մշակութային կազմակերպությունները, հայրենակցական միությունները, ուսումնական հաստատությունները եւ այլ կազմակերպություններ

արդեն ստեղծել կամ ստեղծում են հորելյանական հատուկ հանձնաժողովներ ու հանձնախմբեր՝ հորելյանն արժանի շուքով անցկացնելու համար: Ծատ տեղերում նախատեսված է հորելյանին նախորդող ամիսներին կազմակերպել եւ անցկացնել կոմիտասյան երգի շաբաթներ, տասնօրյակներ, անհատ կատարողների եւ երգչախմբերի մրցույթներ:

Նավանաբար դուք եւս արդեն նախաձեռնել կամ նախաձեռնում եք նման խրախուսելի միջոցառումներ:

Ձեր միջոցառումներին օժանդակած լինելու ցանկությամբ, Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն կաշխատի առաջիկայում Ձեր տրամադրության տակ դնել Կոմիտասի կյանքի ու գործունեության վերաբերյալ անհրաժեշտ նյութեր, ձայնագրություններ, ձայնապնակներ եւ այլն:

Միաժամանակ կոմիտեն խնդրում է, որ Ձեր միջոցառումների մասին տեղյակ պահելով մեզ, հայտնեիք, թե հատկապես ինչպիսի նյութերի կարիք եւ ինչպիսի պահանջներ ունեք մեզանից՝ հորելյանն առավել արդյունավետ ձեռով նշելու համար:

Կարծում ենք, որ ազգօգուտ գործ կատարված կլինի, եթե սփյուռքի կազմակերպությունները հորելյանի օրերին կարողանան օտար լեզուներով բուկլետներ հրատարակել՝ նվիրված Կոմիտասին: Եթե հանդես բերվի նման նախաձեռնություն, ապա մենք պատրաստ ենք անհրաժեշտ նյութերով օգնելու Ձեզ:

Նայտնի է, որ Կոմիտասի կյանքին ու գործունեությանը վերաբերող արխիվային ու թանգարանային շատ նյութեր ցրված են սփյուռքով մեկ: Մեր մշակութային կազմակերպությունները շնորհակալ գործ կատարած կլինեն, եթե հետաքրքրվեն, հայտնաբերեն եւ հայրենիք առաքեն այդ կարգի նյութեր՝ առաջիկայում կազմակերպվող Կոմիտասյան սրահում ցուցադրելու համար:

Սպասելով Ձեր նկատառումներին, մեծ հաջողություններ ենք ցանկանում Ձեր հայրենանվեր գործունեությանը:

*Կոմիտեի նախագահի տեղակալ՝
Դավթյան Վահագն*



/ 18 օգոստոսի 1965թ. /

Վահագն Դալթեանին
«Տայրենիքի Չայն» շաքաթաթերթ, Երեւան

Յարգելի Հայրենակից,

Ուրախութեամբ կարդացի «Տայրենիքի Չայն» թերթի ծնունդը ատենող ձեր նամակը: Սրտանց կ'ողջունեմ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտեի ծափահարելի այդ ձեռնարկը:

Պատմութեան փոթորիկներուն ցնցումէն խախտած կամ փուլ եկած բոլոր կամուրջները պետք է համագործակցաբար վերակառուցենք, մեր ժողովուրդի երկու խոշոր հատուածներուն միջեւ: Տայրենիքի եւ Սփիւռքի մեր մտաւորականներն ու ազգային գործիչները, իրենց անհատական ու հաւաքական բոլոր նիւթերը որպէս շաղախ, պետք է նուիրաբերեն այդ մեծ կառույցի իրագործման համար:

Կառուցուած ամեն նոր կամուրջ՝ հայրենիքի եւ սփիւռքի հայութեան մտածումները, ապրումներն ու իդէերը ատելի ու ատելի պիտի մօտեցնէ իրարու, եւ հոսկ' համաձուլէ եւ միաւորէ: Որովհետեւ մէկ է հայ ժողովուրդը եւ նոյնն են անոր հետապնդած հեռանկարներն ու իտեալները:

Սփիւռքահայը անցնող քանի մը տարիներու ընթացքին եւ յատկապէս այս տարի՝ ատելի քան երբեք իր սրտին ականջները լայն բացած է հայրենիքի ձայնին, իր մտածումները վերածած է սեւեռուն նայուածքներու՝ որոնք ուղղուած են մեծ յոյսով Արագածին ու կարօտով՝ Արարատին, հաւատքով Ս. Էջմիածինին ու հպարտութեամբ Երեւանին, ուրկէ կու գայ ձայն հայրենականը:

Չեմ կասկածիր, որ «Տայրենիքի Չայն»ը պիտի ըլլայ արձագանգը հայ ժողովուրդի հարազատ ձայնին, անոր սրտին առողջ բարախումին:

Ես մեծագոյն հաճոյքով պիտի ուզեմ իմ վտիտ ձայնս միացնել «Տայրենիքի Չայն»ի մեծ համերգին:

Այս առթիւ մասնաւորաբար կը շնորհաւորեմ ձեզ եւ անկեղծօրէն կ'ուզեմ ըսել, որ Կոմիտէն լուսագոյն ընտրութիւնը կատարած է «Տայրենիքի Չայն»ի խմբագրութիւնը վստահելով ձեզի:

Անկեղծ ողջոյններով եւ բարեմաղթութիւններով,

Կիլգելէան Ասատուր

Չարյան Նաիրի

(Չայաստան եղիագարյան):
31.12.1900, Խառակոնիս (Վանի նահանգ) – 11.07.1969,
Երեւան:

Բանաստեղծ, արձակագիր, թատերագիր, հրապարակագիր
եւ թարգմանիչ, հասարակական գործիչ: Չայաստանի
Գրողների Միության վարչության նախագահ (1944-1946):
ԽՍՀՄ անդամ 1930 թվականից:
Քննադատվել է ստալինյան անհատի պաշտամունքին բուռն
մասնակցության համար:



/ 18 փետրվարի 1969թ. /

Միրելի Ասասուր,

Շաքե Վարսյանն ասաց, որ նամակով հիշել ես ինձ: Մեղայի միջոցով ստացա քո երկտողը:

Շնորհակալ եմ:

Ներիր, որ քեզ ուշ եմ պատասխանում: Ամեն բացատրություն մնում է լոկ պատճառաբանություն:

Ինչպե՞ս անցավ վիրահատությունդ: Ափսոս, որ երկար տեւեց: Քո բացակայությունը Լոնդոնում ես զգում էի ամեն քայլափոխի: Չնայած որ Էդիկը, Ադմինան եւ Արսենը ամեն ինչ արեցին իմ օրերը արդյունավետ եւ հաճելի դարձնելու համար: Բարեիր նրանց: Ես իմ լոնդոնյան բոլոր հասցեները կորցրի ուստի եւ նրանց եւս նամակ չեմ գրել: Նատուկ բարեւներս հաղորդիր նաեւ Սարգիս Քուրքչյանին եւ Նայկ Գալստյանին: Չեմ մոռանում նրանց բարեկամությունը:

Տղաներն ինձ ասացին, որ ինչ որ մարդիկ (դու կռահում ես նրանց) հեռախոսային եռանդուն ջանքեր էին թափել իմ հանդիպումը լոնդոնահայերի հետ խափանելու: Նրանց այդ հաջողվեց կիսով չափ: Տանդիպում, այնուամենայնիվ, եղավ Kensington Palace Hotel-ում: Պսակ եպիսկոպոսի (թե՞ արքեպիսկոպոսի) նախագահությամբ: Չգիտեմ, նրանք ինչ տպավորություն ստացան, ես գոհ մնացի:

Աննկարագրելի ջերմությամբ քեզ բարեւում է Անժելան եւ Երեւանն առհասարակ: Այստեղ դու թողել ես անջնջելի տպավորություն:

Միրելի Ասատուր, իմ եւ Անժելայի կողմից ամենաջերմ բարեւները

հաղորդիր քո շնորհափայլ տիկնոջը եւ հրեշտակատիպ երեխաներին, որոնց տեսա միայն քնած ժամանակ:

Ես քեզ շուտով կուղարկեմ իմ բանաստեղծությունների նոր ժողովածուն՝ «Մպասում եմ քեզ», որտեղ կկարդաս «Ասք Անդրանիկ զորավարի» պոեմը: Այս տարի լույս կտեսնի իմ երկերի 5-րդ հատորը, որը դու նույնպես կստանաս եւ այս ամենի դիմաց համարձակվում եմ հուսալ, որ դու ինձ մի կերպ կուղարկես քո խոստացած գիրքը:

Ջերմորեն՝ քո Չարյան Ն.

Նաիրի Չարյան:



Զարյան Ռուբեն Վարուսի

(Ռուբեն Վարուսի Ղազանջյան):
1.09.1909, Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումրի)– 2.02.1994,
Երևան:

Գրականագետ, թատերագետ, մանկավարժ: ՀԽՍՀ
արվեստի վաստակավոր գործիչ (1961 թվական):
Արվեստագիտության դոկտոր (1962 թվական), պրոֆեսոր
(1963 թվական), ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտի
հիմնադիր-տնօրեն, ԳԱ թղթակից անդամ (1974 թվական):
ԽՄԿԿ անդամ 1942 թվականից:



/ 11 հունիսի 1965թ., Երևան /

Միտելի պրն Ասասուր,

Թեեւ մի քանի օր է արդեն, ինչ հասել եմ Երեւան, քայց տակավին շրջագայությանս տպավորության տակ եմ, մանավանդ որ ամեն մի նոր հանդիպող հարցուփորձ է անում, թե ինչ տեսա եւ ում տեսա: Ու իմ պատմածի մեջ, իհարկե, հիշվում եք նաեւ Դուք, ձերոնք, միասին անցկացրած հանելի երեկոն, այն աշխույժ ու եռանդուն ոգևորությունը, որով Դուք այդտեղ գործի եք անցել՝ հայության մի հատվածի ազգապաշտպան գործի դժվարին հոգսը առնելով Ձեզ վրա:

Ձեզ այստեղ շատերն են հիշում, հիշում են Ձեր զվարթ տրամադրությունը, կատակները, Սայաթ-Նովա երգելը: Տիշում են ու բարեկներ հղում:

«Տայաստանի ներկան եւ անցյալը» Ձեր հողվածի առանձնատիպի հետ միասին հանձնեցի մատենադարանին, իսկ «Նոր Ջուղայի ազգային թատրոնը» համերգների ծրագրերի հետ՝ Գրականության եւ արվեստի թանգարանին:

Ուղարկում եմ գրքիս ռուսերեն հրատարակությունը, որի վերջում անգլերեն ամփոփում կա: Սրա հայերենը տպագրվում է եւ մի երկու ամսից երեւի լույս կտեսնի: Կուղարկեմ անպայման: Փնտրում եմ «Միրանույշից» մի օրինակ՝ Ձեզ հասցնելու համար:

Իմ ջերմ ողջույնները հաղորդեք Ձեր համակրելի տիկնոջը՝ ծնողաց ընդհանրապես:

Բարեւեք նաեւ սրբազանին: Աչքիցս չի հեռանում նրա այն օրվա մտահոգ տեսքը: Նուսով եմ, որ Դուք եւ նա մոռացության չեք տա շեքսպիրյան գրադարանի առիթով տված խոստումը:

*Մրտագին բարեկերու՛մ
Ձեր Չարյան Ռուբեն*



/ 22 հունիսի 1965թ. /

Թանկագին բարեկամ, սիրելի Ասատուր,

Նամակը ստացա եւ, դժբախտաբար, Ձեր խնդրին լիակատար գոհացում տալ չեմ կարող: Դասախոսության տեքստը ձեռքիս տակ չէ եւ չգիտեմ, թե ինչ եմ արել: Նամակը ստանալուց հետո, շատ որոնեցի, բայց չգտա: Եվ որպէսզի գոնե հաղորդման համար նյութ ունենաք՝ ուղարկում եմ քաղվածքներ, որոնցից Դուք կարող եք, լրագրողի հմտությամբ, մի ամբողջական շարադրանք հյուսել տպագրելով, իհարկէ, միայն որպէս հաղորդում դասախոսության մասին: Թե այդ հաղորդումը ինչ ծավալ կունենա՝ Ձեր գործն է, բայց ուղարկում եմ բավական շատ, որպէսզի օգտագործեք ըստ Ձեր հայեցողության: Երելի նամակս, գրված վերադարձիցս անմիջապէս հետո, արդեն ստացել եք:

Ձերմ ողջույններ ձերոնց:

Ն.Գ. Նամակիս հետ ուղարկում եմ, որպէս հիշատակ, իմ մի լուսանկարը: Լուսանկարված եմ Եփրատի ափին, անցյալ տարի՝ Տեր-Չորի անապատներից Նալեպ վերադառնալու հանապարհին:

Չարյան Ռուբեն



Ըստ հարգելի պրն Ասասուր,

Ձեր վերջին նամակը ստացա: Շտապում եմ անմիջապես պատասխանել: Ուրախ եմ, որ ուղարկածս նյութերը տեղ են հասել եւ հենց այն են, ինչ որ պետք էր Ձեզ: Մնացածը Ձեր գործն է:

Ինչ վերաբերում է գրքիս՝ «Ադամյանի Շեքսպիրին», ապա ասեմ, որ շուտով լույս կտեսնի դրա նոր եւ առանձին տպագրությունը (1963-ին լույս է տեսել առանձին ռուսերեն թարգմանությամբ, իսկ մինչ այդ հրատարակվել է «Ադամյանի արվեստը» գրքում 1960-ին): Երեւի ամենաուշը մի ամսից պատրաստ կլինի: Անմիջապես կուղարկեմ եւ Ձեզ, եւ պարոն Մավյանին:

Մի քանի օր առաջ Ձեր հասցեով գրքեր ուղարկեցի.

1. «Նայկական ժողովրդական հանելուկներ»,
2. «Ակնարկ հայ հարտարապետության պատմության»:

Վերջինից երկու օրինակ. մեկը Ձեզ, մյուսը սրբազանին:

Ուղարկում եմ նաեւ (այս նամակի հետ միաժամանակ) գրքիս ռուսերեն թարգմանությունից մի օրինակ, թող լինի Ձեր տրամադրության տակ որպես նմուշ:

Սրտագին բարեւներ ձերոնց:

Նա՞յր եք արդեն: Եթե այո, խառնեք իմ խնդությունը Ձեր ուրախությանը եւ համբուրեք վաստակած մոր աջը:

Եղբայրական սիրով՝ Ձեր Չարյան

Ն.Գ. Չանգահարեցի Սփյուռքահայ կոմիտե ընկ. Վ. Նամազասպյանին գրքերի համար: Նայտնեց իր պատրաստակամությունը օգնելու, միայն խնդրեց մի գրությամբ դիմել իրեն եւ հայտնել, թե ինչ բնույթի գրականություն է Ձեր խմբագրության ուզածը:

Անհամբերությամբ սպասում եմ նամակում խոստացված շեքսպիրյան գրքերին:

Չարյան Ռուբեն



Հարգելի ու սիրելի բարեկամ,

Երեկ այցելեց ինձ երաժշտագիտուհի Աննա Պարսամյանը, իսկ այսօր Ցիցիլյա Բրուսյանը եւ երկուսն էլ հանձնեցին շեքսպիրյան գրադարանի համար ուղարկած գրքերը:

Շատ եւ շատ շնորհակալ եմ, մանավանդ որ այդ հրատարակությունները գրադարանում չկային: Եթե կրկնվեին էլ, ոչինչ, որովհետեւ մի այդպիսի գրադարան պետք է ունենա փոխանակման բաժին, որով կարելիություն ստանա ժամանակի ընթացքում գրքերի փոխանակություններ կատարել եւ այդ ձեռով լրացնել իր պակասները:

Խնդրում եմ շնորհակալություն հայտնել Պսակ Սրբազանին, նրա ուղարկածը մեծարժեք գիրք է:

Օգոստոսի սկզբներին ուղարկել էի նամակ եւ գրքեր Ձեզ եւ Պսակ Սրբազանին: Չարձագանքեցիք: Այդպես էլ չհասկացա՝ ստացե՞լ եք, թե ոչ:

Այս նամակիս հետ փոստին եմ հանձնում մի գիրք Ձեզ համար՝ «Առաջին համաշխարհային պատերազմը եւ արեւմտահայությունը», կարծում եմ, որ հետաքրքիր կլինի:

Մի խնդրանք:

Քանի որ Դուք Ննդկաստանից եք տեղափոխվել Լոնդոն, ուրեմն պետք է կարծել, որ այնտեղ ընկերներ ու մտերիմ մարդիկ ունեք: Ննարավոր չե՞ք համարում, արդյոք, գրել նրանց եւ խնդրեք, որ Երևան, իմ անունով Շեքսպիրի հնդկական թարգմանություններ ուղարկեն, ինչպես նաեւ գիրք, գրքույկ, ուսումնասիրություն նրա մասին, եթե այդպիսիք կան:

Երեկ Նարավսլավիայից, Մատենադարանի գիտական քարտուղարի՝ Վարդան Գրիգորյանի խնդրանքով, ստացվեց Շեքսպիրի սերբական թարգմանության առաջին հատորը:

Խնդրում եմ հայտնեք ինձ Ձեր աներոջ անունը եւ ազգանունը: Գիրքս դեռ լույս չի տեսել: Նենց որ լինի՝ անմիջապես կուղարկեմ:

Ողջույններ տիկնոջը եւ ձերոնց ընդհանրապես:

Սիրով եւ կարոտով՝ Ձեր Չարյան

Տ.Գ. Կարծում էի, թե այս նամակը ուղարկել եմ, մինչդեռ մնացել էր թղթերիս մեջ: Ինքս էլ գնացել էի Մոսկվա՝ Լոուրենս Օլիվեի Օթելլոն նայելու: Տեսա երեք անգամ: Տրաշալի էր: Երեւի գրեմ: Այսօր ստացա սեպտեմբերի 23-ին Ձեր գրած նամակը: Սրտանց շնորհավորում եմ հայրանալու առիթով: Տեռվից հեռու համբուրում եմ տիկնոջը: Տազար ու ամենայն քարեմաղթություն: Թող անեն, մեծանան ի փառս մեր ժողովրդի: Օգտվում եմ առիթից հայտնելու, որ մի խումբ հայեր, մեծ մասը իմ ընկերներն ու ծանոթներն են, մի քանի օրից մեկնելու են Եվրոպայի շուրջը պտույտի: Դրանց մեջ են գրականագետ Վ. Պարտիզունին, դրամատուրգ Գ. Տեր-Գրիգորյանը, իմ քարեկամուհիներից մեկը Արուս Պապոյանը եւ ուրիշներ: Նրանք ճանապարհվում են «Պուշկին» ջերմանավով: Լոնդոնում լինելու են հոկտեմբերի 23-ից մինչեւ 25-ը: Արժե հանդիպում կազմակերպել Լոնդոնի հայկական տանը:

Պարտիզունին եւ Տեր-Գրիգորյանը կարող են հետաքրքիր ելույթներ ունենալ: Խնդրում եմ այս մասին հայտնել նաեւ պարոն Արտաշես Խաչատրյանին:

30.09.1965թ.



/ 26 հոկտեմբերի 1965թ., Երևան /

Շաս սիրելի Ասասուր,

Գիրքս լույս տեսավ: Շտապում եմ ուղարկել երկու օրինակ, մեկը Ձեզ, մյուսը՝ Պսակ Սրբազանին:

Ձեր առաջարկի համաձայն՝ մեկ օրինակ էլ ուղարկում եմ Վահրամ Մավյանին, թեեւ ասեմ Ձեզ, որ գրածս նամակը նա թողեց անպատասխան:

Տուսով եմ, որ Դուք եռանդով գործի կանցնեք: Չեք կարող երեւակայել, թե որքան անհրաժեշտ մի բան է մեզ համար՝ մեր ազգային հպարտություններից մեկին՝ Ադամյանին Շեքսպիրի հայրենիքում ճանաչեցնել տալը:

Կարդացի՞ք «Գրական թերթում» չէիս շեքսպիրագետի նամակը Ադամյանի մասին: Շատ լավ է, այնպե՞ս չէ: Երկրորդելով ռուսներին,

չէիսն ասում է՝ եթէ Ադամյանը հանդես գար նաեւ Եվրոպայում, նա Արեւմուտքում նույնքան մի հռչակված անուն կլինէր, ինչպէս Քինը, Իրվինգը եւ մյուսները:

Մի անմակագիր օրինակ էլ ուղարկում եմ՝ պետք եղած ժամանակ անգլիացիներին ցույց տալու կամ Ձեր հայեցողությամբ որեւէ մեկին նվիրելու համար:

Տան մեծերին ողջուն, նորընծա մորը՝ եւ ողջուն, եւ համբույր:

Սիրով եւ հույսերով՝

Ձեր Ջարյան

Ն.Գ. Նամակիս կցում եմ Շեքսպիրին վերաբերող մատենագիտական բնույթի երեք գրքի անուն: Դրանք խիստ անհրաժեշտ են գրադարանի գործն ավելի հիմնավոր կերպով ծավալելու համար: Գրեցի՞ք նամակ Ձեր հնդկահայ բարեկամներին շեքսպիրյան թարգմանությունների եւ աշխատությունների վերաբերյալ:

Նույն



/ 15 նոյեմբերի, 1965թ., Երևան /

Կաս սիրելի պրն Ասասուր,

Ձեր վերջին նամակը, որ գրել եք նոյեմբերի 3-ին, ստացա:

Գիրքս, որ ուղարկել եմ Ձեզ, հուսով եմ, որ արդեն ստացած կլինէք, կամ այս մի քանի օրը կստանաք: Չեմ կասկածում, որ Ձեզ դուր կգա: Խոսքը ոչ թէ բովանդակության մասին է, այլ արտաքին տեսքի, որով այն ներկայանում է ընթերցողին:

Ինձ շատ ուրախացնում եւ գոտեպնդում է Ձեր վերաբերմունքը: Չեմ կասկածում, որ Ձեր նպատակին կհասնէք, մանավանդ եթէ այդտեղ աջակից հայրենասերներ գտնվեն, այնպիսիք, որ հասկանան, թէ որքան կշահի մեր մշակույթը, եթէ Շեքսպիրի հայրենակիցները պատկերացում կազմեն, թէ ի դեմս՝ Ադամյանի հայ թատրոնն ինչ էական ներդրում է կատարել անգլիական հանճարի երկերի բեմական պատմության մեջ:

Տեղյակ պահեմ Ձեզ, որ գրքիցս մի օրինակ ուղարկել եմ նաև Չառլզ Դոուսեթին:

Ձգացված եմ ու շնորհակալ Ձեր այն ազնիվ մտահոգության համար, որի շնորհիվ մոտ ժամանակներս Շեքսպիրյան գրադարանը կապահովվի հնդկական տասներեք քարգմանություններով:

Իմ դասախոսության մասին Ձեր գրած ընդարձակ հաղորդումը կարդացի «Լրաբերում» (խմբագրությունից չեմ ստացել, բայց ունեմ Ձեր ուղարկածը): Նորերս ստացա Գահիրեի «Ջահակիբի» այն երկու համարը, որտեղ տպագրվել է նույն հոդվածը (խմբագրությունն էր ուղարկել): «Սեւանը» չեմ տեսել երեւի կուղարկեն: Ահա կարծես, ամբողջը:

Ձեր շեքսպիրագետի նամակը լույս է տեսել «Գրական թերթի» 42-րդ համարում (հոկտեմբերի 15):

Ձեր աներհայրը չի գանգել: Գալստյանին, դժբախտաբար չեմ հանդիպել: Թե՛ մեկին, թե՛ մյուսին ջերմ բարեւներ:

Ձերմ ողջույններ հարցնողաց:

*Սրտագին բարեմտադրություններով՝
Ձեր Չարլզան*



/ 6 դեկտեմբերի 1965թ., Երևան /

Ըստ սիրելի պրն Ասասուր,

Ստացա Ձեր 10.11.1965 թվակիր նամակը: Եվ շատ ուրախացա: Մի քանի օր անց ստացա պրն Մավյանի նամակը եւ հետո էլ նրա ուղարկած գրքերը՝ Շեքսպիրը պորտուգալերեն: Մավյանն ուղարկել է շուրջ 70 գիրք: Չափ չկա ուրախությանս: Այս երկու օրը նրան նամակ եմ գրելու եւ չգիտեմ, թե՛ ինչ բառեր պիտի գտնեմ շնորհակալությունս հայտնելու համար: Կարդացել եմ նրա գիրքը սրանից մի երկու ամիս առաջ: Ու շատ լավ կարծիքի եմ նրա գրական շնորհների մասին: Եվ նուրբ հեղինակի կողքին գտա հայրենասեր գործչին: Ես անչափ ուրախ եմ նրա ուղարկած գրքերի համար: Դա երեւի հիմա, այս օրերին իմ սրտին ավելի մոտ է, քան որեւէ այլ բան: Եվ այնուամենայնիվ, հավատացնում եմ Ձեզ, ավելի ուրախ եմ, այն բանի համար, որ Մավյանի արարքի մեջ գտա իրեն՝ մարդուն, քաղաքացուն, հայրենասերին, բա-

րեկամին, հասկացողին: Բացի Մավյանից, շնորհակալության պաշտոնական գրություն եմ հղելու պրն Ռոպեր Կյուլպենկյանին, քանի որ գրքերն ուղարկված են Գալուստ Կյուլպենկյան հաստատության կողմից: Բայց ես լավ եմ հասկանում, որ այդ ամենի համար պարտական եմ պրն Մավյանին:

Լավ կլիներ, եթե «Տայրենիքի ձայնում» մի հաղորդում տպագրվեր այն մասին, թե Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը Երեսանի Շեքսպիրի գրադարանին, որպես նվեր, ուղարկել է այս ինչ գրքերը: Տիմա, չգիտեմ, անե՞մ, թե չէ:

Գրքերի հիմնավոր ցուցակը Լիսաբոն ուղարկելու համար անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ այն երեք մատենագիտական գրքերը, որոնց մասին խնդրել էի Ձեզ:

Սրտագին բարեւներ տանեցիներին:

*Միրով եւ կարոտով՝
Ձեր Չարյան*

Ռուբեն Չարյան:





Ըստ սիրելի Ասասուր,

Ուղարկում եմ Ձեզ «Երեկոյան Երեւանի» այն համարները, որտեղ տպագրվել են պրոֆ. Գ. Բրուտյանի անգլիական տպավորությունները:

Շնորհավորում եմ Ձեզ եւ ձերոնց Նոր տարին: Թող լինի փառահեղ մի տարի, որի ընթացքում չկրկնվեն այն տարվա ձախորդությունները եւ ընդհակառակը՝ կրկնապատկվեն ու բազմանան բարին ու լավը: Թող աճեն ու մեծանան երեխաները ի ուրախություն տան մեծերի:

*Սիրով, կարոտով, համբույրներով՝
Ձեր Ջարյան Ռուբեն*



Ըստ սիրելի պրն Ասասուր,

Պատասխանում եմ ուշացումով, որովհետեւ Ձեր նամակը ստացվել է այն ժամանակ, երբ մեկնել էի Սոսկվա՝ Նովհաննես Աբելյանի երեկոյին մասնակցելու որպէս զեկուցող:

Դահլիճը ծայրեծայր լիքն էր: Ներկա էին երեւի հինգ հարյուրից ավելի մարդ: Շատերը չկարողանալով տոմս ձեռք բերել, հարկադրված եղան տուն դառնալ, մի մասն էլ դահլիճում տեղ չունենալով, նեմասրահում ունկնդրեց բարձրախոսներից: Երեկոն ջերմ էր եւ Աբելյանի անունը, որպէս հայ թատրոնի լուսավոր դեմքերից մեկը՝ հնչեց բարձր ու խորին հարգանքով: Այդ երեկոյի մթնոլորտի վրա թեւածում էր մի հպարտ զգացում, որ ապրում է մի ժողովուրդ՝ տեսնելով իր արժանավոր զավակին գնահատվելիս մի այլ ժողովուրդից:

Այսպիսի երեկոները շատ կարեւոր են, մանավանդ որ դրանք, ճանաչողական նշանակություն ունենալուց բացի, ժողովուրդներին մոտեցնում են միմյանց: Մարդիկ, որքան էլ տարբեր ազգի, որոնում ու գտնում են պատմության այն կետերը, որոնք միավորում եւ շաղկապում են ժողովուրդներին իրար հետ:

Այժմ մի երկու գործնական հարց:

Գրքի թարգմանության հարցը շատ էական է ինձ համար: Ի՞նչ համար միայն: Եթէ չեմ սխալվում, գրել եմ Ձեզ, հիմա էլ կրկնում եմ, որ

Աղամյանը (Աբելյանը) աշխարհ էր եկել՝ աշխարհին պատկանելու համար: Ու եթե նա, որպես արտիստ, մեծ համբավի հասավ հակայածավալ Ռուսաստանում եւ հիվանդությունը, ապա մահը խանգարեցին, որ անցնի Եվրոպա ու այնտեղ էլ հռչակվի, ապա մեր պարտքն է, սուրբ եւ անհետաձգելի պարտքը, ասել ամենքին, եւ նախ եւ առաջ օտարերկրացիներին, թե ինչպիսի՞ արտիստ ենք ունեցել եւ ումնով ենք աշխարհին ներկայանում: Եթե մի դեպքում թարգմանվում է «Սասունցի Դավիթը» ու մի այլ դեպքում պատմվում այն մասին, թե ինչ հարտարապետություն ենք ունեցել եւ ունենք, ապա հիմա էլ անգլիացիներին ասենք, թե ի դեմս Աղամյանի, Շեքսպիրը հայոց մեջ ինչ հրաշալի մեկնաբան է ունեցել:

Ես գուր եմ այս բոլորը գրում Ձեզ, սիրելի Ասատուր, որովհետեւ չեմ կասկածում, որ Դուք ինձանից լավ եք հասկանում դրա անհրաժեշտությունը: Ես վստահ եմ ու հանգիստ, որովհետեւ այդ գործը Ձեր սրտին մոտ է: Շատ ուրախ կլինեմ, եթե պարոն Մավյանը հանձն առնի: Տարցը միայն լեզվի իմացության մեջ չէ, այլ նաեւ նյութի: Իսկ նա քաջատեղյակ է: Ի դեպ ասեմ, որ սփյուռքահայ Կոմիտեի նախագահի՝ ընկ. Վ. Տամազասայանի հետ խոսեցի եւ նա ասաց, թե Մավյանը Նայաստանի գրողների առաջիկա համագումարի հրավիրվածների ցանկումն է:

Սրտագին բարեմաղթություններ ձերոնց

Ձեր՝ Չարյան Ռուբեն



/ 6 սպրիլի, 1966թ., Երեւան /

Ըստ սիրելի պրն Ասատուր,

Ստացա Ձեր ուղարկած Լուիս Մարդերի Շեքսպիրի փառքի պատմությանը նվիրված աշխատությունը՝ «Նրա ելքը եւ մուտքը»:

Շնորհակալություն:

Բացի ինքնին հետաքրքիր լինելուց, այս գիրքը արժեքավոր է հատկապես նրանով, որ վերջում կա շեքսպիրագիտական գրականության մի բավական ընդարձակ մատենագիտական ցանկ: Յանկում հիշված բազմաթիվ գրքերից 100-ն է ինձ անծանոթ: Եթե Մավյանը հնարավոր համարի՞ ցանկը կուղարկեմ Լիսաբոն, քանի որ մեզ հայտնի, բայց մեր

գրադարանում չեղած գրքերի թիվը 300-ից անցնում է: Այնպես որ, սիրելի բարեկամ, Ձեր ուղարկած գիրքը ինչ-որ չափով փոխարինեց մատենագիտական գրքերին, որոնք, հուսով եմ, որ մի օր կունենանք:

Խնդրում եմ բարեւել Ձերոնց՝ ամենամեծերից մինչեւ ամենափոքրերը:

Մեր գրադարանն ունի «Շեքսպիր սըրվոյի» բոլոր գրքերը, բացի 1, 2, 3 եւ 13 հատորյակները: Տնարավո՞ր չէ, որ մեր անգլիահայ բարեկամները օգտակար լինեին ամբողջացնելու գրքերի այդ շարքը: Տետո շատ հավանական է, որ արդեն լույս տեսած լինի կամ օրերս լույս տեսնելիս լինի 1966-1 հատորյակը, թվով 19-րդը, որ նույնպես չունենք:

Ողջույններ եւ համբույրներ

*Ձեր անկեղծ բարեկամ
Ջարյան Ռուբեն*



/ 10 մայիսի 1966թ., Երևան /

Կաս սիրելի պրն Ասասուր,

Ստացա Տրաչյա Ղափլանյանի միջոցով ուղարկած գրքերը:

Անչափ շնորհակալ եմ:

Ղափլանյանը վերադարձել է բավական հարուստ տպավորություններով: Շատ գոհ է Ձեր, հատկապես պրն Տայկ Գալստյանի ջերմ վերաբերմունքից:

Ձերմ բարեւներ ձերոնց:

*Կարոտալի ողջույններով՝
Ձեր Ջարյան Ռուբեն*



/ 22 հունիսի, 1966թ., Երևան /

Կաս հարգելի պրն Ասասուր,

Ստացել եմ Ձեր վերջին նամակը: Ձգացված եմ ուշադրության համար: Ստացել եմ նաեւ հինգ գիրք՝ Շեքսպիրի 9 գործի հնդկերեն թարգմանություն, որ ուղարկել է պրն Պետրոս Ալեքսյանը (Ձեր աներհա՞յրն է): Այսօր ուղարկեցի նրան շնորհակալական նամակ:

Շնորհակալ եմ Ձեր ուղարկած հասցեների համար: Կղիմեմ եւ, հույս ունեմ, անհետեւանք չի մնա խնդրանքս:

Սրտագին բարեւներ տիկնոջը, ընդհանրապէս մեծերից մինչեւ փոքրերը:

*Տարգանքներով ու սիրով՝
Ձեր Չարյան Ռուբեն*



/ 23 հունվարի 1970թ., Երևան /

Միրելի Ասասուր,

Կորած ու գտնված բարեկամ:

Տասցեդ չունեի, որ Նոր տարվա մաղթանքներ առաքեմ:

60-ամյակս նշվեց, չկարողացա տեղեկացնել քեզ:

Ինչեւէ, անցածն անցած է:

Տամոզված, որ այս տարի կհանդիպեմ քեզ Լոնդոնում, երեւի ապրիլ ամսին, հուսով եմ տեսնել քեզ առողջ, գեղեցիկ ու հաջողակ, ինչպէս եղել ես ու կլինես, քանի քեզնով զարդարվում է այս մեղավոր աշխարհը:

*Տամբույրներով՝
միշտ քո Չարյան Ռուբեն*



/ 2 ապրիլի 1970թ., Երևան /

Միրելի Ասասուր,

Վաղուց ոչ մի լուր չունեմ քեզանից, բացի Նոր տարվա շնորհավորական նամակից, որից խիստ զգացվեցի:

Ինչեւէ:

Տայտնում եմ քեզ, որ այս ամսի վերջերին, եթե տկարությունս չխանգարի, ապրիլի 28-ին Մոսկվայից սովետական մի ինքնաթիռ վայրէջք կկատարի Լոնդոնի օդանավակայանում: Ու երեւակայիր, որ այդ ինքնաթիռում կլինեմ նաեւ ես:

Ուրեմն կհանդիպեմք: Ես այս մասին գրել եմ Ձեր ընկերներից մի քանիսին: Տայտնում եմ եւ քեզ:

Տուսով եմ, որ կհանդիպենք, կգրուցենք:
Միրելի տիկնոջդ սրտագին ողջույններ:
Առայժմ այսքան:

*Մրտագին ողջույններով՝
միշտ քո Ջարյան Ռուբեն*



/ 16 դեկտեմբերի 1976թ., Երևան /

Ըստ սիրելի Ա. Գյուլելյան,

Նամակդ ստացա եւ առաջարկդ ինձ շատ հանելի թվաց: Ջգացված շնորհակալությունս եւ քեզ, եւ դ-ր Վրեժ Ներսիսյանին:

1. Տալիս եմ համաձայնությունս անգլերեն թարգմանությամբ լույս ընծայելու «Շեքսպիրը եւ հայերը» գրքույկը:

2. Կգրեմ մի երկու խոսք անգլիական թարգմանության առիթով: Ունե՞ս թելադրելիք միտք այդ կապակցությամբ, եթե այո, գրիր:

Շեքսպիրյան դերասանների նկարների ընտրություն կանեմ եւ կուղարկեմ անպայման:

Կուղարկեմ նաեւ կենսագրական տվյալներ:

Այսօր մեկնում եմ Մոսկվա մի շաբաթով: Կվերադառնամ, Նոր տարվա զվարթ օրերը կանցնեն եւ կանեմ ինչ-որ խոստացել եմ:

Այս նամակիս հետ փոստին եմ հանձնում նոր գիրքս՝ «Շեքսպիրի հետ» ու «Շեքսպիրը եւ հայերը» գրքի ֆրանսերեն թարգմանությունը:

Մրտագին բարեւներս դ-ր Վրեժ Ներսեսյանին:

Ինչպես է համակրելի տիկինդ, կողջունես:

*Միրով եւ հարգանքով՝
Ջարյան Ռուբեն*



Մեծարգո պարոն Գյուլելյան,

Պատիվ ունեմ հանելի մի առիթով գրելու ու ծանոթություն հաստատելու Ձեզ հետ:

Ինչպես Ձեզ քաջ հայտնի է, Տովհաննես Մասեհյանը իր Շեքսպիրյան թարգմանություններով մեր լեզվի հարստությունը եւ հարտաբարվեստը ներկայացրել է օտարներին: Նրա գործը մեծ խորհուրդ ունեցավ եւ ունի մեր ազգային գրականության համար: Մասեհյանի ժառանգությունը ուսումնասիրելու գործում լուրջ քայլ է արված եւ արվում հայաստանում: Հավաքված նյութերի մեջ պակասում են օտարների կարծիքը նրա եւ նրա թարգմանությունների մասին: Որոշ տեղեկությունների համաձայն Լոնդոնում լույս տեսած գրքերի եւ մամուլի մեջ կան բավական ընդարձակ ասույթներ՝ Մասեհյանի շուրջը: Դրանք իմ կարծիքով կարելի է գտնել Լոնդոնի Շեքսպիրյան գրադարանում:

Մեծագույն ծառայություն արած կլինեք մեր մշակույթին, եթե հնար եւ ժամանակ չխնայեք գրքերից կամ լրագրերից լուսանկարի եւ կամ ժապավենի վրա առնել տալով մեզ ուղարկելիք այդ քաղվածքները, նշելով աղբյուրները: Չեմ կասկածում, որ այդ պատիվ բերող գործը Ձեր մոտիկների միջոցով լրման կհասցնեք: Գիտեմ, հեշտ չէ, սակայն այդ որ գեղեցիկ գործն է, որ տառապանք չի պահանջում:

Մասեհյանը 1924թ. Լոնդոնի կայսերական մատենադարանում աշխատել է Շեքսպիրի գործերի վրա. Դա հաստատ է: Իրավունք եմ համարում խնդրելու արդյոք հնարավոր չէ գտնել նրա վերաբերյալ որեւէ տեղեկություն այդ գրադարանում:

Վերջին խնդրանքս է. 1927-1929թթ. Մասեհյանը Պարսից դեսպանն էր Լոնդոնում: Նա անշուշտ լայն շրջապատ ունեցած կլինի մայրաքաղաքում: Թերեւս այժմ նրան հանաչողներից ապրողներ լինեն եւ չզլանան իրենց գրավոր խոսքը ասեն նրա մասին: Իսկ եթե հնարավոր լիներ արտաքին գործերի մինիստրության արխիվից մի քանի գրությունների պատճեն դուրս բերել, այդ արդեն անգնահատելի երեսույթ կլիներ մեր բանասիրության համար:

Կրկնում եմ դժվար է, իհարկե, բայց գրավիչ եւ հմայիչ գործ արած կլինեք, թողնելով պանծալի եւ բարի անուն մեր գրականության մեջ:

Նախապես շնորհակալ եմ եւ հույսով:
Տարգանքով՝ Վարազդատ Վարդանյան

Տ.Գ. Նույն խնդրով ես դիմել եմ Տայկական գրադարանի տնօրենունի Վարդուկյանին: Լիահույս եմ, որ միացյալ ուժերով բավարարություն կտաք իմ հետաքրքրությանը:

Կարող եք գրել. Երեւան, Աբովյան նո. 15

Արվեստի ինստիտուտ, պրոֆեսոր Ռուբեն Զարյանին
կամ՝

Իմ հասցեն ծրարի վրա. Երեւան 33, Բարեկամության 89, Վ.Վ.

Զարյան Ռուբեն



/ 3 նոյեմբերի 1965թ. /

Շաս սիրելի Փրոֆ. Ռ. Զարեան,

Շնորհակալութեամբ ստացայ Ձեր 26.10.65 թուակիր նամակը: Ձեր գիրքը չեմ ստացած տակաւին, յոյս ունիմ մօտ ապագային ան ալ կը հասնի: Կը ցաւիմ, որ Վահրամը չէ պատասխանած ձեր նամակին... կ'երեւի իր վերջին գրքին՝ Տայու Բեկորներուն բերած յաջողութեան գեղեցիկ նիրհէն չէ արթնցած տակաւին:

Ամեն պարագայի տակ, երբ գիրքը ստանամ պիտի աշխատիմ յանձնախումբ մը կազմել եւ գործի սկսիլ. Բարեբախտաբար քանի մը լաւ անգլերէն գիտցող հայեր ունինք Լոնտոնի մէջ: Կը յուսամ որ առաջարկս դրական պատասխան մը կ'ապահովէ իրենցմէ:

Դժբախտաբար «Գրական թերթ»-ի մէջ լոյս տեսած չէիս շեքսպիրագէտին նամակը կարդալու հնարաւորութիւն չունեցայ: Մեր տրամադրութեան տակ եղող բոլոր «Գրական թերթ»-երը աչքէ անցուցի, բայց նման գրութեան մը չհանդիպեցայ:

Ձեր ուզած երեք գիրքերը գտնելու համար այս շաբթու մէջ պետք է այցելեմ քանի մը մեծ գրախանութներ: Արդիւնքը կը գրեմ ձեզի շուտով:

Տնդկաստան աներձագիս գրած եմ, որպէսզի հնդկական լեզուներով շեքսպիրեան ինչ գիրք որ գտնէ, դրկէ ինձի: Ինչպէս գիտեք, Շեքսպիրի գործերէն քանի մը հատը պենկալերէնի թարգմանեցին

Ռ. Թակոր եւ եղբայրը: Գրած են աներձագիս, որ գոնէ հնդկական գրական 13 լեզուներով մեկական նմոյշ ապահովէ ձեզի համար:

Ներփակ կը գտնէք խոստացուած յայտագիրին ֆոտոպատճենը. բնագիրը կը պատկանի պրն Ն. Գալուստեանին, որ ներկայիս կը գտնուի Երեւան:

Երեւան կը գտնուի նաեւ աներհայրս: Տաւանաքար հոն մնայ մինչեւ ամսոյս 16ը, ձեր հեռախօսին թիւը տուած են իրեն: Վստահ են ձեզի հետ յարաբերութեան մէջ կը մտնէ:

Լոնտոնի մէջ նորութիւններ չկան: Ձեր ողջունները հաղորդեցի Պսակ Սրբազանին, շատ գոհ մնաց եւ խնդրեց որ փոխադարձաբար իր ողջունները փոխանցեմ ձեզի: Նոյ. 29-ին դասախօսեցի Նայ Տան մէջ, նիւթ ունենալով, «Նախամաշտոցեան հայ գիրի եւ գրականութեան առեղծուածը»: Դասախօսութեան միայն 15 հոգիներ ներկայ գտնուեցան...: Ահա փոքրիկ համայնքի մը մեծ ողբերգութիւնը:

Կ'ուզէի գիտնալ թէ ձեր Լոնտոնի դասախօսութեան մասին գրած յօդուածս դրկեցին ձեր հասցեին արտասահմանեան թերթերը: Յօդուածը լոյս տեսաւ քանի մը տարբեր թերթերու մէջ, ինչպէս «Չահակի» - Եգիպտոս, «Լրաբեր» - Նիւ Եորք, «Մեւան» - Նարաւայի Ամերիկա եւ այլն:

Մերոնք բոլորն ալ հանգիստ են եւ կը յղեն ջերմ բարեւներ:

Լաւագոյն զգացումներով եւ սիրով Ձեր՝

Կիլգելեան Ասատուր



Միւրի Փրոֆ. Չարեան,

Ստացած են ձեր զոյգ նամակները, ինչպէս նաեւ «Սփիւոքը հայ իրականութեան մէջ» նիւթի շուրջ գրութիւնը, որոնց համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւններ:

Ձեր դրկած գրութիւնը այնքան հետաքրքրական ու շահեկան գտայ, որ որոշեցի զայն ընթերցողներու ատելի լայն զանգուածի մը սեփականութիւնը դարձնել որպէս դասախօսութեան հաղորդում՝ առանց որեւէ յապաւումի, զայն դրկեցի հետեւեալ թերթերուն. «Աշխարհ» (Փարիզ), «Չահակի» (Գահիրէ), «Սփիւոք» (Պէյրութ), «Նոր կեանք»

(Պուխարեստ), «Լրաբեր» (Նիւ Եորք) եւ «Շարժում» (Պուենոս Այրես): Այս ընտրութիւնը ըրի աշխարհագրական տարածութիւնները նկատի ունենալով: Կը յուսամ առանց ձեր արտօնութեան առած քայլիս չէք հակառակիր: Խնդրեր եմ յիշեալ թերթերէն, որ յօդուածը տպագրելու պարագային ձեզի դրկեն տուեալ թերթերէն:

Գալով ձեր գրքի անգլերէն թարգմանութեան հարցին՝ գրեցի Լիզբոն, բարեկամիս՝ Վահրամ Մավեանին, որ շատ լաւ անգլերէն գիտէ եւ նիւթին ալ տեղեակ է, որպէսզի ինք ստանձնէ թարգմանութեան գործը: Նախքան որոշում մը տալը՝ կ'ուզէ ծանօթանալ գրքին հետ. ուստի սիրելի փրոֆ., եթէ հնարաւոր է բարի եղէք օրինակ մը դրկել իրեն... օրինակ մըն ալ ինծի՛ բայց հայերէնով: Վահրամը յիշած էր իր նամակին մէջ, որ դուք դիմած էք իրեն եւ փափաքած էք ունենալ իր դասախօսութիւնը Շեքսպիրի մասին: Արդեօք դրկե՞ց:

Մեր ազգային կեանքը կը շարունակէ փոթորկոտ մնալ, այնպէս որ Սրբազանին հետ Շեքսպիրեան գրադարանի մասին գործնական քայլեր առնելու առիթ չկայ: Բայց ես քանի մը կտոր Շեքսպիր ապահովեցի եւ արդէն շուտով կը դրկեմ, եթէ ձեզի պէտք չըլլան, ուրիշ գրադարանի մը տուէք:

Երէկ ստացայ նաեւ փրոֆ. Բրուտեանէն անգլերէն երկու յօդուած: Կը գրեմ իրեն յետոյ: Մերոնք ջերմ բարեւներ կը դրկին ձեզի:

Սրտագին բարեւներով՝ Կիւզելեան Աս.

Յ.Գ. Տայկական կապի ընկերութիւնը «Արեգակ»ին գիրք դրկելու հնարաւորութիւն ու՞նի: Բարի եղէք այս հարցով հետաքրքրուիլ. կ'ուզենք գրադարան մը սկսիլ:

Նոյն



/ 12 նոյեմբերի 1976թ., Երեւան /

Սիրելի Ռուբէն Չարեան, բարեկամ,

Ողջոյն Շեքսպիրի հայրենիքէն, ուր «բոլոր այդ շողշողանքները ոսկի չեն...»: Վերջին քանի մը տարիներուն մանաւանդ՝ երկրի տնտեսական վիճակը խիստ անբաղձալի պատկեր մը կը ներկայացնէ: Ժողովուրդը քանդուած կայսրութեան մը երբեմնի շքեղութեան պատրանք-

ներով կը սնանի, փոխանակ աշխատելու: Ֆրիկի Ֆալաքի չարխն է որ կը վարէ ոչ միայն անհատներու, այլ նաեւ ժողովուրդներու կեանքը:

Յստակ չէ մտքիս մէջ, թէ ինչպէս խզուեցաւ մեր նամակագրութեան կապը, կամ թէ ո՞վ էր մեղաւորը մեր երկուքէն: Կ'ենթադրեմ որ երկուքս ալ յանցաւոր եղած պէտք է ըլլանք: Կարեւոր կը նկատեմ յայտնել, որ միշտ ալ եղած էք մտածումներուս մէջ, հակառակ մեր նամակագրութեան կամուրջին քանդուելուն: Յանախ քու մասիդ հարցուցած եմ Լոնտոն այցելող հայաստանցի մտաւորականներուն եւ արուեստագէտներուն: 1973-ին, Վեհափառ Տայրապետին հրաւերով տասն օրուան համար այցելեցի Երեւան. ըսուեցաւ ինծի որ Տայաստան չէք գտնուիր այդ օրերուն:

Իմ մասին գրելիք շատ քան չկայ: 1974 Մարտէն մինչեւ 1976 Յունուար ԼՈՆՏՈՆ ամսաթերթը հրատարակեցի, որ հիմայ հանգուցեալ է արդէն: Զարմանալի ժողովուրդ ենք մենք, - այս պարագային ոչ Սարոյեանի- ըմբռնումով: Գրի, գրականութեան, արուեստի ու մշակոյթի անունով կը խօսինք միշտ աւելի բարձր, քան որեւ ուրիշ ժողովուրդ, սակայն կը մերժենք վճարովի թերթ կարդալ. մէկ գիշերուան մէջ քաղդախաղի սեղանին վրայ քանի մը հազար անգլիական կը կորսնցնենք, բայց երկու անգլիական չենք վճարեր գրքի մը: Տակասութիւններով,- սեւերով ու ներմակով, - հարուստ ժողովուրդ մըն ենք:

Նախկին աշակերտներէս Տոքթ. Վրէժ Ներսեսեանի հետ կը ծրագրենք քու «Շաքսպիրը եւ հայերը» գիրքդ անգլերէնի թարգմանել: Այս առնչութեամբ հետեալ խնդրանքները ունիմ.

1. Գրաւոր յայտնել համաձայնութիւնդ:
2. Անգլերէն հրատարակութեան համար գրել նախաբան մը:
3. Ղրկել շեքսպիրեան անուանի դերասաններու լուսանկարներ:
4. Ղրկել կենսագրութիւնդ:
5. Ընել առաջարկներ եւ թելադրութիւններ:

Յոյս ունիմ որ գիրքը լոյս տեսնէ Շեքսպիրագիտութեան Ինստիտուտի կողմէ, Լոնտոնի մէջ: Տարակոյս չունիմ որ գիրքը մեծ հետաքրքրութիւն պիտի արթնցնէ ընդհանրապէս Անգլիոյ մէջ, իսկ մասնաւորաբար՝ շեքսպիրագէտներու շրջանակէն ներս:

Ձերմ ողջոյններով եւ սիրով՝

Կիլգելեան Աս.

Էդիլյան Բագրաս



/ 26 հոկտեմբերի 1990թ., Երևան /

Հարգարժան պարոն Գյուզելյան,

Թույլ տվեք կրկին անգամ խորին երախտագիտությունս հայտնել ձեզ, Լոնդոնում ինձ ցուցաբերած հյուրընկալության համար: Ես մոտ օրերս մեկնում եմ Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Բոստոնում մասնակցելու միջազգային մի գիտաժողովի, նվիրված Նայկական բանավոր պատմությանը (Եղեռնից փրկված ծերունիների հիշողությունների եւ վկայությունների արձանագրմանը): Նայկական Նանրագիտարանի տնօրինության հետ համաձայնեցրել եմ մի ծրագիր, որը պիտի փորձեմ իրականացնել գիտաժողովից հետո Ամերիկայում, այն է՝ ՏՏ-ի թարգմանությունն ու հրատարակումը անգլերեն (ներկայիս քառահատոր տարբերակի, որը բացառում է ընդհանուր համամարդկային տեղեկությունները, թողնելով միայն հայկականը: Առաջին հատորը արդեն լույս է տեսել): Եթե այս ծրագիրը Միացյալ Նահանգներում բավական հետաքրքրություն չհարուցի, հավանաբար արժե այն փորձել Անգլիայում, որտեղ հին ավանդույթներ կան տարբեր կարգի reference գրականության հրատարակման գործում: Ննարավո՞ր է արդյոք Նյու-Յորքի Անգլիական հյուպատոսարան դիմելուց նորից վկայակոչել Ձեր անունը՝ Նյու-Յորք ժամանելուն պես (6 նոյեմբեր, 1990), ես ձեզ կհեռաձայնեմ, պատասխանը ստանալու համար:

Ննարավոր է, որ մոտ օրերս իմ ծանոթներից մեկը Լոնդոն բերի իմ անունից մի փոքր փաթեթ եւ հանձնի ձեզ, եթե դժվար չէ, չէի՞ք կարող արդյոք այն պահել մինչեւ իմ հեռախոսելը կամ անձամբ գալը:

Գեւորզը հետաքրքրվում է, ստացա՞ք արդյոք իր ուղարկած «Մարգարտաշար» ժողովածուն եւ ամենայն բարիք է մաղթում Գյուզելյանների ընտանիքին: Ձերն բարեւներ տիկ Վիվիենին և սքանչելի դստրիկներին:

P.S. Հարգելի պարոն Գյուզելյան: Օգտվելով առիթից ձեզ եմ հղում իմ ամենաջերմ բարեւները եւ շնորհակալության զգացումները այն ընդունելության համար, որ դուք ինձ ցուցաբերեցիք Լոնդոնում: Տուտով եմ շուտով ձեզ տեսնել Երեւանում:

Միշտ լավ հուշերով՝ դ-ր Էդիլյան Բագրաս

Էմին Արսաճես Գեորգի

4.01.1961, Երևան, Հայկական ԽՍՀ:
Հայ թարգմանիչ: Հայաստանի գրողների միության անդամ
(1991թ.): ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2015թ.)



🔗 Սիրելի պրն Ասասուր եւ ընսանիւ,

Թույր տվեք մաղթել ձեզ երջանիկ Սր Ծնունդ եւ ամենայն բարիք գալիք Նոր տարում: Եղեք առողջ եւ անհոգ: Կրկին անգամ անչափ շնորհակալություն Ձեր ջերմ վերաբերմունքի եւ օժանդակության համար Լոնդոնում: Հուսով եմ ի վերջո հնարավորություն ունենալ Ձեզ ընդունել Երեւանում:

Ձերն բարեւներով՝ Արտաշես Էմին



/ 1 փետրվարի 1991թ., Փարիզ /

Սիրելի պրն Գյուպեւյան,+

Կրկին խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեզ անգնահատելի օժանդակության համար, առանց որի Փարիզի իմ ուղեորությունը բազմապատիկ ավելի տխուր կանցներ: Հուսով եմ, որ լավ եք, տիկին Վիվիենը, Կարինեն ու Արմինեն էլ հետը: Ձերն բարեւներ բոլորին, ինչպես նաեւ Վարդանին ու առիթ եղած դեպքում Հովիկին: Ես այստեղ կմնամ մինչեւ փետրվարի 12-ը, որից հետո կմեկնեմ ուղիղ Երեւան, որտեղից առայժմ ոչ մի մխիթարական լուր չի հասնում: Հուսանք, որ ամեն ինչ ի վերջո կարգի կընկնի:

Հարգանքներով՝ Արտաշես Էմին



Հարգարժան պարոն Ասատուր եւ ընտանիք,

Թույլ տվեք (աններելի ուշացումով) իմ խորին երախտագիտությունը հայտնել Ձեզ այն հիասքանչ ընդունելության համար, որ ձեր ընտանիքը ցուցաբերեց ինձ այս գարնանը: Անմոռանալի օրեր էին, որ ես անցկացրի Լոնդոնում: Պարոն Ասատուր, ձեր բարյացակամությունն անգերազանցելի է, ինչպես նաեւ տիկին Վիվիենի պատրաստած անման կերակուրների բույրն ու համը: Դատրիկների հմայքն ու խելքը առանձին խոսակցության են արժանի: Ի դեպ, թող հաղթահարեն իրենց այդքան սազող ամոթխածությունը եւ վերջապես գան Տայաստան (հիշեցնեմ, British Council-ը ամեն տարի Երեսան անգլերենի ուսուցիչներ է ուղարկում): Մենք հոգ կտանենք մնացածի մասին:

Գեորգը որոշ ժամանակ հիվանդանոցում էր եւ շատ անհանգստացավ, երբ որ Նայջիրիայում ինչ-որ խժոժություններ եղան, ասում էր, հանկարծ Ասատուրի գործը չտուժի: Տեսո, փառք Աստծո, ամեն ինչ իր տեղն ընկավ, այսինքն՝ եւ Նայջիրիան, եւ Գեորգի առողջությունը: Տիմա տիկնոջ հետ հանգստանում է Դիլիջանում, շուտով կվերադառնա: Մեր գործերը վատ չեն, տղաս՝ Ասպետը, արդեն երկրորդ դասարան է գնալու, ես էլ առաջվա պես դաս եմ տալու համալսարանում, չնայած, ինչ մեղքս թաքցնեմ, Լոնդոնը մտքիցս դուրս չի գալիս՝ ախր շատ լավ տեղ էր (նույնիսկ բսե-երը չհաշված): Նոյեմբեր ամսին գնալու եմ Բոստոն գիտական մի ժողովի մասնակցելու, բայց այս անգամ առանց արկածախնդրության, ճանապարհից երեւի էլ չջեղվեմ: Ինչեւէ, խնդրում եմ նաեւ ջերմ բարեւներ հաղորդեք Վարդանին, իսկ Վարդանն էլ իր հերթին՝ իր աներհորը, շատ հաճելի hombre էր: Ինչպես նաեւ, եթե առիթ լինի՝ Տովիկին, որի հասցեն չունեմ (եթե դժվար չի, գուցե ինձ ուղարկեիք Տովիկի հասցեն):

Կրկին անսահման շնորհակալություն եւ բարեմաղթանքներ

Միրով՝ Արտաշես



Հարգելի պրն Ասատուր,

Տուսով եմ նամակս Ձեզ կգտնի ինչպես միշտ առողջ եւ բարեկեցիկ: Բագրատը հիացմունքով էր պատմում Ձեզ հետ իր հանդիպումների մասին: Ես այստեղ ընդունվել եմ աշխատանքի, Տայաստանում Կանադայի դիվանագիտական ներկայացուցչություն: Գետորգը վատ չի, Տայաստանի վիճակը կամաց-կամաց (ցավոք՝ շատ դանդաղ ու բազում խոչընդոտներով) բարելավվում է: Դրա ապացույցներից մեկն է իմ լավ ընկերոջ (եւ լավ մարդու)՝ Վահրամ Կաժոյանի Լոնդոն գալը, որը եւ բերում է նամակս: Նա աշխատում է Տայաստանի Տանրապետության Արտաքին գործոց նախարարությունում եւ երեք ամսով գործուղվում է Անգլիա, Leed-ի համալսարանում դիվանագիտություն ուսանելու: Տուսով եմ, առիթ կունենաք գնահատելու նրա extensive bachelor լեզվի լավ իմացությունը:

Ձերմ բարեւներ տիկ Վիվիենին ու հմայիչ աղջիկներին:

Տարգանքով՝ Արտաշես Էմին



Երեւան, Դեմիքնեան փողոց,

Սիրելի Արսաես,

Խոր վշտով լսեցի Գեորգի մահուան գուժը: Դու կորցրիր սիրելի հօրդ, ես՝ վաղեմի մտերիմ ընկերոջս, իսկ ազգը՝ իր ամենատաղանդատր զուգահեռներից մեկին: Շատ բան որբացաւ Գեորգ Էմինի մահուամբ: Նա երիտասարդ գրողների՝ յատկապէս բանաստեղծների ճանապարհին՝ լուսաւոր փարոսը հանդիսացաւ շուրջ կէս դար:

Այսօր, սիրելի Արտաշէս, չեմ ուզում խօսել Գեորգ Էմին ՄԵԾ գրողի մասին, ոչ էլ մտնել՝ մեր 35 տարիների մտերմութեան արգանդից ծնած յուշերի գանձատունը...: Նրանց կանդրադառնամ, երբ մտածումներիս աչքերում չորանայ արցունքը վշտի:

Մի փոքրիկ դրուագ միայն:

Տարիներ առաջ Գեորգի բանաստեղծութիւնների անգլերէն հաւաքածոն նուիրեցի գրական հետաքրքրութիւններ ունեցող նիգերացի մի նախարարի: Վեց ամիս լետոյ նախարարը այցելեց ինձ Լոնդոնում:

«Գեորգ Էմինը հանճարեղ բանաստեղծ է, մի քանի բառով նա կարողանում է ընթերցողի մտքի առաջ բացել փիլիսոփայական մի ամբողջ աշխարհ», ասաց եւ արտասանեց հետեւեալ տողերը.

Աւելի կարճ բառ,

Քան «Ոչ»-ն ու «Այո»-ն,

Չկայ, չես գտնի աշխարհում արար,

Բայց յաճախ կեանքրդ հերիք չի անում,

մի «Այո» կամ «Ոչ» ասելու համար:

Որքան չերգուած երգեր, չիրագործուած երազներ, ԱՅՈ-ներով և ՈԶ-երով լղի չասուած խօսքեր տարաւ Գեորգը իր հետ: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Մեծութիւնները հրաժեշտ չեն տալ իս կեանքին երագներից ու խոհերից սննանկացած...:


Սիրելի Արտաշէս, ընդունիր Կիւզելեան ընտանիքի խորին ցաւակցութիւնները եւ փոխանցիր՝ Էմին ընտանիքի հարազատներին եւ հօրդ գրչեղբայրներին Նայաստանի Գրողների Միութեան վարչութեան միջոցաւ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Կիւզելեան Ասատուր

Էմին Քեուրզ

(Կառլեն Մուրադյան):
30.09.1919, Աշտարակ, 11.06.1998, Երեւան, թաղված է
Աշտարակի Կարմրավոր եկեղեցու բակում:
Հայ գրող, բանաստեղծ, թարգմանիչ, ԽՍՀՄ պետական
մրցանակի կրկնակի դափնեկիր (1951, «Նոր ճանապարհ»
ժողովածուի համար եւ 1976, «Դար, հող, սեր»
բանաստեղծությունների գրքի համար), Չարենցի անվան
մրցանակի դափնեկիր (1979), ԽՍՀՄ գրողների միության
անդամ 1942 թվականից, ԽՄԿԿ անդամ 1953 թվականից:



🔗 Սիրելի Ասասուր, Վիվիեն եւ դստեր,

Մեր ցուրտ, խավար եւ քաղցած Երեւանից շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա սեմին եւ ցանկանում եմ լույս, ջերմություն եւ ամենայն բարիք:

Ստացա՞ր իմ նամակը:

Քեուրզ Էմին

🔗 Սիրելի Ասասուր,

Շնորհավորում եմ Քեզ, քո պարագաներին և հարազատ-մոտիկ-ընկերներին Նոր տարվա սեմին եւ ցանկանում եմ ամենայն բարիք ու այդ թվում եւ մեր հանդիպումը այս Սրբազան լեռան լանջին, այս ծառերի ներքո, իմ հայրենի Աշտարակ գյուղում: Ձերմ ողջույններս եւ բարեմաղթանքներս Ձեր գաղութի բոլոր ազնիվ ու հայրենասեր մարդկանց, որոնք հույս ունեն, որ օրերից մի օր, քո նախաձեռնությամբ ու եռանդուն ջանքերով ինձ հնարավորություն կընձեռնեն տեսնել նաեւ Ձեր գաղութը:

Տամբույրով Քեուրզ Էմին

Ն.Գ. Ո՞ր ես կորել, ինչո՞ւ չես գրում, ինչ ես մտածում...



/ 30 հունվարի 1964թ. /

Միրելի Ասասուր,

Շնորհավորում եմ քեզ, քո մոտիկներին ու հարազատներին Նոր տարվա առթիվ եւ ցանկանում եմ քաջառողջություն, երջանկություն եւ հաջողություն

ներ կյանքում, հատկապես այն բնագավառում, որ է մեր եւ սփյուռքի կապերը եւ նոր սերնդի հայեցի դաստիարակությունը: Քո «վեհափառական» բացիկը ստացել եմ: Գրիր մանրամասն: Ողջույն բոլոր ազնիվ հայերին, որք բնակեալ կան ի Տնդկաստան...

Փետրոզ Էմին



/ 3 մարտի 1964 Երևան /

Միրելի Ասասուր,

Ստացա քո շատ անուշ եւ շատ խելացի, ազնիվ նամակդ եւ ուրախ եմ որ այդպես ես մտածում եւ զգում քո ժողովուրդն ու հայրենիքը, ուրախանում եմ քո հիանալի մտքերի համար եւ ամենայն սրտով հաջողություն մաղթում: Ես հավանաբար մարտի վերջին կամ ապրիլի սկզբներին կմեկնեմ Լիբանան եւ Միրիա (տեղի առաջադիմական կազմակերպությունների ու գրողների միության հրավերով):

Փետրոզ Էմինի, նրա կնոջ եւ մի խումբ աշտարակցիների հետ: Աշտարակ, 1963թ.:



Առիթը Սայաթ Նովայի 250 ամյակն է, որ խաղաղության համաշխարհային խորհրդի որոշումով տոնվում է ամենուրեք: Այ թե հիանալի բան կլիներ, եթե մենք հանդիպեինք Բեյրութում (չէ՞ որ ըստ քո ծրագրի դու պիտի մեկնես այնտեղ գարնանը): Այստեղ ասացին նորություններ չիք, բացի ձյունառատ եւ երկարատեւ ձմռանից: Ողջունում եմ քեզ եւ Կալկաթայի բոլոր ազնիվ հայրենասերներին (մեծից մինչեւ փոքրը, ծանոթից մինչեւ անծանոթը):

Յտեսություն Բեյրութում

Փետրոզ Էմին

Միրելիդ իմ Ասասուր,

Վաղուց քեզ չեմ տեսել, վերջին անգամ Երեւանում հայրենադարձների եւ սփյուռքի ժողովում (ակադեմիայում), որտեղ դու լավ եւ պրակտիկ, խելքը գլխին ելույթ ունեցար, բայց... Ժամանակ չունեցար ինձ հետ առնչվելու...

Անցյալ տարի Վ. Ուզունյանը Թեքեյան մշակութայինի անունից ինձ հրավիրել էր Անգլիա (ոչ մի անգամ չեմ եղել եւ չեմ տեսել..., բայց մինչև ձեւակերպեցին՝ ժամկետը անցավ):

Տիմա նրան երկու-երեք անգամ նամակով եւ մարդկանց միջոցով (Ծատուրյան, Տ. Մալյան եւ այլն) իմաց եմ տվել, որ նամակ գրի Նալաստանի Գրողների միության առ այն, որ իր հրավերը ուժի մեջ է մնում, որպեսզի ես կարողանամ գալ գոնե այս տարի (Շեքսպիրի սոնետների թարգմանության եւ գաղութի հայերի հետ հանդիպումներ ունենալու համար), սակայն մինչեւ այժմ Գրողների միությունը նրանից ոչ մի նամակ չի ստացել... խնդրում եմ, եթե կարող ես արագացրու այդ գործը...

Օգտվելով առիթից շնորհավորում եմ քո, քո մտերիմների եւ բարեկամների Նոր տարին եւ ցանկանում եմ ամենայն բարիք՝ այդ թվում եւ մեր հանդիպումը:

Փետրոզ Էմին



/ 1965թ. Երևան /

Միրելի Ասասուր,

Շնորհավորում եմ քեզ, ընտանիքիդ եւ Լոնդոնի հայոց գաղութի բոլոր ազնիվ հայրենասերներին Նոր տարվա առթիվ եւ ցանկանում ամենայն բարիք, իսկ «Արեգակիդ», որի շողերը երբեմն են ինձ հասնում, ավելի շատ լույս ու ջերմություն:

Փետրոգ Էմիև



/ 15 հունվարի 1965թ., Երևան /

Միրելի Ասասուր,

Ուրախ եմ, որ վերջապես ավարտվեց քո, առանց այն էլ աստանդական կյանքի, հերթական ողիսականը եւ դու, վերջապես, խարիսխ ձգեցիր Թեմզայի ավիին ու Լոնդոնի մառախուղի մեջ: Կրկնակի ուրախ եմ այն բարի լուրի առթիվ, որ Լոնդոնի, ցարդ համր հայկական գաղութը ոչ միայն քիչ-քիչ կազմակերպվում ու ամրանում է, այլեւ արդեն սկսում է... խոսել, եւ արդեն ունի իր լեզուն՝ «Արեգակը»...

Նուսով եմ, որ նրա շողերը պատռելով Լոնդոնի մշուշը կհասնեն մինչեւ այստեղ եւ մենք առիթ կունենանք հեռվից- հեռու տեսնելու քեզ եւ քո գործը:

Նոր տարվա շնորհավորանքներիս հետ միասին, հատկապես շնորհավորում եմ «Արեգակի» ծնունդը եւ, քանի որ ընդունված է նորածիններին նվեր տալ, ուղարկում եմ իմ վերջերս գրած անտիպ բանաստեղծություններից մեկը՝ «Խաղողի որթը» (եթե հավանես՝ կարող ես «Արեւերես» հանել):

Ողջույններով՝ Փետրոգ Էմիև



/ 12 դեկտեմբերի 1968թ., Երևան /

Միրելի Ասասուր,

Շատ զգացված եմ եւ շնորհակալ, որ նույնիսկ մինչեւ Լոնդոն հասնելը կատարել ես իմ խնդրանքը, ուղարկելով ինձ ծխելը թողնելու եւ տիկնոջս ուզած դեղամիջոցները: Դժբախտաբար դեռ չեմ կարող մտածել

ծխելը թողնելու մասին, որովհետեւ վերջերս մահացավ հայրս (երկարամյա ուսուցիչ, որ մեքենայի տակ էր ընկել եւ երեք տարի պառկած էր անկողնում ու տառապելով էլ հանգավ) եւ քնական է, որ ավելի շատ եմ ծխում...

Երբ անցնեն թաղման ու հիշատակի ծեսերը, իսկույն կաշխատեն օգտագործել քո ուղարկած բալասանը: Ի դեպ, քանի որ հարազատի մահը մարդուն ավելի ուշադիր է դարձնում յուրայինների նկատմամբ, նախօրոք քեզ ներողություն հայտնելով, խնդրում եմ կատարես մի վերջին խնդրանք էլ՝ իմ ազգականներից մեկի համար (S2 տարեկան, որի գործերը շատ վատ են, ուղարկես հոլանդական Sustenon «250» սրսկման դեղը կամ այդ տիպի մի այլ դեղ (կարծես ստիմուլյատոր պիտի լինի՝ ծերությունը կանխող):

Երեկ Նաիրի Ջարյանի կինը եկել էր մեր տուն՝ ցավակցելու մեր վշտին եւ ասաց, որ ամուսինը Լոնդոնում է ու պիտի մնա այնտեղ 10-15 օր: Շատ հարմար կլինի, որ այդ դեղը ուղարկես հենց նրա հետ:

Ձերմ ողջույններս քեզ, քո տիկնոջը, զավակներին, աներհորդ, զոքանչիդ եւ Լոնդոնի մեր բոլոր ընդհանուր ծանոթ-բարեկամներին, մինչեւ այն օրը, երբ ես էլ բախտ կունենամ քեզ հետ հանդիպել Ձեր տանը:

Եթե աստված հաջողի, ես հունվարի 13-ից մինչև 28-30-ը կլինեմ Ֆրանսիայում (գնում ենք 10 հոգով՝ Առնո Բաբաջանյան, Սուրեն Քոչարյան, Էմին, ճարտ. Էդ. Պալյան, ասմունքող Նրաչուհի Ջինանյան, ճարտ. Վ. Տարությունյան, Երեանի քաղաքագլխի տեղակալ Արամ Արամյան եւ այլն): Եթե կարողանաս գալ՝ շատ երջանիկ կլինեմ:

Ողջույններ մեր տներցիների եւ քո բազմաթիվ ընկեր բարեկամների կողմից:

Գեորգ Էմին



/ 1 հունվարի 1969թ., Երևան /

Միտելի Ասասուր,

Այս տարի չկարողացա ժամանակին քեզ շնորհավորել զի անցյալ տարին դժբախտության տարի եղավ – հայրս նոյեմբերի 8-ից վատացավ եւ մահացավ դեկտեմբերի 8-ին:

Աստված տա, որ այս տարին (նորը) անցնի առանց դժբախտությունների:

Ես հունվարի 10-ին մեկնում եմ Մոսկվա հայ մշակույթի գործիչների հետ Ֆրանսիա մեկնելու համար (հունվարի 13-ից մինչև 30 (1): Ինձ շատ անհանգստացնում է քո վիրահատման – գործողության հարցը՝ մանրամասն գրիր թե ի՞նչ է եղել:

Ողջույններս եւ շնորհավորանքներս Ձեր ընտանիքին եւ բարեկամ-ընկերներին:

Գեորգ Էմիլ



/ 8 հունվարի 1971թ., Երևան /

Սիրելի Ասասուր,

Ինչքան էլ հեռու լինենք իրարից ոչ մի օր չեմ մոռանում Քեզ, ամեն Նոր տարվա ցանկանում եմ, որ լինես ողջ-առողջ, զվարթ, երջանիկ եւ տեսնես քո բոլոր ծրագրերի իրագործումը (այդ թվում եւ ... Լոնդոնում ինձ հետ հանդիպելու ծրագրի, որ ավա՛ղ, ցարդ անկատար է մնացել):

Ձերն ողջույններս քո պայծառ ընտանիքին, աներհորդ եւ ընդհանրապես Ձեր գաղութի բոլոր ազնիվ եւ լավ մարդկանց ու հայրենասեր որդիներին:

Մտադիր չե՞ս այս տարի մեր կողմերը զալ, եթե աստված հաջողի, ես այս տարի 2-3 ամսով Ամերիկա պիտի գնամ (հրավեր ունեմ):

Ողջույններով Գեորգ Էմիլ



/ 3 մարտի 1987թ., Երևան /

Սիրելիդ իմ Ասասուր, ի տոնն Գյուլելյանց,

որ թարգմանի Սիրունյանց,

Վերջապես հասա Երեւան (մինչև հիմա Մոսկվայում էի եւ աշխատում էի իմ նոր գրքի վրա (ռուսերեն) եւ իսկույն եւեթ գրում եմ քեզ:

Այսօր մի խոսք գրեցի «Էրեբունի» թերթի հասցեով, շնորհակալական խոսք Անգլիո հայ գաղութի, ինձ հրավիրող կազմակերպություն-



Գեորգ Էմինի հետ:

ներին, այն կազմակերպություններին ու դպրոցներին, որտեղ ելույթներ են ունեցել, եւ իմ այն նոր բարեկամներին, որոնք ոչինչ չխնայեցին իմ այցելությունը արդյունավետ եւ հանելի դարձնելու համար: Անուններ, ավանդ, չէի կարող նշել (նույնիսկ չեմ նշել ինձ հրավիրող կազմակերպությունների տնօրենների անունները), որովհետեւ չգիտեմ, թե ինչպես պիտի ընկալվեր գաղութում այս կամ այն անվան առանձին հիշատակումը եւ ինչ «ըսի-ըսավներու» առիթ պիտի տար... (սա գրում եմ, որովհետեւ փոքր-ինչ գիտեմ Ձեր գաղութը...),- մանավանդ որ այդ անունները շատ են եւ նրանց ցանկը կարող էր գրավել իմ խոսքի կեսից ավելին...

Ես դեռ լոնդոնյան թղթերս չեմ բացել եւ չգիտեմ, թե ում հասցեն ունեմ, իսկ ումը մոռացել եմ վերցնել, դրա համար էլ Քեզ նախ եւ առաջ խնդրում եմ (անշուշտ քեզանից, Վիվիենից ու քո աղջիկներից հետո) ջերմ (հեռախոսային) բարեւներս հաղորդես Ռուբիկ Գալնյանին, Էդիկ Այվազյանին, Փիլիկյան եղբայրներին, Միամ Կարապետյանին, Իշխան Գրիգորյանին (տա՛ աստված, որ բոլորին հիշեմ, եթե ոչ, պիտի լրացնես Դու քո հայեցողությամբ...), Վարդան Սիմոնյանին, պարոն Արամին, Ժամագործին, դեղագործին եւ բոլոր այն մարդկանց, որոնց



Կարինե եւ Վիվիեն Գուլգեյաները Գեւորգ Էմիմի հետ: Լոնդոն, Գյուլգեյանների բնակարանում, 1987թ.

հետ հանդիպել եմ Լոնդոնում եւ այլուր՝ ոչ պաշտոնական շրջանակներում (քժիշկ Ռոստոմ Ստեփանյանին, Անուշ Մելջրին):

Նիմա, երբ արդեն ամեն ինչ անցյալ է, դժվարանում եմ պատկերացնել, թե ինչ կլիներ, կամ ինչքան թերի կլիներ իմ այցելությունը, եթե հանկարծ քո անիծյալ գրիպը երկար տևեր եւ մենք չհանդիպեինք ու չնորոգեինք մեր քսանհինգամյա բարեկամությունը...

Ինչ կլիներ առանց քո ջերմ ու սրտաբաց խառնվածքի, քո բանաստեղծական եւ միաժամանակ խիստ խելացի խառնվածքի, առանց քո տան ու օջախի ջերմության ու հարազատության, առանց Վիվիենի քրոջական հոգատարության ու երգ-նվագի, եւ քո խելացի ու հմայիչ աղջիկների...

Թող աստված, ինչպես ասում են, երկար պահի մեր հին ու ջերմ բարեկամությունը եւ քո ընտանիքն ու օջախը, որտեղ շատ սրտեր են ջերմացել՝ Արամ Խաչատրյանից մինչեւ «Ձեր խոնարհ ծառան»... Չմոռանաս Լոնդոնում մեր կնքած պայմանը,- դու պարտավոր ես մոտ ապագայում գրի առնել այն ամենը, ինչի միայն չնչի՛ն մի մասը առիթ ունեցար ինձ պատմել... այդ քեզ հրամայում է ոչ միայն մեր դպրությունը, այլև դպրեվանքն ու նրա ավանդները...

Գրելու համար (մանավանդ արձակ) ամենից կարեւորը դիտողականությունն է, եւ եթե ես ունենայի քո դիտողականության կեսի կեսը՝

հիմա տասը վե՛պ էի գրել... Ես գիտեմ, որ այնքան էլ հեշտ չէ համատեղել ստեղծագործական աշխատանքը քո առօրյա գործի հետ, սակայն ոչինչ քեզ չի արդարացնի, եթե մենք զրկվենք, քեզ նման տաղանդավոր մի հայի ներսում թաքնված հիանալի գրքից: Միշտ հիշիր Մխիթար Գոշի դատաստանագիրքը, ըստ որի ամենից ծանր հանցանքը համարվում էր քանքար ունենալը, բայց... թաքցնելը...

Ձերն քարեւներ ու համբույրներ Քեզ, Վիվիենին, իսկ քո աղջիկներին իմ եւ նաեւ իմ տղաների կողմից... իսկ քանի որ այդ սրիկաներն արդեն ամուսնացել են՝ նաեւ նրանց կանանց ու երեխաների կողմից (ընդհանուր գումարը՝ երեք տղա, չորս հարս եւ յոթը թոռ, որոնք բոլորն էլ Էմին են գրվում...):

Ձերն քարեւներ նաեւ իմ տիկնոջից (որ Արմինեի հայաստանյան մի տեսակն է), որն իմ պատմածներից արդեն շատ բան գիտի Ձեր մասին եւ նույնպես ընկալում է Ձեզ, որպես հարազատներ:

Գրիր Լոնդոնում ինձնից հետո եղած դեպքերի, իմ ելույթների տպավորության (եւ լավ, եւ գեշ) ինչպես նաեւ քո Տայաստան գալու ծրագրերի մասին (ինչպես նաեւ մեր, վերը նշված լոնդոնցիների):

*Եղբայրդ կամ գրչեղբայրդ՝
Գեորգ Էմին*

Տ.Գ. Տա՛, մոռացա ասել, Սիամին ասա, որ Էմինի տղան ասում է, թե նրա միջոցով գնված վիդեո-նկարող գործիքի մեջ պակասում է մի շատ կարեւոր բաղկացուցիչ մաս, առանց որի այդ գործիքն անհնար է օգտագործել: Ուստի, անպայման անհրաժեշտ է, որեւէ եկողի հետ ուղարկել այդ պակասող մասը, որն է «Any Compact (no tuner) VHS format VCR, Compatible (with no Special Adapter necessary) with the JVC GZ-SS Video Camera (Preferably with a battery Pack and a Changer)»:

Կարծեմ հասկացար, որ այս անգլերեն գրվածը իմ խելքի բանը չէ, եւ տղաս է գրել, իսկ ես սոսկ արտագրել եմ, որպեսզի ձեռագիրս մի քիչ լավանա...


Նույն

❖ **Միրելիդ իմ Ասասուր,**

Ի սրտե շնորհավորում եմ քեզ եւ քո մտերիմներին 1992-ի սեմին եւ ցանկանում ամենայն բարիք, առողջություն եւ մեր հանդիպումը Երեւանում:

Ամեն տարի Լոնդոնը հիշելիս առաջին հերթին հիշում եմ քեզ: Ձեր հիանալի տունն ու օջախը: Նուսամ, որ վերջապես մի օր այս կողմերն էլ կգաս եւ կնկարվենք այս վանքի մոտ (որը մեր գյուղի կողքին է):

Գեորգ Էմին



Այս վանքի – Մուղնու Սուրբ Գեորգ վանքի անունով են իմ անունը դրել Գեորգ:



Շահ սիրելի Ասասուր,

Խիստ զարմացած, հուզված եւ շփոթահար եմ, որովհետեւ Լոնդոնից վերադառնալուց հետո առաջին իսկ մանրամասն, ջերմ եւ քնքույշ նամակը (մարտ 1987, մեքենագրված) գրել եմ քեզ, քո սիրելի տիկնոջը եւ աղջիկներին եւ մինչև հիմա քեզանից ոչ մի տող պատասխան չեմ ստացել...

Մի՞թե այդքան տարվել ես Նիգերիայի գործերով, կամ (աստված մի արասցե եւ հեռո՛ւ ձեր տանից) որեւէ բան է պատահել:

Խնդրում եմ, այս նամակը ստանալուն պես, իսկույն մեղմես իմ զարմանքը քո պատասխանով (իսկ եթե պատահի, որ մեղավորը փոստը լինի (մեր կամ Անգլիայի), ապա պիտի մյուս նամակով ստիպված ուղարկեմ իմ նախկին (մեքենագրված) նամակի պատճենը եւ այս անգամ ծանուցումով:

Ձերմ ողջույններս քո ամբողջ գերդաստանին եւ մեր բոլոր հիանալի ընկեր-ծանոթ-բարեկամներին:

Քեորգ Էմին

Ն.Ք. Գտա եւ ուղարկում եմ իմ հին նամակիս պատճենը, չկորցնես, որովհետեւ ես այլ օրինակ չունեմ...

Պատասխաններ չեմ ստացել նաեւ Ն. Փելեկյանից, Խաչիկից (նրա եղբորից) Ալան-Նարինեից, Վ. Ուզունյանից, Էդիկից (նկարիչ), Ռուբիկից (բացիկ եմ ուղարկել) եւ այլն:

*Անցնում է կյանքը
Խոսք Քեորգ Էմինի
Երաժշտությունը՝ Ժողովրդական*

*Անցնում է կյանքը,
Սերն ու բերկրանքը,
Գալիս է ջանքը
Վիշտն ու տանջանքը:*

*Գալիս է մութը,
Անցնում է օրը,*

Աշխարհը սուտ է
Եվ անգավոր է:

Այն, ինչ թողնում ես,
Այն է քո շահը,
Այն, ինչ տանում ես Մահվան պաշար է:
Սուտ բան է զանձը,
Պաշտոնն ու փառքը
Եղած-չեղածը
Բարի անունն է:
Եղած-չեղածը
Բարի անունն է,
Իսկ մնացածը
Քամին տանում է:

Վկա՛ այս հողը,
Տացն ու գինին այս,
Քեզ խրատողը
Գետրոզ Էմինն է...

1987 1.11 Լոնդոն

Նվեր Արմինեին, Կարինեին, Վիվիենին և Ասատուրին

Գետրոզ Էմին



Միտելիդ իմ Ասասուր Պեղեցիկյան,

Երկրաշարժից անմիջապես հետո առաջինը քո ձայնը լսեցինք՝ (հեռախոսով BBC-ից և այլն), քո խոսքը կարդացի «Տայրենիքի ձայն»-ում եւ իմացանք քո ազգանվեր գործերի մասին, բայց այդպես էլ քո պայծառ երեսհարքդ չտեսանք, թեեւ վաղուց է, ինչ խոստանում ես Տայաստան գալ:

Տուսամ, որ գոնե այս տարի կտեսնենք քեզ (թերեւս նաեւ՝ քո անուշիկ տիկնոջն ու դուստրերին) եւ կվայելենք քո լուրջ խոսքերը, կատակները եւ «Երուսաղեմյան խենթությունները», վերստին համոզվելով, որ ամենից հանհարեղ վաճառականն անգամ (թեկուզ եւ նույն ինքն Նայջիրիայի հետ առեւտուր անող...) չի կարող խլացնել քո մեջ հայ մտավորականին...

Մանրամասն հարցուփորձել եմ քո մասին եւ Միամին (2 անգամ), Ռուրիկին եւ այլոց, բայց տեսնելն ուրիշ է...

Տուսամ, որ գործերդ, տրամադրությունդ եւ մանավանդ առողջությունդ լավ է եւ տանն ամեն ինչ հաջողակ է:

Այս նամակը գրում եմ ակնաբուժարանից, որտեղ վիրահատեցին աչքս (կատարակտ) եւ շուտով տուն կգնամ էլ ավելի պայծառատես եւ լավատես նույնիսկ... հայոց ապագայի նկատմամբ:

Ձերն ողջույններս եւ համբույրներս Ձերոնց եւ (քո ընտրությամբ) Լոնդոնի բոլոր կարգին հայերին (սկսած քո պաշտոնակիցներից): Եթե Տայաստան գալդ ինչ-ինչ պատճառներով ուշանա, ապա որեւէ եկողի հետ աշխատիր (եթե քեզ համար շատ դժվար չէ) ուղարկել ինձ թուրք առաջադեմ կինոռեժիսոր Էօլմազի կինոնկարների տեսագրությունները (կասես), որոնք թուրք բարբարոսներին մերկացնող ամենից ահեղ զենքերն են եւ այստեղ, եւ Սոսկվայում (կարելի է ուղարկել Տովհաննես Փիլիկյանի հետ, որը գալու է Տայաստան):

Գրչեղբայրդ՝ Գեորգ Էմին



Սիրելիդ իմ Ասատուր Գյուլեւյան, որ քարգմանի Պեղեցիկյան,

Կրտսեր որդիս, Արտաշեսը, որը քաջ տիրապետում է անգլերենին եւ ամերիկյան ու անգլիական գրականության մասնագետ է, կյանքում առաջին անգամ (պատկերացնո՞ւմ ես նրա հոգեվիճակը), ոտք է դնում Անգլիա (այնտեղից էլ թերեւս՝ Ամերիկա – Վիլյամ Սարոյանի գործով, որի անվան գիտական կաթինետի տնօրենն է համալսարանում):

Ծանոթացիր նրան, ծանոթացրու տիկնոջդ եւ դուստրերին (որոնք, եթե ժամանակ ունեն երեւի կօգնեն նրան ծանոթանալու Լոնդոնին) եւ թող քո աջը հովանի լինի նրա գլխին ու մանավանդ, որ դեռ անփորձ է եւ գործնական ու նյութական հարցերում անվարժ... ինչո՞ւ չես գալիս Տայաստան, որի առաջին օգնողներից մեկն էիր 1988-ի աղետից հետո, ինչո՞ւ չես ուղարկում քո դատրիկներին, եթե հարկ լինի ես իսկույն վիզա կուղարկեմ, ինչո՞ւ գոնե մերթ ընդ մերթ կարճ նամակներ չես գրում (թեկուզ եւ գրիչի չժանգոտելու համար...):

Ինչպես է Երուսաղեմի խենթը դիմանում միայն Նայջերիայի հոգսերով՝ առանց Տայաստանի մտերիմների խորհուրդների – չէ՞ որ դու միայն վաճառական չես, այլ առաջին հերթին՝ մտավորական...

Աշխատիր անպայման գալ եւ որեւէ լուր տալ այդ մասին:

Իսկ այժմ ջերմ ողջույններս քո պարագաներին, հիանալի գործընկերներին, եւ գաղութի բոլոր ազնիվ եւ կարգին մարդկանց (քո ընտրությամբ):

Շուտով աշխարհ կզա իմ քերթվածների նոր գիրքը, որն, իսկույն եւեթ կուղարկեմ քեզ:

Գրչեղբայրդ՝ Գեորգ Էմին:



/ 23 դեկտեմբերի 1992թ. /

Միրելիդ իմ Ասասուր Գյուլելյան,

Յուրտ, խավար եւ քաղցած Երեւանից ի սրտե շնորհավորում եմ քո, տիկնոջդ եւ դուստրերի (եւ բարեկամ-ընկերներիդ) Նոր տարին եւ ցանկանում եմ լույս, ջերմություն եւ ամենայն բարիք...

Այստեղ վիճակը շատ վատ է, իսկ ամենից վատն այն է, որ սկսվել է նաեւ հոգեկան քաղց եւ այլասերում, մանավանդ, որ կապկելով Արեւմուտքի հոռի կողմերը ոչ մի կարգին գիրք չեն հրատարակում (միայն սեքս եւ պոռնո գրքեր են, բախտագուշակների գրքեր եւ այլն):

Սակայն, չնայած դրան, ես հույսս չեմ կտրում լավ օրերից եւ ի հեռուկս այդ ամենի գրում եմ (թեեւ հրատարակվելու ոչ մի հույս չկա...):

Նամբուրում եմ բոլորիդ, հուսամ, որ այս տարվա մեջ կհանդիպենք Լոնդոնում, Երեւանում ու Նիգերիայում:

Գեորգ Էմին



/ 7 դեկտեմբերի 1993թ., Երեւան /





Միրելի իմ Ասասուր,

Եթե չլիներ քո հարցազրույցը, որը ես վերջերս (նիշտ է կեսից սկսած, որովհետեւ միշտ չէ, որ էլեկտրական հոսանք է լինում...) դիտեցի Երեսանի հեռուստատեսությամբ, ես թերեւս այդպես էլ չկարողանայի հաղթահարել իմ հպարտությունն ու ինքնասիրությունը եւ դիմել քեզ այս նամակով: Չեւ կարող պատկերացնել իմ հիացմունքը, երբ ես, քեզ տեսնելով ու լսելով վերստին համոզվեցի, որ դեռ կան մարդիկ (նրանց թիվն, ավա՜ղ, շատ քիչ է...) որոնք այս անմարդկային ժամանակներում պահպանել են իրենց մարդկայնությունը, նշարտախոսությունն ու քաջությունը եւ ընդունակ են իրերը կոչել իրենց անուններով եւ հանուն մեր ժողովրդի գերագույն շահերի չխնայել ոչ մեկին՝ կուսակցություններ լինեն դրանք, եկեղեցին, թե՞ ազգի կամ գաղութի ջոջերը: Ես էլ չեմ խոսում այն մասին, որ Երեսանի ժողովրդի կեսը սիրահարվեց Ձեր ընտանիքին, տեսնելով անուշիկ Վիվիենին դաշնամուրի առջեւ եւ ամենից կարեւորը՝ բերանացի Նարեկացի ու Դուրյան արտասանող հայ «քիզնեսմենը» մի հրաշք, որ երեւի չի՛ եղել դարերով եւ հիմա էլ անհնար է տեսնել ու լսել որեւէ երկրում ու որեւէ դարում... Կեցցե կյանքը, ինչքան էլ որ այն ծանր լինի, եթե դեռ աշխարհում կան քեզ նման «Երուսաղեմի խենթեր»... Ափսո՛ւ, որ կապույտ էկրանին չերեւացին քո հմայիչ ու խելոք աղջիկները, որոնք վախենամ թե արդեն դարձել են «օտարի բաժին»:

(Երանի չէ՞ր, իրար կողքի ապրեինք Երեսանում, Կալկաթայում կամ Լոնդոնում): Ես քեզ հետ բարեկամություն կանեի, Վիվիենը՝ Արմենունու, իսկ իմ երեք պարկեշտ տղաներից երկուսը քո փեսաները կլինեին, իսկ քո սիրունիկ աղջիկներն... իմ հարսիկները...

Բայց հեթաթից ու երազից վերադառնանք դեպի մեր դաժան իրականությունը... Երեւի դու արդեն լսել ես եւ գիտես (եւ համարձակություն չեմ ունեցել գրել քեզ այդ մասին, թեեւ դու իմ միակ բարեկամն ես, որին արժեք առանց ամաչելու գրել այդ մասին), որ այստեղ, մանավանդ այս վերջին չորս-հինգ տարիներին կյանքը ոչ միայն վատ, այլեւ դժոխային է դարձել: Մի քանի տարի է ինչ այստեղ բառիս բուն իմաստով սով է եւ արդեն երրորդ դաժան ձմեռն է, որ մենք ապրում ենք առանց ջեռուցման եւ բացարձակ խավարում, կամ մոմի լույսի տակ (օրական միայն 1-2 ժամ է էլեկտրա-

կանություն լինում): Այս նամակը գրել եմ մոմի լույսի տակ եւ ...
ձեռնոցները հագած:

Երանի՛ թե այս ահավոր վիճակը լինէր գոնե իմ այն տարիքում, երբ
դեռ երիտասարդ էի, համեմատաբար առողջ եւ կարող էի դիմանալ
այդ բոլորին (եւ երանի տեր եւ տիկին Տարությունյաններին, որոնք
հնարավորություն ունեն գոնե ձմռանը փրկվել այս դժոխքից):

Բայց ամենից մեծ ցավը իմ անձնական անելանելի վիճակը չէ, այլ
այն, որ ինձ հետ միասին կորչում է եւ կկորչի նաեւ այն, ինչն իմ կյանքի
բուն էությունն ու իմաստն է՝ իմ գրքերը, որոնք որք ու անտեր կմնան եւ
չեն հասնի ընթերցողին... (Տիշո՞ւմ ես «Եվ հիշատակս ալ թառամի»
կամ «Քանի մը թողթերու վրա...»):

Բանն այն է, որ արդեն չորս տարի է, ինչ ես գրկված եմ որեւէ գիրք
հրատարակելու հնարավորությունից, որովհետեւ այս երկիրը կորց-
րել է իր ամենից մեծ առավելություններից մեկը՝ գրքերի հրատա-
րակման Պետական հովանավորությունը, եւ դեռեւս չեն ստեղծվել
իսկական, մշակույթն ու գրականությունը հասկացող ու գնահատող
(թեկուզ եւ իրենց շահի համար...) բարեգործներ ու մեկենասներ...

Եթե որոշ քծնող-հարմարվող, ուստի եւ անինքնասեր-պնակալեզ
գրողներ այս կամ այն կերպ հրատարակում են իրենց գրքերը, իսկ որոշ
միջակ ու գորշ գրողներ, օգուտի ու շահի ակնկալ իքներով (վալյուտա,
հրատարակվելու եւ արտասահման մեկնելու հնարավորություններ եւ
այլն) սողոսկում են այս կամ այն կուսակցության շարքերը, որպեսզի
ՏԵՐ ունենան, ապա ամենից դժբախտ ու անտեր վիճակում են նրանք,
ովքեր պարզապես ՏԱՅ գրողներ են, որոնց համար ամենից գերա-
գույն ու վերնագույն կուսակցությունը հայ ժողովուրդն է, հայությունը:
Ի դեպ, հայ ժողովրդի պատմության մեջ հավանաբար երբեք այսպի-
սի վիճակ չի եղել եւ նա միշտ կարողացել է, նույնիսկ ամենից դժվար
ու ծանր ժամանակներում նշել իր երախտավորների հորել յանները եւ
այդ առիթով հրատարակել նրանց գրքերը... Իսկ հիմա վիճակն այն-
պիսին է, որ նույնիսկ 1989 թվականին, իմ 70-ամյակի առթիվ հրատա-
րակվելիք «Տատրնտիրը» մինչեւ օրս չի հրատարակվել եւ ես հույս
չունեմ, թե այն կհրատարակվի գոնե իմ ծննդյան 75-ամյակին, որը
լրանում է 1994 թվականի աշնանը...

Եվ այդ այն դեպքում, երբ ես, բացի այդ «Տատրնտիրից», մի քանի

լրիվ պատրաստ անտիպ գրքեր ունեն, որոնք, Աստված գիտե, թե ե՞րբ եւ ինչպէս կարող եմ հասցնել ընթերցողին: Դրանցից են.

1. Իմ նոր եւ անտիպ բանաստեղծությունների գիրքը, որտեղ զետեղված են նաեւ իմ այն սուր եւ «հակասովետական» համարվող բանաստեղծությունները, որոնք անհնար էր հրատարակել անցյալ տասնամյակներում: Այդպիսի բանաստեղծություններ շատ կան նաեւ իմ «Ելք Եգիպտոսից» գրքում, որն իմ վերջին գիրքն է եւ որից մի օրինակ ուղարկում եմ քեզ: Այդ գրքում է տպագրված նաեւ դեռևս 1984 թվականին խստիվ արգելված «Սիամանթոյի մենախոսությունը», որի պատճառով ինձ խիստ նեղեցին: (Ժամանակին սփյուռքի թերթերը շատ են գրել այդ մասին, բայց ոչ մեկի մտքով չանցավ հրատարակել առանձին գրքուկով այդ, ընդամենը երեք հարյուր տողից բաղկացած գործը):

2. Արձակ, փաստագրական մի խիստ հետաքրքիր գիրք (փաստաթղթերի պատճեն-քսերոքսներով) 16-17 տարեկան աշակերտ Գեորգ Էմինի եւ մեծն Չարենցի հանդիպումների ու զրույցների մասին, 1936-37թթ. այն ահավոր տարիներին, երբ Չարենցը փաստորեն տնային կալանքի տակ էր եւ վախից նրան ոչ մի ընկեր ու բարեկամ չէր այցելում: (Եթե ես չափահաս լինեի՝ ես էլ կվախենայի այդ անել...): Այդ գրքում զետեղված են շատ հետաքրքիր փաստաթղթեր՝ իմ հանդուգն ու համարձակ նամակ-խնդրանքը «Տայր Ստալինին» առ այն, որ իսկույն ազատեն հեղափոխության մեծագույն հայ բանաստեղծին... Իմ նամակը (Չարենցի բանտում մահանալուց հետո) ԽՍՀՄ գրողների միության ղեկավար Ֆադեեիին՝ Չարենցի գրական ժառանգությունը փրկելու մասին: Իմ նամակը ԽՍՀՄ դատախազությանը՝ խնդրանքով, որ աքսորից ազատեն Չարենցի կնոջը՝ վերադառնալու եւ իր որբերին պահելու համար, իմ պատանեկան առաջին բանաստեղծությունների ձեռագրերը՝ Չարենցի լուսանցքային նշումներով, Չարենցի իմ ձեռքով փրկված մի շարք անհայտ բանաստեղծություններ եւ այլ նյութեր (այդ գրքի մասին ես պատմել եմ իմ Լոնդոն այցելության օրերին):

3. Իմ «Յոթ երգ Տայաստանի մասին» գրքի առաջին լրիվ հրատարակությունը (առանց գրաքննության աղավաղումների ու կրճատումների)՝ հայրենի տաղանդավոր նկարիչ Տենրիկ Մամյանի հիանալի ձեւավորումով:

4. Շեքսպիրի բոլոր 154 սոնետների հայերեն իմ թարգմանությունը (ընդամենը երկու հազար տող), որը կարելի է հրատարակել երկլեզվյան գեղեցիկ-սուվենիրային հրատարակությամբ (մի էջն անգլերեն, մյուսը՝ հայերեն): Եթե ինձ հաջողվի Լոնդոն գալ, ես կաշխատեմ, որ Շեքսպիրի ծախքը հոգան Վանեսաս Ռեդգրեյվն ու Թելմա Նոլտը...

5. Մեր ժողովրդի համար այսօր ամենից կարեւորը, այդ թվում եւ արցախյան հարցին վերաբերող իմ արձակ էսսեների մի գիրք, որտեղ զետեղված կլինեն նաեւ իմ՝ Աթենքի ու Բարսելոնի միջազգային գիտաժողովներում ունեցած ելույթները 1937 թվականի ցեղասպանության եւ «Ազգերի ինքնորոշման իրավունքի» մասին:

Դժբախտաբար ես այստեղ չեմ կարող իմ հաշվին որեւէ, թեկուզ եւ փոքրիկ գրքույկ հրատարակել, որովհետեւ դու գիտես, որ գրողների ապրուստի միակ եկամուտը (որը հիմա լրիվ կտրվել է) գրքերի հրատարակումից ստացված հոնորարներն էին, իսկ պետական չնչին ամսաթոշակով կարելի է ընդամենը մեկ-երկու կիլոգրամ պանիր գնել...

Ուստի եւ դիմում եմ քեզ – իմ միակ բարեկամին, որը խորապես հասկանում է այս ամենը, եւ խնդրում եմ, որ դու հոգաս գոնե այս կարեւոր գրքերից մեկ-երկուսի հրատարակության ծախքերը (եթե լուսահոգի Միմոն Միմոնյանը կենդանի լիներ, գուցե այդ արվեր նրա հրատարակչության միջոցով...):

Եթե այս գրքերը հիմա հրատարակվեն արտասահմանում, ապա նրանց տպագրության ծախքերը տասն անգամ ավելի շատ կլինեն, քան այստեղ հրատարակվելու դեպքում, որովհետեւ այստեղ ամեն ինչ թանկ ու անմատչելի է ոչ թե ընդհանրապես, այլ մեզ համար, քանի որ մեր ստացածը շատ չնչին է այստեղի առասպելական թանկ գների հետ համեմատած: Իսկ եթե արտասահմանի դրամը փոխանակվի մերի հետ, կարելի է այդ ամենն անել չնչին գներով (դրա համար էլ հիմա բազմաթիվ սփյուռքահայեր այստեղ չնչին գներով մենատներ են գնում, անտիկ իրեր եւ այլն): Որպեսզի այս ամբողջ ծախքը միայն քովրա չընկնի, գուցե հնարավոր լինի հանձնախմբի նման մի քան կազմակերպել կամ մասնակից դարձնել այս գործին եւս մի քանի գրասեր ու հայրենասեր հայերի եւ հավաքված գումարը հասցնել ինձ այնպես, որ կարիք չլինի փոստային, բանկային եւ այլ ծախքեր անել...

Եթե հնարավոր լիներ հոգալ իմ հանապարհի ծախքը, որպեսզի ես հնարավորություն ունենայի գոնե որոշ ժամանակ այս վիճակից փրկվել եւ գալ Լոնդոն, այդ դեպքում ամեն ինչ ավելի հեշտ կլիներ եւ ես կարող էի այս գործին մասնակից դարձնել Վանեսային եւ թերեւս նաեւ ուրիշ հայերի (քո խորհուրդներով): (Մանավանդ որ կա դրա ուղղակի առիթը՝ 1994-ին լրացող իմ 75-ամյակը հավանաբար իմ կյանքի վերջին ԱՄՅԱԿԸ, որին ես կարող եմ մասնակցել... Չե՞ որ այս ամենն ինձ համար նշանակություն ունի, քանի դեռ ես կենդանի եմ, թե չէ ո՞ւմ է պետք, եթե այս ամենն արվի... ինձանից հետո՞ «զնա մեռիր, արի սիրեմ» սկզբունքի համաձայն...): Ի դեպ, Լոնդոն գալն ինձ հնարավորություն կտար նաեւ տեղում այցելել Pen club international (որի կենտրոնը գտնվում է Լոնդոնում) և Pen club-ի գծով լուծել նաեւ մեր ժողովրդի համար կարեւոր շատ հարցեր: Իսկ քանի որ ես պատիվն ունեմ լինելու Տայաստանի Pen centre-ի պրեզիդենտը, ապա նաեւ այդ, աշխարհի ամենից հեղինակավոր կազմակերպության Պատվո անդամի անդամատոմսեր շնորհելը Քեզ եւ գաղութի մի քանի արժանավոր գրասեր քարեգործների:

Ի միջի այլոց, ես կարող էի այս հարցերի կապակցությամբ (սփյուռքի մամուլում) բաց նամակով դիմել սփյուռքի բոլոր գաղութների իմ գրասեր ու հայրենասեր քարեկամներին (նույնիսկ մի սփյուռքահայ քարեկամ ցանկացել էր իմ 75-ամյակի առթիվ հանձնախումբ ստեղծել եւ մամուլով դիմել հայ գրասեր քարեգործներին ու ընթերցողներին «յուրաքանչյուրը 75 դոլլար՝ 75-ամյա քանաստեղծ Գեորգ Էմինի գրքերի հրատարակման ֆոնդին», բայց ես թույլ չտվի... Բայց այդ դեպքում կարող էր բնական հարց ծագել «մի՞թե միայն Էմինն է այդ վիճակում», (թեեւ այսօր, ավա՛ղ, հայրենի, կենդանի մնացած իսկական քանաստեղծների թիվը մի ձեռքի մատների հաշվի չափ էլ չկա...) եւ այդ հարցը չէր լուծվի ճիշտ այնպես, ինչպես Արցախի հարցը 1988 թվականին, գորբաշովյան այն ամբոխավարական լոգիկայով, թե «ԽՍՀՄ-ում արցախի նման ուրիշ հարցեր էլ կան...», թեեւ, եթե այդ նույնիսկ այդպես լիներ, հարցերի լուծման միակ ձեւը հենց նրանցից մեկի կամ ամենից կարեւորի լուծումն է... (այսինքն՝ գործ սկսելը...):

Ներողություն, որ հուզված լինելու պատճառով նամակս ստացվեց խառնիխուռն ու երկար-անկապ: Ձերմագին քարեներ Վիվիենին, դուստրերիդ ու մտերիմներիդ: Յուրտ, քաղցած ու խավար Երեսանից

ի սրտե շնորհավորում եմ Ձեզ Նոր տարվա սեմին եւ ցանկանում լույս, ջերմություն եւ ամենայն բարիք:

Եղբայրդ եւ գրչեղբայրդ Գեորգ Էմին.

Ն.Գ. Քո սկզբունքային համաձայնության դեպքում ես մանրամասն կհիմանամ իմ այս կամ այն կարեւոր գրքի տպագրության ծախսը եւ քեզ կհայտնեմ այդ մասին:

Թեեւ հոգնած ու դառնացած աշխարհից ու մարդուց, բայց նույնպես ի սրտե ցանկանում եմ Ձեզ ամենայն բարիք՝ այդ քվում նաեւ մեր հանդիպումը Երեւանում կամ Լոնդոնում:

Գեորգ Էմին (եւ անշուշտ՝ Արմենունի)



/ Oqnusnu 1990թ. /

Թենարիֆ, Կանարիան կղզիներ

Ըստ սիրելի Գեորգ Էմին,

Վերջապես ամիսներու յապաումե ետք սպասումե յոգնած գրիչս կը յաջողի համբոյր դառնալ թուրքի շրթունքին: Պարզ խօսակցական լեզուով, վերջապես քեզի գրելու ցանկութիւնս կը դառնայ իրականութիւն...:

Քանի քանի առիթներով, տարբեր միջավայրերու մէջ եւ ժամանակներու ընթացքին այս նամակը կամ աւելի ճիշդը՝ նամակ մը մտովի գրած եմ քեզի: Միջավայրերը եղած են առհասարակ տարբեր ընկերութիւններու եւ երկիրներու պատկանող օդանաւեր.

- Լոնտոն-Ամսթերտամ-Փարիզ-Լոնտոն:
- Լոնտոն-Լակոս-Քինշասա-Ապիջան-Ուակատուկու-Մարսել-Փարիզ-Լոնտոն:
- Լոնտոն-Ճոհաննէսպուրկ-Տարաբէ-Ֆրանքֆուրթ-Լոնտոն:
- Լոնտոն-Ճեստտա-Պահրէն-Սեուլ-Թայպէ-Տոնկ Բոնկ-Լոնտոն եւ այլն:

Քու մեկնումեդ ի վեր յիշեալ համփորդութիւններու ընթացքին միշտ ալ փորձած եմ պատասխանել նախ նամակիդ, յետո՛ւ նամակներուդ...: Վիվիէնին յանդիմանական ձայնը՝ (ներողութիւն՝ առօրեայ

յանդիմանական ձայնը) դեռ իր արձագանգը չէ կորսնցուցած յան-
ցապարտիս ականջին մէջ. «Գրեցի՞ր Գեորգին, գրեցի՞ր Գեորգին...
Գեորգին գրեցի՞ր...»:

Ամօթ քեզի:

Իսկապէս ամօթ ինձի, հազար ամօթ:

Միս կողմէ քիւր ամօթ այն ժողովուրդին, աւելի ճիշդը՝ ժողովուրդի
ղեկավար տարրին, որ չկրցաւ իր ուսուցիչները նոյնիսկ փոր կշտաց-
նող ամսականով մը գնահատել: Տետեա՞նքը: Տետեանքներէն մէկն
այն եղաւ, որ Գեորգ Էմինը իր նամակներէն շատերուն պատասխա-
նը շատ ուշ ստացաւ, ուրիշներունը՝ չստացաւ բնաւ: Տետեանքներէն
մինն ալ այն եղաւ (սա արդէն ազգավնաս հետեանքն է) որ երբեմնի
գրաբարի, աշխարհաբարի, հայ հին եւ արդի գրականութեան, հայ ժո-
ղովուրդի պատմութեան ուսուցիչ մը, Ամանոսեան Լեռներու ամենէն
փոքրիկ գիւղին, Կիւզելիի (գեղեցիկներու օրբան կամ բնակարան)
մէջ ծնած, Կարապետ Աղայի հինգերորդ եւ վերջին մանչ զաւակը,
Ասատուր Կարապետի Կիւզելյանը, ստիպուած ուսուցչական ու մտա-
ւորական աշխատանքին հրաժեշտ տուաւ եւ մտաւ, տասնամեակ մը
առաջ, առետրական ասպարէզէն ներս: Ան իր գրադարանը վերածեց
առետրական գրասենեակի, հոն համախմբուած շուրջ երկու հազար
հատոր գիրքերը աքսորելով գետնայարկի մութ մէկ անկիւնը գրա-
ւող փոքրիկ սենեակ մը: Գիրքերուն մեծ մասը կը մնայ անվաճառելի,
որովհետեւ անոնք մակագրուած են հեղինակներու կողմէ...:

Կրնայ հարց տրուիլ թէ սփիւռքահայ ազգային ղեկավարներուն
նետարձակուած մեղադրանքները ի՞նչ կապակցութիւն կամ արդա-
րացուցիչ հանգամանք կրնան ունենալ Գեորգ Էմինի նամակներուն
պատասխանելու կամ ուշ պատասխանելու իրողութեան հետ:

Տարցատուններուն պատասխանէ, Գեորգ ջան, Աւետարանի հե-
տեւեալ խօսքերով.

«Ջի ունիցի ականջս լսելոյ լուիցէ» (Այն որ լսելու ականջ ունի կը լսէ):



Դեռ չըսի թէ ուրկէ՞ կը գրեմ այս նամակը:

Վիվիէնը, Կարինէն, Արմինէն եւ ձեր ծառան կը գտնուին Ատլան-
տեան ովկիանոսի Տիւսիս-արեւմտեան մասին վրայ փռուած, շրթները
Ափրիկէի համբոյրին բացած Քանարեան կղզեխումբին պատկանող

(սպաներենով՝ Islas Canarias իսկ անգրեղերենով՝ Canary Islands) Թենարիֆ (Tnarif) կղզիի Փորթո Տը լա Քրուզ (Puerto de la Cruz) քաղաքին մէջ:

Ընտանեօք երկու շաբաթուան արձակուրդով եկած ենք հոս, որ Լոնտոնէն կը բաժնուի չորս ժամուան թոյլջքով:

Բոլոր այն տղամարդոց համար, որոնք կը սիրեն իգական սեռի մարմինը ուսումնասիրել իր բնական ձեւերուն մէջ, մերկ նշմարտութեան կամ նշմարիտ մերկութեան, ծծկալներու ետեւ քանտարկուած հազարաւոր ծիծերու ազատագրման եւ անծծկալ տողանցքին ականատես վկաները ըլլալու իրենց ցանկութեան կ'ուզեն քաւարարութիւն տալ, անպայման քանի մը շաբաթով պէտք է ապրին այս կղզիին վրայ...:

Ի դէպ, բոլոր ազգերու ներկայացուցիչները հոս են, ներառեալ հայերը:

Երէկ, հիւրանոցի ընդունելութեանց պատասխանատուներէն մէկը հարցուց.

– Պրն դուք Էրիվանէ՞ն կու գաք:

Անշուշտ, օտարի մը համար «Էրիվանէն կու գաք» կը նշնակաւ «դուք հա՞յ էք»:

– Այո, ըսի, Էրիվանէն կու գամ: Այդ իրողութիւնը ինչպէ՞ս կրցաք գուշակել, հարցուցի:

– Ձեր ազգանունէն, եան: Ես շատ բան գիտեմ հայերու մասին: Տայ երաժշտութիւնը շատ կը սիրեմ. Արամ Խաչատուրեանի բոլոր գործերը ունիմ ձայնապնակի վրայ: Անշուշտ լսած էք Արամ Խաչատուրեանի մասին:

– Անշուշտ:

– Կը ներէք նման հարցում մը տալուս համար: Երկու տարի առաջ հայ մը եկած էր Ամերիկայէն և Արամ Խաչատուրեանի անունը չէր լսած:

Տայասէր սպանացին Արամ Խաչատուրեանով տարուած չէր նկատեր որ հիւրերը պոչ բռնած կը սպասէին զանազան հարցումներու պատասխան ստանալու համար:

Անհարմար զգացի:

– Տոնետութիւն, դարձեալ կը խօսինք, ըսի ու հեռացայ:

Ինչ լաւ բան է երկիր ունենալը, մայրաքաղաք ունենալը...:

Այո, սպանացի բարեկամ, բոլոր հայերը «Էրիվանէն կու գան»:



Ահա շեղում մը ես:

– Վէ՞պ կը գրես, թե նամակ:

Վիվիենն է դարձեալ: Իրաւունք ունի:

– Խաչատուրեանի երաժշտութեան սիրահար սպանացի պաշտօնեայի մասին գրեցի:

– Տիմա ալ կը սկսիս պատմել սկովտիացիի մասին:

Ալ հերիք է, չեմ ուզեր տեղեկագրել աւագանին շուրջ ծանօթացած սկովտիացիի մասին, որ յայտնեց, թէ Էտինպուրկ քաղաքին մէջ կայ հայկական հաշարան մը: Որքան գիտեմ Էտինպուրկի մէջ միայն մէկ հայ կայ: Չեմ ուզեր խօսիլ Պրուքսէլէն եկած պելճիքացիին մասին, որ Տայաստանցի հայ ֆիզիկոսի մը հետ երկար գրոյց ունեցած էր:

Սակայն չեմ կրնար չլիշել թրքասեր գերմանացի կինը, որ պատմական սխալ տեղեկութիւններ կու տար իր անգլիախօս ունկնդիրներուն: Տասը վայրկեանոց տեղեկատուութեամբ ջարդ ու փշուր ըրի անոր վարկն ու հեղինակութիւնը յաչս սկանջալուր ներկաներուն: Ի դէպ առիթ չեմ փախցներ հիւրանոցի բնակիչներուն հայաստանեան զուարեախօսութիւններուն զուգահեռ՝ պատմական ճշմարտութիւններ ալ հաղորդելու հայոց մասին: Եթէ ամառնային արձակուրդով տարբեր կողմեր ու քաղաքներ այցելող իւրաքանչիւր հայ, հայ ժողովուրդի մասին կէս ժամ միայն խօսի, հսկայական աշխատանք տարած կըլլանք մեր ժողովուրդին ճշմարիտ պատկերը օտարներուն ծանօթացնելու գծով:



Քանի մը խօսք ալ Ջիմպապուէի եւ Քորիայի մասին:

Մայիս 29-էն մինչև Յունիս 7-ը Վիվիենն ու ես Ջիմպապուէ մնացինք: Տրաիբրուած էինք (շունչդ պահէ վայրկեան մը) վարչապետ Ռոպերթ Մուկապէի կողմէ, քրոջը, Ռեհինայի ամուսնութեան առիթով: Թէեւ վարչապետը առաջին անգամ ըլլալով անձնապէս ճանչցանք, բայց Մուկապէ ընտանիքի կարգ մը անդամներուն հետ մեր բարեկամութիւնը տասնամեայ պատմութիւն ունի: Ես աւելի մօտէն կը ճանչնայի փեսացուն, Տոքթ. Միտնի Կաթան, որ Ջիմպապուէի ելեկտրականաբաշխման, ինչպէս նաեւ նոր հիտրոէլեքտրակայաններու կառուցման պատասխանատու ընկերութեան ընդհանուր տնօրէնն է: Ջիմպա-

պուն կը ծրագրէ 2-3 նոր հիտորտելեքտրակայաններ կառուցել: Յոյս ունինք, որ գոնէ անոնցմէ մէկ հատին կառուցման մէջ մեր ընկերութիւնն ալ բաժին մը ունենայ: Ծրագիրը շատ խոշոր է. յաջողելու պարագային, քեզ տեղեակ կը պահեմ:

Առիթ ունեցանք, բացի Տարարէն, որ Զիմպապուէի մայրաքաղաքն է, այցելել նաեւ երկրի մի քանի այլ տեսարժան վայրերը, որոնք իրենց եզակի գեղեցկութեամբ սահմրկեցուցիչ տպաւորութիւն ձգեցին մեր վրայ: Այս Վիվիէնի Ափրիկէ առաջին այցելութիւնն էր: Ես տասնէ ատէլի առիթներով այցելած եմ ֆիրիկեան զանազան երկիրներ (աւելի Արեւմտեան Ափրիկէ):

Զիմպապուէի գեղեցկութեան գլուխ գործոցը «Վիքթորիա» Զրվեժն է (Victoria Falls): Զրվեժը, որուն մայրը Զամպեզի գետն է, աշխարհի ամենէն հրաշագեղ տեսարաններէն մէկն է:

Խորապէս տպաւորիչ էր նաև Զիմպապուէն Զամպիայէն բաժանող Զամպեզի գետին վրայ մեր կատարած նաւագնացութիւնը: Այվազովսքիական տաղանդ է պէտք անմահացնելու համար չնաշխարհիկ մայրամուտը Զամպեզի գետի վրայ...: Արեւը իր ծիրանի պատմունանը նետեց իրարու գրկընդխառնուած ծառերուն վրայ ու շէկ մարմինը յանձնեց գետի ալիքներուն...:

Ծանօթութիւն...

Այս գրութիւնը պեղուած է իմ արխիւներէս: Ակնյայտ է որ ընդարձակ նամակի մը մէկ մասն է միայն: Նոն ըսուած է որ պիտի պատմեմ նաեւ Քորիա այցելութեանս մասին, բայց փաստօրէն գրութեան մէջ նման տեղեկութիւն չկայ...:

Յոյս ունիմ հետագային Գետրգ Էմիլի արխիւներէն կը յայտնաբերուի նշմարտութիւնը:

Կիլգելէաս Ասատուր

Թաղեուսյան Ա.

Գրող, հրապարակագիր, որը եղել է նաեւ «Ս. Հայաստան» ամսաթերթի գլխավոր խմբագիրը:



/ 5 հոկտեմբերի, 1965թ., Լոնդոն /

«Արեգակ» թերթի հարգարժան խմբագրին

Հարգելի խմբագիր,

Տայրենիքը մեծ հետաքրքրությամբ է հետեւում սփյուռքահայ մամուլին:

Դժբախտաբար շատ թերթեր ու ամսագրեր չեն ստացվում, իսկ շատերն էլ ստացվում են ընդհատումներով:

Մեզանում լրիվ տեղեկություններ չկան, թե գաղութներում որքան եւ ինչպիսի լրագրեր ու ամսագրեր են հրատարակվում:

Այդ բացը վերացնելու նպատակով Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի օրգան «Սովետական Հայաստան» ամսագրի խմբագրությունը մտադիր է հրատարակության պատրաստել սփյուռքահայ պարբերական մամուլի տեղեկագիր: Գրքույկում համառոտ տեղեկություններ կտրվեն բոլոր թերթերի եւ ամսագրերի բնույթի, ուղղության, նպատակների ու խնդիրների, պարբերականության, ապա քանակի եւ այլ հարցերի մասին:

Այս ձեռնարկը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ է Ձեր աջակցությունը: Ուստի խմբագրությունը խնդրում է Ձեր լրագրի մասին ուղարկել հետեւյալ տեղեկությունները.

Երբ է ծնունդ առել լրագիրը, ով է հիմնադրել այն,
Լրագրի բնույթը, նպատակն ու խնդիրները (համառոտ),
Որ կազմակերպության օրգանն է լրագիրը,
Տրատարակության մեջ ընդհատում եղե՞լ է, երբ եւ ինչ պատճառով,
Լրագրի ներկայիս պարբերականությունը եւ տպաքանակը,
Որ գաղութներում է տարածվում,
Ովքեր են արտոնատերը եւ խմբագիրը,
Մտավորականներից ովքեր են աշխատակցում լրագրին:

Կանխապես շնորհակալություն ենք հայտնում սպասվող տեղեկությունների համար: Միաժամանակ խնդրում ենք Ձեր լրագրից մշտա-

պես մեկ օրինակ ուղարկել մեր ամսագրի խմբագրությանը փոխանակության կարգով:

*Տարզանքներով՝ «Սովետական Տայաստան» ամսագրի
գլխավոր խմբագիր Թադևոսյան Ա.*



/ 11 հոկտեմբերի, 1965թ., Երևան /

«Սովետական Տայաստան» ամսագրի խմբագրություն
Մեծայարգ տիար Ա. Թադևոսյան,
Գլխավոր խմբագիր «Ս. Տայաստան» ամսաթերթի

Յարգելի հայրենակից,

Նաճույքով կարդացինք ձեր Սեպտ, 1965թ. նամակը: Խորապես կը գնահատենք սփիւոքահայ մամուլի հանդեպ ունեցած ձեր հետաքրքրությունը եւ ստորեւ սիրով կը պատասխանենք ձեր յղած հարցարանին:

1. «Արեգակ» կը հրատարակուի 1964 Մարտեն ի վեր: Թերթի հիմնադիրն է պարսկահայ առետրական եւ ազգային գործիչ, Պրն Տայկ Գալուստեան: «Արեգակ» կը տպագրուի Փարիզ, տպարան Արաքսի մէջ, քանի որ Լոնտոն հայկական տպարան գոյութիւն չունի:

2. «Արեգակ» ազգային, գրական-մշակութային բնոյթ ունի: Թերթին նպատակն է բրիտանահայութեան մէջ վառ պահել ազգային գիտակցութիւնն ու հայրենասիրութեան զգացումը, ծանօթացնել անոր մեր հին ու նոր մշակութային արժէքները, հաղորդակից դարձնել զայն հայրենիքի եւ սփիւոքահայ գաղթօճախներու մէջ մեր ժողովուրդի արձանագրած նուաճումներուն, կեանքի բոլոր մարզերէն ներս: «Արեգակ»-ի կարեւոր առաջադրութիւններէն մէկն է պայքարիլ ամեն տեսակ անջատողական նպատակ հետապնդող շարժումներու դէմ եւ աշխատիլ ի նպաստ միասնականութեան ու համագգային ոգիի յաղթանակին:

3. «Արեգակ» ոչ մէկ կազմակերպութեան օրկանն է:

4. Թերթի հրատարակութեան մէջ ընդհատում չէ եղած:

5. «Արեգակ» ունի 1500 տպաքանակ:

6. «Արեգակ» գլխաւորաբար բրիտանահայ գաղութի մէջ կը կարդացուի, թերթը բաժանորդներ ունի նաեւ այլ գաղութներու մէջ: Թերթի տնօրէնութեան կարգադրութեամբ ձրիաբար «Արեգակ» կը ստանան շուրջ 250 հայկական կազմակերպութիւններ: Աւելի քան 60 օրինակ «Արեգակ» կը դրկուի հայաստանեան զանազան հաստատութիւններու եւ գրողներու:

7. «Արեգակ»ի արտօնատէրն ու խմբագրապետն է պրն Տայկ Գալուստեան, իսկ պատասխանատու խմբագիրը՝ Ասատուր Կիւզելեան:

8. Թերթը մնայուն աշխատակիցներ չունի: «Արեգակ»ին ցարդ մէկ կամ անելի գրութիւններով աշխատակցած են Գ. Էմին, Դեւ, Վահրամ Մավեան, Յակոբ Գրիգոր, փրոֆ. Ա. Առաքելեան, փրոֆ. Գ. Բրուտեան եւ ուրիշներ: Ապրիլեան եղեռնի յիսնամեակին նուիրուած բացառիկին աշխատակցեցան կարգ մը օտար մեծ մտաւորականներ, ինչպէս անգլիացի գրող Կորտրն Լենգպորտ, շուէտացի բանաստեղծ եւ արեւելագետ Քարլ Էլոֆ Սիւենինկ, հնդիկ մեծանուն լեզուաբան եւ պետական գործիչ Տոթթ. Սունիթի Քումար Չաթրնի, գերմանացի ծանօթ գրող Արմին Թ. Վեկներ եւ ուրիշներ:

Մենք ամեն ամիս կանոնաւորաբար դրկած ենք «Արեգակ» ձեր ամսաթերթին: Ամեն պարագային՝ մեր տրամադրութեան տակ եղած թիւերէն մէկական օրինակ դարձեալ կը դրկենք:

Ընթացիկ տարուան սկիզբէն «Ս. Տայաստան» ամսաթերթի առաքումը դադարեցուած է: Գոհ կը մնանք եթէ շարունակէք դրկել ձեր ամսաթերթը, ներառեալ Յունուար- Մեպտեմբեր թիւերը:

Յարգանքներով Կիւզելեան Ասատուր

Թորոսյան Ջավաս

ԱՕԿՍ-ի աշխատակազմի անդամ: Ասատուրը ծանոթացել է նրան եւ Լեւոն Յախվերոյանին, երբ նրանք 1960-ին որպէս զբոսաշրջիկ մեկնել էին Լոնդոն, ուր արձակուրդով եկել էր նաեւ Ասատուրը:

Կալկաթայի Տայկազյան Գեղարվեստական Ընկերություն
Պարոն Ա. Գյուզելյանին



/ 23 հունվարի, 1961թ. /

Հարգելի բարեկամ,

Նախագահ Բ. Գրիգորյանի հանձնարարությամբ հանույքով պատասխանում եմ Ձեր 23 դեկտեմբերի 1963 թվակիր նամակին, որում Դուք գրում եք Ձեզ մոտ Սովետական Տայաստանի 40-ամյակը նշելու խանդավառ տպավորությունների մասին: Ցավալի է սակայն, որ Կալկաթայի հայ գաղութի գործունեությունը անհրաժեշտ բարձրության վրա չի գտնվում: Միաժամանակ գովելի են այդ աշխատանքները աշխուժացնելու ուղղությամբ Ձեր թափած ջանքերը: Կարծում ենք, որ լրատու պարբերաթերթը, որ մտադրվել էք հրատարակել, Ձեզ մեծապես կօգնի: Մենք մեր հերթին այսուհետեւ Ձեր հասցեին կուղարկենք հոդվածներ, նամակներ եւ այլն, որոնք կարող եք հրապարակել այդ պարբերականում:

Միրելի Ասատուր, խնդրում եմ գրեք նաեւ թե էլ ինչով եւ ինչպէս կարող ենք օգտակար լինել Ձեզ: Նմարավորության սահմաններում մենք Ձեզ կուղարկենք, միայն թե գրեք Ձեր առաջարկություններն ու պահանջները:

Տանույքով եմ վերհիշում Ձեր շրջապատում Լոնդոնում անցկացրած մի քանի ժամերը: Այժմ մենք լավ բարեկամական հարաբերություններ ենք հաստատել լոնդոնահայության հետ, հատկապէս երիտասարդների հետ:

Չեմ մոռացել Ձեր հանձնած նամակը՝ Երեւանի Մատենադարանում եղած հնդկերեն ձեռագրերի վերաբերյալ: Շատ շուտով Մատենադարանը Ձեր հասցեին կուղարկի դրանց մի քանի ֆոտոպատճենները:

Տաշվի կառնենք նաեւ Տայկազյան ընկերության հասցեի փոփոխվելը, որի մասին Դուք գրում եք:

Ընդունեցեք իմ եւ Ձեր մյուս բարեկամների ջերմ բարեւները:

Թորոսյան Ջավաս

Լիսիցյան Պավել Գերասիմի

Լիսիցյան Պավել (Պողոս):
24.10.1911, Վլադիկավկազ, (Յուսիսային Օսիա-Ալանիա) –
6.07.2004, Մոսկվա):

Օպերային երգիչ (բարիտոն), ԽՍՀՄ ժողովրդական
արտիստ: Լենինգրադի Փոքր օպերայի, Երեւանի օպերայի եւ
բալետի, Մոսկվայի Մեծ թատրոնների մեներգիչ:



🎭 Իմ սիրելիներս,

Ամերիկայի գաստրոլները շատ հաջող անցան: Միշտ հիշում եմ եւ
սիրում եմ ձեզ: Ձեր հեռագիրը մինչեւ վերջ գրպանումս էր: Տամբու-
րում եմ բոլորիդ շատ շատ սիրով:

Լիսիցյան Պավել

🎭 Սիրելի Ասասուր ջան,

Ինչպես տեսնում եք, Միլանո եմ գտնվում: Պետք է մնամ մինչեւ մայիս,
ուսումնասիրելու իտալական երգարվեստի զանազան դպրոցները:
Շատ հավանական է, որ երգեմ Scala թատրոնում Verdi-ի օպերայի La
Traviata-ում Germoni-ի դերը իտալերեն լեզվով: Արդեն սկսել եմ սովո-
րել: Ընդունիր իմ ջերմ բարեկները՝ նաեւ ձեր ընտանիքին:
Սիրով՝

Լիսիցյան Պավել

Յ.Գ. Շատ ուրախ պիտի լինեի եթե ստանամ քեզանից լուր,
արդյոք երբ եք գնալու Անգլիա:

❖ **Միտելի Ասատուր ջան,**

Շնորհավորում եմ քո եւ հարազատներիդ Նոր տարին, ցանկանում եմ առողջություն եւ հաջողություն: Երեկ ես հանդիպեցի Վեհափառին, նա ինձ հաղորդեց քո բարեմաղթությունները: Ասատուր ջան, ես միշտ քեզ հիշում եմ եւ երբեք չեմ մոռանա մեր հանդիպումները:

*Տամբուրում եմ՝
Լիսիգյան Պավել*

❖ **Միտելի բարեկամներ,**

Շնորհաւորում եմ բոլորիդ Նոր տարին, ցանկանում եմ ձեզ երջանկութիւն, առողջութիւն եւ ուրախութիւն:

Յունվարից մինչեւ մայիս կլինեմ Միլանում, շատ ուրախ կլինեի որ ստանայի ձեզանից նամակ, իմ հասցեն Միլանո, Լա Սկալա:

Տամբուրում եմ բոլորիդ:

Լիսիգյան Պավել

❖ **Միտելի բարեկամներ,**

Շնորհաւորում եմ բոլորիդ Նոր տարին, ցանկանում եմ, որ ուրախութիւնը, երջանկութիւնը եւ առողջութիւնը միշտ լինի ձեր սքանչելի ընտանիքի մեջ: Աստված տա որ այս տարի Նարինէն ուրախացնի ձեզ բոլորիդ փոքրիկ Գյուզելիանիկով: Չի անցնում մի օր որ ես չհիշեմ ձեզ բոլորին եւ ձեր մեծ վերաբերմունքը դէպի ինձ եւ Վալտերին:

Լիսիգյան Պավել



Միրելի Ասատուր ջան,

Շնորհակալութիւն եմ հայտնում քեզ, որ դու այդքան լավ գրեցիր իմ մասին թերթերում: Սուրիայի եւ Ռումանիայի թերթերը ստացա, շարունակութիւնը դեռ չեմ ստացել: Ուղարկում եմ իմ պատկերները կնոջս, Ջարա Դոլուխանեանի եւ այն նկարները որը ես նկարեցի Կալկաթա, շատ եմ խնդրում, որ իմ բոլոր ծանոթներին, որոնց դուք լավ գիտեք, ինձանից շատ բարեւ անեք:

Շատ ուրախ կլինեմ ստանալ ձեզանից նամակ:

Մեծ երջանկութիւն կլինի ինձ համար, որ դուք գաք Մոսկվա եւ մենք հրաշալի ժամանակ կանցկացնենք միասին:

Բարեւներ եւ շնորհակալութիւն իմ կնոջից: Կոնսուլատի աշխատողներին ինձանից շատ բարեւ:

Տամբուրում եմ ձեզ բոլորիդ:

Լիսիցյան Պավել



Միրելի
Վիվիեն եւ Ասատուր:
Չի անցնում մի օր, որ
ես չհիշեմ ձեր հրաշալի
ընտանիքը:
Շատ եմ ձեզ կարոտել,
հուսով եմ նորից ձեզ տեսնել:
Պ. Լիսիցյան, 27.12.1958թ.



Իմ շատ սիրելի Պավել ջան,

Նախ ներողութիւն եմ խնդրում որ այսքան ուշ եմ գրում քեզ: Վեհափառը պատմած կը լինի քեզ, որ շուրջ մի ամիս շրջում էի իր եւ շքախմբի անդամների հետ Տնդկաստանի զանազան քաղաքներում եւ Նորին Սրբութեան այցելութիւնների մասին օրը օրին գրում էի հայկական թերթերին: Այնպէս որ ժամանակ չունէի նամակ գրելու:

Վեհափառ Տայրապետը քեզ պատմած կը լինի այդ բոլորի մասին, միայն աւելացնեմ որ Վեհափառին Տնդկաստանում ընդունեցին շատ մեծ շուքով, Վարչապետ Նեհրոյից սկսած մինչեւ ամենապարզ հնդիկը: Վեհափառը արտասահմանում սովորութիւն չունի անձնական տներ այցելելու. այդուհանդերձ նա եղաւ մեր տանը, տեսաւ շրջանակի մէջ առնուած քո լուսանկարը դաշնամուրի վրայ եւ շատ լաւ բաներ ասաց քո մասին:

Պավել ջան, հետեւելով քո եւ Բալասանեանի խորհրդին՝ աղջկանս անունը Կարինէ դրի: Պետք է խոստովանեմ որ այդ որոշման մէջ կարեւոր դեր ունեցաւ նաեւ Կարինէ Լիսիցեանը, որ իր անմիջականութեամբ ու տաք բնատրութեամբ շատ լաւ տպատրութիւն թողեց: Ճիշտն ասաց բոլոր Լիսիցեանները խորունկ տպատրութիւն թողեցին իմ վրայ, մամադ իր հրաշալի պարզութեամբ ու գուրգուրոտ վերաբերմունքով, Մարան, իր վառվռուն բնատրութեամբ, կենսալիինդ խառնուածքով, անզուգական հաղորդականութեամբ, Ռուզանը իր բազմալեզու կատարումներով ու շատ դուրեկան ու ընկերական աշխարհայացքով, վերջապէս Ռուբենն ու Կարենը իրենց վերաբերմունքով իմ յուշերում կ'ունենան մասնաւոր մի տեղ:

Երբ Սոսկվայից վերադարձիս պատմեցի քո եւ Լիսիցեան ընտանիքի անդամների հետ ունեցած իմ հանդիպման մասին, մերոնք շատ ուրախացան... յիշեցին այն հրաշալի օրերը, երբ Կալկաթայում անցկացրինք քեզ հետ: Բոլորն էլ յոյս ունեն որ այս աշնան Մարային եւ քեզ կը տեսնեն Լոնդոնում:

Այն դէպքը, որ տեղի ունեցաւ Կալկաթայում քո եւ աներհօրս, Պետրոս Ալեքսեանի հանդիպման կապակցութեամբ, երբ դու ներկայացար որպէս Յովհաննէս Աղդալեան, մեծ հետաքրքրութիւն ստեղծեց թէ արտասահմանում եւ թէ հայրենիքում: ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍ

թերթի խմբագիրը խնդրեց ինձնից որ գրեմ այդ դրուագը իրենց թերթի համար: Երկու օր առաջ Դոքթ. Ռ. Ճեպենեանից նամակ ստացայ, որով նա փափաք էր յայտնած որ նոյն դրուագը գրի առնեմ Պէյրութում հրատարակուող ՇԻՐԱԿ ամսաթերթի համար: Երբեմն մտածում եմ մինչեւ իսկ այդ պատահարը որպէս մի կատակերգութեան թեմա ընտրել:


Ներփակ ուղարկում եմ մի նկար որը վերցուած է մեր տան մէջ: Վեհափառ Տայրապետը մի ուրիշ նկարում գրկել է Կարինէին: Տայրիկը շատ յուզուեց եւ սկսեց արտասուել երբ Վեհափառը եկաւ մեր տուն... Եթէ այդ րոպէին Վեհափառը իրեն ասէր որ հարստութեան կէսը նուիրէր Ս. Էջմիածնին, կարող ես վստահ լինել որ կը նուիրէր:

Լաւ Սիրելի Պավել ջան, այս անգամուայ համար այսքան: Մերոնք բոլորը, Տայրիկը, մաման, Վիվիէնը, Սիլվիան, Իվանը, Երեխաներն ու ես ամենաջերմ բարեւներ ենք յղում քեզ, Մարային եւ Լիսիցեան ընտանիքի բոլոր հրաշալի անդամներին:

Տամբոյրներով՝ Կիզելեան Ասատուր

Յ.Գ. Ձերն բարեւներ նաեւ Ջարունի Դոլուխանյանին եւ Մարայի ծնողներին, որոնց ձեր տան մէջ հանդիպելու բախտն ունեցայ... ափսոս որ Ջարային հանդիպելու բախտը չունեցայ:

Նոյն



Խաչատրյան Արամ

24.05.1903, Թիֆլիս, Վրաստան - 1.05.1978, Մոսկվա, ԽՍՀՄ:
Չայ կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, ԽՍՀՄ, թողված
է Երեւանի Կոմիտասի անվ. պանթեոնում: Ժողովրդական
արտիստ (1945), ՅԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1963),
նուսական կոմպոզիտորական դպրոցի եւ հայ դասական
երաժշտության ներկայացուցիչ, ով ճանաչված է որպէս
համաշխարհային դասական:



/ 22 փետրվարի 1977թ. /

Միրելի եւ անմոռանալի Ասասուր,

Արդեն 12 օր է հեռացել եմ Լոնդոնից: Ամեն քաներն ու մանրամասությունները քիչ-քիչ մոռանում եմ, բայց քեզ չեմ կարող մոռանալ: Տիշում եմ մեր շփումը, խոսակցությունը եւ շատ ու շատ լավ մտքեր: Ինչպե՞ս են Վիվիենը եւ Երեխաները: Թող միշտ առողջ ու երջանիկ լինի քո գեղեցիկ եւ ազնիվ ընտանիքը: Խնդրում եմ քեզ, որ ինձանից բարեւներ եւ շնորհակալություններ հայտնես բոլոր հայությանը, մանավանդ Սրբազանին, որը շատ մաքուր ու ազնիվ է, պրն Տայկին, որը շատ ուժեղ է եւ խելոք, նա կարող է կառավարության նախագահ լինել: Ուժեղ եւ գեղեցիկ անձնավորություն է: Տայկի երեխաներին՝ Ռիչարդին եւ Նաթալիին: Խնդրում եմ բարեւես շատ բարի, ազնիվ, մեծ սիրտ ունեցող պապիկին՝ Թոմաս Թոմասյանին: Շատ կուզեի նրան եւ ուրիշ իմ բարեկամներին ընդունել տանս իբրև հյուր, մանավանդ տաղանդավոր Լորիսին, որը ոչ միայն առաջնակարգ երաժիշտ է, այլև ԳՈՐԾԻՉ է (այդ բառը գրում եմ մեծատառերով): Ասանրան, որ միշտ լինի անկուշտ, մանավանդ երաժշտությունից, իսկական վարպետությունից: Այսինքն չդադարի, չկանգնի, միշտ առաջ եւ առաջ՝ առանց պաուզայի: Քեզի սիրեցի քո պարզ բնավորության համար, սիրեցի, որ դիպլոմատ չես, խելոք ես, շատ խելոք, խորամանկություն չունես եւ փառք Աստծո, որ չունես: Մեկ խելոք ես, մեկ թեթևաուլիկ, մեկ տրագիկ եւ այլն: Մի խոսքով, անձնավորությունը լայն մասշտաբ ունի:

Արտոյին բարեւիր, սանիկիս նույնպես, նրա նկարը դեռ չեմ քաշել: Մի խոսքով չեմ մոռանում, բայց նորից գործի մեջ եմ: Շնորհակալու-

թյուն հեռագրիդ համար, կոնցերտս շատ հաջող էր, ժողովուրդը՝ լե-
ցուն, մի քանի հայեր կային, նրանց մեջ՝ մարշալ Բաղրամյանը:

Նորից բարեւ, բարի մաղթանք: Կարենը, Լյուդան եւ Նատաշան բա-
րեւում են քեզ եւ քո ընտանիքին: Ինձանից համբույր քեզ, Վիվիենին եւ
քո անուշիկ երեխաներին:

Խաչատրյան Արամ



/ 14 սպրիլի 1977թ., Մոսկվա /

Միրելի Ասասուր,

Այս իմ երկրորդ նամակն է, որ գրում եմ քեզ: Չգիտեմ, դու ստացե՞լ
ես իմ առաջին նամակը, որ սկսվում էր «Միրելի եւ անմոռանալի
Ասատուր» բառերով, եւ իմ ձեռքով էի գրել: Այն նամակում եւ այժմ էլ
ուզում եմ հայտնել, որ հաճախ հիշում եմ քեզ եւ կարոտում:

Սրանից մի 2-3 օր առաջ ինձ մոտ եկավ մի երիտասարդ՝ Վրեժ
անունով: Դժբախտաբար նա ինձ գտավ անկողնում, սրտի նոպաներ
ունեի: Այդ պատճառով մեր խոսակցությունը շատ կարճ տևեց: Տա-
մենայն դեպս, ես ամենայն մանրամասնությամբ հարցուփորձ արե-
ցի Լոնդոնի իմ ծանոթների մասին, ինչ խոսք, որ առաջին հերթին ես
ցանկացա իմանալ քո եւ ընտանիքիդ մասին, Վիվիենի եւ երեխանե-
րի մասին: Ինձ մեծ հաճույք պատճառեց, որ Վրեժը բերել էր Լորիսի
ստեղծագործություններից եւ նրա ձայնագրած պնակները «Գայանե-
ից»: Տիվանդությանս պատճառով ես դեռ հնարավորություն չեմ ունե-
ցել լսելու պնակները: Ես ինձ կերակրում եմ հույսերով, որ լավ կլինեն:

Խնդրում եմ հղել անկեղծ բարեւներ ինձանից Լորիսին ուշադրու-
թյան համար: Շատ ուրախ կլինեմ, եթե Լորիսը ինձ հաղորդի իր նոր
ստեղծագործությունների մասին:

Միրելի Ասատուր, ուզում եմ քեզ հայտնել, որ ս.թ. մայիսի 22-ին ես
մեկնում եմ Բելգիա, մայիսի 23-25-ը կլինեմ Անտվերպենում համերգ-
ներով: Շատ ուրախ կլինեմ, եթե գաս ինձ մոտ եւ տեսնվենք միմյանց
հետ: Ջերմ բարեւներ Տայկին. Նրա պատվերը չեմ մոռացել, երբ հան-
դիպեմ Վեհափառին, Տայկի խնդրանքը կկատարեմ: Բարեւեցեք
նաեւ Պապիկին ջերմորեն, ինչպես նաեւ սիրելի Արտոյին եւ բոլորին,
ովքեր հիշում են ինձ:

Ես մի փոքրիկ խնդիր ունեմ:

Կարո՞ղ ես արդյոք իմանալ եւ հաղորդել ինձ, թե իմ իմպրեսարիոն՝ պրն Լայտոն Ստանլի, ո՞ր ամսում եւ ո՞ր օրը կլինի Մոսկվայում կամ գուցե ինքն անձամբ ինձ հաղորդի այդ մասին: Ես առանձնապես գործ չունեմ նրա հետ, միայն ցանկանում եմ տեսնվել հետը: Նրան բարեւներիս հետ միասին, հաղորդեցեք, խնդրեմ, նաեւ այդ մասին: Ջերմ համբույրներ եւ բարեմաղթանքներս քեզ, կնոջդ եւ երեխաներիդ:

Խաչատրյան Արամ



Այս նամակը իմ թելադրանքով գրում է տիկին Սիրանուշ Տիրատուրյանը, որը ռուսերեն թարգմանեց Ջեր «Ձոնը» նվիրված ինձ: Ես անձամբ չկարողացա գրել, որովհետեւ հիվանդությանս պատճառով պառկած եմ անկողնում:

Ջերմ համբույրներ եւ բարեմաղթանքներ քեզ, կնոջդ եւ երեխաներիդ: Սիրով՝

Խաչատրյան Արամ

Գյուզեւանների տանը, Լոնդոն, 1977թ.: Չախից նստած են՝ Ռիչարդ Գալստյան, Նատաշա, Արամ Խաչատրյան, Նատալի (թոռնուհի), Վիվիեն եւ Կարինե
Գյուզեւաններ: Չախից կանգնած՝ Ասատուր Գյուզեւան, Արմինե Գյուզեւան, Կարեն Խաչատրյան, Գ. Արեւյան:





Հարգելի պ. Գյուգելյան,

Դուք հավանական է, որ ձեռագրից արդեն գուշակում եք, թե ո՞վ է գրում Ձեզ այս երկտողը:

Միրելի տղաս: Ես իրավունք ունեմ այսպես դիմելու Ձեզ, քանի որ 80-անց մայրիկ եմ:

Շատ հպարտ եմ եւ երջանիկ Ձեզ հետ ծանոթանալու դեռ հեռակա, հույս ունեմ, որ կտեսնվենք Մոսկվայում մեր սիրելի եւ աշխարհահռչակ վարպետի Արամ Խաչատրյանի մոտ:

Այո, ես եմ թարգմանիչը «Ձոնը»-ի, որ այնքան սքանչելի, գեղեցիկ եւ մեծ ավյունով եք գրել դուք: Տաննարդ անսպառ: Բայց իմ թարգմանությունը կատարված է բառացի՝ տող առ տող (որովհետեւ ես բանաստեղծուհի չեմ), որպեսզի մեր անվանի ռուս բանաստեղծներից մեկը այն վերածի հանգերի:

Տայերի մոտ ես կարդում եմ Ձեր գրածը՝ հայերեն, ռուսների մոտ՝ թարգմանածը: Բոլորի միաձայն կարծիքն է.

- Սքանչելի է գրված, անկեղծ, ավյունով եւ նշմարիտ: Կեցցե՛ս, որդիս: Շնորհակալություն:

Ի զուր չէ, որ Արամ Իլյիչը այնքան գովասանքով է խոսում Ձեր մասին:

Ձերմագին բարեւներ ինձ անձանոթ Ձեր տիկնոջը եւ բալիկներին:

Տիրատուրյան Սիրանույշ

Տ.Գ. Տարգելի Գյուգելյան, խնդրում եմ այս ծրարի մեջ զետեղված նամակը հանձնել տիկին Բարբարային:



/ 14 ապրիլի 1977թ., Մոսկվա /

Սիրելի եւ անմոռանալի Ասատուր,
 Այս երրորդ նամակն է, որ գրում եմ քեզ: Պառկած եմ անկողնում,
 հիվանդ եմ, սիրտս ցավում է: Լոնդոնը հիշում եմ մեծ հաճույքով:
 Բարեւ, համբույր քեզ, Վիվիենին, երեխաներին, պ. Տայկին, Ռիչարդին,
 պապիկին եւ բոլորին, ով ինձ հիշում է:
 Անշուշտ Սրբազանին:
 Քեզ շատ սիրեցի եւ հարգեցի:
 Պատրաստ եմ քեզ ծառայել:

Արամ Խաչատրյան



/ 23 մարտի 1977թ., Մոսկվա /

Եւս սիրելի վարպետ, Արամ Խաչատրեան,

Մեծ հաճույքով կարդացի Ձեր 22.02.1977թ. նամակը: Խորապէս զգացում եմ իմ ընտանիքի եւ իմ հանդէպ ձեր յայտնած մտքերի եւ ազնիւ զգացմունքների համար: Նամակի ֆոթոպատենենները յանձնեցի Սրբազանին, Տայկ Գալուստեանին, Արթուրին, Լորիսին եւ Պապիկին, որ Լոնդոն էր եկել Լորիսի համերգին ներկայ գտնուելու համար: Նամերգը տեղի ունեցաւ Ֆիսքիվալ Տոլի Քույին Էլիզաբէթ համերգասրահում, որ նախատեսուած է շուրջ 1200 հոգու համար: Նամերգը նուիրուած էր Շնորհալու շարականներին, Կոմիտասեան Պատարագին եւ Լորիսի մի շարք ստեղծագործութիւններին: Կատարողներն էին Անպրոզեան երգչախումբի երգիչները: Լաւ անցաւ: Քանի խօսքը վերաբերում է Լորիսին՝ ի գիտութիւն ասեմ, որ նրա ղեկավարութեամբ «Կայանէ»-ի ձայնապնակը հրապարակուեց արդէն եւ գտաւ լաւ ընդունելութիւն: «Record & recording» երաժշտական ամսաթերթը «Կայանէն» ընտրեց որպէս այս ամսուան լաւագոյն ձայնապնակը: Ներփակ ուղարկում եմ այդ մասին հրատարակուած յօդուածը: Երէկ երբ Լորիսի հետ խօսում էի ասաց որ Դոկտ. Վ. Ներսէսեանի միջոցով Ձեզ ուղարկել է նամակ եւ «Կայանէ»-ն: Դոկտ. Ներսէսեանը ներկայիս գտնուում է Երեւան, Լոնդոն վերադարձի հանապարհին դրանք կը յանձնի ձեզ:

Միքելի վարպետ, ստացայ նաեւ ձեր մասին հրատարակուած ռուսերէն գիրքը: Արդէն կապուել ենք մի շարք հրատարակչութիւններ հետ գրքի թարգմանութեան եւ անգլերէնով հրատարակութեան կապակցութեամբ: Գիշեր է և գրում եմ ձեր լոնդոնեան այցելութեան մասին մի բաժին, որ կը դրուի գրքի վերջում:

Ձեր Լոնդոն այցելութեան մասին գրեցի յօդուած, որ լոյս է տեսել արդէն բազմաթիւ հայերէն թերթերում: Սա մեր ունեցած տեսակցութիւնը չէ, այլ ընդհանուր մի գրութիւն է նուիրուած Ձեր երկու համերգներին, EMI-ի ձայնագրութեան եւ լոնդոնեան ձեր հանդիպումներին: Մեր տեսակցութիւնը, որ արձանագրուած է իմ մեքենայի վրայ, լոյս կը տեսնի առանձին: Ուղարկում եմ այդ յօդուածի պատճենը:

Միքելի վարպետ, չէք կարող պատկերացնել թէ ինչքան եմ կարօտել ձեզ: Ամէն անգամ որ անցնում եմ Դորչեսթըր հյուրանոցի մօտով՝ յիշում եմ Ձեզ, Ձեր սենեակը, մեր զրոյցները, նոյնիսկ ձեր հացադուլը... ուտե՞լ թէ չուտել... (Շեքսպիրը պիտի ասեր՝ «լինե՞լ, թէ չլինել»): Օր չի անցնում որ մեր տանը, Տայկի կամ Արթոյի մօտ՝ մենք կարօտով չխօսենք ձեր մասին: Դուք եկաք Լոնդոն, մեզ գերեցիք եւ ձեր անձով, եւ ձեր երաժշտութեամբ ու... գնացիք: Տիմա որ գնացել էք՝ մեր սրտերում ձեր կարօտը աւելացել է հարիւր անգամ:

Ինչ վերաբերում է ինձ՝ ձեր գնալուց յետոյ հաստատեցի առետրական մի ընկերութիւն, որի նպատակն է համոզել Միջին Արեւելքի արարներին, որ անգլիական արտադրանք գնեն, որի դիմաց ես կը ստանամ շահաբաժին: Մինչեւ հիմա դեռ գործ չեմ արել, բայց յոյս ունեմ «կամաց-կամաց բուրդը կը լինի մանած...» Անշուշտ, եթէ իմ առետրական դաշտի վրայ «տանձի մեծութեամբ կարկուտ չտեղայ»: Գիշեր ցերեկ աշխատում եմ այդ ուղղութեամբ:

Մինչև հիմա երկու նամակ եմ գրել անգլիական ձայնասփիւռին, որ փողը վճարեն: Երէկ հեռախօսով սաստիկ բարկացայ նրանց վրայ: Յոյս ունեմ բարկութիւնս արդիւնք տայ:

Ինչ վերաբերում է բժշկական գօտուն՝ Վիվիէնը մի հատ ապսպրել է Ամերիկայից: Դոկտ. Ներսեսեանի միջոցով ուղարկել է նաեւ Լոնդոնում պատրաստուած գօտու ֆոտոնկարը: Եթէ այդ հաւանեք, մի հատ էլ կ'ուղարկենք դրանից:

Ձեզ, Կարէնին, Լուդային եւ Նատաշային ջերմ ողջունում եմ Վիվիէնը, Կարինէն, Արմինէն և ես: Ողջոյններ եմ ուղարկում Տայկը, Ռիչար-



դը, Արթոն, Սրբազանն ու Լորիսը, ինչպես նաև Լոնդոնի ձեր ծանօթները: Անցեալ օր տեսայ Էդիկին, որ փորձերի ժամանակ ձեզ նկարեց, ասում է նկարը շատ լաւ է ստացուել:

Սիրելի Վարպետ, Ձեզ ցանկանում եմ առաջին հերթին առողջութիւն, արեւշատութիւն, որպէսզի նորանոր ստեղծագործութիւններով հարստացնեք հայ եւ համաշխարհային երաժշտութեան գանձատունը:

Տամբուրներով՝ Ասատուր Կիզելեան



Ըստ սիրելի Վարպետ, Արամ Խաչատուրեան,

Ստացայ եւ խորը հանդուքով կարդացի Վրէժի միջոցով ձեր ուղարկած ինչպէս նաեւ տիկին Սիրանոյշ Տիրատուրեանի ձեռամբ գրուած եւ ձեր կողմից ստորագրուած նամակները:

Բոլորս շատ ցաւեցինք լսելով ձեր հիւանդութեան մասին: Ձեզ առաջին հերթին մաղթում ենք կատարեալ առողջութիւն եւ շատ երկար տարիներ, որպէսզի մարդկութիւնն իրեն աւելի հարուստ զգայ իր մէջ ունենալով ձեզ նման մի հաննար, իսկ ձեր հարազատները, բարեկամները՝ Տայաստանի արեւի նման տաք սրտով մի հազուագիտ մարդ – Արամ Խաչատուրեան: Իմ ընտանիքն ու ես, նախքան ձեզ անձնապէս ճանաչիլը հափշտակուել էինք ձեր երաժշտութեամբ. հիմա որ ձեզ անձնապէս ճանաչեցինք մենք հաւասարապէս կախարդուեցինք նաեւ Արամ Խաչատուրեան մարդով:

Սիրելի վարպետ, ես Ձեր առաջին նամակին պատասխանել եմ 23 Մարտին: Չարմանում եմ որ իմ նամակը չի հասել Ձեզ: Ներփակ ուղարկում եմ պատեններ:

Անմիջապէս որ ձեր 14 Ապրիլի նամակը ստացայ՝ հեռախոսեցի Ստենլի Լաուդընին. նա արդէն գնացել էր Խ.Սիութին: Խօսեցի կնոջ հետ եւ ձեր ցանկութիւնը փոխանցեցի նրան: Նա խոստացաւ անպայման Մոսկվայում կապուել ձեզ հետ:

Լորիսը նոր է վերադարձել Պարսկաստանից, որտեղ տարել էր անգլիական երգչախումբը հայկական շարականներ կատարելու ծրագրով: Պարսկաստանից ստացած իմ նամակներից եւ թերթերից իմացայ, որ համերգները արձանագրել են մեծ յաջողութիւն: Լորիսը ելոյթ է ունեցել նաեւ հեռատեսիլից եւ խօսել է Մեծ եղեռնի մասին... Միջանկեալ ասեմ որ Երեւանի ռադիոն մի քանի անգամ նուագել է արդէն «Կայանէ»ն (Լորիսի դեկավարած ձայնապնակը) համաձայն Փարիզում լոյս տեսնող «Աշխարհ» թերթի:

Ռիչարդը Ձեզ համար պատրաստել է մի ալբոմ մեր եւ Տայկի տանը առնուած նկարներից: Նկարչուհին (Սուզանը) շատ յաջող նկարներ է վերցրել: Ուզում է Ձեզ ուղարկել: Ես նրան ասացի, որ դուք գալու էք Բելգիա, հետեւաբար աւելի յարմար կը լինի որ այնտեղ ուղարկուի:

Տենց այս բոպէին հեռախօսեց Լորիսը: Երբ կարդացի Ձեր նամակը,



Հայկ Գալստյանի տանը, Լոնդոն, 1977թ.:
Զախից՝ Ասատուր Գյուզելյան, Ռիչարդ Գալստյան, Արամ Խաչատրյան, Լինդա
Գալստյան, Հայկ Գալստյան:

նա խորապես յուզուեց եւ ասեց որ ներկայիս ձայնագրում է Դերուսիի («Գարուն»), Ստրավինսկու («Սուրբ գարուն»ը, «Ձոհ»), Չայքովսքու («Տ-րդ սիմֆոնիան»): Յոյս ունի որ Մայիս 20-ին կ'աւարտի եւ 22-ին կը գայ Բելգիա ձեզ հանդիպելու:

Միրելի վարպետ, ես անձնապէս շատ մեծ ցանկութիւն ունեմ ձեզ հանդիպելու Բելգիայում, սակայն դա կախում ունի իմ գործերից: Ինչպէս նախորդ նամակում գրել էի, ձեր Լոնդոնից մեկնելուց յետոյ ես հիմնեցի առետրական ընկերութիւն... աշխատում եմ օրը 16 ժամ: Մինչեւ հիմա դեռ շահաբեր գործ չեմ առել, բայց յոյս ունեմ որ իմ աշխատանքը մի օր արդիւնք կը տայ:

Սա մեր ժողովրդի դժբախտ ճակատագրի հետեւանքն է, որ հայ մտաւորականը, գրողը ստիպուած լինի թողնել իր նախասիրած աշխատանքը եւ զբաղուել առետուրով, ապահովելու համար իր եւ իր ընտանիքի ապրուստը: Այս մասին կարելի է երկար խորհրդածել, բայց ես չեմ ուզում անել այդ այս առթիւ:

Եթե նամակս ստանաք նախքան ձեր Բելգիա գնալը, բարի եղէք հե-
նագրել ինձ Բելգիայի ձեր հասցեն, որպեսզի եթե ինձ չյաջողո՞ւի գալ
այնտեղ, գոնե հեռախօսով խօսեմ Ձեզ հետ:

Ձեր ուղարկած գրքի թարգմանութեան համար անհրաժեշտ է ունե-
նալ մի նամակ Ձեզանից այն իմաստով, որ դուք իրաւունք էք տալիս,
որ գիրքը թարգմանուի անգլերէն եւ տպուի Լոնդոնում մի յաւելեալ
զլխով՝ «Ա.Խաչատուրեանը Լոնդոնում»:

Ամերիկայից մեր ապսպրած գօտին տակաւին չի հասել: Լոնդոնից
առնուածը ձեզ կը հասցնեմ Բելգիա կամ կը բերեմ անձամբ, եթե կա-
րողացայ գալ:

Ձայնասփիւռը փողի մի մասը տուել է ինձ, սպասում եմ որ միւս
մասն էլ տայ:

Տիկին Բարբարային գրած ձեր նամակը կը յանձնեմ, երբ նա հեռա-
խօսի ինձ: Ես նրա հասցեն չունեմ:

Շատ սիրելի վարպետ, օր չի անցնում, որ Վիվիէնը, ես եւ Ձեր Լոն-
դոնի ծանօթները չխօսենք ձեր մասին: Դուք մեր վրայ այնպիսի մեծ
տպաւորութիւն թողիք, որ ժամանակը չի կարող աղաւաղել այդ:

Վիվիէնը, Կարինէն, Արմինէն եւ ես համբուրում ենք Ձեզ, Կարէնին,
Լյուդմիլային եւ Նատաշային:

Ձերմ բարեւներ են յղում Սրբազանը, Նայկը, Ռիչարդը, Արթոն եւ
Լոնդոնի բոլոր ձեր ծանօթները:

Նորից մեր բոլորի անունից մաղթում ենք ձեզ կատարեալ առող-
ջութիւն:

*Լոնդոնեան անմոռանալի յիշատակներով, սիրով եւ կարօտով՝
Կիւզելեան Ասատուր*



2020-ի փետրվարին Վերնատուն ռադիո ժամին տրված Ասատուր
Գյուզելյանի հարցազրույցը, որը հիմնականում Արամ Խաչատրյա-
նի մասին է, բավական հետաքրքիր է: Ընթերցողին ներկայացնում ենք
այն լսելու կայքէջը:

<https://www.youtube.com/watch?v=uC6SX279K7E>

Կայքէջը կարելի է լսել ձեր internet browser-ով:

Հրատարակչության կողմից.

Երբ պատրաստվում էր Ասատուր Գյուզելյանի «Տուշ-Նամականի» գիրքը, հեղինակի մեծ բարեկամ՝ Էդման Այվազյանը կնքեց իր մահկանացուն... Տրատարակչությունը նպատակահարմար գտավ, մի փոքրիկ ծաղկաքաղ ներկայացնել 2018 թ. Ա.Գյուզելյանի Է. Այվազյանի հետ հարցազրույցից:

Հարցազրույց Փոյների Ճարտարապետ՝ Էդման Այվազյանի հետ

Պրեց՝ Ասատուր Կիպելեան Լոնդոն, Մարտ 2018

Վերջերս ինձ յաջողուեց հարցազրույց ունենալ սփիտքահայ մեծատաղանդ գեղանկարիչ Էդման Այվազյանի հետ, Լոնդոնի իր արուեստանոցում:

Տարիների փորձով գիտեմ որ շատ աելի հեշտ է հարցազրույց վարել միջակ կարողութեան տեր անձի հետ, քան տաղանդաշատ արուեստագէտի՝ այն պարզ պատճառով, որ առաջինը՝ հիմնականում փորձելու է իր չունեցած արժանիքները գովաբանել, իսկ երկրորդը՝ իր տաղանդը թերագնահատել էլ իրեն հասցեագրուած արդար արժեւորումները՝ չափազանցութիւն համարել:

Չգիտեմ ո՞վ է ասել, բայց ո՞վ որ ասել է, հիշո՞ւ է ասել, որ «համեստութիւնն ու մեծութիւնը անբաժան ընկերներ են»:

Էդման Այվազյանին՝ ՄԵԾԱՏԱՌՈՒՎ մարդուն եւ ՈՍԿԵՏԱՌՈՎ արուեստագէտին՝ որը միաժամանակ սեպհականատէր է համով-հոտով անհատականութեան, կարելոր է հիշո՞ւ բնութագրել, հեռու մնալով քլիշէ դարձած խօսքերից, անշունչ, անբոյր ու անթոյր արտայայտութիւններից: Իմ դժուարութիւնը կայանում է նրանում, որ Այվազյանի յատկութիւններով օժտուած մարդուն եւ արուեստագէտին հիշո՞ւ տարազաւորելը՝ այնքան էլ հեշտ յանձնառութիւն չէ:

Երբ առաջին անգամ հանդիպեցի Էդիկին (մինչև հիմա էլ իր մտերիմները նրան Էդիկ են անուանում) աելի քան քառասուն տարի



Էդման Այվազյան

առաջ, իմ վրայ մեծ տպաւորութիւն թողեց նրա զուարեանախօսութիւնը, պարզութիւնն ու համեստութիւնը: Նետագայում, երբ աւելի մօտից ծանօթացայ նրան եւ նրա ստեղծագործութիւններին, զգացի, որ բացի տաղանդաւոր արուեստագէտի, գործ ունեւ նաեւ մարդկային արժանիքներով հարուստ մարդու հետ:

Երբ մտնում ես 85ը անց (ծնած 1932 թ.ին), բայց հոգով ջահել գեղանկարչի արուեստանոցը, քեզ թւում է թէ մտել ես գոյների կախարդիչ մի աշխարհ...: Տիացմունքով դիտում ես արեւավառ՝ երբեմն էլ աշնանային գոյներ հագած, խորը ներբազագոյութեամբ կեանքի կոչուած գեղանկարներ, գծանկարներ, գեղջուկ կանանց գունագեղ կերպարներ, հողագործ բանուորներ, մէկ խօսքով հմայիչ գոյների եւ գծանկարների մի համայնապատկեր, որոնց մեծ մասը կարծես վրձինուած լինի՝ մեր մանրանկարներում օգտագործուած որդան կարմիրով:

Որպէս զգայուն արուեստագէտ, Այվազեանը գիտէ բնութեան հետ մերուելով, նրա արգանդից ծնած գոյների առիւնքնող գեղեցկութեան հմայքը վերարտադրել իր կախարդական վրձինով:

Երբ նայում ես Այվազեանի ստեղծած տղամարդկանց եւ կանանց նկարներին, անմիջապէս նկատում ես որ արուեստագէտը թափանցել

Է իր կերպարների ներաշխարհը, զգացել նրանց խինդն ու վիշտը, հոգեկան ապրումները, եւ իր տեսածն ու զգացածը յանձնել պաստառին, ոչ որպէս լուսանկարիչ, այլ գոյներն ու գիծերը իմաստաւորել գիտցող գեղանկարիչ:

Նախքան Սարոյեանի մասին խօսելը, անհրաժեշտ եմ համարում խօսել Թովմաս Թովմասեան վարժարանի կառուցման մասին, քանի որ դա կապ ունի Սարոյեանից ստացած իմ տպաւորութեան հետ: Ուրեմն, դպրոցի նախագիծը պատրաստելիս շէնքի ամբողջ արտաքինը (facade) այնպէս էի ձեւաւորել, որ դիտողը իւրաքանչիւր պատուհանի տակ քանդակուած եւ քով-քովի շարուած, հայկական եկեղեցական նարտարապետութեան բնորոշ եռանկիւն գծերով տարազաւորուած խաչեր միայն տեսնի: Պատկերաւոր ասած, շէնքին նայողը՝ միայն խաչերի մի մեծ տողանցք էր տեսնում...: Իմ առաջադրանքն է եղել խաչերը դնել այնքան խորը եւ ամուր, որ դրանց հանելն անհնար լինի, կամ էլ՝ հանելու համար մարդիկ ստիպուած լինեն ամբողջ դպրոցը «քանդել»...: Իմ նպատակն է եղել նաեւ ցոյց տալ, որ այս դպրոցը կառուցուել է հայի ձեռքով, հայի համար...:

Ուրեմն, Սարոյեանը եկել էր Թեհրան եւ փափաք յայտնել՝ այցելել Թովմասեան դպրոցը: Վարժարանը նրան ցոյց տալու հանելի պարտականութիւնը տրուել էր ինձ: Սարոյեանը ուշի ուշով խաչերին նայելուց յետոյ՝ ասաց.

«Բան մը ըսեմ քեզի, չեմ գիտեր թէ հոս աղօթելո՞ւ տեղ է, թէ սորվելու: Երկուքն ալ հոս են, թէ՛ եկեղեցին, թէ՛ դպրոցը...»:

Յարգելով խոստումս, հրատարակում եմ Արամ Խաչատուրեանի նկարի հետ կապուած պատմութիւնը:

Այդ տարիներին Թեհրանից Լոնդոն էր տեղափոխուել տաղանդաւոր նկարիչ Էդման Ալվազեանը: Նա ցանկութիւն յայտնեց նկարել Արամ Խաչատուրեանին. «Միայն մէկ ժամ տրամադրեցէք ինձ, Վարպետ, դիմեց նա Արամ Խաչատուրեանին:

Տակառակ իմ միջամտութեան եւ խնդրանքին՝ Վարպետը չհամաձայնուեց: Էդիկն ու ես հարցը լուծեցինք հետեւեալ ձեով:

Քանի որ ես, ընդառաջելով Վարպետի խնդրանքին, համաձայնուել էի բոլոր փորձերին ներկայ լինել եւ յաճախ կատարել նաեւ թարգմանի դեր, որոշեցի Էդիկին հետս տանել որպէս օգնական...:

Էդիկը համերգասրահի հեռու մի անկիւնում նստած, Վարպետի դեկավարած պահին մատիտով Խաչատուրեանի գծանկարը պատրաստեց, որից ծնուեց նկարչական մի հոյակապ գործ:

Երբ Խաչատուրեանը տեսաւ Էդիկի ստեղծագործութիւնը, հիացաւ որս վրայ եւ պահանջեց որ նկարը տրուի իրեն:

Այվազեանը մերժեց:

– Վարպետ, ասաց նա, դուք մերժեցիք, թէկուզ մի ժամ տրամադրել ինձ. ես էլ մերժում եմ իմ նկարը տալ ձեզ: Ձեր իրաւունքն էր մերժել ինձ, իսկ ես էլ, որպէս արուեստագէտ, ունեմ իմ սկզբունքները, դրա համար էլ մերժում եմ նկարս տալ ձեզ:

– Բայց նկարի նիւթը ես եմ, նկարը ինձ է պատկանում, ասաց Խաչատուրեանը բարկացած:

Վերջում հարցը հետեւեալ ձեով լուծեց Էդիկը: Նա յանձն առաւ մեծ նկարից պատրաստել երկու աւելի փոքր չափի նկարներ, մէկը Խաչատուրեանի իսկ միւսը ինձ համար:

– Վարպետ, աւելացրեց Այվազեանը, մեծ նկարը նուիրելու եմ Ամենայն Տայոց Կաթողիկոս Վազգէն Ա-ին, եթէ Վեհափառը ցանկանայ նկարը ձեզ տալ՝ դա իր գործն է...:

Էդիկի ինձ նուիրած նկարը կախուած է իմ տանը, Լոնդոնում: Գիտեմ, որ Վարպետի մահուանից յետոյ, Վազգէն Կաթողիկոսը Այվազեանի նկարի բնօրինակը նուիրել է Խաչատուրեանի անուան Տուն-Թանգարանին:

*Ասատուր Կիզեյեան
(Լոնդոն, Մարտ 2018)*

Խաչիկյան Լեւոն Ստեփանի

1.05.1918, Երեւան - 12.03.1982, Երեւան:
Հայ խորհրդային պատմաբան, բանասեր-աղբյուրագետ:
Պատմական գիտությունների դոկտոր (1962), պրոֆեսոր
(1966), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1968),
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս (1971):



🔗 **Շատ հարգելի բարեկամ՝ Ասասուր Գյուլելյան,**

Ձեր 28 մայիսի թվակիրը ստացել եմ մի քանի օր առաջ: Խորապես գնահատում եմ մեր մատենադարանը հարստացնելու համար թափած Ձեր ջանքերը: Ձեր աներհայրը, մեծարգո պրն Ալեքսյանը շատ դրական արտահայտվեց պրն Վաղարշակ Գալուստյանի մասին, որպես բազմարդյուն ուսուցիչ ու լավ հայրենասեր:

Ես 10 նոյեմբերի 1965թ. իմ նամակով խնդրեցի պր. Գալուստյանին մի ցանկ ուղարկել՝ իր գրադարանի պարունակությունը բացահայտող, որպեսզի հնարավոր լինի այստեղ որոշել, թե մեր գիտական-գրադարանային որ հաստատությանն է հարմար այդ նոյս գրադարանի մշտական ու խնամքով պահպանությունը:

Պր. Գալուստյանը սույն թվականի ապրիլի 24-ի իր նամակով հայտնեց, որ ցանկություն ունի «այս եկող ամառ... անձամբ գալ մեր սիրելի հայրենիքը... այն ժամանակ մենք մանրամասնորեն կազմած կլինենք մեր ամբողջ կարողության ցուցակը»:

Դուք հանձնարարում եք որևէ հաստատության կողմից հրավեր ուղարկել նրան ու տիկնոջը: Նկատի ունենալով, որ այդ հրավերը կապված պետք է լինի դժվարությունների հետ, ես կարծում եմ, որ ավելի նպատակահարմար կլինի հնարավորություններ ստեղծել պրն Գալուստյանի եւ նրա տիկնոջ համար, զբոսաշրջիկի հանգամանքով Տայաստան այցելելու համար: Մենք այստեղ հնարավորություն կունենանք, եթե հարկ լինի, մի քանի օր երկարացնելու նրա ժամկետը եւ դյուրություններ կստեղծենք՝ Տայաստանի տեսարժան վայրերն այցելելու եւ մշակութային օջախների աշխատանքներին ծանոթանալու:

Նարգելի բարեկամ, Դուք Ձեր նամակի վերջում հայտնում եք, որ Ձեր խմբագրությամբ լույս ընծայվող «Արեգակ» թերթը կարող է դադարել գոյություն ունենալուց: Շատ ցավալի է այդ լուրը. գուցե հնարավոր լինի Անգլիայում բնակվող հայերի միակ այդ պարբերականը շարունակելու համար միջոցներ որոնել: Շատ լավ հիշողություններ ունենք Ձեր եւ պրն Ալեքսյանի մասին: Նա հպարտ էր իր փեսայով, եւ գուրգուրանքով էր խոսում Ձեր փոքրիկ ու սիրունիկ դստեր մասին:

Ի սրտե մաղթում եմ Ձեր գերդաստանին հաջողություններ կյանքում եւ աշխատանքում:

Խնդրում եմ ողջույններ հաղորդել պր. Ալեքսյանին, Ձեր տիկնոջը եւ բոլոր նրանց, ովքեր ճանաչում են ինձ:

Նարգանքներով

*Մաշտոցյան Մատենադարանի տնօրեն՝
Խաչիկյան Լեւոն*



/ 11 նոյեմբերի 1965թ. /

*Պրն Ա. Գյուզելյանին
Լոնդոն, Անգլիա*

Միրելի բարեկամ, պրն Գյուզելյան,

Մի քանի օր առաջ մեզ մոտ հյուր եղավ Ձեր աներհայրը, պրն Պետրոս Ալեքսյանը, որը իր հետ բերել էր 25 հոկտ. Ձեր նամակում հիշատակված երեք գրքերը՝ նվիրված պրն Շնորհքյանի կողմից:

Պրն Ալեքսյանին հանձնվեց պրն Շնորհքյանին հասցեագրված շնորհակալագիր, որի մի պատճենը Ձեր թելադրանքով ուղարկվեց Լոնդոն պրն Ե. Նիկողոսյանին:

Պրն Ալեքսեանի հետ մենք օգտակար զրույց ունեցանք, շատ հաճելի ու հայրենասեր անձնավորություն է, նա հպարտ է Ձեզնով: Ուրախ ենք, որ այդպիսի ջերմ ազգակցական միջավայր ունեք:

Յանկանում ենք Ձեզ հաջողություն եւ եռանդ հայ լրագրության դժվարին ասպարեզում:

*Նարգանքներով՝ Խաչիկյան Լեւոն
(Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն)*



Մեծարգո պրոֆ. Ա. Գյուլելյան,

Մաշտոցի անվան Մատենադարանը ստացել է Ձեր ուղարկած «Ara» հազվագյուտ եւ կարեւոր պարբերականի 1892-95 թվականի հավաքածուն:


Այդ առթիվ հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Տեղեկացանք նաեւ, որ Դուք մտադիր եք ուղարկելու մեզ «The Armenia» պարբերականի հավաքածուն, այդ մեծապես օգտակար կլինի մեր գրադարանին:

Ուղարկում ենք Ձեզ Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» 1960թ. 2-րդ հատորը, ըստ Ձեր ցանկության: Ուրախ կլինենք կատարելու Ձեր այլ հանձնարարությունները:

Մաշտոցի անվան մատենադարանի տնօրէն

Խաչիկյան Լեւոն



Կապուտիկյան Սիլվա

Կապուտիկյան Սիլվա (Սիրվարդ) Բարունակի:
20.01.1919 Երևան, Հայաստան - 25.08.2006, Երևան,
թաղված է Կոմիտասի անվ. պանթեոնում:

Հայ գրող ու բանաստեղծուհի, արձակագիր,
հրապարակախոս, հասարակական գործիչ: ԽՍՀՄ
պետական մրցանակի դափնեկիր (1952), ՀԽՍՀ մշակույթի
վաստակավոր գործիչ (1970), Կրացական ԽՍՀ մշակույթի
վաստակավոր աշխատող (1980), ԽՍՀՄ գրողների միության
անդամ (1941), ԽՍԿԿ անդամ (1945): ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:



/ 28 ապրիլի 1963թ., Երևան /

Ասասուր Գյուլելյանին,

Տայ բառ ու բանի սրտագին նվիրյալին: Տարգելի Ասատուր,

Կարդացի ձեր բովանդակալից նամակը, եւ սիրտս նորից համա-
կեց ծանոթ տազնապներով ու հուզումներով: Չէ՞ որ հենց նոր եմ վե-
րադարձել Սփյուռքից եւ բոլոր ձեր հուսահատություններն ու հույզե-
րը ունեցել եմ անձամբ՝ նայելով մեր ցանուցիր ժողովրդի հոգեւոր ու
ֆիզիկական տարուրերումներին, տվայտանքներին:

Ի՞նչ արած, պետք է չհուսահատվել, տոկալ, քանի որ կա փրկա-
րար ափ ու փարոս: Կա Տայաստանը: Ապրիլ 26-ին ակադեմիայի մեծ
դահլիճում պատմեցի ուղեւորությանս մասին, հույսով եմ, որ շուտով
տպավորություններս կհրատարակեմ եւ դուք հնարավորություն
կունենաք կարդալու: Իսկ այժմ իմ սրտագին բարեւներս հաղորդի
ձեր վարժարանի բոլոր սաներին, իմ հեռավոր, բայց այնքան մոտիկ
բալիկներին:

*Երեսնյան ողջույններով՝
Կապուտիկյան Սիլվա*



Սիլվա Կապուտիկյանի տանը, 1963թ.: Ջախից՝ Շաքե Վարսյան, Յովհաննես Պետյան, Ասատուր Գյուզեղյան, Սիլվա Կապուտիկյան, Աբրահամ Աջըզյան, Անուշավան Սարգսյան, Յովհաննես Բաղալյան:



Ջախից՝ Ասատուր Գյուզեղյան, Ռոմիկ Մարտին, Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սեւակ: Երեւան, 1968թ.:



Ձախից՝ հայագետ Ֆ. Ֆեյտի, Սիլվա Կապուտիկյան, Ասատուր Գյուզելյան:
Երեւան, 1968թ.:



/ 4 *նոյեմբերի 1977թ., Լոնդոն* /

Մրտաբաց բարեկեցութեան Ասատուր Գյուզելյանին.

Ձառիվեր բացատր, որը, հիշտն ասած, նստելու համար այնքան էլ հարմար չէ, մանավանդ երբ նստողը գետնամած սեղաններին անսովոր արտասահմանցի է...

Կլորավուն երեսով եւ անբաժան ակնոցներով, շարժուձեւի մեջ հանդարտ, քայց գործով եռանդուն մի մարդ է Օննիկ Մարգարյանը, որ հիմա նստել է լռիկ ու լսում է ուրիշների խոսքն ու երգը: Նայում եմ ակնոցների տակից պարզորեն գծվող նրա աչքերին: Ինչ-որ խոնավացած են: Ու ես, չգիտես ինչու, հիշում եմ Տալեպի Մեսրոպյան վարժարանի փոքրիկ աղջնակի խոսքը եւ նույնությամբ կրկնում.

– Ո՞նց ես...

– Լավ եմ,– ժպտում է նա ու նորից լռում:

Իսկ Ասատուր Գյուզելյանը անընդհատ խոսք ու զրույցի մեջ է: Պատմում է Տնդկաստանից, այնտեղի նիստուկացից, պատմում է Կալկաթայի հայկական վարժարանի մասին, երգում է, սրախոսում, արտասանում: Ուրախ, շեն, հնդիկի պես թուխ մի երիտասարդ է Գյուզելյանը, որ երեւի Տալեպից Կալկաթա գնալով՝ ահագին թափ ու թռիչք է տարել այնտեղի նվաղող գաղութին:

Ուսուցիչներ կան Ադիս-Աբեբայից, Դերպեսայեից, Տալեայից, Դամասկոսից, Բեյրութից, Կալկաթայից ու դեռ ուրիշ տեղերից էլ կլինեին, եթե տեղական իշխանությունները արգելք չհարուցեին մեկնողների առաջ: Ու բոլորը եկել, միացել են Տայաստանի հողում եւ հիմա էլ խմբվել՝ գետնին, քարտեզի պես, փոփած սփռոցի շուրջը...

– Սփյուռքահայ պետք է ըլլալ, եւ այն ալ ուսուցիչ, զգալու համար, թե ինչ կա այս վայրկյանին մեր կուրծքերուն տակ,- զգացված խոսք է առնում գրող, Բեյրութի Տովակիմյան-Մանուկյան վարժարանի ուսուցիչ Լեւոն Վարդանը,- մեր սիրելի հայրենիքի կենա՛ցը, Սովետական Տայաստանի կենա՛ցը...

Անթիլիասի դպրեվանքի ուսուցիչ պարոն Երվանդ Տասնապետյանը հարկ է համարում ավելացնել.

– Տայրենիքին կենացը՝ առանց տեսակի...

– Տայրենիքի կենացը՝ տեսակով,- հակառակ ընկած...

Իմ հարազատների ժամանակներից հարազատ դարձած
բարեկամից՝

Ասատուր Գյուզելյանին:

Կապուտիկյան Սիլվա



/ 17 դեկտեմբերի 1978թ., Մոսկվա /

Սիրելի Ասատուր,

Սրտանց շնորհավորում եմ քո, տիկնոջդ եւ զավակներիդ ամանորը: Տիջում եմ բոլորիդ սիրով ու ափսոսանքով, որ հիվանդության պատճառով չկարողացա լոնդոնյան տպավորություններս գրի առնել: Ի՞նչ եղավ քո հարցազրույցը, արդյոք հրապարակվեց, որտե՞ղ, ե՞րբ: Գոնե դա մնար որպես փաստ ու հիշատակ:

Կրկին հանդիպելու մաղթանքով՝

Ձեր Կապուտիկյան Սիլվա

Հախավերդյան Լեւոն

26.12.1924, Ղարաքիլիսա (այժմ՝ Վանաձոր) - 6.02.2003,
Երեւան

Հայ գրականագետ, թատերագետ, թարգմանիչ,
հրապարակախոս: Բանասիրական գիտությունների դոկտոր
(1967թ.), պրոֆեսոր (1987թ.): ԽՍՀՄ գրողների միության
անդամ 1952 թվականից: ԽՄԿԿ անդամ 1955 թվականից:
ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1972թ.): ՀՀ ԳԱԱ
ակադեմիկոս (1996թ.)



/ 26 մարտի 1989թ. /

Միտելիդ իմ Ասասուր,

Այ՛ տղա, ի՞նչ տեսակ տղա ես դու: Ես Ալեքսանդր Տարությունյանից խնդրել էի, որ դու մի երկու շաբթ «ժիլետ» կոչված ածելիներ ուղարկես, մինչդեռ ուղարկել ես մի ամբողջ «Braun»: Իհարկե, շնորհակալ եմ մեծապես, բայց այդքան նեղություն չէի ուզե՞նա պատճառել քեզ:

Այնքան շատ բան կա գրելու եւ ասելու, որ չես իմանում ո՞րը գրես, ո՞րը թողնես, կասկած չունեմ, որ շատ բան գիտես արդեն, շատ բան էլ անխարդախ սրտի տեր Ալեքսանդրը պատմած կլի ինի, շատ բան էլ ես չեմ ուզում գրել՝ այնքան է տրտմալի ու սրտակեղեք:

Ուրեմն՝ միայն իմ անձնական ապրումների մասին: Ձեր սփոփանքն ու հույսը Մայր Տայրենիքն է, այն էլ ինքը դարձավ մխիթարության կարոտ: Ճակատագիր է, ի՞նչ կարող ես անել, այդպես է գրված մեր ճակատին, եւ մենք պետք է կրենք մեր խաչը: Խաչն էլ, ինչպես տեսնում ենք, լավ չի վարվում խաչապաշտների հետ: Ասում են Աստված իր հավատարիմներին է սիրում փորձության ենթարկել, ուրիշ խոսքով՝ իր հետ լավ վարվողների հետ է վատ վարվում: Սա ինչ հիմար սկզբունք է: Միայն մեր Աստվածը կարող էր նման բան հորինել: Մինչդեռ տես, թե ինչպես է վարվում ալլահը: Պետք է նրանից օրինակ վերցնել:

Կատակը մի կողմ՝ ապրում ենք, իրոք, լարված, դժվար, հուզախոռով կյանքով: Աղետները մի կողմից, մեր ժողովրդի ավանդական միամտությունը՝ մյուս: Բնությունն իր հերթին, մեր սխալաշատ վարքագիծը՝ մյուս: Ե՞րբ պիտի խելք սովորենք: Աշխարհի բոլոր ծագերից մեզ ցույց տրվող բարոյական եւ նյութական օգնությունը մեծ է չափա-

զանց, դա է մեր նեցուկը, բայց ամեն ինչ մասնագիտորեն հմուտ եւ քարոյապես պարկեշտ օգտագործել՝ այդպես էլ չտոկրեցինք:

Իհարկե, ոչ մի կասկած, էլի ոտքի կկանգնենք, հայոց տունը կշենացվի, մեր ժողովուրդը կա ու կմնա, բայց դրա համար շատ մեծ գին պիտի վճարենք: Դա ենք անում՝ ամեն մեկս մեր ունեցածի, մեր ուժերի չափով: Ես 65-ի մեջ եմ արդեն, ապրում եմ փաստի վրա սաստիկ զարմանալով (էս ե՞րբ եղավ), ինչպես հատուկ է այդ հասակի մարդկանց անցյալը շարունակ մտաբերելով: Բարեբախտաբար, հիշելու շատ բան ունեմ, եւ իմ մտապատկերում նաեւ մեր հանդիպումներն են ամուր մնացել՝ Լոնդոն (1960-ին, թե՞ 1961-ին), Երեւանում, հիշո՞ւմ ես, լուսահոգիներ Պարույրի եւ Ռաֆայել Բարայելյանի հետ:

Ինչպե՞ս չէինք հասկանում, որ դրանք երջանիկ օրեր են, կարծում էինք միշտ այդպես կլինի:

Օր ծերության դարձել եմ տնօրեն (մեր ակադեմիայի Արվեստի ինստիտուտի՝ Ռուբեն Զարյանն իր տեղը զիջեց ինձ): Ասեմ ամենայն անկեղծությամբ՝ շատ էլ ուրախ չեմ դրա համար՝ դժվար ժամանակներ են, գլուխ քորելու միջոց չունեմ, թոռներիս հետ խաղալու (շատ հաճելի զբաղմունք է) ժամանակ՝ նույնպես: Առաջ ազատ մարդ էի, գիրք էի գրում, հողվածներ, երբ կամենայի: Տիմա էլ նույնն եմ անում, բայց անհամեմատ քիչ:

Տրանտ Մաթեոսյանն իր գրվածքներից մեկում ունի այսպիսի մի միտք՝ «կյանք է, պիտի ապրվի»: Այդպես էլ վարվում ենք՝ ջանալով, որ այսքան տարի պահված խիղճն ու պատիվը չկորցնենք: Այսօրվա պայմաններում դա էլ դյուրին գործ չէ, բայց եւ քիչ է: Պիտի կարողանանք սատար կանգնել մեր ժողովրդին իր վերքերն ապաքինելու, ոտքի կանգնելու կյանքի բնական ու բանական հունի մեջ ու դժվար ճանապարհին:

Երանի՛ կարողանանք...

Քո՛ Տախվերդյան Լեւոն



Միրելիդ իմ Ասասուր,

Ստացա քո հերթական ընծաները շնորհակալությամբ եւ ներքին մի հարցումով՝ ես ինչո՞վ եմ պարտավորեցրել Ասատուրին, որ նա իր սեպուհ պարտքն է համարում ամեն պատեհ առիթով շոալլ նվիրաբերումներ անել ինձ... հարցս մնում է անպատասխան, գոնե իմ կողմից: Իսկ քո՞ կողմից: Դու կարո՞ղ ես պատասխանել:

Շատ խնդրում եմ փոքր-ինչ զսպել քո նվերամուլ ձգտումները, թեեւ այն էլ պիտի ասեմ, որ ուղարկածներդ ճիշտ եւ ճիշտ իրենց տեղն են ընկնում ամենայն տեսակետից: Ըստ երեսույթին, նվերներ ուղարկելու մեծ փորձ ունես: Այ, եթե դու Երեսանում լինեիր՝ քո այդ փորձը քեզ չէր օգնի հասկանալի պատճառներով: Ի՞նչ պիտի ուղարկեիր գրքերից քացի...

Իսկ մեր պատմական լուսանկա՞րը: Ինչ ասես արժե: Ո՞նց էլ մտքովդ անցել է:

Նայում եմ այդ լուսանկարին, եւ աշխարհ է գալիս ու անցնում մտքովս: Քանի՞ տարի է անցել, 30 տարուց 3 պակաս, իսկ եթե մի քիչ էլ առաջ գնանք՝ մեր առաջին լոնդոնյան հանդիպումը, եթե չեմ սխալվում 1960-ին, երեք տասնյակը կլրանա: Տիմա ես 65 եմ, 30 տարի առաջ՝ 35, դու երեւի, ավելի երիտասարդ: Ինչ երջանիկ տարիք եւ քաջառողջ վիճակ: Ափսոս միայն, որ արժեքը չէինք հասկանում, ինչպես երիտասարդներն առհասարակ:

Ինչքան ջրեր, վարար, պղտոր ու հստակ ջրեր, ավելի շատ պղտոր, քան հստակ, այդ ժամանակներից ի վեր, ինչքան ընտիր մարդիկ լուսահոգի դարձան՝ Պարույրը, Ռաֆայել Իսրայելյանը, Վահրամ Մավլանը... առաջինն ու երրորդը մեր սերնդակից մարդիկ: Սենք, քչերս ենք մնացել այն երջանիկ ժամանակներից, երբ, ինչպես երջանիկ մարդիկ սովորաբար, մեր երջանկությունը չէինք զգում, կարծելով, թե միշտ այդպես պետք է լինի:

Տիմա մենք դժվար, շատ դժվար ժամանակներ ենք ապրում՝ մեր երկրի համապետական (պերեստրոյկա) եւ մեր ժողովրդի՝ համագալին: Դրանք ազուցված են «ազատություն» անունով, եւ նա չզիտե ինչպես վարվել այդ խաղալիքի հետ: Սովոր չենք: Առավել եւս մենք՝ հայերս:

Նամապետական առումով հիմա ինչ միայն չի ասվում ու գրվում:

Տակն այլևս բան չմնաց: Այդ ամենին, անշուշտ, տեղյակ ես ձեր Time-երից, բայց չես իմանա, թե ոուս հրապարակախոսները, որ հիանալի տիրապետում են իրենց գրչին, ինչ փայլուն դատողություններ են անում: Ասենք՝ «մեր երկրում տիրապետել է ճորտատիրությունը կոլտնտեսությունների անվան տակ եւ պետական ստրկատիրությունը ԳՈՒԼԱԳ-ի տեսքով»: (Այս ԳՈՒԼԱԳ-ը Սոլժենիցինի գրքի ծանոթ վերնագիրն է՝ «ԳՈՒԼԱԳ արշիպելագ», քիրտ աքսորավայրերի ընդհանուր անվանումը):

Տիմա բանը հասել է այսպիսի հարցադրման՝

1) խորհրդային երկրի ստեղծման գաղափարները լավն էին ու ազնիվ, բայց ընկան գեշ մարդկանց ձեռը՝ ա՛յդ պատճառով մենք հայտնվեցինք ողբալի կացության մեջ,

2) թե՞ գաղափարներն ինքնին գեշ էին եւ դրանք ուրիշ հետեւանքի հասցնել չէին էլ կարող:

Եվ ի՞նչ: Եվ այն, որ հակված են երկրորդի կողմը, չմոռանալով նաեւ գեշ կառավարիչների պարագան: Իհարկե, ճիշտը դա է:

Ինչ վերաբերում է մեր ազգային շարժմանը, ապա այստեղ կարող ես ամեն ինչ գտնել՝ խելացի ու լրջախոհ մտածողներ, որոնց թիվը, բնականաբար, քիչ է եւ որոնց լսողներն ու հասկացողներն էլ քիչ են՝ մինչեւ, աստիճանական անկումով, ամենատխմար ու շփերթ ամբոխավարները, որոնց օտար լեզվով պոպուլիստ են կոչում: Սրանք՝ ամբոխի տրամադրությամբ ընթացող եւ նրան սիրաշահողները շատ են ու սրանց լսողներն էլ շատ են: Սա է դժբախտությունը: Ընկեր փանջունիությունը ծլում ծաղկում է եւ շատ գործ է փչացնում: Դու իմանաս, թե ինչ արժե այս պայմաններում անկախության կարգախոսի հռչակումը, քաղաքական եւ դիվանագիտական մտածողության կատարյալ բացակայությունը որքան հայավնաս կարող է լինել: Բայց շատ շատերը դա չեն հասկանում, չեն ուզում հասկանալ, հարբել են ազգային գործչի փառքի հեռանկարով, դուրս են տալիս, ինչ իրենց կարն խելքին փչում է եւ ապակողմնորոշում երիտասարդությանը:

Բարեբախտություն է, որ ունենք խոհուն, հայրենիքի շահերը հասկացող մարդիկ եւ հանրապետության կառավարիչներից շատերը, նաեւ առաջինը, դրանց թվին են պատկանում: Այլապես առանց այն էլ մեր դժվարին վիճակն ավելի դժվար պիտի լիներ բովանդակ երկրի այս քաղաքական եւ տնտեսական երերուն դրության, Ղարաբաղյան

պրոբլեմի ծայրահեղ լարվածության, աղետի գոտու վերականգնման անհնարին մաքառման պայմաններում:

Ապրում ենք ամենօրյա լարվածության մեջ, օր չի անցնում, որ էլի մի խնդիր չծագի Մոսկվայում, թե Երեւանում, հանրապետության սահմանների վրա, ասենք, բովանդակ միության բոլոր ծագերում: Ապրում ենք չափազանց լեցուն, դեպքերով, դիպվածներով, տազնապալի լուրերով հագեցած կյանքով: Չանձրույթի ո՛չ մի պահ, մինչդեռ այնպե՛ս կուզենայինք ձանձրանալ: Շատ ենք հոգնել:

Կարմիր լուրեր հայրենիքից...

Կար ժամանակ, որ սրտապնդող լուրերը հայրենիքից էիք առնում եւ գոտեպնդվում, այո՛, կար ժամանակ, հիմա այդ ժամանակը չկա:

Այս ամենից չլինի թե եզրակացնես, թե մատնված ենք հուսահատության: Բնավ: Կա դժվարին մաքառում, բայց կան եւ մաքառողներ, կան եւ հուսադրող հանգամանքներ: Այստեղ որ լինես Երեւանը կտեսնես այնպես, ինչպես տեսել ես, ներսը թափանցելով միայն կարող ես հաղորդվել ներքին լարվածությանը:

Ի՞նչ եմ անում ես: Այդ էլ ասեմ, ելույթներ, հոդվածներ, հավաքներ, ժողովներ: Այս վերջինները չափազանց շատացել են այն պատճառով, որ մեր գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի տնօրենն եմ արդեն երկու տարի: Օր ծերության դարձա պետական հաստատության կառավարիչ: Դա չի բռնում իմ էությանը: Բայց այդպես կատարվեց ինձնից գրեթե անկախ պատճառներով:

Այս օրերին, ավելի քան երկու ամիս, կտրվել եմ հասարակական կյանքից: Դրա պատճառն էլ ասեմ: Գլխիս փորձանք եկավ: Վիրահատվեցի, շագանակագեղձի Prostatitis adenoma, շատ սովորական վիրահատություն, հուսամ, որ հասակի հետ կապված այդ ուղտը չի չոքել քո առաջ, թեթեւ վիրահատություն, որ սակայն ծանր հետեւանքներ ունեցավ մեր բազմահմուտ վիրաբույժների շնորհիվ եղավ վարակում (ինֆեկցիա) եւ երկու ամիս է խելքս գլուխս չի գալիս: Տիմա լավ եմ, ապաքինվում եմ, բայց ոչ կատարելապես, դեռ էլի ժամանակ է պետք եւ որոշ բուժումներ:

Ասանկ բաներ, պարոն Ասատուր, ինչպես սիրում էր ասել՝ Վահրամ Մավյանը:

Իմ բանը ոչինչ, կարգի կգամ շուտով, դրա վերջը երեւում է, բայց մեր մաքառման վերջն է, որ չի երեւում, համենայն դեպս՝ տեսանելի

հեռանկարի մեջ: Եվ ո՛չ ոք, Աստված ինքն էլ չի կարող կռահել, թե վերջն ինչպես է լինելու:

Կարեւորն այն է, որ հույսներս չենք կորցնում: Դա էլ մեր ժողովրդից է գալիս, մաքառման սովոր մեր տոկուն, ամեն հարգանքի արժանի մեր ժողովրդից:

Ափսո՛ս ժողովուրդ, որ ավելի լավ ճակատագրի էր արժանի:

Է՛հ, «ձախորդ օրերը, կուգան ու կերթան...», նիշտ տեղն է մտաբերելու աշուղ Ջիվանուն:

Այս նամակս, երբ քեզ հասնի՝ 1990-ի մեջ կլինենք արդեն: Շնորհավոր տարիդ: Մաղթենք, որ այս տարի լավը լինի աշխարհի համար, Երեւանի ու Նայաստանի համար, Լիբանանի ու Նալեպի, Թեհրանի ու Լոս-Անջելեսի, համայն հայության համար, Լոնդոն, թե Փարիզ եւ ամենուրեք: Ուրեմն, նաեւ քեզ ու ինձ համար, մեր ընտանիքների ու մերձավորների, որ անագորույն ճակատագրի ձեռքն ընկած այդ հայության հարազատ ու անքակտելի մասն ենք կազմում եւ ուրիշ ոչ մի, թեկուզ եւ երջանիկ, ժողովրդի մասը կազմել չէինք կամենա:

Շատ կուգենայի, որ հանդիպեինք Երեւան կամ Լոնդոն եւ մի կուշտ զրուցեինք գլուխ-գլխի: Ո՛վ կտա մեզ այդ բախտը:

Նուսանք եւ սպասենք, սպասենք եւ հուսանք, արդեն մեր ամբողջ կյանքը հուսալն ու սպասելը եղավ:

Է՛հ, աստված թող եղածն օրհնի, ինչպես կասեր լուսահոգի Նովհաննես Թումանյանը: Մնացածը՝ ճակատագրի կամքով: Թո՛ղ կատարվի ինչ որ բարին է:

*Մրտագին բարեկեցությամբ
քո Նախվերդյան Լեւոն*



/ 16 մարտի 1991թ. /

Ասասուր ջան, սիրելի՛ եղբայր,

Մտքովս անցավ քեզ ուղարկել իմ այս երկարաշունչ հոդվածաշարը՝ նամակի փոխարեն: Սա քեզ ավելի ամբողջական պատկերացում կտա Նայաստանի այսօրվա վիճակի եւ իմ մտածումների մասին, քան որեւէ նամակ: Վստահ եմ, որ քեզ կհետաքրքրի, մեր ազգային դարդերն են, ինչպե՞ս կարող է չհետաքրքրել:

Դիմանում ենք, դիմադրում ենք, մաքառում՝ լավ օրերի հույսերով:
(Ասում են, չէ՞, հույսն ամենից վերջինն է մեռնում): Չենք թողնի, որ
մեռնի:

Ի՞նչ կլինի, որ մի քանի տող գրես՝ իմանամ վիճակդ: Առանց այն էլ
սփյուռքում քիչ մարդ է մնացել, որից նամակ եմ սպասում: Ի՞նչ տղա-
ներ կորցրինք, ամայանում է մեր չորս բոլորը:

Կարոտագին բարեկեցիկ ես հանդիպումի անհույս հույսերով քո՝

Տախվերդյան Լեւոն



/ 14 փետրվարի 1997թ. /

Սիրելիդ իմ Ասասուր,

Տիշո՞ւմ ես, ինձ մի լուսանկար էիր ուղարկել: Տիմա այդ լուսանկարը
կգտնես ուղարկածս գրքի մեջ: Տուտվ եմ՝ գոհ կմնաս: Կմտաբերես
անցած-գնացած օրերը...

Ի՞նչ լավ, ի՞նչ գեղեցիկ օրեր էին: Ո՞ր գնացին այդ օրերը, գնացին
անվերադարձ՝ մեզ համար այնքան սիրելի մարդկանց հետ:

Տիմա ես Բեյրութ եմ մեկ ամսով, բանախոսություններ եմ կարդում
Տայկազյան համալսարանում (հիմա այդպես է կոչվում կոլեջը) եւ
Բարեգործականի սրահում: Ապրում եմ արքայաբար իմ ազնվական
բարեկամներ Արմենի և Միմիի քնքույշ հոգածությամբ՝ իրենց իսկ
հրավերով: Իհարկե, լավ եմ զգում ինձ: Բայց սա այլեւս իմ Բեյրութը
չէ, ուր Ծառուկյանը կար եւ Մուշեղ Իշխանը, Օննիկ Սարգսյանը կար
եւ Վահրամ Մավյանը, Դուրյանը կար եւ Ադդարյանը... Կային՝ չկան,
ինչպես Ծառուկյանը գրել էր իր «Մեծերը եւ մյուսները» հետմահու
լույս տեսած հիանալի գրքում:

Է՛հ, մենք էլ կսպասենք մեր հերթին՝ ուրախանալով ու վշտանա-
լով, ինչպես կարգն է: Այնքան, ինչքան Տերը կարտոնե: Սա է կյանքը՝
սեւավի... Թող լինի այն, ինչ լինելու է:

Լավ եղիք, սիրելիս:

Քո՝ Տախվերդյան Լեւոն

Ընդունիր հողվածս իբրև նամակ:

Քո Լեւոն

«Եթե թերթերում կարող են հանրապետության նախագահին նկարել մորեմերկ եւ ինչ ասես գրել նրա մասին՝ ես այդպիսի ազատություն չեմ ուզում, որքան էլ պրեզիդենտը հայրաքար հորդոր կարդա մտավորականությանը, թե հիմա ազատություն է՝ վայելեցեք ինչքան կամենաք, էլ ի՞նչ եք ուզում:

Եթե մեր գրողները տարիներ ի վեր ոչինչ չեն գրում, եթե մեր աչքի ընկնող դերասանները չեն խաղում, հարտարապետները չեն նախագծում ու չեն կառուցում, եթե գեղարվեստական մշակույթի զարկերակը գրեթե կանգ է առել՝ դա ի՞նչ ստեղծագործական ազատություն է: Չեմ ուզում:

Եթե գիտական աշխատողները գրում են ու չեն տպագրվում (հենց այն գիտական հաստատության մեջ, ուր ես աշխատում եմ՝ Ակադեմիայի արվեստի ինստիտուտը, հիսունից ավելի կարգին աշխատություն պատրաստ՝ ապարդյուն սպասում են հրատարակության), եթե նույն այդ գիտական հարստության, դժբախտաբար, ոչ միայն դրա, ընդունակ երիտասարդներ թողնում են հայրենիքը եւ անվերադարձ մեկնում դուրս այդպիսի ազատություն չեմ ուզում: Տայրենիքը լքելու, հայրենիքի շնորհքն ու իմացությունն աղքատացնելու ազատություն: Չեմ ուզում, ձեզ լինի այդ ազատությունը: Դա ազատություն չէ, այլ քառի շահարկումը: Բառն ենք խաղացնում՝ իմաստը դատարկված: Գյոթեն «Ֆաուստում» գուր չէր արել իր հանճարեղ կռահումը, երբ քառերը կզրկվեն բովանդակությունից՝ գործի կդրվեն քառերը, սնամեջ քառերը միայն: Տիմի մերն է՝ «ազատություն», «անկախություն», «ժողովրդավարություն»...

Քանի՞ գիրք է լույս տեսել վերջին տարիներս, երեւի թե հազիվ մի քանի գիրք՝ կասկածելի որակի. քանի՞ գիրք կա, որ թախծում են հրատարակչական գորոցներում՝ շա՛տ (հենց երկուսը տողերիս գրողինն են): Ե՞րբ են լույս տեսնելու կամ լույս կտեսնե՞ն երբեք: Տայտնի չէ:

Գրականության, արվեստի, գիտական եւ գեղարվեստական մշակույթի հարցերից եմ խոսում: Բայց դրանք, թող ինձ ներեն գրչակիցներս, երկրորդական, շա՛տ երկրորդական նշանակություն ունեն ժողովրդի կեցության համեմատ:

Ժողովուրդը մատնված է ծայր աղքատության, բացառություններ կան, իհարկե, բայց դրանք ոչ թե մեղմում, այլ շեշտում են համատարած աղքատությունը: Այս դեպքում ինձ զբաղեցնում է ոչ թե աղքատությունն առհասարակ, այլ աղքատությունն իբրև ազատության հերքում, այդ տեսանկյունը հատկապես: Ժամանակին, երբ Լեւ Տոլստոյը բողոքում էր գյուղական համայնքները վերացնելու Ստոլիպինի քաղաքականության դեմ, վերջինս գրողին ուղղած պատասխան նամակում գրել էր, թե համայնքը գյուղացուն թույլ չի տալիս հարստանալ, իսկ «աղքատությունը ստրկության վատթարագույն տեսակն է»: Նենց այս տեսանկյունը: Ի վերջո, դրան կարելի էր դիմանալ (գիտենք, որ միայն մեր հանրապետության վիճակը չէ այսպես), եթե բանն այնպես չընթանար, որ փոքրաթիվ հարուստներն ավելի էս հարստանային մեծաթիվ չունեւորներին ավելի էս չունեւոր դարձնելու գնով: Եվ սա՞ է, որ կոչվում է ժողովրդավարություն, դեմոկրատիա: Չեմ ուզում: Ձեզ լինի:

Տին ռեժիմի պայմաններում այն էր դառնորեն վրդովեցնում, որ կուսակցական եւ պետական պաշտոնյաների մի վիթխարի բանակ լավ ապրում էր աշխատավոր ժողովրդի հաշվին, ասես մի առանձին դասակարգ: Եվ դա կոչվում էր սոցիալիզմ, հետո էլ՝ զարգացած սոցիալիզմ: Ինչպիսի՞ ծաղր:

Տիմա ի՞նչն է հնից տարբերվում՝ կուսակցական եւ պետական պաշտոնյաների բանա՞կն է ավելի փոքր, ախորժա՞կն է ավելի համեստ, վարքագի՞ծն է ավելի պարկեշտ: Կարծես թե ո՛չ մեկը, ո՛չ մյուսը, ո՛չ երրորդը: Դժբախտաբար:

Մի բժիշկ ընկեր ունեի, բացառիկ ձիրքի տեր: Պատմող էր, շատերը կիմանան՝ Միհրան Տայրապետյանը: Պատմում էր, թե իրենց հիվանդանոցում ժողով էր՝ ով քանի գիշեր պետք է հերթապահի: Ժողովում կողմնապահություն է արվում բացահայտորեն: Մեկ էլ ձայն է խնդրում հիվանդանոցի ամենասակավախոս բժշկուհին եւ ասում է միայն՝ «Եթե սոցիալիզմ է պետք է տանջվենք, եկեք բոլորս հավասար տանջվենք»: Տիմի մերն է: Թող բոլորը հավասար տանջվեն, ժողովուրդն ամեն ինչին կդիմանա անմոռու, այլապես դժվար թե դիմանա:

Մեր լրագրողներից մեկը՝ Խաչիկ Մանուկյանը, պատմությունից մի վառ օրինակ էր բերել իր հոդվածում («Դարավերջի շունչը ծանր է» «Գր. թերթ» 31.08.92): Այնքան ուսանելի, որ մեջ եմ բերում. «Արշա-

վանքներից մեկի ժամանակ, ամայի տարածություններով անցնելիս, երբ Ալեքսանդր Մակեդոնացին հրամայում է ջուր բերեն, իրեն սեւեռված տասնյակ հազարավոր ծարավ հայացքներ տեսնելով՝ ջրով թասը շրջում է հողին: Իհարկե, կարող էր հագեցնել իր ծարավն ու ասել, որ զինվորներն ըմբռնումով կմոտենան: Կարող էր իր զինակից հրամանատարներին էլ բաժին հանել եւ այս անգամ խմբովին հայտարարել, որ հպատակներն ըմբռնումով կմոտենան: Կարող էր: Բայց դա իր հաղթարշավի ավարտը կլիներ»:

Տիմա մեր ժողովուրդն ինչպես անի, որ «ըմբռնումով մոտենա» իր այսօրվա կառավարիչներին: Երեկվա պաշտոնեության համեմատ ունեցած ո՞ր առավելության՝ մասնագիտական բարձր որակի՞, արդարամտության եւ բարոյական բարձր մակարդակի՞, թե՞ տեսական խորունկ իմացության:

Ես գիտեմ, որ բավականությունից մեծագույնը չէ այսօրվա Նայաստանը կառավարելը, բայց գիտեմ նաեւ, որ բավականություններից մեծագույնը չէ մեր այսօրվա կառավարիչների խելքով շարժվելը:

Թե ի՞նչ եք անխնա քանդել՝ գիտենք, բայց թե ի՞նչ եք կառուցում, ի՞նչ հասարակարգ՝ գաղափար իսկ չունենք: Կամ առհասարակ կառուցո՞ւմ ենք որեւէ բան՝ նույնպես չգիտենք, որովհետեւ մեր կառավարումը չունի տեսական որեւէ հիմնադրույթ: Տարերայնորեն գնում ենք մութի մեջ, չիմանալով թե ուր:

Այսուամենայնիվ, եղա՞ն ինչ-ինչ դրույթներ: Ինչո՞ւ չէ, եղան:

Ասենք՝ «երրորդ ուժի բացառման» օրենքը, որ մեզ հանգեցրեց մենակության՝ առանց հուսալի դաշնակիցների: «Նայաստանը չունի մշտական դաշնակիցներ ու բարեկամներ, այլ մշտական շահեր» ամբարտավան դրույթը, ասել է թե մենք ամեն հարմար առիթով կարող ենք փոխել մեր դիրքորոշումը: Ի՞նչ դուրս եկավ: Մի բան, երբ այսպես ասում էր անցյալ դարի Բրիտանական հզորագույն կայսրության քաղաքագետը՝ ուզես-չուզես պիտի հաշվի նստես իր տերության հետ, եւ միանգամայն ուրիշ, երբ այս լեզվով խոսում է տնտեսական ու ռազմական փոքր զորության տեր Նայաստանի քաղաքագետը՝ քեզ հետ ո՞վ է հաշվի նստողը, դո՞ւ պիտի հաշվի նստես: Չունեք կայուն դիրքորոշում, ուրեմն վստահություն չեք ներշնչում (մի՞թե կյանքում նույնը չէ), ուրեմն ձեր հերն էլ անիծած: Եվ անիծում են:

Շուկայական հարաբերությունների՞ ենք անցնում: Անցանք: Բայց

Եթե դրա հետեւանքով մեր մայրաքաղաքը, ոչ միայն մայրաքաղաքը, պիտի պատվեր նկուղներում բուն դրած խլորդային դուքանների, մեծ ու փոքր կողոպտարանների ցանցով, մեզ դարձնելով դուքանչիների ազգ՝ չեմ ուզում: Եթե երիտասարդ տղամարդը, ինչպես ցույց տվին հեռատեսիլով, գլուխ է տանում կնասպատկան վարտիքներ պանրի հետ փոխանակելու՝ այդպիսի շուկայական, հիշտը՝ չարչիական հարաբերություններ չեմ ուզում:

Դա ազգությունը տանում է բարոյական ինքնասպանության, բարոյական ավանդական արժեքները ոչնչացնելու ճանապարհով: Երիտասարդության մարդկային եւ հայրենասիրական ներաշխարհի աղքատացում՝ չեմ ուզում:

Կարծում եմ, թե սեփականատիրական հարաբերությունների հաստատումն ամենափրկիչ մի բան է, որ կբուժի բոլոր վերքերը: Այդպես չի եւ չի էլ եղել: Դա պարզապես նվազ ողբերգական, նվազ դժբախտ հասարակարգ է, քան եղել է սոցիալիզմի սովետական մոդելը՝ համաշխարհային հեղափոխության ցնորամիտ՝ ժողովուրդներին նորտության ու չքավորության դատապարտող, արյան հեղեղներ քափող սեւեռուն գաղափարախոսությամբ, հասարակարգ, որի համեմատ ցարի նորտատիրական կարգերը հովվերգություն են թվում, մանկական անմեղ խաղ:

Այլապես՝ սեփականատիրական հասարակարգն ինքնին չարիքներ շատ է ծնել, այնքան շատ, որ ժան-ժակ Ռուսոյին թույլ տվեց մտածելու, թե այն մարդը, որ առաջինն է ցանկապատ քաշել ու ասել, թե սա իմն է՝ մարդկության պատմության առաջին ոճրագործն է: Տիմա ամեն ոք գիտե, որ Ռուսոն իրավացի չէր, որ ինչ էլ լինեք սեփականատիրական հասարակությունն է եղել համաշխարհային քաղաքակրթության հիմքերի հիմքը: Բայց նույն այդ սեփականատիրական հարաբերությունները ծնել են այնքան դժբախտություններ, որոնց վառ արտացոլումներն են, ինչո՞ւ հեռու գնանք, հենց հայ գրականության հուշարձանները՝ միջնադարյան Ֆրիկից մինչեւ Սունդուկյան ու Շիրվանզադե, մինչեւ Թումանյանի «Տառաչանքը»:

Կապիտալիզմը, պարզապես ու հայտնապես, նվազ դժբախտ երեւույթ է, քան սոցիալիզմը: Եթե սոցիալիզմը տապալվեց, դա հոչի՞ նշանակում, թե կապիտալիզմի ամեն ինչը կարգին է: Անեմ վերապահում՝ տապալվեց ոչ թե սոցիալիզմը, այլ դրա բռնատիրա-

կան խորհրդային մոդելը, որ սոցիալիզմից այնքան էր հեռու, որքան երկինքը երկրից:

Սեփականատիրական հարաբերություններն էլ կարող են լինել ցավազին եւ նվազ ցավազին: Կարո՞ղ ենք ասել, որ սեփականաշնորհման այն ընթացքը (գործընթացըս ո՞րն է, եղբայր), որ բռնել է մեր հանրապետության իշխանությունը, նվազ ցավազինն է: Դժբախտաբար չենք կարող: Ես որ, դատելով մինչեւ հիմա արվածից, հողի սեփականաշնորհման իրողություններից, բնավ վստահ չեմ, որ դա չի հանգեցնի հարուստների առավել հարստացմանը եւ աղքատների առավել աղքատացմանը, դասային, եւ ինչո՞ւ չասել, հենց դասակարգային հակասությունների ծայրահեղ սրմանը, որ դժբախտությունների առատաջուր ակունք է: Տետո էլ նորից անցնենք դասակարգային պայքարի: Բավական է, դրանից բավականաչափ կուշտ ենք:

Այդպիսի հեռանկար խոստացող սեփականաշնորհում չեմ ուզում:

Լեռնային Ղարաբաղի այրող հանգույցին գանք: Ամենքը գիտեն, որ մենք անկախություն ստացանք ոչ թե մեր պայքարի կամ ցնծալի հանրաքվեի, այլ այն իրողության հետևանքով, որ Խորհրդային Միությունն առանց մի կրակոցի պարտվեց 20-րդ դարի հակամարտության մեջ եւ փուլ եկավ թղթե տնակի պես:

Ի՞նչ կոնցեպցիա մշակեցին Ղարաբաղյան շարժման գաղափարախոսները Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: Ոչ մի կոնցեպցիա: Դրա փոխարեն 1989-ի դեկտեմբերի 1-ին կայացրին Լեռնային Ղարաբաղը Տայաստանին միացրած հայտարարելու որոշումը: Որքան հանդուգն, նույնքան անբովանդակ որոշում: Գուցե կարելի՞ էր խորհուրդ անել լրջախոհ քաղաքագետների, թեկուզեւ միջազգային մակարդակի մեր հայտնի քաղաքագետ Անդրանիկ Միհրանյանի հետ: Չարվեց: Եվ հաղթեց ոչ թե սառը բանականությունը, այլ բազմության հուզական տաք ու անհեռատես վարար հոսանքը: Դա փաստորեն Ադրբեջանին պատերազմ հայտարարելու որոշում էր, ուլտիմատում՝ վերջնագիր, որի արդյունքն ադրբեջանցիներին ոտքի հանելը եղավ: Ամերիկահայ գրող Տակոբ Կարապետյանը ճիշտ էր գրել, որ վերջնագիր ներկայացնողը պետք է պատրաստ լինի անմիջապես պատերազմի դաշտ իջնելուն: Պատրաստ էինք: Ո՛չ: Բայց վերջնագիր ներկայացրինք: Կտրեցին առանց ոչ թե յոթ, այլ գեթ մի անգամ չափելու: Իսկ հիմա ոչ թե ուրիշ, այլ նույն պատլամենտն անվերջ չափում է ու կտրում՝

Լեռնային Ղարաբաղի ինքնուրույն պետականությունը չի ընդունում, թե դա կնշանակի պատերազմ հայտարարել: Նոր պիտի հայտարարվի, 89-ի դեկտեմբերի 1-ին արդեն հայտարարված էր: Ծայրահեղ անզգուշությունից մինչև ծայրահեղ զգուշամտություն՝ քանի՞ քայլ է: Նույն մարդիկ չե՞ն: Վերջապես ա-ն ասողը բ-ն էլ պիտի ասի, կամ հրաժարվի ա-ից: Ո՛չ մեկն է, ո՛չ մյուսը:

Ես չեմ ուզում այն անկախությունը, որի չկռահված հետեւանքը, ի հերքումն «Ղարաբաղյան շարժման» հայրենասիրական ոգեշունչ, բայց իրատես մտադրությունների եւ չնայած մեր համբուրելի երիտասարդության անձնագոհ մաքառմանը, Ղարաբաղի ավերման ու հայաթափման վերահաս վտանգը պիտի լիներ, մեր սահմանամերձ գյուղերի (իմ հայրենի Կոթի գյուղն էլ դրանց մեջ) քարուքանդ արվելը պիտի լիներ, ծաղկուն Արծվաշենի ողբերգությունը պիտի լիներ:

Մտաբերե՞նք Օտյանի «Առաքելություն մը ի Ծալլվար» հանճարեղ երգիծապատումի վերջավորությունը. «Գյուղին մեջ չկար ոչ մեկ շունչ. Ողջ մնացողները խույս տվեր էին մոտակա գյուղերը: Ավերակ եւ ամայություն կտիրեր ամեն կողմ:

Տեսարանը ցնցող ու տպավորիչ էր:

Պաշտոնս ավարտած համարելով որոշեցի անմիջապես հեռանալ գյուղեն...: Առայժմ մտադիր եմ մնալ Մաշկերտ: Գյուղը ավելի բազմամարդ է, քան Ծալլվար:

Գործունեության մի նոր դաշտ կա հոս, նոր փրոփականտ, նոր կազմակերպություն, նոր պայքար, նոր արդյունք»:

Օգոստոսի 17-ին հեռատեսիլով լսեցի պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի խոսքը: Շատ բան տեսած ու լսած, տարիք առած մարդ եմ՝ դեռ չեմ լսել այդքան հուզախոռով խոսք: Նյութն էր պատճառը, թե խոսողին պաշարած եւ լսողին համակող հուզմունքը՝ չգիտեմ, բայց այդպես էր: Անուրախ բաներ էր ասում երիտասարդ նախարարը, շահ անուրախ բաներ, բայց նրա խոսքը հնչում էր ավելի քան տպավորիչ: Ծայրահեղ հուզմունքի մեջ, նա իր երկարաշունչ խոսքում ասաց բաներ, որ պետք չէր ասել եւ բաներ, որ պետք էր ասել: Ես էլ, ուրիշների պես, կուզենայի իմանալ Շահումյանի վաղաժամ ականագերծման, Ղարաբաղից մեր գոված Կոմանդոսի՝ Շուշվա հերոսի հեռանալու պատճառները եւ ուրիշ բաներ, որ հարուցում են խորին տարակուսանք: Եվ ամենից տարակուսելին՝ կրած պարտու-

թյունների պատճառները նա որոնում էի հաջողությամբ գտնում էր ամեն տեղ, բայց ոչ սեփական աշխատանքի մեջ: Եղա՞վ: Նա մեջ էր բերում զանազան «օբյեկտիվ պատճառներ»՝ պայմանավորված նույն այն կառավարության գործունեությամբ, որի նախարարն է ինքը, կարծես դրանք տարբեր բաներ են: Նա բուռն եռանդով հարձակվում էր այդ «օբյեկտիվ պատճառների» վրա, մտածելով, թե, «հարձակումը պաշտպանության լավագույն ձևն է» (սկզբունք, որ պետք է գործի դնել ուրիշ տեղ՝ ռազմի դաշտում): Նաև բնակչության, Արծվաշենի բնակչության վրա, թե նա է, որ չկամեցավ պաշտպանել իրեն, մտածելով երեւի, թե «խեղդվողներին փրկելու գործը հենց իրենց՝ խեղդվողների ձեռքի գործն է»:

Բայց եւ այնպես, սրանք չէին ամենից տխուրն ու կարեւորը նախարարի հուզախոռով խոսքի մեջ, այլ այն, որ պաշտպանության գործը գտնվում է անպաշտպան վիճակում, չի վայելում ամենայն աջակցություն պետության եւ բնակչության կողմից, իր ձեռքի տակ եղած միջոցները չափազանց քիչ են:

Եկեք, ուրեմն, ինձ նման բարձր աշխատավարձ ստացողների վրա ամենամսյա ռազմական հարկ դնենք հենց այսօրվանից:

Եթե իրոք անխուսափելի էր այս պատերազմը, խրվել ենք, եթե ազգովին «սկսեցինք արյունահեղություն առանց գինն իմանալու» (Լեո) եւ չունեցանք պատերազմ չհայտարարելու զգուշամիտ հեռատեսություն (1989-ի դեկտեմբերի 1-ին հայտարարեցինք համաժողովրդական ցնծությամբ), ուրեմն եկեք ազգովին էլ պատասխան տանք:

Ո՞ր են այն մեծաթիվ ռազմաշունչները, ճիշտ է ասել՝ արկածախնդիրները, էլ ավելի ճիշտ՝ քյալլազյոզները, ժամանակին զինակոչին մասնակցելու կոչ անող զորահրամանատարի խելացի գլուխը ջարդող անխելք գլուխները:

Պատերազմ է պիտի կռվել պատերազմի բոլոր օրենքներով:

Այլապես՝ պաշտպանության գործն աղքատ ազգականի վիճակի մատնող անկախություն չեմ ուզում:

Տասկացություններ շփոթելը վտանգավոր բան է: Ըստ ժողովուրդների պատմական փորձի՝ ամենից վտանգավորը «ազատություն» եւ «իշխանության բացակայություն» հասկացությունները շփոթելն է: Տենց այն, ինչ կատարվում է մեր հանրապետության մեջ հիմա: Անտեր մնացածի վատն էլ այն է, որ դրանք նման են իրար:

«Ով ինչ ուզում է թող անի»։ նմա՞ն է ազատության: Նման է: Բայց ավելի նման չէ՞ իշխանության բացակայության: Ավելի է նման: Ավելի հիշա՞ դա է, որ կա:

Կարելի՞ է պոռնոգրաֆիական կինոնկարներով ողողել կինոթատրոնները եւ ավելի ու ավելի պղտորել նորահաս պատանեկության հոգին: Կարելի է, որովհետեւ ազատություն է:

Կարելի՞ է, որ ամեն լակոտ ձեռքին ավտոմատ ունենա եւ ահաբեկի քնակչությանը: Կարելի է: Դա էլ է ազատություն:

Կարելի՞ է, որ կացնահարվի գերագոյն հիգերով գցված Նորքի անտառը: Ինչո՞ւ չէ, ձեռքները բռնող չկա, ազատություն է:

Կարելի՞ է, որ «Շունն ու կատուն» եւ «Գիքորը» կարդացած պատանիները ջարդուփշուր անեն Թումանյանի թանգարանի ապակիները: Ձեռքները բռնող չկա, ուրեմն՝ կարելի է:

Կարելի՞ է օրը ցերեկով քանդել անցողիների հղկված սալիկները եւ տանել անպատիժ: Դա էլ կարելի է, ազատություն է, հիշա՞ր՝ թողտվություն:

Կարելի՞ է հանդուրժել ամեն քայլափոխի խելագար գներով մի սեղանիկ շրջապատված լայնատաքատ եւ նեղմիտ պատանիներով: Դու էլ պորտաբույծների դատարկամիտ խոսակցությունները լսիր: Դրանից ի՞նչ աշակերտ, ի՞նչ ուսանող, ի՞նչ զինվորացու... հանցավոր մտքերի ու գործի սեղանիկներն են դրանք, փոխադարձ թշնամանքի ու տեռորի հենակետեր: Պատանեկության՝ ազգի վաղվա հույսի, բարոյական եւ իմացական ծայրահեղ աղքատացման պատճառը ո՞րն է: Ազատությունը, թե իշխանության բացակայությունը: Իհարկե, երկրորդը՝ շրջահայաց, խելացի, մասնագիտորեն որակյալ իշխանության բացակայությունը:

Վերը շարադրվածի մեջ «ազատություն» բառը փոխարինեցեք «իշխանության բացակայություն» բառերով՝ եւ ամեն ինչ տեղը կընկնի: Նորից չհիշե՞՞նք Թումանյանին՝ ավելի լավ է վատ իշխանություն, քան իշխանության բացակայություն: Այդ վատ իշխանությունն էլ չկա, այդ իշխանության լծակները չկան:

Ես հերն եմ անիծել այն «ազատության», որի պայմաններում մարդ կարող է տանից դուրս գալ եւ չվերադառնալ (անձի ապահովությունը պետության առաջին պարտականությունն է, ամենից տարրականը), թող գրողի ծոցը կորչի կողոպտելու, առեւանգելու, բռնադատելու,

բռնաբարելու, սպանելու, կաշառակերության, գիշերը թաղերում ավտոմատներ ճտնտացնելու, խելքին փչածը դուրս տալու եւ բնակչությանը շփոթեցնելու ազատությունը:

Խնդրեմ, թարմ օրինակ, մեր համակրելի արձակագիր Աղասի Այվազյանն ազատ գրում է եւ «Գրական թերթ»-ն էլ (14.08.92) ազատ տպագրում է այսպիսի միստիկական մշուշներ. «Կարող է Տայաստանն էլ վերանա, Աստված չանի: Բայց հայր չի՛ վերանալու: Տայությունը չի՛ վերանալու: Ավելի քան համոզված եմ. 5 հոգի մնան՝ հայությունը չի վերանա: Սա ճակատագիր է: Սա միստիկական քան է, ու սրա գաղտնիքը հարցական է» կամ՝ «հայության էներգիան որ ապրի, տարածքը պրորելն չէ: Էներգիան չի ապրում, մեզ մոտ սխեման է ապրում: Էներգիա չասեմ, պլազմա ասեմ: Ամպը կա, չէ՞, տես անձրեւ եկավ, ամպը չկա արդեն: Մենք անձրեւ ենք, անձրեւում ենք Լոս Անջելեսում, Ռուսաստանում, այլուր... Մոսկվայում լիքը հայություն կա, էլի գնում են»: Եվ մտքի ուրիշ այսպիսի գոհարներ:

Այդ «ազատության» հետեւանքն է, որ մենք հիմա ոչ այնքան ազգ ենք ու ժողովուրդ, որքան գլուխը մի կերպ պահող բնակչություն: Տայրենասիրական զգացմունքների բթացումը, ազգային բանակից խուսափելը նույնպես դրա հետեւանքն է (ինչո՞ւ ես եւ ոչ թե նա): Աշակերտության եւ ուսանողության վատ սովորելը նույնպես: Դեռ էլի ապրի մեր ժողովուրդը, որ կարողանում է պահպանել բարոյականության ավանդական ինչ-ինչ չափանիշներ: Բայց դա իներգիայի ուժն է, որ ինչպես գիտեք, անվերջանալի չէ:

Մեզ հիմա հարկավոր է, հայրենիքը պահելու համար հարկավոր է ազգային մի մեծ պոռթկում, նման 88-ի պոռթկմանը: Այն ժամանակ եղավ այդ պոռթկումը, որ պայմանավորված էր ոչ այնքան նոր իշխանության հարուցած ոգեւորությամբ, որքան հին ռեժիմի հանդեպ եղած ատելությամբ: Սոցիալական անարդարության պայմաններում տքնող ու տնքացող բնակչությունից հազիվ թե կարելի է ազգային մեծ պոռթկում սպասել:

Կարո՞ղ ենք ասել, որ այս ամենը, ինչ ես ասում եմ, մեր ազգային իշխանությունները չեն հասկանում: Շատ լավ էլ հասկանում են: Որքան էլ նրանք ջանում են «լավ դեմք շինել վատ խաղի ժամանակ»: Այո, վստահ եմ, եւ հասկանում են ինձնից ու ձեզնից էլ լավ. եւ կամենում են, որ վիճակն այսպես չլինի: Միայն թե նրանց միջոցներն են նվազ

ծով կարիքի համեմատ (այստեղ նրանք ամենից քիչ են մեղավոր), ձեռքի տակ եղած լծակներն են թույլ, կարողությունն է պակաս, մասնագիտական հմտությունը հատկապես (այստեղ են նրանք այպանելի): Բայց իշխանությունը հենց նրանով է իշխանություն, որ ուժեղ լծակներ ստեղծի, կարողություն ձեռք բերի եւ գործի դնի ճիշտ եւ անվարան: Ասելը հեշտ է, անելն է դժվարը: Բայց ո՞վ է այն միամիտը, որ կարծում է, թե պետություն, ժողովուրդ կառավարելը դյուրին բան է: Իսկ եթե ուսերիդ ես առել պատմական ահռելի պատասխանատվությունը՝ կառավարիր. Ինչպես կարգն է ու հարկն է: Եվ մի անի այնպիսի կոպիտ սխալներ, որ վայել չէ այդ պատասխանատվությունը հանձն առնելու հանդգնությունն ունեցած իշխանավորներին, սխալներ, որոնցից դժվար էր, թեեւ կարելի էր խույս տալ, սխալներ, որ անգեւն աչքով էլ երեւում են:

Պատմությունից ոչ մի կտոր հանել չի կարելի, անհնար է, թեկուզեւ ամենից անդուրը, նույնիսկ այն, ինչ բնավ մեր սրտովը չէ: Նայտարարել, թե մենք իբրեւ երրորդ հանրապետություն, ժառանգորդն ենք ոչ թե երկրորդ հանրապետության (1920-90 թվականների խորհրդայինը), այլ առաջին հանրապետության (1918-20 թվականներինը), ինչպես հայտարարեց մեր նախագահը՝ անլուրջ բան է, եւ անհիմաստ, քանի որ նստած ենք այն ամենի վրա, ինչ ժողովուրդն իր ձեռքերով ստեղծել է ոչ թե երկուսուկես, այլ խորհրդային գրեթե յոթանասուն տարում: Ոչ պակաս անլուրջ է եւ անխելացի, որքան այդ դատողության հիմքի վրա բարձրարվեստ եւ իմաստալից «սարյանական» գերբից հրաժարվելը եւ դա առաջին հանրապետության զինավառ գիշատչական անարվեստ գերբով փոխարինելը (տեսնում ենք, թե ինչքա՛ն են զինավառ ու գիշատիչ):

Նույնը չէ՞ր, երբ մի նոր, ժամանակակից շնչի ազգային հիմն ստեղծելու փոխարեն (հենց թեկուզ Կառվարենց-Ազնավուրի «Քեզ, Նայաստան» վեհաշունչ խմբերգի հիման վրա) որդեգրվեց առաջին հանրապետության «Մեր Նայրենիք» հիմնը, որի եւ խոսքերն են օտարամուտ, եւ մեղեդին: Երկուսն էլ արվեցին ի վերուստ գրված «ուժային միջոցների» ճնշումով:

Նասկացություններ շփոթելը վտանգավոր բան է: Ըստ ժողովուրդների պատմական փորձի ամենից վտանգավորը «ազատություն» եւ «իշխանության բացակայություն» հասկացությունները շփոթելն է: Նենց

այն, ինչ կատարվում է մեր հանրապետության մեջ հիմա: Անտեր մնացածի վատն էլ այն է, որ դրանք նման են իրար:

Ահա եւ ձեզ ժողովրդավարություն, դեմոկրատիա: Չեմ ուզում:

Քաղաքագիտությունն էլ պիտի որակ ունենա, հայրենասիրությունն էլ: Վարժապետական, ասել է թե ծխական անորակ հայրենասիրության հորինումը չէ՞ր ռուսամերժ եւ թուրքամետ կողմնորոշումը, որ դարձել էր գրեթե պետական քաղաքականություն: Դա կարող էր բավականաչափ երկար տեւել, ուստի եւ պետք է շնորհակալ լինել Թուրքիայից, որ չուշացրեց իր իսկական դեմքը ցույց տալ եւ օճառի պղպջակի պես հօդս ցնդեցնել վայ քաղաքագետների ցնորամիտ պատրանքները: Իսկ հակառուս տրամադրության հրահրումը կատարեց եւ դեռ կատարում է իր սեւ գործը: Մեր նորահաս հանրապետությունը վայելեց եւ վայելում է դրա դառը պտուղները: Ես էլ իմ գավակներն էլ հայկական կրթություն ենք ստացել, թոռներս էլ ռուսաց դպրոցի կարիք չունեցան: Բայց ի՞նչ նպատակ էր հետապնդում ռուսաց դպրոցները փակելը: Այն, որ մեր հաջորդ սերունդը ռուսերեն փայլուն իմացող, ուրիշ ասյաններում ճարտար խոսողներ չունենա՞: Ինչի՞ էին հետամուտ ռուսամերժ քաղաքականության հեղինակները: Ինչպե՞ս կարելի էր լինել այնքան մանկամիտ, որ կարծեինք, թե ռուսները պատվախնդրություն, ինքնասիրություն, հիշողություն չունեն, իսկ համբերություն ունեն անսահման: Ի պատասխան անհավատարմության ստացանք անհավատարմություն, ի պատասխան վատ վերաբերմունքի՝ նույնպիսի վերաբերմունք: Ավելի՞ն նենգամիտ, փոքրոգի, անողոք վերաբերմունք:

Ռուսական պետության մեջ էլ եւ հնում, եւ այսօր եղել են ու կան խիղը կորցրած պետական գործիչներ, որոնք հենց միայն պատճառներ են որոնում իրենց սեւ գործն անելու համար: Իսկ մենք նրանց ոչ թե տվել, այլ առատորեն մատուցել ենք պատճառները: Ես այնքան միամիտ չեմ կարծելու համար, թե հենց միայն դրանք են եղել մեր գլխին եկած աղետների դրդիչները, բնավ, բայց որ անմտորեն տվել ենք առիթները դա էլ կասկածից դուրս է:

Ճիշտ է, լավեցին ընդդիմախոս ձայներ, բայց դրանք արհամարհվեցին «Երրորդ ուժի բացառման» «հույժ հայրենասիրական» դիրքերից: Տամեստությունը մի կողմ դնելով կուզենայի հիշեցնել, որ այդ ձայներից մեկն էլ իմն էր՝ «Ինչ պետք չէ անել» («Խորհրդային Տայաստան»,

16.05.1990), որի պատասխանը նույն արհամարհանքը եղավ նույն տխուր եւ անպատասխանատու տխմար դիրքերից:

Ննուց է հայտնի՝ «ինչ ցանես՝ այն կհնձես», բայց մերն ավելի վատ եղավ՝ «քամի ցանես՝ փոթորիկ կհնձես» (սա էլ հնուց է հայտնի՝ «Աստվածաշնչից»): Եվ հնձում ենք:

Քանի որ բանը հասավ ասացվածքներին, «Բոզին՝ բոզությունը գալիս է» փողոցային ասացվածքն էլ հիշենք, այն, որ Նենրիկ Իգիթյանը շարտեց նզովյալ Գորբաշովի երեսին միութենական պառլամենտում, ի պատասխան նրա դժգոհության, թե իրեն դավաճանում են (արվեստաբանի քաղաքական կարիերայի բարձրակետը):

Չպիտի մոռանալ, որ այն 114 տարվա ընթացքում, ինչ գոյացել է «Տայկական հարցը», մեր դատի պաշտպանները եղել են ոչ թե պետական գործիչները, այլ հումանիստները՝ Անատոլ Ֆրանսը, Լորդ Բրայսը, դոկտոր Լեփսիուսը, Նանսենը, Բրյուսովը, Վերֆելը, Գեմբարսկին, Սախարով եւ ուրիշ շատերը, բայց ոչ Ֆրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի պետական գործիչները, որոնց «Տայկական հարցը» պետք է եղել իբրեւ մանր դրամ իրենց քաղաքական պղտոր խաղերի մեջ:

Տիմա նույնը չէ՞: Պատահե՞ց, որ Բուշը, Քոլը, Թետչերը, Մեյջըրը կամ Ելցինը բերան բանան հօգուտ մեզ: Չպատահեց: Մինչդեռ բարոնուհի Քոկսը կա, գրողներ Դուդինը, Նույկինը, Օսկոցկին, Բուրկինան, Ուորկերը, պաշտոնաթող գնդապետ Սոկոլովը կան եւ էլի ուրիշներ: Դժբախտությունն այն է, որ հումանիստների ձեռքին չեն պետական եւ ռազմական լծակները:

Արեւմտյան մեծ տերությունների եւ Ռուսաստանի պետական մեքենայի մեջ եղած մութ ու զորեղ ուժերը մեզ խաբում են թաքուն ու բացահայտ, քավության նոխազ ենք դառնում նրանց ձեռքին: Շատ նուրբ, խոր ու խորամանկ քաղաքականություն պետք է վարել զոհ չդառնալու համար: Չի կարելի շփոթել պետություններն ու ժողովուրդները: Թետչերին եւ Քոկսին նույն ժողովուրդն է ծնել, Գորբաշովին եւ Նույկինին նույն ժողովրդի արգանդն է բերել, այն Նույկինին, որի պես անհերքելի ոչ ոք չի բացահայտել ռուսական պետության եւ զորքերի սադրանքներն ու չարագործությունները՝ իբրև «իմաստագուրկ» ստոր եւ դավաճանական քաղաքականություն» («Մոսկովսկի կոմսոմոլեց», 23.07.1992):

Բարեկամի կարիք ամեն մարդ էլ (եւ ինչն՝ «ցանկացած», եղբայր, «ամեն մի») ունի: Պետությունները նույնպես, մեկն ավելի, մյուսը պակաս, բայց ամենքն էլ ունեն: Շատ բնական է: Տիմա փորձենք դատել՝ ավելի շատ մե՞նք ունենք ռուսների բարեկամության կարիքը, թե նրանք՝ մերը: Պարզ չէ՞ ինքնին: Բայց եթե խորամիտ գրող Անդրեյ Նույկինն այն է ասում, թե պետք չէ կորցնել հայերի ավանդական բարեկամությունը, քանի որ «մի հին բարեկամն ավելի լավ է, քան երկու նորը», ապա մեր խելոքները հակառակ կարծիքի եղան: Ընդդիմախոս մտավորականությունը դեմ եղավ դրան: Տենց դրա, եւ ոչ միայն դրա, պատճառով նա կոչվեց «գորշ մտավորականություն» (համակիր եւ համամիտ լինելու դեպքում նա կհամարվեր «վառ մտավորականություն»): Այսպես հայտարարողի մտքով իսկ չէր անցնում, որ այդ մտավորականության մեջ կան մարդիկ, որոնց պնեղն իսկ չարժե ինքը: Ինչ մի դժվար բան էր «Մենք համաշխարհային ազգ ենք» դուրեկան ու դյուրամարս մեսիանիստական էժան կարգախոսով շահել բնակչության համակրանքը եւ նրա համակրանքը դարձնել ուրիշ կերպ մտածող մտավորականության դեմ: Եվ դրանից հետո ինչն՝ զարմանալ, որ տեղից վեր կացողը նախատինք է կարդում մտավորականության հասցեին: Ձեզ ո՞վ է իրավունք տվել, թույլ տվել հեշտ ու անհիմն ինքնավստահությամբ խաղալ էս տանջված ժողովրդի հոգու եւ ճակատագրի հետ: Լավ-վատ այսքան տարի ապրել է էս ժողովուրդը, որ դուք հասցնեք էս օրի՞ն:

Ծխական սահմանափակ հայրենասիրությունը հենց նրանով է սահմանափակ ու վտանգավոր, որ հայրենասիրության մասին ունի չափազանց պարզունակ եւ դյուրամատչելի պատկերացում: Անորակ հայրենասերները սեփական ազգը սիրելու մենաշնորհն իրենցն են համարում, դրա մասին դատելով ըստ կուսակցական պատկանելության՝ մերոնցից է, մերոնցից չէ:

Ո՞ւմ սիրտն է բաբախել ավելի հայրենասիրաբար, քան Վահան Տերյանի՝ «յոթնապատիկ խոցված» հայրենիքի երգչի ցաված սիրտը: Բայց պոետը կոմունիստ էր: Ուրեմն՝ ինչպե՞ս վարվենք կոմունիստ Վահան Տերյանի հետ:

Նույն կարճամիտ ազգասիրության հետեւանքը չէ՞ր, որ անհետացավ Ստեփան Շահումյանի գեղեցիկ կիսանդրին իր անունը կրող դպրոցի առջեւից: Ո՞ւմ ձեռքով: Անշուշտ, ծխական հայրենասիրու-

թյամբ համակված երիտասարդության, որ իհարկե, անտեղյակ է պատմությանը, չգիտե, որ պայծառամիտ կոմունիստ Շահումյանը Բաքվի կոմունան մինչեւ վերջին շունչը պաշտպանելով նաեւ հայ ժողովրդի գոյությունն էր պաշտպանում հայահոծ Բաքվում՝ պայծառամիտ դաշնակցական Ստեփան Ջորյանի (Ռոստոմ) հետ ձեռք ձեռքի տված: Ընկավ կոմունան, եւ օսմանյան թուրքերը խուժեցին քաղաք, սարքեցին մի նոր սպանդ:

Մեր օրերին գանք: Չափազանց անխորամիտ պետք է լինել կարծելու համար, թե կոմունիստ, դաշնակցական կամ ռամկավար խելամիտ գործչի կրծքի տակ նվազ հայրենասիրական սիրտ է բաբախում, քան այսօրվա իշխանավորներից որեւէ մեկի: Պատմական գործիչ թե ժամանակակից՝ ամեն ոք պետք է գնահատվի ոչ թե ըստ կուսակցական պատկանելության, այլ ըստ արած գործերի՝ իր տեղում, իր ժամանակին, իր ապրած պայմաններում: Այլապես՝ անխորամիտ, անորակ հայրենասիրություն չեն ուզում:

Չլինի թե այս տողերը կարդացողները կարծեն, թե ես անցած ռեժիմի կարոտն եմ քաշում: Բնավ, եւ էլ չեմ ուզում:

Ուրեմն, ի՞նչ եմ ուզում, վերջապես: Ջորեղ, արդարամիտ, եւ իրեն, եւ ժողովրդի հանդեպ խստապահանջ ազգային իշխանություն, ուր մարդկանց բախտը տնօրինեն ու կառավարեն ոչ թե անհատները, այլ օրենքները՝ «օրենքը խիստ է, բայց օրենք է» սկզբունքով:

Եվ ամենը հավասար լինեն օրենքի առաջ:

Նանրապետություն, ուր ամեն ոք գտնի իր տեղը, ճանաչի իր պարտքը, մարդավայել ապրի Աստծո տված իր մի հատիկ կյանքը:

Նախվերդյան Լեւոն



Ըստ սիրելի Լեոն ջան,

Ինչպես կը տեսնես, քեզի կը գրեմ Լակոսէն, ուր կը գտնուիմ Ապրիլ 24-էն ի վեր: Նամակդ (26/3/89թ.) ստացայ Լոնտոնէն մեկնումես օր մը առաջ: Կարօտով ու յուզումով կարդացի զայն քանի մը անգամ: Նոյն Լեոնն էր... իր նետերը աղեղադրած նպատակադրուած թիրախին, սիրտը մահապատժի ենթարկելու պատրաստ... Նոյն Լեոն էր... Միայն իրեն յատուկ իմաստասիրական ընդհանրացումներ կառուցելու բնական ընդունակութեամբ... Նոյն Լեոնը... իր ժողովուրդին ցաւերով տառապող, հոգիին մէջ հազարամեակներէ ժառանգ մնացած ազնուութիւնն ու ազնուականութիւնը, բարութիւնն ու բարեսիրութիւնը, մարդկայինն ու մարդկայնականութիւնը անաղարտ պահպանելու գիտակցութեան մեծ ախոյեանը, ամէն բանէ առաջ ու ամէն բանէ վեր՝ միշտ մաքրամաքուր հայն ու մարդը՝ նոյն Լեոնը:

Այդպէս եղաւ իմ տպաւորութիւնս 1960-ին, երբ առաջին անգամ հանդիպեցանք իրարու Լոնտոնի մէջ: Ես եկած էի արձակուրդով Տնդկաստանէն, ուր ինչպէս գիտես հայագիտական առարկաներու ուսուցիչ էի Տայոց մարդասիրական հեմարանին մէջ: Դուն եւ Է. Յովհաննիսեան սովետական զբօսաշրջիկներու խումբի մը մաս կը կազմէիք: Տոն էր նաեւ հանգուցեալ Վահրամ Մավեանը, որ Պելֆաստէն Լոնտոն եկած էր ամառնային արձակուրդով:

Այնուհետև 1963-ին, 1968-ին և 1980-ին հանդիպեցանք Տայրենիքի մէջ:

1963-ին Տայաստան մնացի ամբողջ երկու ամիս «Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտ»ին որպէս հիւր: Տիշողութեանս մէջ միշտ վառ կը մնայ Պարոյր Սեւակ, Ռաֆայէլ Իսրայէլեան, Լեոն Տախվերդեան եւ Ասատուր Կիզելեան քառեակին հանդիպումներն ու վերջակէտ չունեցող կենացներու շարանը «Արագիլ» ճաշարանին մէջ: Ար յիշեմ առիթով մը մեզի միացաւ նաեւ Տայկ Նագգաշեանը որ եկած էր Եթովպիայէն, ուր կը պաշտօնավարէր որպէս հայերէնի ուսուցիչ:

Մեր երրորդ հանդիպումը տեղի ունեցաւ 1968-ին, երբ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հրաւերով մասնակցեցայ Երեւանի 2750-ամեակի հանդիսութիւններուն:

Վերջին անգամ զիրար տեսանք 1980-ին, երբ դարձեալ Կոմիտէի

հրաւերով կը գտնուէի Տայաստան: Մեր բոլոր հանդիպումներուն ողջագրուեցայ նոյն Լեւոնին հետ...: Մնա միշտ նոյնը, Լեւոն ջան, որովհետև քո ունեցած հարստութիւնը չի սահմանափակուիր գիտելիքներով, որոնց կողքին՝ անհատականութիւնդ, հաղորդական խառնուածքդ, մաքուր հայրենասիրութիւնդ, «մարդու մէջ մարդ» գտնելու տենչդ, «երեսուն արծաթով» չվանառուող սկզբունքներդ շատ քանկ են ոչ միայն քեզի՛ այլ նաեւ բարեկամներուդ համար:

Մնա նոյնը...:

Լոնտոն վերադարձիս դարձեալ կը գրեմ:

Միրով՝ Կիզէլեան Ասատուր



/ 7 հունվարի, 2003թ. /

Միրելի Հախվերդեան ընթանիք,

Այս առաւօտ Գոր Վարդանեան հեռախօսով հաղորդեց վաղեմի ընկերոջս, Լեւոն Հախվերդեանի մահուան գոյժը: Տխուր այդ լուրը յուշերու արահետներով զիս տարաւ Լոնդոն, ուր 1960-ին ծանօթացայ Լեւոնին, սրամիտ, զուարճախօս, ուրախանալու եւ ուրախացնելու բնատուր յատկութեամբ օժտուած հայաստանցի մտաւորականին: Ես Տնդկաստանէն արձակուրդով՝ ինք Տայաստանէն զրօսաշրջիկներու խումբով եկած էինք Լոնդոն:

Երեք տարի յետոյ, 1963-ին, երբ առաջին անգամ ըլլալով երկու ամսով Տայաստան այցելեցի «Ուսուցիչների կատարելագործման Ինստիտուտ»-ի հրաւերով, գրեթէ ամէն օր եղանք միասին, յաճախ սեղանակից ունենալով Պարոյր Սեւակին ու Լեւոնի մտաւորական (արուեստագէտ ընկերներէն շատերը): Յիշողութեանս մէջ միշտ անմոռանալի պիտի մնան «Արագիլ» հաշարանի մէջ Լեւոնին եւ Պարոյրին հետ մեր ունեցած ժամեր տեւող զրոյցները:

Վերջին անգամ, քանի մը տարի առաջ մեր հանդիպման հասցէն Արմենիա հիւրանոցի (եթէ չեմ սխալիր) թիւ 512 սենեակը եղաւ, ուր ժամերով զրուցեցինք եւ խմեցինք, ինք՝ սկովտիական ուիսքի, ես՝ հայկական կոնեակ, մեր հանգուցեալ ընկերներու հոգիներու խաղաղութեան համար, յիշելով Պարոյր Սեւակը, Սիմոն Սիմոնեանը, Վահրամ

Մավեանն ու այլ սիրելիներ, որոնք թեև «ոչ եւս էին», բայց կ'ապրէին մեր հոգիներուն մէջ, ուր եւ ունէին տաքուկ առանձնասենեակներ...

Թող սիրելի ընկերս իմանայ, որ իրեն վերապահուած յուշերու տաքուկ սենեակը բացուած է արդէն հոգիիս մէջ այսօր:

Չեմ ուզեր այս տխուր առիթով անդրադառնալ Լեւոնին հայ գրականութեան, հայ արուեստին եւ հայ մշակոյթի տարբեր բնագաւառներուն բերած մեծ նպաստին: Տետագային այդ աշխատանքը հանգամանօրէն կը կատարեն մասնագետներ: Այսօր կ'ուզեմ Լեւոնը յիշել որպէս մարդ, որ իր ամբողջ գիտակցական կեանքի ընթացքին ուրախութիւն ցանեց, փոխարէնը՝ խինդ ու ժպիտ հնձեց, կեանքը վայելեց եւ այդ վայելքին բաժանորդագրեց իր ընկերները, սիրելիներն ու հարազատները:

Պատշաճ կը նկատեմ նամակս աւարտել կատարելով մէջբերում մը Լեւոնի սիրոյն ու պաշտամունքին արժանացած բանաստեղծէն, Յովհաննէս Թումանեանէն:

«Մենք ամենքս հիւր ենք կեանքում

Մեր ծննդեան փուշ օրից,

Տերթով գալիս, անց ենք կենում

Էս անցաւոր աշխարհից»:

Կիզելեան Ասատուր

Ձախից՝ Ասատուր Գյուզելեան, Պարոյր Սեւակ, Զայկ Նազգաշյան, Լեւոն Զախվերոյան, Ռաֆայել Իսրայելյան: Երեւան, 1963թ.:



Համապատասխան Վարդգես

01.05.1911թ., Էջմիածին – 09.02.1992թ., Երեւան:
Պետական, կուսակցական, գործիչ: Պատմական
գիտությունների թեկնածու /1948/: 1940թ. ԵՊՀ պատմության
ֆակուլտետը: 1933-1935թթ. ծառայել է բանակում:
1930-1948թթ. կոմերիտական - կուսակցական աշխատանք է
կատարել: 1948-1951թթ. եղել է Հայաստանի գրողների
միության պատասխանատու քարտուղար, 1951-1964թթ.
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ ռեկտոր, 1964-1990թթ.
Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի
նախագահ: 1943թ. սկսած դասավանդել է Խաչատուր
Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում: Հրատարակել է «Սովետական
Հայաստանը եւ Սփյուռքը» /1980/, «Հայրենիքի պարգևները
սփյուռքահայ գործիչներին» /1984/, «Սփյուռքահայ նոր
դափնեկիրները» /1985/, «Ալեք Մանուկյան» /1994/ գրքերը:
Պարգևատրվել է Խորհրդային Աշխատանքային կարմիր
դրոշի, Պատվո նշան շքանշաններով:



/ 19 սեպտեմբերի 1968թ. /

Մեծահարգ իմ Կուսուր Գյուլեյան,

Հարգելի բարեկամ,

Տոկտեմբերի կեսերին մեծ հանդիսավորությամբ նշվելու է Երեւանի
հիմնադրության 2750-ամյակը: Կցանկանալիք, որ այդ տոնակատա-
րությանը ներկա գտնվեիք Դուք որպես մեր կոմիտեի հյուր: Տոկտեմ-
բերի 15-ից Ձեզ երկու շաբաթով հրավիրում ենք Տայաստան: Մին-
չեւ Մոսկվա ճանապարհածախսը Ձեր հաշվին է, մնացած ծախսերը
(ներառյալ վերադարձը) հոգալու է Կոմիտեն:

Կխնդրեիք նախապես հեռագրել Մոսկվա ժամանելու օրը՝ Ձեզ
դիմավորելու համար:

Տարգանքներով

*Կոմիտեի նախագահ՝
Համապատասխան Վարդգես*



Լուսինե Չաքարյան, Առնո Բաբաջանյան, Վարդգես Համազասպյան, Ներսես Եպիսկոպոս Պողոսյան:



/ 22 հուլիսի 1969թ. /

Ն. Գալուստյանին, Ա. Գյուզելյանին Լոնդոն

Հարգելի բարեկամներ,

Ի սրտե ողջունում եմք լոնդոնահայ գաղութի այդպես կազմակերպված ու լուրջ պատրաստությունը մեծ բանաստեղծի՝ Ն. Թումանյանի հոբելյանի առթիվ: Ինչով հնարավոր է մենք էլ մեր կողմից կօգնենք, առաքումներ կկատարենք՝ գրականություն, նյութեր, ցուցահանդեսներ կուղարկենք:

Կաշխատենք նաև ժամանակին ուղարկել Ձեր ցանկացած գրողների եւ արվեստագետների խումբը:

Նիրավի շատ լավ կլինի՝ գնահատելի նվեր կստացվի, եթե կարողանաք հոբելյանի համար հասցնել Թումանյանի մի փոքրիկ հատորը անգլերեն թարգմանված: Սակայն պիտի խնդրեինք, որ թարգմանության մակարդակը գոնե հնարավորին չափ բարձր լինի, որպեսզի օտար ընթերցողը կարողանա գաղափար կազմել անմահ բանաստեղծի ստեղծած մեծ արժեքների մասին:

Ցանկանում եմ հաջողություններ

Նարգանքներով

*Կոմիտեի նախագահ՝
Համազասպյան Վարդգես*



/ 7 սեպտեմբերի 1971թ., Լոնդոն /

Մեծահարգ Ասասուր Գյուլելյան, Սիրելի բարեկամ,

Բավական ժամանակ է ոչ մի լուր չունենք ձեզանից: Տուտով եմ, որ ընտանիքով առողջ եք եւ գործերն էլ բարեհաջող են ընթանում:

Այս ամառ տղաս ուսանող զբոսաշրջիկների խմբի հետ եղավ Լոնդոնում: Անչափ ցավում եմ, որ չկարողացաք հանդիպել:

Սիրելի Ասատուր, 1971թ. սեպտեմբերի 10-ին Լոնդոն է ժամանելու Սովետական տուրիստների խումբը: Այդ խմբի մեջ են մեր հանրապետության անվանի հասարակական գործիչներ, պառլամենտի անդամներ Վազրիկ Սեկոյանը (մինիստր) եւ Կոնստանտին Տունանյանը: Խնդրում եմ, հնարավորության սահմաններում օգտակար դարձնել նրանց այցելությունը, կազմակերպելով հանդիպումներ եւ օգնել, որպեսզի նրանք ավելի մոտիկից ծանոթանան Լոնդոնի հայ համայնքի կյանքին:

Կանխավ հայտնում եմ անկեղծ շնորհակալություններս:

Խնդրում եմ ջերմ ողջույններս եւ լավագույն մաղթանքներս հաղորդել ազնիվ տիկնոջդ:

*Տարզանքներով՝
Տամազասայան Վարդգես*



/ 20 նոյեմբերի 1971թ., Լոնդոն /

Հարգարժան պրն Ասասուր Գյուլելյան,

Հարգելի բարեկամ,

Ընդունեք մեր ջերմ բարեւները եւ խորին շնորհակալությունը Լոնդոնում մեր խմբի անդամներին ցուցաբերած Ձեր անկեղծ եւ հոգատար վերաբերմունքի համար:

Դիմում եմ քեզ, սիրելի Ասատուր, մի հարցով, եւ հուսով եմ, որ կանես ամեն հնարավորը այն կատարելու համար:

Մեր նշանավոր գիտնական Գ. Գյուրզադյանը երկար ժամանակ է, ինչ պարբերաբար ստանում էր ձեզ մոտ հրատարակվող

«The observatory» Norman Smale Ltd, 145 Fleet Street

London, EC4A 2HY (01-353-8209)

ժուռնալը, սակայն վերջերս չի ստացվում, որի անհրաժեշտությունը

մեծ է: Ուստի խնդրում եմ քեզ կազմակերպել նշված ամսագրի պար-
բերական առաքումը Գ. Գուրգադյանի հասցեով.

G.A.Gursadyan

Moskavian Street 33 flat 32

Yerevan – 375009 Armenia, USSR

Կանխահայտ շնորհակալությամբ,

*Կոմիտեի նախագահ՝
Տամազասսայան Վարդգես*



/ 18 փետրվարի 1976թ. /

Նարգարժան պրն Գյուզելյան, Լոնդոն

Նարգելի բարեկամ,

Ընդունեք մեր ջերմագին բարեւները եւ այն հաղորդեք գաղութի մյուս
ղեկավարներին: Դիմում ենք Ձեզ մի խնդրանքով եւ հույս ունենք, որ
կպատասխանեք հնարավորին չափ շուտ: Երկար ժամանակ է, ինչ
մենք նամակագրական կապ չունենք հարգարժան դերասան Տով-
հաննես Փիլիկյանի հետ, նրա հասցեն չլինելու պատճառով: Ուստի
կխնդրեինք ուղարկել մեզ նրա հասցեն, որի համար կանխապես
շնորհակալություն ենք հայտնում:

Միաժամանակ կխնդրեինք տեղեկություններ ուղարկել մեզ ձեր
անգլիախոս գաղութի ժամանակակից կյանքի մասին:

Լավագույն մաղթանքներով

*Կոմիտեի նախագահ՝
Տամազասսայան Վարդգես*



/ 21 մայիսի 1976թ. /

«Նայ տուն»ի պատասխանատուներին
Լոնդոն

Հարգելի հայրենակից,

Մոսկվայի «Ռոդինա» ընկերությունից Կոմիտեն ստացավ պաշտոնական գրություն, ուր գրված էր, որ Մեծ Բրիտանիայի Սովետական դեսպանության առաջին քարտուղար Ա. Պարաստանեը հայտնել է հայ համայնքի ցանկությունը՝ Կոմիտեի Եվրոպական երկրների բաժնի վարիչ, բանաստեղծուհի Մարո Սարգսյանին Անգլիա հրավիրելու մասին:

Անշուշտ գաղթօջախի կյանքին մոտիկից ծանոթանալու համար, շատ օգտակար կլիներ Մ. Սարգսյանի գալը: Սակայն այս տարի իրականացնել այդ անհնար է:

Նույս ունենք գալ տարի 1977 թվին կհաջողվի մեզ կատարել Ձեր խնդրանքը, որը կնպաստի եւ գաղութի եւ Կոմիտեի աշխատանքներին:

Այժմ մենք կխնդրեինք, որ դուք խորհրդակցելով գաղութի մյուս գործիչների հետ, ընտրեիք հայ մշակույթին, հայ գաղութի կյանքին նվիրված մեկ ընկերոջ, ուղարկեիք Նայաստան, որպես Կոմիտեի հյուր:

Անգլիահայ գաղթօջախի հետ մեր կապերը ավելի սերտացնելու, աշխատանքներն ավելի կազմակերպելու համար:

Նյուրը մինչեւ Երեւան պիտի գա իր ծախսով, իսկ Նայաստանում կատարվող ծախսերը եւ վերադարձի ծախսը կհոգա Կոմիտեն:

Տարգանքներով,

*Կոմիտեի նախագահ՝
Նամագասայան Վարդգես*



/ 16 սեպտեմբերի 1977թ. /

Պրն Ասատուր Գյուզելյան, Լոնդոն

Հարգելի բարեկամ,

ՄՍՏՄ ժուռնալիստների հատուկ խմբի կազմում Լոնդոն է գալիս Նայկ. ՄՍՏ Գիտությունների ակադեմիայի ինֆորմացիայի ինստիտուտի դիրեկտոր, դոկտոր- պրոֆեսոր Խիկար Բարսեղյանը:

Խնդրում ենք Ձեզ, օգտվելով նրա ներկայությունից, անել ամեն հնարավորը, որպեսզի նա ավելի մոտիկից ծանոթանա ոչ միայն տեղի հիշարժան վայրերին, այլև անգլիահայ գաղութի մշակութային կյանքին:

Լավագույն մաղթանքներով

*Կոմիտեի նախագահ՝
Տամազասայյան Վարդգես*



/ 6 փետրվարի 1978թ. /

Պրն Ասատուր Գյուզելյան, Լոնդոն

Հարգելի բարեկամ,

Կից ուղարկում ենք Տայկ. ՍՍՏ ԳԱ ակադեմիկոս-պրոֆեսոր Ծ. Աղայանի նամակը՝ անգլերեն-հայերեն խոսակցական բառարանի եւ նրա ձայնագրության մասին, որոնք շուտով կստանաք Փարիզի «Աշխարհ» թերթի խմբագիր Ավետիս Ալեքսանյանից:

Կխնդրեի՞նք Ձեզ, հարգելի Ասատուր, նամակը եւ նյութերը ստանալուն պես տեղյակ պահել մեզ:

Լավագույն մաղթանքներով

Կոմիտեի նախագահ՝ Տամազասայյան Վարդգես



/ 6 օգոստոսի 1980թ. /

Ասատուր Գյուզելյան, Լոնդոն,

Միտելի Ասասուր,

Ստացել ենք քո հեռագրերը Ագապի Նասիբյանի Տայաստան գալու կապակցությամբ: Բանը նրանում է, որ այդ հարցում մենք օգտակար լինել չենք կարող մինչեւ Լոնդոնի ՍՍՏՄ դեսպանության միջոցով չստանանք նրա փաստաթղթերը՝ վկայական կրթության մասին, լուսանկար եւ դիմում:

Այդ մասին ժամանակին գրել ենք իրեն, իսկ օրերս էլ նամակ ուղարկեցինք Լոնդոնի ՍՍՏՄ դեսպանությանը:

Փաստաթղթերը մինչ օրս Երեւան չեն հասել, երբ ստանանք սիրով կրնդ առաջենք նրա խնդրանքին:

Լավագույն ցանկություններով եւ հարգանքներով՝

*Կոմիտեի նախագահ՝
Նամագասայան Վարդգես*



/ 10 դեկտեմբերի 1979թ., Լոնդոն /

Ասասուր Գյուլեյան,

Հարգելի բարեկամ,

Կոմիտեի կողմից Անգլիա գործուղված հայ արվեստագետների խումբը Երեւան վերադարձավ անմոռանալի տպավորություններով, անչափ զգացված հայ գաղութի ցույց տված ջերմ ու սրտառու ընդունելությունից:

Ուրախ եղանք իմանալով, որ Դուք, ինչպես միշտ, այս անգամ եւս, Ձեր ակտիվ մասնակցությունն եք բերել հանդիսությունների կազմակերպմանը:

Լոնդոնահայ կյանքը շնորհիվ ճանաչված հայրենասերների արդեն մեծ աշխուժություն է ապրում, հուսանք, որ շուտով հրապարակ կիջնի նաեւ շաբաթաթերթը, որը մեծ դեր կարող է խաղալ լոնդոնահայ գաղութի կյանքում:

Նայաստանի աստրոֆիզիկներին շատ է հետաքրքրում The Instrumentation for Space astronomy հրատարակությունը եւ այդ հետաքրքրությանը գոհացում տալու համար դիմել են ինձ խնդրանքով: Ես չէի կարող անհետեւանք թողնել այն եւ անմիջապես հիշեցի Ձեզ եւ հույսս դրեցի Ձեր բարյացկամության վրա:

Խնդրում ենք, եթե հնարավոր է, ուղարկել այն կոմիտեի հասցեով մեր գիտնականներին հանձնելու համար:

Ընդունեք մեր կանխահայտ շնորհակալությունները եւ հաջողության լավագույն մաղթանքները, հարգանքներով,

*Կոմիտեի նախագահ՝
Նամագասայան Վարդգես*



/ 31 հուլիսի 1981թ. /

Պրն Ա. Գյուզելյանին, Լոնդոն

Մեծահարգ բարեկամ,

Տայկ. ՍՍՏ ԳԱ Բիոքիմիայի եւ կենսաբանության ինստիտուտների տնօրէն, ԳԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Արմեն Գալոյանը ս.թ. սեպտեմբերի 6-ից 11-ը լինելու է Անգլիայում, մասնակցելու համար Նոթինգեմում կայանալիք Նեյրոքիմիկոսների համաշխարհային 8-րդ կոնգրեսի աշխատանքներին:

Խնդրում ենք օգտակար դարձնել նրա այցելությունը հայ զաղութի համար եւ եթէ հնարավոր է կազմակերպել դիմավորումը եւ հանդիպումը լոնդոնահայության հետ:

Ընկ. Ա. Գալոյանի Լոնդոն ժամանելու ստույգ օրվա եւ թոխչքի մասին կհաղորդենք հեռագրով:

Լավագույն մաղթանքներով

*Կոմիտեի նախագահ՝
Տամազասայան Վարդգես*



/ 8 օգոստոսի 1985թ. /

Ասատուր Գյուզելյան Լոնդոն

Հարգելի բարեկամ,

Այս տարվա հոկտեմբերի 10 – 25-ը Երեւանում տեղի է ունենալու սփյուռքի հայկական առաջադիմական ուղիորդամերի, հեռուստատեսային հաղորդումների եւ մամուլի ներկայացուցիչների հանդիպում:

Միքով հրավիրում ենք Ձեզ՝ մասնակցելու այդ հանդիպմանը:

Ճանապարհածախսը պետք է հոգաք Դուք, իսկ տեղում կատարվելիք բոլոր ծախսերը կապահովի Կոմիտեն:

Խնդրում ենք հեռագրով հայտնել Ձեր որոշման մասին՝ մուտքի վիզան ժամանակին ապահովելու համար:

Տարգանքներով,

*Կոմիտեի նախագահ՝
Տամազասայան Վարդգես*



Ասասուր Գյուլելյան,

Միրելի բարեկամ,

Նուսով եմ, բարեհաջող տեղ հասար եւ արդեն իսկ անցել ես առօրյա գործերիդ:

Սովետական Միության կինոաշխատողների պատվիրակության կազմում Լոնդոն են ժամանել մեր անվանի կինոռեժիսորներ Նենրիկ Մալյանը եւ Ֆրունզե Դովլաթյանը, որոնց արվեստին, վստահ եմ, քաջ ծանոթ ես:

Խնդրում եմ, եթե դժվար չէ, հնարավորության սահմաններում օգտակար լինել՝ նրանց այցելությունը հետաքրքիր եւ բովանդակալից դարձնելու համար:

Սրտանց շնորհակալություններով եւ լավագույն մաղթանքներով՝

Նամագասսայան Վարդգես



Հարգելի Ասասուր,

Մի քանի տարի է, ինչ հանգստի կոչված եմ եւ շատ քիչ տեղեկություններ ունեմ Ձեր մասին, չնայած Լոնդոնից մեր բարեկամները հաճախ են լինում Երեւանում: Իրերի բերումով, առողջական վիճակս այնպիսին է, որ չեմ կարողանում հանդիպել իմ հարգարժան բարեկամների հետ, որպեսզի կարողանամ մշտապես կապի մեջ լինել եւ տեղեկություններ ունենալ: Բոլոր դեպքերում մշտապես մնում եք իմ հիշողության մեջ որպես լավագույն բարեկամներիցս մեկը եւ այն մարդը, որի նշանաբանն է եղել «մարդու գործն է միշտ անմահ...»:

Լոնդոնյան հիշողությունները միշտ էլ պահպանվում է իմ ծերունական հուշատետրում եւ այն հանդիպումները, որ մենք ունեցել ենք եւ Լոնդոնում եւ հայրենիքում: Չգիտեմ որքանով է Ձեզ հաջողվել նոր ձեռնարկումները, բայց միշտ հիշողությանս մեջ մնացել եք որպես մեր լավագույն բարեկամ ու հայրենասեր:

Ձեզ մոտ են ժամանել իմ լավագույն բարեկամները, որոնց այցը աշխատեցի օգտագործել ջերմ բարեկներ ուղարկելու համար:

Միշտ Ձեր՝ Նամագասսայան Վարդգես



Մեծահարգ պրն Ասասուր Գյուլելյան,

Ավելի քան 5 տարի է թեև հեռացել եմ իմ սիրելի բնագավառից եւ որոշ չափով կտրվել նաեւ իմ վաղեմի բարեկամներից, սակայն հաճախ հիշում եմ նրանց բոլորին՝ այն լավագույն ընկերներին ու բարեկամներին, որոնց հետ բախտ եմ ունեցել մոտիկից շփվել, մեր մի ընդհանուր նպատակի՝ հայապահպանման համար: Իմ այդ տարիների լավագույն գործընկերներից մեկը եղել էք Դուք, որին երբեք չեմ մոռացել, առաջին հանդիպումից հետո, նույնիսկ թոշակի անցնելու ամբողջ ժամանակաշրջանում: 1989-ին երբ Փարիզում էի, մեկ-երկու անգամ հեռագանգեցի, սակայն դժբախտաբար չգտա Ձեզ: Պրն Ուզունյանի այցելությունների ժամանակ, երբ լինում է մեր տանը, հետաքրքրվում եմ Ձեր գործերով եւ ուրախանում, որ մշտապես հաջողությունների մեջ էք: Տանախ հիշում եմ Ձեզ Թումանյանի անմահ բանաստեղծության այն տողերով, որ «Մահը մերն է, մենք մահինը, մարդու գործն է միշտ անմահ»: Դուք մնացել էք հավատարիմ այդ տողերին, Ձեր ամբողջ կյանքի ընթացքում:

Առիթից օգտվելով, որ իմ եղբոր թոռը՝ Վրույր Գրիգորյանը, բիզնեսի ուսուցման գործով շուրջ 3 ամիս լինելու է Մանչեստրում եւ մեկ-մեկ այցելելու է Լոնդոն, գտնում եմ անհրաժեշտ եւ միաժամանակ խնդրում եմ, որ օգնեիք նրան, որոշ շրջանակների հետ ծանոթանալու, իր ուսուցման հաջողության ու կապերի ընդլայնման համար: Նա արտակարգ ընդունակ երիտասարդ է, ապագա խոստումնալից ինժեներ եւ տեխնիկայի գործի լավ վարպետ: Այդ բոլորը նկատի ունենալով նրան ուղարկել ենք Անգլիա, դասընթացների:

Ձերմորեն բարեւում եմ Ձեզ եւ Ձեր ընտանիքի բոլոր անդամներին: Ցանկանում եմ ծերության հասակում, հանդիպում ունենալ, մեր չար բախտից նորից ավերված եւ նորից վերակառուցվող, սակայն շատ սիրելի հայրենիքում:

Տամազասայան Վարդգես



Մեծայարգ պրն Վ. Տամազասպեան
Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի
կոմիտէի նախագահ

Յարգելի Ընկեր Համապասպեան,

Այսու, կ'ուզեմ խորին շնորհակալութիւններս յայտնել ձեզի այն հրաւերին համար, զոր յղեցիք ինծի մասնակցելու Երեւանի 2750-ամեակի տօնակատարութիւններուն: Թէեւ ասելի քան երկու շաբաթ առաջ մեկնեցայ հայրենիքէն՝ սակայն մտածումներս ու ապրումներս տակաւին կը շարունակեն մնալ լեցուն հայրենական հարուստ տպաւորութիւններով:

Ինչպէս ծանօթ է ձեզի՝ առաջին անգամ բախտը ունեցայ այցելել հայրենիք հինգ տարի առաջ եւ տեսնել հայ ժողովուրդի քրտնաջան աշխատանքի արգասիքը, վերածնուած Մայր Հայրենիքը, լսել հայութեան սրտին առողջ զարկը, դիտել անհամար «կոռունկ»ներու երկաթեայ բազուկները հայրենի բոլոր քաղաքներու մէջ:

Այս տարուան հոկտեմբերին՝ երբ ձեր ազնիւ հրաւերով դարձեալ այցելեցի Հայաստան, «կոռունկները» գտայ կրկնապատկուած: Երեւանը անհաստալիօրէն փոխուած էր ու ասելի գեղեցկացած: Տեսայ ամբողջական թաղամասեր, որոնց հիմերն անգամ չէին դրուած հինգ տարի առաջ: Տեսայ մանասանդ հայրենի ժողովուրդի դէմքին վրայ գոհունակութեան ալ ասելի պայծառ ժպիտ ու աչքերուն մէջ՝ լուսաւոր ապագայի մը գիտակցութենէն բխող ուրախութեան շող:

Կան դժբախտաբար մարդիկ, որոնց համար Հայաստանը պետականութենէ զուրկ նահանգ մըն է, իսկ հայրենի մեր ժողովուրդը իր ազգային արժանապատուութիւնը անուրդի հանած բազմութիւն մը, որ դատապարտուած է այլասեռման... Բարեբախտաբար թիւը այդպէս մտածող մարդոց կը ներկայացնէ շատ անկարեւոր տոկոս մը: Այն ժողովուրդները, որոնք գիտեն ներկան օղակել իրենց դարաւոր պատմութեան ոսկեշղթային, որոնք գիտեն արժեւորել ու գնահատել իրենց հերոսներն ու նահատակները եւ խոնարհիլ անոնց անիւններուն առջեւ՝ կոչուած են ոչ թէ այլասեռելու, այլ մարդկութեան հոգեկան արժէքներուն գանձարանը հարստացնելու մեծ ու մնայուն իրագործումներով: Ահա այդ ժողովուրդներու առաջին շարքին վրայ տեղ գրաւած է

այսօր հայ ժողովուրդը, որ գիտցած է Լենինեան նորակերտ հրապարակին դիմաց կառուցել Էրեբունիի թանգարանը, անհամար գործարաններու եւ արդիւնաբերական հիմնարկներու կողքին՝ բարձրացնել Սասունցի Դաթի արձանը, Եղեռնի եւ Սարտարապատի յուշարձանները. այլ խօսքով՝ հայրենի կառավարութիւնն ու ժողովուրդը գիտցած են հոյակապօրէն միաձուլել անցեալի մեր հոգեկան արժէքները ներկայի հետ, լուսաւոր ապագայի մը ի հաշիւ:

Շնորհիւ Տայաստանի արձանագրած նուաճումներուն, շնորհիւ ճառագայթող հայրենասիրութեան, որուն կեդրոնը Երեւանն է, այսօր հայը ի սփիւռս աշխարհի մի անգամ ընդ միշտ ձերբազատուած է երբեմնի իր որբի հոգեբանութենէն, որուն փոխարէն ան իր սրտին բաժակը լեցուցած է ազգային հպարտութեան գինիով: Տպարտութիւն, որուն աղբիւրը մեր հայրենիքն է:

Մայր հայրենիքն է դարձեալ, որ մեծապէս կը նպաստէ սփիւռքի մէջ տարուող ազգապահպանման աշխատանքին: Սփիւռքահայը այլեւս օտարին հետ չի խօսիր թշուառ ու անտէր, ողբի ու կոծի երկրի մը մասին, այլ կը խօսի տուֆակերտ Երեւանի մասին, համաշխարհային համբաւ վայելող բազմաթիւ գիտնականներու, արուեստի եւ մշակոյթի գործիչներու մասին արդար հպարտութեամբ:

Չափազանց ուրախալի երեւոյթ է, որ այսօր սփիւռքահայութիւնը քայլ առ քայլ կը հետեւի հայրենի հողին վրայ կատարուող տենդագին աշխատանքին: Այս առնչութեամբ կարելի չէ չընդգծել հայրենանուէր այն մեծ աշխատանքը, զոր կը կատարէ Սփիւռքահայութեան հետ մշակութային Կապի Կոմիտէն ձեր գլխաւորութեամբ: Դուք այն կամուրջն էք այսօր, որ Սփիւռքը կը կապէ հայրենիքին, ջամբելով առաջնոյն հայրենասիրական տաք շունչ: Ձեր եւ ձեր պաշտօնակիցներուն կատարած աշխատանքը արժանի է ամէն գնահատանքի:

Ձեզի կը մաղթեմ քաջառողջութիւն, որպէսզի նոյն թափով շարունակէք ձեր հայրենանուէր աշխատանքը:

*Լուսազոյն ցանկութիւններով եւ ջերմ ողջոյններով՝
Կիլգելէաս Ասատուր*



/ 10 ապրիլի 1979թ., Լոնդոն /

Մեծայարգ Տիար Վ. Նամազասպեան
նախագահ Սփիւոքահայութեան հետ մշակութային
կապի կոմիտէի
Երեւան

Յարգելի Պրն Նամազասպեան,

Ներփակ կը գտնէք օր. Ագապի Նասիպեանի եւ Օքսֆորտ համալսարանի փրոֆ. Ակաթա Ռամմի ինծի յղած նամակներուն պատճենները, որոնք լաւելեալ բացատրութեան չեն կարօտիր:

Օր.Նասիպեանը անձնապէս կը հանչնամ երկար տարիներէ ի վեր ազնիւ, պարտաճանաչ, հայրենասէր, իր ժողովուրդին ծառայելու ոգիով լեցուն հայրենանուէր հայուհի մը, որ միաժամանակ օժտուած է գիտական լուրջ աշխատանք կատարելու անձէ մը պահանջուած բոլոր տունեալներով:

Դժբախտաբար Օր. Նասիպեան իր սեփական ծախսով հայրենի արխիւները ուսումնասիրելու միջոցներէ զուրկ է:

Ուստի կը խնդրեմ ձեզմէ, որ Օր. Նասիպեանի հայրենիք այցելութիւնը ըլլայ ձեր հրաւերով: Ես մօտէն ծանօթ եմ Օր.Նասիպեանի կատարած գիտական աշխատանքին, որ արժանի է գնահատանքի եւ քաջալերանքի:

*Ձերմ ողջոյններով եւ յարգանքով՝
Կիլգելեան Ասատուր*



Յարգելի Վ. Համազասպեան
Սփիւոքահայութեան հետ մշակութային կապի
կոմիտէի նախագահ
Երեւան

**Յարգելի Վ. Համազասպեան,
Թանկագին հայրենակից,**

Ի շարունակութիւն 2 Մայիս 67 թուակիր նամակիս, որ կը վերաբերէր տանիմարքացի գրող Եորկըն Անտրսըն Ռոզանտալին զոյգ ձեռնարկներուն՝ պատմական վէպ Ուրֆայի հերոսամարտը վերապրեցնող, դասախօսութիւն «Տայաստանը եւ հայերը» նիւթին նկարագրութեան շուրջ Անգլիոյ մէջ՝ կ'ուզեմ հետեւեալ պարագան յանձնել ձեր ուշադրութեան:

Անտրսընի Միջին Արեւելք, Կիլիկիա եւ Պատմական Տայաստան կատարելիք շրջագայութեան, հաւաքելիք նիւթերուն եւ նկարահանումներուն համար դիմած էի Գ. Կիլպէնկեան հիմնարկութեան, որպէսզի գրողին նպաստ մը յատկացնեն: Տիմնարկութիւնը կրնայ ինչպէս ուրիշ առիթներով ըրած է – հարկ եղած կարեւորութիւնը չտալ ներկայացուած առաջարկին եւ զանազան պատճառաբանութիւններով բացասական պատասխան մը տալ: Իմ համոզումս է, որ իրենց պատասխանը կ'ըլլայ դրական եթէ նշուի, որ Անտրսըն արդէն ունի հրատէր այցելելու Տայաստան:

Ահա այս հանգամանքը նկատի ունենալով է որ դարձեալ կը գրեմ ձեզի, որպէսզի եթէ հնարատր է, Անտրսընի Տայաստան այցելութեան խնդիրը արժանացնէք ձեր անմիջական ուշադրութեան:

Դարձեալ կ'ուզեմ կրկնել որ Անտրսընի զոյգ ձեռնարկները կրնան շատ դրական անդրադարձ ունենալ հայութեան համար:

Կը խնդրեմ որ այս մասին անմիջապէս գրէք ինծի, քանի որ Անտրսըն կը սպասէ իմ նամակիս: Եթէ կոմիտէն համաձայն գտնուի զինք հրատիրելու՝ գրողը կ'ուզէ սեպտեմբերին այցելել Տայաստան:

Ներփակ կը գտնէք Անտրսընի ինծի յղած նամակը, ուր հանգամանօրէն խօսած է իր կեանքի եւ ծրագիրներուն մասին:

*Կանխապայտ շնորհակալութեամբ եւ ջերմ ողջոյններով
Կիլպէնկեան Ասատուր*



Յարգելի Պրն Վ. Նամազասպեան
Սփիւոքահայութեան հետ մշակութային կապի
կոմիտէի նախագահ

Թանկագին բարեկամ,

Ներփակ կը գտնէք *Ֆոյլ* դասախօսական գործակալութեան նամակին պատճենը, որ կը վերաբերի ՏԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՏԱՅԵՐԸ դասախօսութեան: Ֆոյլը աշխարհի ամենամեծ գրախանութներէն մէկը՝ ունի դասախօսութիւններու մասնաւոր գործակալութիւն: Վերջինս կանոնաւորաբար կը կազմակերպէ դասախօսութիւններ անգլիական, սկոտլանդական, իրլանդական կարեւոր կեդրոններու մէջ, հրաւիրելով միջազգային համբաւի տէր մտաւորականներ եւ գրողներ: Սոյն գործակալութեան հրաւերով տանիմարքցի գրող, Եորկըն Անտրսըն Ռոզանտալ անցած ինը տարիներուն եկած է Անգլիա եւ դասախօսած՝ շահեկան շատ մը նիւթերու շուրջ: Մեր թելադրութեամբ 1966 տարուան փետրուարին եւ մարտին Եորկըն Անտրսըն պիտի տայ մօտ յիսուն դասախօսութիւն ՏԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՏԱՅԵՐ նիւթին շուրջ:

Եորկըն Անտրսըն Ռոզանտալ ծանօթ անուն մըն է ինչպէս Սկանտինավեան՝ այնպէս ալ եւրոպական շատ մը երկիրներու մէջ: Ան համբոյրդած է հինգ ցամաքամասերու մէջ շատ մը երկիրներ եւ հրատարակած՝ շահեկան գիրքեր, որոնք թարգմանուած են եւրոպական բազմաթիւ լեզուներու:

Նայ ժողովուրդի նշմարիտ այս բարեկամը, բացի ՏԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՏԱՅԵՐԸ դասախօսութիւններէն, կ'աշխատի պատմական վեպի մը վրայ նուիրուած Ուրֆայի հերոսամարտին: Ան այդ նիւթին շուրջ արդէն քաղած է ընդարձակ ծանօթութիւններ օտար աղբիւրներէ: Փետրուարէն մինչեւ Ապրիլի վերջը Անտրսըն մնաց Լոնտոն եւ մեր օգնութեամբ ծանօթացաւ հայկական աղբիւրներուն: Յոյս ունինք, որ պատմական այդ վեպը՝ նոյնքան ցնցիչ իր նիւթով, որքան «Մուսա լեռան 40 օրերը» լոյս կը տեսնէ 1968-ին: Անտրսըն կը նախընտրէ այս մասին առայժմ լուռ մնալ հասկնալի պատճառներով:

Դանիմարքացի գրողը շուտով պիտի այցելէ Միջին Արեւելք, Կիլիկիա եւ պատմական Նայաստանի բոլոր կարեւոր կեդրոնները, իր դասախօսութեան համար լուսանկարներ, իսկ գրքին համար՝ տուեալներ ապահովելու: Ան անցեալ տարի արդէն այցելած է Կարս եւ Անի:

Ֆոյլզի նման լուրջ հաստատութեան մը կողմէ կազմակերպուած դասախօսութեան մէջ անշուշտ կարեւոր տեղ մը պիտի ունենայ Ս. Նայաստանը իր մշակութային ու գիտական օճախներով: Ինչպէս Անտրսըն, այնպէս ալ մենք անհրաժեշտ կը նկատենք, որ տանիմարքացի գրողը այս տարուան ընթացքին այցելէ Նայաստան եւ ծանօթանայ մեր երկրին ու ժողովուրդին:

Աւելորդ է ըսել որ ՏԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՏԱՅԵՐԸ դասախօսութիւնը շահաբեր ձեռնարկ մը չէ Անտրսընին համար, ընդհակառակը կը կարօտի նիւթական զոհողութիւններու: Նշենք նաեւ որ, երբ մենք թելադրեցինք տանիմարքացի գրողին որ յառաջիկայ փետրուար-մարտ ամիսներուն խօսի Նայաստանի եւ հայ ժողովուրդի մասին, միաժամանակ խոստացանք օճանդակել իրեն մանաւանդ դիմել ձեզի եւ խնդրել, որ Խ. Միութեան մէջ Անտրսըն ըլլայ Սփիոքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի հիւրը: Ըրինք այդ խոստումը, համոզուած ըլլալով որ հայրենիքի եւ սփիւքի մշակութային մեր կազմակերպութիւններու մանաւանդ մեր մտաւորականութեան սրտին շատ մօտ են Անտրսընի ձեռնարկած զոյգ աշխատանքներն ալ հաւասարապէս: Նեղինակաւոր գրողի մը կողմէ տրուելիք նման դասախօսութիւն մը մեծ նպաստ մըն է մեր ժողովուրդը Արեւմուտքի մէջ իր դրական գիծերով ներկայացնելու նիւզին, իսկ պատմական վեպ մը նուիրուած մեր հերոսամարտերէն մէկուն՝ ամենէն ազդու միջոցն է միլիոնաւոր ընթերցողներու մտքին մէջ գծելու բարձր ձգտումներու համար պայքարող ժողովուրդի մը հերոսական պատկերը:

Թանկագին հայրենակից, կը խնդրեմ որ ներկայացուած հարցի մասին անմիջապէս գրեք ինծի կամ ուղղակի Անտրսընին, որուն հասցէն կը գտնէք ներքեւ: Կ'ուզեմ նշել այս կապակցութեամբ նաեւ, որ Անտրսըն Ռոզանտալ իր սեփական ծախսով պատրաստ է գալ Խ. Միութիւն, եթէ դուք յանձն առնէք հոգալ իր ծախսերը հոն հասնելէն ետք: Եթէ հնարաւոր է այդպիսի կարգադրութիւն մը ընել, տանիմարքացի գրողը կանխաւ կը յայտնէ ձեզի իր ժամանման թուականը:

Եորկըն Անտրսըն Ռոզանտալի հասցէն է.

Mr J. Andersen-Rosandal

71 Vesterbrogade Copenhagen – V Denmark

Անցեալ երկու տարիներու ընթացքին, հանգամանքներու բերումով չեն կրցած սերտ կապ պահել Կոմիտէի հետ. յոյս ունիմ այսուհետեւ աւելի յաճախ գրել Կոմիտէն հետաքրքրող հարցերու շուրջ: Ներկայիս լուրջ կերպով կը հետաքրքրուինք Տայաստանի պարի անսամբլը Լոնտոն բերել տալու կարելիութիւններով: Յոյս ունինք որ մեր առաջադրութիւնը կ'իրագործուի այս տարուան վերջաւորութեան կամ յառաջիկայ տարուան սկիզբը:

Տանեցէք մեր ողջոյնները հաղորդել Կոմիտէի բոլոր գործողներուն, «ՏԱՅՐԵՆԻՔԻ ՉԱՅՆ»ի խմբագրութեան եւ մեր բարեկամներուն, որոնք միշտ ալ եղած են մեր մտածումին մէջ:

Լաւագոյն ցանկութիւններով եւ ողջոյններով՝

Կիլիզէիէան Ասատուր

Համբարձումյան Վիկտոր

5.09 (18), 1908, Թիֆլիս, Թիֆլիս, – 12.08.1996, Երեւան,
թաղված է Բյուրականում, Հայաստան:

Հայ աստղագետ եւ աստղաֆիզիկոս, տեսական
աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկը: Համբարձումյանի
աշխատությունները վերաբերում են աստղերի եւ
միգամածությունների ֆիզիկայի, արտագալակտիկական
աստղագիտության, աստղային համակարգերի
դինամիկայի, եւ գալակտիկայի էվոլյուցիայի եւ
մաթեմատիկական ֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի
բնագավառներին: Սկզբունքորեն նոր տիեզերածնական
հայեցակարգի հեղինակ է: Ստալինյան մրցանակի կրկնակի
(1946, 1950) դափնեկիր, Սոցիալիստական աշխատանքի
կրկնակի հերոս (1968, 1978), Հայաստանի ազգային հերոս
(1996), Ռուսաստանի Դաշնության պետական մրցանակի
դափնեկիր, արժանացել է բազմաթիվ ակադեմիական
պարգևների: Բյուրականի աստղադիտարանի
հիմնադիրն է:



Սփյուռքահայութեան ներկայացուցիչների ժողովի
նախապատրաստության կոմիտե

🔗 Հարգելի հայրենակից Ասատուր Գյուլելյան,

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախագա-
հության որոշմամբ 1980 թվականի նոյեմբերի 24-25-ը Երեւանում
անց է կացվելու սփյուռքահայության ներկայացուցիչների ժողով՝ հայ-
րենիքի հասարակայնության ներկայացուցիչների մասնակցությամբ:
Ժողովի օրակարգն է.

«Վերածնված հայրենիքը եւ Սփյուռքը: Պայքար հանուն խաղաղու-
թյան ու առաջադիմության»:

Նկատի ունենալով Սփյուռքում ծավալած Ձեր հասարակական ու
մշակութային լայն գործունեությունը, պատիվ ունենք Ձեզ սիրով հրա-
վիրել Երեւան՝ 10 օրով:

Ուրախ կլինենք, եթե Դուք ամենասեղմ ժամկետում հեռագրով
հայտնեիք մեզ ժողովին մասնակցելու Ձեր համաձայնության մասին:
Նայրենիքում գտնվելու հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաեւ
վերադարձի ճանապարհածախսը կհոգա կոմիտեն:

Ժողովի նախապատրաստության կոմիտեի նախագահ՝

*Ջերմողջույններով՝
Համբարձումյան Վիկտոր*

❖ **Հարգելի բարեկամ Ա. Գյուլեյան,**

Ստացա Ձեր 1959թ. ապրիլի 3-ի թվակիր նամակը: Տայտնում եմ խորին շնորհակալությունս Սովետական Հայաստանի բարգավաճման եւ գիտության էլ ավելի ծաղկման վերաբերյալ Ձեր հղած բարի ցանկությունների համար:

Միաժամանակ շնորհակալություն եմ հայտնում նաեւ Ձեր ուղարկած լուսանկարների ու գրքերի համար: Գրքերը շուտով կստանամ:

Ընդունեցեք իմ անկեղծ հարգանքներն ու լավագույն ցանկությունները՝ Ձեզ, Ձեր տիկնոջն ու բոլոր նրանց, որոնց հետ ես պատիվ ունեցա ծանոթանալու իմ Կալկաթա այցելած ժամանակ: Իմ հանդիպումները Կալկաթայի մեր հայրենակիցների հետ միշտ վառ կմնան հիշողությանս մեջ:

*Տարգանքներով
Համբարձունյան Վիկտոր*

Վիկտոր Համբարձունյանը Ասողիկ Սրբազանի եւ մի խումբ հնդկահայերի հետ Կալկաթայում, 1960թ.:





Յարգելի Փրոֆ. Վ.Տամբարձումեան
Նախագահ Ս. Տայաստանի Գիտութեանց Ակադեմիայի

Սիրելի Փրոֆ.,

Անխառն հրճուանքով եւ հպարտութեամբ կարդացինք թե՛ հայ, եւ թե՛ օտար մամուլի էջերէն ձեր Միացեալ Նահանգներու Գիտութիւններու Ակադեմիայի Պատույ Անդամ ընտրուած լինելու ատենիսը, ինչպէս նաեւ Խաղաղութեան համաշխարհային Խորհուրդի կողմէ ձեր Արծաթեայ Շքանշանով պարգեւատրուած ըլլալու բերկրալի լուրը: Այս առթիւ ընդունեցէք տիկնոջս, Ալեքսեան ընտանիքի անդամներուն եւ իմ սրտագին շնորհատրութիւնները:

Արդարեւ դուք արժանի էք համաշխարհային նշանակութիւն ունեցող այդ գոյգ պատիւներուն, նախ ձեր գիտական անգնահատելի վաստակին ապա, խաղաղութեան եւ ժողովուրդներու բարեկամութեան ամրապնդման ասպարեզին մէջ ձեր կատարած թանկագին աշխատանքին համար:

Սիրելի Փրոֆ. Ձեզի տրուած բացառիկ պատիւն ու գնահատականները, յատկապէս մեր ժողովուրդի եւ մեր չքնաղ հայրենիքի համար ունին պատմական մեծ նշանակութիւն:

Տայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքին ունեցած է երկու նուիրական ձգտում. ապրիլ խաղաղ եւ հասնիլ գիտութեան լոյսին: Պատմական Տայաստանի զանազան շրջաններուն մէջ դարերու ընթացքին կառուցուած անթիւ վանքերը, եկեղեցիները, գիտութեան եւ մշակույթի օջախները, դարերու իմաստութիւնը իրենց մէջ խտացուցած մեր տասնեակ հազարաւոր խունացած մագաղաթեայ ձեռագրերն ու պատառիկները այդ երկու ձգտումներու կենդանի վկաներն են:

Ժամանակը շատ անողոք գտնուեցաւ մեր պապերու հանդէպ եւ անոնք չկարողացան իրականացնել իրենց դարաւոր երազը: Բայց «ճառագայթը կարելի չէ թաղել», կարելի չէ թաղել նաեւ ժողովուրդի մը բարի ձգտումներն ու իտեալները:

Սովետական կարգերու հաստատումով, Տայաստանի մէջ խաղաղասէր հայ ժողովուրդի դարաւոր ու նուիրական ձգտումները դարձան իրականութիւն: Ողբի ու սուգի երկիրը կարճ ժամանակամիջոցի մը մէջ դարձաւ գիտութեան ու մշակույթի, նարտարարութեան ու լու-

սաւորութեան արեւավառ երկիր: Կառուցուեցան հարիւրաւոր գործարաններ եւ արդիւնաբերութեան ձեռնարկներ: Պարմանի Տայաստանի քաղաքներուն, աւաններուն ու գիւղերուն մէջ կեանքը դարձաւ խնդութեան երգ, իսկ երգը դարձաւ ԿԵԱՆՔ:

Ահա թէ ինչո՞ւ, սիրելի Փրոֆ. այսօր երբ հեռաւոր Տնդկաստանի մէջ, նոյնիսկ օտար լրագիրներու էջերէն կը կարդանք Տայաստանի գիտնականներու, արուեստի ու մշակոյթի գործիչներու յաջողութիւններուն մասին, կը հրեռնուինք ի խորոց սրտի եւ երախտագիտութեամբ կը լեցուինք այն ազնիւ ու մեծ ժողովուրդի հանդէպ, որու եղբայրական աջակցութեամբ մահուան ճիրաններէն մազապուրծ ազատուեցաւ մեր ժողովուրդը քառասուն տարի առաջ եւ որու օժանդակութեամբ կը ծաղկի ու կը բարգաւառի մեր սիրասուն հայրենիքն այսօր:

Բարեկամս, Ալբերթ Փարդասանեանը իր նամակին մէջ յիշած Ալավերտի ձեզ հետ ունեցած հանդիպման մասին: Ալբերթի միջոցաւ ձեր ուղարկած բարեւներն ու բարեմաղթութիւնները հաղորդեցի Կալկաթայի մեր ծանօթներուն, որոնք մեծապէս ուրախացան այն բանի համար որ տակաւին չէք մոռացած գիրենք:

Ժամանակին ձեր հասցենով դրկած գիրքերս կը յուսամ ստացած էք արդէն: Ջարմիկիս, Սարգիս Կիւզելեանի միջոցաւ դրկեցի նաեւ ուրիշ ուսումնասիրութիւն մը հնդիկ փիլիսոփայութեան մասին: Սարգիսը կ'ապրի Երեւան իր մօր, տիկնոջ եւ երկու երեխաներուն հետ: Նամակով մը փափաք յայտնած է ծանօթանալու ձեզ հետ. Շատ գոհ կը մնամ, եթէ տեսակցութիւն մը շնորհէք Սարգիսին:

Սիրելի Փրոֆ. եթէ անգլերէն լեզուով որեւէ գրքի կարիք ունիք, խնդրեմ առանց վերապահութեան գրեցէք ինձի:

Բարի գտնուեցէք տիկնոջս, մերոնց եւ իմ մասնաւոր բարեւները հաղորդել ձեր ազնիւ տիկնոջն ու զաւակներուն:

Կարօտով կը սեղմեմ ձեր ձեռքը եւ կը մաղթեմ նորանոր յաջողութիւններ թէ ձեզ եւ թէ ձեր գիտական աշխատակիցներուն:

Սիրով՝ Կիւզելեան Ասատուր



Վիկտոր Համբարձումյանը Կալկաթահայերի հետ, 1960թ.:



/ 24 օգոստոսի 1970թ., Պրայթըն /

Մեծայարգ Ակադեմիկոս Վ. Համբարձումեան,

**Ս. Հայասանի Գիտութիւններու Ակադեմիայի նախագահ ,
Յարգելի Տիար,**

Լոնտոնահայ ազգայիններ Տիարք՝ Պ. Ալեքսեանի, Վ. Շահպազեանի, Ն. Չալըզեանի, Ե. Պարսումեանի եւ Ս. Քիրքնեանի նուիրատութեամբ՝ «Անահիտ»ի կիսանդրիին կրկնօրինակը գնուեցաւ Բրիտանական թանգարանէն: Նուիրատուներուն փափագն է որ կիսանդրին յանձնուի որպէս նուէր Երեւանի պատմութեան թանգարանին:

Արդ, խորապէս շնորհակալ կ'ըլլանք, եթէ Պրայթընի Աստղագետներու համաշխարհային գիտաժողովին մասնակցող ձեր պատուիրակութիւնը յիշեալ կիսանդրին յանձնէ Երեւանի Պատմութեան թանգարանի տնօրէնութեան:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ յարգանքներով՝

Կիլգելեան Ասատուր

Հայկազյան Էդուարդ

Աշխատել է Լոնդոնի Սովետական Դեսպանատանը որպես գիտական գլխավոր խորհրդատու 60-ական թվականներին: Վարել է բազմաթիվ այլ պատասխանատու պաշտոններ: Երկար տարիներ վարել է Սովետական Հայաստանի ներկայացուցչի պաշտոնը հաջա Սովետ Միության, Մոսկվայում:



/ 19 փետրվարի 1969թ. /

Միտելի Ասասուր,

Ներփակ ուղարկում եմ Սովետական Հայաստան թերթի 16 փետրվարի համարից հոդվածը «Կակաթայում» վերնագրով, որը վստահ եմ, թե կհետաքրքրի թեզ եւ ձեր ընտանիքին:

Առիթից օգտվելով ուզում եմ խնդրել թեզ, հիշեցնել այն հարգելի հայ տիկնոջը, որը վերցրել է իմ սլայդները, որպեսզի վերադարձնի: Շտապելուս պատճառն այն է, որ մոտ ժամանակներս պետք է մեր աշխատողների համար մի զեկուցում տամ Հայաստանի մասին եւ ցույց տամ այդ սլայդները: Տուսով եմ, որ գործերդ հաջող են, առողջությունդ էլ գերազանց:

Ձերն քարեններով՝ Հայկազյան Էդուարդ



Միտելի Վիվիեն եւ Ասասուր,

Ի սրտե շնորհավորում եմ Ձեր Նոր տարին:

Ցանկանում եմ երջանկություն, առողջություն եւ հաջողություններ: Բարի ցանկություններով՝ Է. Հայկազյան

P.S. Էրիկ Մամիջանյանը Լոնդոնից վերադառնալուց հետո հանդիպեց ինձ եւ քո ողջույնները ու նվերը ինձ փոխանցեց:

Հայկազյան Էդուարդ

🔗 **Միտելի Ասասուր,**

Ուղարկում եմ քեզ «Սովետական Նայաստան» ամսագրի հինգերորդ համարը, որտեղ տպագրված է քո հիշողությունները Արամ Խաչատրյանի հետ հանդիպումների մասին, կարծում եմ, որ այն քեզ մեծ բավականություն կպատճառի:

Անդրեյ Մարտիրոսյանը, որը վերջերս վերադարձավ Լոնդոնից, ինձ հաղորդեց քո ջերմ բարեւները եւ հանձնեց հուշանվերները, որոնց համար խիստ զգացված եմ:

Ասատուր ջան, առհասարակ, այստեղ քեզ բոլորը միշտ հիշում են եւ ամենառիթով նշում են քո հայրենասիրական ազնիվ կեցվածքը եւ բարի ու ջերմ սիրտը:

Վերջերս տեղի ունեցավ Նայաստանի գրողների միության համագումարը, որն անցավ հաջողությամբ: Վարդգես Պատրոսյանը նորից ընտրվեց մեր Գրողների միության նախագահ:

Ադմինայի եւ իմ կողմից ջերմ բարեւներ հաղորդիր Վիվիենին եւ երեխաներին: Նուսով եմ, որ դեռ կլինեն առիթներ, որպեսզի դարձյալ հանդիպենք:

*Լավագույն ցանկություններով՝
Նայկազյան Էդուարդ*



Միտելի Ասասուր,

Գրաբերս իմ շատ մոտ ընկերն է Ազատյան Վիլենը – տաղանդավոր գիտնական-քիմիագետ է, պրոֆեսոր, որն աշխատելով երկար տարիներ Մոսկվայում, մեծ վաստակ ունի Տայաստանի գիտության զարգացման եւ երիտասարդ հայ գիտնականների պատրաստման գործում:

Վիլենը եկել է Անգլիա իր գիտական գործերով եւ ես շատ շնորհակալ կլինեմ, եթե հնարավորության սահմաններում քո բարի ուշադրությունը ցուցաբերես նրա նկատմամբ:

Իմ գործերը լավ են, ինչպես ասեցի քեզ հեռախոսով աշխատում եմ մի շվեյցարական ընկերության մեջ, որը Ռուսաստանի մեջ իրագործում է արդյունաբերական մեծածավալ նախագծեր արտասահմանյան ընկերությունների մասնակցությամբ, տարբեր բնագավառներում: Ներփակ ուղարկում եմ քեզ իմ այցեքարտը:

Տաջողվեց արդյոք քեզ կապվել Տարությունյան Վլադիմիրի հետ: Նրա հեռախոսի համարը ես քեզ ուղարկել էի ֆաքսով (Ավստրիա (431) 438817) off 71114364 also fax):



Ասատուր Գյուզելյանը Էդուարդ Հայկազյանի եւ Յուրի Խոջամիրյանի հետ շրջապատված Լոնդոնահայերով:

Տայաստանում դրությունը բավական ծանր է: Չունեն գազ, էլեկտրականություն, զգացվում է սննդամթերքի խիստ պակաս: Բնակչությունը հիասթափված է կառավարությունից եւ պահանջում է նրա հրաժարականը: Տեղանկարները պարզ չեն եւ դժվարանում են որեւէ բան կանխատեսել:

Առայժմ այսքանը, իմ եւ Ադմինայի անունից ջերմորեն բարեւում ենք ձեզ բոլորիդ ամենալավագույն ցանկություններով:

Տայկազյան Էդուարդ

Հասարթյան Եգրաս

Հասարթյան Եգրաս Հասարթի:
31.05.1903, Մենծրում, (Խլաթի գավառ, Բիթլիսի վիլայեթ) –
24.04. 1981, Մոսկվա)

Հայ խորհրդային ֆիզիոլոգ: Բժշկական գիտութլունների
դոկտոր (1938), պրոֆեսոր (1939): ԽՍՀՄ ՉԱ թղթակից ան-
դամ (1939), ՀԽՍՀ ՉԱ ակադեմիկոս (1947), ՀԽՍՀ գիտու-
թյան վաստակավոր գործիչ: ԽՄԿԿ անդամ 1929 թվականից:
Իվան Պավլովի աշակերտը:



/ 19 սեպտեմբերի 1977թ., Մոսկվա /

Շաս սիրելի Ասասուր,

Գրում է ձեր վաղեմի ծանոթ պրոֆեսոր Եգրաս Հասարթյանը հե-
տեւյալ առնչութլամբ: Լոնդոն է գալիս մեր ժամանակակից ամենամեծ
ու կարկառուն պատմագետներից մեկը՝ ակադեմիկոս Ծատուր Աղա-
յանը, որի մասին, անտարակույս, լսած կլինեք եւ որի վերջերս լույս
տեսած ծավալուն մենագրութլունը՝ «Հայ ժողովրդի ազատագրութլան
պատմութլունը» մեր հարուստ պատմագիտութլան գլուխգործոց-
ներից է: Կարծեմ թե նա առաջին անգամն է լինում Անգլիայում, այս
իսկ պատճառով, չգիտե Լոնդոնի հայ գաղութը եւ առաջավոր մտա-
վորականութլունը, որոնց ծաղիկներից մեկը Դուք եք: Հիշելով մեկից
ավելի իմ հանդիպումները Ձեր գաղութի, ընտանիքի հետ, մասնավո-
րապես Ձեզ հետ, որոնց ընթացքում զգացած ջերմութլունը մինչեւ այժմ
շարունակում է ինձ հանույք պատճառել՝ ես չեմ սխալվի, եթե ասեմ, որ
ակադեմիկոս Աղայանի հետ տեղի ունենալիք հանդիպումները նույն
շրջանակների հետ շատ ավելի հանելի ու օգտաշատ կլինեն երկու
կողմերի համար: Անցյալ տարիներին մի քանի անգամ Հայաստան
գնալուս, հանդիպել եմ իմ ընդհանուր ու մտերիմ բարեկամ Վահրամ
Մավլյանին եւ մեր քաղցրիկ խոսակցութլունների ընթացքում շարու-
նակ հարցրել եմ Ձեր մասին եւ ուրախացել նրանից ստացած լուրերով:

Շնորհակալ կլինեի, եթե իմ ջերմագին բարեւներս փոխանցեիք ձեր
սքանչելի ընտանիքի բոլոր անդամներին ու ինձ հիշող գաղութի ընտ-
րանուն:

Ձերդ՝ Հասարթյան Եգրաս

❖ **Միրելի Ասասուր,**

Ջերմագին շնորհավորում եմ քեզ, բազմանյուղ ընտանիքիդ բոլոր անդամներին (վերից վար) Նոր տարվա առթիվ եւ սրտանց ցանկանում եմ բոլորիդ քաջառողջություն, երջանկություն եւ ամենայն բարիք: Խնդրում եմ իմ շնորհավորանքներս հաղորդիր մնացյալ բոլոր լոնդոնաբնակ մեր հայրենակիցներին, որոնց հետ ծանոթացել եմ մեծ մասամբ քո միջոցով «Տայ տան» մեջ եւ այլուր եւ որոնց անհատական հասցեները չգիտեմ:

Միշտ քո Տասրաթյան Եզրասս

P.S. Այս աշնան մեկուկես ամիս տիկնոջս հետ եղա Տայաստանում, եւ երբեք այնպիսի դժվարությամբ չէի մեկնել այնտեղից, ինչպես այս տարի: Տայրենիքը օր օրի դառնում է հիասքանչ ու գերող:

Նույն

❖ **Թանկագին բարեկամ,**

Ջերմագին շնորհավորում եմ Ձեր եւ Ձեր գերդաստանի Նոր տարին եւ ցանկանում եմ բոլորիդ ամենայն կարգի հաջողություններ, քաջառողջություն ու երջանկություն:

Տասրաթյան Եզրասս, 1970թ.

❖ **Միրելի Ասասուր,**

Ջերմագին շնորհավորում եմ քո եւ բազմանդամ ընտանիքիդ Նոր տարին, ցանկանում եմ բոլորիդ քաջառողջություն ու բազում այլ բարիքներ: Խնդրում եմ ամանորյա շնորհավորանքներս հաղորդիր բազմաթիվ մեր հայրենակիցներին, որոնց հետ քո միջոցով ծանոթացել եմ Լոնդոն կատարած այցելություններիս ընթացքին:

Տասրաթյան Եզրասս, 1972թ.

Հասիսյան Արթուր

Ծնվել է Կիլիկիայի Այնթապ քաղաքում 1914թ.ին:
Վախճանվել է 1983-ին:
Գրող, հրապարակագիր, հրապարակախօս, «Էջմիածին»
ամսագրի երկարամյա խմբագիր եւ Զոգեւոր ճեմարանի
դասախոս:



/ 20 Փետրվարի 1964թ. /

🔗 Ըստ սիրելի Ասասուր ջան,

Ճնորհակալությամբ ստացա ձեր 31 հունվար թվակիր նամակը, որին սպասում էի կարոտով:

Ալեքսյան-Այուզելեան ընտանիքների որդիական ակնածանքն ու անուշհամբույրը, նույն օրն իսկ փոխանցել եմ Վեհափառ Տայրապետին եւ ընդհանրապես պատմել եմ եղբայրական նամակիդ բովանդակությունը: Չեմ մոռացել նույնիսկ «Դոկտոր» Արամի պարագան...

Վեհափառ Տայրապետը բարեհաճեց կարգադրել ու իր «հայրապետական ողջույնը եւ մասնավոր գնահատանքը» հայտնել քեզ, քո «նվիրված աշխատանքիդ համար, խեղճին հոգին դուրս եկավ եւ մեզի չափ հոգնեցավ»: Վեհի խոսքերն են սրանք:

Սակայն, ազիզ ջան, իրապես շատ եմ կարոտել քեզ, բայց առայժմ Վեհափառի հանձնարարությամբ եմ գրում, որ մեր բոլորիս շատ սիրելի, պատվական պ. Պետրոս Ալեքսյանը թող բարեհաճի Վեհ. Տայրապետին ուղարկել իր խոստացած «Էջմիածին» ասեղնագործ նկարի գունավոր լուսանկարը: Այս մասին արդեն գրված է մի անգամ: Երկրորդ. Վեհարանի գահասրահի համար անհրաժեշտ է 6 կտոր ոսկեգույն, վարդագույն մետաքս վարագույրացու, որից 6 կտոր գնել էր պ. Պետրոսը Վեհ. Տայրապետի համար: Վեհափառը ասում է, որ այս մասին գրվել է, ես հիշեցնում եմ, ավելացնելով, որ եթե 10-15 կտոր նարվի այդ մետաքսի վարագույրից, Վեհափառը համաձայն է որ գնվի: Եթե Կալկաթայի եկեղեցական վարչությունը հոգա ծախսը, Վեհափառը իհարկե գոն կմնա, եթե ոչ, Ն.Ս. Օծությունը, կվճարի մի կերպ: Այս է Վեհափառի ցանկությունը, խնդրում եմ Վեհ. Տայրապետի օրհնությունը եւ իմ եղբայրական ողջույնները հաղորդել

պ. Պետրոս Ալեքսյանին: Միրելի Ասատուր ջան, ես էլ քեզ նման անչափ կարոտել եմ քեզ, ձերոնց եւ ահա մեկ ու կես ամիս է, որ նորից ապրում եմ մեր անցկացրած օրերը, քաղցր, եղբայրական ժամանակները Ննդկաստանում, որովհետեւ աշխատել եւ վերջացրել եմ Վեհ-ի Ննդկաստան ուղեւորության հուշամատյանը ու իջեցրել տպարան: Դրանք ամեն օր թղթատելով, իմ գրած հաշիվները իմ կազմած օրագրությունը, նորից ապրել եմ այդ օրերը, հիշելով շատ բան ու այդ շատերի մեջ ամենից շատ քեզ: Վեհ-ը երբ կարդում էր մեքենագրված էջերը, ասում էր. «Ասատուրին արժանի տեղը տված ես, շատ լավ է»: Ամսագրի փետրվար-մարտ համարը նվիրել եմ Վեհափառի չորրորդ ուղեւորությանը, 20 էջ Լոնդոն, 100 էջ Երուսաղեմ, 75 էջ Եգիպտոս, 160 էջ Ննդկաստան, 35 նկարներով: Արդեն բոլոր նյութերը իջել են տպարան եւ շուտով կտպվեն:

Վեհ-ը քեզ ուղարկում է իր ստորագրությամբ ուղեւորության 2-րդ գիրքը՝ ԱՄՆ կատարած 1960 թվին: Ասողիկ սրբազանը ուղարկում է Նայոց գրերը՝ մեծ ալբոմը, իսկ ես՝ Մխիթար սպարապետի նոր պատկերագարդ հրատարակությունը:

Գառնիկ Ստեփանյանը եկավ մեր տուն իր մի տղայի հետ, խոսեցինք, կոնյակ խմեցինք ձեր կենացը, հաղորդեցի Էլիզի ողջույնները, տվի նոր հասցեն որ գրի: Ջարմանում եմ, որ նամակ չի ստացել Գառնիկից: Տանձնել եննա եւ նվերները:

Ասո ջան, ազիզ եղբայր ջան, առանց չափազանցության, օր չի անցնում, որ Ձեզ բոլորիդ չհիշենք: Մեկ Ննդկաստան մեկ Ասատուր, երկու մեծություններ, իրարմով ամենաշատ եւ գեղեցկացած գեթ մեզ համար: Դու եղար այն լուսամուտը որով նայեցինք, սիրեցինք Ննդկաստանը ու հնդիկ ազնիվ, բարի ժողովրդին: Երկու անգամ Ճեմարանում ուսանողության դասախոսություն եմ կարդացել Ննդկաստանի մասին, հիշելով նույնիսկ Քերալայում գիշերները մեր խմած վիսկիները հեմարանում, Տայր Փիլիպպոսի հետ, Կալկաթայի հեմարանի քո ղեկավարած հայրենասիրական հանդեսով հուզել եւ լացացրել ես բոլորին: Ասո ջան, նկարները դեռ չենք ստացել եւ արդեն ուշ է: Ննդկաստանից տվել եմ 15 նկար, հերիք է: Պ. Մկրտում Նարությունի «Բաղձանք» բանաստեղծությունը նույնպես զետեղել եմ հոդվածում, ինչպես նաեւ Պ. Պետրոս Ալեքսյանի գեղեցիկ պատկերը:

Ասո ջան, «հերիք օտար սանդուղքներեն ելլեն ոտքերդ»: Մի օր քեզ

եւ քո ամբողջ ընտանիքդ Երեւանում տեսնանք եւ ողջունելու ամենա-
ջերմ զգացումներով, ընդունեցեք կնոջս, երկու երեխաներիս, եղբայ-
րական հայկական համբույրները ձեր Ալեքսյան-Կյուզելյան ընտանի-
քին պանդուխտ ճակատներին:

Տատիսյան Արթուր



/ 5 հունվարի 1964թ. /

Միւրելի Ասասուր ջան,

Գրում եմ քեզ երկրորդ նամակս:

Առաջինը գրեցի Մոսկվայից Նոր տարվա առթիվ, շնորհավորելով
Ձեր բոլորի նոր տարին եւ Ս. Ծնունդը:

Մոսկվա մնացինք մինչեւ ամսի 26 եւ ապա տուն հասանք ողջ ու
առողջ եւ մերոնց գտանք լավ վիճակում: Անհամբեր սպասում էին
մեզ:

Ամսի 26-ից մինչեւ այսօր, հունվարի 5-ը, ամեն րոպե եւ ամեն առիթով
խոսում ենք Տնդկաստանի մասին, մեր տպավորությունների մասին,
ազնիվ մարդկանց մասին եւ նրանց թվում առաջին հերթին պ. Պետրոս
Ալեքսյանի, նրա սքանչելի հյուրասեր եւ հայկական ոգով տոգորված
ընտանիքի, ինչպես նաեւ այդ երջանիկ բնում քո ընտանեկան բախ-
տավորության եւ երջանկության մասին:

Մեր հուշերն ու տպավորությունները դեռ թարմ են ձեզնից եւ
հաճախ-հաճախ խոսելով այդ մասին դրանք ավելի խորապես տպա-
վորում են մեզ:

Նոր տարին անցկացրինք Վեհափառ Տայրապետի հետ, հոգեւոր
ճեմարանում միաբանության եւ ուսանողության հետ, նորից հիշե-
ցինք ձեզ, մանավանդ անդրադարձանք Կալկաթայի ճեմարանում քո
ղեկավարած գրական-գեղարվեստական երեկոյին, ազգային-հայրե-
նասիրական նշանակության եւ քո գովքը արեցի առատորեն:

15-20 օր է մեր տունը հարսանքատուն է, եկող-գնացող շատ, կար-
ծես թե նոր եմ վերադարձել սփյուռքից: Բոլորի սրտերում անսահման

սեր, հետաքրքրություն կա դեպի Գանգեսի հեռակա ափերի վրա ապրող հայ քույրերի եւ եղբայրների մասին:

Ասո ջան, իմ կարճլիկ միակ մտավորական ջան, առանց ինձ ո՞նց ես ապրում: Մոսկվայում հանդիպեցի՜նք Գեորգ Էմիլին: Ստացել էր քո քարտերը Մադրասից, ուզում էր շնորհավորել Նոր տարիդ, հասցեդ չունէր, տվեցի: «Սովետ լենդ» ժուռնալը Վեհափառը ուզեց Մոսկվայում, տվի նրան, որով Պունիզանյանին չկարողացա տալ: Մյուս հանձնարարություններդ կատարեցի: Սպասում ենք «Ջարթօնք» եւ «Արարատ» կարդում ենք ուրախությամբ: «Ջարթօնք»-ը մի քանի հոդվածի տակ դրել էր քո ստորագրությունները: Լավ էր արել:

Ասո ջան, ինձ հետ բերեցի 3 դիմում նեմարանից: Դիմումը ստորագրել է միայն Վրեժը: Խնդրում եմ մյուս երկու տղաներն էլ ստորագրեն եւ ուղարկեն:

Ջերմագին բարեւներ եւ սրտագին բարեմաղթություններ նորից եւ նորից պ. Պետրոսին, հարգելի կնոջը, «Կալկաթայի սոխակին», ձեր գահաժառանգին, Այվընին, Սիլվիային եւ մեծատաղանդ Վիվիենին:

Ջերմագինբարեւներնաեւ տիկ Էլիզ Տարութին եւ բոլորհարցնողաց: Ընդունեցեք նաեւ իմ ընտանիքի անկեղծ հարգանքները: Գրիր երկար եւ շատ: Գրկում համբուրում եմ քեզ:

Միրով՝ Տատիտյան Արթուր



/ 1965թ. /

Միրելի պրն Ասատուր Կյուզելյան,
ժրաջան խմբագիր «Արեգակ» ամսագրի, Լոնդոն

Միրելի Ասատուր,

Վեհափառ Տայրապետը ստացել է քո 12 մայիս թվակիր նամակը:

Ինչ խոսք, որ Լոնդոնի այսպես կոչված «եկեղեցական տազնապը» վիշտ եւ ծանր մտահոգություն է պատճառում Վեհափառ Տայրապետին: Մեզ էլ է թվում, թե ստեղծված տխուր կացության մեջ միակ ելքը կլինի որ Լոնդոնի հավատացյալ հայ ժողովուրդը ունենա իր «ժողովրդական եկեղեցին», իր հոգեւոր ղեկավարը եւ ազգային եկեղեցական մարմինը: Վերջերս երբ Լոնդոնում էինք այդ մասին արդեն

խոսակցություններ տեղի ունեցան Վեհափառ Տայրապետի, Լոնդոնի Տամայնական խորհրդի անդամների եւ լոնդոնահայ մի շարք պատվական ազգայինների հետ:

Երբ Վեհափառ Տայրապետը Լոնդոնում էր գտնվում, իր համաձայնությունը տվել էր, որ լոնդոնահայությունը ունենա հայկական երկրորդ եկեղեցին, Մայր Աթոռի հոգեւոր հովանու ներքո, եւ այդ մասին անհրաժեշտը ասել էր Տամայնքային ժողովի անդամներին ու այդ հարցով զբաղվող ազգայիններին, թելադրելով որ նրանք պաշտոնապես եւ գրավոր դիմեն Մայր Աթոռ այդ իմաստով ու նպատակով:

Վերջերս Վեհափառը հեռախոսով կապվեց Տամայնքային խորհրդի մի շարք անդամների հետ Պսակ Սրբազանի շուրջ կատարված տհաճ դեպքից հետո, կրկին թելադրելով, որ պաշտոնապես դիմեն Մայր Աթոռ, Լոնդոնում երկրորդ եկեղեցի ունենալու կապակցությամբ: Վեհափառ Տայրապետը սպասում է նաեւ Սերովբե Արքեպիսկոպոսի զեկուցագրին: Գուցե վերջին պահուն մի հաշտություն գոյանա եւ Սուրբ Սարգիս եկեղեցու Տրըստին իր որոշումը հետս կոչե:

Ստացանք «Տառաջ»ի հոդվածը այս առթիվ գրված, թեւէ շատ ուժեղ, սակայն ճիշտ եւ տեղին: Գոհունակությամբ կարդացինք նաեւ քո խմբագրականը «Արեգակ»ի մարտ համարի մեջ, համոզմունքով, զայրույթով եւ արդարությամբ գրված: Ապրիս Տայ եկեղեցու նոր տրիբուն: Վեհափառ Տայրապետի օրհնությունները «Արեգակ»ի բացառիկ եւ մարտից այս կողմ հրատարակված բոլոր համարների համար, ինչպես նաեւ եղբայրական, իմ ջերմ շնորհավորությունները: Ջերմորեն գրկում եմ քեզ բարեւելով պրն Պետրոս Ալեքսյանին, տիկնոջը, մեր սիրելի Վիվիենին, համբուրելով փոքրիկ Կարինեի այտերից: Բարեւներ Տ. Գալստյանին եւ «Աստված օգնական» Պսակ Սրբազանին:

Շտապ գրիր մեզ:

Տարգանքներով՝ Տատիտյան Արթուն



Միտելի Ասասուր ջան,

Երեւան հասնելուց հետո, առաջին նամակը գրում եմ քեզ, նախ շնորհակալություն հայտնելով Ձերոնց ցույց տված այնքան ազնիվ, եւ քարյացակամ ուշադրության ու գուրգուրանքին համար, ինչպէս նաեւ պ. Նայկ Գալստյանի հյուրասիրության եւ ազնվության համար, ապա քեզ՝ քո եղբայրական սիրառատ եւ անկեղծ բարեկամության համար:

Առաջին գործս եղավ կատարել քո հանձնարարությունները, եղաւ Լ. Խաչիկյանի մոտ, քեզ լավ հիշեց, դեմքով, գույնով ու նույնիսկ գրական շնորհներով: Յավ հայտնեց, որ «Արեգակ»-ը չի ստանում, հասցեդ տվի որ քեզ գրի, ուղարկի Մատենադարանի վերջին հայագիտական հրատարակությունները ու արժեքավոր հոդվածներ «Արեգակ»-ի համար:

Այցելեցի «Մով. Գրականություն» ամսագրի խմբագիր Ս. Կուրտիկյանին եւ փոխխմբագիր Ստ. Ալաջաջյանին, թերթը չեն ստանում, հասցեն տվեցի ու խոստացան անմիջապէս օգնել, եթէ նախկին համարներից ունեք, ուղարկեցեք որ ծանոթանան թերթի ուղղությանն ու ոգուն: Բացատրեցի որ նախընտրելի է մանավանդ սիրված բանաստեղծների աշխատակցությունները ու տվեցի անուններ՝ ինչ նշված էր ցուցակում: Երեքշաբթի օր նորից եմ գնալու եւ անձամբ տեսնելու մի քանիսին: Այնուհետեւ եղա Վ. Նամազասայանի ու Գր. Քեշիշյանի մոտ, ուր եւ խոսեցի անհարժեշտության մասին: Միտելի խոստացան օգնել: Մի քանի օրինակ ավելի ուղարկեցեք Վ. Նամազասայանի հասցեով:

Սույն նամակով շտապ ուղարկում եմ քեզ մի շաբթ քանաստեղծություններ «Գրական թերթ»-ից քաղված, եւ մեքենագրած 3 հոդված թերթի բացառիկի համար: Մնացածները ուղարկում եմ հաջորդաբար: Ամսի 20-ին հասանք Մ. Աթոռ: Նինգ օր մնացինք գործով Մոսկվա:

Գործերս այնքան շատացել եւ հավաքվել են, որ իրապէս «գլուխ քորելու» ժամանակ չունեմ: Եկած օրս իսկ գնացել եմ աշխատանքի: Նամակդ հասել էր, ուրիշ բազմաթիվ նամակների հետ:

Մանրամասն գրիր մեր մեկնելուց հետո այնտեղի գործերի եւ խոսակցությունների մասին:

Ամենաջերմ բարեկեցիկ Զեզի բուրբիդ, մեր շատ սիրելի ու հարգելի պ. Պետրոս Ալեքսյանին, հարգելի տիկնոջը, տիկին Վիվիենին, համբյուրներ Կարինեին ու քեզ, իմ սիրելի եւ ճշմարիտ բարեկամ Ասատուր ջան: Նույնպես պ. Տ. Գալուստյանին:

Աստվածօգնական Պսակ Սրբազանին: Գործերս թեթեւանան կգրեմ նաեւ իրեն: Անհամբեր սպասում եմ նամակիդ ու մանավանդ բացառիկի մասին նոր կարգադրութիւններին:

*Միրով եւ միշտ եղբայրորեն՝
Տատիտյան Արթուր*



/ 1 փետրվարի 1966թ., Էջմիածին /

Միւրելի Ասասուր,

Միշտ մտադրվել եմ գրել քեզ, եղել են բազմաթիւ առիթներ ցանկությունս եւ միտումս իրագործելու համար, բայց միշտ էլ հանգամանքները խանգարել են, այնուամենայնիվ երբեք չեմ մոռացել քեզ:

Վեհափառ Տայրապետի գահակալության տասնամյակի հանդիսությունների ժամանակ, շատ կարճ տեւողությամբ վայելեցինք պր. Պետրոս Ալեքսյանի շենշող, պայծառ ներկայությունը, որը հաղորդեց նաեւ Զեր եւ Զեր հարազատների սրտագին բարեկեցիկ: Կոմիտաս եպիսկոպոսը, Արսեն վարդապետը եւ ես ծրագրել էինք գոնե մի անգամ մեր տանը հավաքվել, ընտանեկան սեղանի շուրջ, եւ վերհիշել մեր անցած հիշարժան օրերը Տնկաստանում, Լոնդոնում: Մինչեւ նոյեմբերի 8-ը բուրբս էլ ծանրորեն զբաղվել էինք, մինչ նույն օրը, պրն Աքելայանը մեկնել էր: Նույնիսկ չկարողացա նրան հանձնել Կարինեի համար մի քանի երեսանյան հուշանվերներ, թեւ նախագգուշացրել էի այդ մասին պր. Պետրոսին: Նոյեմբերի 7-ին, ամբողջ կիրակի օրը, սպասեցի Մայր Աթոռում, բայց չկարողացա նրան տեսնել:

Վերջերս, երբ ստացանք Վեհափառ Տայրապետի գահակալության տասնամյակին նվիրված «Արեգակ»ի բացառիկը, որի համար ջերմորեն շնորհավորել է հարգելի խմբագիրը, կարդացի վերջին էջում, որ Զեր ընտանիքը բախտավորվել է մի նոր, խոստումնալից ծնունդով: Զերմագին եւ սրտագին շնորհավորություններ:

Ամենայն անկեղծության նշեմ, որ անհամբերությամբ սպասում ենք «Արեգակ»-ի համարներին: Ապրես, Ասատուր, նոր շունչ, ոգի, սկզբունք եւ հայրենասիրություն մտցրեցիր ամսագրի էջերին մեջ: Շատ կցանկանայի աշխատակցել, բայց այնքան զբաղված եմ:

Միրելի Ասատուր, որոշել էի վերջապես գրել քեզ, եւ անհա գրում եմ եւ այնքան ասելիքներ ունեմ:

Ինչպես գիտես, Վեհափառ Տայրապետը շատ մտահոգ է Լոնդոնի հարցով: Դու ապրում ես Լոնդոնում, մոտ ես ազգային, եկեղեցական շրջանակներին, ծանոթ ես մարդկանց եւ մտայնություններին: Ցանկալի է, որ խորհրդաբար, նշգրտորեն եւ անկողմնակալ ոգով քո կարծիքը հայտնես հետեւյալ մի շարք հարցերի մասին, որոնց լուսաբանումով մեծապես օգտակար կլինես Վեհափառ Տայրապետին:

1) Ինչ փուլի մեջ է գտնվում Պսակ սրբազանի եւ Ս. Սարգիս եկեղեցու Տրըստիի միջեւ ծագած վեճը:

2) Որն է Լոնդոնում հանրային գերակշռող կարծիքը այս պահուս: Ժողովրդի մեծամասնությունը շարունակո՞ւմ է Տայրապետական Պատվիրակի կողմը լինել:

3) Ժողովրդական քվեներով ընտրված առժամյա վարչության դիրքն ի՞նչ է: Արդյոք վարչությունը վայելում է ժողովրդի լայն համակրանքը, թե ոչ: Նրա օգտին տրված 800 քվեարկողների վստահությունը մնո՞ւմ է, թե խախտվել է:

4) Ընտրված եկեղեցական վարչությունը սկզբում հայտարարում էր, թե ինքը ուրիշ եկեղեցի է վարձելու, որը լինելու է ժողովրդական: Ինչո՞ւ այս ծրագիրը չի հետապնդում վարչությունը: Ինչո՞ւ են ուզում անպայման Սբ Սարգիս եկեղեցին ձեռք անցկացնել:

5) Արդյոք Սբ Սարգիս եկեղեցին օրենքի ուժով կկարենան ձեռք անցկացնել եւ չեզոքացնել Տրըստիին:

6) Արդյոք դաշնակցական տարրեր, հակաէջմիածնական նպատակներով գործի չեն անցել եւ խուլ աշխատանք չեն տանում՝ գաղութը պառակտելու համար:

7) Արդյոք Մայր Աթոռի շահերի տեսակետից միակ, ցանկալի լուծումը չէր լինի համերաշխ գործակցության ստեղծումը, Պսակ Սրբազանի, Տրըստիի եւ ընտրված վարչության միջեւ: Կա որեւէ մի հույս այդ համերաշխությունը իրականացնելու համար:

8) Պսակ Սրբազանի եւ ընտրված վարչության կողմից հարց է դրված՝

Լոնդոնի գաղութը մի նոր կանոնադրությամբ օժտելու համար: Վարչությունը ցանկանում է մի տեսակ թեմական կանոնադրության ձեռք տալ դրան: Պսակ սրբազանը փափագում է ունենալ Տայրապետական Պատվիրակության կանոնադրություն: Մյուս կողմից, Տրըստին ցանկանում է պահել իր անկախ դիրքը եւ իշխանությունը Ս. Սարգիս եկեղեցում: Ահա այսպիսի դժվարին կացություն է ստեղծվել Վեհափառ Տայրապետի համար:

Նորին Ս. Օծությունը խորհում է, որ հարմարագույն ձեւը կլիներ Լոնդոնի համար Տայրապետական Պատվիրակության կանոնադրության կազմությունը, պայմանավ որ գործակցության մի եզր գտնվի Տայրապետական Պատվիրակի, Տրըստիի եւ ընտրված եկեղեցական վարչության միջեւ: Բայց այդ հնարավոր կլինի՞ ներկա պայմանների մեջ:

Սիրելի Ասատուր, ահա հարցեր, որոնք զբաղեցնում եւ մտահոգում են մեր Տայրապետին:

Ցանկալի է, որ լրջությամբ խորհրդածես այս հարցերի շուրջ եւ պատասխանես հանգամանորեն, կարելի ճշտությամբ, դեպքերի եւ դեմքերի խորին վերլուծությամբ, առարկայորեն, ելնելով Մայր Աթոռի եւ մերժողովրդի իրավաձահերից:

Քո նամակը կարող է իր լուսաբանություններով օգտակար լինել Վեհափառ Տայրապետին ամբողջական եւ ճշգրիտ պատկերացում կազմելու համար Լոնդոնի տագնապի ներքին ծալքերի եւ վերջին ամիսներին այնտեղ տիրող մտայնությանց եւ տեսակետների մասին:

Մինչ այդ, ընդունիր Վեհափառ Տայրապետի ողջույններն ու օրհնությունները: Սրտագին բարեմաղթություններ եւ հարգանքներ Տեր եւ Տիկին Պ. Ալեքսյաններին, տիկին Գյուզելյանին եւ Քեզ, համբույրներ Ձեր սրտի հատոր երկու նորաբողբոջ ծաղիկներին:

Վերջացնում եմ նամակս, սպասելով շուտափույթ պատասխանի: Սիրով եւ եղբայրորեն՝

«Էջմիածին» ամսագրի խմբագիր՝
Տատիսյան Արթուր



Միրելի եւ Կիպելիմ Ասասուր,

Գիտեմ որ քո ծանօթ նուիրումով եւ եռանդով, քո օգտակար ծառայութիւնը կը բերես Լոնտոնի եկեղեցական համայնքին ու մշակութային կեանքին:

Ահա եկեղեցիին ու ազգին նուիրած փառաւոր կեանք մը: Միաժամանակ ընտանիքի հոգատար հայր մը, եւ պատուական ամուսին մը: Ես ալ կը շարունակեմ իմ համեստ աշխատանքը: Ուրախ եմ որ պնդագլուխ չեմ ու ոչ ալ պնդերես: Երեսս շատ փափուկ է եւ ամեն անգամ սափրուելուս այնքան արիւն կը կորսնցնեմ, որ օր օրի վախենամ արիւնաքամ ըլլամ ու ես ալ «սեգ կատարին նայեմ ու անցնեմ»:

Այս պատճառով կը խնդրեմ, որ յանուն մեր «հնդկահայ» բարեկամութեան եւ անմոռանալի յիշատակներուն երեսի արիւնը կանգնեցնելու համար ինծի ուղարկես շիպի ցողիկներ, ցուցամատի երկարութեամբ, որոնք stick կը կոչուին, եւ կարելի է գտնել ամեն դեղատունի մէջ ու կամ կոզմետիկայի խանութում: Ծատ աժան է, քու վրադ դրամական ծանրութիւն չըլլար: Եթէ այստեղ բարեկամներ ունիս, անոնց կը վճարեմ փոխարժէքը մեր ռուբլիներով:

Լաւ կ'ըլլայ որ շիպի հետ ուղարկես նաեւ schick շեղեր, ոչ թէ ամբողջականը, այլ կիսուած շեղբեր, որոնք շատ սուր են եւ արագ կը սափրեն: Ունիմ նաեւ նորելիօ կոչուած էլեկտրական ածելի, որով չեմ կ'ըրնար ածիլուիլ, որովհետեւ փափուկ եւ նուրբ մորթ մը ունիմ, որը շուտով կը բորբոքի եւ երեսի վրա սափրուելէն յետոյ դուրս կուգան ոսպի չափքշտիկներ, որոնք ալ անտանելի քոր կը յառաջացնեն:

Այս երկու փոքր ու անարժէք իրերը եթէ ինծի կ'ուղարկես, դուն ալ անպատճառ կը դառնաս ոչ միայն հայ ժողովրդի տաղանդաւոր, իսկական զաւակներէն մէկը, այլ նաեւ ազգային ճշմարիտ բարերար մը, որուն անունը կը գրուի մեր ժողովուրդի պատմութեան մէջ ոսկի տառերով: Գալիք հայ սերունդներն իրենց գլուխը յարգանքով կը խոնարհին քո պայծառ յիշատակին առաջ...

Ահա փոքրիկ զոհողութիւնների մեծ ու փառաւոր վարձատրութիւնը: Երանի քեզ, եթէ շեղան ու ածելին դրկես:

Առաքեալը կ'ըսէ. «Յոյս ոչ երբեք ամաչեցուցէ»: Վստահ եմ որ այսքան գրաբար կը հասկնաս: Անթիլիասի դպրեվանքը սորուած



ես: Ես ալ մեծ յոյս ունիմ, որ իմ փոքրիկ խնդրանքս կ'արժանանայ քո ուշադրութեան, որով կը մնամ միշտ քո բարեկամը, ու դուն կ'ըլլաս իմ բարերարը: Աւետարանը կ'ըսէ ու բաժակով մը պաղ ջուր տուողը իր վարձքը պիտի չկորսնցնէ, ո՛ր մնաց շիպ եւ ածելի տուողը:

Մատչելով քո մաքրամաքուր ճակատիդ ի համբոյր եւ ամեն օր սափրուած ու օծանելիքով սփռուած քո փափո՛ւկ ու նո՛րք այտերդ, մնամ խոնարհաբար եւ երախտագէտ զգացումներով

Տասխոնեան Արթուր

🍀 **Սիրելի եւ Կիպելիմ Ասատու,**

Տայր Ներսէսը եւ ես մտածած ենք հանդիպում մը կազմակերպել սեղանի մը շուրջ, երկուշաբթի կամ երեքշաբթի երեկոյան ժամը 6-8 կամ 7-9, ըստ ձեր յարմարութեան, Տոգեւոր ճեմարանի դասախօսներու եւ սփիւոքահայ կարգ մը մտաւորականներու հետ:

Կը խնդրենք, որ դուք մեր անունէն տեսնէք եւ ժամադրութիւնը ապահովէք հետեւեալ մտաւորականներուն.

1. Պ. Գերսամ Ահարոնեան,
2. Պ. Ժիրայր Նայիրի

3. Ասատուր Կիզելեան
4. Արտաւազդ Պերպերեան
5. Մայր ու աղջիկ Ղազարեաններ:

Մեր կողմէն ներկայ պիտի ըլլան Տայկագուն արքեպ., Տայր Ներսէս, Ա. Տատիտեան, նախկին ռամկավար ընկերներ ու մտաւորականներ, Պարգէն Շահբազ, Գրիգոր Կիլեան, Սամուէլ Անթոնեան եւ այլք:

Ասատուր, սիրելիս, աշխատէ քու մեծ տաղանդովդ ապահովել բոլորի ներկայութիւնը եւ ինծի զանգահարել մինչեւ շաբաթ ժամը 10-ը երեկոյան 52.86.68 համարով կամ Տայր Ներսէսին 9.10.09 համարով

Միրով համբոյժ՝ Տատիտեան Արթուն



/ 18 դեկտեմբերի 1964թ. /

Միրելի Արթուն,

Ընդարձակ նամակի մը գրութիւնը յետաձգելով յունուարին, այսու կ'ուզեմ ուշադրութիւնդ հրաւիրել յանուն ԱՐԵԳԱԿ-ի Վեհափառ Տայրապետին դրկած նամակիս վրայ:

Տարցը հետեւեալն է: Քենթրալիի Արքեպիսկոպոսը Նոր Տարուան առթիւ ԱՐԵԳԱԿ-ին յղած է պատգամ մը, որուն պատճենը կը գտնես ներփակ: Մեր ցանկութիւնն է որ այդ պատգամը արտատպութի հայկական բոլոր թերթերուն մէջ եւ օգտագործուի ի շահ Տայ դատին: Փափաքելի է նաեւ որ Վեհափառ Տայրապետը, մեր բարձրաստիճան եկեղեցականութիւնն ու առանձին անհատներ նամակներով եւ նախընտրաբար ԱՐԵԳԱԿ-ի միջոցաւ անդրադառնան այդ պատգամին եւ գնահատանքի իրենց խօսքն ըսեն անկլիքան եկեղեցւոյ պետին հայ ժողովուրդի եւ հայ եկեղեցւոյ հանդէպ ցուցաբերած իր անկեղծ զգացումներուն եւ բարեկամական կեցուածքին համար:

Միրելի Արթուն, շուրջ վեց ամսուան թափառումէն յետոյ, երկու շաբաթ առաջ հասայ Լոնտոն եւ ընդառաջելով պրն Տայկ Գալուստեանի առաջարկին, ստանձնեցի ԱՐԵԳԱԿ-ի խմբագրապետութիւնը: Թերթի մը հրատարակութիւնը ներկայիս Անգլիոյ մէջ, աւելի քան երբեք անհրաժեշտութիւն մըն է: Արտասահմանի հայ իրականութեան մէջ

ԱՐԵՔԱԿ-ը ունի խաղալիք կարեւոր դեր մը: Բայց ամէն բանէ առաջ անհրաժեշտ է բարձրացնել թերթին որակը, որպէսզի անոր խօսքն ունենայ կշիռ: Այս յառաջադրութիւնն իրագործելու համար պէտք է թերթին շուրջ համալսմբել հայրենիքի եւ սփիւոքի մեր լաւագոյն գրողները: Այս կապակցութեամբ պէտք ունիմ նաեւ քու օժանդակութեանդ. կ'ուզեմ որ պարբերաբար աշխատակցիս թերթին եւ Տայաստանի մեր գրողներէն գրական-գեղարուեստական աշխատանքներ ապահովես ԱՐԵՔԱԿ-ին համար: Վստահ եմ որ պիտի չմերժես կարեւոր խնդրանքներս:


ԱՐԵՔԱԿ-ը հայ ժողովուրդի հաւաքական շահերուն նուիրուած թերթ մը պիտի ըլլայ: Ան պիտի չունենայ հատուածական շահեր յետապնդող նեղ ծիր մը, այլ պիտի ձգտի միութեան ու միասնականութեան կորիզ հանդիսանալ:

Ալեքսեանները, Վիվիէնն ու Կարինէն կը յղեն քեզի եւ ընտանիքիդ ջերմ ողջոյններ:

*Եղբայրական զգացումներով եւ սիրով,
քոյդ՝ Ասատուր Կիզեղեան*

Հարությունյան Ալեքսանդր

Հարությունյան Ալեքսանդր Գրիգորի (23.09.1920 Երևան, –
28.03.2012, Երևան, Հայաստան):
Խորհրդային եւ հայ կոմպոզիտոր, դաշնակահար,
Երեւանի պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր (1977),
աշխարհահռչակ հատկապես իր շեփորի կոնցերտով:



/ 12 օգոստոսի 1989թ., Լոնդոն /

Սիրելիներ Վիվիեն եւ Ասասուր,

Թող 1990 թիվը եւ մյուս հետագա գալիք տարիները բերեն Հայաստանին վերածնունդ, բուժելով մեր ահավոր վերքերը, պահպանելով մեր մատաղ սերունդը ապագայի համար:

*Ձեր անկեղծ բարեկամ
Հարությունյան Ալեքսանդր*



Շատ սիրելիներ Վիվիենին եւ
Ասատուրին Ալ. Հարությունյանից:
22.10.1989թ.:



Իմ շատ սիրելի Ասասուր,

Մեծ դժվարությամբ, վերջապես, գտա քո ուզած գիրքը, որ հիմա անկարելի է այստեղ գտնել եւ շատ գոհ եմ, որ կարողացա բավարարել քո խնդրանքը:

Մեր երկիր՝ Տայաստանի վիճակը քեզ երեւի հայտնի է, միայն մի բան կավելացնեմ, որ մենք հայերս ճկուն չենք եւ չունենք ոչ մի կաթիլ ճարպկություն եւ այստեղից բխող մեծ քաղաքականություն... այստեղ սունկերի նման առաջանում են տարբեր տեսակի կուսակցություններ, անհասկանալի «քաղաքական» միավորումներ եւ այլն... Դու, որպես շատ հմուտ մարդ, պարզ հասկանում ես, թե ինչով կարող են վերջանալ մեր 3 միլիոնանոց ժողովրդի համար այս անմիտ խաղերը...:

Վրաստանը ինձ սկսել է դուր չգալ, չեմ իմանում, թե ինչքան է սա համապատասխանում իրականությանը, ինձ ասացին, որ վրացիները թողարկել են նոր քարտեզ, որի մեջ մտել են Կիրովականը, Ալավերդին եւ Ստեփանավանը իրենց բոլոր գյուղերով, որպես Վրաստանի (Տին) տարածք: Կարող ես պատկերացնել, թե ինչով սա կարող է ավարտվել: Ինձ թվում է, որ կա տենդենց ադրբեջանցիների կողմից մտերմանալ վրացիների հետ, որովհետեւ այս երկու հանրապետությունները հստակորեն որոշել են Լիտվայի օրինակով անջատվել Ռուսաստանից, այսպիսով հայերը լրիվ կմնան խաղից դուրս եւ մեկուսացված, լավ բաներ չեմ սպասում:

Տունվարյան 14, 15, 16, 17, 18-ի Բաքվի հայերի ջարդերը կառավարության առաջին դեմքը բոլորովին չկանխեց, ինչպես եւ Սումգայիթում, ու Կիրովաբադում: Այս բլոկադայի ժամանակ Ադրբեջանի կողմից մեզ իրենց երկաթգծով օգնում է (դեռ առայժմ) Վրաստանը, իսկ ինչ կլինի Տայաստանի վիճակը, եթե Վրաստանն էլ փակի իր ճանապարհները, դժվար է պատկերացնել...:

Խնդրում եմ սրտակից բարեւներ հաղորդի իմ եւ Իրայի կողմից Վիվիենին եւ քո հիանալի դուստրերին:

*Անկեղծ քո քարեկամ՝
Տարությունյան Ալեքսանդր*

❖ **Մեր սիրելիներ Վիվիեն և Ասասուր,**

Ընդունեցեք մեր բարի մաղթանքները նոր 1991 տարուա կապակցությամբ, թող այն լինի բարի, եւ ձեր ամբողջ ընտանիքի ու հայ ժողովրդի համար: Ձեզ ցանկանում ենք քաջառողջություն եւ երջանկություն:

Ասատուր ջան, ես մինչեւ հիմա չեմ մոռանում մեր փարիզյան մայիսյան օրերը եւ անչափ շնորհակալ եմ քո ուշադրությունից, ու որպէս կոմպոզիտոր հպարտ եմ, որ դու ներկա էիր իմ հեղինակային երեկոյին: Այստեղ մեզ մոտ, նոր այսպէս կոչված դեմոկրատական կառավարություն է առաջացել, տեսնենք թե ինչ ընդունակությունների մարդիկ են եւ կարո՞ղ են արդյոք Տայաստանը դարձնել Անկախ պետություն...

Մենք Իրալի հետ Փարիզից գնացինք 12 օրով Շվեյցարիա, հետո Նարավային Ֆրանսիա (8 օր), իսկ հուլիսին Բավարիա, որտեղ մեծ հաջողությամբ կատարվեց ջութակիս կոնցերտը:

*Տամբույրներով՝ ձեր Իրինա եւ Ալեքսանդր
Տարությունյաններ*

Ալեքսանդր Չարությունյանի եւ տիկնոջ հետ:





Սիրելիներ Վիվիեն եւ Ասասուր,

Օգտվում եմ հանգամանքից եւ ձեզ գրում: Ի՞նչ գրեմ մեր մասին, բացի նրանից, որ մեր վիճակը մնում է լարված: Այս նոր, այսպես կոչված Դեմոկրատական (?) կառավարությունից հիմա դեռ շուտ է սպասել ինչ-որ առաջխաղացում, որովհետեւ շատ վատ ժառանգություն ստացան... Ինչ վերաբերում է Անկախ Տայաստանի հայտարարված status-ին, ես թերահավատ եմ այս բաներին, որովհետեւ ինձ ոչ ոք չի կարողանում տեղացի մեր հայերից պատասխանել, թե ումի՞ց ենք մնում անկախ ռուսներից, որոնց հետ դեռ մինչեւ այսօր կապված ենք եւ կախում ունենք, թե էկոնոմիկական եւ շատ ուրիշ պարագաներով: Գուցե ես սխալվում եմ, բայց ներքուստ զգում եմ, որ այս **քաղաքական խաղերը** Տայաստանին լավ բաների չի բերի, տա Աստված, որ ես սխալվեմ: Ինչպես են ձեր հիանալի աղջիկները: Ասատուր ջան, մինչեւ հիմա հիշում եմ քո Փարիզ գալը, **քո վերաբերմունքը դեպի ինձ**, շատ բարձր եմ գնահատում քեզ որպես հայ եւ քաղաքացի:

Իրիման ձեզ բարեւում է: Ընդունեցեք իմ անկեղծ ցանկությունները, ձեզ բարի առողջություն:

*Ձեզ շատ սիրում եմ՝
Ալեքսանդր Տարությունյան*

Հարությունյան Վարապետ

Հարությունյան Վարապետ Մարտիրոսի:
(1909թ. նոյեմբերի 29, Վան, Օսմանյան կայսրություն - 2008թ.
մարտի 20, Երևան):

Ծագումով վանեցի՝ ճարտարապետ, պրոֆեսոր, ՀՀ
ԳԱԱ ակադեմիկոս, մանկավարժ: ճարտարապետների
միջազգային ակադեմիայի պատվավոր անդամ, ՀԽՍՀ
արվեստի վաստակավոր գործիչ:



/ 27 դեկտեմբերի 1964թ., Երևան /

Հարգելի բարեկամ Ա. Գյուլելյան,

Ծնորհավորում եմ Ձեր նոր տարին, մաղթում բախտավորություն եւ
հաջողություն Ձեր մանկավարժական ու հասարակական գործունեու-
թյան մարզի մեջ:

Հուսով եմ, ստացել եք Ձեր հասցեով ուղարկած գիրքս՝ «Անի
քաղաքը»:

Բարեկենդանով՝ ճարտ. Հարությունյան Վարապետ



/ 10 հունիսի 1993թ., Երևան /

Հարգարժան բարեկամ Ասատուր Գյուլելյան,

Ինձ համար անակնկալ էր Ձեզնից նվեր ստանալ ածիլվելու մեքե-
նան, որի համար հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը: Երեւի
դրա մասին ասել է երգիչ Վարդանը, որին խնդրել էի իմ ունեցած
«Ronson»-ի համար մի մաս գնել, բայց իր ճամպրուկը կորցնելու պատ-
ճառով չէր կարող խնդրանքս կատարել:

Հարցում էիք արել, թե ինչի կարիք ունեմ: Չեմ կարող ինձ թույլ տալ
այդ հարցումիդ պատասխանել, քանզի համեմատած Հայաստանի
այժմ տառապյալ վիճակի մեջ գտնվող շատ շատերի, կարելի է բար-
վոք համարել:

Մի դաժան (առանց ջեռուցման, գազի ու լույսի, նաեւ սննդապա-
կաս) ձմեռ անցկացնելուց հետո, փառք Աստծո, կենդանի մնացինք:

Այժմ կարճատե վայելում ենք Երեւանի տաք ամիսները, սակայն սրտներս վախով լի է մի նոր ձմռան սպասելով, որովհետեւ որեւիցս բարեկամում չենք սպասում, ուստի պիտի աշխատենք, որքան հնարավոր է պատրաստ դիմավորել, ամբարենք վառելափայտ, ուտեստեղեն...

Այս անկախությունը մեր ժողովրդին առայժմ մղեց դեպի միջնադար, պիտի սպասենք լավ օրերի:

Շարունակում եմ աշխատել առաջացած տարիքում, որովհետեւ մեր թոշակով ապրել հնարավոր չէ: Ինձ համար մեծ բախտավորություն եղավ, որ կարողացա վերջապէս հրատարակել շատ տարիների ջանքերիս պտուղը՝ մեծածավալ «Տայկական ճարտարապետության պատմություն» գիրքս: Դա հնարավոր եղավ շնորհիվ լոնդոնաբնակ բարերարներ Գեորգ եւ Տովհաննես Քյուրքեյանների նվիրատվության, որոնց անսահման երախտապարտ եմ մինչեւ կյանքիս վերջը:

Շատ կուզենայի այդ գրքից մեկ օրինակ Ձեզ նվիրել, եւ ինչու չէ, եթե հնարավոր լինի նաեւ վաճառքի ուղարկել ձեր կողմերը: Բայց կասկածում եմ, որ պահանջարկ լինի, որովհետեւ հայերեն է: Եթե Լոնդոնից որեւիցե մեկը Երեւան գալու լինի, խնդրում եմ հանձնարարեք, որ նեղություն քաշի հետը տանել Ձեզ նվիրելիք գիրքը:

Ավարտելով նամակս, կրկին անգամ խորին շնորհակալությունս եմ հայտնում իմ նկատմամբ ունեցած ուշադրության եւ կարեկցանքի համար:

Ընդունեցեք ջերմագին բարեւներս՝

Պրոֆ. Տարությունյան Վարազդատ

Ղափլանյան Հրայշա

14.11.1923, Գարգառ, Լոռիի մարզ, Հայաստան, - 14.08.1988,
Երևան:

Ամվանի ռեժիսոր-բեմադրիչ, դերասան, Երևանի Հրայշա Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնի հիմնադիր (այժմ կրում է նրա անունը): ՀԽՍՀ (1966) և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1973): ՀԽՍՀ պետական մրցանակի կրկնակի դափնեկիր (1976, «Ռիչարդ Երրորդ» եւ «Սեր եւ ծիծաղ» դրամաների բեմադրությունների համար, 1979, «Խաչմերուկ» ներկայացման համար): ԽՍՀՄ գրողների միության անդամ: ԽՄԿԿ անդամ 1947 թվականից:



Լոնդոնի հայ տան ատենապետ պրն Հայկ Գալստյանին եւ Ասատուր Գյուզելյանին, 1966թ.

🔗 Հարգելի բարեկամներ, սիրելի հայրենակիցներ,

1965 թվականին մեր երկրի շեքսպիրագետների մի խմբի հետ կարճ ժամանակ Անգլիայում էր գտնվում պրոֆ. Ռուբեն Չարյանը: Լոնդոնի հայ տանը նա կարդացել է «Շեքսպիրը հայ իրականության մեջ» վերնագրով դասախոսությունը, որը վերջերս Երևանում լույս է տեսել առանձին գրքով «Շեքսպիրը եւ հայերը» անվամբ:

Մի միտք եմ կամենում տալ. լավ չէր լինի՞, արդյոք, եւ միաժամանակ՝ ճիշտ, եթե այդ փոքրիկ գրքուկը թարգմանվեր անգլերենի, որպեսզի անգլիացիք էլ պատկերացում կազմեն, թե ինչպիսին է եղել իրենց հայրենակցի մուտքը եւ տեղը հայ գրականության մեջ ու թատրոնում: Դա լայն ծախսերի հետ կապված մի գործ չէ, բայց այդպիսի մի ձեռնարկի բարոյական կարեւորությունը մեծ է: Շեքսպիրի հայրենակիցները կիմանան, որ իրենց հանճարը Հայաստանում մի նոր հայրենիք է գտել դեռեւս 17-րդ դարից եւ որպես հեղինակ 19-րդ դարի կեսերից անուղղակի արտահայտիչն է եղել մի ճշգրիտ ժողովրդի աշխատարարձ ձգտումների: Շեքսպիրը հայի համար նույնքան հարագատ է եղել, որքան սրբացած Նարեկացին ու Աբովյանը:

Այդ ամենի մասին Չարյանի գրքում պատմված է պարզ ու մատչելի լեզվով, անհավանական ռեռով: Եվ նրանում եղած փաստերը ու դրանցից կատարված եզրակացությունները անկարելի է, որ անգլիացիներին չհետաքրքրեն ու չզբաղեցնեն:

Այս նամակից առաջ փոստին հանձնեցի երկու օրինակ «Շեքսպիրը



Հրաչյա Ղափլանյանը եւ Ասատուր Գյուզեւյանը լոնդոնահայերի հետ «Հայ տուն»ում, 1966թ.:

եւ հայերը» գրքույկից, մեկը հեղինակի մակագրությամբ անձամբ Ձեզ համար, մյուսը՝ թարգմանչի, որի պարտականությունը Չարյանի կարծիքով իր վրա կարող է վերցրել Մկրտիչ {Միշա} Կյուսյանը, եթե չզլանա աջակից լինել ու օգտաշատ այդ գործին: Չարյանի ասելով լավ կարող է անել Լոնդոնում գտնվող բեյրութահայ ուսանող, շնորհալի երիտասարդ հովհաննես Փիլիկյանը եւս:

Տարգանքով եւ սիրով՝ Ղափլանյան հրաչյա

❖ **Հարգելի պարոն Ասատուր,**

Ներիր նամակս ուշացնելու համար: Բայց այդ չի նշանակում, որ ես վերադառնալով մոռացության տվեցի Ձեր հոգատարությունը, ջերմ ընդունելությունը, որ ցույց տվեցիք Լոնդոնում:

Առիթից օգտվելով խորին շնորհակալություն եմ հայտնում իմ եւ տիկնոջս կողմից հիանալի ընդունելության առթիվ:

Խնդրում եմ, եթե դժվար չէ, իմ ողջույնները եւ շնորհակալությունը հաղորդեք Տայ տան մեր մյուս բարեկամներին:

Տատկապես բարեւեք Ձեր հմայիչ տիկնոջը, որի անուշ ձայնը մեզ հետ բերեցինք Տայրենիք:

Իմ մի նամակում արդեն հաղորդել եմ պարոն Գալստյանին, որ Տայ տան գրադարանին ուղարկում ենք որոշ գրականություն եւ հետագայում էլ պատրաստ ենք օգնելու Ձեզ: Ինչպես խոստացել էի ուղարկում եմ մեր անվանի արվեստագետների նկարները:

Խնդրում եմ, անձամբ բարեւեք պարոն Գալստյանին եւ նորից հաղորդեք իմ բարեկամական շնորհակալությունը նրա ջերմ վերաբերմունքի առթիվ:

Տարգելի պարոն Ասատուր, նորից եւ նորից շնորհակալ եմ:

Տարգակքով եւ սիրով՝

Ղափլանյան Տրսայա, Երեւան, 1966թ.

Յրաջյա Ղափլանյանի եւ տիկնոջ հետ Լոնդոնում:



Մարգարյան Մարո

Մարգարյան Մարո Եղիշեի:
22.12.1915, Շուլավեր, Մառնեուլի շրջան, Վրաստան –
29.01.1999, Երեւան, թաղված է Բյուրականում:
Չայ բանաստեղծուհի, թարգմանչուհի, ԽՍՀՄ գրողների
միության անդամ 1937 թվականից: Աշխատել է
Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում:



/ 25 դեկտեմբերի 1969թ., Երեւան /

Սիրելի Ասասուր,

Մեր ամբողջ ընտանիքը սրտանց շնորհավորում է քո եւ քո հարազատների Նոր տարին:

Բոլորս հիշում ենք քեզ ամենապայծառ զգացումով, ցանկանում ենք քեզ անծայր, անսահման երջանկություն:

Մարո, Անահիտ, Աշոտ



Հարգելի Ասասուր,

Տարիներ առաջ ծանոթացանք Երեւանում եւ կարծես եղանք բարեկամներ: Մեր տան մեջ, սիրելի Նշանյանների միջոցով ծանոթացանք նաեւ Ձեր աներոջ հետ, որը շատ լավ տպավորություն գործեց մեզ վրա: Թեեւ քիչ առիթներ եղան մոտիկից ճանաչելու, սակայն մեր անգին Մարիի եւ նրա ողջ ընտանիքի կողմից այնքան ջերմորեն ներկայացվեց այդ մարդը, որ մենք ուրախությամբ որոշեցինք, թե դուք ունեք լավ ընտանիք եւ լավ բարեկամներ: Ձեր Անգլիայում հաստատվելը ինձ ուրախացրեց որպես Սփյուռքահայության կոմիտեի Եվրոպական երկրների բաժնի վարիչի: Պիտի խոստովանեն, որ անգլիական գաղութը ինձ շատ զբաղեցնում է որպես նոր կազմակերպվող գաղութներից ամենաօգտակարն ու հարմարը: Իմ կարծիքով ավելի լավ է մեր վերջին սփռվող հարազատները հավաքվեն եվրոպական երկրներում, քան թե գնան Ավստրալիա: Այդ տեսակետից

անչափ լավ եմ համարում Ձեզ նման ձեռներեց մարդու հաստատվելը այդպիսի մի գաղութում:

Կոմիտեի ղեկավարներից եվրոպական երկրներով զբաղվում է նախագահի առաջին տեղակալ Անդրանիկ Մարտիրոսյանը, որը շատ լուրջ մարդ է, խառնվածքով զուսպ, ներքուստ անկեղծ ու ջերմ, հայրենասեր ու գործարար: Նենց նա էլ հայ արտիստների խումբը պիտի բերեր Անգլիա եւ Ֆրանսիա: Երբ Ձեզնից ստացվում էին վերջին հեռագրերը, նա գտնվում էր Մոսկվայում, այդ պատճառով էլ մեր պատասխանները ուշացան եւ եղան ակամա: Ես կարծում եմ պետք է Դուք էլ, մենք էլ հոգ տանենք, որ խումբը գա Անգլիա, քանի որ այսպիսի հանդիպումները եւ ազգային երեկոյթները շատ մեծ ջերմություն ու լայն ընդունելություն են գտնում գաղթօջախներում եւ առհասարակ հանդիպումները օգտակար են ընդհանուր գործի համար քազում տեսակետներից:

Պետք է ասեմ, որ ինձ զարմացնում է Ձեր նամակ չգրելը, կամ հազվադեպ գրելը: Ըստ իս, Ձեզ նման մարդիկ ամենասերտ կերպով պետք է կապվեն կոմիտեի հետ եւ զբաղվեն կապերի հարցերով, որը շատ կարեւոր է մեր կյանքի համար: Ժամանակն է նաեւ, որպեսզի երեւաք հայրենի աշխարհում: Կոմիտեից Ձեզ ուղարկում ենք ամսագրեր, գեղարվեստական գրականություն եւ եթե որեւէ ցանկություն հայտնեք, օգտակար կլինենք սիրով, ինչով հնարավոր է:

Ձերն քաեւներով՝ Մարգարյան Մարո

Ն.Գ. Ձերն քարեւներս հաղորդեք նաեւ Ագապի Նասիբյանին, որի հետ ունեցած շատ դուրեկան կապը նույնպէս կորցրել եմ:

Սիրելի Ասատուր,

Սրտանց շնորհավորում ենք քո եւ քո թանկագին ընտանիքի Նոր տարին: Ցանկանում ենք քեզ նորանոր հաջողություններ եւ բոլորիդ պայծառ կյանք:

Քո Բայանդուր-Մարգարյան ընտանիք



Այ Ասասուր ջան,

Եղա՞վ, լավ, սա արդարություն է ընկերություն, բարեկամություն, աղ ու հաց, այդքան շուտ կմոռանա՞ն... Ասենք բարեկամությունը ուրացար, բայց չէ որ ես կոմիտեի եվրոպական երկրների բաժնի վարիչն եմ եւ շատ մտահոգված եմ անգլիական գաղթօջախի հետ մեր թույլ կապերի համար: Մի քանի անգամ նամակ եմ գրել, որ ստույգ, հստակ, կոնկրետ գրես՝ ով է Տայ տան տնօրենը, ովքեր են հիմնական գործիչները, ինչ վիճակում են դպրոցները կամ մեկօրյա դասընթացները:

Փառք Աստծո, որ «Լոնդոն» թերթը մեջտեղ բերիք: Մեր գրադարանում նայեցի մի քանի համար: Քեզանից նամակ կար, գրեցինք, որ առայժմ 80 օրինակ ուղարկեք կարելու հաստատությունների եւ գրադարանների համար, հետո կարելի է կրկին ավելացնել: Ճատ լավ կլինի, որ ինքդ այստեղ մի անգամ երեւաս, հին լավ տպավորությունդ վերավառես, նոր թարմ մտքեր, խոսքեր, խորհուրդներ, օգնության լավ իմաստով, հանդիպումներ ունենաս մտավորականների, գրողներից լավագույնների հետ դեմ դեմի, կոմիտեի ղեկավարների հետ, գործդ ավելի հեշտ ու լայն դարձնելու համար:

Ես լավ ծանոթ եմ նաեւ Ներսես սրբազանի հետ, շատ ուրախացա, որ նա ձեր կողմերը եկավ, բարձր մակարդակով շատ հարգելի, շատ օգտակար մարդ է, բայց նա էլ եկավ եւ մեզ նամակ չի գրում:

Իմացա, որ նա դպրոց է բացել եկեղեցուն կից: Դասագրքեր ուղարկեցինք, հավանաբար ստացել է:

Այժմ անգլիահայ գաղութից պետք է մեկ ուսուցիչ գա, բոլորիդ նամակներ ենք գրել, որ ընտրեք ուղարկեք: Տաճախ Ձեր տեղը կորչում է, պետք է դեսպանության միջոցով մեկի գործերը կարգավորել այնպես, որ օգոստոսի 15-ին այստեղ լինի եւ մասնակցի դասընթացներին:

Կարծեմ այս գործի առաջին ավանգարդներից մեկը դու էիր: Եվ հետո Տարություն Այվազյանը, որը ավելի ուշադիր է եւ երբեմն գրում է ջերմ բարեւներս իրեն, Ներսես սրբազանին եւ պարոն Քյուրքչյանին:

Անցյալ տարի այստեղ էին Նուրհան Կուրաիկյանը, Արման Քեշիշյանը, Տասմիկ Օհանյանը եւ մի քանի այլ հայրենակիցներ շատ լավ տպավորվեցի:

Բոլորին մարոյական ջերմ բարեւ:



Մարո Մարգարյանը որդուն Աշոտի հետ, 1968թ .:

Նարություն Այվազյանից նամակներ ստացանք. եւ կոմիտեն եւ ես անձամբ արդեն վաղեմի ընկերոջ նման, գրչակից քրոջ նման խնդրում եմ կապվիր իր հետ, խորհրդակցիր եւ գրիր ինձ մի քանի տող:

Իմացիր, որ շատ թանկ գնահատվող գրքեր եմ գրել եւ շատ գործ եմ անում հանուն մեր զավակների: Թերթիդ համար կարող էի տալ շատ լավ խորհուրդներ եւ նյութեր:

Միշտ քույրդ՝ Մարո Մարգարյան



Ասատուր Գյուզելյանին

Թանկագին բարեկամ,

Դեռևս անցյալ տարի Լոնդոնի Նայ տնից կոմիտեն ստացավ պաշտոնական գրություն, որով խնդրում էին արտիստների մի խումբ, հայ արվեստին նվիրված երեկույթներ տալու համար: Այս տարի կրկնվեց նույն հրավերը, բայց որոշակի չէր ասված, թե երբ են հրավիրում եւ ինչպիսի խումբ:

Այժմ ցանկանում ենք հայտնել Ձեզ, որ արտիստների մի փոքր խումբ հրավիրված է Փարիզ հունիսի առաջին օրերին Նայ բարեգործական ընդհանուր միության համագումարի առթիվ: Մեզ հարմար է որ այդ խումբը մայիսի երկրորդ կեսին լինի Լոնդոնում, այնտեղից մեկնի Փարիզ: Սա կլինի հարցի լավագույն լուծումը: Եվ քանի որ ժամանակ շատ քիչ է մնացել, կխնդրեինք մտածել այդ ուղղությամբ եւ հնարավորին չափ արագ դիմեք գործնական քայլերի: Նկատի առեք նաեւ, որ մեր արտիստների համար այս տարի շատ ծանրաբեռնված տարի է եւ լավ կլինի չկորցնել հարմար առիթը:

Նարգելի Ասատուր, Նայ կոմպոզիտորների միության ներկայացուցիչներին Լոնդոնում Նայկ Գալստյանը տվել է ինչ-որ խոստում, եթե կարելի է հիշեցրեք նրան այդ մասին եւ հաղորդեք մեր ջերմ բարեկները:

Նարգանքներով

Կոմիտեի բաժնի վարիչ՝ Մարգարյան Մարո

Մարտիրոսյան Անդրանիկ

Մարտիրոսյան Անդրանիկ Սարգիսի:
25.07.1924, Բաքու, ԱԽՍՅ, - 11.10.1989, Երեւան:
Յայ դիվանագետ, երկար տարիներ ԱՕԿՍ-ի, հետագայում Սփյուռքահայության հետ
մշակութային կապի կոմիտեի նախագահի տեղակալ:



/ N 649, 21 հուլիսի 1961թ. /

Ննդկաստան, Կալկաթա
Ասատուր Գյուզելյանին

Հարգելի պարոն Գյուզելյան,

Ստացանք Ձեր 1961թ. հուլիսի 20 թվակիր նամակը: Ձեր նամակի հետ ուղարկած հոդվածը պրոֆեսոր-դոկտոր Զ. Չաթրըջիի վերաբերյալ անպայման կաշխատենք օգտագործել այնպես, որպեսզի մեր հասարակայնությունը հնարավորություն ունենա ծանոթանալու այդ մեծանուն գիտնականի այդքան բեղմնավոր գործունեության հետ: Ինչ վերաբերում է «Սիրտը երգում է» կինոնկարին եւ Ռ. Թագորի երկերի հայերեն հրատարակությանը, ապա ցավոք սրտի այն ուղարկել Ձեզ առայժմ դժվարանում ենք, քանի որ մեր ձեռքի տակ դրանք չկան: Նհարավորության դեպքում մենք այն կուղարկենք:

Նարգանքներով՝

Կոմիտեի նախագահի տեղակալ՝
Մարտիրոսյան Ա.



/ N 579, հուլիս 1962թ. /

Պրն Գյուզելյանին, Կալկաթա

Հարգելի բարեկամ,

Ստացվել է ապրիլի 23-ի Ձեր նամակը՝ ներփակ հայկական գրերի գյուտին նվիրված դասախոսությամբ:

Ձեր հարցումներին գոհացում տալու նպատակով մեր Ընկերության աշխատակիցը եղավ Պետական Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանի մոտ, որից տեղեկացավ, թե Մելիք Բեգլարի Ննդկաստանում հրատարակած «ԱՐԱ» ամսաթերթը իրենք չունեն: Ընկեր Խաչիկյանը խնդրեց հաղորդել, թե մեծապես երախտապարտ կլինեն վերոհիշյալ

ամսաթերթը Ձեզնից ստանալու: Մատենադարանին հետաքրքրում է նաև Բիրմայում 1939 թվականին անգլերեն լեզվով հրատարակված Տայկական «Տառաջ» պարբերաթերթը, որը նույնպես չունեն: Արդյոք հնարավոր չէ՞ որեւէ բան անել դրա համարները գտնելու ուղղությամբ: Չունեն նաև «Նոր Ազդարարի» լրիվ հավաքածուն:

Ձեր հիշատակած Մեսրոպ Սեթի հնդկահայ գաղութին նվիրված աշխատությունը իրենք ունեն:

Տարգելի բարեկամ, ստացել ենք Ձեր ուղարկած Չաքըրջիի հայկական դյուցազնավեպին նվիրված գրքույկը, որի, ինչպես եւ հայտնած հասցեների համար անչափ շնորհակալ ենք: Մոտ օրերս Ձեր անունով կուղարկենք Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակի առթիվ հրատարակված գրքերից, ինչպես եւ Մաշտոցյան կրծքանշաններ:

*Լավագույն մաղթանքներով նախազահի տեղակալ՝
Ա. Մարտիրոսյան*



/ 11 ապրիլի 1966թ., Լոնդոն /

Տայ տան ղեկավարությանը

Տարգելի բարեկամներ,

Լոնդոն է ժամանում Տայկական թատերական ընկերության վարչության նախագահ, Սունդուկյանի անվան թատրոնի ռեժիսոր, հանրապետության ժողովրդական դերասան Տրաչյա Ղափլանյանը իր տիկնոջ՝ վաստակավոր դերասանուհի Էմմա Վարդանյանի հետ: Նրանք Լոնդոնում մնալու են 10 օր, որի ընթացքում ցանկանում են ծանոթանալ Լոնդոնի թատերական կյանքին, ինչպես նաև Տայ տան մշակութային գործունեությանը: Խնդրում ենք հնարավորության սահմաններում աջակցություն ցույց տալ Տ. Ղափլանյանին, որպեսզի նա կարողանա ծանոթանալ լոնդոնահայ կյանքին եւ հետագայում օգնած լինել Տայ տան թատերական գործունեությանը:

Լավագույն ցանկություններով

*Կոմիտեի նախազահի տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



/ 14 օգոստոսի 1968թ., Լոնդոն /

Հարգարժան Պրն Ասասուր Գյուլելյան,

Տարգելի բարեկամ, Մոտ ժամանակներս Լոնդոն է ժամանում իմ լավ բարեկամ Վոլոդյա Ադամյանցը:

Խնդրում ենք Ձեզ անել ամեն հնարավորը, որպեսզի նա ավելի հանգամանորեն ծանոթանա լոնդոնահայ կյանքին: Լավագույն ցանկություններով:

*Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



/ 22 հունվար 1969թ., Լոնդոն /

Ա. Գյուլելյանին

Սիրելի Ասասուր,

Շնորհակալությամբ ստացանք նամակդ, անգլիական գաղութի մասին ուղարկածդ նյութերի հետ միասին: Վերջինս հանձնեցինք ում խնդրել էիր, բայց օգտակար եղավ նաև մեզ համար: Գրել էիր, որ թեթև գործողության պիտի ենթարկվես, համոզված ենք, որ ամեն ինչ անցել է բարեհաջող:

Ցանկանում ենք առողջ ու առույգ լինես ի նպաստ նաև մեր ընդհանուր գործին:

Լավ է, որ զբաղվում ես տպագրական մեքենայի հարցով, այդ իսկապես շատ կարեւոր է: Ինչ վերաբերում է Թումանյանի թարգմանությանը, նույնպես ճիշտ ընթացքի մեջ եք: Մեզ ես հայտնի է, որ այդ գործը Ձեզ մոտ կարող է միայն կատարել Գյուտյանը: Քո անմիջական մասնակցությունը, իհարկե, շատ կնպաստի եւ կարագացնի գործը, մանավանդ եթե կարողանաս կապ պահպանել Գրողների միության հետ: Նամոզված եմ, որ ինչի ձեռք մեկնես դուրս կգաս դրական արդյունքով:

Սիրով

*Նախագահի առաջին տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



Ասատուր Գյուզելյանին

Հարգելի հայրենակից,

Շատ ուրախ եմք, որ Ձեզ բնորոշ ջերմությամբ նվիրվել եք նորից գաղութի գործերին եւ հրատարակում եք «Լոնդոն» թերթը: Մենք մեր մամուլի քաժնին հանձնարարել ենք, որ ուղարկեն Ձեզ համար թարմ հետաքրքիր նյութեր:

Միքելի Ասատուր, ինչպես գիտեք, մենք, յուրաքանչյուր տարի, բոլոր գաղթօջախներից հրավիրում ենք հայ ուսուցիչներ, որոնք դասախոսություններ են լսում Երեւանում հայոց լեզվի, հայ գրականության եւ առհասարակ հայ մշակույթի մասին: Ծանոթանում են հայրենի աշխարհի հետ եւ վերադառնում:

Այս տարի ձեր գաղութից պետք է հրավիրվի մեկ ուսուցիչ: Խնդրում ենք խորհրդակցել գաղութի մյուս ղեկավար ընկերների հետ եւ ընտրել հարմար թեկնածու, որը կարողանա գալ Երեւան օգոստոսի 15-ին մեկ ամիս ժամկետով: Եկողը մինչեւ հայաստան գալու ծախսը ինքը պիտի կատարի: Այստեղ մեկ ամիս մնալու եւ վերադարձի ծախսը կվճարի կոմիտեն:

Խնդրում ենք կապ հաստատել Սովետական դեսպանատան հետ եւ դեսպանատան միջոցով ուղարկել ընտրված ուսուցչի համապատասխան փաստաթղթերը:

Հարգանքներով

*Նախագահի առաջին տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



Ասատուր Գյուզելյան

Հարգելի բարեկամ,

Ինչպես տեղեկացանք Ձեր վերջին հեռագրից Լոնդոնի հայկական համայնքի եւ Եկեղեցական խորհրդի որոշմամբ Ջոհրապ Շամլյանը պետք է գա Տայաստան՝ թատերական արվեստի քննազավառում կատարելագործվելու համար:

Շամլյանին կարող ենք հրավիրել որպես ստաժոր կամ ուսանող: Երկու դեպքում էլ այս տարվա համար արդեն ուշ է, սակայն հաջորդ տարվա համար նա կարող է դիմել տեղի Սովետական դեսպանությանը:

Ձերմ ողջուններով եւ լավագույն ցանկություններով

*Նախագահի առաջին տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



Հարգելի Ընկ. Ասատուր Գյուզելյան,

Միտելի Ասատուր,

Երկար ժամանակ է, ինչ քեզանից լուր չունեմ, սակայն կարծում եմ, որ ողջ եւ առողջ ես եւ գործերդ ընթանում են կանոնավոր կերպով:

Տոկտեմբերի 20-ին Լոնդոն է ժամանում երիտասարդական մի խումբ, որի կազմում է գտնվում իմ լավ բարեկամ Լորենտա Ռուզունյանը: Տանոզված եմ, որ անուշադիր չեք թողնի նրան:

Միաժամանակ խնդրում եմ անել ամեն հնարավորը, որպեսզի երիտասարդների խումբն ավելի մոտիկից ծանոթանա լոնդոնահայ կյանքին:

Կանխահայտ շնորհակալությամբ

*Կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝
Մարտիրոսյան Անդրանիկ*



Միրելի Անդրանիկ,

Ճիշդ ամիս մըն է, որ վերադարձած եմ Լոնտոն, բայց սիրտս դեռ հոն է: Երբեմն յուշերու ճամբով կ'երթամ մինչեւ Աշտարակի կիսաճամբուն Մեծարենցի «հիդ»ին պէս անօթիները իրեն կանչող ...նտարան:

...Ու գրգանքիս կանչէի

Ուղեւորներ պարտասուն,

Ու բարելի մը փոխան

Տազար բարիք ես տայի:

Ուրիշ առիթով մը կը գրեմ երկար: Տանիս ներփակ գրութիւնը յանձնել Մարտիրոսեանին (անունը մոռացայ): Տանրագիտարանի համար է գրութիւնը անշուշտ պետք եղած ձեւով շարադրուած չէ. տրուած է պարզապէս իրողութիւնները:

Կը ցաւիմ որ գրութիւնը ատելի կանուխ չկրցայ հասցնել: Յուսամ համալսարանը ստացած է նամակս:

Տպագրական գունաւոր մեքենայի մասին գրած եմ Վահրամ Մավեանին որպէսզի յայտնէ ինծի Կիւլպէնկեան հիմնարկութեան միջոցով մեքենան ապահովելու կարելիութիւններու մասին: Ասիկա գործը յաջողցնելու ամենէն իրատես եւ արագ ձեւն է: Դեռ պատասխան չեմ ստացած:

Երեւանի 2750-ամեակը պիտի նշուի Լոնտոնի մէջ, Ազգային եւ եկեղեցական խորհուրդի նախաձեռնութեամբ դեկտ. 29-ին: Պիտի խօսի փրոֆ. Լէնկ: Ջիս ալ հրաւիրեցին խօսելու, սակայն դժբախտաբար նոյն օրերուն գործողութեան մը պիտի ենթարկուիմ՝ քիթս ատելորդ «մսակոյտ» մը պիտի հանեն...

Տատր մը անգլերէն Թումանեան հրատարակելու հարցով խօսեցայ Տոքթ. Մ. Գիտեանի հետ, որ Թոթովենցը անգլերէն թարգմանեց եւ հրատարակեց: Գիտեան յանձն առաւ 150 էջանոց հատոր մը պատրաստել, պայմանաւ որ կազմակերպութիւն մը նիւթապէս նպաստէ ձեռնարկին: Այս մասին գրած եմ Վահրամին: Գրած եմ նաեւ Ստ. Ալաջաջեանին, մանրամասնօրէն տալով միաժամանակ գիրքին բովանդակութիւնը: Գիտեանը Անգլիոյ մէջ միակն է, որ կրնայ այդ գործը ընել, ուզուած ձեւով: Կը սպասեմ Մավեանի պատասխանին, ուրիշ դռներ ծեծելէ առաջ:

Վ. Ադամեանցը անակնկալօրէն մեկնեցաւ վերադարձէս քանի մը օր ետք: Կ'ենթադրեմ, որ տիկնոջ առողջական վիճակը վատթարացած է: Ամէն պարագայի տակ միասին յիշատակելի օր մը անցուցինք:


«Էրեբունի» ժամացոյցս, զոր ձեր գործողներէն մէկուն տուիր որ փոխէ վերադարձուցած է ինձի.... նոյնութեամբ: Յանձնեցի Էդուարդ Նայկազեանին, որ նորոգել տայ Առետրական ներկայացուցչութեան մէջ:

Ձերմ բարեւներ ընկ Նամազասպեանին, Վահագնին, Սարոյին, Կամոյին, Բեշիշեանին եւ ձեր քարտուղարունիին:

Յարգանքներով՝ Կիզելէան Ասատուր

Միրզոյան Էդվարդ

Միրզոյան Էդվարդ Միրբայելի (12.05.1921 Գորի, Վրաստան – 5.10.2012 Երևան, Հայաստան):
Հայ կոմպոզիտոր, մանկավարժ, ՀՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, մշակութային, հասարակական գործիչ:



/ 22 օգոստոսի 1982թ. /

Միտելի Ասասուր,

Այ մարդ, ո՞ր ես, ջրի պես գալիս ես, ավազի պես մնում: Քեզնից անձամբ լուրեր չունեմ, սակայն միշտ հետաքրքրվում եմ վերջին տեղեկությունների համաձայն գործերդ լավ են գնում: Իսկ քանի որ դու ինձ համար հարազատ մարդ ես, ապա ուրախ եմ, առավել ես, որ տարիներ ի վեր միշտ ապրում ենք այն հույսով, որ խանդավառ ու իսկական հայրենասեր Ասատուրի գործերը (քիզները) լավ պիտի գնա:

Դժվար բան է քիզները, առավել՝ քեզ պես ռոմանտիկ ու իսկապես անշահախնդիր մարդու համար: Լյալան կպատմի ինձանից, կարոտալի ողջույններով ու մաղթանքներով քո՝

Միրզոյան Էդվարդ



Էդվարդ
Միրզոյանի հետ:
Երևան, 2009թ.:

Յափուջյան Սարգիս

Բազմավաստակ հայ մտավորական, գրականագետ, հեղինակ: Երկար տարիներ կրթական նախարարությունում ղեկավարել է սփյուռքահայ դասագրքերի գործը, ինչպես նաև հեղինակ է Գ. Ե. Ե. տարիների դասագրքերի: Որպես գրականագետ Յափուջյանին կարելի է համարել լավագույն Վահան Թեքեյանագետներից մեկը:



/ 10 սեպտեմբերի 1993թ., Երևան /

Միտելի պրն Ա. Գյուլելյան,

Եկավ տիկ Ջարան, Երեւանի մեր ծաղիկը եւ Լոնդոնի ձեր նորահարսը: Կանչեցինք, որ պատմե՛ մե՛ծ Լոնդոնի եւ հայ գաղութի մասին: Եկավ, բայց պատմեց մի հուր-հրաշք հայի՛ մի պրն Գյուլելյանի մասին:

Մտքումս «Գոգալը» դարձրի «Կիւզել» եւ ամեն ինչ իր տեղն ընկավ: Տիշտոյութեանս առաջ բացվեց կենսութիւնս, շենշող, հյումորի օգոնով հարուստ եւ շառաչուն մի հայ աշխարհ, որ Ասատուր Կիւզելեան է կոչվում: Ես միշտ անկեղծորեն նախանձել եմ քո բաց-ազատ բնավորութեանդ, նկուն մտքիդ, երգիծազավեշտական հորինումների անսպասելի կարողութեանդ, որոնք խոսք ու ծիծաղի առողջ-առողջարար մթնոլորտ էին ստեղծում...

Ջարայի հիանալի տպավորությունը քո մասին, անկեղծորեն շոյեցին արեւմտահայի իմ ինքնասիրությունը. «Ահա՛, տեսե՛ք, թե ինչպիսին են մերոնք»:

Ուրախ եմ ձեր ծանոթութեան համար, հայտնեմ, որ Ջարան մեզ շատ մոտիկ էրգրումցի ընտանիքի արժանի շառավիղ է, իսկ Թոնին՝ բանիմաց եւ խոստումնալի երիտասարդ, որ կարող է մի օր օգտակար լինել մեզ: Ուստի, նրանց ձեր շրջապատում պահելը գնահատելի վերաբերմունք է:

Տիմա ինչպես է առողջական վիճակդ: Ի՞նչ կընես, ինչո՞վ կլցնես օրերդ: Կպահե՞ս ազգային-հասարակական հետաքրքրություններդ:

Ես երկար տարիներ կրթական նախարարությունում գլխավորում էի սփյուռքահայ դպրոցների դասագրքերի գործը. Դ տարի եւ Է տարի դասագրքերի հեղինակն եմ: 1991-ին, 77 տարեկանիս, կենսաթոշակի անցա:

Ի՞նչ եմ անում հիմա: Գրում եմ, երբ դաժան ցուրտը, մութը, ամառվա այրող տաքը եւ օձի կծած լեղուցս թույլ տան...

Ձեռքիս տակ ունեմ 3 գործ: Այժմ ուժերս կենտրոնացրել եմ երրորդ՝ «Երկրաշարժի, պատերազմի եւ շրջափակման օղակում» գործի վրա: Կավարտվի պատերազմի եւ շրջափակման ավարտումով: Գրված է մեծ մասը: Մամուլում տպագրված հոդվածների մասին լավ կարծիք կա:

Միբելի Ասատուր, ներփակում եմ այս գործից մի պատկեր՝ «Նացր եւ մենք»: Ինչո՞ւ: Նախ՝ որպեսզի կարդաս եւ իմանաս, թե բարեկամդ եւ ողջ մի ժողովուրդ ինչպե՞ս է ապրում եւ, կարեւորը, ի՞նչ է մտածում, զգում եւ անում... Ապա՝ որպեսզի ես իմանամ, թե դուն հարմար կնկատեի՞ր, որ այս գործից քաղված 50-60 էջանոց մի փունջ ներկայացնեմ «Ուզունյան. գրական մրցանակին»: Արդյոք ամոթով չեմ մնա... Իսկ շահելու դեպքում, երեւի բավական երկար ժամանակով կապահովվեմ հանգիստ, անհոգ աշխատելու ամեն հնարավորությամբ՝ լույսով, ջերմությամբ եւ մասամբ նոր գործ սկսելուն: Ուստի ինձ համար կարեւոր է քո կարծիքը, նույնիսկ այսպիսի ծավալով «արժե ներկայացնել» կամ «չարժե ներկայացնել»: Իսկ քո մտքերի «մնացորդացը», ես ամբողջ գոց կը կարդամ...»:

Ի դեպ, Վ. Թեքեյան՝ մարդու եւ բանաստեղծի նկատմամբ պահպանում եմ երիտասարդ օրերի հիացումս: Իսկ դո՞ւ: Այստեղ 100-ամյակի օրերին գրեցի եւ նախարարությունում ու մի քանի այլ տեղեր կարդացի զեկուցում՝ «Թեքեյանի սիրերգությունը, հայերգությունն ու մարդերգությունը» խորագրով: Անտիպ է:

Առողջություն, հաջողություն եւ երջանկություն անկեղծ մաղթանքով ու համբույրներով քո՝

Յափուջյան Սարգիս

ՆԱԿԱՐՅԱՆ ԻՆՉԱ

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի
աշխատակազմի անդամ, Եվրոպական բաժնի պատասխանատու:



/ 13 փետրվարի 1986թ., Լոնդոն /

Հարգարժան Ասասուր Գյուլեյան, հարգելի բարեկամ,

Ժամանակին ստացանք Ձեր նամակը: Տանելի էր տեղեկանալ, որ
հայրենի տպավորությունները դեռևս վառ են Ձեր հիշողության մեջ:

Ընկ. Տամազասայանին փոխանցեցինք Ձեր ջերմ շնորհավորանք-
ները: Տավանաբար տեղյակ եք, որ նա հանգստի է կոչվել:

Սրտանց շնորհակալություններ ենք հայտնում ազնիվ մաղթանքնե-
րի համար եւ փոխադարձում հաջողության եւ քաջառողջության մեր
լավագույն ցանկությունները:

*Տարզանքներով՝ բաժնի վարիչ՝
Նազարյան Ինչա*

Նապարյան Շուշանիկ

Նապարյան Շուշանիկ Լեւոնի (22.12.1913, Վաղարշապատ, Երեւանի նահանգ, - 6.10.2006, Երեւան, Հայաստան: Հայ բանասեր, գրականագետ: Բանասիրական գիտությունների դոկտոր (1972): ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1984):



/ 25 հունվարի, 1961թ. /

Մեծագո պարոն Գյուլելյան,

Ձեր խնդրանքի համաձայն, ուղարկում ենք Նայաստանի Մատենադարանի այլալեզու ձեռագրերի ֆոնդի թիվ 1 եւ թիվ 43 հնդկերեն ձեռագրերի ֆոտոժապավենները:

Ձեռագրերը խունացած լինելու պատճառով, հակառակ մեր ջանքերի, ժապավենները հաջող չստացվեցին: Խնդրում ենք ներողամիտ լինեք:

Մեծապես շնորհակալ կլինեք, եթե մեզ հաղորդեք այդ ձեռագրերի բովանդակության մասին համառոտ տեղեկություններ:

Նայրենասիրական մաղթանքներով:

Մատենադարանի գիտնական քարտուղար՝

Նապարյան Շուշանիկ



Յարգելի Շուշանիկ Նապարեան,

Շնորհակալութեամբ ստացայ ձեր հնդկերեն ձեռագրերի միկրոֆիլմը եւ յանձնեցի Ասիական ընկերութեան, քարտուղարութեան: Անշուշտ ընկերութիւնը կը գրէ ձեզի այդ մասին:

Պրն Սարասվաթին՝ ընկերութեան քարտուղարը խոստացաւ իսկոյն պատրաստել տալ լուսանկարները եւ յանձնել մասնագետ անձերո՛ւ՝

ուսումնասիրութեան համար: Ձեռագրի բովանդակութեան եւ կարեւորութեան մասին ընկերութիւնը կը տեղեկացնէ ձեզի հետագային:

Տրամադրութեանս տակ ունիմ հնամաշ ցեցակեր ձեռագիր ատետարան մը, զոր պատահաբար գտայ եւ գնեցի: Եթէ կը հետաքրքրէ ձեզ, սիրով կը դրկեմ:

1890-ական թուականներուն Կալկաթայի մէջ, Բեկլար անունով հայ մը հայկական հարցերու շուրջ «ARA» խորագրով թերթ մը հրատարակած է: «ARA»ի մասին անձնապէս չեմ հանդիպած մեր պարբերական մամուլի պատմութեամբ զբաղուող հեղինակներու գործերուն մէջ որեւէ յիշատակութեան, ակնարկութեան: Ի դէպ, պէտք է ըսել, որ շատ շահեկան հրատարակութիւն մըն է: Բարի գտնուեցեք գրել թէ արդեօք Մատենադարանն ունի «ARA»ի հաւաքածուն, եթէ չունի, տրամադրութեանս տակ գտնուող թերթերը անմիջապէս կը դրկեմ ձեզի: Բարեւներով եւ լաւագոյն բարեմաղթութիւններով՝

Կիլիկիական Ասատուր

Շահինյան Անդրանիկ

Շահինյան Անդրանիկ խաչատուրի:
29.11.1906, Վան – 9.09.1967, Երևան):

Խորհրդային պետական եւ կուսակցական աշխատող: Պատմական գիտությունների
թեկնածու (1955 թվական): ՍՄԿԿ անդամ 1926 թվականից:



/ 23 նոյեմբերի 1959թ., Երևան /

Հարգելի պարոն Գյուլելյան,

Ստացա Ձեր ս.թ. հոկտեմբերի 25-ի թվակիր նամակը, որով դուք խնդրել եք Ձեզ մոտ Ննդկաստան ուղարկել Տայաստանի պետական երգի եւ պարի վաստակավոր անսամբլը:

Երեւի Ձեզ հայտնի է, որ անսամբլը այժմ գտնվում է Արարական երկրներում եւ Տայաստան կվերադառնա ոչ շուտ քան դեկտեմբերի վերջերին: Որպեսզի անսամբլը մեկ ամսով Ձեզ մոտ ուղեւորվի, դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ Ննդկական կառավարության համապատասխան օրգանների միջնորդությունը Մոսկվա՝ ՍՍՀՄ Կուլտուրայի նախարարության առաջ, այդ հարցը պաշտոնապես ձեռակերպելու համար: Տարցը պաշտոնապես լուծելուց հետո, սիրով կուղարկենք Ձեզ մոտ երգի-պարի անսամբլը:

*Ձերն քարտնկերով եւ հարգանքներով՝
Շահինյան Անդրանիկ*



/ 25 հոկտեմբերի 1959թ., Երևան /

Մեծայարգ տիար Անդրանիկ Շահինեան
Մշակութային նախարար Սովետական Տայաստանի

Սիրելի պրն Շահինեան,

Տայկազեան Գեղարուեստական Միութիւնը, որ պարագաներու բերումով կը ներկայացներ անկազմակերպ վիճակ մը, այժմ վերակազմակերպուած է արդէն եւ իր շուրջ համախմբած՝ քաղաքիս արուեստասեր երիտասարդութիւնը: Տայկազեան Միութիւնը քաղաքիս միակ հայկական մշակութային կազմակերպութիւնն է, որ կը յառաջադրէ

մեր ժողովուրդի դարաւոր պատմութիւնն ու մշակոյթը, ինչպէս նաեւ ներկայ Տայաստանի արուեստներու եւ գրականութեան բնագաւառներուն մէջ ձեռք բերած նուաճումները ծանօթացնել հայ համայնքին եւ հնդիկ ու օտար շրջանակներուն:

Յիշեալ յառաջադրութեան իրագործման համար, միութեանս նորակազմ Մշակութային յանձնախումբը պատրաստած է տարեկան գործունէութեան ընդհանուր ծրագիր մը, ըստ որում, յաջորդաբար պիտի կազմակերպուին դասախօսական, լրատու, թատերական եւ գեղարուեստական հաւաքոյթներ:

Տամաձայն պատրաստուած ծրագրին, Տայկազեան միութիւնը Սեպտեմբեր 26-ին ունեցաւ իր առաջին գեղարուեստական հաւաքոյթը Տայոց Մարդասիրական հեմարանի հանդիսասարահին մէջ, որուն ներկայ գտնուեցան քացի հայերէ, նաեւ հնդիկ եւ օտար հիւրեր: Ներկաներու մէջ էր Տնդկաստանի Կրթական նախարարութեան մշակութային կապի ներկայացուցիչը, պրն Աթալար Ռահման, որ հետագային տեսակցութիւն մը շնորհելով միութեանս քարտուղար պրն Կարօ Մարթինին, փափաք յայտնած է սերտացնել երկու կազմակերպութիւններու մշակութային-գեղարուեստական կապերը:

Այս հանդիպումի ընթացքին, առաջին հերթին քննարկուած է Տայաստանի Պետական պարի վաստակաւոր անսամբլը Տնդկաստան հրաւիրելու հարցը: Կրթական նախարարութեան ներկայացուցիչը այս կապակցութեամբ ներկայացուցած է հետեւեալ առաջարկները.

- Տրաւիրել Տայաստանի երգի եւ պարի պետական վաստակաւոր անսամբլը մէկ ամսուան համար Տնդկաստան կրթական նախարարութեան ծախսով:
- Տամերգներ կազմակերպել Պոմպէյ, Տենի, Կալկաթա եւ Մատրաս քաղաքներու մէջ:
- Խնդրել Տովետական Տայաստանի մշակութային նախարարութենէն, որ բարի գտնուի համերգներէն գոյացած հասոյթը յատկացնել Վարչապետի բարեսիրական ֆոնտին: Այս մասին, բնական է, կը գրէ ձեզի Տնդկաստանի մշակոյթի նախարարութիւնը:

Մեր սիրելի հայրենիքի Պետական անսամբլին Տնդկաստան, ի մասնաւորի Կալկաթա այցելութիւնը մեր համայնքին համար պատմական մեծ նշանակութիւն ունեցող իրադարձութիւն մը պիտի ըլլայ անկաս-

կած: Պատմութեան ընթացքին հակատագրի անողոր փոթորիկը դեպի հեռաւոր այս ափերն է քշեր մեր ժողովուրդի ամբողջութենէն փշրանքներ, որոնք ոչ միայն զրկուած են եղած հայրենի արեւի կազդորիչ հառազայթներէն, այլ նոյնիսկ առիթ չեն ունեցած ծանօթանալու իրենց դարաւոր պատմութեան, գրականութեան ու արուեստներուն: Մեր հինաւորց ձեռագրերն՝ բարեբախտաբար փոքր մէկ մասը միայն՝ բախտի ձախողակ կարգադրութեամբ, դարձեր են զոհ ցեցերու ախորժակին...:

Մեր տպագրուած գրքերու ստուար մեծամասնութիւնը մնացեր է դարակներու մէջ, կարօտ ընթերցող աչքերու: Մեր նպատակը չէ երեւան հանել պատճառները այս անտարբերութեան ու յետամնաց մտայնութեան, արդարացնել կամ դատապարտել այս ափերու հայութիւնը, այլ մատնանշել այն կարեւորութիւնը, մանաւանդ դրական մեծ ազդեցութիւնը, որ կրնայ Տայաստանի պետական վաստակաւոր անսամբլը ունենալ օտար ազդեցութիւններու ենթակայ կալկաթահայերու վրայ:

Վստահ ենք, որ դուք եւ Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապի հայկական ընկերութեան յարգարժան վարչութիւնը ընթացք պիտի տաք հնդկական կառավարութեան

Անդրանիկ Շահինյանի եւ մի խումբ արվեստագետների հետ: Յալէպ, 1956թ.:



խնդրանքին եւ պիտի յաջողցնէք Երզի եւ պարի անսամբլի Ննդկաստան այցելութիւնը:

Թելադրելի է, որ յառաջադրուած ծրագիրը իրականացուի նախքան յառաջիկայ տարուան մարտ ամիսը, քանի որ փետրուարի վերջաւորութեան օգոստոսեան տաքը կը սկսի արդէն Ննդկաստանի մէջ:

Միրելի պրն Շահինեան, յիշողութեանս մէջ միշտ պայծառ կը մնայ տպաւորութիւնը այն համերգներուն, զորս 1956-ին ձեր գլխաւորութեամբ Դամասկոսի Միջազգային ցուցանդէսին հրաւիրուած արուեստագէտներու խումբը տուաւ Տալէպի մէջ: Տ. Սազանդարեան, Ն. Յովհաննէսեան, Ն. Տէր-Ղեւոնդեան, Ս. Դաւիթեան եւ այլոց երգերն ու նուագները տակաւին կը հնչեն ականջներուս մէջ: Դեռ մինչեւ այսօր մեծ խնամքով կը պահեմ ձեր ինծի նուիրած Սարոյի արձանն ու հաստանեան ալպոմը:

Մեր սրտագին մաղթանքն է, որ ծլի ու ծաղկի արեւաբոյր մեր երկիրը, որ պատմութեան ընթացքին տառապանքներու ամենէն դառնը հաշակեց: Թող երեկուան ողբի ու սուգի երկիրը դառնայ գիտութեան ու մշակոյթի օճախ, ողորուած երջանկութեան լոյսով:

Ընդունեցէք կանխապայտ շնորհակալութիւններս ու յարգանքներս:

Ասատուր Կիզեյեան

Վարիչ Տայկագեան միութեան մշակութային յանձնախումբի

Շահվերդյան Վահե

19.08.1945, Կիրովական, ՀԽՍՀ: Ռեժիսորական
ներկայացումների բեմադրիչ, ՀԽՍՀ արվեստի
վաստակավոր գործիչ (1989), ՀՀ ժողովրդական արտիստ
(2003):



/ 30 ապրիլի 2000թ. /

Մեծարգո պարոն Ասատուր Գյուզելյանին

Հարգարժան պ. Գյուզելյան,

Գ. Մունդուկյանի անվան ազգային ակադեմիական Մայր թատրոնը
իր խորին երախտագիտությունն ու շնորհակալությունն է հայտնում
Ձեզ՝ Ձեր բարեգործության համար, որի շնորհիվ մեր առաջատար
դերասանուհի Տասմիկ Ալեքսանյանի դուստրը՝ Մարիա Ալեքսանյանը
շարունակում է իր ուսումը: Ձեր ազգանվեր գործը արժանի է ամենայն
փառաբանման, որը եւ խնդրում ենք ընդունեք:

Ձեզ ամենայն բարիք, Աստված ընդ Ձեզ:

Թատրոնի գեղարվեստական ղեկավար,

ՏՏ արվեստի վաստակավոր գործիչ

Շահվերդյան Վահե

Շիրազ Հովհաննես

Շիրազ Հովհաննես (ՕՍԻԿ Թաղևոսի Կարապետյան):
26.04.1914, Ալեքսանդրապոլ, (Գյումրի), - 14.03.1984, Երեւան,
թաղված է Կոմիտասի անվ. Պանթեոնում):
Չայ մեծանուն բանաստեղծ: Չայկական ԽՍՀ պետական
մրցանակի դափնեկիր (1975, «Չամամարդկային»
բանաստեղծությունների ժողովածուի համար): ԽՍՀՄ
գրողների միության անդամ



🔗 Միրելի Ասասուր,

Սպասում եմ այն սերմի ծլման-ծաղկմանը, որ քո խոստումն է: Գրիր նաեւ իմանամ, թե հիմնովին եւ հավիտենապես երբ եք տուն՝ հայրենիք-Տայաստան գալու: Ինչ ունեք հեռավոր Տնդկաստաններում, միթե հարազատ մոր ձեռքի մուրը քաղցր, հազար քաղցր չէ օտարուհու լուսաբուխ կրծքից, եւ մի՞թե վերջինս յուր մատները մոմ կանի եւ կվառի իր օտար մարդու համար: Շատ ու շատ եմ զարմանում մեր ցրված հայության ոչ քիչ այն բազմության վրա, որը չի կռահում թե իր մայր լեզուն իր բերանից գողանում են եւ ո՛չ աչքերն են նկատում մեծ գողին, ո՛չ ականջներն են լսում օտարի լեզվաձայնը իրենց տիրոջ բերանից...

Մեծ գողը մեծ ազգերն են, որոնց տանիքի տակ ծվարել էք փոքրիկներդ, եւ չեք զգում, որ կործանվում եք օտարի՝ մեծալեզու օտարների լեզուների թրերով ջնջելով մեծասուրբ Մաշտոցի հիշատակը – հայոց հրաշք լեզուն...

Եղուկ որք առյուծիս... Եղուկ անգոր մենակիս...

Տովհաննես Շիրազ

Տ.Գ. Սպասում եմ նամակիդ, գոնե իմ լուսանկարն ուղարկեյիր...

Նույն

❖ **Ըստ սիրելի Ասասուր,**

Մտացա հոգերուխ նամակդ, համբուրում եմ մշտահայ ոգիդ եւ աշակերտներիդ հայկազյան մերանով խմորածդ ոգիներն ու ապագան ի փառս հայոց հավիտենորեն Մասիավող մայրենի լեզվի... շուտով մեծ նամակ կգրեմ քեզ:

Ծիրագ Տովհաննես

❖ **Իմ սիրելի ազգապավակ,**

Մտացա ազնիվ ու մեծաշունչ նամակդ, ուրախ եմ, որ օրավոր բախտավորվում է հույսդ, համբուրում եմ ողջ ընտանիքիդ, ողջ ազգավառ աշակերտությանդ, թող աստված միշտ նրանց մատաղատի սրտերում բնակվի, աստված՝ խիղեն է:


Համբուրս տուր բոլոր նրանց, ովքեր մարդ են մնում, հայ են մնում՝ օտար այդ օվկիանոսում էլ, քանզի մեծ քաջություն եւ հրաշք է, եթե աղբյուրը ծովով անցնի եւ ափ դուս գա...

Ծիրագ Տովհաննես



Պոզապալեան Ներսես

Պոզապալեան Տեր Ներսես արքեպիսկոպոս:
5.07.1937, Բըրքլիան, Կիլիկիա, Սիրիայի եւ Լիբանանի
Ֆրանսիական Մանդատ - 27.06.2009, Երեւան:
Սովորել է Բեյրութի Նուբարյան վարժարանում: 1957թ.
ընտանիքով տեղափոխվել է հայրենիք, ուսումը շարունակել
Էջմիածնի Գեորգյան հոգեւոր ճեմարանում: 4.07.1999թ.
ընտրվել է կաթողիկոսական տեղապահ եւ կազմակերպել է
կաթողիկոսական ընտրությունները 1999թ.
հոկտեմբերի 27-ին:



/ 30 հոկտեմբերի 1957թ. /

Միւրելի Ասասուր Կիւպէլեան,

Կեանքի մէջ կը պատահին անակնկալներ եւ նաեւ կ'առնուին խոշոր քայլեր: Այս տեսակի լուծում մը կարելի է համարել քու անակնկալ վիճակդ եւ մեր արած խոշոր քայլը՝ Տայաստան ներգաղթելու:

Բան մը, որ իրականութիւն ըլլալէ չի դադրիր. սա է, որ մենք Պոզապալեան ընտանիքս Տայաստանցի ենք դարձած: Ծատ հանգիստ ենք եւ գործով ապահովուած: Եթէ արտասահմանեան հայկական ժամը կարողանայիք լսել, կրնայիք միշտ քրոջս՝ Մարիամին ձայնը լսել: Ինք այժմ Տայֆիլիհարմոնիայի սուլիստ է:

Չեմ գիտեր ինչ ձեռով առիթը ներկայացաւ ինձ սա նամակը գրելու քեզ. հաւանական է, որ Ասողիկ վարդապետը եղաւ: Էջմիածնի սրահին մէջ իր դասախօսած պահուն արտայայտուեցաւ նաեւ իր կատարելիք համբորդութեան մասին եւ ես ալ համարձակեցայ այս նամակը տալ իրեն:

Էջմիածինը ուղղակի հնութեան կեդրոն է. իր շրջակայ չորս եկեղեցիներով: Իսկ թանգարանը հիանալի, ամէն մէկ նշխար կը տանի դարեր ետ մարդուս մտածումը: Ափսո՛ս, անգամ մը պէտք էր, որ տեսած ըլլայիր: Վեհափառը շատ քաջառողջ է, իրմէ երկու դաս ունինք՝ տրամաբանութիւն եւ հոգեբանութիւն: Ունինք նաեւ շատ հմուտ դասատուներ: Կեանքը վանքի մէջ եռուն է, որովհետեւ միշտ կան ուխտաւորներ եւ թանգարան այցելողներ:

Տեղեակ ես անշուշտ Աւետիք Իահակեանի մահուան մասին: Եվ Օպերայի դիրիժոր Թաիրիզեանի: Ասոնց անունը չգրել այս նամակին մէջ սրբապղծում մը կը համարեմ:

Ուրիշ առթիւ եթէ գիրք եւ այլ կարեւոր բաներու պետք ունենաս գրէ:
Ինչքան որ կրնամ օգտակար կ'ըլլամ:

Սիրով՝ Պոզասպալեան Յակոբ Գ.

Յ.Գ. Տակաւին հիմա Ալեքսան Գուգուեանին նամակ գրեցի, որովհետեւ Մամբրէ սրբազանը ըսաւ յունուարին պիտի ձեռնադրուի եղեր: Իսկ քու մասիդ ալ ըսաւ, որ երանի չտարածեր իր երթալը Ամերիկա, եւ հիմա հոն կ'ըլլար:

Նոյն



/ 16 փետրվարի 1958թ. /

Ես սիրելի Ասատուր,

Շնորհատրում եմ քեզ եւ քո կիներ ձեր ամուսնութեան առթիւ, իրապէս զարմացրիր զիս քո այդ արարքով որ անշուշտ լաւ է: Խնդակցութիւններս: Ուրախ եմ, որովհետեւ ազգականներիս շարքը լայնանում է կամաց-կամաց:

Սիրելի Ասատուր, տիկնոջդ անունը չեմ գիտեր եթէ չեմ սխալում նկարին վրայ Նարինէ եւ գրած, իսկ նամակին մէջ՝ Վիվիէն: Վահան սրբազանին հարց տուի եւ մեծ հիացմունքով խօսեց ձերոնց մասին. շատ ուրախ եմ:

Գալով նամակիդ՝ շատ գոհ մնացի, որ գրել ես բաւական տեղեկութիւններ: Վեհափառը, ի միջի այլոց ըսեմ, որ զիս շատ է սիրում, եւ դու փափագ յայտնած էիր Դերենիկ սրբ-ի մասին գրածներդ միաբաններին ցոյց տամ: Ես շատ համարձակ քայլ մը առի, զայն տանելով ուղղակի Վեհափառին, պատուիրեց որ մարդու ցոյց չտամ: Եթէ կրնաս ուրիշ առթիւ այդպէս հետաքրքիր դէպքերի մասին գրել, գիտցիր որ գրելովդ մեր եկեղեցիին շահը մտածած կը լինես:

Նամակդ եւ ընտանիքիս ուղարկած քո պսակի զգեստով նկարը ստացայ այն օրը, որ քոյրս՝ Մարին Էջմիածին էր եկել, նրան տուի, զիտե՞ս որքան ուրախացաւ, շուտով նրանցից էլ կը ստանաս նամակ:

Ասատուր ջան, ես Ալեքսան Գուգուեանին ասկից մի երեք ամիս առաջ նամակ գրեցի, եւ պատասխան չստացայ, եթէ դու նրա հասցեն ունես լաւ կ'անես ինձ դրկելովդ:

Փափագ յայտնած էիր մի քանի գիրք ունենալ: Նենց երեք գրքերը համբու դրեցի փոստով: Մի հատ Մանանդեան Գ. «Նայ ժողովրդի պատմութիւն» Գ հատոր: Անդրկովկասեան քրդերի մասին մի գիրք եւ հայերէն-քրդերէն մի բառարան. այս բառարանի քրդերէն լեզուի տառերը ռուսերէն են, չեն գիտեր ի՞նչ չափով օգտակար կարող է լինել քեզ: Եթէ կարեւոր գրքերի հանդիպեմ անմիջապէս համբու կը դնեմ:

Նետաքրքրուած էիր նեմարանի դասերով. ունենք շատ լաւ դասախօսներ, ինչպիսիք են Կարո Ղաֆադարեան, որ տալիս է Նայ մշակութի պատմութիւն, Նամո Նարութիւնեան՝ Նայ ժողովրդի պատմութիւն, Վարագ Առաքելեան՝ գրաբար եւ մի քանի սրանց նման ուսուցիչներ: Վեհափառ հայրապետը տալիս է մեզ հոգեբանութիւն եւ տրամաբանութիւն:

Ամեն հինգշաբթի կէսօրէ վերջը դասախօսներ կը հրաւիրենք Երեւանից, որոնք զանազան նիւթերի մասին կը խօսեն:

Ես Ա. լսարանի ուսանող եմ, եւ սարկաւագ ձեռնադրուեցի Նայկազուն սրբազանի ձեռամբ, որ Երուսաղեմից է, ինչպէս գիտես եւ մեր վերատեսուչը, սա Դերենիկից շատ համեստ է եւ ընկերասէր:

Բարեւներս եւ էջմիածնասիրտ ողջոյններս ձերոնց:

Նամակիդ սպասող Ներսէս սարկ. Տ Պոզասպալեան



/ 1 հունիսի 1958թ., Էջմիածին /

Սիրելի Ասասուր,

Նահույքով ստացայ շատ հետաքրքիր նամակդ, բուսական երկար տեղեկութիւններ կային Դերենիկ եպ-ի մասին: Կային նաեւ մի քանի հարցեր, որոնց անշուշտ մեծ սիրով է, որ պիտի պատասխանեմ, ըստ ստացած տեղեկութիւններիս:

ԺԷ դարի պատկանող մի ձեռագրի նկարած նմուշն էիր ուղարկել: Տոյց տուեցի հասկացողների, հաւանեցին, սակայն երբ գինն ասացի ծիծաղեցին վրաս, մանաւանդ Վարագ Առաքելեանը ասաց, որ Երեւանի ձեռագրատնում շատ կան նոյն թիւերի պատկանող ձեռագրեր, որոնց ամենաշատ արժէքն է 500-600 ռուբլի, ասաց նաեւ, որ եթէ հարուստ է ազգականդ թող գնի: Սակայն սիրելի Ասատուր ընդ-

հանուրին արտայայտութիւնը այն է, որ 100 սթերլինգով շատ քանակ է, սա առաւելն արժի 10 սթերլինգ: 500-600 ռուբլին լիբանանեան փողով հազիւհազ կանի՝ 100 լիբանանեան: Ձեռագիրը արժէքովն ալ մի բացառիկ բան չէ: Նորից քո գիտնալիք բանն է:

Դերենիկ սրբ-ի մասին գրածդ Վեհափառին տարի, ինձ բան չասաց: Բայց անպայման մի բան կանի: Գալով հեռագրին այո՛, Վեհափառը Դերենիկին հեռագիր է ուղարկել որ Լիբանան վերադառնայ: Իսկ յօդուածին գալով, չկայ Էջմիածնի խմբագրատնում Դերենիկ սրբ-ի անունը կրող յօդուած: Ի միջի այլոց ասեմ, որ խմբագրատանը քո յօդուածն ալ տեսայ: Անշուշտ յօդուածդ կարդացի Էջմիածին ամսագրում: Մեզ համար շատ ուրախալի է կարդալ հնդկահայերի եռուն կեանքի մասին: Վստահ գիտեմ, որ այդ եռուն գործունէութեան հրահրողներից մէկն էլ դու ես:

Անցեալ կիրակի մօրս եւ Մարիին հետ Վահան սրբ-ին այցելութեան գնացիք: Շիտակը, քեզ մոռացել է Անթիլիասից, նկարդ ուզեց, սակայն քո ուղարկած նկարը Տայաստանում եղող ազգականներդ տարել էին, ստիպուած անթիլիասեան մի նկար տարի: Սկսանք ձերոնց մասին հետաքրքրուիլ, ասաց, որ ինչպէս Բեյրութում մեր հետ էր, թերեւս աւելին էր Կալկաթայում Վիվիենի ընտանիքի հետ: Անշուշտ այս շատ ուրախալի էր: Վերջ ի վերջոյ ասաց, որ խնամի ենք եղած: Ձերոնց նկարները ցոյց տուց, այսպէս հանելի ժամանակ անցկացրինք Վահան սրբազանի հետ, որ անհանգստութեան պատճառով եկեղեցի չի գալիս, այս կիրակի, այսինքն՝ Ծաղկազարդի կիրակին եկաւ:

Միրելի Ասատուր գրաբարի գրքեր էիր ուզած, գրաբարի դասատու պրոֆ. Վարազ Առաքելեանից ուզեցի (իր գրքից) ըսաւ, որ նոյնիսկ այս ձեռքի գիրքս գրադարանից եմ վերցրած, բայց եթէ Երեւանում գտնեմ անպայման կ'ուղարկեմ: Եթէ հետաքրքիր գրքերու հանդիպիմ առնելուս պէս փոստ կը դնեմ:

Անգլիերէն գրքի մասին էիր խօսած, քո ճաշակով եթէ հետաքրքիր մի բանի հանդիպես, խնդրեմ ես սիրով կ'ընդունիմ:

Անցեալները դպրեկանքի ուսանողներիս հետ Խոր Վիրապի վանք գնացիք, իջանք Խոր Վիրապ, աղօթեցի այդ ճգնաւոր Լուսաւորչին, որ իր լոյսից Աստուածային մեր հոգիներուն ալ տայ: Իրաւ, որ Տայաստան մի թանգարան է:

Ձատկաւայ առթիւ ջերմ ողջոյններ Իջման խորանից: Բարեւներ, ջերմ

ու կարոտալի հայրենի հողում ծաղկող ընձիղուող մի մատաղ սրտից:
Մաղթանքս է, որ հնդկահայ գաղութը իր խաղաղութիւնը գտնէ:

Եղբայրդ՝ Յակոբ սրբ. Պոզասպալեան



/ 9 հունիսի 1958թ., Ս. Էջմիածին /

Միրելի Ասասուր,

Տանոյքով ստացայ 30.4.58 թուակիրդ: Շատ ուրախ եմ, որ ստացած ես ուղարկածս գրքերը, սակայն քու ուղարկածդ տակալին չեմ ստացած: Քովս Մանանդեանի Ա հատորը չկայ: Արտասահմանեան տպագրութիւնը ունիւմ Ա հատորին:

Ուղարկած գրքերդ շատ հետաքրքիր են, ափսոս որ չեմ ստացած, գոնէ զբաղում կը լինէր այս ամառնային արձակուրդիս ընթացքին, որը պիտի անցնեմ շատ հաւանաբար Թիֆլիս քաղաքում:

Շատ հետաքրքիր է Դերենիկ սրբ-ի վերաբերմունքը քեզ հետ, կ'երեւայ ինքն իր բերնով պիտի փաստէ, որ «արմատ չարեաց» է: Աշնան Վեհափառ Տայրապետի 50 ամեակը պիտի տօնենք եւ եպիսկոպոսական ժողով պիտի գումարուի. հաւանաբար զինքն ալ կը կանչեն: Իր մասին տեղեակ են արդէն վանքում, շատ հաւանաբար յարմար պատիւ չընծայեն:

Նամակիս ուշանալուն մեծագոյն պատճառը քննութիւնն էր, որը շատ յաջող կերպով տուի, վաղը հանդէս պիտի ունենանք, տեսնենք ինչով պիտի գնահատուինք:

Մօտ երկու շաբաթ է այստեղ հիւր ունենք հալեպահայ Սուրեն Գալենտերեանը, որը յանձն էր առած Շողակաթի եկեղեցւոյ վերանորոգումը եւ դրամը կանխիկ վճարած: Այսօր Էջմիածնայ տօնին առթիւ վեհարանի ծաղկեաց դահլիճում Գալենտերեանը պարգեատրուեցաւ Լուսավորչի Ա կարգի ադամանդակուռ մեդալով, եւ Գալենտերեանը Անթիլիասից եմ յիշում: Դերենիկ սրբազանի մօտ կու գար-կ'երթար: Տոս զինք շատ հաւանեցին. իրապէս շատ ազնիւ զոյգ են:

Անցեալները Վահան սրբ-ի սենեակն էի գացած, ձեր նամակը տուաւ, որ կարդամ, շատ հաճելի մարդ է, ժամերով ձերոնց մասին կը խօսի առանց ձանձրոյթի:

Միրելի Ասատուր դուռն արդեօք Գուգուեանի հետ նամակցում ես, եթէ այո՛, խնդրեմ կամ հասցեն ինձ ուղարկէ եւ կամ հարցուր արդեօք ինձմէ նամակ ստացած է, երկու հատ գրեցի եւ անպատասխան եմ մնացած:

Մասնաւոր բարեւներ ազգականներուդ, ինձմէ ու ծնողքեւ, տիկնոջդ, քեզ ու աներներիդ:

Ներէ որ նամակս կարճ եղաւ:

Եղբայրական սիրով Յակոբ սրկ. Պոզասպալեան

Յ.Գ. Ուշադրութիւն մի դարձներ ուղղագրութեանս ու լեզուին. քիչ ատենէն կարծես արեւելահայերէն պիտի սկսիմ գրել:



/ 16 նոյեմբերի 1958թ., Ս. Էջմիածին /

Միրելի Ասատուր,

Մասնաւոր շնորհակալութիւն ձեր ուղարկած նուէրների համար: Չգիտեմ արդեօք քոյրս Մարին իր շնորհակալութիւնը գիրով յայտնեց ձեզ:

Երանի գալիք Վեհափառի տօնակատարութեանը, շատ փառահեղ անցաւ, մինչեւ իսկ Նուպար Կիւլպենկեանն էր եկած իր անգլուհի տիկնոջ հետ:

Է՛հ, սիրած մարդուդ եղբայրն ալ եկած էր, մի քանի բառ փսփսացեր է քու մասին, լսեցի: Տարցուցեր է Վեհին, որ Ասատուրէն երբեք նամակ ստացած է եւ այլն:

Ինչ որ է, բերանը չկրցաւ բանալ, միայն կատակ ընել գիտէ, լրջութիւն ըստած բանը չգիտեմ որքա՛ն հեռու է իրմէ: Տին բնաւորութիւնը վրան է: Փալանը փոխտած էր, սակայն ինք չէր փոխտած:

Աչքդ լոյս Գնէլը եպիսկոպոս օծուեցաւ: Գետրգը, Ջաւէնը եւ Գիտը վարդապետ եղան եւ լանջախաչ ստացան: Ինչ ընենք մեր տղաքն էին եւ պետք էր, որ միջնորդէինք: Գիտինը դժուար եղաւ, բայց եղաւ:

Ասողիկ սրբազանը կարծես հասած կ'ըլլայ մինչեւ հիմա: Որքան բարի մարդ է, եւ վախենում եմ, որ իր բարութեամբ Առաջնորդութիւնը ձեռքից խլել կու տայ: Սրբազանը մեր մասին քեզի մանրամասն կը խօսի:

Մայրս մի քիչ անհանգիստ եղաւ եւ մենք չկրցանք զինք տուն հրա-
ւիրել, հոգ չէ:

Քոյրս Տիգրանուհին նշանեցինք մի շնորհալի բժիշկի հետ,
անունն է Լուսովիզ, եղբայրն է շատ նշանաւոր քանդակագործի մը՝
Նիկողոսեան:

Վահան սրբազանը շատ լաւ է, արդէն իսկ բաւական առողջ է.
Երբեմն եկեղեցի կ'իջնէ:

*Կարօտալի ջերմ բարեւներ եւ համբոյրներ՝
Յակոբ սրկ. Պոզասպալեան*



/ 8 փետրվարի 1959թ., Ս. Էջմիածին /

Միրելի Ասատուր,

Նահույքով ստացա 13 հունվար թվակիրդ: Մեծ հաճույքով կարդացի
Բարաջանյանի եւ Պավել Լիսիցյանի մասին, նախորդիվ այս երկուսի
մասին չէիր գրած: Մարին Լիսիցյանին լավ կհանաչի, Մոսկվա հետը
ծանոթացած է: Այդ արվեստագետները այստեղ նույնպէս մեծ պա-
տիվ են վայելում:

Գալով քո ուղարկած գրքերին, բավական երկար ժամանակ եղավ
ստանալու եւ Վեհափառ Տայրապետի ձեռամբ, չգիտեմ ինչպէս նրա
ձեռքն է հասել:

Կիսամյա քննութիւնս շատ հաջող կերպով տվի, վանքի կյանքը
միշտ շարժուն է: Միայն մի քիչ միտքս անհանգստացավ մորս ան-
հանգստութեան պատճառով: Ինչ որ է, բարելավման հանապարհին է:

Ասողիկ սրբազանին սրտագին բարեւներս հաղորդե եթե տեսնես,
շատ բարի, ազնիվ մի կղերական է: Փառք Աստծո որ Դերենիկը վերջ ի
վերջո վալիզները հավաքելով հեռացել է: Տեսնենք թե Տապեշիստա-
նում ինչ սքանդալ պիտի հանէ:

Վահան սրբազանի կողմից մասնավոր ողջույններ: Վիճակը բավա-
կանի լավ է: Այս ցուրտ ձմռան սենյակից դուրս չգար:

Էջմիածնում էլ Դերենիկի մասին լավ կարծիք չունեն: Այդ մարդը
իր աշակերտներու կողմէ չէ սիրված իր վատ բնավորութեան համար
եւ շատ հավանական է, որ նա որեւէ մի տեղ պաշտպան չունենա, բացի
իր եղբոր՝ Վահանից:

Վահանը այստեղ եղած առեն ձախ-աջ խոսել է, բարեբախտաբար խոսքերը քամին տարել է:

Գործերը ինչպե՞ս են, դպրոցից գոհ ես, այս հարցը տալիս եմ որովհետև գիտեմ, որ Վահանի հետ գործ ունես:

Տիկին Նարինեն ինչպես է, մասնավոր բարեւներ ունի Վահան սրբազանից:

Ընտանիքիս անդամների կողմից ընդունեցեք մասնավոր բարեւներ:

Արդյոք լսած ես Եղիա Նաջարյանի մասին, որ Տայաստան է եկած: Շատ լավ ըրավ, համալսարանում պիտի սովորի, ունենալով նաև որոշ աշխատանք: Տալեպից, Բեյրութից բավական ուսանողներ կան Երեւանում:

Էջմիածին մի ամիս առաջ ուսանող եկավ Տովհաննես սրկ. Գարահակոբյանը Տալեպից, որ մի ժամանակ Անթիլիասս ալ ուսանող էր, ապա՝ Երուսաղեմ անցավ. Կիլիկյանցի է:

Մենք արտասահմանով ենք հետաքրքրված, իսկ դուք՝ հայրենիքով, նիշտ դրա համար է, որ հայրենիքի նվաճումներին ուշի-ուշով հետեւում եք:

Իսկ մենք, ուշի-ուշով հետաքրքրվում ենք Անթիլիասսով եւ առհասարակ Տայ սփյուռքով, ուր միայն ու միայն տեղ քայլ ենք տեսնում եւ հաճախ՝ նահանջ: Տայրենիքից ավելի լավ կարելի է տեսնել սփյուռքը քան՝ սփյուռքից:

Եկեղեցու վիճակը մտահոգիչ է արտասահմանում: Արտասահմանում եկեղեցին ազգն է:

*Սրտագին բարեմատություններով՝
Տակոբ սրկ. Պոզասպայան*



/ 28 մայիսի 1959թ., Ս. Էջմիածին /

Սիրելի Ասասուր Կյուպեւյան,

Վերջապես ստացա բովանդակալից ու երկարաշունչ նամակդ: Նաև ներփակ դրված լուսանկարը: Անհունորեն երջանիկ կզգամ ինքզինքս երբ մտաբերեմ, որ ազգականներիցս մին հեռավոր Կալկաթայում հայրենանվեր գործի վրա է, եւ մանավանդ կարեւորագույնը՝ Տայաստանյայց Ս. Եկեղեցվո առաջընթացին սատարող:

Միրելի Ասատուր, քո նամակը ստանալուց քիչ առաջ, արդեն լսել էի որ Դերենիկ եպիսկոպոսը վերադարձել է Դամասկոս, ապա՝ գնացել է Բեյրութ Ս. Գեորգ եկեղեցում քարոզել է, միեւնույն օրը պատարագիչ է եղած Տայր Վաչե Տովսեփյանը, որը Ամերիկայից է եկել՝ քրոջը ամուսնության ներկա գտնվելու համար: Միրելի Ասատուր, զարմանալին այն է, որ Դերենիկը կարողանում է երկար ժամանակով իր իսկությունը պահել, թաքցնել ժողովրդից:

Անցյալ շաբաթ Վեհափառ Տայրապետը Մոսկվա մեկնեց խաղաղության նվիրված միջազգային կոնգրեսում իր մասնակցությունը բերելու համար: Մի քանի օր առաջ ավետաբեր մի հեռագիր եկավ հայտնելու, որ Վեհափառ Տայրիկը պարգեատրվել է Խաղաղության միջազգային շքանշանով: Ամբողջ վանքում ուրախություն է եռում:

Միրելի Ասատուր, մի շաբաթից ամենավերջի քննությունները սկսվելու են, օրը շատ տաք է կարելի չի լինում ամփոփվել եւ աշխատել:



Երգչուհի
Մարի Պոզապալյան:

Տովսեփի Մադաթի ծախսերը վնարելու մասին հարց էիր տված, սիրելի Ասատուր: Ճիշտը դժվար բան է վերաստուգել կամ վերանայել Վեհափառ Տայրապետի տոնակատարության առիթով եկողների հաշիվներին, հարյուրավորներ են գալիս այդ ձեռով եւ գնում: Ջգում եմ կարեւորությունը իմ պատասխանի, սակայն զգում եմ նաեւ դժվարությունը հազարավոր հաշվեցուցակների միջից ընտրելու եւ վերանայելու հաշիվները, մի ունն Տովսեփի Մադաթի:

Սիրելի Ասատուր, դեռեւս Եղիան չտեսա. մտտ առենից, որ Երեւան իջնեմ իրեն կհանդիպեմ եւ կխնդրեմ, որ նամակ գրի քեզ, խարաշո՞...

Խաչիկ Արապյանը տեսած եմ, հանելի արտաքինով մի տղա է, կարծեմ իր շրջապատից լսելով եմ ասում, մի քիչ էլ գրելու շնորհք ունի եղեր, բայց առիթը չէ եղած, որ հետը խոսեմ ու իսկապէս ծանոթանամ:

Տիկին Նարինեի ուղարկած երգերը տակավին չեն ստացված, քույրս անձկությամբ սպասում է: Մի քանի շաբաթ առաջ Մարին առանձին համերգ տվավ, շատ մեծ հաջողություն ունեցավ. քրոջս կատարողականության վրա ես էլ ուրիշների կարգին հիացա: Որքան համաչափ ծափահարություններ խլեց ունկնդիրներից: Մենք հոգեւոր ճեմարանի ուսանողներս, վարդապետաց եւ եպիսկոպոսաց դասով ներկա էինք:

Սիրելի Ասատուր, սրտանց փափագում ենք 1960-ի աշնանը ձեզ ընտանյոք տեսնել Տայաստանում, որպէսզի պատմական վայրերի մասին լսելով չքավականանաք, այլ ձեր իսկ աչքերով տեսնեք եւ հարկ եղած դեպքում շոշափեք:

Ծնողացս, քույրերիս եւ իմ սրտագին բարեւները Նարինեին, քեզ եւ ծնողացը: Վահան սրբազանն էլ հատուկ ողջույններ է հղում ձեր հարգելի ընտանիքին:

Ընկեր Նիկողոսյանն էլ իր անծանոթ ազգականներին հատուկ եւ ջերմ բարեւներ է ուղարկում:

Ձերն բարեւներով՝ Տակոբ Սրկ.



Միրելի Ասատուր,

Մոտ մի ամիս առաջ ստացա քո երկարաշունչ նամակը, ներփակ նաեւ Տայկազյան միութեան հայտագիրը եւ ապագա ծրագրերի ցուցակը: Ծիտակը շատ հետաքրքիր էր հայտագիրը, մանավանդ այն, որ էրիկ կնիկ գործի եք անցել եւ ամբողջ հայտագրի երկայնքում ուրախալի էր կարդալ Վիվիեն Գյուզելյանի անունն ու ազգանունը: Էջմիածին ամսագրում մենք ունենք հատուկ բաժին՝ արտասահմանյան լուրեր անվան տակ, հազիվ մի տպագրական էջ երկարութեամբ մի համեստ գրություն տվի խմբագրությունն ձեր հայրենասիրական գործունեության մասին եւ մի քանի քաջալերական խոսք: Տողվածի աղբյուր ծառայեց թարգմանությունը ձեր հայտագրի նախաբանին, ինչ որ կարեւոր էի համարում, հետո հանդիսության հայտագիրը ներկա եղողները եւ ձեր ապագա գործունեության մասին: Կարծում եմ, որ ձեր իսկ նամակով հայտագիր ուղարկելը լռելյան այդ էր պահանջում:

Ծատ ուրախ եմ ծանոթանալու ձեր միութեան պատվարժան նախագահին՝ պրն Տայկ Նաջարյանին եւ իր ազնիվ տիկնոջ: Իր հասցեն ունեւ եւ խոսք եւ տված իրեն մի քանի թատերական պիեսներ հարել եւ ուղարկել: Տուսամ նա ձեզ կպատմի իմ եւ Մարիի մասին: Գեղեցիկ մի զուգադիպութեամբ Վեհափառ Տայրապետը կարգադրել էր ինձ, որ զիրենք դիմավորեմ օդանավակայանում, շատ սիրելի ու համեստ ամուլ էին, իմ կողմից ջերմորեն բարեւիր նրանց: Տուսամ ստացած կլինես Դանթեի «Դրախտ» հատորը:

Ինչ անենք այս ժամանակներում մոմով պետք է փնտրել նվիրված, ուխտապահ ու բարոյալից հոգեւորականներ: Միայն մեր հոգեւորականութիւնն է այդպես, թե ընդհանրապես, չեմ կարող պատասխանել, բայց կարծում եմ թե մի տասնյակ հավատարիմ հոգեւորականներ կկարողանան եկեղեցու սյուներ դառնալ եւ խաղաղ ափեր տանել: Ինչո՞վ պետք է արդարացնել Զարեհի, Խորենի եւ այլոց անպատկառ դիրքը եւ սանձարձակ վագրը, չգիտեմ:

Միրելի Ասատուր, դառնանք մեր ոչխարին, Վիվիենի ուղարկած նոտաները երկար թափառումներից կամ սպասումներից հետո վերջապես իրենց տերը գտան, կարծում եմ, որ Մարին ձեզի գրած կլինի շնորհակալութեան մի նամակ, այնուամենայնիվ ես էլ շնորհակալու-



Ներսես Արքեպիսկոպոս Պողոսյան:

թյուն կհայտնեն, որովհետև գեղեցիկ եղանակները ես էլ հանույքով կսովորեմ:

Ուրախությամբ եւ տխրությամբ պետք է ասեն, որ անցյալ ուրբաթ 6 նոյեմբերին Տիգրանունու եւ Լյուդվիգի պսակի խորհուրդը կատարեցինք Տայկազուն Սրբ-ի ձեռամբ: Արարողությունից հետո խնջույքի նստանք մինչեւ առավոտ: Բավական մտավորականներ, գրողներ եւ հայտնի նարտարագետներ էլ էին եկել, ինչպես Նաիրի Ջարյան, Ռաֆֆի Իսրայելյան, Աննայան Երեւանի պետական քատրոնի ռեժիսոր եւ այլ երեսելի անձեր: Այո, բոլորը ուրախացան, բայց խնջույքից հետո աղջիկը ուրիշի տանը թողնել եւ վերադառնալ՝ կարծում եմ բոլոր եղբայրների համար դժվար է: 20-25 տարի հորդ տան մեջ թող ուտի խմի, հետո էլ ուրիշին գնա, մի բոպե Ասատուր, դու հաշտվում ես այդ մտքին, թե՛ ոչ: Ինչ անենք, աշխարհի օրենքն է, ասում ենք ու պրծնում: Տիմա որ մի շաբաթ անցել է, գրեթե մոռացել եմ այդ բոլորը,

որովհետեւ վանքի շրջապատը եւ զբաղմունքները այդ երկրորդական հոգսերը փարատում են իրենց հաշիշով:

Քո անցյալ նամակում քարեւներ էիր ուղարկում նախկին ծանոթներիդ ու քարեկամներիդ: Ուսանողներից ոչ մեկին էլ չտեսա, նրանք շատ զբաղված կ'լինեն... Իսկ Եղիյա Նաջարյանին, օպերա էինք գնացել, այնտեղ տեսա, հաղորդեցի քարեւներդ, ասացի, որ անպայման քեզ նամակ գրի: Այո՛ պատասխանեց, բայց չգիտեմ մինչեւ հիմա որեւէ նամակ գրեց, նախկին կյանքին է վերադարձած, ազատ շուկայում է, չգիտեմ թե վերջ ի վերջո ուր կհասնի, ոչ մի տող իրանից ոչ մի թերթում կամ ամսագրում չեմ տեսնում, չլինի արհեստը փոխած լինի ուրիշ մի կարեւոր արհեստով: Ինչ որ է մենք կսպասենք, որ հանդես բերե իր արժանիքները, որպեսզի ավելի սիրվի ու հարգվի: Գիտեք ինչ, ցարդ Եղիյան Էջմիածին ոտք չէ դրած, ինչն է պատճառը, արդյոք Այգ օրաթերթում իր անհիշտ ու հերյուրած դազիթենիությունների ամոթն է, որ ամաչել է տալիս մեր պատկանելի Վեհափառ Տայրապետից, թե մի անգամ էլ Անթիլիասի դպրեվանքի գեղեցիկ կյանքը տեսնել չի ուզում: Կարծում եմ, որ դարավոր տանարը Մայր Աթոռի իր սրտին այլեւս չի խոսում:

Գալով Գարայագուսյան Նովհաննես սրկ-ին, նա *նլիս* անպետք դուրս եկավ: Տազիվ Էջմիածնում 6 ամիս մնաց, հակառակ նրան, որ 2 տարի անդադար դիմում էր տալիս եւ Տայկագուն սրբ-ի, խեղճ մարդուն գլուխն էր ցավեցնում: Այս անպետք սարկավագը գրեթե առանց պատճառի փափագեցավ հեռանալ Էջմիածնից ու վերադառնալ Տալեպ: Անմիջապես իր փափագը իրականացավ եւ վերադարձավ Տալեպ: Այս անգամ չուտեր-չխմեր կսկսի Տայաստանի եւ Ս. Էջմիածնի հասցեին անհիշտ զրպարտություններ անել եւ դաշնակցական մի քանի անմիտների խրախուսանքով ու վարձատրությամբ Տալեպում մի քանի հակադասախոսություններ կտա, հետո ամենից գեղեցիկը, պաշտոնապես իբր դասախոս Անթիլիասի դպրեվանք կհրավիրվի: Դու մտածիր, թե Անթիլիասը ինչ օրի է հասել, որ այդպիսի մի անպարկեշտի դասախոս է հրավիրում: Գալենտերյանները՝ տեր եւ տիկին, սրանք իր Էջմիածին երթի համփան էին վճարել, զրպարտանքով նրանց հասցեին ասել է, որ նրանք պատճառ դարձան եւ ինձ համոզեցին, որ գնամ Էջմիածին:

Միրելի Ասատուր, Կիլիկյան վարժարանից այդպիսի պտուղ դուրս

չէր գար: Անպայման նրա արյունը խառն է, հայկականություն չկա, նշմարտաստիություն չկա եւ ամենակարեւորը՝ ուղղամտություն չկա:

Միտք ունեն Անթիլիաս մի նամակ գրելու, հասկանաք տեսնենք այնտեղ արդյոք իրեն ինչ պաշտոն են տվել: Լավ կլիներ, որ երկերեսանիության կարիքը եղող մի պաշտոն տային:

Այսքան երկար գրելով կարծում եմ, որ ժամանակդ կխլւն: Ինչ անենք երկինքը երբեմն ամպոտ է եւ երբեմն էլ արեւոտ, աշխատում ենք որ Տայոց եկեղեցու երկինքը հավետ պայծառ ու արեւոտ լինի:

Մասնավոր ջերմ բարեւներ նոր հարս ու փեսից ձեզի, եթե կարելի լիներ ձեր գալը սիրով կհրավիրեինք: Մաման, պապան, Մարին ու Արաքսին հատուկ բարեւում են ձեզ:

Ցանկանում եմ, որ ձեր Տայկազյան միությունը ծաղկի, զորանա քու եւ Վիվիենի, եւ ձեր նմանների սիրալիր աշխատանքով, ցանկանում եմ հաջողությո՛ւն, հաջողությո՛ւն:

Եղբայրաբար՝ Տակոբ սրկ Պոզապայլան

Տ.Գ. Ամսագրի հաջորդ թվում հուսամ կտեսնեք ձեր մասին գրվածը: Իմ կողմից Ասողիկ սրբ-ի աջը առ, շատ բարի եկեղեցական է: Երանի իրեն:

Չմոռանամ ասելու, որ հայտագրում Տովմ. Թումանյանից մի արտասանություն կար կատարմամբ Peter Alexy-ի, կարծում եմ, որ կեսրայրդ կլինի, եթե այդպես է, իմ կողմից շնորհավորե:

Պոզապալեան Տակոբ Գ.



/ 28 մարտի 1960թ., Մայր Աթոռ /

Միրելի Ասասուր,

Նուսամ այս նամակս քեզ կգտնի առողջ եւ ուրախ վիճակում: Կներես, որ նամակներս ուշ-ուշ եմ գրում, ժամանակի թանկությունը ինչպես քեզ համար է, կարծես ինձ համար էլ է:

Եթե հաջողիք Տայաստան այցելել, սրտանց կփափագեմ որ իրագործվի, կարծեմ Տայաստանի ամենագեղեցիկ շրջանին է, որ տեսած կլինեք: Արդեն գարնան արեւը տաքացնում է մեր կոնակները, եղբայր,

իսկապես դյուրին չէ ցուրտ երկրում ապրելը, քեզի էլ երանի չեմ տար, որովհետեւ չափազանց տաքն էլ հաճելի չէ:

Միրելի Ասատուր, երեկ կիրակի ամսի 27-ին առավոտյան ժամը 9-ին Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը 6-7 շաբաթ Երեւանի առաջնակարգ հիվանդանոցներից մեկում պառկելուց հետո, հավերժական քուն մտավ: Կյանքը ձեզի եւ խնամիներին:

Վահան Սրբազան երկար ժամանակ տառապում էր միզարգելութունից: Մեր եպիսկոպոսներից մին՝ Վարդան Սրբազանը, որը Վեհափառի հետ արտասահման էր եղել, գործողություն եղավ 4-5 ամիս առաջ 82 տարեկան հասակում եւ ազատվեցավ, դրանից ոգեւորված Վահան Սրբազան անպայման փափագեցավ երթալ եւ գործողություն անել: Դժբախտաբար ինծի վիճակվեց իրեն հիվանդանոց ուղեկցելու պարտականությունը, ես զգում էի, որ Վահան Սրբազանի համար վատ կլինի գործողության ենթարկվել, քայց ճիշտը խոսեսնք ես կարո՞ղ էի եպս. մարդուն խելք տալ կամ հրաժարել տալ այդ մտքից: Ինչ որ է հիվանդանոցում մեզ սիրով դիմավորեցին եւ Սրբազանին հատուկ մի սենյակ տվին:

Անցյալ շաբաթ Նայկազուն եպս-ի հետ հիվանդանոց գնացինք իմանալով, որ վատ վիճակում է գտնվում Սրբազանը: Իսկապես, որ Վահան Սրբազան մահվան հետ էր պայքարում կամաց-կամաց տեղի տալով: Մի կես ժամ քովը նստանք, ես քեզանից նամակ ստացել էի հաղորդեցի ձեր բարեւները իրեն շատ ուրախացավ, ձեր տունը իր տունն է համարում, ինծի հաճախ պատմած էր աներհայրի մասին, տիկնոջը Վիվիենի մասին եւ ընդհանրապես:

Սրբազան հոր երկար չխոսեցնելու նպատակով հեռացանք իրանից: Ես իմանում էի, որ Վահան Սրբազանին այլեւս ողջ չեմ տեսնի...

Եվ ահա՛ վաղը չէ մյուս օր պիտի ամփոփենք մարմինը Սբ Գայանե վանքի դարավոր պատերի մոտ:

Միրելի Ասատուր, կարծես ձերոնք շատ մոտից ծանոթ եմ Սրբազանին չէ՞, իմ կողմից իրենց վիշտը փարատիր, ես իրենց տեղը հանձն կառնեմ ափ մը հող խառնել Սրբազանի աճյունին:

Եթե գործողության չերթար, անպայման 4-5 տարի եւս կապրեր, արդեն քավական կազդուրված վիճակում էր: Ինչքան լավ կլիներ որ ձեր գալուստին ինք ողջ լիներ, քո եւ Նարինեի գլխին ձեռքը երկարած հայրաբար ձեզ օրհներ:

Տիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի:

Սիրելի Ասատուր, մեծերը կամաց-կամաց մահանում են իրենց գործը մեզի են թողնում, արդյոք մենք երեխաներս կարող ենք ի կատար ածել Սուրբ պարտականությունները:

Կյանքը ձեզի եւ մեզի:

Ջերմ բարեւներ ընտանիքիս բոլոր անդամների կողմից, բարեւիր նաեւ ծանոթներին, ինչպես տեր եւ տիկին Նաջարյաններին:

Եղբայրաբար՝ Տակոբ սրկ. Պոզասպայան



/ 25 օգոստոսի 1960թ., Ս. Էջմիածին /

Սիրելի Ասատուր,

Ստացա 16 օգոստոս թվակիր նամակդ՝ Լոնդոնից:

Նամակդ կարդալով անմիջապես գործի անցա, դիվանատան մեջ կար նաեւ ձեր կողմից գրված եւս մի նամակ նույն հարցի վերաբերյալ, որուն պատասխանել էր Սահակ Արքեպիսկոպոսը:

Սիրելի Ասատուր, վիզայի հարցը պետք է որ անպայման Վեհափառը կարգադրի, հավանական է, որ նա էլ մի ամիս վերջը հայրենիք վերադառնա, այնպես որ այս հարցում ձեր գործը ուշանում է:

Տայրենիք այցելելու մի ուրիշ ճանապարհ եւս կա, որը մի քիչ ձեր վրա թանկ կնստի, այն էլ տուրիստական գծով գալն է: Այդ հարցով պետք է դիմել Լոնդոնում գտնվող հյուպատոսին: Այստեղ գալուց հետո դյուրին է ժամանակը երկարաձգել:

Նորեղբորդ աղջիկը, Մարի Նշանյանը հայրենիքում տեսա, կարծես լավ տպավորությամբ է մեկնած, մի քանի անգամ էլ Էջմիածին էր եկել: Արտասահմանից եկող տուրիստները պետք է անպայման Վեհափառ հոր այստեղ գտնված ժամանակ գան:

Սիրելի Ասատուր, հակառակ պարագային եթե պատահի որ ձեր հայրենիք գալուստը չկարգադրվի, մի նեղանաք, անպայման եկող տարի կայցելեք:

Ի միջի այլոց պետք է ասեմ, որ Վեհափառը իր վերադարձի ճանապարհին հանդիպելու է Paris, եթե պատահի որ այստեղ չկարողանաք գալ, անպայման զինքը տեսեք Փարիզում, այդ հարցի մասին խոսեցեք երես առ երես:

Այս տարի ավարտեցի հոգեւոր ճենարանը, այժմ աշխատում եմ քեզիս վրա, որ հոկտեմբերի 1-ին պետք է քննիչ հանձնաժողովին հանձնեմ եւ ապա 15-ին էլ՝ քննություն տամ: Կարծես նյութս ծանոթ է քեզ. Օրմանյան սրբազանի կյանքի ու գործունեության մասին է, արդեն աշխատանքիս կեսը ավարտել եմ, մնում է հարատեւ աշխատել երկրորդ կեսի վրա:

Մեզի մեծ երջանկություն են պատճառում Վեհափառ Տայրապետի հաջողությունները Ամերիկյան երկրներում, արդեն Ջինքը կարոտել ենք, գիտեք, վանքում կարծեք դատարկություն է տիրում:

Երանի թե կարողանայի ձեր վիզայի հարցը կարգադրել, երանի թե Վեհափառը այստեղ լինէր: Ես այդպես մեծ գործեր չեմ կարող կարգադրել դեռեւս:

Սրտագին բարեւներս հարազատներիդ եւ քեզի, մաղթում եմ, որ Աստված հաջողություն տա ձեր այցի հարցում:

Եղբայրական կարոտով՝

Տակոբ սրկ:

Ն.Գ. Մի շաբաթ առաջ ստացա ձեր ուղարկած Լոնդոնը պատկերող քարտը: Անպայման կփափագեմ ունենալ «Տամո եւ Ֆատիլե» գործը, շատ հետաքրքիր է երեւում վերնագրից դատելով: Եթե քո գրքի մասին գրախոսականներ լինեն, անպայման կտրոնով նամակի մեջ կուղարկեմ:

Նույն



/ 17 մարտի 1962թ., Լոնսոն /

Սիրելի Ասատուր,

Շատ կցավիմ նամակիս ուշացումին համար: Ստացած եմ 5.01.1962թ. սիրելի եւ հետաքրքրական նամակդ: Նոր Տարվան արձակուրդիս առիթով ժընեւ հրավիրված էի եկեղեցական պարտականության համար: Վերադառնալես ետք քննության պատրաստություններով զբաղված էի: Եվ դուն գիտես, թե ինչ է նշանակում Լոնդոնի համալսարանի մը համար, ահա պատճառը ուշացումիս:

Երեկ ցավով իմացա Անգլիոյ մեջ մահացած է Ձեզի սիրելի դուկ-



տոր Ալթունյանի մասին: Կհիշեմ, որ խնամիական կապ մը ունի Ձեզի հետ, հավանաբար ցարդ իմացած ըլլալու ես այս գույժը: Յավակցութիւններս:

Ասողիկ Սրբ-ի մեկնումը ինչ եղաւ, վերջնականորեն մեկնե՞ց արդե՞ն, ո՞վ փոխարինեց զինքը: Ետեւը կուսակցական կամ Անթիլիասական բարդութիւն մը կա՞: Տ. Կորյուն Մանուէլյան իմացա որ Ադիս Աբեբա իմ տեղս պիտի մեկնէր, արդե՞տք հետո փոխվեցա՞վ ծրագիրը եւ Կալկաթա պիտի գա, մանրամասնութիւններէն լուր չունեմ: Կհաստատեմ ըսածդ Ասողիկ Սրբ-ի մասին, իսկապէս խոնարհ եւ հեզահոգի եկեղեցական է:

Տոս օրերը արտակարգ ցուրտ ըրին, այժմ հաճելի է: Ժամանակը կթո՞ի. երեք տարին պիտի լրանայ Լոնդոն գալուս: Տամալսարանի քննութիւններ կունենանք Տունիսին, որմէ ետք պետք է որոշ լինի

ուր մեկնելուս հարցը. ցարդ մի քանի հրավերներ ունիմ, սակայն նախ Կահիրե պիտի գնամ ծնողացս մոտ, ապա կորոշվի:

Ինչպես է ազնիվ տիկինդ՝ Նարինեն, մասնավոր ողջույններս հանիս հաղորդել իրեն եւ Ալեքսյան ընտանիքին: Դու ինչպես ես, գործերդ վստահ եմ հաճույքով ես կատարել եւ անում ես ամեն ինչ: Տայաստանյան արվեստագետների ներկայությունը կվայելեք, սքանչելի: Առաջիկա աշնանը Ազգային եկեղեցական ժողովը մեզի կսպասի Էջմիածնում, ինչպես նաեւ Մյուռնոփհենք, արժե սպրտիլ... ինչ ես կարծում:

Տ. Մեսրոպ գնաց Վիեննա ուր կմնա եւ կաշխատի իր ավարտահանը վերջացնել: Տայր Ներսեհ Բելգիա կուսանի: Շատ ուրախ պիտի ըլլամ քեզմե նամակ ստանալուս, վասնզի հաճելի են խոսքերդ եւ հետաքրքրական լուրերդ: Կձայնակցեմ քեզի հետ՝ կամուրջը թող չիյնա, փուլ չգա:

Կրկին հարգավից ողջույններս Աներհորդ, մորդ, տիկնոջդ:

*Մնամ սիրոյ համբուրիմ՝
Ներսես վարդապետ*



/ 11 դեկտեմբերի 1964թ. /

Սիրելի Ասասուր,

Շատ ուրախ եմ, որ վերջապես եկար Անգլիա, միանալու համար թանկագիններուդ, որոնք ակնհայտ սպասում էին ճանապարհիդ:

Շատ ցավեցա այսօր, որ երկար չկարողացա խոսել հետդ, որովհետեւ ուսանողությունը ավտորոս էր նստած եւ ճամփա ելնելու վրա էինք, երբ մեկը եկավ ինձ կանչեց ասելով, որ հեռախոսի մոտ երթամ: Պարզապես 40-50 հոգի սպասեցրած չլինելու համար է, որ շատ կարճ եղավ խոսակցությունս... հուսամ չնեղվեցիր:

Ամսի 19-ին մեր դպրոցը կփակվի, չեմ կարծեր, որ ուղղակի Լոնդոն կկարողանամ գալ, հակառակ որ շատ կփափագեմ տեսնել. կաշխատեմ: Լոնդոն որ գամ հավանաբար 4-5 օրվա համար կլինի եւ մեր Անգլիական միաբանությունը մի շենք ունի Holland Park-ի մոտերը. հավանաբար դրանց մոտ ապրեմ:

Կարծեմ անսպառ նյութ կա խոսելու երբ իրար հանդիպենք: Շատ

հավանեցի տիկնոջդ, շատ անուշ դուստր ունես, Աստված պահի:
Թանկագին են նաև աներհայրդ եւ մայրդ:

Անընդհատ քո մասին էի մտածում այս շրջանիս, թե արդյոք ինչո՞ւ
այսքան ուշացար: Բարի եկար, կարն ժամանակից կտեսնվենք:

Տայր Ներսես վրդ.



/ 1 փետրուարի 1965թ. /

Սիրելի Ասասուր,

Ցավում եմ, որ ցարդ չկարողացա մի երկտողով հաստատել որ
հասած եմ ապահովապես դպրոցս: Կանոնավոր դասընթացքը
անցյալ երկուշաբթի սկսավ: Արդեն եռանդուն աշխատանքի հունին
մեջ ընկանք:

Առաջին նիստին՝ Ապրիլ 24-ի վարչության 30 անդամները ի՞նչ
որոշեցին: Վեհափառը որոշապես ե՞րբ է գալիս, իբր թե սրբազանը
ինձ պիտի գրեր այդ մասին, բայց կարծեմ զբաղված է լինելու: Տուսամ
ամսաթերթի գործը հաջողապես ընթանում է առանց արգելքի:
Տնեցիները ինչպես են: Մաման, պապան, Վիվիենը եւ անուշիկ Կա-
րինեն: Բոլորին սրտագին ողջույններ:

Ո՞ր է այս Վանտան, անցյալ շաբաթ Մանչեսթր էի եւ հոն չէր: Ուրեմն
տեսնելու առիթ չպիտի ունենամ:

Տուսամ ամեն ինչ կատարյալ է Լոնդոնում ապահովաբար պատշաճ
ընդունելության պիտի արժանանա Վեհը: Եթե նորություններ ունես
Վեհի գալստյան մասին, գրի՛ր առանց հապաղելու:

Մեր տնեցիները շատ-շատ բարեւում են բոլորիդ:

Մնամ եղբայր՝ Տայր Ներսես վրդ.

Ն.Գ. Քեզ երեք հրավեր, եթե ժամանակ գտնեք գնացեք:

Նույն



Շատ սիրելի բարեկամներ,
Պետրոս, Ֆլորա, Վիվիեն, Ասատուր եւ Կարինե Ալեքսյան եւ
Գյուզելյաններ,
Լոնդոն

Ազնիվ եւ անմոռանալի բարեկամներ,

Կարծում էի թե արդեն Ձեր կողմն մոռացության տրված եմ շատոնց. ձեր Լոնդոն հաստատվելն էի վեր, ոչ մեկ լուր կամ խապրիկ չունեցա ձեզմե, ինչ որ տխուր ու մտահոգիչ էր ձեր լռությունը:

Ահա վերջապես ձեր Քրիսմըս քարտը եկավ մասամբ փարատելու մշուշը մեր մտահոգության եւ կջանամ վերահաստատել մեր երկար խզված հաղորդակցության ոսկեթել կապը: Սակայն դեռ չունեմ տրամադրությանս տակ ձեր նոր բնակության հասցեն: Կամսարը, ձեր եւ մեր նոր բարեկամը խոստացավ բերել ձեր նոր հասցեն, բայց դեռ կուշանա ան, ես կջանամ այս նամակս ձեզի հասցնել մի ուրիշ հասցեով որ կարծես թե ձեզ անծանոթ մեկը չէ արդեն:

Պ. Պետրոսը ըստ իր բարի սովորության պիտի ծիծաղի հիմա, իմ նամակս կարդալով, ինչ փույթ սակայն մենք միշտ կորսված բարեկամներու հետքերով կջանանք, աջ ձախ, ետ առաջ, վերջապես մի տեղ կհասնինք ու կբռնենք իրենք եւ իրենց օձիքը բաց չենք թողներ, հին բարեկամները հարգի եւ հանելի եւ հին գինիի պես ու մենք չենք հրաժարիր այդ բարձր հանույքեն, դուք ինչպե՞ս...:

Վերջապես հեռացաք ընդմիշտ տոթակեզ ավերեն Գանգեսի, ուր գրեթե ձեր կյանքի երկար ու բեղուն տարիները անցուցիք, սակայն եւ տխուր, եւ փառավոր հուշերով հարուստ անցյալ մը անհամար թելերով կպարավանդեն ձեր միտքն ու հոգին, մանավանդ որ դեռ ձեր կեսը հոն է: Այվընը, Սիլվան, մանավանդ թռռները այնքան քաղցրիկ..., սակայն եւ լանք, եւ երթանք, այս է կյանքի պահանջը:

Այժմ, կսպասենք ձեզի Մայր Աթոռում եւ Մայր Տայրենիքում ընտանեք, գիտենք որ Ասատուրը շուտով գարնան ծիծեռնակներուն հետ դարձեալ պիտի այլեցե մեզի, կուզեինք սակայն, որ բոլորդ միասին գայիք, ինչպես որ խոստացած էիք, որքան ուրախութեամբ պիտի ողջունենք ձեզի հոս մեր մօտ, Տայաստանի պայծառ երկնքին տակ, իբրեւ մեր բոլորին սիրելի հարազատները:

Շատ հաճախ կհիշենք ձեզի Վեհափառին հետ, որը այնքան սիրով

կապուած է ձեզի եւ ձեր ընտանիքի անդամներուն հետ, վստահ եմ, որ այս օրերս երբ Տայոց Տայրապետը ձեր մեջն է անգամ մըն ալ, առիթը ունեցաք հանդիպելու իրեն եւ առնել իր հայրապետական օրհնությունը, վերադարձին կիմանանք ձեր մասին:

Գրեցեք մեզի ինչպես եք, ինչ գործ կընեք եւ ինչպես կապրիք ձեր նոր հայրենիքի մէջ:

Միրալիր ու կարոտալի ողջույններս ձեր բոլորին՝

Աղօթարար Տայր Ներսէս վրդ.



/ 15 փետրվարի 1965թ. /

Միրելի Ասասուր,

Ինչպես գիտես անցեալ հինգշաբթի էր, որ թողի Լոնդոնը եւ վերադարձա խշտյակս՝ Սրֆիլտ: Տոգով, սրտով այդտեղ էի տակավին եւ մտածում՝ Վեհի առօրյա գործերի մասին: Այսօր Բ2 է, հուսամ մեկնեցան: Մինչեւ թերթերու լույս տեսնելը անհամբերութենէս թերեւս ճափմ, մի քանի տող հուսամ վերջին օրերի մասին կգրես: Վանական կյանքը նույնն է, այս կյանքիս մեջ երբեք փոփոխություն մտցնել չեմ ուզեր, որպէսզի վերադարձիս չդժվարանամ, այսինքն՝ աչքս ետեւ չմնա: Մանավանդ այս պարագային ավելի դժվար թվեցավ, որովհետեւ անոնք հայրենի տուն կվերադառնային, որտեղ կարոտներիս հանգույցը կա կարծես: Վերադարձես ի վեր կարգին աշխատանքի չեմ սկսած, հակառակ որ գործ շատ կա: Տուսամ մի քանի օրից կյանքս իր բնական ընթացքը կվերագտնե: Մաղթենք:

Տուսամ բժիշկը Վանտային հրաման պիտի տա մեկնելու հեռավոր Կանադա: Չեմ կարծեր որ դժգոհած լինի բժշկի այս կարգադրությունից: Տուսամ հիշատակելի օրեր անցուց անցյալ շաբաթվա ընթացքին եւ վստահ եմ, թէ ձեզի որքան վարժված պիտի լինի որ գնալուց հետո ձեզի պիտի փնտրե:

Տիմա գանք ամենակարեւոր հարցին: Շնորհավորում եմ պապայի շքանշանը: Արժանի էր: Իրմով բոլորս էլ եւ ուրախացանք եւ հպարտացանք: Ավելի բարձր աստիճան չկա որ մաղթենք: Թող Աստված երկար ու երջանիկ կյանք պարգեւի իրեն, որպէսզի իր բարությունը, ազնվությունը եւ ծառայասիրությունը ուրիշներին եւս վարակի: Կնե-

րեք որ առիթը չունեցա հատկապես ձեր տուն գալու եւ շնորհավորելու, ուրիշ առիթով կգամ այդ պարտականությունը կատարելու համար:

Վեհափառ Տայրապետը հրահանգեց որ առաջիկա տարի ժընեւ չերթամ, այլ՝ ուսումն շարունակեմ Անգլիո մեջ եւ լեզուի ու գրականութեան հետեւեմ մի քիչ էլ: Չգիտեմ արդեոք իմ ուզածս դպրոցը պիտի կարողանամ գտնել, չեմ ուզեր ժամանակս պարապոթյամբ անցկացնել: Երեք հնարավորություն կա, Cambridge, Oxford կամ Lոնդոն: Կփափագեմ հայկական շրջապատից կտրվել եւ զուտ անգլիացիների մեջ ընկնել, կատարելագործվելու համար:

Տուսամ Արեգակի գործերը լավ են գնում: Ահա մարտ ամիսը մոտ է, կարծեմ թերթը չփակված մարտ պիտի լինի: Ողջույններս Գալստյանին, խեղճը շատ հոգնեց Վեհի գալստյան առթիվ:

Կարծես Կոմիտաս եւ Տ. Արսեն հոխացած վերադարձած կլինեն:

Սրտագին ողջույններս բոլորիդ, կհամբուրեմ Կարինեի աշուկներից:

Տարազատ զգացումներով՝ Ներսես վրդ:

Տ.Գ. Կարծեմ այս բոլոր փաթերթընէն Պսակ Սրբազան շահավոր ելավ:

Նույն



/ 22 փետրվարի 1965թ. /

Միրելի Ասասուր,

Քիչ առաջ Ասողիկ Սրբազանից ստացա մի նամակ եւ նույն ծրարում էր նաեւ ձեր հասցեին ուղեալ ներփակյալ նամակը:

Սրբազանը իմ նամակիս տակ ստորագրած է, ինչպես երեսում է մոռացմամբ չէ ստորագրած ձեր նամակը: Տաւանաբար նա ձեր հասցեն չէ ունեցել ու իմ միջոցով է ուղարկում: Ես ձեր հասցեն իմ պատասխան նամակով կուղարկեմ, դուք եւս պատասխանելիս չմոռանաք ձեր հասցեն:

Տուսամ ամեն ինչ կարգին է ձեզանում, եւ թերեւս լոնդոնահայ գաղութը ավելի խաղաղված է Վեհի այցից հետո:

Ե՞րբ կվերադառնաք: Ես մարտ 12-15 արձակուրդի մեջ եմ, եթե այս օրերին է հանդիպումը, բարի եղիր ինձ հայտնել:

Լավագույն մաղթանքներ եւ սիրալիր ողջույններ բոլորիդ եւ պաշիկներ Կարինեին:

*Մնամ հարազատ՝
Ներսես վարդապետ*



/ 8 ապրիլի 1965թ. /

Միրելի Ասասուր,

Ժամանակին ուրախությամբ ստացա Վիվիենի աղվոր նամակը ջերմությամբ ու հարազատի ոգով գրված: Նա ինձ հավաստիացնում էր, որ դու եւս ժամանակ գտնելու դեպքում ինձ մի քանի տող կգրես: Գիտեմ որ շատ զբաղված ես «Արեգակի» մարտի թիվն իսկ արդեն ցույց էր տալիս որ հոգով, սրտով գործին փարվել ես եւ ամսաթերթը բարձունքն ի վեր ես առաջնորդում, ապրես:

Դժբախտաբար ես եւս մի քիչ զբաղված լինելով զանց առի գրելը, վստահ լինելով, որ հարազատները հեռվից հեռու իսկ կկարողանան իրար հոգի կարդալ եւ շատ բաներ անխոս հասկանալ:

Ս. Զատիկի արձակուրդս մոտ է, կուզեմ անպայման լոնդոնահայության 24 Ապրիլի տօնակատարության ներկա լինել, հակառակ որ անուղղակի առաջարկություններ եղան Մանչեստրում, այդ առթիվ խոսելու, բայց մերժեցի: Վստահ լինե՞մ որ մի տեղ կունենամ Ապրիլի 24-ին այդտեղ սրահում: Մտադիր եմ Ավագ Շաբաթը Մանչեսթրում անցկացնել, եւ այդ շաբաթով ապրել իսկապես հիշելով նաեւ Ս. Էջմիածնի մեր հիշատակելի արարողությունները: Դպրոցական արձակուրդս մինչեւ մայիսի 8-ն է, եւ պետք է 6-ին դպրոց վերադառնամ:

Մինչեւ արձակուրդես վերադառնալը Լոնդոն կուզեմ անցկացնել, այսինքն մարտ 23-ից մինչեւ մայիսի 6-ը, եւ այս ընթացքին երկու անգլիական մայրապետարաններ պիտի այցելեմ 3 կամ 4 օրով, կուզեմ իրենց փորձառությունից օգտվել:

Այս օրերին ապուշ բաներ սկսած եմ ընելու. մի երկար պոեմ եմ գրում մեր նահատակների մասին, վերջին բաժինը մնաց, որ վերա-

ծաղկող հայրենիքի մասին է լինելու եւ դրանով կվերջանա: Երբ ես մի քան գրեմ, քննադատելու կարողությունս կկորցնեմ, մի ծայրահեղությունից մյուսին կերթամ: Լոնդոն հետս կբերեմ, որպէսզի տեսնես եւ դիտողություններդ ընես:

Տուսամ հանդերձ ընտանյոք լավ եք, պապան, մաման, Վիվիենը, անուշիկ Կարինեն, չմոռանամ նաեւ ձեր սպասուհին:

Սբ Ջատիկվա առթիվ բոլորիդ լավագոյն մաղթանքներ, բարօրություն ու քաջառողջություն: Վստահ եմ, որ օրերս սկսած են իմաստավորվել աշխատանքով ու տքնությամբ, քեզ եւս առաւել եռանդ եւ ամենայն բարիք:

Մերինները բոլորիդ մասնավոր կբարեւեն: Տիգրանուհին աղջնակով բախտավորված է, ինձ համար եւս այս անակնկալ եղավ, նախապէս չէին գրել:

Ջերմիկ ողջույններ բոլորիդ եւ Կարինեի աշուկներից համբուրիր:

Քո՛ Ներսէս վարդապետ:



/ 10 սպրիլի 1965թ. /

Միրելի Ասասուր,

Ահավասիկ դարձյալ դպրոցում եմ: Անցյալ հինգշաբթի այստեղից 14 հոգով գնացինք բողոքական վանական կյանք վարող մի հաստատություն: Տիանալի ժամանակ անցկացրինք, ամեն ժամանակ մտածում էի քո մասին, թե, եթե դիպվածով այստեղ լինեիր ինչպիսի անակնկալներ կարող էին պատահել: Ամեն երեկո հավաքաբար գնում էինք կանոնավորապէս Բաքոսին երկրպագելու եւ այնքան տակառ պարպվեցավ, որ Դիոգենես նշանավոր տակառաբնակը ուրախությունից փիլիսոփայելու կարողություն եւս տվավ բոլորիս:

Պատշաճ ձեւը նամակիս անշուշտ պիտի լիներ երկար-բարակ շնորհակալություններով սկսել, իմ անցկացրած քացառիկ հաճոյալի եւ ընտրանի օրերիս համար ի Լոնդոն, ձեր տնում: Ծատ երախտապարտ եմ բոլորիդ ինքզինքս պարտքի տակ կզգամ ինքնաբերաբար, այդ բոլորի համար որ վայելեցի:

Դարձյալ աշխատանքի շրջանը սկսվեց, արձակուրդներից հե-

տո այնքան էլ հեշտ չէ գրասեղանից չբաժանվելը: Մի քանի օրից կվարժվեմ:

Նուսամ կյանքը Լոնդոնում, հատկապես հայ կյանքը հուսադրիչ է: Նորություններ կա՞ն Սրբազանի մասին: Անցյալ կիրակին ինչպե՞ս անցուց:

Պետք է այս շրջանիս մի քիչ ավելի հավաքական աշխատանք կատարեմ ի մի բերելով այստեղի դասախոսությունները, որպեսզի ապագային կարողանամ օգտվել դրանցից:

Այս օրերս հայրենիքից նամակ չեմ ստացել: Սպասում եմ որ Վեհափառից պատասխան ստանամ: Չեմ մոռանա գրելու հայրիկի նվիրելիք նկարի նախագծի մասին:

Նուսամ հանդերձ ընտանյոք ուրախ եւ երջանիկ եք, ինչպես որ գտա ձեզ այդտեղ եղած օրերիս: Սրտագին ողջույններս բոլորիդ. չմոռանամ Բեկին եւ որդին եւ կարոտալի պաշիկներ Կարինեին:

*Անկեղծ զգացումներով, սողօթարար՝
Ներսես վարդապետ:*



/ 17 ապրիլի, 1965թ. /

Միբելի Ասասուր,

Շնորհակալություն նամակիդ համար եւ հրավերիդ: Բավական նորություններ ունեմ հաղորդելու երբ գամ ձեզի:

Նույս ունեմ որ ճիշտ որոշածս թվականին կգամ ձեզի:

Այժմ Մանչեստր եմ, այսօր Ավագ Շաբաթն է եւ ես եմ պատարագիչը կեսօրից հետո: Տեր Նայրը եւ ընտանիքի անդամները կողջունեն բոլորիդ, ես եւս քո ողջույնները փոխանցեցի իրենց:

Այստեղ է նաեւ Արսենը, նագով-տուզով ամբողջ ժամանակը անցկացնում է, իրականության մեջ մի քիչ հիվանդ է:

Ուրախ եմ որ «Արեգակ»-ի բացառիկը արդեն իսկ տպագրության մեջ է, վատահ եմ որ հաջող մի գործ կլինի:

Բավական խոսելու նյութ կա, մոտ ատենից կտեսնվենք եւ մի անգամ եւս շնորհակալություն հրավերի համար:

Սրտագին ողջույններ բոլորիդ, Քրիստոս Յարեալ ի մեռելոց:

Քո՛ Ներսես վարդապետ:



Միրելի Ասատուր,

Երեկ Peter Carapiet-ից մի նամակ ստացա, իր Սրֆիլտ եւ Մանչեստր այցելութեան մասին է, ընդ որում գրում է նաեւ որ դուն չափազանց զբաղված լինելով չպիտի կարողանաս գալ: Միթէ լոնդոնահայ գաղութի կյանքի ընթացքը իր ծիրից դուրս պիտի գա՞ քո բացակայութեամբ եւ կամ այնքան շատ ես Կարինէին կարոտում, որ ուզում ես շաբաթավերջոյ ամբողջութեամբ նրան փայփայելն՞ով անցկացնել: Այս մի առիթ է, լավ է գաս եւ այս վանքը տեսնես. կեսօրին այստեղ միասին կնաշենք, ապա կգնանք Մանչեստր, բարեգործականը մի հավաքույթունի կեսօրից հետո ներկա կլինենք եւ այս մի առիթ է ծանոթանալու Մանչեստրի փոքրիկ գաղութին, այս մարդիկը շատ քիչ առիթներով կարելի կլինի խմբել, այնպէս որ, որպէս «Արեգակ»-ի խմբագիր կրնաս կարծիք կազմել: Կսպասեմ որ գաս: Քնելու տեղ եւայլն կհարենք մի վախճար: Խնդրեմ իմ կողմից խնդրե Վիվիենին եւ պապային ու մամային, որպէսզի միայն երկու օրով կարողանան քեզմէ զրկվիլ:

Արդեւ պապային խնդրանքը նամակով հայտնել եմ Վենին այդ նկարի վերաբերյալ: Վեհափառը հունիս ամիսը անցկացնելու է Ռոմանիա եւ Բուլգարիա հովվական այցելութեամբ, իսկ օգոստոսը՝ օդափոխութեամբ Քիսլավոտցք՝ Նյուսիսային Կովկաս:

Այսքանով կամփոփեմ նամակս, հուսալով որ ի մոտս կտեսնեմ քեզ այստեղ:

Սրտագին ողջուններ ընտանիքիդ բոլոր անդամներին եւ փոխարենս համբուրիք անուշիկ Կարինէին:

*Եղբայրորեն
Ներսէս վարդապետ:*



Միրելի Ասատուր,

Ստացած եմ վերջին նամակդ:

Ահա քեզ ուղարկում եմ մի նյութ, եթէ հարմար գտնես տպե, ապա թե ոչ կրնաս պատռել ու նետել: Որպէսզի պատարագի մասին խոսելով տեղը անծանոթ չմնար մի քիչ էլ սկիզբը պատմականը ըրած եմ:

Առաջիկա երկուշաբթի Լոնդոն եմ գալիս Աստուծով: Տուսամ ամեն ինչ այդտեղ լավ ու բարվոք վիճակ ստանալու վրա է:

Տուսամ հանդերձ ընտանյոք լավ եք: Ջերմագին ողջույններս հաղորդե բոլորին:

Ողջույններ նաեւ պրն Տայկ Գալուստյանին, հուսամ քաջառողջ է եւ նույն եռանդով շարունակում է իր օգտաշատ գործը:

Այսքանով կփակեմ, համբուրիք իմ կողմից Կարինեի աշուկներից:

Մնամ եղբայրդ՝ Ներսես վարդապետ

Տ.Գ. Տողվածին տակը ներկա դիր: Ինչ որ փոխել ուզես փոխե, թերեւս բաներ մը ավելացնես: Ես զբաղված ըլլալով չկարողացա լրջորեն կենտրոնանալ:



/ 8 դեկտեմբերի 1965թ. /

Տարգելի Ասատուր Գյուզելյան ի Լոնդոն

Սիրելի Ասասուր,

Տավանաբար ինձանից նեղացած կլինես այսքան երկար ժամանակ լուռ մնալուս համար: Ինչքան էլ որ փորձեմ արդարանալ կարծես չպիտի կարողանամ քեզ համոզել, բայց կարծեմ գիտես թե ինչքան ծանր է պարտականությունը որեւէ դայրոցի պատասխանատուի: Եվ ի վերա ամենայնի Վեհափառ Տայրապետի գահակալութեան տասնամյակը վրա հասավ եւ ավելի եռուն ու զբաղված շաբաթներ անցկացրինք: Փառք Աստուծո այժմ մի քիչ գործս թեթեւացած է եւ առաջին առիթով քեզ եմ գրում:

Կարդացի «Արեգակի» վերջին թիվը, որը նվիրված էր Վեհափառ Տայրապետի տարեդարձին, հոյակապ էր, Վեհափառը գիտցավ, որ դա քո գրչի պտուղն է: Ծնորհավորում եմ: Տուսամ պրն Գալուստյան լավ տպավորություններով վերադարձավ Լոնդոն: Այստեղ ես պետք է ասել, որ նա մեծ համակրանք է շահած:

Լոնդոնահայութեան ներքին խնդիրները մեծ տաղտուկ են պատճառում Տայրապետին եւ այդ իսկ պատճառով այս շրջանիս խիստ զբաղված է եւ երեւի մտադիր է մի քան անել: Զգիտեմ այս խնդրի մասին նորություններ, հետաքրքրական պիտի լինեն քեզնից լսել եթե կան:

Նամակով չէի շնորհավորել ձեր նորածինը, փեսաներիդ թիվը ինչպես տեսնում եմ ուզում ես շատացնել, վատ ընթացք չէ: Ինչպես են արդյոք տնեցիք, մերոնք շատ հավանել էին աներհորդ, այդ միայն մեր կարծիքը չէ, այլ նաև Վեհափառի: Ձերմագին ողջույններս բոլորիդ, հաճախ հիշում եմ ձեզ, եւ ձեր ընտանիքի հարազատությունը ու ջերմությունը:

Ահա Նոր տարին մոտենում է, ինքնաբերաբար մտքով ձեզ մոտ եմ փոխադրվում, հիշելով անցյալը, որ այնքան հիշատակելի անցավ: Սրտանց մաղթում եմ բոլորիդ այս տոների առթիվ քաջառողջություն:

Ընդունեցեք նաև մերոնց բարեմաղթությունները:

*Մնամ միշտ հարազատ եւ եղբայր եւ աղոթարար՝
Ներսես վարդապետ*



/ 24 հոկտեմբերի, 1966թ. /

Ապնուսիայլ սիկին Վիվին,

Շնորհակալությամբ ստացա Ձեր ջերմիկ նամակը շնորհավորելու համար ծայրագույն վարդապետության աստիճանի ստացումս, շատ երախտապարտ եմ ձեր ուշադրության համար: Ամեն նոր աստիճան նոր պարտավորանքի տակ է դնում ինձ:

Շատ ուրախացա լսելով ձեր առօրյա կյանքի մասին, այս աշնան այստեղ Ասատուրին էինք սպասում, բայց դժբախտաբար այցը հետաձգվել է: «Արեգակ»ը զարմանալիորեն շուտ մար մտավ, Լոնդոնի մշուշի պատճառով հավանաբար: Ուրախ եմ, որ Ասատուրն իր ծրագրերն ունի հետագա գործունեության, կմաղթեմ իր ուսման մեջ նորանոր հաջողություններ: Կհուսամ նաև որ հետագային կկարողանա իր գիտությամբ ամպլիոն գրավել որեւէ համալսարանի հայկական բաժնում:

Շատ հաճախ մտադրվել եմ ձեզ գրել, բայց միշտ էլ հետաձգել եմ մտադրությունս, միշտ մտքով տեղափոխվում եմ Լոնդոն, մտածում ձեր մասին, հիշում եմ ձեր ընտանիքի այնքան ուշադիր հոգատարությունը իմ համեստ անձիս նկատմամբ, այս բոլորը անկարելի է որ մոռանամ:

Կզարմանամ թե ինչու այսքան երկար տեւեց ձեր բնակարանի վերանորոգումը: Նուսամ շատ շուտով կվերջանա եւ կվայելեք ձեր

սեպհական տան քաղցրությունը: Մանավանդ այժմ, որ ձեր ընտանիքը կամաց-կամաց ամփոփվում է Լոնդոնում, ինչքան լավ պիտի լինի ձեր հավաքական ընտանեկան կյանքը:

Մայր Աթոռում ամեն ինչ խաղաղ ու հանդարտ է: Տանախ հյուրեր ենք ունենում զանազան երկրներից, մի քանի շաբաթ առաջ Ռոմինիայի պատրիարքը եւ այժմ էլ՝ Եթովպիայի մի խումբ հոգեւորականներ: Աշխարհիկ հյուրերի թիվը անհամար է:

Ընդունեցեք հարազատներիս ու իմ կողմից քաջառողջության ու հաջողության մաղթանքներ, Կարինեի եւ Արմինեի աշուկներից կհամբուրեմ, Ինկրիտին ու Թանիային հաջողություն կմաղթեմ ուսման մեջ: Եվ բոլորիդ համար կաղօթեմ Իջման Ս. Սեդանի առաջ:

Տ.Գ. Սիրելի Ասատուր, իմ կողմից ցավակցություններ հայտնիր Այգոյին եւ Պողոսին, նրանց տան հասցեն կորցրել եմ եւ որքան երկար ժամանակ է չեմ կարողացած նամակ գրել: Իրենց հասցեն բարի եղիր ինձ ուղարկել, որպեսզի գրեմ:

*Մնամ միշտ երախտապարտ եւ անկեղծ զգացումներով
ձեզ հարազատ՝ Ներսես վարդապետ
Վերստեսույ Տոգեւոր նեմարանի*



/ 28 հունիսի 1967թ., Բուրենցսոֆ /

Սիրելի Ասատուր,

Տուսամ ստացած եւ 10 հուլիս թվակիրս, Լոնդոնի հարցին վերաբերող: Սպասում եմ պատասխանի, լավ կլինի որ Էջմիածին գրես, որտեղ կլինեն օգոստոսի կեսերին:

Վեհափառ Տայրապետի այցելությունը Տամաշխարհային Եկ. Խորհուրդին եւ միաժամանակ Ժնեւահայ գաղութին արժանավայել ու արդյունավետ անցավ: Վստահ եմ արձագանքներին հետեւած եւ եւ նաեւ մեզ հետ եւ եղած հոգեւին:

Վեհափառ Տայրապետի այցելութեան այս օրերին առիթը ստեղծվեց նաեւ տեսակցելու եւ զրուցելու ազգայինների հետ, մեզ հուզող զանազան հարցերի մասին: Անհրաժեշտ է, որ լինենք միասնական մեր նպատակների իրագործման նանապարհի վրա եւ մասնավորա-

պես Անթիլիասի ոտնձգությունները կասեցնելու գործում: Իրավ է, որ հայ ժողովուրդը ամուր կանգնած է իր հավատքի դարավոր վեմին վրա, որ Ս. Էջմիածինն է, սակայն այդքանը բավական չէ: Գործնականապես պետք է մեր ժողովուրդին կապենք մեզի, մեր խոսքը լսելի դարձնենք նրանց, մի խոսքով պետք է հովվենք նրանց:

Ահա թե ինչո՞ւ որոշվեցավ մի օրաթերթի հրապարակումը Փարիզում, որի բռնած ուղղությունը պայքարի ուղղություն չի լինելու, կուսակցական իմաստով, այլ լինելու է Սբ. Էջմիածնի եւ Տ.Բ.Ը. Միության տեսակետները արծարծող մի օրգան: Վեր կուսակցական կռիվներից եւ մանրուքներից: Վստահ եմ, որ դուրս ես այս օրաթերթի անհրաժեշտության եւ կատարելիք դերին կհավատաս: Վստահ եղի՞ր մոտ ապագային այս ծրագիրը կիրականանա:

Այս առթիվ հանույքն ունեմ հայտնելու, որ Վեհափառ Տայրապետի օրհնությամբ կազմված է պատասխանատու մի մարմին «ապահովելու» թերթի նյութական պետքերը եւ վերահսկելու նրա որդեգրելիք ուղղությունը եւ գործունեությունը: Այդ մարմնի նախագահն է լինելու Գերշ. Տ. Սերովբե Արքեպիսկոպոս Մանուկյան, իբրեւ ներկայացուցիչը Վեհափառին: Նախատեսված է որպես խմբագիր «Արեւ»-ի նախկին խմբագիրը՝ Է. Կոտալազյան: Վեհափառ Տայրապետի առաջարկով, քո անունը ես տրվեց, որպես փոխխմբագիր: Այս մասին Պրոֆ. Բ. Թովմասյան քեզի մանրամասնորեն գրելու է շուտով: Վստահ եմ, որ համաձայնությունը կտաս, դարձեալ սկսելու համար ազգօգուտ մի գործ: Ես անձնապես քո ուժերին կհավատամ:

Ընդունեցե՞ք իմ միջոցով Վեհափառ Տայրապետի օրհնությունները: Վեհը միշտ ձեր բոլորի մասին գովեստով կխոսի, որը ինձ ես հպարտություն կպատճառե:

Սրտագին ողջույններս փոխանցե մամային, պապային, Վիվիենին, սիրասուն բալիկներիդ աշուկներից կհամբուրեմ եւ բոլորին, Ինկրիտին, Տանիային կարծես այդտեղ եմ չէ՞: Տուսամ բաղտը կունենամ ապագային Լոնդոնում ձեզ ողջունելու:

*Երախտասպարտ զգացումներով մնամ եղբայր՝
Ներսես Ծ. Վարդապետ*

Տ.Գ. Տուլիսի 30-ին կմեկնինք Պրակա, կարճ հանգստից հետո Մոսկվա-Երեւան:



Միտելի Ասասուր,

Դեպի ժրնե՛ս Վեհափառ Տայրապետի եւ Տայկազուն Արքեպիսկոպոսի հետ ճանապարհորդության ընթացքին, ինձ համար հաճույք է քեզ եւ քո միջոցով ձերոնց գրելը: Տավանաբար ողջ առողջ եք եւ բալիկներդ մեծանում են: Տակառակ իմ քիչ գրելուս պետք է խոստովանեմ, որ հաճախ եմ ձեզ հիշում, երախտապարտ զգացումներով եմ լցվում, ամեն անգամ որ հիշում եմ լոնդոնյան իմ կյանքի օրերը:

Մեզ մոտ Ս. Էջմիածնում կյանքը խաղաղ է ու անվրդով: Ճեմարանում կյանքը խանդավառ է ու եռուն: Այս տարի տղաները լավ աշխատեցին: Չորս սարկավազ ունեցանք, սրանից հետո ամեն տարի 3-4 սարկավազներ կունենանք ավարտող: Աշխատում ենք միացյալ ուժերով եկեղեցասիրական ոգով ներշնչել մեր սաներին, որպեսզի հետագային հավատո զինվորներ դառնան: Այժմ ճեմարանի դռները փակել ենք երկու ամսով, ամառային արձակուրդի համար, սեպտեմբերին դարձյալ կարոտով կսկսենք ընդհատված գործը: Այս տարվա հուլիս-օգոստոս միացյալ համարը «Էջմիածին» ամսագրի նվիրված է լինելու հոգեւոր ճեմարանին, առ եւ կարդա, բավական հետաքրքրական նյութեր կան:

Տանույքն ունեցանք մոտ երկու շաբաթ առաջ Գերշ. Ս. Պսակ արքեպիսկոպոսին մեր մեջ ունենալու, ասուպի նման եկավ... Լավ տպավորություն չթողեց այստեղ մեր միաբաններին: Լոնդոնահայ գաղութի թեմակալի լուծման գործում էլ կարծես էջմիածնական դիրքի վրա չէ:

Այս տողերը քեզ գրում եմ մտերմաբար եւ խորհրդածությամբ, սակայն վստահ եմ որ սրանով կարտահայտեմ Վեհափառ Տայրապետի մտահոգությունները Ս. Էջմիածնի շահերից թելադրված: Լավ կլինի նաեւ որ Լոնդոնում այս մասին գիտենան քո միջոցով բոլոր այն սրտցավ ազգայինները, որոնք գտնվում են Պսակ Սրբազանի շուրջը:

Պսակ Սրբազան եւ հավանաբար իր որոշ գործակիցները իբրեւ ծրագրերի ձախողվելուց հետո, այժմ ուզում են Մայր Աթոռը մղել իրենց հակառակորդների դեմ, ակնկալելով, որ իրենց չկարողացածը Մայր Աթոռը ընէ Ս. Սարգսի խնամակալների դեմ: Շատ պարզ է, Ս. Էջմիածինը այսպիսի խաղի չի կարող գալ: Որպեսզի ապագային որեւէ թյուրիմացություն չստեղծվի եւ հստակ լինի Մայր Աթոռի տեսակետը, Վեհափառ Տայրապետը Պսակ Սրբազանին ուղեւալ մի նա-

մակով հայտնեց, ինչպես նաև Պսակի այցելության առթիվ խոսել էր Ս. Էջմիածնում, ամփոփումը:

Վեհափառի Պսակ Սրբազանին հղած (2 հուլիս 1967թ.) նամակի հիմնական կետերը հետևյալներն են.

Ա-Պսակ Սրբ կշարունակե մնալ իբրև հայրապետական պատվիրակ Անգլիայում,

Բ-Առաջիկա հոկտեմբերից հետո Պսակ Սրբ համաձայն իր հրաժարականին ազատվում է Ս. Սարգսի պաշտոնից եւ կոչվում Լոնդոնը օժտելու երկրորդ մի եկեղեցիով եւ կազմակերպելու Լոնդոնի Ազգային եկեղեցական խորհուրդի վարչական կյանքը եւ եկեղացական նոր համայնքը, անկախ Սբ Սարգիս եկեղեցվո եւ նրա շուրջ համախմբված ծուխերից:

Գ. Ս. Սարգիս եկեղեցին ունենալու է իր հոգեւոր հովիվը, պաշտոնի կոչված Խնամակալների կողմից, Վեհափառի հաստատումով: Խնամակալները կգործեն համաձայն Ս. Սարգիսի կանոնադրության Ս. Էջմիածնի իշխանության ներքեւ:

Վեհափառ Տայրապետը ջերմորեն փափագում է, որ Լոնդոնի կյանքի խաղաղ զարգացումով եւ հակամարտությունների մեղմացումով, հետագային հնարավոր կլինի միացնել Լոնդոնի զույգ եկեղեցիները եւ Մանչեստրի եկեղեցին, ծնունդ տալով թեմական մի կազմակերպության թեմակալ մի առաջնորդի իշխանության ներքեւ:

Վեհափառը փափագում է նաև որ Անգլիո ապագա առաջնորդը լինի այսօրվա հայրապետական պատվիրակ Պսակ Սրբազանը:

Վեհափառի անխախտ տեսակետն է, որ Լոնդոնի տագնապը պետք է համարել իր վախճանին հասած: Բոլոր նրանք, որ իսկապես հավատարիմ են Ս. Էջմիածնին, պետք է արթնությամբ հսկեն, որպեսզի կրքերը վերստին չբորբոքվեն երկու կողմից էլ: Մայր Աթոռը չի կարող կողմ լինել եւ ոչ էլ հայրապետական պատվիրակը:

Պսակ Սրբազան իր մեկնումի պահին, այն տպավորությունը թողեց որ ինքը համոզված չէ վերոհիշյալ սկզբունքների արդարացիությանը եւ թե հակված է առաջնորդվելու իր անձնական հակակրթությունից եւ շահերից, ինչ որ ճիշտ չէ անշուշտ: Պետք է նրա աչքերը բանալ, որպեսզի ուղիղ եւ հստակ հասկանա նոր իրադրությունը: Վեհափառը սպասում է որ պրն Պետրոս Ալեքսյանը, դուն եւ բոլոր Մայր Աթոռի

հավատարիմները գործուն աշխատանք տանեն կանխելու ապագա ամեն վտանգ:

Գլուխդ շատ ցավեցրի չէ՞, ոչինչ: Կարծես պետք էր քեզ գրեի այս բոլորի մասին, որովհետեւ վերջերս մեր հանդիպման ընթացքում Վեհափառի հետ այս էր նրա մնայուն մտահոգությունը:

Այժմ, ողջույններ ձեր ընտանիքի բոլոր անդամներին Սբ Էջմիածնից եւ օրհնություններ Վեհափառից:

Եթե ժամանակ ունենաս ինձ շուտ պատասխանելու գրի, հետեւյալ հասցեով Hotel Regina, Geneve, Swiss, մինչեւ հուլիսի 2:

*Կարոտալի համբույրով, եղբայրդ՝
Ներսես վարդապետ*



/ 30 հոկտեմբերի 1968թ., Երևան /

Սիրելի Ասասուր,

Պատահմամբ ես էլ այստեղ եմ, իմ ներկայությունս որոշ մի նպատակ եւս ունի: Շաբաթ օր նոյեմբերի 2-ին, կեսօրից հետո ժամը 2:30-ին Վեհափառ Տայրապետի մոտ եք հրավիրված՝ Դուն, Գերսամ Ահարոնյանը, Ժիրայր Նայիրին եւ Արտավազդ Պերպերյանը: Մենք վստահաբար հնարավորություն դժվար թե ունենանք նրանց մեկ առ մեկ հանդիպելու: Սիրելիս բարի եղիր հայտնելու նրանց, որ շաբաթ օր ժամը 2:30-ին սպասեն «Արմենիա» հյուրանոցի սպասասրահում, մեր մեքենավարը գալու է նրանց վերցնելու եւ Էջմիածին տանելու Տայրապետական սեղանակից դարձնելու նպատակով:

Նուսամ քեզ հետ կկարողանամ խոսել եւ բերանացի հայտնել այս բոլորը:

Ներսես վարդապետ



/ 1 սեպտեմբերի 1969թ. /

Միրելի Ասասուր եւ Վիվիեն,

Սոս տասը օր է վայելում եմ ձեր հարգի բարիքները: Այսօր երկուշաբթի ժամը 10-ին մեկնում եմ ժնեւ, Գիտեմ որ դուք էլ այսօր վերադառնալու եք տուն, բարի վերադարձ ձեզ:

Խորին շնորհակալություններս այս պատվի համար:

Սրտագին ողջույններս նաեւ մամային եւ պապային փոխանցեցեք, կաղօթեմ որ ողջ եւ առողջ լինեն եւ շատ երջանիկ հանապարհորդություն կատարեք հանդերձ ընտանեք դեպի Տայաստան:

*Միշտ հարազատի զգացումներով
ձեր՝ Ներսես վարդապետ*

Յ.Գ. Բանալիները այս թուղթի հետ թողնում եմ սեղանի վրայ:



/ 8 հունվարի 1970թ. /

Միրելի Ասասուր,

Շնորհակալությամբ ստացա պրն Պետրոս Ալեքսյանի եւ քո ուղարկած շնորհավորական քարտերը: Տավանաբար Նոր տարին եւ Ս. Օնունդը միայն պատճառը եղավ քեզ համար մի քանի տող ինձ գրելու այլապես՝ «աչքե հեռու, սրտե հեռու» է լինում:

Այս ամառ հուսամ օդափոխության այս կողմերը կուգաք: Ինչպես անցյալում եկել եք: Փետրվարին ուսմանս ընթացքը կավարտեմ եւ ժընեւ վերջնականապես կհաստատվեմ, այնտեղ հարկաբաժին մը ունենալով: Եթե հարկաբաժինս մեծ լինի ինձ մոտ կմնաք: Ըսեմ նաեւ, որ հավանաբար այս ամառ քույրս Մարին եւս մոտս գա, 6 ամիս մոտս ապրելու համար: Շատ լավ ժամանակ կանցկացնենք: Արդեն փոքրիկ Morris-mini մը ունիմ, շատ գոհ եմ, ամառվա շրջանին հնարավորություն կունենանք ամբողջ Չուիցերիան շրջագայելու:

Ուղարկած քարտիդ տակը գրել էիր, որ 160 սթերլինգ ունեմ մոտդ: Ամոթ է, պրն Ալեքսյանի փողը բարի եղիր իրեն վերադարձնել, իսկ մնացածը ըստ ձեր երկրի նոր թույլատրության կարող ես ինձ ուղարկել կարծեմ: Չեքով ուղարկիր եւ անունս գրիր այսպէս Rev. A. Bozabalian: Ռուսերեն լեզվի մեջ H չլինելու պատճառով անունս դարձել է

Աօր, դժբախտաբար տակավին ձեռնադրության անունը չեմ դրել մկրտութեանս փոխարեն:

Տամենայն դեպս, Ասատուր ջան, հուսամ բոլորդ ողջ եւ առողջ եք: Կաղօթեմ բոլորիդ համար: Սրտագին ողջույններիս թարգմանը եղիր պրն Ալեքսյանին եւ տիկին Ֆլօրային: Իվանին (Այվըն) տիկնոջը եւ անուշիկ բալիկներին: Ողջունիր Վիվիենին եւ անուշիկ ձագուկիդ աչուկները համբուրիր իմ փոխարեն:

Մաման գալեն հետո ասում են որ Տայր Արսին էլ ավելի է ծանրացել, կարծեմ երկու իմաստով է, առաջինը՝ երեւի մի քիչ լրջացել է, իսկ երկրորդը՝ զորս դու պատվիրել էիր՝ ուտելով: Երկրորդին ավելի կհավատամ: Բարի ախորժակ: Անցյալները ինձ գրած մի նամակում ասում է, որ Լոնդոնն էլ սկսել է փոքր գալ իրեն հարմար: Եղբայրդ ո՞ր քաղաքը կդիմանա այդ ախորժակի դիմաց:

1960 թվականին երբ Մոսկվա հետը ուսանելու գնացինք, Պարզեւ եպիսկոպոսը մեկ շաբաթ վերջ Վեհափառ Տայրապետին մեր մասին զեկուցագիր նամակին մեջ ավելցուցած էր, որ Արսենիի գալով Մոսկվայում հացը պակասել է:

Բարեւիր բոլոր ծանոթներին եւ հարազատաց:

Մնամ բարի ցանկությամբ սրտակից եղբայր՝

Ներսես վարդապետ:



/ 7 մարտի 1970թ., Ժընեւ /

Սիրելի Ասատուր Գյուզելյան ի Լոնդոն,

Սիրելի Ասատուր,

Արդեն «Էնսթիթի Էքիմենիք»-ի ընթացքը ավարտեցի: Մեկ շաբաթ է որ Ժընեւ հաստատված եմ, տուն չունեմ, հայկական պանդոկ մը կայ ազնիվ տեր մը ունի եւ ստիպված ազգի սիրույն տիրոջ վրայ բեռ եմ լինելու: Պիտի հարցնես, որ տուն չկայ որ երթամ, խոսքին բացը, չկա: Տույս ունեմ սենյակ մը վարձել ընտանիքի մը մոտ եւ մի քանի ամիս այնտեղ քաշքրտուիլ մինչեւ արեւը մեր վրան ալ փորձե ծագել: Եկեղեցին հողաբաժին ունի ահագին մեծ տարածությամբ, բայց նոր ծախսի եւ նոր մտահոգության պատճառ պիտի լինի դա:

Տայր Արսենին 20 Սթերլինկ բարի եղիր տալ, եթե այս օրերին փողը

ինձ չես ուղարկել: Իր ձայնապնակների հաշվին եմ տալիս այս գումարը, ինձ ուղարկել էր ասոր անոր իր պրոպագանդա ըրինք նուեր տուինք, ծախել չէի կարող:

Գաղութիս Գանձապահուհին Օր. Արմինե Տայան, Մարտ ամսի 12-ին Լոնդոն է գալիս, եթե կը կարծես որ որեւէ գումար չես ծախսած եւ մնացած է, բարի եղիք գոց պահարանով Տ. Արսենին տալ, որպէսզի նա էլ հիշեալ օրիորդին հանձնե:

Տուսամ հանդերձ ընտանեոք լավ էք: Սրտագին ողջույններս Տայրիկին եւ Մայրիկին հաղորդե: Մի մոռանար խնդրեմ Այվընը շատ ազնիվ Տիկինը եւ անուշիկ բալիկները: Վիվիենին եւ քեզ կարոտալի ողջույններս, իմ կողմէ բալիկներիդ աչուկներից համբուրիր:

Վստահաբար իմացած կլինես որ Վեհափառը Մայիս ամսին այցելութեան է գալիս Տոմ առ Պապն: Ապա Ֆրանսա է գնալու այցելութեան հյոսիսեն մինչեւ հարավ: Աստուած ուժ պարգեւե, եւ հաւատը չի պակսեցնե: Տավանաբար մենք եւս հրավիրենք, նկատի ունենալով Իր այնքան մոտիկությունը քաղաքիս եւ գաղութիս: Վստահ եմ, որ այս առթիվ շնորհ կընես մինչեւ Փարիզ առնվազն իջնել:

Մնամ սիրով եւ կարոտով

Քոյդ՝ Տայր Ներսես վրդ

Յ.Գ. Եթե կուզես օրդ. Տայանի տուն հանդիպել Լոնդոնի հասցեն հետեւեալն է 3 կամ 4 օրուս համար:

Mrs H. Beghian
3 Holmbush Road
Putney
London S.W. 15
Tel Put 3817

Տ. Արսեն օրիորդին ծանօթ լինելու համար զայն նշած եմ նամակի մեջ:



Ըստ սիրելի Ասատուր եւ Վիվիեն,

Տ. Ներսեսից գոհունակությամբ եւ ուրախությամբ լսեցի, որ Արմինեն ամուսնանում է հուլիսի 11-ին: Իսկապես մեծ է ուրախությունս, միակ մաղթանքս այն է, որ Արմինեն եւ իր ամուսինը լինեն բախտավոր եւ Աստուծո շնորհները նրանց վրայից չպակասի:

Սիրելի Ասատուր, պրն Մարտին Տարությունյանը Տայաստանի Trade Union-ի նախագահն է, մեր ընտանիքին շատ մօտ կանգնած բարեկամ, հանգուցյալ տիկինը (Աստուած հոգին լուսաւորի) քրոջս Մարիի ընկերուհին էր: Տավանաբար որեւէ բարոյական աջակցության պետք ունենա, խնդրեմ օգնիր հնարավորության դեպքում:

Տանդերձ ընտանյոք մաղթում եմ բոլորիդ հաջողություն եւ երջանկություն: Աչքերնիդ լույս, տարոսը Կարինեին:

Երանի մենք էլ Ձեր ուրախությանը ուղեկից լինեիմք:

Մնամ եղբայրական սիրով քո հարազատ՝

Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյան



Սիրելի Ասատուր, Վիվիեն եւ ընճանիֆ,

Խոր վշտով իմացանք Ձեր սիրասուն եղբոր Լեւոն Գյուզելյանի մահվան մասին: Մենք եւս, որպես սգակիր հարազատներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Տանարում հոգեհանգստյան մասնավոր պաշտոն կատարեցինք եւ աղօթեցինք հանգուցյալ Լեւոնի հոգվո խաղաղության համար:

Թող բարին Աստուած մխիթարություն պարգեւի բոլոր սգավորներին եւ հատկապես Ձեզ: Թող Տերը հանգուցյալ Լեւոնի հոգին արժանացնի երկնքի արքայության: Մենք բոլորս անցավորներ ենք այս աշխարհում, հավանաբար այն երջանկությունը, որ այս աշխարհում չունեցանք, մեզ համար վերապահուած է անդենականում:

*Ձեր վշտակից հարազատ Պոզապալյան ընտանիք եւ
Ներսես արքեպիսկոպոս
Մայր Աթոռ Ս. Էջմիածին*

Յիշատակումն ննջեցելոց

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա

Քրիստոս Որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ, գթա քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց: Եւս առաւել յիշեա Տէր՝ զհոգիս՝

Նորոգ հանգուցեալ Կիւզելեան

Լեւոնի ծառայի քո:

Տանգո Տէր զհոգի նորա ի լոյս երեսաց Աստուածութեանդ քոյ եւ Կիւզելեան գերդաստանի հին եւ նոր ննջեցելոց: Յիշեա զնոսա Տէր յաւուր մեծի գալստեան արքայութեան քո: Արա արժանի ողորմութեան, քավութեան, թողութեան...

Տայր Ներսէս վրդ

Սահինյան Անահիտ

Սահինյան Անահիտ Արամի:
20.06.1917, Վարդաբլուր, Լոռիի մարզ - 7.01.2010, Երեւան:
Չայ գրող, արձակագիր, հրապարակախոս: ԽՍՀՄ գրողների
միության անդամ 1942 թվականից: ԽՄԿԿ անդամ 1945
թվականից:



/ 12 հունիսի 1966թ., Երեւան /

Միտելի Ասասուր,

Իմ բոլոր այն հայ ընկերները, որոնց դու ծանոթացար Լոռիում, բա-
ռացիորեն, տառացիորեն սիրահարվեցին քեզ եւ խստիվ պարտավո-
րեցրին ինձ, որ հենց Ասատուրը ոտք դնի Երեւան տեղեկացնեմ իրենց:

Վերադառնալուն պես իմ առաջին գործը եղավ հետաքրքրվել,
պարզել, թե ինչ ուղիներ կան Ասատուրին Երեւան հրավիրելու:

Ցավոք, Գրողների համագումարին հրավիրվածների ցանկը շատ
սահմանափակ է, եւ հրավերներն արդեն ուղարկված են:

Միյուրքի կոմիտեում, ուր քեզ անձամբ ճանաչողները, անունդ
լսելուն պես պայծառացած ժպտում են, ովքեր անձամբ ծանոթ չեն,
դարձյալ լավ գիտեն քեզ, ներառյալ եւ նախագահ՝ Նամազասպյանը,
բուռն ցանկություն դրսևորեցին քեզ տեսնել Երեւանում:

Եվ ահա ինչ որոշվեց, խնդրել քեզ քո ծախսով գալ մինչեւ Մոսկվա,
իսկ այնուհետեւ քո բոլոր ծախսերը հայրենիքում գտնվելու ընթաց-
քում կոմիտեն վերցնում է իր վրա: Կոմիտեում պատրաստվեց համա-
պատասխան պաշտոնական գրություն քեզ ուղարկելու:

Ես չգիտեմ թե այդ առաջարկ-հրավերը քեզ որքան է ժպտում:

Դժվար կլինի՞ արդյոք քեզ համար մինչեւ Մոսկվա գալ քո ծախսով
(վալյուտայից գլուխ չեմ հանում): Գիտեմ միայն, որ այստեղ քեզ ձեռ-
քերի վրա կպահենք:

Գրողների համագումարը տեղի է ունենալու սեպտեմբերի վերջե-
րին եւ կամ հոկտեմբերի սկզբներին:

Քեզ համար հետաքրքիր կլինի, անշուշտ, Երեւանում գտնվել հա-
մագումարի օրերին: Երբ դու գրես ինձ, որ համաձայն ես հիշյալ պայ-

մանով գալու, ես համագումարի քաղման ստույգ օրը պարզելուն պես քեզ կհեռագրեմ: Դու կարող ես գալ սեպտեմբերի երկրորդ կեսին: Մենք քեզ կպահենք մինչեւ համագումարը եւ ներառյալ համագումարը, միայն թե դու ոտքդ այստեղ գցես: Բարեւներ տիկնոջդ:

Բարեւներ հաղորդիչ պարոն Գալստյանին եւ ասա, որ հայրենիքում սիրով եւ հարգանքով հիշում են իրեն: Սփյուռքի կոմիտեին հայտնեցի նրա այն դժգոհություն, որ որոշ դեպքերում անտեսվում է ինքը, ու դա նրան վշտացնում է: Խոստացան նման առիթներ չտալ:

Լոնդոնից հապնեպորեն կայացած իմ տպավորությունների ամենավաղ պատկերները կապված են քեզ հետ, պայմանավորված քո մեկնաբանություններով: Շատ շնորհակալ եմ, սիրելիս ամենի համար:

Ջերմ բարեւներով՝ Սահիկյան Անահիտ

Ն.Գ. Առանց ուշացնելու գրիր, թե ինչ ես մտածում ու կամ որոշում վերը հիշված հրավերի մասին:

Նույն



/ Պեկեմբեր 1966թ., Երևան /

Ասասուր սիրելիս, շնորհավորում եմ քո Նոր տարին, մաղթում քաջառողջություն ընտանյոք հանդերձ եւ ամենայն հաջողություններ կյանքի բոլոր ասպարեզներում, նաեւ խորին ցավ եմ հայտնում, որ ներկա չեղար մեր համագումարին, որի ստույգ քաղման օրը երկար ժամանակ հայտնի չէր, մի քանի անգամ հետաձգվեց, իսկ այդ ընթացքում ես քեզ երկու հեռագիր ուղարկեցի, որոնցից մեկը անհետ կորավ, մյուսը վերադարձավ, մակագրությամբ, թե հասցեատերը մեկնել է, ո՞ր... Եվ այդպես կորցրի քեզ: Թ. Թորանյանն ասաց, որ քեզ տեսել է Փարիզում, որ թերթը փակվել է, իսկ հետո՞:

Դու այնուամենայնիվ գարնանը եկ, պայմանը, կարծում եմ, մնում է պայման: Եկ իբրեւ տուրիստ եւ դարձիր մեր հյուրը:

Կարոտով սպասում ենք: Գրիր, թե իրո՞ք թերթը փակվեց եւ ինչո՞ւ:

Բարեւներով՝ Անահիտ Սահիկյան



/ 26 դեկտեմբերի 1967թ., Երևան /

Սիրելի Ասասուր,

Շնորհավորում եմ Նոր տարիդ, ցանկանում քեզ ամենաճշմարիտ, ամենաճշմարիտ, ամենախաղաղ, ամենախաղաղ, եթե նամակս հասնի քեզ, գրիր ինձ, թե ինչո՞ւ լռեցիր ու լռեցիր, ինչո՞վ ես զբաղվում, ինչպե՞ս ես զգում քեզ, գործերդ ինչպե՞ս են, ինչո՞ւ մոռացար հայրենիքի նամական:

Քո՛ Սահինյան Անահիտ



/ 31 դեկտեմբերի 1969թ. /

Սիրելի Ասասուր,

Ընդունիր շնորհավորանքներս ու ջերմագին ողջույններս քեզ, հրաշալի տիկնոջդ եւ հրեշտակային բալիկներիդ: Շատ եմ ցավում, որ բախտ չունեցա կնոջդ Երեսանում տեսնելու: Նույս ունեմ այցելությունը 1970 թվին կկրկնի եւ ինձ էլ դու կամ ինքը տեղյակ կպահեք ժամանելու մասին, որպեսզի ես այդ մասին ուրիշներից չիմանամ, այն էլ՝ մեկնելուց հետո:

Մաղթում եմ, սիրելիս, քեզ եւ յուրայիններիդ քաջառողջություն, մաղթում եմ քեզ գործունեության այնպիսի լայն ասպարեզ, որտեղ կարողանաս ներդնել ունեցածդ բոլոր ձիրքերը:

Միշտ քո՛ Սահինյան Անահիտ



/ 21 դեկտեմբերի 1971թ., Երևան /

Սիրելի, շատ սիրելի Ասասուր,

Ընդունիր Նոր տարվա շնորհավորանքներս, մաղթում եմ քեզ, տիկնոջդ, բալիկներիդ եւ ձեր բոլոր, բոլոր մերձավորներին այն ամենալավագույնը, որին արժանի եք դուք:

Սիրելի Ասատուր, կուզենայի, որ դու թղթակցեիր մեր «Պիոներ» ամսագրին, ինչ կարգի նյութերով որ կկամենայիր: Այդ ամսագիրը խմբագրում եմ եւ եւ վստահ եմ, որ կարող ես օգտակար լինել դո՛ւ ամսագրին, ամսագիրը՝ քեզ:

Սահինյան Անահիտ



Անահիտ ջան,

Սրտակից բարեկամներե եկած այն նամակներուն համար, որոնք ամիսներով, երբեմն տարիներով (Յ. Բրուտեանին նամակը կը կրէ 10.11.1965 թուականը) մնացին անպատասխան սեղանիս վրայ՝ պետք է Նարեկեան շունչով մեղայագիր մը շարադրէի: Բարեբախտաբար Նարեկացիական ձիրքով չեմ օժտուած: Տաղանդի ինչպիսի՛ հսկայ վատնում պիտի ըլլար, եթէ նախախնամութիւնը ինծի շնորհած ըլլար «Մատեան ողբերգութեան»ի հեղինակին տաղանդը, առանց մեղքի խորունկ գիտակցութեան, որ Նարեկացիինը եղաւ: Ես Աստուծոյ դէմ չեմ մեղանչած... այլ յանցապարտ եմ բարեկամներու նկատմամբ, որոնք տարակոյս չունին, աստուածային խստապահանջութեամբ պիտի չդիրքաւորուին դէմս, այլ մարդկային ներողամտութեամբ պիտի ներեն «մեղաւորիս»:

Անահիտ ջան, գիտեմ որ պարտազանց գտնուեցայ քեզի հանդէպ, նաեւ բազմաթիւ այլ բարեկամներու հանդէպ: Կ'ընդունիմ յանցանքս առանց արդարացուցիչ հանգամանքներ որոնելու: Կրնաս զիս մեղադրել ծանրագոյն մեղքերով (ընտրութիւնը կը թողում քեզի), բայց կը խնդրեմ որ վերջին երկու տարուան ընթացքին քեզ «մոռացած» ըլլալու յանցանքով չմեղադրես զիս: Ձեռքս խղճիս վրայ դրած կրնամ յայտարարիլ, որ առնուազն 100 անգամ եղած ես մտածումներու հիւրը այդ ժամանակամիջոցին:

Տիմա մեղքերես թեթեւացած կրնամ պատասխանել բոլոր հարցումներուդ:

1966թ. բացիկիդ մէջ կ'ակնարկես հասցէիս դրկուած երկու հեռագիրներու: Չեմ ստացած զանոնք: Պատճառը պարզ է. դուն հեռագիրը յղած ես «Արեգակ»ի հասցէին, իսկ «Արեգակ»ը արդէն 1966թ. օգոստոսին «հանգեաւ ի Տէր»: Թերթը թաղեցինք առանց յուղարկաւորներու...

Սփիւռքի մէջ հանգուցեալ ո՞ր թերթը արդէն ունեցած է յուղարկաւոր:

Անցնինք:

Տեռագիրդ ստացած իսկ ըլլայի համագումարին մասնակցիլ անկարելի պիտի ըլլար ինծի համար այդ օրերուն: Մարդ իր ուզած ժա-

մուն իր ցանկացած վայրը այցելելու համար այս օրերուն առնուազն հարուստ առետրական կամ... հոգեւորական պէտք է ըլլայ: Ես երկու խմբաւորումներէն ալ դուրս կը մնամ:

Ի դէպ է յիշել, որ Կոմիտէն ստացայ հրաւեր այդ օրերուն հայրենիք այցելելու: Տրաւերին ետեւ կար քու բարի հոգիդ: Խորին շնորհակալութիւններ:

«Ինչո՞ւ մոռացար հայրենիքի համփա՛ն»: Մէջբերումը քու 1967թ. դեկտեմբեր բացիկէդ է...

Ափսոս, որ մարդ իրաւունք չունի վկայակոչելու իր իսկ սիրտը կամ հայացքը մտածումներուն: Եթէ նոյն հարցումը ուղղած ըլլայիր սրտիս, ան պիտի պատասխանէր՝ «հոն, ուր իմ ժողովուրդիս սրտին հարազատ բարախումը ապագայի բազկերակին առողջ զարկն է դարձած, մտածումներուս աչքը օրը քանի մը անգամ իր նայուածքը կը սեւեռէ հայրենիքի համփաներէն ալ անդին, իրեն՝ հայրենիքին»:

Անահիտ ջան, անհայրենիք (բառին հայրենիքէն հեռու իմաստով) տողոց երգն է այս, որ երաժշտութիւնը չունի, բառ չունի, բայց ունի յուզում, ունի ապրում ու խորունկ իմաստ: Սփյուռքի հայութեան, մանաւանդ երիտասարդ սերունդի մտածումներուն աչքերը փակէ, որ չկրնայ տեսնել հայրենի իրականութիւնը, եւ դուն կ'ունենաս հայու հազարաւոր մեռած հոգիներ...:

Տայրենիքի համփան կարելի չէ մոռնալ:

Ատենին մեծ հաճոյքով կարդացի տպաւորութիւններդ «Սովետական գրականութիւն» ամսագրին մէջ: Վստահ եմ Սոհոյին նուիրուած բաժինը ինչպէս սփիւռքի, այնպէս ալ հայրենիքի մէջ հետաքրքրութիւն արթնցուց: Արժանքինի մէջ ունինք «Արմենիա» թերթը, որ վերջին 10 տարուան ընթացքին իր անունին վայել յօդուած չէ հրատարակած: Թերթին աշխատակիցներէն մէկը գայթակղած էր տպաւորութիւններդ: Անունը չեմ յիշեր այդ մարդուկին, որ թերթի երկու սիւնակներուն վրայ փռեր էր իր թունահոս գրիչին ողորմելի արգասիքը: Իր պատկանած կուսակցութեան բնորոշ պոռոտախօսութեամբ նախ փորձած էր կացիւնը իջեցնել իմ վզիս...

Մե՞ղքս: Ինչո՞ւ հայրենի մտաւորականները փոխանակ տեսարժան վայրերը տանելու առաջնորդեր եմ Սոհոյ (Ապուշը անշուշտ չի գիտեր որ Լոնտոնի մէջ Սոհոյէն աւելի տեսարժան վայր՝ որակի եւ

քանակի իմաստով չկայ...): Անշուշտ, չեմ կրնար չնշել, որ յօդուածին մէջ անունս իսկ յիշել չէ ուզած... Ի՛նչ մեծ բարերախտութիւն:

Իմ հաշիւս «մաքրելէ» ետք՝ մարդը կոտորած իր աղեղով ածականներու ահեղ նետարձակում մը սկսած է, թիրախ ունենալով ոչ այնքան քեզ, որքան հայրենիքը՝ Ս. Տայաստանը:

Երբ յօդուածը կարդացի, պահ մը նոյնիսկ փորձութիւնը ունեցայ պատասխան մը գրելու, բայց քանի մը ժամ ետք՝ վազ անցայ: Խորհեցայ որ փոխանակ ժամավաճառ ըլլալու (քանի մը ժամ պիտի վատնէի գոնէ) սիրտս զովացնելու համար պտոյտ մը կը կատարեմ Սոհոյի տեսարժան փողոցներուն մէջ...:

Յօդուածը եթէ յաջողիմ գտնել Անիի ատերակները յիշեցնող թղթածրարներուս մէջ, կը դրկեմ քեզի:

Երեք շաբաթ է ի վեր Անգլիա կը գտնուի Դանիացի գրող Եորկըն Անտրսըն Ռոզանտալը, որ Մեծն Բրիտանիոյ զանազան քաղաքներուն մէջ կը դասախօսուէ «Տայաստան եւ հայ ժողովուրդը» նիւթին շուրջ: Ան անցեալ աշնան այցելեց Տայաստան: Անցեալ շաբաթ Անտրսըն Սկովտիոյ Արքայական աշխարհագրական ինստիտուտի մէջ դասախօսած է շուրջ 2000 ունկնդիրներու եւ ցուցադրած մօտ 100 գունաւոր ֆիլմեր մոզական լապտերով: Վերոյիշեալ նիւթի շուրջ դանիացի գրողը աւելի քան 30 դասախօսութիւն պիտի տայ:

Լոնտոնահայութեան մշակութային կեանքը անպտուղ թզենի մըն է: Դժբախտաբար համայնքէն ներս գիտակից մարդոց սով կայ: Գոյութիւն ունի Տայ Տունը, որ իր անունը արդարացնող գործ կատարելու կարելիութիւնները չունի: Տարի մը առաջ համաձայնեցայ մասնակցիլ Տայ տան մշակութային յանձնախումբի աշխատանքներուն, վերջերս հրաժարեցայ: Մեր ձեռնարկներուն հազիւ 10-12 հոգի ներկայ կը գտնուէր... Սկսած էի դասախօսութիւններու շարք մը՝ «Տամայնապատկեր հայ գրականութեան»: Առաջին երկու դասախօսութիւններուն, որոնց պատրաստութիւնը բազմաթիւ օրեր խլած էր ինձմէ, ներկայ գտնուեցաւ հազիւ 10 անձ... Լոնտոնի մէջ ունիմք 6-7 կազմակերպութիւններ, որոնք զիրար կը խաչաձեւեն եւ իրարու աշխատանք կը դժուարացնեն: Երկու տարի է ի վեր ամէն հիգ ի գործ դրինք քանի մը բարեկամներու հետ, որպէսզի կարենանք այդ կազմակերպութիւններու ներկայացուցիչներէն բաղկացած մշակութային կեդրոնական յանձնախումբ մը գոյացնել: Ի զո՛ր: Շատ աշխատեցանք նաեւ գոյաց-

նել որոշ գումար մը եւ հիմքը դնել հայկական տեղեկատու գրասենեակի մը: Այդ ալ ի գուր: Անգլիոյ մէջ հայ ժողովուրդի ի նպաստ հսկայական աշխատանք կարելի է կատարել, եթէ բարեկամեցողութեան տէր մարդիկ գտնուին: Այս մասին այսքան:

Գրելու շատ բան կայ, բայց հաղորդակցութեան կամուրջը վերակառուցելու համար այսքանը բաւական էր:

Ջերմ բարեւներ բոլորին, բոլորին: Առանձին անուններ յիշել պիտի նշանակէր՝ ուրիշ երկու էջ ալ լցնել:

Միրով քոյդ՝ Կիւզէլեան Ասատուր

Սարգսյան Անուշավան

ԱՕԿՍ-ի փոխնախագահ:



/ N 1034, 20 դեկտեմբերի 1961թ. /

Ասատուր Գյուլելյանին, Կալկաթա

Հարգելի բարեկամ,

Ստացանք Ձեր նոյեմբերի 14-ի գրությունը ՍՍՀՄ ժողովրդական դերասան Նրաչյա Ներսիսյանի մահվան կապակցությամբ:

Ցավակցական նամակը ուղարկված է Նայաստանի Թատերական ընկերությանը, որտեղից տեղյակ կպահեն հանգուցյալի ընտանիքին:

*Տարգանքներով՝ արտասահմանյան կապերի բաժնի վարիչ՝
Սարգսյան Անուշավան*



/ N 562, 29 ապրիլի 1962թ. /

Նայկազյան Մշակութային Միության
Քարտուղար պրն Ա. Գյուլելյանին, Կալկաթա

Հարգելի պրն Գյուլելյան,

Միության անդամուհիներ Նվարդ Մարտիրոսյանի եւ Երանունի Նովհաննիսյանի միջոցով ուղարկված «Նոր Ազդարար» պարբերաթերթի 1-21 համարների հավաքածուն շնորհակալությամբ ստացանք եւ որպես նվեր պրն Նայկ Նաջարյանի անունից հանձնեցինք Մաշտոցի անվան պետական Մատենադարանին: Նախօրոք ստացել էինք մարտի 1-ի եւ մարտի 23-ի նամակները:

Կիսնդրեինք ապաքինման մաղթանքներ հաղորդել պրն Միքայել Գասպարյանին, որի հիվանդության մասին ցավով իմացանք Ձեր նամակից:

Կալկաթայի Տայոց եկեղեցու գրադարանում գտնվող հին հրատարակություններն ու ձեռագրերը, որոնք վաղուց չեն օգտագործվում, հավանորեն լուրջ հետաքրքրություն են ներկայացնում եւ դրանց տեղափոխումը հայրենիք, անշուշտ, շատ ցանկալի է: Շուտով մի պաշտոնական գրությամբ կդիմենք եկեղեցու վարչությանը: Բարյացակամ վերաբերմունքի դեպքում շնորհակալությամբ կընդունվի կալկաթահայ գաղութի այդ նվերը հայրենիքին:

Մարդասիրական հեմարանի ուսանող Ն. Մարգարյանի՝ Տայաստանում երաժշտական կրթություն ստանալու փափագին կարող է աջակցել ՍՍՀՄ Գլխ. Նյուպատոսությունը Կալկաթայում, ուր եւ խորհուրդ ենք տալիս դիմել այդ խնդրով:

Ինչպես մեզ հայտնեցին ռադիոյի ընկերները, Ձեր գրքի մասին դեռեւս առանձին հաղորդում չի տրվել: Սակայն շուտով կկազմակերպվի այդպիսի հաղորդում, որի պատճենը անպայման կուղարկենք:

Նարկ ենք համարում նշել, որ Միությանդ անդամուհիներ Նվարդ Մարտիրոսյանը եւ Երանունի Նովհաննիսյանը մի քանի անգամ այցելել են մեր Ընկերություն: Մեզ համար շատ հաճելի էր նրանց հետ ունեցած զրույցներից մանրամասնություններ իմանալ կալկաթահայ կյանքի մասին:

*Լավագույն ցանկություններով՝ Միլյուռքի քաժնի վարիչ՝
Սարգսյան Ան.*



/ N 1221, 4 դեկտեմբերի 1962թ. /

Պրն Գյուզելյանին, Կալկաթա

Հարգելի պրն Գյուզելյան,

Ձեր սեպտեմբեր 5 թվակիր նամակը ստացել ենք: Ստացել ենք նաեւ «ARA» ժողովածուն եւ պրն Մ. Գասպարյանի հատկացրած մի քանի թերթերը: Նպատակահարմար գտանք, այդ թերթերը հանձնել Երեւանի Գրականության եւ արվեստի թանգարանին, որոնց հավաքածուներում պակասում էին հենց այդ համարներից: Ներփակ կգտնեք Պետական մատենադարանի տնօրեն ընկ. Լ. Խաչիկյանի շնորհակալական գրությունը Ձեր նվերի համար: Մատենադարանի աշխատակիցները,

որոնց հայտնի է պրն Մ. Գասպարյանի անունը, տեղեկանալով «Տառաշ»-ի որոշ համարներ (թերեւս հավաքածուն) Մատենադարանին տրամադրելու նրա մտադրության մասին՝ հատուկ գրությամբ արտահայտում են իրենց շնորհակալությունը:

Ընկ. Խաչիկյանի գրությունից իմացանք, որ Մատենադարանը չունի 1906թ. Կալկաթայում հրտարակված «The Armenian» հանդեսի հավաքածուն: Ա. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» գրքի 2-րդ հատորը սիրով մեզ տրամադրեց Մատենադարանը, որը եւ ուղարկում ենք Ձեզ: Պրն Գասպարյանի համար խնդրեցին հանձնել «Մատենադարան» գրքույկը որպէս նվեր:

Տարգելի բարեկամ, մեր խոստացած գրականությունը եւ որոշ կրծքանշաններ արդեն ուղարկված են Ձեր հասցեին:

*Տարգանքներով՝ Սփյուռքի բաժնի վարիչ
Սարգսյան Անուշավան*



/ N 190, 16 փետրվարի 1963թ. /

Պր-ն Ա. Գյուզելյանին, Կալկաթա

Տարգելի բարեկամ,

Ստացվել է 27 դեկտեմբերի 1962 թվակիր Ձեր նամակը: Մեր նախորդ նամակով հայտնել էինք, որ «ARA» ժողովածուն, ինչպէս եւ «HARACH»-ի համարները շնորհակալությամբ ստացել եւ հանձնել ենք Մատենադարանին: Ուղարկել էինք նաեւ Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանի շնորհակալական երկտողը՝ ուղղված Ձեզ: Այդպիսի մի գրություն ուղարկվեց նաեւ պրն Մ. Գասպարյանին՝ Կալկաթայի Տայկական եկեղեցու հասցեով: Վստահ ենք, թէ արդեն ստացած կլինեք դրանք: Չմոռանամ հայտնել, Ձեր խնդրանքի համաձայն Մատենադարանը ուղարկել էր Ձեզ «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» Բ հատորը:

Անչափ շնորհակալ կլինենք, երբ ստանանք «Նոր Ազդարար»-ի հավաքածուն, որը կհանձնենք Մատենադարան:

*Տարգանքներով՝ Սփյուռքի բաժնի վարիչ
Սարգսյան Անուշավան*



Ասատուր Գյուզելյանին, Կալկաթա

Սիրելի ընկեր Գյուզելյան,

Ձեր չորս նամակները՝ ուղղված նախագահ ընկ. Բ. Գրիգորյանին եւ ինձ, ժամանակին ստացել ենք եւ հետաքրքրությամբ ծանոթացել դրանց:

Մեզ համար անչափ հաճելի է, որ Դուք քարձր եք գնահատում մեր Ընկերության գործունեությունը: Մենք ամեն գովասանքից վեր ենք գտնում այն գործունեությունը, որ Դուք, ջանք ու եռանդ չխնայելով, ծավալում եք Կալկաթայի հայ գաղութում:

Ամենայն Տայոց կաթողիկոս Վազգեն Ա-ին ցույց տրված մեծաբանքը Տնդկաստանում, անտարակույս, նաեւ Ձեր տարած աշխատանքի քարի արդյունքը պետք է համարել:

Սայաթ-Նովայի 250-ամյակի առթիվ գրված Ձեր նամակից երեւում է, որ Դուք քաջատեղյակ եք հայ մեծ գուսանի ստեղծագործությանը: Տեստեսքար, վստահ ենք, որ Ձեզ մոտ կազմակերպված միջոցառումները քարձր մակարդակով անցած կլինեն: Խնդրում ենք չմոռանաք ուղարկել դրանց նյութերից՝ մեր ցուցափեղկի համար: Տեսաքրքիր կլինեն ծանոթանալ նաեւ հնդկական այն թերթերին, որոնց մեջ կտպեն Ձեր հոդվածը:

Տայտնում ենք, որ Արմենակ Տերտերյանը իր համալրուկը ստացել է: Ներփակ կգտնեք հանքատեսակների ցուցակը:

Մեր Ընկերության աշխատակիցները ջերմորեն են հիշում Ձեր անունը եւ խնդրում են իրենց լավագույն մաղթանքները հաղորդել Ձեզ նոր տարվա առթիվ:

Թույլ տվեք այսքանով ավարտել:

Ձերն քարեւներ Ձեր հարգարժան տիկնոջը:

Անկեղծորեն՝ Սիլյուսթի բաժնի վարիչ Սարգսյան Ան.

Տ.Գ. Ընկեր Բ. Գրիգորյանը արձակուրդի կապակցությամբ բացակայում է քաղաքից, դրա համար էլ չկարողացավ անձամբ պատասխանել Ձեր նամակներին:

Նույն:



Յարգելի Տիար. Ա. Սարգսեան
Արտասահմանեան երկրների հետ Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Տայկական Ընկերութեան
Սփիւոքի Բաժնի վարիչ
Երեւան

Յարգելի Հայրենակից,

Ստացած եմ ձեր 4.12.62 թուակիր նամակը, որուն համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւն: Մատենադարանի տնօրէն, Պրն Լ. Խաչիկեանի նամակն ու «Մատենադարան» գիրքը յանձնեցի Պրն Ս. Գասպարեանին:

Շնորհակալութեամբ ստացած եմ նաեւ ընկերութեանդ հասցէիս յղած գիրքը. կրծքանշանները չեն հասած տակաւին:

«The Armenian» հանդէսի եւ «Նոր Ազդարար»-ի հաւաքածոները շուտով կը դրկեմ: Պրն Տայկ Նաջարեան սիրով յանձն առաւ իր սեփական «Նոր Ազդարար»-ի հաւաքածուն նուիրել Մատենադարանին:

Յունուար 31-ին կալկաթահայութիւնը մեծ հաճոյքով ու յուզումով դիտեց «Պոեմ Տայաստանի մասին» գունաւոր շարժանկարը Սովետական հիւպատոսարանին մէջ: Սովետական Միութեան հիւպատոս, Պրն Վոյինովի բացման խօսքէն ետք, սովետահայ նարտարագետ, ընկեր Ա. Ափրիկեան խօսեցաւ ցուցադրուելիք ֆիլմի մասին, իսկ մենք, շարժանկարի ցուցադրութիւնէն ետք, արտայայտուեցանք սովետական Տայաստանի արձանագրած վիթխարի նուաճումներուն մասին: Ժողովուրդի բուռն փափաքին վրայ, նոյն շարժանկարն ու «Պատուի համար»-ը հիւպատոսարանին մէջ պիտի ցուցադրուին ամսոյս 14-ին:

Այս առթիւ մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք Ընկերութեանդ եւ Տայաստանի Կառավարութեան, Կալկաթա յղուած հայկական շարժանկարներուն համար, զորս Սովետական Տիւպատոսարանը սիրով կը ցուցադրէ հայ համայնքին: Տեղաւոր այս ասիերու վրայ հաստատուած պանդուխտ հայերու համար մեծ կարեւորութիւն ունին նման ֆիլմերու ցուցադրութիւնը:

Կ'ուզեմ անգամ մը եւս արձանագրել հիացումս, այն հոյակապ աշխատանքին համար, զոր Ընկերութիւնդ էր կատարեր Սփիւոքի անա-

րեւ պայմաններուն մէջ ապրող հայ համայնքները հայրենիքի պայ-
ծառ իրականութեան հետ կապելու նուիրական գործին ի նպաստ:

Լաւագոյն բարեմաղթութիւններով եւ յարգանքներով՝

Ասատուր Կիզեղեան



/ 1 մարտի 1963թ. /

HAIKAZIAN CULTURAL SOCIETY, CALCUTTA

Մեծայարգ Տիար Ան. Սարգսեան,
Արտասահմանեան Երկրների Նեո Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Նայկական Ընկերութեան
Սփիւոքի Բաժնի Վարիչ
Երեւան

Յարգելի Հայրենակից,

Միութեանս անդամուհիներէն, տիկնայք՝ Նուարդ Մարտիրոսեան եւ
Երանուհի Յովհաննիսեան, իրենց ծնողաց այցելելու համար ամսոյս
22-ին Երեւան պիտի ժամանեն:

Կը խնդրենք ձեզմէ, որ բարի գտնուիք մեր վերոյիշեալ անդամուհի-
ներուն հարկ եղած դիւրութիւններն ու աջակցութիւնը ընծայել, անոնց
Երեւան գտնուած միջոցին, որուն համար այժմէն կը յայտնենք մաս-
նաւոր շնորհակալութիւն:

Տիկին Նուարդ Մարտիրոսեանի միջոցաւ կը դրկենք «Նոր Ազգա-
րար» պարբերաթերթի ժողովածուն, զոր Տիար Նայկ Նաջարեան սի-
րով կը նուիրէ Մաշտոցի Անուան Պետական Մատենադարանին:

«The Armenian» թերթի հաւաքածուն կը գտնուի Տիար Միքայէլ
Գասպարեանի մօտ, որ վերջերս ենթարկուեցաւ վիրաբուժական
լուրջ գործողութեան մը, որուն հետեւանքով տակաւին կը մնայ հիւան-
դանոց: Անմիջապէս որ տուն վերադառնայ, կ'ուղարկեմ նաեւ յիշեալ
թերթի ժողովածուն:

Ընկերութեանդ հասցէիս դրկած գրքերը ստացայ քանի մը օր առաջ,
որոնց համար կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւն:

Յաջողութեան լաւագոյն բարեմաղթութիւններով եւ յարգանքներով՝

Ա. Կիզեղեան, Քարտուղար



HAIKAZIAN CULTURAL SOCIETY CALCUTTA

Մեծայարգ Տիար Ան. Սարգսեան,
Արտասահմանեան Երկրների Տես Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Տայկական Ընկերութեան
Սփիւոքի Բաժնի Վարիչ
Երեւան

Յարգելի Պրն Սարգսեան,

Տիկին Նուարդ Սարտիրոսեանի միջոցաւ, մի քանի օր առաջ, ձեզի դրկեցի «Նոր Ազդարար» թերթի հաւաքածուն, բարի գտնուեցէք ստացումը յայտնել:

Նամակովս կ'ուզեմ ձեր ուշադրութեան յանձնել քանի մը հարցեր.

1. Կալկաթայի Տայոց Եկեղեցւոյ գրադարանին մէջ կան շարք մը հայերէն հին հրատարակութիւններ եւ ձեռագրեր, զորս տարիներէ ի վեր ոչ ոք կ'օգտագործէ: Իմ համոզումս է, որ վերջ ի վերջոյ այս գրադարանը պիտի ունենայ նոյն ճակատագիրը, ինչ որ ունեցաւ Սատրասի Տայոց Եկեղեցւոյ գրադարանը: 1947-ին, փրոֆ. Ա.Գ. Արբահամեան յաջողած է կարգ մը գրքեր տանիլ հայրենիք, վարչութեան կողմէ որպէս նուէր Պետական Սատենադարանին:

Գրադարանի մէջ գտնուած գրքերէն շատեր ունին կրկնուած օրինակներ: Յռոտաշարութիւնս է դիմել եկեղեցւոյ վարչութեան եւ անդամներէն խնդրել, որ գրադարանի գոնէ կրկնուած օրինակները նուիրեն Մաշտոցի Անուն Պետական Սատենադարանին:

Դժբախտաբար եկեղեցւոյ վարչութեան անդամներէն ոմանք, անցեալի մէջ, բացասական դիրք բռնած են, երբ նման առաջարկութիւններ ներկայացուած են իրենց: Անոնց գլխաւոր առարկութիւնն այն է եղած, որ Պետական Սատենադարանը կազմակերպութեան մը միջոցաւ կամ ուղղակի իրենց չէ դիմած այդ մասին:

Ուստի կը խնդրեմ ձեզմէ, որ կամ Ընկերութիւնդ կամ ալ Սատենադարանը գրէ այս մասին պաշտօնապէս Տայկազեան Սշակութային Միութեան կամ ուղղակի եկեղեցւոյ վարչութեան:

Եկեղեցւոյ գրադարանին մէջ կը գտնուին Տնդկաստանի մէջ հրատարակուած բազմաթիւ գրքեր, ի շարս որոնց նաեւ 1812-1854 տարիներուն Կալկաթա տպագրուած ՏԱՐԵՅՈՅՅ-ի ժողովածուները,

որոնք կը պարունակեն հնդկահայ գաղութի պատմութեան վերաբերեալ կարեւոր տեղեկութիւններ:

2. Տայոց Մարդասիրական Բենարանի Ժ. Դասարանի ուսանող, Տամազասպ Մարգարեան, որ օժտուած է գեղեցիկ ձայնով, Արդիւր Այտնեանի ձայնի երանգներն ունեցող թենոր, կը փափաքի ձայնը մշակել Երեւանի մէջ: Նիւթական միջոցներէ զուրկ հայրենասէր այս պատանիին տաղանդն արտասահմանի մէջ դատապարտուած է կորուստի: Ուստի կը խնդրեմ ձեզմէ, որ բարի գտնուիք, եթէ հնարաւոր է, Պետական Երաժշտանոցի կամ երաժշտական դպրոցի մը մէջ տեղ մը ապահովել Մարգարեանին, ուր ան կրնայ, հայրենիքի մեր երաժշտագէտներու հսկողութեան տակ մշակել իր ձայնը: Ես վստահ եմ Մարգարեանի վրայ թափուած ջանքերը ժամանակին կու տան սպասուած արդիւնքը: Վստահ եմ ձեր կարելիին պիտի ընէք Մարգարեանի ցանկութեան գոհացում տալու համար: Առ այդ, այժմ կը յայտնեմ մասնաւոր շնորհակալութիւն:

3 Պարսկահայ բարեկամէ մը ստացած նամակիս համաձայն, վերջերս Երեւանի Ձայնասփիւրը ելոյթ է ունեցած իմ «Տամոյ եւ Ֆատիլէ» քերթուածավէպիս մասին: Տաւանաբար գիտէք, որ կալկաթահայերը զրկուած են Երեւանի Ռատիոն լսելու հաճոյքէն: Շատ կը փափաքիմ ունենալ կարդացուած գրախօսականի պատճենը, յատկապէս անոր համար, որ ցարդ հայրենիքի մեր քննադատներուն կարծիքը գրքիս մասին կարդալու հաճոյքը չեմ ունեցած: Երախտապարտ կը մնամ, եթէ կարենաք Ռատիոյի Վարչութենէն ելոյթի պատճենը ստանալ եւ դրկել ինձի:

Կանխայայտ շնորհակալութեամբ եւ յարգանքներով՝

Ասատուր Կիզեյեան

Քարտուղար Տայկազեան Սշակութային Միութեան Վարչութեան



/ 25 հոկտեմբերի 1963թ. /

HAIKAZIAN CULTURAL SOCIETY CALCUTTA

Մեծայարգ Տիար Ան. Սարգսեան,
Արտասահմանեան Երկրների Տես Բարեկամութեան եւ
Կուլտուրական Կապի Տայկական Ընկերութեան
Սփիւոքի Բաժնի Վարիչ
Երեւան

Յարգելի պրն Սարգսեան,

Տաննարեղ բանաստեղծ, ստեղծագործ երաժիշտ եւ երգիչ Սայաթ-Նովայի ծննդեան 250-ամեայ յոբելեանին առթիւ, Միութիւնս եւ հնդկահայութիւնը կը յղեն ձեզի եւ ձեր միջոցաւ բոլոր պատկան մարմիններուն ջերմ ողջոյններ եւ սրտազին շնորհատրութիւններ:

Մեր սրտերն անխառն հրնուանքով կը լեցնեն այն հանգամանքը, որ Տամաշխարհային Խաղաղութեան Խորհուրդի որոշմամբ կը տօնուի հայ մեծագոյն գուսանին յոբելեանը Ս. Միութեան ժողովուրդներու եւ աշխարհի յառաջատր մարդկութեան կողմէ: Վերջապէս կը բացուի լռութեան վարագոյրը, հոգ չէ թէ դար մը ուշացումով, եւ Սայաթ-Նովան կը գրաւէ իր պատշաճ տեղը համաշխարհային բանաստեղծութեան բեմին վրայ, Խայամի, Սաադի եւ մտքի ու հոգիի համամարդկային միս մեծութիւններու կողքին:

Գնահատանքը, որ կը տրուի Սայաթ-Նովային համաշխարհային գետնի վրայ, արդար է բազմաթիւ պատճառներով:

1. Սայաթ-Նովան աշխարհի մեծագոյն բանաստեղծներու շարքին պատկանելու բոլոր տուեալները ունի անառարկելիօրէն:
2. Սայաթ-Նովան, որպէս աշուղ, համաշխարհային գուսանական գրականութեան բարձրագոյն եւ ամենէն պայծառ գագաթներէն մէկն է, եթէ ոչ բարձրագոյնը:
3. Սայաթ-Նովան այն անգուգական դէմքն է, որ գուսանական արուեստի ոսկէ արձանը բանաստեղծական մտքի բարձրագոյն պատուանդանին վրայ դրաւ:
4. Սայաթ-Նովան փիլիսոփայական խորագոյն հարցերը աշուղական տաղերու պատմութեանին մէջ պարուրելու, միաժամանակ գուսանական խօսքին գինիով ամենէն խորաթափանց միտքն ու ամենէն պարզ հոգին արբեցնելու հաննարով օժտուած մեծութիւնն է:

5. Սայաթ-Նովան որպես սիրերգու բանաստեղծ, աննման երգիչ եւ մեծատաղանդ ստեղծագործ երաժիշտ այն հազուագիւտ մարդոցմէ մէկն է, որ երեք առանձին հաննարներու կարողութիւններուն համագումարը կը խտացնէ իր մէջ:

Սայաթ-Նովայի մեծութիւնը բնորոշելու ձգտող քանի մը գծեր մատնանշելու մեր նիգը կ'ուզենք եզրափակել ռուս ականաւոր գրական քննադատ, Վ. Բրուսովի հետեւեալ խօսքերով. «Ճշմարիտ գեղեցիկը ստեղծած են նաեւ գուսաններէն լաւագոյնները, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւէ 18-րդ դարու մեծ, բազմակողմանի բանաստեղծ, Սայաթ-Նովան... մէկն այն առաջնակարգ բանաստեղծներէն, որոնք իրենց հանճարի ոյժով կը դադրին այլեւս մասնաւոր ժողովուրդի մը սեփականութիւնն ըլլալէ եւ կը դառնան ամբողջ մարդկութեան սիրելիները»:

Միութեանս նախաձեռնութեամբ, կալկաթահայութիւնը եւս կը պատրաստուի պատշաճ ձեւով տօնելու Սայաթ-Նովայի յօբելեանը: Այս առթիւ հայ խոշորագոյն գուսանի մասին կը պատրաստենք ուսումնասիրութիւն մը, զոր կը յառաադրենք լոյս ընծայել տեղական շարք մը թերթերուն մէջ:

Օգտագործելով առիթը Միութեանս եւ կալկաթահայութեան անունով մասնաւոր շնորհակալութիւն կը յայտնենք Սայաթ-Նովային նուիրուած ձայնաժապաւեններուն համար, զորս ձեր միջոցաւ դրկեցիք հնդկահայութեան:

Լաւագոյն ցանկութիւններով եւ խորին յարգանքներով՝

Ա. Կիւզելեան, Փոխնախագահ

Սարգսյան Արմեն

23.06.1953, Երեւան, Հայկական ԽՍՀ:

Հայաստանի գործող նախագահ[1], Հայաստանի Հանրապետության նախկին վարչապետ, քաղաքական գործիչ, Մեծ Բրիտանիայում Հայաստանի նախկին դեսպան, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի եւ Բրիտանական աստղագիտական ընկերության անդամ, Համահայկական ակադեմիական եւ գիտական ընկերության պատվավոր անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, խոշոր բիզնեսմեն, ՀՀ վարչապետ 1996 թվականի դեկտեմբերից մինչեւ 1997 թվականի փետրվար: ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան (1993 թվականից): ՀՀ Նախագահ 2018 թվականից:



ՀՏ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ

Հարգելի Ասասուր եւ Վիվիեն Գյուլելյան,

Ուզում եմ շնորհակալություն հայտնել Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի Լոնդոն այցելության ժամանակ հայկական դեսպանատան հանդեպ Ձեր ցուցաբերած աջակցության եւ օգնության համար, որը ի նպաստ է հայ-բրիտանական հարաբերությունների հետագա զարգացմանը:

Հուսով եմ, որ մեր համագործակցությունը կշարունակվի եւ կզարգանա հոգուտ Հայաստանի Հանրապետության բարգավաճման եւ առաջընթացին:

Մաղթում եմ Ձեզ ամենայն բարիք եւ տոկունություն

ՀՏ դեսպան Սարգսյան Արմեն



/ 4 մայիս, 1993թ. /

Հարգելի արն Գյուլելյան,

Հայաստանի Հանրապետության վարչապետ Տրանտ Բագրատյանի, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Վահան Փափազյանի եւ անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Ձեզ ս.թ. մայիսի 26-ից հունիսի 1-ը կայացած Հայաստանի կառավարական պատվիրակության այցելության ընթացքում նվիրական աշխատանքի ու աջակցության համար եւ հույս եմ հայտնում, որ



Արմեն Սարգսյանի հետ: Երեւան, 2011թ.:

հետագայում եւս կշարունակվի Ձեր եւ Տայաստանի դեսպանության համատեղ աշխատանքը:

Տարզանքներով՝ դեսպան Սարգսյան Արմեն

🔗 Հարգելի պրն Ասասուր եւ սիկին Վիվիեն Գյուպելյան,

Անցած բազմաթիվ տարիների ընթացքում եւ բախտ եւ ունեցել Ձեզ հետ միասին աշխատել անկախ Տայաստանի առաջին եվրոպական դիվանագիտական ներկայացուցչության՝ Լոնդոնում ՏՏ դեսպանության համար, սկսած նրա հիմնադրման օրից մինչեւ վերջերս:

Բոլոր նվաճումները, որոնց հասավ Լոնդոնում հայկական դեսպանությունը, մեր համատեղ եւ միահամուռ աշխատանքի արդյունքներն էին, որոնք, վստահ եմ՝ տեղ կգտնեն հայ ժողովրդի պատմության մեջ:

Եւ Ձեզ հետ միասին այս ինը տարիների ընթացքում կիսել եմ մեր հայրենիքի եւ սփյուռքի ուրախ եւ տխուր պահերը, Ձեզ հետ միասին տոնել եմ հաղթանակները եւ Ձեզ հետ միասին փորձել հաղթահարել արգելքներն ու դժվարությունները:

Ուզում եմ Ձեզ վստահեցնել, որ Դուք, լինելով նեցուկ Տայաստանի դեսպանությանը, եղել եք նեցուկ ամբողջ հայ ժողովրդին, որի համար եւ իմ երախտագիտությունն եմ հայտնում եւ հույս ունեմ, որ մենք

կշարունակենք միասին աշխատել հոգուտ մեր ժողովրդի պայծառ
ապագայի եւ բարօրության:

Տարզանքով՝ Սարգսյան Արմեն



/ 6 նոյեմբեր, 1996թ., Երևան /

Մեծայարգ Տիար Արմեն Սարգիսեան
Նայաստանի Նանրապետութեան Վարչապետ

Միտելի Արմեն,

Մեծ ուրախութեամբ իմացայ Վարչապետ նշանակուելուդ բարի լուրը:
Միշտ չէ որ նիշդ մարդը, նիշդ ժամանակին, նիշդ պաշտօնի կը կոչուի:
Ուրախ եմ որ այս պարագային յարմարագոյն մարդը կոչուած է վար-
չապետի բարձր ու պատասխանատու պաշտօնին: Այս եւ հետագայ
ընդհանրացումները պատահական խօսքեր չեն, այլ երկար տարի-
ներով աշխատանքիդ մօտէն հետեւած մարդու մը՝ անաչառ գնահա-
տանքը:

Պետականութիւն ունեցող մեր ժողովուրդն այսօր աւելի քան երբեք,
կարիք ունի լրջախոն եւ իմաստուն ղեկավարներու, որոնք ամենէն
առաջ պէտք է ըլլան հեռատես, առանց իրատեսութենէ ամուսնալու-
ծուելու: Տամեստութիւնդ վիրաւորելու գնով պէտք է հաստատեմ որ
վերոյիշեալ տուեալները քու նկարագրիդ եւ իմացական կարողու-
թիւններուդ մաս կը կազմեն: Աւելին՝ ասոնց կողքին ունիս բազմաթիւ
այլ յատկութիւններ, նկարագրի գծեր, որոնց բոլորին գումարը քեզ կը
դարձնէ արժանաւորներուն մէջ արժանաւորագոյնը: Աւետարանը
կըսէ. «Օտո ի պտղոյ իւրմէ՛ն հանաչի»: (Օտոր իր տուած պտուղով կը
հանչցուի): Դուն արդէն քու տուած պտուղովդ քաջածանօթ ես քու ժո-
ղովուրդիդ:

Վիվիենը, Կարինէն, Արմինէն, Դէյվիդն ու... Ալեքսանդրը, թոռնիկս,
այս բարեբաստիկ առիթով իրենց շնորհաւորութիւններն ու բարեմաղ-
թանքները կը յղեն քեզի, Նունէին, ընտանիքիդ բոլոր անդամներուն:

*Լատագոյն բարեմաղթանքներով եւ սիրով
Կիլգելեան Ասատուր*

Սարգսյան Ֆադեյ

Սարգսյան Ֆադեյ Տառնադի:
18.09.1923, Երեւան, Հայկական ԽՍՀ, – 10.01.2010, Երեւան,
Հայաստան:

Գիտնական, ակադեմիկոս, քաղաքական գործիչ, ՀՀ
Գիտությունների Ազգային Ակադեմիայի նախագահ, ՀԽՍՀ
Մինիստրների խորհրդի նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր,
գեներալ-մայոր: Մի շարք միջազգ. ԳԱ-ների անդամ:



/ 12 օգոստոսի 2004թ. /

Պարոն Ասատուր Գյուլեւլյանին,

Մեծարգո պարոն Գյուլեւլյան,

Խորին երախտագիտությամբ հայտնում եմ, որ վերջերս ստացել եմք
Ձեր անձնական գրադարանի նվիրատվությունը՝ 43 արկղ, 820 կգ,
շուրջ 1000 միավոր հրատարակություններ:

Ստացված գրքերը հանձնվել են ՀՀ ԳԱԱ-ի Հիմնարար գիտական
գրադարանի տնօրինմանը: Հիմնարար գիտական գրադարանին
անհրաժեշտ հրատարակությունները կհանձնվեն գրադարանի ընդ-
հանուր ֆոնդ՝ Ձեր նվիրատվության մասին հատուկ նշումով մատչելի
կլիներն անխտիր բոլոր ընթերցողներին:

Զախից՝ Ֆադեյ Սարգսյան, Ասատուր Գյուլեւլյան, Վահագն Գրիգորյան, Սաբիր
Ստեփանյան, Գեղամ Ղարիբջանյան, Էդիկ Ներսիսյան:



Կրկնօրինակները, ինչպես եւ Դուք էիք հանձնարարել, կհանձնվեն Ակադեմիայի համակարգի մյուս գրադարաններին՝ իրենց գիտական հետազոտությունների ուղղությանը համապատասխան: Այսպես, արդեն ավելի քան 250 միավոր գրքեր հանձնվել են Ննագիտության եւ ազգագրության ինստիտուտին:

Լիահույս եմ, որ Ձեր մեծարժեք նվիրատվությունը կնպաստի մեր համակարգի գրադարանների ֆոնդերի հարստացմանը եւ օգտակար կլինի մեր քաղմահազար մասնագետ ընթերցողների համար:

Նարգանքներով եւ լավագույն մաղթանքներով,

Ակադեմիկոս՝ Սարգսյան Ֆադեյ Տանատի

Սմբատյան Արմեն

Սմբատյան Արմեն Բագրատի:
17.11.1954, Երեւան:
Հայ կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ
(1987), պետական հասարակական գործիչ:



/ 20 հունիսի 2001թ. /

Ասատուր Գյուզելյան,

Երեւանի Կոմիտասի անվ. Պետական կոնսերվատորիայից (ԵՊԿ)

ԵՊԿ-ի ուսանողների օժանդակ կրթաթոշակի վերաբերյալ

Մեծարգո պարոն Գյուզելյան,

Թույլ տվեք հայտնել մեր խորին շնորհակալությունը Տեր եւ Տիկին Արմեն եւ Ռեյչլ Կրիտներին, Տեր եւ Տիկին Արա եւ Բարբարա Գալստյաններին, ինչպես նաեւ Ջեզ, պրն Գյուզելյան, այն անկեղծ եւ սրտանց օգնության համար, որը դուք առ այսօր ցուցաբերել եք ԵՊԿ-ի ուսանողությանը:

Տեղեկացնում ենք, որ 2001-2002թթ. ուսումնական տարում Ձեր կողմից տրամադրված տարեկան կրթաթոշակները հատկացվել են դաշնակահար՝ Միքայել Գաբրիելյանին, ջութակահարներ՝ Ջոհրաթ Թադեոսյանին եւ Ռուբեն Սմբատյանին, որոնք ունեն ուսումնական բացառիկ առաջադիմություն, դրսևորել եւ դրսևորում են շնորհաշատ ստեղծագործական ունակություններ եւ հանդիսանում են ԵՊԿ-ի ասպիրանտներ:


Այսպիսով, այս վերջին հատկացումներով ԵՊԿ-ի ուսանողների օժանդակ կրթաթոշակների համար բարերարների կողմից տրամադրված գումարները սպառվում են: Տավատալով բարերարների ԵՊԿ-ի լավագույն ուսանողներին օգնություն ցուցաբերելու բարի կամքի եւ հնարավորությունների լիարժեք առկայությանը, սպասում ենք բարերարների օգնության շարունակությանը, ինչի համար հայտնում ենք մեր կանխավ շնորհակալությունը:

Տարգանքներով՝ ռեկտոր պրոֆ. Սմբատյան Արմեն

Ստեփանյան Գառնիկ

Ստեփանյան Գառնիկ Խաչատուրի (Տեր-Ստեփանյան):
14.02.1909, Մամախաթուն գյուղ, Դերջան գավառ, Արեւմտյան
Հայաստան, - 1.07.1989, Երեւան:

Գրականագետ, թատերագետ, գրող, բառարանագիր,
արվեստագիտության դոկտոր (1971), ՀԽՍՀ արվեստի
վաստակավոր գործիչ (1967), ՀԽՍՀ պետական մրցանակի
դափնեկիր (1980, «Հայ նոր գրականության պատմություն»
կոլեկտիվ աշխատության համար), ՀԳՄ անդամ 1943թ.:
ԽՍՀՄ գրողների միության անդամ 1943թ.: ԽՄԿԿ անդամ
1939թ.:



/ 11 մայիսի 1960թ. /

Սովետական Սոցիալիստական Տանրապետության

Գիտությունների ակադեմիա

Գրականության եւ արվեստի թանգարան

Կալկաթայի Հայկազյան գեղարվեստական
միության վարչությանը

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության եւ
արվեստի թանգարանը պատրաստում է հատուկ մի հետազոտություն՝
Մեսրոպ Թադիսիանի մասին, որի գրական, մանկավարժական եւ
հրապարակախոսական գործունեության մեծագույն մասը կապված է
հնդկահայ գաղութի հետ:

Բացի տպագրված հեղինակություններից, նա թողել է մեծ թվով
անտիպ աշխատություններ, ինչպես՝ օրագրեր, հայոց լեզվի արմա-
տական բառարան, գեղարվեստական երկեր, որոնք պահպանվում են
հանգուցյալ Մեսրոպ Սեթյանի արխիվում:

Խնդրում ենք հայտնել թե որտեղ է գտնվում Մ. Սեթյանի արխիվը
եւ ինչպես կարելի է օգտվել այդ նյութերից: Արդյոք կարող ենք ստա-
նալ եթե ոչ բնագրերը, գոնե ընդօրինակությունները եւ կամ դրանց
միկրոֆոտոները եւ ինչ պայմաններով:

*Կանխահայտ շնորհակալությամբ եւ հարգանք,
Դիլեկտոր՝ Ստեփանյան Գառնիկ*

Վարդանյան Կամո

15.12.1928, Երեւան - 25.11.2000, Երեւան: Խմբագիր, հաս. քաղ. գործիչ: ՀԽՍՀ (1990),
ՀՀ (1990-95թթ.) ՊԽ և ԱԺ պատգամավոր:



/ 27 հունիսի 1968թ. /

«Տայրենիքի ձայն»

Մեծահարգ տիար Ասատուր Գյուզելյան, Լոնդոն

Հարգելի բարեկամ,

Ընդունեցեք մեր խորին շնորհակալությունը «Տայրենիքի ձայն»-ին քերած Ձեր եռանդուն աշխատակցության համար, որը մենք մեծապես գնահատում ենք: Մեր ընթերցողների կողմից հատկապես ջերմ ընդունելության արժանացավ պարոն Ռոզանդալի հետ Ձեր վարած «Տայաստան եւ հայ ժողովուրդը» հարցազրույցը: Դժբախտաբար, մենք չունենք հարգելի գրողի եւ դասախոսի հասցեն, որպեսզի անձամբ գրենք նրան: Խնդրում ենք նրան փոխանցել մեր շնորհակալությունը եւ նաեւ հայտնել մեզ, թե ինչով կարող ենք օգտակար լինել պարոն Ռոզանդալին՝ իր առաջիկա տարվա դասախոսության համար:

Սպասելով հետաքրքիր նոր թղթակցությունների

Տարգանքներով «Տայրենիքի ձայն» շաբաթաթերթի խմբագիր՝

Վարդանյան Կամո

Վարսյան Շաքե

Վարսյան Շաքե (Վարսենիկ Հակոբի Բոյաջյան)
14.05.1923թ. Նիկոսիա, Կիպրոս - 1996թ. Երեւան):
Հայ արձակագիր, լրագրող: ՀԽՍՀ վաստակավոր լրագրող,
ԽՍՀՄ գրողների միության անդամ:



🔗 Միրելի Աասուր,

Գրաբերս տիկին Անժիկ Ստեփանյանը մեր լավագույն արձակագիրներից է: Բազմաթիվ գրքերի հեղինակ է: Նաիրի Չարյանի տիկինը:

Խնդրում եմ անես կարելիդ, որ ճանաչի լոնդոնահայ կյանքը: Կարող ես նույնիսկ նրա երեկոն կազմակերպել Նայ տանը: Նա քեզ մի ուրախ լուր կհաղորդի: Տիկին Ստեփանյանը գալիս է Խաղաղության կոմիտեի պատվիրակության կազմում:

Վարսյան Շաքե

Ն.Գ. Շտապ թղթակցություն ուղարկիր:



/ 13 մարտի 1967թ. /

Միրելի Աասուր,

Շնորհակալությամբ ստանում եմք թղթակցություններդ եւ մեծ հաճույքով տպագրում: Նույս ունեմ, որ լոնդոնաբնակ հայության կյանքը լուսաբանող ոչ մի երեսույթ բաց չես թողնի: Թղթակցություններդ մեծ հետաքրքրությամբ են կարդացվում մեր ընթերցողների կողմից:

Նոր հասցեդ տվել եմ բաժանորդագրության բաժին, որպեսզի այսուհետեւ թերթերը քեզ ուղարկվեն այդ հասցեով:

Ինչո՞ւ ոչինչ չես գրում քո մասին: «Արեգակ» թերթի փակվելուց հետո ինչո՞վ ես զբաղված: Նեոանկար կա՞ Լոնդոնում տպագիր օրգան ունենալու:

Դեկտեմբեր ամսին գնացի Միրիա եւ Լիբանան, կարն ժամանա-

կով եղա նաեւ Ալեքսանդրիայում, որտեղ տեսա Մարի Նշանյանի աղջկան՝ Նեղիներին, եղա Կիպրոսում եւ Տունաստանում: Ո՛վ է իմանում, գուցե մի օր էլ հրավեր ստանամ որեւէ կազմակերպությունից՝ Լոնդոն այցելելու: Մարի Նշանյանը մոտ վեց ամիս է նորից Տայաստանում է, մարտի 18-ին պիտի մեկնի: Չեղավ այնպես, որ նրա այստեղ եղած ժամանակ դու եւ տիկինդ էլ լինեիք մեզ մոտ եւ վայելեինք բոլորիդ ներկայությունը միասին:

Ասատուր ջան, մեր շաքաթաթերթում շատ հետաքրքիր կլինի տպագրել այսպիսի մի հոդված՝ «Տայկական մշակութային գանձերը քրիտանական թանգարանում»: Գուցե գրե՞ս այդ մասին: Ընդհանրապես ինքդ մտածիր, թե ի՞նչ կարող ես գրել մեզ համար, բացի ընթացիկ թղթակցություններից:

Անահիտ Սահինյանը մեծ համակրանքով բարեւում է քեզ: Իր ուղեգրություններում բավականին ընդարձակ տեղ էր տվել քեզ: Ընդհանրապես բոլոր Լոնդոն այցելողները հիացած են քեզմով, որի համար, որպես ազգականդ եւ ընկերուհիդ շատ ուրախ եմ:

Բարեւներս ազնիվ տիկնոջդ, որին անձնապես ծանոթանալու բախտը երեւի կունենամ մի օր:

Մրտագին քարեւներով՝ Վարսյան Շաքե

Վարսյան Շաքեի հետ: Երեւան, 1968թ.:





Մեծահարգ Տիար Ասատուր Գյուզելյան, Լոնդոն

Միտելի բարեկամ,

Երգչուհի Արփինե Փահլեւանյանի մասին ուղարկածդ թղթակցությունը տպագրեցինք «Նայրենիքի ձայն» շաբաթաթերթում: Ուրախ կլինենք, եթե այսուհետ եւս կանոնավոր կերպով աշխատակցեք մեզ: Այս նամակով խնդրում ենք Ձեզնից մեզ համար մի հոդված գրել Լոնդոնի հայկական տան մասին, ընդգրկելով նրա երիտասարդական կազմակերպությունը, գրադարանը, երգչախումբը եւ այլն: Արդյոք շատ չի՞ լինի, եթե խնդրենք նաեւ գրել Նոյկաստանի «Մարդասիրաց» վարժարանի մասին, որը Դուք մոտիկից ճանաչում եք: Գրեք այնպես, որ ընթերցողը իմանա, թե ե՞րբ է հիմնվել, ի՞նչ փուլերով է անցել, այժմ ի՞նչ վիճակում է եւ այլն:

Անահիտ Սահինյանի հետ շատ խոսեցինք քո մասին: Նույս ունենք մոտ ապագայում Ձեզ տեսնել: Ձեր հոդվածների համար հոնորարը կստանաք, երբ գաք: Բարեւներ Ձեր ազնիվ տիկնոջը:

Նայրենական ողջույններով

*«Նայրենիքի ձայն» շաբաթաթերթի սփյուռքի բաժնի վարիչ՝
Վարսյան Շաքե*

ՏԱՏՈՐՅԱՆ ԵՎ ԳՐԱՆՈՒՅԻՆ ԳՐԱՆՈՒՅԻՆ ԿՈՒՆՍՏԱՆԻ ՍԱՆՎԵԼԻ

20.12.1911, գ. Կյուրիին (Սեբաստիայի նահանգ) – 15.05.1990, Երեւան:
Հաս. գործիչ, հրապարակախոս: Ֆրանս. Դիմադրության շարժման (1941-1944)
հայկ. կազմակերպության ղեկավարներից: Հայ. ազգ. ճակատի հիմնադիրներից:
1942-44-ին՝ «Հայ ճակատ», «Ժողովուրդ» հակաֆաշիստական թերթերի խմբագիր:
Աշխատակցել է «Լիբանան» (Բեյրութ), «Երեւան», «Չանգու» երկուսն էլ՝ Փարիզ),
«Բանվոր» (Նյու Յորք) թերթերին: 1947-ին հայրենադարձվել է: 1948-82թթ. աշխատել է
Հայաստանի հեռուստառադիոպետկոմում, 1972-82-ին փոխնախագահ:



/ 24 մարտի 1966թ., Երեւան /

«Արեգակ» ամսաթերթի խմբագրապետին, Լոնդոն

Հարգելի բարեկամ,

Ժամանակին ստացել եմ Ձեր նամակը: Նետագայում հանույքով կարդացել եմ նաև Ձեր հայրենիքից ստացած տպավորությունները՝ «Արեգակ»-ում: Ամսագրի հունվարի համարում զետեղված երկտողով հարցնում եք, թե ստանո՞ւմ ենք արդյոք «Արեգակ»-ը: Նայտնում եմ, որ բավական երկար ամիսներ է արդեն, որ շնորհակալությամբ ստանում ենք եւ հանույքով հետեւում բովանդակությանը: Եվ եթե անգլիահայ կյանքից նորություններ են լինում, Մերձավոր եւ Միջին Արեւելքի երկրների համար տրվող մեր հաղորդումներում տեղ ենք տալիս դրանց: Այդ կարգի հաղորդումներով մենք ձգտում ենք մեր ունկնդիրներին, հնարավորին չափ, տեղյակ պահել նաև մեր տարբեր գաղութների կյանքին:

Ձեր օգտակար աշխատանքում հաջողության մաղթանքներով եւ հարգանքներով՝

Արտասահմանի համար տրվող հաղորդումների

գլխավոր խմբագիր՝ Տատուրյան Ծ.



Ասատուր Գյուզելյանին, Լոնդոն

Սիրելի Ասատուր,

Մենք ամեն կիրակի, Փարիզի ժամանակով առավոտյան ժամը 9-ից 10-ը Եվրոպայի երկրներում ապրող հայության համար մեկ ժամ տեւողությամբ ռադիոհաղորդումներ ենք տալիս 19 եւ 25 մետր ալիքներով:

Խնդրում ենք մեկ-երկու կիրակի լսել մեր հաղորդումները եւ տեղեկացնել լսելիության մասին: Բացի այդ, առաջարկում եմ, որ պարբերաբար անգլիահայ կյանքից թղթակցություններ ուղարկեք մեզ: Ձեր թղթակցությունները կձայնասփռվեն Մերձավոր Արեւելքի երկրների, Եվրոպայի եւ Ամերիկայի երկրների հայության համար տրվող մեր հաղորդումներում:

Սպասելով Ձեր պատասխանին, սիրով՝

*Արտասահմանի համար տրվող հաղորդումների
գլխավոր խմբագիր՝ Տատուրյան Շ.*

Փարսադանյան Ալբերտ

Ալբերտ Իշխանի Փարսադանյան. 10.02.1930թ., Ալավերդու շրջանի Լեռնահանքեր ավանում, 16.03.2009թ. Երեւան: Բազմավաստակ մանկավարժ, գրող, բանաստեղծ, հրապարակագիր:

Փարսադանյանի հեղինակած գրքերից հիշենք մի քանիսը. «Ծիտիկի արկածները», «Գիտելիքների շտեմարան» (5 հատոր), «Ես սիրում եմ քեզ», «Արարատ 73», «Ամուսների շքահանդես», «Չայը», «Չեղինակների մակագրությամբ», «Թղթապանակ 1915», «Առանց խուտուտի», «Ղողանջ անմահության», «Սրբացած մասունքներ», «Չարատեվող բարեկամություն»: «Չարատեվող բարեկամություն» գիրքը, որի երկրորդ եւ լրացուցիչ հրատարակությունը լույս տեսավ 2009-ին, Երեւանում, Ալբերտի մահվանից մի քանի ամիս հետո, նվիրված է Ալբերտի եւ Ասատուրի հիանալի նամակագրության:

Չրատարակության պատրաստ գրքում տպվեց նաեւ Ալբերտի մահվան առիթով Ասատուրի «Փոխան դամբանական», «Չուսկ բանք» գրությունը, որը հրատարակում ենք նաեւ ստորեւ, միանգամ եւս տալով մեր հարգանքի տուրք մեծատառով ՄԱՐԴՈՒՆ ԵՎ ԳՐՈՂԻՆ, Ալբերտ Փարսադանյանին:



/ 10 հունվարի 1959թ., Ալավերդի /

Սիրելի Ասասուր Գյուլելյան,

Արդեն գիշեր է, ցուրտ, ձմեռային գիշեր: Դրսում սուլում է քամին, անկոչ հյուրի նման թակում այս կամ այն բնակարանի դուռն ու պատուհանը, հետո հանկարծ սլանում փողոցներում ու ծվարում հանդիպակաց հսկայական ժայռերի ծերպերում: Վաղուց դադարել է երթեւեկությունը մեր փոքրիկ քաղաքի փողոցներում, վաղո՛ւց-վաղո՛ւց հանգել են բոլոր պատուհանների լույսերը, քնել են մարդիկ, իսկ ես նստել եմ գրիչը ձեռքիս եւ մտորում եմ:

Նամակս հասնելուց առաջ, ես մտքով Ձեզ մոտ եմ: Ես իմ հոգու աչքերով տեսնում եմ Ձեզ, նստած գրասեղանի առաջ թերթում եք հայատառ գրքերը, խորասուզվում ընթերցանության մեջ եւ չեք նկատում, թե ինչպես մթնեց օրը, ինչպես խավարն իր անթափանց թեւերով ծածկեց փողոցներն ու մայթերը, թե ինչպես քնեցին մարդիկ, իսկ Դուք դեռ արթունք եք: Նետո հանկարծ հիշում եք ինձ: «Ինչո՞ւ նամակի պատասխանն ուշացավ, ի՞նչն է պատճառը, որ նամակներ չկան արեւավառ Տայաստանից, ինչո՞ւ լռեց հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Ալբերտ Փարսադանյանը»:

Իրոք, գուցե հենց այս ժամին, 1959թ. հունվարի 10-ի ուշ երեկոյան, Դուք էլ մտածում եք իմ մասին այնպես, ինչպես ես՝ Ձեր մասին: Դուք ինձ մեղադրում եք նամակին չպատասխանելու համար, իսկ ես փնտրում եմ ապացույցներ, որոնք կարող են ինձ արդարեցնել, իսկ այդպիսի ապացույցները շատ չեն, ընդամենը մեկն է, եւ դա էլ՝ սիրտս է:

Ամեն օր ես մտածում եմ Ձեր նամակին պատասխանելու մասին: Ամեն օր գրիչ եմ վերցնում, գրում եմ Ձեր սիրելի անունն ու ազգանունը: Տեսո՞ւ վերցնում Ձեր գրած նամակը, ցանկանում կարդալ մի անգամ եւս, որ պատասխանն առավել լավ ու սպառիչ լինի, բայց... բայց սկսում եմ կարդալ ու այլեւս չեմ կարողանում կիսատ թողնել ու դնել մի կողմ: Ես տեսնում եմ մի կրակված ու հայրենակարոտ սիրտ, որ բարբախում է իմ սրտին մոտիկ ու հարազատ, թեկուզ եւ գտնվում է հազարավոր կիլոմետրեր հեռու, «յոթ սարերից եւ յոթ ծովերից այն կողմ, հեքիաթային Տնդկաստանի երկնքի տակ: Ես տեսնում եմ, թե ինչպես է դողացել Ձեր ձեռքը, երբ Դուք շարադրել եք Ձեր մտքերը - Տայրենիք ուղարկվող ծրարի մեջ ամփոփելու համար: Ես զգում եմ, թե ինչպես խոնավացել են Ձեր աչքերը, երբ հիշել եք Տայրենիքը, Մասիսները, Սեւանը, Արարատյան դաշտը: Ու կարկամել եմ: Մոռացել եմ ամեն ինչ, նորից ու հազարերորդ անգամ անհիծել եմ չար բախտը, թուրքական կեռ յաթաղանը, որն այնքան անգույթ եղավ հայ մարդու ճակատագիրը որոշելիս: Ես անհամեմատ երիտասարդ եմ: Ծնվել եմ 1930 թվին, Լոռվա (Գուգարաց աշխարհի) գեղեցիկ բնության մեջ, մանուկ օրերից ինձ ժպտացել է Մասիսներով եւ խաղողով գեղազարդարված Տայաստանի պետական գերբը, վերջացրել եմ ուսման ընթացքը Սպանդարյանի անվ. դպրոցում, ավարտել եմ քաղաքամայր Երեւանի պետական համալսարանը, աշխատանքի եմ անցել այն դպրոցում, ուր մի տասնամյակ շարունակ ինձ գիտելիքներ են տվել իմ ուսուցիչները, այժմ էլ ես եմ ուսուցիչ, այժմ էլ նույն դասարաններում ես եմ ավանդում հայոց լեզուն, հայոց գիրը, հայոց գրականությունը: Բայց ամեն անգամ, երբ հիշում եմ Դամոկլյան սրի նման հայ ժողովրդի գլխին կախված թուրքական կեռ յաթաղանը, հոգիս մշուշվում է, բռունցքներս՝ սեղմվում: Դարեր շարունակ դժվարին համփա անցած հայ ժողովուրդը ցրվեց աշխարհով մեկ, գնաց հյուսիս ու հարավ, արեւելք ու արեւմուտք, բայց չմարեց նրա սրտում հայրենիքի սերը, հայրենիքի կարոտը: Տե՛ռու Տնդկաստանից հղած Ձեր նամակը

Էլ ավելի բորբոքեց սերս, Էլ ավելի մեծ սիրով սիրեցի ձեզ, իմ անգին հայրենակիցներ, իմ հարազատներ, իմ հայեր: Ո՛ր էլ լինեք դուք, որ ամպակուտակ երկինքն էլ կախվի ձեզ վրա, դուք մերն եք, մեր հարազատը, մեր սիրելին: Տայրենիքի սիրով այրվող հայեր:

Այսպես եմ խորհել ամեն անգամ, երբ ցանկացել եմ պատասխանել Ձեր նամակին, սիրելի Ասատուր Գյուզելյան: Ու թվացել է, թե արդեն գրել եմ, ամեն ինչ ասել ու սպառել ինձ, ու ոչինչ գրել չեմ կարողացել: Անցա՛ն ամիսներ: Ամոթի կարմրությունն եմ զգում այտերիս այդքան ուշացնելու համար, բայց գիտեմ հաստատ, որ պիտի ներվեմ:

Դպրոցում բոլորն էլ գիտեն Ձեր նամակի մասին: Մանկավարժական խորհրդի նիստում կարդացի այն ամբիոնի մոտից: Տուգնեցին բոլորը: Խնդրեցին իրենց սրտագին ողջույնը հաղորդել հայրենաշունչ նամակի հեղինակին, որը եւ սրբությամբ կատարում եմ: Ընդունեցե՛ք, ուրեմն, մեր ողջույնները, եւ ի նշան այն բարեկամության, որ ստեղծվում է մեր միջեւ, ընդունեցե՛ք մեր մանկավարժական կոլեկտիվի լուսանկարը, որը, թերեւս այնքան լավը չէ, սակայն նրա վրայից Ձեզ կնայեն Ձեզ սիրող եւ հարգող ուսուցիչներ եւ ուսուցչուհիներ:

Դպրոցի մասին շատ կուզենայի գրել: Այժմ մեզ մոտ դպրոցը վերակառուցվում է: Արդեն հատուկ օրենք կա այդ մասին: Ուղարկում եմ «Սովետական Տայաստան» օրաթերթի այն համարը, ուր տպագրված է դպրոցի մասին օրենքը: Տեսագայում ավելին կգրեմ, եթե այդ ցանկությունն ունենաք:

Կուզենայի, սիրելի ընկ. Գյուզելյան, իմանալ, դուք Տայաստանից հայերեն գրքեր ստանո՞ւմ եք, թե ոչ: Նամակից բացի, նույն փոստով ուղարկում եմ նաեւ Դերենիկ Դեմիրեյանի «Վարդանանք» վեպը, գուցե հասնի Ձեզ:

Սրտանց սեղմում եմ Ձեր ձեռքը, սեղմում այն հավատով, որ մենք արդեն բարեկամներ ենք: Թե բախտը ժպտաց, եւ մենք հանդիպեցինք կյանքում, մեր բարեկամությունը կօծենք համբույրով:

Տաղորդեցե՛ք իմ եւ մեր ուսուցչական կազմի ջերմ ողջույնները բոլորի՛ն, բոլորի՛ն, բոլորի՛ն:

Միշտ Ձեր՝ Փարսադանյան Ալբերտ



Սիրելի Ասասուր,

Նամակդ մի ամբողջ օր պահեցի սրտիս վրա ու չկարդացի: Այնքան հուզումներ ունեցա այդ մի հատիկ օրում, այնքան ջերմություն զգացի հեռուներից եկած ծրարից:

Տարիքով ավելի մեծի իրավունքով եւ առավել մեծ իրավունքով, որ քո բարեկամն եմ, ուզում եմ սրտանց եւ առանց ավելորդ սեփեւթանքների քեզ դիմել այնպես, ինչպես ամենից հարազատ մարդու եմ դիմում.

Սիրելի Ասատուր...

Դու նամակներում այնքան հույզ ու ջերմություն ես ամփոփում, այնքան լավն է քո սիրտը, որ ամեն ոք, խիստ դժվարությունների կհանդիպի, եթե հանձն առնի պատասխանելու քո նամակին:

Առավել խոսուն ու զորավոր բառեր չեմ կարողանում գտնել, պատկերավոր խոսքեր ու սիրտը թարգմանող արտահայտություններ չեմ կարողանում արտաբերել, որովհետեւ քո նամակում ամեն-ամեն ինչ կա եւ հայրենակարոտ մարդու անզուսպ բռնկում, եւ հայրենասեր մարդու հոգու ազնվություն, եւ հայ մանուկին ու երիտասարդին հայոց արժանապատվությամբ դաստիարակելու ազնիվ ցանկություն, մի խոսքով այն ամենը, որ բնորոշում են լավ մարդուն, սիրելի մարդուն:

Նորից ու նորից ընթերցելով ու վերընթերցելով քո նամակը, զգում եմ, որ խիստ դժվար է վարձահատույց լինել այն մեծ վստահությանը, որ տածում ես դեպի ինձ: Եվ ես որոշում եմ ամբողջ կյանքում չմոռանալ քեզ, շարունակել արդեն ձեռք բերված բարեկամությունը, որքան էլ հարատեւի անսահման ժամանակն ու երկարի անհաս ճանապարհը: Դու մարդկային սրտի նման տեղ գտար իմ կրծքում եւ բարբախում ես առանձնահատուկ ջերմությամբ ու սիրով:

Երեք օր առաջ Տայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի գիտական սեսիան տեղի ունեցավ մեզ մոտ՝ Ալավերդիում: Եկել էին ակադեմիկոսներ, գիտնականներ, գիտության մարդիկ, որոնք զեկուցումներ կարդացին խիստ կարեւոր հարցերի մասին: Եկել էր նաեւ Վիկտոր Տամբարձումյանը: Ընդմիջումներից մեկի ժամանակ մոտեցա նրան, խոսեցի քո եւ Տնդկաստանից ստացած լուսանկարների մասին:

Մանկան նման պայծառացավ նրա դեմքը, ուրախությունից շողա-

ցին նրա աչքերը, կարոտով նայեց լուսանկարին: Լուսանկարները ձեռքից ձեռք անցան: Վիկտոր Տամբարձումյանը դիմեց հավաքվածներին.

– Նայեցե՞ք, սա Ասատուր Գյուզելյանն է, ապրում է Կալկաթալում, իրեն շատ կարգին է պահում: Ջարմանալի է, հայրենասերները ճանաչվում են առաջին իսկ հայացքից: Եվ ես հիացա Գյուզելյանով, նա մեծ հայրենասեր է:

Տետո դառնալով դեպի ինձ ասաց.

– Ես ստացել եմ այս լուսանկարներից: Իսկ եպիսկոպոսի հետ նկարից չի ուղարկե՞լ: Երբ նամակ գրեք, բարեւեցեք իմ կողմից, հայտնեցե՞ք, որ հիշում եմ կալկաթահայերին եւ բարեւում բոլորին:

Եվ ես, սիրելի Ասատուր, սիրով կատարում եմ նրա խոսքը, բարեւում ինչպես քեզ, այնպես էլ բոլորին, բոլորին, իմ հայրենակիցներին, որոնք ապրում են հեռավոր ավերի վրա, հեռավոր երկիրքների տակ: Բարեւներ հատկապես աներհորդ՝ հարգարժան Պետրոս Ալեքսյանին եւ վերջապես սիրելի Նարինեին: Ուղարկածդ լուսանկարը, որտեղից ժպտում եք դու եւ Նարինեն, հուզմունքով լցրեց սիրտս: Նշանակում է պիտի ստեղծել ավելի մտերիմ, ավելի հարազատ մթնոլորտ մեր բարեկամության համար: Ես էլ ուղարկում եմ իմ եւ տիկնոջս՝ Միրայի լուսանկարը: Սովորել ենք միասին, ավարտել ենք Երեսնի Պետական համալսարանը, Միրան նույնպես դասավանդում է հայոց լեզու եւ գրականություն մեր քաղաքի Եղիշե Չարենցի անվան միջնակարգ դպրոցում:

Միրելի Ասատուր, հարցնում ես, թե ինչ լեզուներով եմ խոսում: Բավականին հմուտ եմ ռուսերենում: Դպրոցում անցել եմ անգլերեն, իսկ համալսարանում հինգ տարի զբաղվել եմ ֆրանսերենով: Տամալսարանում երկու տարի ուսումնասիրել եմ նաեւ վրացերեն եւ այժմ, իբրեւ անդրկովկասցի եւ վրացիների հարեւան, բավարար չափով խոսում եմ այդ լեզվով: Սակայն պիտի ասել, որ օտար լեզուների հարցում միշտ էլ արտասահմանի հայ ուսանողն ավելին է իմանում, որովհետեւ պայմանները ստիպում են նրան առավել խորությամբ եւ անհրաժեշտության մեծ պահանջով յուրացնել տվյալ վայրի խոսակցական ու տարածված լեզուն մեզ մոտ՝ Սովետական Միությունում, հրաշք լեզվի է նման ռուսերենը: Իմանալով ռուսերեն, հայը կարող է ազատ հաղորդակցվել ինչպես վրացու եւ ադրբեջանցու, այնպես էլ

ուզբեկի, դազախի, Էստոնացու եւ մոլդավացու, չինացու եւ բուլղարացու հետ: Դեռ ավելին՝ ռուսերենն այժմ դուրս է եկել միջազգային ասպարեզ եւ քայլում է աշխարհի պողոտաների վրա անգլերենի հետ, եթե ոչ հավասար, ապա եւ նրանից ոչ պակաս վստահությամբ: Այդ իմաստով, իհարկե, օտար լեզուների հարցը մի քիչ այլ տեսանկյունով ենք դիտում: Չկա խոսակցական միջավայր, լեզուն ուսուցվում է միայն պատերի ներսում եւ մնում է իբրեւ ջերմոցային, արեւի երես չտեսնող ծաղկի դալուկ գեղեցկություն:

Ասատուր ջան, ես հաճախ եմ լինում Երեւանում տարբեր առիթներով: Տիմա արդեն ամառային արձակուրդներն են սկսվել եւ ազատ եմ մինչեւ սեպտեմբեր: Անպայման կլինեմ Երեւանում, կայցելեմ քո ծանոթներին ու բարեկամներին, որոնց ես արդեն իմ ծանոթներն ու բարեկամներն են հաշվում: Տետո արդեն քեզ կգրեն, թե ինչ խոսեցինք ու ինչպես խոսեցինք:

Ուղարկում եմ տեսարաններ Երեւանից: Նրանց տակ կատարված մակագրությունները ռուսերեն են: Արդյոք դու գիտես եւ ծանոթ ես ռուսերենին: Եթե չգիտես եւ ծանոթ չես, կցանկանա՞ս ռուսերենի ձեռնարկներ ունենալ – ծանոթանալու, սովորելու համար:

Ես եւ Միրան Նարինեի համար ուղարկում ենք մեր ձեռքի տակ եղած մի համեստ նկար, փոքրիկ ծաղկեփունջը թող պսակի մեր բարեկամությունը:

Վերջացնում եմ, սիրելի Ասատուր, ու սպասում նամակիդ: Մի սպասիր իմ պատասխանին, գրիր ավելի հաճախ: Ես նույնպես որոշել եմ չսպասել քեզ, գրել ավելի հաճախ:

Բարեւներ, բարեւներ բոլորին՝ քո Ալբերտ



ՆԿՊ Կենտկոմի քարտուղար
Ընկ. Թովմասյանին
Կոմերիտական ուսուցիչ
Ալբերտ Իշխանի Փարսադանյանից

Նամակ

Ցանկանում եմ ընդունվել ՍՄԿԿ շարքերը, որի համար դիմում եմ ներկայացրել: Սկզբնական կուսակցական կազմակերպությունն ինձ ընդունել է, իսկ պարտիայի շրջանային կոմիտեն՝ մերժել, պատճառաբանելով, որ ես արտասահմանյան երկու երկրների հայկական դպրոցների նամակ եմ գրել եւ պատասխան նամակներ ստացել:

Խնդրում եմ պատասխանել, հիշտ է վարվել արդյոք պարտիայի շրջանային կոմիտեն ինձ չընդունելով կուսակցության շարքերը: Ես գտնում եմ ո՛չ հիշտ եւ չեմ կարող հաշտվել պարտիայից դուրս գտնվելու հետ:

Ասատուր Գյուզելյանի նամակներում, որոնք պահվում են ինձ մոտ, զգացվում է հայրենասեր մարդը, դեմոկրատը, Սովետական Տայաստանի ջերմ պաշտպանը: Գուցե ընկ. Նամբարձումյան, ես սխալվում եմ, գուցե սխալվել եմ նրա նամակին պատասխանելով, քայց դա հիմք չէր ներկա պայմաններում, քաղաքական նոր իրադրության մեջ, ինձ պարտիայի մեջ չընդունելու համար:

Ընկեր Թովմասյան: Ես լավ եմ հասկանում, որ խլում եմ ձեր սուղ բոպեները, քայց չեմ կարող չգրել, չեմ կարող հաշտվել այն մտքի հետ, որ իմ ամբողջ կյանքը, գիտակցական գործունեությունը կուսակցությանն ու կոմերիտմիությանը նվիրված կոմերիտականը չպետք է լինի Կոմունիստական պարտիայի անդամ: Խնդրում եմ Ձեզ զբաղվել իմ հարցով, պատասխանել մի երկտողով: Տարկ եմ համարում հիշեցնել, որ հայրս 1923 թվականից ՍՄԿԿ անդամ է, նախկին կոմերիտական, այժմ՝ թոշակառու:

Սպասում եմ Ձեր պատասխանին:

Դուք կարող եք իմ կյանքի համար վճռական դեր խաղալ:

Նամակը ուղղված է նաեւ Վ. Տամբարձումյանին

Ընկ. Տամբարձումյան, ես այնքան կուզենայի, ինձ ճիշտ հասկանաք: Պատկերացրեք, որ այն ինչ կատարել եմ ես, իմ անձնական հաճույքի համար չի եղել, այլ մեր շրջանի երիտասարդության, մեր դպրոցի համար: Ու այսօր հանկարծ, երբ ես դիմում եմ ներկայացրել, որպեսզի ընդունվեմ Սովետական Միության Կոմունիստական կուսակցության շարքերը, ինձ մերժում են՝ քաղաքականապես անբարեհույս համարելով: Ես մեղադրվում եմ նրա համար, որ նամակ եմ գրել եւ ստացել արտասահմանում ապրող մի հայ ուսուցչից՝ Ասատուր Գյուզելյանից, որին դուք տեսել եք Կալկաթայում:

Ես այսպես եմ կարծում: Ով էլ լինի այդ Գյուզելյանը – հայրենասեր, թե դաշնակցական ես թույլ չեմ տվել որեւէ սխալ, երբ գովերգել եմ մեր կարգերը, մեր դպրոցը, մեր իրականությունը: Դեռ ավելին՝ ուղարկել եմ Դեմիքոյանի «Վարդանանքը», ոգեւորել եմ հայրենասիրությամբ, Սովետական Տայաստանի նկատմամբ ջերմ սիրով: Մեր կյանքի առավելությունների մասին եմ խոսել ես, Սովետական Տայաստանի առեւաշող ներկայի ու պայծառ գալիքի մասին:

Իսկ հիմա՛... Ես դուրս եմ մնում այն պարտիայից, որի համար չեմ խնայել անգամ կյանքս: Ես՝ կոմերիտականս, ես՝ 1923թ. կոմունիստի, նախկին կարմիր պարտիզանի որդին: Ինչո՞ւ, ինչո՞ւ...

Այդ է պատճառը, որ ես սկսեցի նամակներ գրել մեր երկրի տարբեր ծայրերին մեր դպրոցի եւ Բաթումիի, Բաքվի, Երեւանի, Բուլղարիայի հայկական դպրոցների միջեւ նամակագրական ջերմ կապ ստեղծեցի:

Դպրոցի անունից մի նամակ էլ գրեցի Տնդկաստանի Կալկաթա քաղաքի հայկական դպրոցի աշակերտներին, պատասխան ստացա, ստացա նաեւ ձեր լուսանկարները, որոնք ձեզ ցույց տվեցի մի օր, երբ դուք Ալավերդիում էիք:

Ձեր խոսքը իմ կյանքի համար ճակատագրական նշանակություն ունեցավ:

Ես 1944թ. կոմերիտական եմ, դպրոցն ավարտել եմ մեդալով, ավարտել եմ համալսարանը, աշխատում եմ արդեն 5-րդ տարին: Ես ինձ միշտ էլ արդարացրել եմ եւ ուսուցման, եւ աշխատանքում: Եղել եմ ակտիվ հասարակական աշխատող, որի համար անցյալ տարի ստացա ՏամԼԿԵՄ կենտկոմի պատվոգիր, հիմա էլ՝ ուսուցիչ

եմ, դասավանդում եմ հայոց լեզու եւ գրականություն, դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության քարտուղարն եմ, ՆԼԿԵՄ շրջկոմի էսթետիկական հանձնաժողովի նախագահը, զեկուցողների խմբի անդամ, քաղաքական եւ գիտական գիտելիքների տարածման ընկերության անդամ, դրուժիննիկ, ՆԼԿԵՄ շրջկոմի օրգան «Կայծակ» երգիծական թերթի խմբագիր, կոմերիտական քաղ.խմբակի պրոպագանդիստ, եւ այլն, եւ այլն: Իմ էությունն է աշխատել մեր երիտասարդության համար, մեր դպրոցի համար:

Ծնվել եմ 1930թ.: Միջնակարգ դպրոցն ավարտել եմ մեղալով: Ավարտել եմ նաեւ Երեւանի պետական համալսարանը: Արդեն 5-րդ տարին է, որ աշխատում եմ որպես հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ Ալավերդի քաղաքի Ս. Սպանդարյան դպրոցում: Կատարում եմ հասարակական մի շարք աշխատանքներ: Դպրոցի ԼԿԵՄ կոմիտեի քարտուղարն եմ, ԼԿԵՄ շրջկոմի «Կայծակ» երգիծական թերթի խմբագիրը, նույն շրջկոմի երիտասարդության էսթետիկական դաստիարակության հանձնաժողովի նախագահը, զեկուցողների խմբի անդամ, քաղխմբակի պրոպագանդիստ: Նանձնարարված բոլոր աշխատանքներում արդարացրել եմ ինձ:

Նետելելով մեր մեծ քաղաքների նշանավոր դպրոցների օրինակին, մեր դպրոցի ԼԿԵՄ կազմակերպության աշխատանքներում աշխուժություն մտցնելու, կյանքի նոր պահանջներին համապատասխան նամակագրական կապ եմ ստեղծել Բուլղարիայի Սոֆիա քաղաքի Սպանդարյանի անվան եւ Ննդկաստանի Կալկաթա քաղաքի հայկական դպրոցների հետ: Ես եւ իմ աշակերտները մեր նամակներում պրոպագանդել ենք սովետական դպրոցի առավելությունները, սովետական ուսուցչի եւ աշակերտի նկատմամբ մեր պարտիայի ու կառավարության հոգատարությունը, ժողովրդի կրթության ու բարեկեցիկ կյանքի համար ամեն տարի բաց թողնված միլիարդների մասին եւ այլն:

Մեր ստացած պատասխաններում զգացվում է մեր երկրի հաջողություններով ուրախացող մարդը, մեր ազատ հայրենիքի նկատմամբ անընդհատ ահող հետաքրքրությունը: Մեր բարեկամները խնդրում են զեղարվեստական գրքեր, իսկ մենք ուղարկել ենք հայրենասիրական թեմաներով գրքեր:

Իմ ուղարկած եւ ստացած 2-3 նամակը կարդացել եմ մեր դպրոցի

ուսուցչության, դիրեկտորի եւ ուսմասվարի, ժողկրթբաժնի վարիչի, ԼԿԵՄ շրջկոմի քարտուղարի մոտ, որոնք բոլորն էլ խրախուսել են ինձ, ոգեւորել: Եվ, իրոք, ինչն՝ չգրել, երբ կարելի է գրուցել, խոսել ու ապացուցել մեր սոցիալիստական կարգի առավելությունները կապիտալիստականի հանդեպ: Ես այսպես եմ կարծում, ես համոզված եմ իմ նշտության մեջ եւ այդ իսկ պատճառով պարտիայի շրջանային կոմիտեի որոշումը՝ մերժել իմ դիմումը, համարում եմ ո՛չ ճիշտ, անարդարացի:

Կոմերիտական ողջույններով՝ Փարսադանյան Ալբերտ

Ալբերտ Փարսադանյանի հետ: Երեւան, 1963թ.:





Իմ հեռավոր քարեկամ
 Կրկին առած թուղթ ու գրիչ
 Ուզում եմ քեզ նամակ գրել,
 Ես այրվում եմ քո կարոտից,
 Ես ուզում եմ քեզ գուրգուրել,
 Թեկուզ անցան օր ու ամիս,
 Ու քոլորեց գուցե տարին,
 Բայց գիշերվա այս ուշ ժամին,
 Նիշում եմ իմ քարեկամին...
 Իմ հեռավոր, իմ քարեկամ,
 Իմ կարոտած անուշ ընկեր,
 Թույլ տուր հեռվից, Ասատուր ջան,
 Միրով, սրտանց քեզ համբուրել,
 Քեզ հաղորդել հայրենի տան
 Ու հարազատ բույրը հողի,
 Թեկուզ հեռվից՝ հյուրասիրել,
 Ողկույզներով մեր խաղողի
 Արտաշատի գինով լեցուն
 Սափորները քո դեմ քացել,
 Եվ հեռավոր այս ամիսերում
 Սրտանց խմել ջերմ կենսացներ:
 Գիտեմ՝ հիմա օտարի պես
 Դեզերում ես օտար ճամփում
 Եվ քո սիրտը՝ բոց ու հրկեզ,
 Նազար կապով մեզ ես կապում,
 Գուցե հիմա նստած մթնում
 Երագում ես Մասիս, Չանգու
 Նազար-հազար ճամփա գտնում
 Որ քեզ բերի հայրենի տուն,
 Որ դու անցնես Երեւանով,
 Ելնես Լալվար ու Արագած,
 Նպարտանաս քո Սեւանով
 Ու ճաշակես թոնիրի հաց,
 Մեր սասնորակ ջուրը խմես

Ու բույրն առնես խոնավ հողի,
Արեգակից շողեր խլես,
Խառնես երգիդ ամեն տողին,
Տեսող գտնես քարեկամիդ,
Երբ այցելես Ալավերդի,
Խոր կարոտից հուզված, շիկնած
Տեսնես կյանքում քո Ալբերտին:
...Երագեցի քավակահին,
Ների՛ր, ների՛ր իմ քարեկամ,
Երբ հիշում եմ քարեկամին
Մոռանում եմ հաշիվ ու ժամ,
Եվ ուզում եմ շատախոսել
Ասել, ինչ որ չեն ասել դեռ,
Կարոտներից պսակ հյուսել
Ու շռայլել ջերմ համբույրներ...
Եվ հիշեցի իմ հեռավոր
Իմ քարեկամ հայ ուսուցչին,
Որ կարոտով սպասում է
Տայրենիքի քարի կանչի,
Որ հայության ջահը անմար
Մերունդներին պահ է տալիս,
Եվ շարունակ՝ ձմեռ-ամառ
Մտքով դեպի տուն է գալիս,
Որ հավիտյան մեզ հետ լինի,
Մեր օջախում, մեր ծառի տակ,
Որ խաղողից քամենք գինի,
Բաժակ ըմպենք միևնույն հատակ,
Որ հողն անենք հաց ու արեւ,
Ու կառուցենք մեր տունը նոր,
Որ դարերին ասենք քարեւ,
Լինենք ուրախ ու քախտավոր...
Արի՛, արի՛, պանդուխտ հոգի,
Սպասում ենք քեզ կարոտով,
Մեր հիևավորոց «Կոունկ» երգի
Տայրենաշունչ համ ու հոտով,

Մասիսների հովանու տակ
Քո նոր տունը դու կառուցիր,
Ու քո կյանքի կիսատ ճամփան
Քո հայրենի հողով անցիր...
Թող հուշ դառնան օրերը սեւ,
Յաթաղանը, գաղթն ու հուրը,
Տառապանքներ շատ եւ տեսել,
Տիմա զգա քո տան բույրը,
Չորս կողմն արեւ ու պարզ երկինք,
Չորս կողմ հիմա ծիծաղ ու երգ,
Նազար ձեռքով կանչում ենք ձեզ-
Պանդուխտ հայեր, եկե՛ք, եկե՛ք,
Բավ է, որքան հեռու-հեռվում
Մասիսների նման կիսված,
Դուք այրվում եք ու մեզ այրում
Նազար դավեր ու ցավ տեսած:
Արարատյան դաշտը հիմա
Սեղանի պէս բացած ձեր դեմ
Սեւանի պէս գինին առատ,
Տեղեր ունեք մեզ մոտ արդեն,
Եկեք, նստե՛ք մի սեղանի
Ամբողջ ազգով մի քեֆ անենք,
Որ մեր անուշ, մեր Սեւանի
Ամեն կաթիլ դառնա մի երգ...
Իսկ իմ մասին, դե, ի՞նչ ասեմ,
Ուսուցիչ եմ հայոց լեզվի,
Աշխատում եմ այնպէս խոսել,
Աշակերտիս հոգին հուզվի,
Որ նա սիրի հող հայրենին,
Թե պետք լինի, կյանքն անգամ տա,
Որ զազրելի, նենգ թշնամին
Երբեք մեր տան շեմին չգա,
Որ նմանվի Մասնա Դավթին,
Լինի ուժեղ եւ դիմացկուն,
Որ մասնակցի մեր մեծ երթին,

Ունենա միշտ սեփական տուն,
Որ քարերից երգեր հույսի՝
Ու կառուցի կամուրջ ու շենք,
Որ միշտ տանի ջահը լույսի՝
Կյանքը արած խնդրության երգ:
Ասատուր ջան, ների՛ր կրկին,
Ես խոսեցի նորից երկար,
Ա՛խ, վերջ չկա սրտիս երգին,
ԶԷ՞ որ դու իմ սիրտը մտար.
Տայրենաշունչ քո խոսքերով
Դու իմ սիրտը գրավեցիր,
Պանդխտության քո տրտունջով
Իմ կարոտած սիրտն այրեցիր:
Դրա համար դարձա երգիչ,
Գրիչ առա, առա թերթեր
Եվ կոտակված իմ կարոտից
Քեզ ձոնեցի սրտի երգեր:
Սպասում եմ պատասխանիդ,
Անհամբեր եմ այնպես դարձել,
Կարծես վաղո՛ւց-վաղո՛ւց արդեն
Ինձ թողել ես ու հեռացել:
Ինձ թողել ես ու հեռացել,
Տեռվում կանգնել ու նայում ես
Եվ ինձ այնպես ես մոռացել
Նամակն անգամ ինչպիսի ես:
Սպասում եմ, գրի՛ր շտապ,
Ու շատ գրի՛ր դու անպայման,
Իմ կարոտին չկա մասշտաբ
Չկան ծայրեր, չկա սահման,
Ջերմ քարեններ Նարինեին
(Օ՛, քույրիկ իմ, ների՛ր դու ինձ,
Քեզ մոռացա մի պահ միայն,
Կորցրել եմ ինձ կարոտից):
Ու բոլորին՝ մեր հայերին,
Մեր համայնքին հայրենաբաղ,

Ջերմ կարոտով դու քարեւիր,
Որ հայութեան ջահը պահած,
Մեր Սեանից հեռո՛ւ-հեռո՛ւ,
Օտար, հեռու երկնքի տակ,
Որպէս հայեր սպրում են միշտ
Երեւանի լույսով հատակ:
Որ մեր ամեն քայլափոխին
Տեսնում են սրտով անկեղծ
Ամեն մեկը դարձած երգիչ,
Դարձած գոսան ու քանաւտեղծ...
Ջերմ քարեւներ քո սաներին
Տայկակներին խենթուկ ու չար
Կալկաթայի ողջ հայերին
Կարոտագին քարեւ հազար,
Նրանց պատմիր մեր մեծ տանից,
Ասա, որ մենք ձեզ ենք կանչում,
Սովետական Տալաստանից
Տազա՛ր ողջուն, հազար ողջուն:

Փարսադանյան Ալբերտ
14 մարտի, 1961թ.

❖ **Միրելի, անմոռանալի Ասասուր,**

Մեր հանդիպումից, ջերմ նամակագրության ժամանակներից անցել են տարիներ: Բայց չի մարել այն ջերմությունը, որ ունեի քո նկատմամբ: Այն կրկին բոցավառվեց, երբ իմացա, որ իմ փոքրիկ բարեկամուհին Լիլիթը, մեկնում է Անգլիա:

Որքա՛ն կուզենայի, որ Լիլիթը հանդիպեր քեզ, այս նամակս հանձներ, տեղեկություններ բերեր քեզնից, հարգարժան տիկին Նարինեից, քո ընտանիքից:

Ժամանակները փոխվել են, եւ այլեւս ոչ մեկը չի կարող բռնանալ իմ ցանկությունների, քեզ հետ նախկին բարեկամությունը շարունակելու, նամակագրական կապը վերաստեղծելու ցանկության վրա:

Գիտեմ քո հայանպաստ գործունեության մասին: Ուրախ եւ հպարտ եմ քեզնով: Տա՛ աստված, որ ուժերդ ու եռանդդ տասնապատկվեն հանուն անգլիահայ համայնքի բարգավաճման, հանուն աշխարհով մեկ սփռված հայության:

Ասատուր ջան, եթե բարերախտություն ունեցա եւ նամակս հասնի քեզ, անպայման պատասխանիր

375062, Երեւան 62, Նորքի 2-րդ զանգված, 25 ա շենք, բն 11
հասցեով:

Ջերմ ողջույններ են հղում բոլորիդ տիկինս՝ Միրան,
դուստրս՝ Գոհարը, թոռնիկս՝ Դավիթը:

*Միշտ քո՝ Փարսադանյան Ալբերտ
Երեսակ*



/ 10 օգոստի, 2003թ., Երեւան /

Միրելի Ասասուր,

Եվ այսպես, գրեթե 40 տարվա լռությունից հետո, կրկին թուղթ ու գրիչ առած, ուզում եմ քեզ նամակ գրել: Ուզում եմ քեզ կրկին դիմել «Ասատուր ջան» բառերով, որով ասած կլինեմ ամեն ինչ. եւ այն, որ կարոտել եմ քեզ եւ կարոտ եմ քո նամակներին, եւ այն, որ անսահման ուրախ եմ քո լինելիությամբ, հաջողություններով:

Նեռավոր այն տարիներից ի վեր, մեր արտառոց հանդիպումից հետո դու ինձ համար եղել ես «Նայրենիքի լուսաշող իրականութենեն

հեռու» ապրող բարեկամ, սրտակից ընկեր, նվիրյալ հայ, որի անունը լսելիս, կարդալիս, հիշելիս հպարտացել եմ, հարստացել քո գոյությամբ եւ անմոռաց հուշերով:

Լիլիթը կբավարարի քո հարցասիրությունը, կպատմի մեր մասին այնպես ինչպես կանք, կներկայացնի ինձ, առիթ կստեղծի, որ դու էլ հպարտանաս քո հեռու բարեկամով եւ ինչպես այն հեռավոր ժամանակներում, հայրենիք այցելելիս ցանկանաս անպայման ինձ հանդիպել, ունենալ մեր երիտասարդական ապրումները, ուրախանալ միմյանց գոյությամբ:

Քաջառողջ եղիր, եղիր երջանիկ եւ հաջողակ: Իմ ջերմ ողջույնները հաղորդիր գերդաստանիդ անդամներին եւ ասա, որ Երեւանում մի սիրտ է բարախում նաեւ ձեզ համար, իմ հեռու եւ սիրելի հայրենակիցներ:

Միշտ քո՝ Փարսադանյան Ալբերտ



/ 28 հունվարի 2007թ., Երեւան /

Միրելի Ասասուր,

Նախ ամենաջերմ ողջույններս սիրելի Վիվիենին եւ ողջ գերդաստանիդ:

Մեզ մոտ ամեն ինչ հին է, Գոհարիկն աշխատում է, Դավիթը ծառայում է, ես էլ գրքեր եմ գրում:

«Գիտելիքների շտեմարան – 4»-ը կոչվում է «Խայտաբետ աշխարհ»: Արդեն համակարգիչով հավաքված է: Դավիթին 2 անգամ կանչել են Երեւան, ստուգել անգլերենի իմացությունը, «վիզայի» համար գումար է մուծվել, հավանաբար կուղարկեն սովորելու ԱՄՆ-ում: Կտեղեկացնեմ:

Վիկտորյա Կյուզելյանի գիրքը պատրաստ էր անցյալ տարվա նոյեմբերին: Տանդիպեցինք ես ու Ներսես Սրբազանը, գիրքը հանձնեցի: Անցավ դեկտեմբերը, անցավ նաեւ հունվարը: Ինչ որ հարցեր կան, որ հեռախոսով կհայտնեմ, բայց ես որոշեցի գիրքն ուղարկել՝ ժամանակ շահելու համար:

Եթե Ասատուր եւ Վիկտորյա Գյուզելյանները այսպես կցանկանան,

գիրքը կտպագրվի շատ կարճ ժամանակում: Սպասում եմ քո կարգադրությանը:

Միրելի Ասատուր, մի՛ հիվանդանա, քեզ լավ պահիր: Տիշիր, որ շատ գործեր ունենք անելու: Երբ Դավիթը գնա, ապրիլին Ղարաբաղ չենք գնա:

Կարդացի քո թողած թերթերը, ուրախացա: Եթե լուսանկարներ ունես, 1-2-ը ուղարկիր, բա մյուս գրքում դու չլինե՞ս:

Ուղարկում եմ նաեւ մի փոքրիկ գիրք, որ դրա նման մի գիրք էլ դու հրատարակես, գրպանումդ ունենաս եւ աջ ու ձախ բաժանես: Դրա համար քանաստեղծություններդ հավաքիր եւ ուղարկիր ինձ:

Դե, ի՞նչ ասես, լավ եղիր, լավ եղեք, ինձ մի՛ մոռանա, մեկ-մեկ զանգ տուր:

Միշտ քո՝ Փարսադանյան Ալբերտ



/ 25 սեպտեմբերի 2007թ. /

Միրելի Ասատուր,

Նախ ամենաջերմ ողջույններս Վիվիենին եւ քո գերդաստանի բոլոր անդամներին:

Ուրախ եմ հաղորդելու, որ լույս տեսավ «Գրական հետազիծը», որի մի օրինակն ուղարկում եմ, բայց դու իրավունք ունես տնօրինելու նաեւ ցանկացած քանակով գրքեր:

Շնորհակալություն:

Որոշել էի գրքերը քեզ հանձնել Երեւանում, բայց ուզում եմ ժամ առաջ ուրախացնել քեզ:

Մենք լավ ենք: Դավիթը Նադրութում է, նորություններ չկան:

Բարեւում ենք բոլորս:

Կուզենայի առաջվա նման մեկ-մեկ զանգահարելիք, իմանայի ձեր մապին:

Կրկին ու կրկին ջերմ ողջույններ:

Միշտ քո՝ Փարսադանյան Ալբերտ



Սիրելի Ասասուր,

Նախ՝ ողջուններս Վիվիենին եւ քո գերդաստանի բոլոր անդամներին:

Ուղարկում եմ գրեթե պատրաստ «Նամոյ եւ Ֆատիլե»-ն եւ «Նարատեւող քարեկամությունը»: Թեեւ ուղարկել ենք նաեւ «Ինտերնետով», ուղարկում եմ նաեւ պնակիտով՝ «դիսկով»: Սակայն ամենից հարմարը քղթի վրա քո ուղղումները, լրացումները, դիտողություններն են, որ կուզենայի հետ ուղարկես: Ինչպես դու ասացիր, արեւմտահայերենի լավ մասնագետ-սրբագրիչ ունեւ, որը կնայի վերջնականապես տպագրվելուց առաջ: Բոլորի համար կանխավճար եմ տվել 500 դոլար, ասել եմ, որ Ասատուրն ուզում է «Նամոյ»-ից 500, «Նարատեւողից» 1000 օրինակ:

Տիշիր՝ Ալեքսանդրի 2 բանաստեղծությունը: Գունավոր նկարներ: Պետրոս Ալեքսիի եւ մայրիկի լուսանկարները: Երեւանյան քարեկանների նկարները, Թորոս Թորանյանի նյութերը մի քանի այցեքարտ (Գոռ, Սրբազան, Արմեն Սարգսյան եւ ուրիշներ):

Ինչպես պայմանավորվեցինք՝ արեւելահայերենը մնում է նույնը, արեւմտահայերենը՝ նույնպես:

Ուղարկում եմ քո նոր գրքի նյութերը, որ դու «Նամոյ»-ի սրբագրության հետ մեր տուն էիր բերել:

Սիրելի Ասատուր, թեեւ ոտքս բոլորովին չի աշխատում, բայց ստիպված եմ երբեմն տպարան գնալ, այդ գրքերը լույս աշխարհ բերելու համար:

Կարդա, ուղղիր, ավելացումներ արա եւ ուղարկիր հետ, որքան հնարավոր է շուտ: Բարեւում ենք բոլորս, լավ եղեք, առողջ եղեք:

Սպասում եմ քո հեռախոսազանգերին:

Փարսադանյան Ալբերտ



ՓՈՒՏԱՆ ԴԱՄՔԱՆԱԿԱՆԻ ՀՈՒՍՔ ԲԱՆՔ

Ոչ ես է Ալբերտ Փարսատանեանը...

Ո՛չ ես է իմ յիսուն տարիների սրտակից ընկերը, հոգեդրայրն ու գրչեղբայրը:

Այլեւս Ալբերտն ու ես չենք զրուցելու իրար հետ նամակագրութեամբ, ո՛չ էլ նստելու ենք իր բնակարանում կամ իմ «Աիատրանս» պանդոկի սենեակում (Ալբերտը շատ էր սիրում այդ պանդոկն ու այնտեղ աշխատողներին, որոնց համար գրպանում միշտ ուներ քաղցրեղեն) եւ երկար խօսելու մեզ հետաքրքրող, մեզ յուզող հարցերի շուրջ, իսկ մեզ յուզող հարցերը, քիչ բացառութեամբ, առնչուած էին լինում Տայաստանի եւ հայ ժողովրդի կեանքի տարբեր բնագաւառների հետ: Մեր խօսակցութեան լուռ վկաները միշտ էլ լինում էին սեղանի վրայ տեղ գրաւած, սրնից այրիացած, երկու բաժակներ...: Մենք ժամերով զրուցում էինք, ո՛չ գլուխ գլխի՝ այլ սիրտ սրտի տուած...:

Յիսուն երկար տարիներ շարունակ Ալբերտն ու ես կառուցեցինք, նախ հայրենիքից հնդկաստան, ապա Անգլիայից Տայաստան երկարող «յարատետող բարեկամութեան» հոգեղեն կամուրջը, որը ամրապնդուեց փոխադարձ յարգանքի, մարդկային ազնիւ զգացումների եւ հայրենասիրութեան ամենաընտիր շաղախով: Տարիների ընթացքում մեր բարեկամութեան շղթան հարստացաւ նաեւ նոր օղակներով, գաղափարակից նոր ընկերներով:

Ալբերտ ջան, հանգամանքների դժբախտ բերումով չեմ կարող քեզ անձնապէս բարի ճանապարհ մաղթել դէպի յաիտենութիւն անակնկալ բայց անվերադարձ մեկնումիդ առիթով: Շատ էի ուզում իմ հուսկ բանքն ասել անձնապէս եւ մեր պապերի արիւնով սրբացած մի ափ հող նետել դագաղիդ: Չէի կարող հիւանդանոցում արեան թունաւորմամբ պառկած աղջկանս, Արմինէին թողնել մենակ: Բայց դու լաւ իմացիր, իմ թանկագին ընկեր, թէեւ ֆիզիքապէս չեմ մասնակցելու քո յուղարկաւորութեան, բայց վստահ եղիր, այդ օրը, 2009թ. մարտի 16-ին, ես իմ ամբողջ էութեամբ լինելու եմ քեզ հետ: Այո, ոչ միայն լինելու եմ քեզ հետ, այլ ինձ հետ բերելու եմ ամենից գեղեցիկ ու ամենից

բուրումնաւետ ծաղիկները, որոնք զգացումներիս դողողոջ մատներով քաղել եմ իմ սրտի բուրաստանից:

Ալբերտ սիրելիս,

Այս դու իրաւունք չունիիր անակնկալ հեռանալ այս աշխարհից, սուգի մէջ թողնելով քո Գոհարիկին, Դաիթին, այլ հարազատներիդ, անհամար բարեկամներիդ, ընկերներիդ, որոնց հերթին նաեւ ինձ...: Չէ որ ես դեռ չարտասանուած շատ խօսքեր ունի հասցեագրուած քեզ: Գոնէ առիթ տայիր շնորհակալութիւն յայտնել քեզ յիսուն տարի իմ հանդէպ քո ցուցաբերած ուշադրութեան, եղբայրական սիրոյ ու գուրգուրանքի համար: Ես շատ բան սովորեցի քեզանից եւ մտքով ու հոգով հարստացայ քեզանով: Ես նախ քեզ հանաչեցի, հիշտ յիսուն տարի առաջ, քո նամակներով: Նրանք պարկեշտ գրողի, ազնիւ մտաւորականի ու հայրենասէր մարդու հոգուց արձակուած ճառագայթներ էին, որոնք եկան հեռաւոր հեքիաթների աշխարհում, Ննդկաստանում ապրող մի հայ ուսուցչի հոգին ջերմացնելու, հայրենասիրութեան խարոյկ վառելու նրա սրտում եւ հարստացնելու նրա էութիւնը:

Դու հաւատացիր լոյսին, հաւատացիր ճշմարտութեան ու մերժեցիր խաւարը ընդունել որպէս արժէք, այլ պարզապէս լոյսի բացակայութիւն...: Քո հոգու թանգարանում տեղ գրաւեցին մի միայն լոյսին, բարիին, գեղեցիկին ու ազնիւին նուիրուած ոգեղէն արձաններ...: Որպէս ուսուցիչ, դու պատրաստեցիր առողջ ու գիտակից հայրենասիրութեամբ զինուած, քարոյական բարձր սկզբունքներով ու մտաւորական կարողութեամբ օժտուած սերունդներ, որոնք իրենց հերթին քեզնից ժառանգած արժէքները կտակեցին հետագայ սերունդներին:

Որպէս քաղաքացի ու գրող, դու երբեք քո արժանապատուութիւնը, սկզբունքները, համոզումները, հոգեկան արժէքներն ու մտաւորական պարկեշտութիւնը չվաճառեցիր «վասն երեսուն արծաթի»: Անպարկեշտ մարդկանց դղեակները չհրապուրեցին քեզ. նախընտրեցիր ապրել նրանցից հեռու, պարկեշտութեան աղիսով քո կառուցած փոքր բայց անաղարտ հիւղակում, մինչեւ կեանքիդ վերջը: Չարութիւնը, անազնութիւնը, անպարկեշտութիւնը, թշնամութիւնը, նախանձն ու «մասամբ նորին», երբեք բոյն չդրին քո հոգում: Բարեկամներով եղար շատ հարուստ, իսկ եթէ պատկերաւոր ասած թշնամիներդ լինէին քո

օրավարձը դու վաղուց սովից մահացած կը լինէիր...: Տեսակէտի հակառակորդներ անպայման ունեցար, բայց թշնամիներ՝ երբեք:

Նամեստութիւնը եղաւ քո բնատրութեան հիմնական ու արժէքատր գծերից մէկը: Նամեստութիւնը անշօշափելի մի շքանշան է, որը բնութիւնը պարզեւում է միայն հոգեկան ու իմացական արժէքներով հարուստ մարդկանց: Իսկ այդ շքանշանը ամբողջ գիտակցական կեանքիդ ընթացքին մնաց կախուած քո հոգու կրծքից:

Կէս գիշեր է Լոնդոնում: Երեսանում ժամացոյցի փոքր սլաքը կանգնել է 4-ի վրայ: Նստել եմ գրասեղանիս առաջ ու իմ հուսկ բանքն եմ գրում քեզ, իմ սիրելի Ալբերտ: Ովկիանոսացած յոյգեր, մտածումներ ու խոհեր պեկոծում են միտքս ու հոգիս: Չեմ կարողնում հաշտուել քեզ այլեւս չտեսնելու գաղափարի հետ: Բայց միաժամանակ մտածում եմ որ իմ սիրելի ընկերը, Ալբերտ Փարսաղանեանը, պարզապէս փոխադրուում է մի ուրիշ աշխարհ: Մարդիկ այդ երեւոյթը «մահ» բառով են բնութագրում: Բայց այդ հասկացողութիւնը չի վերաբերում Ալբերտին, որովհետեւ նա չի մահացել, այլ պարզապէս մեռել է: Մեծութիւնները մեռնում են, բայց չեն մահանում...: Մահանում են նրանք, ովքեր իրենց կեանքում ո՛չ մի պտղաբեր ծառ չեն տնկել հետագայ սերունդներին իմացական ու հոգեկան աիշ ապահովելու հաշուին, ո՛չ մի ներդրում չեն արել ի շահ մարդկութեան մտաւոր ու բարոյական բարօրութեան:

Իմ վաղեմի, իմ սիրելի, իմ թանկագին ընկեր, մի քանի ժամից վերջնականապէս հեռանալու ես այս աշխարհից, քո հարազատներից եւ ինձնից: Տրամեշտի վերջին խօսքերն ուզում եմ տալ քո սիրած բանաստեղծներից Յովհաննէս Թումանեանին.

*«...Մենք ամէնքս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուշ օրից,
Տերթով գալիս, անց ենք կենում
Էս անգատոր աշխարհից:
Անց են կենում սէր ու խնդում,
Գեղեցկութիւն, զանձ ու գահ,
Մահը մերն է, մենք՝ մահիւնը,
Մարդու գործն է միշտ անմահ:
Գործն է անմահ, լաւ իմացէք,*

*Որ խօստում է դարեդար,
Երևեկ նրան, ով իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար»:*

Նողը թեթեւ թող գայ վրադ, իմ թանկագին ընկեր: Յախտենական
հանգիստ քո տառապած ոսկորներին:

«Յիշատակն արդարոց, օրհնութեամբ եղիցի»:

Ասատուր Կիզեղեան Լոնդոն, 16 Մարտ, 2009թ.

Քալաշյան Լորիս

Քալաշյան Լ. Խ. 22.03.1922. Երեւան,
Հայաստանի Հանրապետություն
Հայկական «Քաց Համալսարան»-ի նախագահ, Ակադեմիկոս.



/ 1 մայիսի 2000թ. /

Մեծարգո պարոն Ասատուր Գյուլելյան,

Տայկական բաց համալսարանի ռեկտորատը իր շնորհակալությունն է հայտնում Ձեզ՝ համալսարանի իրավագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողուհի Մարիա Ալեքսանյանի նկատմամբ ցուցաբերվող ուշադիր ու հոգատար վերաբերմունքի համար:

Մենք դա գնահատում ենք որպես հայ ժողովրդի երիտասարդ սերունդի կրթության ու հայեցի դաստիարակության նկատմամբ Ձեր հատուկ վերաբերմունքի արտահայտություն՝ արժանի ամենայն հարգանքի ու դրվատանքի:

Ձեզ մաղթում ենք քաջառողջություն եւ հաջողություններ Ձեր ազնիվ ու ազգանպաստ գործունեության մեջ:

Խորին հարգանքներով,

*Տամալասարանի պրեզիդենտ, սկադեմիկոս՝
Քալաշյան Լ.Խ.*



Լոնդոնաբնակ բարերար,

Ուսման վարձը վճարել չկարողանալու պատճառով բազմաթիվ շնորհալի երիտասարդներ զրկվում են բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից: Տայաստանցիներին շատ լավ հայտնի այս խնդիրը մտահոգել է նաեւ Լոնդոնաբնակ մեր հայրենակցին՝ Ասատուր Գյուլելյանին: Նրա բարեգործության շնորհիվ Մարիան կարող է բարձրագույն կրթություն ստանալ՝ չմտահոգվելով ուսման վարձը վճարելու խնդրով, ինչի համար նա երախտապարտ է իր բարերարին: Ցավոք, նման բարերարներն այսօր այնքան էլ շատ չեն, քայց հույս ունենք, որ Ասատուր Գյուլելյանի օրինակը կարող է վարակիչ լինել:

Բարեգործությունը մեր ազգին հատուկ հատկանիշ է, եւ այս օրինակը դրա լավագույն վկայությունն է: Երիտասարդ սերնդի կրթության գործերին նպաստելը հայրենասիրության լավագույն դրսեւորում է, քանի որ այսօրվա երիտասարդները մեր վաղվա օրն են:

Քալաշյան Լ.Խ.

Սեփ. լր., «Առավոտ», 2.5.2000թ.

Քեփոյան Գրիգոր

Տոհմական ազգանունը՝ Աջապահյան:
12.08.1921, Ադանա, Ադանայի վիլայեթ, Օսմանյան կայսրություն - 14.01.1980, Երեւան,
Հայկական ԽՍՀ):

Հայ արձակագիր, թարգմանիչ, աշխատել է Սփյուռքի կոմիտեում, մամուլի բաժնի վարիչ, այնուհետեւ՝ Հայկական սովետական հանրագիտարանում: ԽՍՀՄ գրողների միության անդամ (1946), ԽՄԿԿ անդամ 1967 թվականից: Սերում է Հայկական Կիլիկիայի Աջապահյան հնամենի տոհմից:



/ 14 հունվարի, 1972թ., Երեւան /

Սիրելի Ասասուր,

Նախ, արդեն հին տոմարով Նոր տարի, շնորհավորում եմ քո Ամանորը եւ քեզ ու ընտանիքիդ ցանկանում առողջություն, հաջողություն, այսինքն՝ երջանկություն:

Թե որ քամին ինձ այսօր մղեց քեզ նամակ գրել, շուտով կիմանաս, քայց թե նամակ չգրելը քեզ մոռանալ չի նշանակում, կարող եմ բոլոր աստվածներով երդվել: Քո մասին լուրերի պատասխաններ ստանում եմ զանազան պաշտոնական տեղերից, հույս ունեմ, որ ամեն ինչ կարգին է:

Իսկ թե ինչո՞ւ եմ հանկարծ քեզ նամակ գրում:

Գուցե իմացած կլինես, որ արդեն մի տարուց ավելի է, ինչ կոմիտեում չեմ աշխատում, տեղափոխվել եմ Տանրագիտարան, որի մամուլի բաժինը ես եմ ղեկավարում:

Քո սիրելի «Արեգակը» անշուշտ իմ ուշադրությունից վրիպել չէր կարող: Ոչ միայն ժամանակին հետաքրքրությամբ կարդացել եմ, այլ նաեւ այժմ ձեռքիս տակ ունեմ բավականին նյութ հանրագիտարանը բավարարելու համար, քայց ուզում եմ որ դու, որպես այդ թերթի ամենամոտ կանգնած մարդ, քո սուրբ ձեռքով (կամ ձեռագրով) պատասխանես մի քանի հարցերի:

1. Ե՞րբ է հիմնվել թերթը (տարի, օր),
2. Ո՞ր քաղաքում,
3. Ե՞րբ է փակվել, ի՞նչ պատճառով, (վերջին համարի տարին, օրը),
4. Ո՞վ է եղել խմբագիրը, խմբագիրները, ըստ տարիների,
5. Ի՞նչ ուղղություն է ունեցել, ազգային հարցերում, միջազգային հարցերում,
6. Ովքե՞ր են աշխատակցել – կարեւորագույնները,

7. Ի՞նչ բնույթ է ունեցել թերթը (գրական, քաղաքական, ազգային, գիտական եւ այլն),

8. Ի՞նչ պարբերականություն է ունեցել, փակման դեպքում ո՞ր թվականներին:

Եվ այլն:

Եթե այս հարցերից դուրս էլ թերթի մասին տեղեկություններ տաս, ավելի գոհ կլինեմ, նյութը ավելի հարուստ կլինի:

Առայժմ այսքանը, սիրելի Ասատուր:



Ես լավ եմ, 1970-ին հրատարակած գիրքս՝ «Կղզի նման չիք մեր Կիպրիա» քեզ ուղարկել էի, ոչ մի արձագանք չստացա, երեւի ասելիք չես ունեցել: Այս տարի լույս կտեսնի պատմվածքների նոր գիրքս «Տնակը կռունկի վրա» վերնագրով, հուսահատվող մարդ չեմ, էլի կուղարկեմ, եթե ասելիք չունենաս, էլի մի պատասխանի: Քո գործն է:

Բայց վերոհիշյալ հարցերիս շտապ պատասխանիր, որովհետեւ Նանրագիտարանի գործը անձնական գործ չէ ո՛չ քեզ համար, ո՛չ ինձ: Վստահ եմ այս բոլորը լավ գիտես եւ ես գուցե եւ իզուր եմ հիշեցնում: Ներողություն:

Բարեւներ, ջերմ համբույրներ քեզ եւ քո ընտանիքին ու լոնդոնյան մեր ուրիշ ծանոթներին:

Միրով ու կարոտով՝ Քեշիշյան Գրիգոր



Միտելի Ասասուր,

Գրիգոր Բեշիշյանի համար այնքան էլ երկար չէ մեկ ամսվա լռությունը: Այս նամակը ընդունիր որպես ջերմ շնորհակալության խոսք այն ամենի համար, որ դու արեցիր իմ լոնդոնյան օրերը ավելի լեցուն եւ իմաստալից դարձնելու համար: Տարզանքով համբուրում եմ տիկնոջդ ձեռքը: Եթե կարող ես քեզանից գաղտնի նրան ասա, որ մեծ համակրանքով լցվեցի իր նկատմամբ այն կարճ ժամանակում, որ ձեր տանը անցկացրի: Տուսամ իմ հարցազրույցն արդեն օգտագործել ես եւ աշխարհն արդեն գիտի իմ Լոնդոն կատարած այցի մասին: Տույս ունեմ նաեւ, որ իմ գիրքը կարդացիր եւ պատրաստվում ես գրախոսական գրել: Չէ՞ որ դու քո չհավանած գրքերի մասին գրախոսական չես գրում, ըստ քո սուրբ սովորության եւ վեհական հայտարարության, որ արեցիր Տայթ պարկում, քո ավտոյի մեջ, երբ մեզ տանում էիր քո տուն, քո աշխատասենյակը, որ այդպես էլ անմոռանալի պիտի մնա ինձ համար (հավանաբար նաեւ պրոֆ. Տովհաննիսյանի, որի ողջույններն ու շնորհակալությունները ընդունեցեք):

Արդեն վաղուց աշխատանքի մեջ եմ եւ կյանքս իր բնականոն հունի մեջ է մտել: Վ. Պետրոսյանին հայտնեցի քո բարեկեցիքը եւ դժգոհությունները, որ Լոնդոնում փոխանակ քեզ գրելու, ուրիշներին է դիմում եւ քացասական պատասխան ստանում: Իրեն հատուկ ժպիտով



Գրիգոր Բեշիշյանի եւ Ստեփան Ալաջաջյանի հետ:

ժպտաց եւ ասաց, որ հաջորդ առիթին անպայման կդիմի քեզ եւ միայն քեզ: Նուսամ մինչեւ այժմ ստացար «Գարուն» թիվ 8 եւ կարդացիր իմ «Կտրուկը» պատմվածքը, որը մի քանի ամիս շարունակ Երեւանի ընթերցողների խոսակցության նյութն է: Նարյուրներով հեռախոսային զանգ եմ ստացել, բոլորն էլ ասում են, որ շատ լաց են եղել: Դուրս է գալիս, որ եղերամայր դառնալու հնարավորություններ ունեն:

Միրելի Ասատուր:

Կոմիտեում եւ Մատենադարանում քո հանձնարարությունները կատարել եմ: Թե ի՞նչ արդյունք կունենա, կիմանանք հետագային: Մեծ հույսեր չեմ կապում, բայց փոփոխություն եւ արդյունք անպայման կլինի:

Չմոռանաս բարեւներս հաղորդել «Նայկական հաշարանի» տեր ու տնօրենին: Խոստացել ես, մի մոռացիր քո եւ նրա պատմվածքները ուղարկել «Գարուն»-ին:

Նամակս ավելի երկար գրելու ծրագրով էի նստած, բայց մարդիկ եկան մոտս եւ ընդհատեցին: Չեմ կարողանում նորից տրամադրվել: Ավելի լավ է առայժմ վերջացնել եւ մի ուրիշ օր, ուրիշ նամակ գրել:

Սպասում եմ քո գիրին:

Նամբույրներով՝ Քեշիշյան Գրիգոր

Բաց նամակ

ԱՄՆ-ի Նախագահ Պարաֆ Օպամային,
Մեծն Բրիտանիոյ Վարչապետ Տեյվիս Քամերոնին,
Հրեասանի Վարչապետ Պենյամին Նաթանյահուին

Յարգելիք Տիարք,

24 Ապրիլ 2015ին հայ ժողովուրդը, ի սփիուս աշխարհի պիտի նշէ Նայոց Յեղասպանութեան 100-ամեակը: Բազմաթիւ կառավարութիւններ, հաստատութիւններ, կազմակերպութիւններ եւ անհատներ պիտի միանան հայերուն, յարգելու համար յիշատակը 1.500.000 մարդոց, կանանց եւ երեխաներուն, որոնք բնաջինջ եղան Ա. Աշխարհամարտի ընթացքին, իբրեւ հետեւանք քսաններորդ դարուն մարդկութեան դէմ գործուած առաջին սարսափելի ոճիրին՝ հայոց Յեղասպանութեան, զոր ծրագրեց եւ գործադրեց երիտօրքական կառավարութիւնը:

Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող տարբեր ազգութիւններու եւ կրօնքներու պատկանող բազմաթիւ անձեր, տեղեկագրեր ղրկեցին իրենց կառավարութիւններուն, կազմակերպութիւններուն եւ բարեկամներուն: Այդ վաւերագրերուն մէջ արձանագրուած են հեղինակներու ականատեսի ցնցիչ վկայութիւնները Նայոց Յեղասպանութեան մասին:

...Տակառակ այն իրողութեան որ այդ անհերքելի վաւերաթուղթերուն զգալի մասը հաւաքուած ու համադրուած է անզլիացի, երոպացի, ամերիկացի եւ հրեայ հեղինակաւոր մտաւորականներու, պատմաբաններու եւ քաղաքական գործիչներու կողմէ, դուք կը մերժէք ճանչնալ Նայոց Յեղասպանութիւնը եւ անով իսկ կ'աջակցիք հայկական ցեղասպանութիւնը թաղելու Թուրքիոյ նախաձեռնած աշխատանքներուն: Յիշեցնենք ձեզի որ հայկական կոտորածները պատերազմի ընթացքին դաշնակից պետութիւններու՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ կողմէ բնութագրուեցան որպէս՝ «մարդկութեան դէմ ոճիր», որ այսօր համապատասխան է «ցեղասպանութիւն» հասկացողութեան:

Ա. Կիւզնեցեանը բացառիկ ծաղկաքաղ է արել համաշխարհային մասշտաբով հազարաւոր ականատեսներու վկայութիւններէն, որոնք պահպանուած վաւերաթուղթեր են...

Ի գիտութիւն յայտնեմ որ իմ ընտանիքի մեծ մասը՝ մեծ հայրս, մեծ հօրեղբայրներս, մեծ մօրաքոյր-հօրաքոյրերս, ներառեալ չորս տարեկան քոյրս, տասնեակ հազարաւոր ուրիշ մարդոց, կանանց եւ երեխաներու հետ՝ Կիլիկիայէն, ուր ծնած եմ ես եւ ուր իմ նախահայրերս ապրած են աւելի քան հազար տարի, աքսորուած են Տէր Զօր, սուրիական անապատ...: Տեղահանութեան ընթացքին անոնք մեծաւ մասամբ կամ սպանուած են, կամ ալ՝ սովամահ եղած: Ըստ մօրս, երբ չորս տարեկան քոյրս չէ կրցած այլեւս քալել եւ ուժասպառ գետին ինկած է, թուրք ոստիկանը սուինահար սպանած է զայն, մօրս աչքին առջեւ...: Ինչ կը վերաբերի ծնողքիս՝ անոնք, աշխատունակ ուրիշ երիտասարդ-երիտասարդուհիներու հետ, ղրկուած են Դամասկոս՝ թրքական բանակին համար համբայ կառուցելու:

Ի դէպ է նաեւ ձեր ուշադրութեան յանձնել թրքական ներկայ կառավարութեան բռնած դիրքը Տայոց Ցեղասպանութեան հանդէպ:

Նախ՝ որպէս Թուրքիոյ վարչապետ, ապա՝ նախագահ, Պրն Էրտողան անընդհատ կ'երգէ նոյն հին ձանձրացուցիչ երգը: Ան կ'առաջարկէ Տայաստանի Կառավարութեան, որ խումբ մը պատմաբաններ ուսումնասիրեն հարցը եւ որոշեն թէ արդեօք հայկական ցեղասպանութիւն տեղի ունեցա՞ծ է: Թուրքիոյ նախագահը քաջ գիտէ որ վաւերագրական անհերքելի փաստերով ապացուցուած պատմական իրողութիւն մը վերստին հաստատուելու պէտք չունի: Էրտողան կը փորձէ բացուած վերքին վրայ աղ ցանել...: Պահ մը մտածեցէք թէ հրեայ ժողովուրդն ի՞նչ պիտի զգար, եթէ Գերմանիան նման առաջարկ մը ներկայացուցած ըլլար Տրեաստանին՝ Նոլոքոսթի վերաբերեալ: Թուրքիայի նախագահը լաւ գիտէ որ՝ ցեղասպանութիւն գործելու նպատակով ամբողջ ժողովուրդի մը ծրագրուած զանգուածային բռնագաղթը,

անմեղ մարդոց, կանանց եւ երեխաներու ոչնչացումը փամփուշտով, սրով ու սովով՝ կրնայ միայն մէկ անուն ունենալ... ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ:

Մի քանի խօսք ալ Էրտողանի վերջին արարքի մասին.

...Թուրքիոյ նախագահը քաջատեղեակ է, որ հայ ժողովուրդն ամեն տարի, ի սփիւռս աշխարհի, **Ապրիլ 24-ին** կը նշէ **Տայոց Յեղասպանութեան** տարեդարձը, իսկ Թուրքիան՝ **Մարտի 18-ին, Տարտանելի Օրերը**: Եւ ահա յանկարծ, 2015-ին Տայոց Յեղասպանութեան հարիւրամեակին, Էրտողան կ'որոշէ «Տարտանելի Օր»ը նշել Ապրիլ 24-ին...: Աւելին՝ ան բոլոր պետութիւններու ղեկավարներուն հետ՝ Թուրքիա կը հրաւիրէ նաեւ **Տայաստանի Նախագահը**՝ մասնակցելու «Տարտանելի Օրերուան հանդիսութիւններուն»...:

Նման անփափկանկատ եւ անարգական վերաբերմունք չէր սպասուէր նոյնիսկ Էրտողանէն...: Անոր առած անվայել քայլը հիմնական մէկ նպատակ կը հետապնդէ, խանգարել **Տայոց Յեղասպանութեան** հարիւրամեակին նուիրուած գլխաւոր հանդիսութիւնը, որ տեղի պիտի ունենայ «Օրծառնակաբերդի» Յուշահամալիրին մէջ, 24 Ապրիլի, 2015-ին եւ որուն մասնակցելու հրաւեր ղրկուած է բոլոր երկիրներու ղեկավարներուն:

Կը սպասուի որ դուք, միւս պետութիւններու ղեկավարներուն հետ, դատապարտէք Թուրքիոյ նախագահը իր անընդունելի վերաբերմունքին համար:

Այս նամակին մէջ մէջբերուած յայտարարութիւններու, վկայութիւններու եւ փաստաթուղթերու հեղինակները, ինչպէս նշուեցաւ արդէն, բոլորն ալ սկզբունքի տէր յարգարժան անձեր են, որոնք մերժած են թաղել ճշմարտութիւնը, համոզուած ըլլալով, առանց դոյզն կասկածի, որ Ա. Տամաշխարհային Պատերազմի ընթացքին Օսմանեան Երիտթրքական կառավարութիւնը գործադրեց հայերը բնաջնջելու իր կողմէ նախապատրաստուած ծրագիրը:

Արդ, եթե նախորդ պարբերության մեջ նշուած անժխտելի եզրակացութիւնը դուք ալ կը գտնէք ճիշդ, ձեր պարտականութիւնն է, որպէս երեք հզօր պետութիւններու ղեկավարներ, որոնք աշխարհին կը ներկայանան իբրեւ նշմարտութեան, արդարութեան եւ ժողովրդավարութեան պաշտպան քաղաքական գործիչներ.

ՃԱՆՉՆԱԼ ՏԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ:

Յարգանքներով՝ ԱՍԱՏՈՒՐ ԿԻԻԶԵԼԵԱՆ

Ն.Գ. Ամբողջական Բաց նամակը, տեսնել «Նայիրի» թերթի 2015թ. քաջառիկի մեջ:

Ասատուր Գյուզեւյանի «Չուշ-նամականին» պատրաստ էր տպագրության, երբ ստացանք դեռևս 1960-ական թվականներից սկսված մի աննախադեպ առաջարկ-ծրագրի մասին պատմող նյութ առ ի գիտություն:

Նկատի առնելով, որ, ցավոք, չիրագործված սույն խնդիրը օրվա և բոլոր ժամանակների հրամայականն ունի, նպատակահարմար գտանք վերոնշյալ գրքում զետեղել այն:

Գուցե ի վերջո...

Հայ ժողովուրդ, քո փրկությունը Քո հավաքական ուժի մեջ է

Սփյուռքահայ գաղթօջախները հազարամյակների պատմություն ունեն: Տայաստանում տեղի ունեցած պատմական դժբախտ իրադարձությունների եւ տնտեսական աննպաստ պայմանների բերումով հարյուր հազարավոր հայեր տարբեր ժամանակաշրջաններում արտագաղթել, երբեմն էլ բռնագաղթի ենթարկվելով՝ տեղափոխվել եւ բնակություն են հաստատել աշխարհի տարբեր երկրներում: Այդ է պատճառը, որ այսօր գաղթօջախներ ունենք աշխարհի հինգ ցամաքամասերի բազմաթիվ երկրներում, որտեղ գործում են կրոնական, կուսակցական, բարեսիրական, կրթական, մշակութային, մարզական, հայրենակցական միություններ, հաստատություններ եւ կազմակերպություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական ծրագրիկանոնագիրը եւ գործում է անկախ մյուսներից: Այդ կազմակերպությունները սփյուռքահայության առանձին օղակներն են:

Այդ գաղթօջախներում ապրում են նաեւ մեծ թվով հայեր, որոնք թե եւ որեւէ կազմակերպության չեն պատկանում, բայց նույնպես կազմում են սփյուռքահայության օղակները: Դժբախտաբար, այդ օղակներից կազմված մի շղթա, այսինքն՝ սփյուռքահայության ամբողջությունը ներկայացնող մարմին գոյություն չունի:

Ահա թե ինչու, երբ լսում ենք **«մենք՝ սփյուռքահայերս»**, **«սփյուռքահայության ձայնը»**, **«սփյուռքահայության կամքը»**, **«սփյուռքահայության ուժը»** եւ նման արտահայտություններ, հարց ենք տալիս. ո՞վ է սփյուռքահայը, ավելի հիշտ՝ ո՞վ իրավունք ունի սփյուռքահայության անունից խոսելու՝ մեր ազգային կուսակցությունները

առանձին-առանձին, մեր կուսակցությունները հավաքաբար, մեր կուսակցություններն ու կազմակերպությունները միասնաբար, թե՛ միասնականությունից այրիացած Նայաստանյայց եկեղեցին...

ՈՉ ՈՔ:

Այնքան ատեն, որ սփյուռքի բոլոր մեծ ու փոքր գաղթօջախների ձայնով ընտրված մի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ գոյություն չունի, **ՈՉ ՈՔ** իրավունք ունի սփյուռքահայության անունից խոսելու:

Պե՞տք էր ստեղծված լիներ այդ մարմինը:

ԱՅՈ:

Նայ ժողովրդի գերագույն շահերի հետապնդման, սփյուռքահայ գաղթօջախների բարգավաճման ու հզորացման որպես գրավական՝ անհրաժեշտ էր ստեղծել սփյուռքում համահայկական կենտրոնական մի մարմին Բ Աշխարհամարտից անմիջապես հետո, միասնական, ծրագրյալ եւ հարատեւ աշխատանքով, մատնացած սփյուռքահայությունը անբեկանելի ԲՈՌԻՆՅՔԻ վերածելու հեռանկարով...

Նայ ժողովրդի համար բախտորոշ այդ մարմինը ինչո՞ւ չստեղծվեց:

Այս հոդվածով անդրադառնալու ենք այդ հարցին եւ նրա ձախողության պատճառներին:

1920թ., Նայաստանի սովետականացումով մեր հայրենիքը փրկվեց ամբողջական կործանումից եւ ապահովեց իր հետագա 70 տարիների անվտանգությունն ու բարգավաճումը: Ս. Նայաստանի գոյությունը միաժամանակ պատճառ դարձավ միջկուսակցական պայքարի սփյուռքում, որի հետեւանքով սփյուռքահայությունը բաժանվեց «Նայաստանյան» եւ «Նականայաստանյան» երկու հակադիր ճակատների:

Սփյուռքահայության կյանքում առաջացած միջկուսակցական պայքարն ավելի խորացավ Բ Աշխարհամարտից հետո, հատկապես հիսունական թվականների երկրորդ կեսերից, երբ Մեծի Տանն Կիլիկիո Աթոռը, հակադրվելով Մայր Աթոռ Սբ Էջմիածնին, սկսեց էջմիածնական թեմեր գրավել եւ կցել Անթիլիասին:

Այս հոդվածով նպատակ չունենք անդրադառնալու ազգավնաս այդ իրադարձությունների մանրամասնության, սակայն չենք կարող ջգովել չնշել, որ դրանք՝ գումարած արդեն իսկ գոյություն ունեցող կուսակցական հակամարտություններին, գլխավոր պատճառը հանդիսացան վաթսունական թվականներին Լիբանանում տեղի ունեցած եղբայրասպան կռիվների:

* * *

Սփյուռքահայության քաղաքական մեծամասնությունը, որը միշտ էլ եղել է անկուսակցական, 60-ական թվականներին արդեն հոգնել էր միջկուսակցական հակամարտությունների հետեւանքով առաջացած ազգային վատառողջ մթնոլորտից: Այդ էր պատճառը, որ մի շարք հեղինակավոր գրողներ մամուլով զգաստության հրավիրեցին կուսակցություններին եւ առաջարկեցին սփյուռքում ստեղծել համահայկական կենտրոնական մի մարմին:

Բազմավաստակ ուսուցիչ, հայերեն լեզվի, հայ ժողովրդի պատմության դասագրքերի հեղինակ, անվանի հայագետ, պատմաբան, բանասեր, գրող, հրապարակագիր, «Սփիւոք» շաբաթաթերթի խմբագրապետ Սիմոն Սիմոնյանը հանդիսացավ այդ գաղափարի **ԱՌԱՔՅԱԼՆ** ու **ՔԱՐՈԶԻՉԸ**: Նա էր առաջինը, որ առաջարկեց կուսակցություններին միասնաբար քննարկել սփյուռքահայությանը հուզող բոլոր հարցերը, զանազանել վիճելի խնդիրները անվիճելիներից եւ համատեղ աշխատել վերջինների վրա:

Տեսեւելով իմ սիրելի ուսուցչի օրինակին՝ ես եւս դարձա նույն գաղափարի **մունետիկը...**

Երբ 1964թ. դեկտեմբերին Տնդկաստանից տեղափոխվեցի Լոնդոն եւ ստանձնեցի «Արեգակ» (1964-1966) ամսաթերթի խմբագրությունը, թերթի 1965թ. հունվարի համարում հրապարակվեց Մկրտիչ Պեշիկ-Քաշլյանի «**Եղբայր եմք մեք**» հանրածանոթ բանաստեղծության խորագրով խմբագրականս, ուր, ի միջի այլոց, նշված է.

«Մեր ազգային արժանապատուիւնը քարձր պահելու, եւ իրապէս ու խորապէս յարգելու համար մեր նահատակներուն խնկելի յիշատակը, պէտք է ստեղծենք ՏԱՄԱՏԱՅԱԿԱՆ ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ ՄԸ»:

1965թ. Տայոց ցեղասպանության 50-ամյակն էր: Անհրաժեշտ էր այդ քաղաքիկ առիթն օգտագործել համերաշխության եւ միասնականության համազգային մթնոլորտ ստեղծելու համար սփյուռքահայ գաղթօջախներում:

«Արեգակի» 1965թ. փետրվարի համարում լույս տեսավ «**Կառուցենք Տայ ժողովուրդի համագործակցութեան Տանարը**» խմբագրականս, ուր նշված է.

«Ներկայիս, անելի քան երբեք, պէտք ունինք, եւ այսուհետեւ մանա-

ւանդ՝ պէտք պիտի ունենանք հայ ժողովուրդի գոնէ արտասահմանի հատուածին ամբողջութիւնը ներկայացնող, հետեւաբար նաեւ մեր համազգային շահերը պաշտպանելու իրաւասութեամբ լիազօրուած կշիռ ունեցող կազմակերպութեան մը: Նայութիւնը համակերպողնա-նալու բազմաթիւ պատճառներ ունի ներկայիս, իսկ ջլատուելու՝ ո՛չ մէկ պատճառ, ո՛չ մէկ իրաւունք»:

1965թ. ապրիլին լույս տեսավ Նայոց ցեղասպանութեան 50-ամյա-կին նվիրված «Արեգակի» բացառիկը հայերեն, անգլերեն եւ ֆրան-սերեն լեզուներով, ուր դարձյալ ընդգծված է համազգային ջանքերով սփյուռքում համահայկական կենտրոնական մարմին ստեղծելու ան-հրաժեշտութիւնը:

* * *

Այս կապակցութեամբ ուզում եմ փակագծում պատմել մի դեպք, որը տեղի ունեցավ 1968թ. Երեւանում, ուր հրավիրվել էի Սփյուռքահա-յութեան հետ մշակութային կապի կոմիտէի հրավերով՝ մասնակցելու Երեւանի 2750-ամյակի տոնակատարութիւններին: Նոռուստատե-սութեամբ ունեցած մի հարցազրույցի ընթացքում, անդրադառնալով սփյուռքում պատկառելի հիմնադրամով համազգային կենտրոնա-կան մի մարմին ստեղծելու կարելիութեանը, նշեցի.

«Եթէ յորաքանչյուր սփյուռքահայ միջին հաշվով տարեկան հինգ դոլար նվիրի հիմնադրամին, մեկ տարում կունենանք մոտ տասը միլիոն դոլար: Եթէ հայկական բոլոր գաղթօջախներում տարեկան երկու հասութաբեր ձեռնարկ էլ կազմակերպվի նույն նպատակի հա-մար, քսան միլիոն դոլար եւս կգոյանա եւ հատաջիկա հիսուն տարի-ներին կունենանք պատկառելի մի հիմնադրամ, որը կհոգա սփյուռ-քահայութեան բոլոր կարիքները»:

Նաջորդ առավոտ կանուխ, ժամը 7.30-ին, սենյակիս հեռախօսը հնչեց, եւ հյուրանոցի պաշտոնյան հայտնեց, որ մի խումբ երիտասարդներ ինձ հրավիրում էին նախահաշի: Երբ ճաշարան մտա, մուտքին կանգ-նած մատուցող երիտասարդը, ցույց տալով ուտեստեղէնով, պտուղ-ներով եւ ոգելից ըմպելիքներով ծանրաբեռնված սեղանի շուրջ հավաքված մի խումբ երիտասարդների, ասաց. «Նրանք են ձեզ նա-խահաշի հրավիրել»:

Ներկաների մեջ ինձ ծանոթ մարդ չկար: Խմբի խոսնակը ողջունեց ինձ եւ ասաց. **«Մենք Լենինի անվան մեքենաշինական գործարանի բանվորներ ենք: Երեկ գիշեր դիտեցինք Գետրգ Էմինի հետ հեռու-տաստեսությամբ ձեր ունեցած հարցազրույցը եւ որոշեցինք ձեզ այսօր հրավիրել նախաճաշի եւ ասել, որ մեր գործարանը պատրաստ է տարեկան մեկ միլիոն «մանեք» (ռուբլի) նվիրել ձեր ֆոնդին...»:**

Չկարողացա խոսել... Տուգումս արցունքի վերածված՝ կուտակվել էր այտերիս վրա... **«Լենինի անվան մեքենաշինական գործարան»**-ի մի խումբ բանվորների անունից արտասանված այդ մի քանի խոսքերում ինչքան հուզում, զոհողության ոգի, հավատք ու հայրենասիրություն կար մանավանդ...

* * *

Ինչպես ֆրանսիացին պիտի ասեր՝ **«վերադառնանք մեր ոչխարներին»:**

Շուտով եկա այն եզրակացության, որ վերոհիշյալ գաղափարը մամուլով տարածելուն զուգահեռ՝ անհրաժեշտ էր դիմել նաեւ գործնական քայլերի: Ուստի, այդ նպատակով 1971-ին, Լոնդոնում, հետեւյալ համախոհ ընկերներով կազմեցինք մի հանձնախումբ.

Գրիգոր Ալթունյան

Էդուարդ Կյուլպեքյան

Ասատուր Կյուզելյան

Ստեփան Տովհաննեսով

Տանձնախումբը համոզված էր, որ մեր առաջադրանքն իրագործելու համար ամենից առաջ հարկավոր էր ազգային երեք կուսակցություններին հավաքել մի սեղանի շուրջ եւ ապահովել նրանց համաձայնությունն ու համագործակցությունը: Այդ անելու համար կարելու էր գտնել կուսակցությունների հարգանքն ու վստահությունը վայելող մի անձնավորություն, որը հանձն առներ իր հովանավորությամբ կուսակցությունների ներկայացուցիչներին հրավիրել մի շարք ժողովների:

Այդ տարիներին Պարսկաստանում ապրում էր մեծահարուստ հայ բարերար Թովմաս Թովմասյանը, որը Թեհրանում հիմնել էր «Թովմաս Թովմասյան» երկսեռ վարժարանը, որտեղ ձրի ուսում եւ կեսօրվա ճաշ էին ստանում շուրջ 1600 աղքատ հայ ուսանողներ... Իր բազմաթիվ բարեգործությունների համար ժողովուրդը Թովմասյանին

«Պատիկ» տիտղոսն էր տվել: Նետագայում, իր ազգանվեր գործունեության եւ կատարած բարերարություններին առ ի գնահատանք՝ Թովմասյանը Վազգեն Ա Ամենայն Տայոց կաթողիկոսից պարգևատրվեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» Ա Կարգի շքանշանով:

Տանձնախումբը 27 հոկտեմբեր 1971 թվակիր նամակով իր ծրագիրը ներկայացրեց Թ.Թովմասյանին՝ ներփակելով երեք կուսակցություններին ուղարկվելիք նամակի պատճենը: Թովմասյանին գրած մեր նամակում նշված էր.

«Տ.Յ.Դ.ի, Ս.Դ.Տ.Կ.ի եւ Ռ.Ա.Կ.ի կեդրոնական վարչութեանց դրկուելիք մեր նամակին մէջ թելադրած ենք որ ժողովներու շարք մը գումարեն համազգային յարգանք ու վստահութիւն վայելող անձնատրութեան մը նախագահութեամբ:

Այսու կը խնդրենք ձեզմէ, որ բարի գտնուիք ձեր համաձայնութիւնը տալ, որպէսզի ձեր անունը առաջարկենք նշուած ժողովներուն իբրեւ նախագահ:

Թէեւ ձեզ անձնապէս չենք ճանչնար, սակայն տեղեակ ենք ազգանուէր այն աշխատանքին, զոր կը կատարէք, հեռու հատուածական ոգիէ, թելադրուած միայն համազգային շահերէ»:

Թ.Թովմասյանը մեր նամակին պատասխանեց 25 հունվար 1972-ին.

«Ստացել եմ ձեր 27 հոկտեմբեր 1971 թուակիր նամակը եւ գտում եմ որ հիաստորութեանս պատճառով չեմ կարողացել ժամանակին պատասխանել:

Ձեր արծարծած խնդիրը մօտ է նաեւ իմ հոգուն ու սրտին, որը երեւան կարող է բերել մի արողջական ոյժ եւ վերջ տալ սփիւռքահայութեան անորոշ վիճակին»:

Թ.Թովմասյանի նամակում կար նաեւ հետեւյալ թելադրությունը.

«Այս խնդրի առնչութեամբ խորհուրդ կտամ գտնել մի փաստաբան, որը ծանօթ լինի համազգային օրէնքներին, հայ պատմութեան, ու նաեւ վայելի համազգային յարգանք ու վստահութիւն: Ի միջի այլոց, ինքս իմ հերթին պատրաստ եմ բերելու իմ աջակցութիւնը Ձեր այս վեհ ու իմաստալից գործի առնչութեամբ»:

Նույն տարվա մայիս ամսին Թ.Թովմասյանը հեռախոսեց եւ ուզեց իմանալ, թե կուսակցություններն ինչ պատասխան էին տվել մեր նամակին: Տայտնեցինք, որ դեռ պատասխան չէինք ստացել: Թովմաս-

այսնը խնդրեց հայտնել կուսակցություններին, որ ինքը նպատակահարմար է գտնում առաջարկված ժողովները գումարել Կասպից ծովի իր ամառանոցում եւ պատրաստ է երկու շաբաթով հյուրընկալել ժողովականներին՝ հոգալով նրանց երթեւեկի եւ այլ ծախսերը:

Ստորեւ ամբողջությամբ տալիս ենք 20 փետրվար 1972-ին Ս.Դ.Տ.Կուսակցության, Ն.Յ.Դաշնակցության եւ Ռ.Ա.Կուսակցության կենտրոնական վարչությանց հղած մեր նամակի պատճենը.

«Ինչպէս մեր՝ վաստահ ենք ձեր եւ ամէն հայոյ համոզումն է ու փափագը, որ սփիւռքահայութիւնը ինքզինք կազմակերպէ որպէս մէկ ամբողջութիւն, որպէս ամբողջական մէկ ոյժ եւ ծրագրեալ համազգային աշխատանքի լծուի բոլոր գաղութներու մէջ, գոնէ կրթական-մշակութային գետնի վրայ:

Իրագործելու համար բոլորիս սրտին մօտ այդ առաջադրանքը, սիրածեշտ է ստեղծել համահայկական կեդրոնական մարմին մը, որուն գոյութիւնը սփիւռքի մէջ այսօր անյետաձգելի պահանջք մը դարձած է:

Սփիւռքահայութեան պարտականութիւնն է իր սեպհական ուժերով ու պիտճեով իրագործել այն՝ ինչ որ կ'իրագործուի այլ ժողովորդներու պարագային պետական պիտճեով:

Ոչ մեր կուսակցութիւններն առաձին-առանձին, ոչ հայ եկեղեցին, ոչ ալ հայ կազմակերպութիւններն անհատապէս կրնան կատարել այն՝ ինչ որ պիտի կարենայ իրագործել անոնց ուժերուն գումարէն զոյսցած համահայկական կեդրոնական մարմինը:

Մեր անվերապահ համոզումն է որ համահայկական կեդրոնական մարմնի մը ստեղծումը կը դառնայ իրականութիւն, երբ մեր ազգային քաղաքական կուսակցութիւնները մէկ կողմ դնեն զիրենք իրարմէ հեռացնող ազդակները եւ համախմբուին միայն այն ազդակներու շուրջ, որոնք բաժանողական քնոյթ զերծ են: Վերջին հաշուով չնոռնանք, որ մեր ժողովորդի տարբեր հատուածներն իրար միացնող իտեւալներն ու տոնելներն անասհմանօրէն անելի շատ են, քան իրարմէ հեռու պահող պատճառները:

Աշխարհագրի մեր ժողովորդի ինքնուրոյն ազգային դիմագծի անսղարտ պահպանումը, մեր պապերէն մեզի առանդ մնացած նուիրական իտեւալներու իրականացումը, մեր պատմական, մշակութային, գրական ու իմացական արժեքներուն ծանօթացումը քա-

դաքսակիրք ժողովուրդներուն, կրթական-մշակութային օճախներու ստեղծումը բոլոր գաղութներու մէջ, ահա այս բոլորը, ուրիշ նոյնքան կարեւոր աշխատանքներու կարգին կրնան միայն ու միայն իրագործուիլ համազգային յարատեւ ճիգով ու դրամով:

Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է գոյութեան կոչել համահայկական կեդրոնական մարմինը:

Մեր խորունկ համոզումն է որ համահայկական կեդրոնական մարմնի ստեղծումը կը յաջողի, եթէ յիշեալ աշխատանքին նախաձեռնեն մեր ազգային քաղաքական երեք կուսակցութիւնները միասին:

Մերը հայ ազգային քաղաքական կուսակցութիւնները համաձուլելու առաջարկ մը չէ: Իրաքանչիւր կուսակցութիւն թող պահէ իր քաղաքական համոզումներն ու առաջադրանքները եւ անոնց իրագործման համար դիմէ իր կողմէ յարմար նկատուած միջոցառումներու:

Արդ, այսու կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել հետեւեալ թելադրութիւնները համահայկական կեդրոնական մարմնի ստեղծման կապակցութեամբ.

Ա. Տամազգային յարգանք ու վստահութիւն վայելող անձնատրութեան մը նախագահութեամբ Տ.Յ.Դ.ի, Ս.Դ.Տ.Կ.ի եւ Ռ.Ա.Կ.ի լիազօր ներկայացուցիչները գումարեն ժողովներու շարք մը:

Բ. Ժողովներուն նպատակը ըլլայ հանգամանօրէն քննել սփիւռքահայութեան, որպէս մէկ ամբողջութիւն եւ այդ ամբողջութեան բաղկացուցիչ տարրերուն, իրաքանչիւր հայ գաղութի կեանքին հետ կապուած բոլոր հարցերը:

Գ. Թուագրութիւն եւ արձանագրութիւն բոլոր այն հարցերն ու աշխատանքի բնագաւառները, որոնց շուրջ կուսակցութիւններու միջեւ տարակարծութիւն գոյութիւն չունի:

Դ. Պատրաստուի ծրագիր մը համահայկական կեդրոնական մարմին ստեղծելու համար. Օրագիր, որ այս անգամ ներկայացուի անելի մեծ ժողովի մը, որուն հրահրութիւն հայ եկեղեցոյ, ներստեալ հայ կաթողիկէ եւ հայ անտարանական համայնքներու, ազգային, կրթական, մշակութային եւ բարեսիրական կշիռ ունեցող կազմակերպութիւններու, հիմնարկութիւններու, հաստատութիւններու եւ միութիւններու ներկայացուցիչները:

Ե. Յիշեալ խառն ժողովին պարտականութիւնը ըլլայ.

ա. Մամուլի միջոցով հայ ժողովուրդին ներկայացնել համահայ-

կական կեդրոնական մարմնի ստեղծման համար մինչ այդ կատարուած աշխատանքը:

բ. Ստանձնել համագաղութային համագումար մը կազմակերպելու աշխատանքը:

Տամագաղութային համագումարի մը իրականացումը խիստ կարեւոր է. համագումար՝ որմէ պէտք է ծնի համահայկական կեդրոնական մարմինը եւ որուն պէտք է մասնակցին մեր մեծ ու փոքր գաղութներու բոլոր ներկայացուցիչները:

Տամագումարին պարտականութիւնը պէտք է ըլլայ.

ա. Պատրաստել համահայկական կեդրոնական մարմնին ծրագիր-կանոնագիրը:

բ. Պատրաստել գործունէութեան տասնամեայ ծրագիր:

գ. Ընտրել Վարչական կազմ:

դ. Լիազօրել պատկամատրները, որպէսզի իրեց գաղութներուն մէջ հիմնեն մասնաճիւղեր:

Բնական է, նման ծաւալուն աշխատանք կատարելու կոչուած կազմակերպութիւն մը պէտք ունի նիւթական լայն միջոցներու: Ուստի, թելադրելի է, որ Տամահայկական կեդրոնական մարմնին աշխատանքը առաջին հնգամեակին կեդրոնական հիմնադրամ մը ստեղծելու վրայ:

Մենք համոզուած ենք որ հայ ժողովուրդի միասնական կամքէն ծնած համահայկական կեդրոնական մարմինը հանգանակութեամբ եւ զանազան հասութաբեր ձեռնարկներով մեծ ու փոքր բոլոր գաղութներու մէջ, կը յաջողի գոյացնել պատկառելի ֆոնտ մը:

Արդ, եզրակացնելով մեր նամակը, կ'ուզենք անգամ մը եւս շեշտել, որ Տամահայկական կեդրոնական մարմնի մը ստեղծումը մեծագոյն անհրաժեշտութիւնն է այսօր սիփոքի մէջ. անհրաժեշտութիւն որուն կրնայ եւ պէտք է մարմին տայ սիփոքահայութիւնը: Վստահ ենք, որ մեր առաջարկը պիտի արժանանայ ձեր անմիջական ու լուրջ ուշադրութեան:

Խորին յարգանքներով

Գ. Ալթունեան

Ե. Կիւլպէթեան

Ա. Կիզեւեան

Ս. Յովհաննէտով»:

Ցավով հաստատում ենք, որ ազգային երեք կուսակցություններին ուղարկած մեր նամակը, որի մեջ ներփակվել էր նաև Թ.Թովմասյանի նամակի պատճենը, մնաց անպատասխան: Տետագա չորս ամիսների ընթացքում երկու հիշեցում եւս հղեցինք՝ միաժամանակ փոխանցելով ժողովների առնչությամբ Թ.Թովմասյանի ներկայացրած առաջարկը: Դժբախտաբար, մեր հիշեցումները եւս մնացին անպատասխան...

Սպասում էինք, որ նրանք առնվազն քաղաքավարությունը կունենային հաստատելու մեր նամակների ստացումը... Թող ներվի մեզ, եթե կուսակցությունների անտարբեր կեցվածքն ու անընդունելի վերաբերմունքը բնութագրենք Ավետարանի հետեւյալ խոսքերով.

«Օտո ի պտոյոյ իրմէ հանաչի» (Օտոը իր տված պտուղով է փանչվում):

Եթե 1972-1975 տարիներին ազգային երեք կուսակցությունների նախաձեռնությամբ եւ սփյուռքահայության միացյալ կամքով ստեղծված լինէր կենտրոնական մի մարմին, այսօր հայ ժողովուրդը կունենար պատկառելի հիմնադրամով համազգային մի կազմակերպություն, որը բազմաթիվ կենսական ծրագրեր իրագործած կլինէր թե՛ սփյուռքում, թե՛ հայրենիքում: Չմոռանանք, որ աշխարհում հզորագույն ուժը դրամն է, որով կարելի է գնել «քաղաքական բարեկամներ» եւ պատերազմի դեպքում՝ ապահովել հաղթանակ...

«Զի ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ» (Այն որ ականջ ունի լսելու՝ թող լսի):

Տետագա տարիներին շարունակեցի **մունետիկի** իմ աշխատանքը...

1974-1976 տարիներին հրատարակեցի «Լոնտոն» ամսաթերթը, որի առաջին խմբագրականում (1974թ. մարտ) նշված է.

«Լոնտոն» կուսակցութեան մը կամ կազմակերպութեան մը թերթը չէ, ոչ ալ հարկատու է որեւէ հատուածի:

«Լոնտոն» կը հաստատայ հայ ժողովուրդի միասնականութեան եւ գերագոյն շահերուն, որոնց միշտ ալ հարկատու պիտի ըլլայ: Մեզի համար հայ ժողովուրդը կը կազմէ մէկ ամբողջութիւն, մէկ մարմին, որուն սիրտը կը գործէ առողջ այն ատեն միայն, երբ ամենէն աննշան քջիջներէն միևնջեւ կարեւորագոյն օրկանները աշխատին ներդաշնակ...

«Լոնտոն» կը հաստատայ որ հայ ժողովուրդի ոյժը, հայութեան մի-

ասնականութիւնը կախուած է գաղթօճախներուն իրար, իսկ հայրենիքը գաղթօճախներուն կապող կամուրջներու ամրութենէն: ...«Լոնտոն կը հաստատայ որ հայ մամուլին վերապահուած է կարեւոր դեր մը այդ կամուրջներու ստեղծման ու ամրապնդման մէջ:

«Լոնտոն» տես այդ հաստատքին ծնունդն է»:

Սովետական Միութեան փլուզումով իրավիճակը լրիվ փոխվեց 30 տարի առաջ, երբ Նայաստան տիրացավ իր անկախութեան, որի հետեւանքով սփյուռքահայությունը երկու հակադիր ճակատների բաժանող «սովետական» բառը «հանգստյան կոչվեց...»:

Բայց, հակառակ այդ իրողության, մենք թե՛ սփյուռքում, թե՛ հայրենիքում շարունակեցինք մտածել ու գործել որպէս դաշնակցական, հնչակյան, ռամկավար կամ Նայաստանում ամեն ամիս սունկի նման աճող կուսակցություններից մեկի անդամը, փոխանակ մտածելու եւ գործելու որպէս պետականություն ունեցող ժողովրդի զավակ, որպէս մի պետության քաղաքացի...

* * *

Վերջերս առիթ ունեցա կարդալու «Բանակի օրվա» առիթով ՆՏ նախագահ Արմեն Սարգսյանի հեռատեսությամբ լիցքավորված իմաստուն ու իրատես պատգամը, որից մեջբերված հետեւյալ հատվածը համահունչ է այս հոդվածի ոգու հետ.

«Անհրաժեշտ են ծրագրային ու հայեցակարգային մոտեցումներ, արմատական քայլեր՝ վերակազմավորումից մինչեւ վերագինում, հաշվի առնելով ժամանակակից ռազմարվեստի ու արհեստագիտական զարգացման, ինչպէս նաեւ աշխարհաքաղաքական միտումները»:

Նախագահն իր պատգամում կատարել է նաեւ հետեւյալ թելադրությունները.

«Խիզախություն ունենալ ընդունելու կատարված սխալներն ու պատրաստ լինել հիմնարար փոփոխությունների:

Ունենալ ծրագիր եւ այն իրականացնելու կամք:

Դատարել արտաքին թշնամուն թողած՝ թշնամի փնտրել իրար մէջ:

Լինել համերաշխ ու համախմբված որպես պետություն եւ հասարակություն, որպես մեկ ազգ Տայաստանում, Արցախում եւ սփյուռքում»:

Ժամանակն է, որ սրբագրենք հատկապես հայ ժողովրդի գոյատեման եւ Տայաստանի անվտանգության հետ կապված անցյալի մեր սխալները: Այդ անելու համար անհրաժեշտ է ունենալ պետական եւ համազգային մակարդակով իրար ներդաշնակորեն կամրջված երկու հզոր կառույցներ, որոնք ծրագրված, խոհեմ ու նպատակասլաց աշխատանքով կկարողանան **այսօրվա մեր պարտության** գերեզմանի վրա կառուցել **վաղվա հաղթանակի** հուշարձանը...

Կարեւորը ճիշտ ճանապարհ ընտրելն է: Շահան Շահնուրի խոսքով.
«Ամբողջ ուժովդ վազէ դէպի նպատակդ, քայց նախ ստուգէ, որ նպատակդ վստահ ճամբուդ վրան է»:

Տողվածս սկսեցի եւ ուզում եմ ավարտել Եղիշե Չարենցի՝ **«ՏԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՆ, ՔՈ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՏԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՁ Է»** հանրածանոթ նույն պատգամով, որը, դժբախտաբար, Ավետարանի «Անպտուղ թզենիի» պես ցարդ մնացել է... **ԱՆՊՏՈՒՂ :**

Ասատուր Կյուզելյան
Լոնդոն, փետրվար 2021թ.



Ասատուր
ԳՅՈՒԶԵԼՅԱՆ

Կենսագրական տեղեկություններ

Գյուղեկան գերդաստանը դարերով ապրել է Կիլիկիայի Տավրոսյան լեռնաշղթայի մաս կազմող Ամանոսյան լեռների անտառապատ լանջին բույն դրած հայկական Սովիւզ Օլուզ գյուղում, որը գտնվում է Ալեքսանդրետ նավահանգստից 10 կմ հեռու: Գյուղեկաններից զգալի թվով տղամարդիկ, կանայք եւ երեխաներ զոհ են գնացել Հայոց ցեղասպանության, որը կազմակերպեց ու իրագործեց թրքական կառավարությունը Առաջին աշխարհամարտի ընթացքում: Նրանք, տասնյակ հազարավոր հայերի հետ, բռնագաղթի են ենթարկվել: Հանգամանքների բարեբախտ բերումով Ասատուրի ծնողները Դեր Չոր ուղարկվելու փոխարեն տարվել են Դամասկոս՝ որպես ճանապարհաշինարար բանվորներ: Երբ անգլիական բանակը գրավել է Սիրիան, Ասատուրի ծնողները վերադարձել են Սովիւզ Օլուզ: Չինադարից հետո Ալեքսանդրետի նահանգը դրվել է ֆրանսիական իշխանության վարչական լիազորության ներքո:

Կարապետ եւ Ռահել Գյուղեկանների հինգերորդ եւ վերջին զավակը ծնվել է 1932թ. մայիսի 14-ին եւ մկրտվել Ասատուր՝ Տեր Հովհաննես քահանայի ձեռամբ: Ասատուրի ծնողներն աքսորի ճանապարհին կորցրել են իրենց առա-

ջին զավակին՝ չորս տարեկան Վարդուհուն, որը սվինահար սպանվել է թուրք ասկյարի ձեռքով Դեր Չորի ճանապարհին:

1939թ. Ֆրանսիան Ալեքսանդրետի նահանգը անհասկանալի պատճառներով «նվիրել» է Թուրքիային, արդյունքում՝ 30.000-40.000 հայեր, նրանց թվում նաև Գյուզելյան ընտանիքը, գաղթել են Լիբանան, ապա 1940թ. Գյուզելյանները տեղափոխվել են Սիրիա եւ հաստատվել Յալեպ քաղաքում:

Յալեպում Ասատուրը հաճախել է Կիլիկյան վարժարան, որն ավարտել է 1948թ., այնուհետև ուսումը շարունակել է Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի (Լիբանան) Դպրեվանքում՝ որպես Գարեգին կաթողիկոս Յովսեփյանցի սան: Սարդարապատի հերոս, լուսահոգի Յայրապետը հոգացել է Ասատուրի դպրոցական ծախսերը մինչև իր մահը՝ 1952թ.:

Դպրեվանքում Ասատուրն ունեցել է մի շարք անվանի դասախոսներ՝ Գարեգին կաթողիկոս Յովսեփյանց (հայ մանրանկարչական արվեստի մեծագույն մասնագետ), Շահան Պերպերյան (արվեստաբան, փիլիսոփա, գրաքննադատ, երաժիշտ), Սիմոն Սիմոնյան (գրաբարագետ, պատմաբան, հայ մատենագրության մեծ մասնագետ, վիպագիր), Բյուզանդ Եղիայան (դպրեվանքի ուսումնապետ հիմնադրման առաջին օրից, անվանի մանկավարժ), Խորեն Գաբրիլյան (հայտնի պատմաբան), Յամբարձում Պերպերյան (անվանի երգահան-երաժիշտ): Գարեգին Յովսեփյանց հայրապետը մտքի այդ հսկաներին հավաքել էր Անթիլիասում տարբեր երկրներից՝ դպրեվանքը Շքուլայի վերածելու վճռականությամբ:

Ուսանողական տարիներին Ասատուրը գործունե մասնակցություն է ունեցել դպրեվանքի գրական, թատերական եւ մշակութային կյանքին, ավարտելով այն 1955-56թթ. որպես ուսուցիչ պաշտոնավարել է Յալեպի Կիլիկյան վարժարանում: Միեւնույն ժամանակ մասնակցել է հալեպահայության գրական-մշակութային կյանքին: Կիլիկյան վարժարանի Շրջանավարտից միության հրավերով Ասատուրը հանդես է եկել մի շարք դասախոսություններով՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը, վաղամեռիկ բանաստեղծներ Պետրոս Դուրյանին, Միսաք Մեծարենցին եւ Մատթեոս Չարիֆյանին, Կոմիտաս վարդապետին եւ հայ ժողովրդական երաժշտությանը:

1957-ին Ասատուր Գյուզելյանը հրավիրվել է Կալկաթայի Յայոց Սարդասիրաց ճեմարանի հոգաբարձության կողմից (հիմնված 1821թ.)՝ որպես հայոց լեզվի, գրաբարի, հայ մատենագրության, հայ ժողովրդի պատմության եւ գրականության ուսուցիչ: Ուսուցչական աշխատանքին զուգահեռ, նա վերականգնակերպել է համայնքի մշակութային-գեղարվեստական կյանքը:

Հիմնել է երգչախումբ եւ թատերախումբ ու Հայկազյան Մշակութային միության հովանավորությամբ կազմակերպել երաժշտական-թատերական ձեռնարկներ, ինչպես նաեւ դասախոսությունների շարք՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը եւ մշակույթին: Գյուզելյանը ղեկավարել է նաեւ եկեղեցու երգչախումբը:

1957թ. դեկտեմբերին Ասատուրը ամուսնացել է հնդկահայուհի Վիվիեն Ալեքսյանի հետ. Գյուզելյան ամուլը ունեցել երկու աղջիկ, Կարինեն ծնվել է 1963թ. Կալկաթայում, իսկ Արմինեն՝ 1965թ. Լոնդոնում:

Կալկաթայի Ասիական ընկերությունը (The Asiatic Society) Ա. Գյուզելյանին ընտրել է «Պատվո անդամ»: Հայոց գրերի գյուտի 1600-ամյակի առիթով Գյուզելյանը ընկերության անդամներին կարդացել է դասախոսություն Մեսրոպ Մաշտոցի եւ հայերեն տառերի գյուտի մասին, որը լույս է տեսել ընկերության «Journal of the Asiatic Society» պաշտոնաթերթում: Դասախոսությանը ներկա են գտնվել ավելի քան հարյուր ակադեմիկոսներ, գիտնականներ եւ համալսարանի դասախոսներ: Գյուզելյանն իր դասախոսության մեջ անդրադարձել է նաեւ հայկական գաղափարագրերի եւ Մահանջադարյուն (Հնդկաստան) հայտնաբերված հնդկական գաղափարագրերի նմանությանը, որը հետաքրքրել է հնդիկ գիտնականներին: Ռաբինդրանաթ Թագորի ծննդյան 100-ամյակի առիթով Ա. Գյուզելյանը գրել է հնդիկ մեծ գրողի կյանքին եւ գրականությանը նվիրված ընդարձակ ուսումնասիրություն, որը լույս է տեսել Միացյալ Նահանգներում հրատարակվող «Ծիրանի գուտի» ամսաթերթում: Որպես «Կալկաթայի երաժշտական ակումբի» անդամ Գյուզելյանը կարդացել է դասախոսությունների շարք՝ նվիրված Կոմիտասին, հայ դասական եւ ժողովրդական երաժշտությանը:

1960-ին Ա. Գյուզելյանը, ընդառաջելով հնդիկ նշանավոր բանասեր, պատմաբան, Կալկաթայի համալսարանի ավագ դասախոս, պրոֆ. Սունիթի Զումար Չաթըրջիի խնդրանքին, աջակցել է նրան գրելու մի ուսումնասիրություն՝ նվիրված «Սասունցի Դավիթ» դյուցազնավեպին եւ հայկական ժողովրդական առասպելներին (Armenian Hero legends and the Epic of David of Sasun): Հեղինակը 1960թ. օգոստոսին Մոսկվայում ուսումնասիրությունը ներկայացրել է Արեւելագետների միջազգային 25-րդ համագումարին:

1963թ. նոյեմբեր-դեկտեմբերին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն վեհափառը, Մալաբար եկեղեցու կաթողիկոս Բասիլիոսի պաշտոնական հրավերով, այցելել է Հնդկաստան, ուր հայոց հայրապետին ընդունել են մեծ շուքով, պետական մակարդակով: Ասատուր Գյուզելյանն ավելի քան մեկ ամիս

ընկերակցել է Վեհափառին ամենուր՝ որպես Նորին Սրբության թարգման ու քարտուղար: Վեհափառին, Երուսաղեմի Հայոց պատրիարք Եղիշե Տերտերյանին եւ մի շարք այլ եկեղեցականների ընդունել են Հնդկաստանի նախագահ դոկտ. Ռադաքրիշնանը, վարչապետ Ջավահարլալ Ներուն եւ այլ բարձրաստիճան պետական անձինք: Հետագայում դոկտ. Ռադաքրիշնանը, վեհափառի հրավերին ընդառաջելով, այցելել է Հայաստան:

1963-ին Ասատուրն առաջին անգամ այցելել է հայրենիք Հայաստանի կրթական նախարարության ուսուցիչների կատարելագործման ինստիտուտի հրավերով եւ Հայաստանում մնացել երկու ամիս: Այս ընթացքում ծանոթացել է հայրենիքի մտավորականության հետ եւ առաջին անգամ հանդիպել Ալբերտ Փարսադանյանին, որը հետագայում գրել է «Հարատեւող բարեկամություն» գիրքը՝ նվիրված իրենց հիսնամյա բարեկամությանը: Գիրքն առաջին անգամ հրատարակվել է 2004թ., իսկ 2009թ. ունեցել է երկրորդ եւ ավելի ընդարձակ հրատարակություն, դարձյալ Երեւանում:

Հետագայում Ա. Գյուզեյանը չորս տարբեր առիթներով եւս այցելել է Հայաստան՝ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի եւ Վազգեն Ա կաթողիկոսի հրավերով: 1968-ին, որպես Հայաստանի պետության հյուր, նա մասնակցել է Երեւանի 2750-ամյակի տոնակատարություններին: Հայաստանի անկախությունից հետո Գյուզեյանը բազմիցս այցելել է հայրենիք:

1964-ին Ա. Գյուզեյանն ընտանյոք հանդերձ հաստատվել է Լոնդոնում: Նույն տարվա դեկտեմբերին նշանակվել է «Արեգակ» ամսաթերթի խմբագիր (1964-66), որը հրատարակվել է պարսկահայ ծանոթ առեւտրական Հայկ Գալուստյանի հովանավորությամբ:

1974-ին Ա. Գյուզեյանը հիմնել է իր սեփական ամսաթերթը՝ «Լոնդոնը», որը երկու տարի հետո՝ 1976թ., նյութական դժվարությունների պատճառով փակվել է:

Որպես «Հայ Տուն»-ի մշակութային հանձնախմբի եւ Համայնքային եկեղեցական խորհրդի անդամ Ասատուր Գյուզեյանն իր գործուն մասնակցությունն է բերել լոնդոնահայության ազգային, կրթական ու մշակութային կյանքին: Կարդացել է դասախոսությունների շարք՝ նվիրված հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը եւ մշակույթին: Միաժամանակ հայերեն է դասավանդել հայ եւ օտար չափահասներին: Վաթսուհական թվականներին ծանոթ դերասան Ասատուր Օհանյանը, «Հայ Տուն»-ի հովանավորությամբ, Լոնդոնում հիմնել էր թատերախումբ մի քանի ծանոթ դերասանների՝ Գրիգոր Սաթանյանի, Վարուժան Խըտըշյանի, Գեորգ Մալիքյանի եւ այլոց մաս-

նակցությամբ: Ընդառաջելով Օհանյանի հրավերին՝ Ա. Գյուզեյանը միացել է թատերախմբին եւ խաղացել Բաղդասար Աղբարի եւ Ղեւոնդ Երեցի դերերը Զ. Պարոնյանի համանուն կատակերգությունում եւ Սմբատ Բյուրատի «Վարդանանք»-ում:

Ասատուր Գյուզեյանի բազմաթիվ հողվածները, պատմվածքները, գրական, պատմաբանասիրական ուսումնասիրություններն ու բանաստեղծությունները հրատարակվել են աշխարհացրիվ հայ մամուլում: 1960-ին Բեյրութի «Սեւան» հրատարակչատունը լույս է ընծայել Ա. Գյուզեյանի «Համո եւ Ֆատիլե» սիրավեպը, որն անգլերենի է թարգմանել հնդկահայ մտավորական Մանուկ Փոյանցը 1962թ.: «Համո եւ Ֆատիլե»-ի անգլերեն թարգմանությունը հայերեն բնագրի հետ միասին հրատարակվել է 2009թ. Երեւանում: Առանձին հատորով լույս են տեսել նաեւ Ա. Գյուզեյանի հետեյալ հատորները՝ «Թերթելով մամուլը» (Բեյրութ, 2011), «Կը խոսին նամակները» (Բեյրութ, 2014), ինչպես նաեւ «Գույների ճարտարապետ» (Լոնդոն, 2018) հայերեն եւ անգլերեն գրքույկը՝ նվիրված գեղանկարիչ Էդման Այվազյանին:

Վերջին հիսնամյակում Ա. Գյուզեյանը սերտ կապեր է հաստատել անգլիական մտավորական շրջանակների, գրողների, պատմաբանների, մամուլի եւ հեռուստատեսության ներկայացուցիչների հետ: Նա հաճախ ելույթ է ունեցել անգլիական ռադիո եւ հեռուստակայաններից՝ Հայաստանի եւ հայ ժողովրդի հետ կապված հարցերի մասին:

1987-ին BBC ռադիոկայանը սկսել է «Նոր Բրիտանացիները» (“The New Britons”) հաղորդաշարը՝ նվիրված Անգլիայում հաստատված վեց տարբեր ազգերի ներկայացուցիչներին: Հայերի պարագայում BBC-ն Ա. Գյուզեյանին ընտրել է՝ հաշվի առնելով նրա՝ Հայոց ցեղասպանությունից փրկված ծնողների զավակ լինելու հանգամանքը: Հաղորդումն արժանացել է ջերմ ընդունելության եւ ընտրվել շաբաթվա լավագույնը՝ մեկ շաբաթում ծայնասփռվելով երեք անգամ: BBC-ն որոշել է «Նոր Բրիտանացիները» ծայնասփռել միջազգային կայանից (BBC World Service), բայց Անգլիայի արտաքին գործերի նախարարության վրա թրքական կառավարության բանեցրած ճնշման հետեւանքով հաղորդումը հետաձգվել է: Երկու տարի անց BBC-ին մի շաբաթում ութ անգամ ծայնասփռել է հաղորդումը միջազգային կայանից՝ առաջ բերելով թրքական կառավարության զայրույթը... Թրքական «Հյուրիեթ» օրաթերթը չորս Էջանոց խմբագրական է գրել՝ «Ասատուր Գյուզեյանի ստերի գործարանը Լոնդոնում» խորագրով: Այլ բան չէր Էլ կարելի սպասել թրքական մամուլից...

Ա. Գյուզեյանի քաջալերանքով եւ աջակցությամբ անգլիացի մի շարք գրողներ ու պատմաբաններ Լոնդոնում հրատարակել են հայանպաստ գրքեր: Հիշենք դրանցից Prof. David Marshal Lang-ին, որը գրել է «Հայաստան, քաղաքակրթության բնօրրան» (“Armenia Cradle of Civilisation”) եւ «Աքսորված մի ժողովուրդ» («A People in Exile») գրքերը, Christopher Walker-ին, որը հրատարակել է «Հայաստան, մի ազգի գոյատեւումը» (“Armenia Survival of a Nation”) եւ «Հայաստան եւ Ղարաբաղ» (“Armenia and Karabagh”) հատորները:

1988-ին, երբ ահավոր երկրաշարժը քարուքանդ արեց Հայաստանը, անգլիական ռադիոկայանների եւ հեռուստակենտրոնների հրավերով Ա. Գյուզեյանը հանդես է եկել բազմաթիվ հաղորդումներով եւ կոչերով՝ Հայաստանին օժանդակություն ապահովելու մտադրությամբ:

Ա. Գյուզեյանը բարեկամական եւ նամակագրական կապեր է հաստատել Հայաստանի եւ արտասահմանի անվանի հայ գրողների, երաժիշտների, արվեստագետների, գիտնականների, հասարակական եւ քաղաքական գործիչների հետ, որոնց մի մասի նամակները կգտնեք այս հատորում: Ասատուրի մտերիմ բարեկամներից է եղել նաեւ Արամ Խաչատրյանը, որն այնքան է տպավորվել 1977-ին նրա գրած եւ իրեն ծոնած բանաստեղծությունից («Ամենայն Հայոց երաժիշտ»), որ Մոսկվա վերադառնալով՝ սկսել է երաժշտություն հորինել դրա հիման վրա: Ցավոք, հաջորդ տարի Վարպետը վախճանվել է, եւ բազմաթիվ այլ գործերի հետ միասին այդ աշխատանքը նույնպես մնացել է անավարտ...

Իր երկարամյա գործունեության ընթացքում Ա. Գյուզեյանն աշխատել է ի շահ սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման, հայ ժողովրդի տարբեր հատվածների համագործակցության ու միասնականության: Ի գնահատումը հայ ժողովրդին, հայ դպրոցին, հայ գրականությանը, հայ մշակույթին ու Հայաստանյայց եկեղեցուն մատուցած ծառայության՝ 1982-ին Ամենան Հայոց կաթողիկոս Վազգեն Ա հայրապետը Ասատուր Գյուզեյանին պարգևատրել է «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշանով: Ավելի ուշ՝ 2012թ. մարտի 27-ին նա պարգևատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Ուիլյամ Սարոյան», իսկ նույն տարվա մայիսի 23-ին՝ ՀՀ նախագահի «Մովսես Խորենացի» շքանշաններով:

Հայաստանի Գրողների միությունը 2017թ. Ասատուր Գյուզեյանին ընտրել է «Պատվավոր անդամ»:

Բովանդակություն

Ասատուր Գյուզեյան.	3
Առաջաբան.....	5
Նախաբան	7
Աբաջյան Գեորգ Չամբարձումի.....	11
Աբրահամյան Աշոտ Գարեգինի.....	12
Ազարյան Ալբերտ Վաղարշակի.....	15
Աթայան Ռոբերտ Արշակի.....	17
Ալաջաջյան Ստեփան Եղիայի	19
Աղայան Ծատուր Պավելի	22
Անանյան Սեդա	25
Առաքելյան Օֆելիա (Մոսկվայի № 1650 դպրոցի տնօրեն)	
Բարսեղյան Չեղինե (դպրոցի հայոց լեզվի ուսուցչուհի).....	28
Ավետիսյան Կամսար	30
Բալասանյան Սերգեյ Արտեմի.....	58
Բարսեղյան Խիկար Չակոբի	62
Բեքմեզյան Գրիգոր	64
Բրուտյան Գեորգ	67
Բրուտյան Ցիցիլիա	80
Բուջիկանյան Յրաչ Պողոսի.....	85
Գասպարյան Գոհար.....	87
Գրիգորյան Արմինե.....	89
Գրիգորյան Բերսաբե	94
Գրիգորովա (Գրիգորյան) Լեանորա	109
Գեորգյան Լիլիթ	113
Դավթյան Վահագն	114
Չարյան Նաիրի	119
Չարյան Ռուբեն Վարոսի	121
Եդիլյան Բագրատ	139
Էմին Արտաշես Գեորգի.....	140
Էմին Գեորգ.....	144
Թադևոսյան Ա.	169
Թորոսյան Ջավատ.....	172
Լիսիցյան Պավել Գերասիմի.....	173
Խաչատրյան Արամ	178
Չարցազրոյց	
Գոյների ճարտարապետ՝ Էդման Ավագեանի հետ	188

Խաչիկյան Լեւոն Ստեփանի	192
Կապուտիկյան Սիլվա	195
Չախվերդյան Լեւոն	199
Չամազասայան Վարդգես	223
Չամբարձումյան Վիկտոր	240
Չայկազյան Էդուարդ	245
Չասրաթյան Եզրաս	249
Չատիտյան Արթուր	251
Չարությունյան Ալեքսանդր	264
Չարությունյան Վարազդատ	268
Ղափլանյան Չրաչյա	270
Մարգարյան Մարո	273
Մարտիրոսյան Անդրանիկ	278
Միրզոյան Էդվարդ	285
Յափուջյան Սարգիս	286
Նազարյան Ինգա	288
Նազարյան Շուշանիկ	289
Շահինյան Անդրանիկ	291
Շահվերդյան Վահե	295
Շիրազ Չովհաննես	296
Պոզապալեան Ներսես	298
Սահինյան Անահիտ	337
Սարգսյան Անուշավան	344
Սարգսյան Արմեն	354
Սարգսյան Ֆադեյ	357
Սմբատյան Արմեն	359
Ստեփանյան Գառնիկ	360
Վարդանյան Կամո	361
Վարսյան Շաքե	362
Տատուրյան Շահե-Չատիկ Սամվելի	365
Փարսադանյան Ալբերտ	367
Քալաշյան Լորիս	390
Քեշիշյան Գրիգոր	392
Բաց նամակ	396

Ասատուր Գյուզեյան

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Չուշ-նամականի

«ՄՈՒՂՆԻ» ԶՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
(+374 12) 565514 • moughni@gmail.com

Տպագրված է «ԿՈՒՆԱԺ» ՍՊԸ տպագրատանը
(+374 10) 520217 • collagetd@gmail.com

Երեւան • 2021



Curly
Page
4



9 789994 133888